

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԹՅՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ  
ՕՍՄԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՋԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Ռուբեն Սաֆրաստյանի  
խմբագրությամբ

VI

ԵՐԵՎԱՆ – 2009

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ

ТЮРКОЛОГИЧЕСКИЕ И  
ОСМАНИСТИЧЕСКИЕ  
ИССЛЕДОВАНИЯ

Под редакцией  
Рубена Сафрастяна

VI

ЕРЕВАН – 2009

2

**NATIONAL ACADEMY OF SCIENCES  
OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ORIENTAL STUDIES**

**TURKIC AND OTTOMAN  
STUDIES**

**Editor  
Ruben Safrastyan**

**VI**

**YEREVAN – 2009**

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ և պետական հովհանավորությամբ

### ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սաֆրաստյան Ռուբեն (նախագահ), Ակցոցլու Յակովոս Ջ. (Հունաստան), Մուրտուզալիև Սերգեյ (Ռուսաստան), Սվանիժե Միխայիլ (Վրաստան), Ջայցև Իյյա (Ռուսաստան), Ջուլայյան Մանվել, Կիրակոսյան Արման, Մելքոնյան Աշոտ, Սաֆարյան Ալեքսանդր, Մանուկյան Տաթևիկ (պատասխանատու քարտուղար)

### EDITORIAL BOARD:

Safrastyan Ruben (editor in chief), Aktsoglu Jakaovos Z. (Greece), Murtuzaliev Sergey (Russia), Svanidze Mikhail (Georgia), Zaytsev Ilya (Russia), Zulalyan Manvel, Kirakosyan Arman, Melkonyan Ashot, Safaryan Aleksandr, Manukyan Tatevik (responsible for the volume)

*«Թյուրքագիտական եվ օսմանագիտական հետազոտություններ» մատենաշարի VI հատորում ընդգրկված հոդվածներում լուսաբանվում են Օսմանյան կայսրության, հանրապետական Թուրքիայի և թյուրքալեզու ժողովուրդների պատմության, պատմագիտության ու բանասիրության, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունների մի շարք գիտական հետաքրքրություններ կայացնող խնդիրներ:*

*Նախատեսվում է հասարակագետների, դիվանագետների, ուսանողների համար: Օգտակար է նաև Թուրքիայի ներքին ու արտաքին քաղաքականությամբ և Հայկական հարցի ու ցեղասպանության պատմությամբ հետաքրքրվող ընթերցողների լայն շրջանակների համար:*

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

### ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ՈՌԻՔԵՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....20

### ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ ՎԱՀԱՆ

ԹՈՒՐՔ-ՕՍՄԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ԳՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ.....32

### ՍՎԱՆԻՉԵ ՄԻՆԱՅԻԼ (ՎՐԱՍՏԱՆ)

ՍՈՒԼԵՅՄԱՆ ԱՌԱՋԻՆԻ ԵՐՐՈՐԴ ԱՐՇԱՎԱՆՔՆ ԻՐԱՆ ԵՎ \1554Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԹՈՒՐՔ – ԻՐԱՆԱԿԱՆ ԶԻՆԱԴԱԴԱՐԸ .....58

### ՍԱՀԱԿՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԱՐԱԾԱԳՈՏԻՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ .....68

## ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

*ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

### ՏԵՐ- ՍԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ

ՔԵՄԱԼԻՉՄԸ ՈՐՊԵՍ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ. ՀԱՎԱՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ .....86

**ՀՈՎՍԵՓՅԱՆ ԼԵՎՈՆ**

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ  
ՀՐԹԻՈԱՇԽՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ..... 105

*ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

**ՄԵԼՔՈՆՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ**

1945-1946 թթ. ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ  
ԴԻՐՔՐՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ  
ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ..... 124

**ԻՎԱՆՈՎ ՎԱՂԻՄԻՐ**

ՎՐԱՑ – ԹՈՒՐՔԱԿԱՆ ՈԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՐՎԱԳԾԵՐԸ.  
ԴԻՆԱՄԻԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ..... 142

**ՊՈՂՈՍՅԱՆ ԲԵՆԻԱՄԻՆ**

ԹՈՒՐՔ- ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 2003-2008թթ. .... 161

**ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ**

**ԳՈՒՄԱԿՈՎ ՎԱՂԻՄԻՐ (ՈՒԿՐԱԽՆԱ)**

X-XI դդ. ԹՅՈՒՐՔԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ  
ԱՄԻԱՅԻ ԳՐԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ..... 180

**ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ԱՐԱՍ**

ՍԱՄՑԽԵ - ԶԱԿԱԽՔՈՒՄ ԹՈՒՐՔ ՄԵՍԽԵՐԻ (ԱՀԻՍԿԱ)  
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ ..... 196

## ՀԱՅ-ԹՈՒՐԷԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՀԱՄԱՄԱՇԵՆ-ՀԱՄՇԵՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ  
ԺԱՄԱՆԱԿԻ ՇՈՒՐՋ .....218

### ՍՏԵՓԱՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ

ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ԿՅԱՆՔՈՒՄ (19-ՐԴ Դ.) .....229

### ԲԵՐԲԵՐՕՂՆՈՒ ՊԵՐՃ (ԱՄՆ)

ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԲԱՆՈՒՄԸ  
ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ. ԹՈՒՐԷ-ՀԱՅԿԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԿԱՅՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ .....251

### ՊԱՐՍԱՄՅԱՆ ՍԵՂԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ  
ԹՈՒՐԷԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ 19-ՐԴ ՂԱՐԻ  
ՎԵՐՋԻՆ 20-ՐԴ ՂԱՐԻ ՍԿԶԲԻՆ .....262

## ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ՄՈՒՐՏՈՒԶԱԼԻԵՎ ՍԵՐԳԵՅ (ՌՈՒՍԱՍՏԱՆ)

Վ.Ա. ՊՈՏՏՈՆ 1828-1829 ԹԹ. ՌՈՒՄ – ԹՈՒՐԷԱԿԱՆ  
ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԻ ՏԵՂԻ ԵՎ  
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ .....278

### ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՄԵԼՔՈՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ

ԱՎԱԴԵՄԻԿՈՍ Վ. ԳՈՐԴԼԵՎՍԿԻՆ ՕՍՄԱՆՅԱՆ  
ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՅՈՒՄՆԵՐԻ

|  |     |
|--|-----|
| ՄԱՍԻՆ .....  | 298 |
| <b><u>ՀՈԿՍԵՓՅԱՆ ՄԱՐԻԱՄ</u></b>   |     |
| ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ Կ.ՊՈԼՍԻ<br>«ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԻ ՆՅՈՒԹԵՐՈՒՄ (1918 Թ.) .... | 305 |

## **ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

### **ՄԻՐՁՈՅԱՆ ՔՆԱՐԻԿ**

|  |     |
|--|-----|
| ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐԻ<br>ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ<br>ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ ..... | 314 |
|--|-----|

### **ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ**

|  |     |
|--|-----|
| ԹԵՎՖԻՔ ՖԻՔՐԵԹԻ «ՄԱՌԱՆՈՒՂ»<br>ԲԱՆԱՍՏԵՂՎՈՒԹՅԱՆ ԼԵԶՈՒՆ ԵՎ ՈՃԸ ..... | 323 |
|--|-----|

## **ՔՆՆԱՐԿՈՒՄ**

*2009 Թ. ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ*

### **ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ՈՒՒՔԵՆ**

|  |     |
|--|-----|
| ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԻՄ<br>ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ..... | 332 |
|--|-----|

### **ՏԵՐ- ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ**

|   |     |
|---|-----|
| ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԿՈՒՍԱԿՑՈՋԹՅՈՒՆԸ<br>ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ. ԶՆՈՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ<br>ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ.. | 334 |
|---|-----|

### **ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՆՈՒՇ**

|  |     |
|--|-----|
| ԹՈՒՐՔԻԱ. ԱԶՆԻՎ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞<br>ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ ..... | 346 |
|--|-----|



**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**ՀՈԿՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԻՐԱԿ**

«ԱՆԻԾՎԱԾ ԱՌՅՈՒԾԻ» ՔԱՂԱՔԱԿՐԹՎԵԼՈՒ  
ԴԺԿԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....362

**ՏԵՐ- ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ՎԱՀՐԱՄ**

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ՀՈՒՍԵՅՆ ԲԱՂՋՁԻ «ԺԱՄԱՆԱԿԻ ՈԳԻՆ.  
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ  
ԹՈՒՐՔԻԱՆ» ԳՐՔԻ .....368

***ԹՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ***

**ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ՈՒՒԲԵՆ**

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԹՈՒՐՔԱԳԵՏԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ .....376

# СОДЕРЖАНИЕ

## ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ

### САФРАСТЯН РУБЕН

ОСМАНСКАЯ ИМПЕРИЯ: НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ  
ГЕНЕЗИСА ..... 20

### БАЙБУРТЯН ВААН

ВЗЯТИЕ КОСТАНТИНОПОЛЯ ТУРКАМИ-ОСМАНАМИ И  
ВСЕМИРНО- ИСТОРИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ ЭТОГО  
СОБЫТИЯ..... 32

### СВАНИДЗЕ МИХАИЛ (ГРУЗИЯ)

ТРЕТИЙ ПОХОД СУЛЕЙМАНА I В ИРАН И ТУРЕЦКО-  
ИРАНСКОЕ ПЕРЕМИРИЕ ОТ 27 СЕНТЯБРЯ  
1554 ГОДА..... 58

### СААКЯН ЛУСИНЕ

ТРАПИЗОН И СОПРЕДЕЛЬНАЯ ТЕРРИТОРИЯ В  
АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЛЕНИЯХ ОСМАНСКОЙ  
ИМПЕРИИ ..... 68

## ТУРЕЦКАЯ РЕСПУБЛИКА

### *ВНУТРЕННЯЯ ПОЛИТИКА*

### ТЕР-МАТЕВОСЯН ВАГРАМ

КЕМАЛИЗМ КАК СОЦИАЛЬНОЕ ДВИЖЕНИЕ:  
МОДЕЛИ ТРАНСФОРМАЦИИ КОЛЛЕКТИВНЫХ  
ИДЕНТИЧНОСТЕЙ В ТУРЦИИ..... 86

### ОВСЕПЯН ЛЕВОН

ВОЕННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ ТУРЦИИ В СФЕРЕ  
РАКЕТОСТРОЕНИЯ..... 105

## *ВНЕШНЯЯ ПОЛИТИКА*

### **МЕЛКОНЯН КРИСТИНЕ**

ПОЗИЦИЯ ВЕЛИКИХ ДЕРЖАВ И ТУРЦИИ ПО  
ОТНОШЕНИЮ К ПРОБЛЕМЕ ЧЕРНОМОРСКИХ ПРОЛИВОВ  
В 1945-1946 ГГ. .... 124

### **ИВАНОВ ВЛАДИМИР**

ОСНОВНЫЕ КОНТУРЫ ТУРЕЦКО-ГРУЗИНСКОГО  
ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА:  
ДИНАМИКА И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ..... 142

### **ПОГОСЯН БЕНИАМИН**

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ТУРЕЦКО-  
АМЕРИКАНСКИХ ОТНОШЕНИЙ В 2003 - 2008 ГГ. .... 161

## **ТЮРКОЯЗЫЧНЫЕ НАРОДЫ**

### **ГУСАКОВ ВЛАДИМИР (УКРАИНА)**

ЗАВОЕВАНИЕ ТЮРКАМИ ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ  
В X-XI ВВ. И ВОЗНИКНОВЕНИЕ НА ЕЕ ТЕРРИТОРИИ  
ПЕРВЫХ ТЮРКСКИХ ГОСУДАРСТВ ..... 180

### **АРУТЮНЯН АРАМ**

О ПРОБЛЕМЕ ПЕРЕСЕЛЕНИЯ ТУРКОВ -МЕСХЕТОВ  
(АИСКА) В САМЦХЕ- ДЖАВАХК ..... 196

## **АРМЯНО- ТУРЕЦКИЕ ОТНОШЕНИЯ**

### **ЕГИАЗАРЯН АРМАН**

О ПЕРИОДЕ ОСНОВАНИЯ АМАМАШЕНА-АМШЕНА ..... 218

### **СТЕПАНЯН АСМИК**

РОЛЬ АРМЯН В КУЛЬТУРНОЙ ЖИЗНИ ОСМАНСКОЙ  
ИМПЕРИИ (XIX В.) ..... 229

**БЕРБЕРОГЛУ ПЕРЧ (США)**

НАЦИОНАЛИЗМ И ЭТНИЧЕСКИЙ КОНФЛИКТ НА  
БЛИЖНЕМ ВОСТОКЕ: АРМЯНО-ТУРЕЦКИЕ  
ОТНОШЕНИЯ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ .....251

**ПАРСАМЯН СЕДА**

ПОЛИТИКА ТУРЕЦКИХ ВЛАСТЕЙ В ОТНОШЕНИИ  
АРМЯНСКИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЙ В КОНЦЕ  
19 – НАЧАЛЕ 20 ВЕКОВ .....262

**ИСТОРИОГРАФИЯ**

**МУРТУЗАЛИЕВ СЕРГЕЙ (РОССИЯ)**

В.А. ПОТТО О МЕСТЕ И ЗНАЧЕНИИ КАВКАЗСКОГО  
ФРОНТА В РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЕ 1828 - 1829 гг..278

**САФАРЯН АЛЕКСАНДР, МЕЛКОНЯН РУБЕН**

АКАДЕМИК В. ГОРДЛЕВСКИЙ О НАСИЛЬСТВЕННОЙ  
ИСЛАМИЗАЦИИ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ.....298

**ОВСЕПЯН МАРИАМ**

ГЕНОЦИД АРМЯН В МАТЕРИАЛАХ  
КОНСТАНТИНОПОЛЬСКОЙ ГАЗЕТЫ  
«ЧАКАТАМАРТ» (1918 Г.) .....305

**ФИЛОЛОГИЯ**

**МИРЗОЯН КНАРИК**

СТРУКТУРНЫЕ И СЕМАСИОЛОГИЧЕСКИЕ СВОЙСТВА  
СОЮЗОВ В СОВРЕМЕННОМ ТУРЕЦКОМ ЯЗЫКЕ .....314

**ПЕТРОСЯН ТИГРАН**

ЯЗЫК И СТИЛЬ СТИХОТВОРЕНИЯ ТЕВФИКА  
ФИКРЕТА “ТУМАН” .....323

## ОБСУЖДЕНИЕ

*ВЫБОРЫ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ ТУРЦИИ  
2009г.*

### САФРАСТЯН РУБЕН

НЕОЖИДАННЫЕ РЕЗУЛЬТАТЫ НА ВЫБОРАХ ОРГАНОВ  
МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ ТУРЦИИ..... 332

### ТЕР-МАТЕВОСЯН ВАГРАМ

ПАРТИЯ СПРАВЕДЛИВОСТИ И РАЗВИТИЯ НА  
ВЫБОРАХ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ:  
СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ДОСТИЖЕНИИ  
И НЕУДАЧ .....334

### ОГАНЕСЯН АНУШ

ТУРЦИЯ: ЧЕСТНОЕ ПОСРЕДНИЧЕСТВО ИЛИ  
ПОЛИТИЧЕСКИЙ ТОРГ? .....346

## РЕЦЕНЗИИ

### ОГАНЕСЯН СИРАК

ТРУДНОСТИ ПРИОБЩЕНИЯ К ЦИВИЛИЗАЦИИ  
“ПРОКЛЯТОГО ЛЬВА” .....362

### ТЕР-МАТЕВОСЯН ВАГРАМ

РЕЦЕНЗИЯ НА КНИГУ Г. БАГДЖИ «ДУХ ВРЕМЕНИ:  
ГЛОБАЛЬНАЯ ПОЛИТИКА И ТУРЦИЯ» .....368

## ИЗ ИСТОРИИ ТЮРКОЛОГИИ

### САФРАСТЯН РУБЕН

ЮБИЛЕЙ ЗАСЛУЖЕННОГО ТЮРКОЛОГА .....376

# CONTENT

## OTTOMAN EMPIRE

### SAFRASTYAN RUBEN

THE OTTOMAN EMPIRE: SOME PECULIARITIES  
OF THE GENESIS ..... 20

### BAIBURTYAN VAHAN

SEIZURE OF CONSTANTINOPLE BY THE  
TURK-OTTOMANS, THE WORLDWIDE HISTORICAL  
IMPLICATIONS ..... 32

### SVANIDZE MIKHAIL (GEORGIA)

THE THIRD CAMPAIGN OF SULEYMAN THE FIRST  
TO IRAN AND TURKISH-IRANIAN ARMISTICE FROM  
SEPTEMBER, 27TH, 1554 ..... 58

### SAHAKYAN LUSINE

TREBIZOND AND THE ADJACENT REGION IN THE  
ADMINISTRATIVE DIVISIONS  
OF THE OTTOMAN EMPIRE ..... 68

## TURKISH REPUBLIC

### *INTERNAL POLICY*

### TER-MATEVOSYAN VAHRAM

KEMALISM AS A SOCIAL MOVEMENT: TRANSFORMING  
PATTERNS OF COLLECTIVE IDENTITIES IN TURKEY ..... 86

### HOVSEPYAN LEVON

TURKISH DEFENCE INDUSTRY IN THE SPHERE OF  
MISSILE TECHNOLOGIES ..... 105

*FOREIGN POLICY*

**MELKONYAN KRISTINE**

POSITION OF THE GREAT POWERS AND TURKEY  
ON THE PROBLEM OF THE BLACK SEA STRAITS  
IN 1945-1946 ..... 124

**IVANOV VLADIMIR**

THE MAIN CONTURES OF TURKISH-GEORGIAN  
MILITARY-POLITICAL COOPERATION: THE DYNAMICS  
AND PERSPECTIVES OF DEVELOPMENT..... 142

**POGOSYAN BENIAMIN**

MAIN TRENDS IN TURKISH AMERICAN RELATIONS  
IN 2003-2008 ..... 161

**TURKIC PEOPLES**

**GUSAKOV VLADIMIR (UKRAINE)**

THE CONQUEST BY THE TURKS OF CENTRAL  
ASIA IN X-XI CENTURIES AND THE EMERGENCE  
ON ITS TERRITORY THE FIRST TURKIC STATES ..... 180

**HARUTYUNYAN ARAM**

THE PROBLEM OF RESETTLEMENT OF  
TURKS-MESHETS (AHISKA) IN SAMTSHE –JAVAKHK..... 196

**ARMENIAN TURKISH RELATIONS**

**YEGHIAZARYAN ARMAN**

ON THE PERIOD OF FOUNDATION OF HAMAMASHEN-  
HAMSHEN .....218

**STEPANYAN HASMIK**

ROLE OF ARMENIANS IN THE CULTURAL LIFE  
OF THE OTTOMAN EMPIRE (XIX CENTURY) .....229

**BERBEROGLU BERCH (USA)**

NATIONALISM AND ETHNIC CONFLICT IN THE MIDDLE  
EAST: FOCUS ON TURKISH-ARMENIAN RELATIONS  
IN THE OTTOMAN EMPIRE.....251

**PARSAMYAN SEDA**

PROBLEM OF TURKISH POLICY CONCERNING THE  
ARMENIAN EDUCATIONAL CENTERS AT THE END  
OF XIX - BEGINNING OF XX CENTURIES .....262

**HISTORIOGRAPHY**

**MURTUZALIEV SERGEY (RUSSIA)**

V.A POTTO ON THE PLACE AND SIGNIFICANCE OF  
CAUCASIAN FRONT IN THE RUSSIAN -TURKISH WAR  
OF 1828 - 1829 .....278

**SAFARYAN ALEXANDER, MELKONYAN RUBEN**

ACADEMICIAN V. GORDLEVSKY ON FORCED  
ISLAMIZATIONS IN OTTOMAN EMPIRE .....298

**HOVSEPYAN MARIAM**

ARMENIAN GENOCIDE IN THE MATERIALS OF THE  
CONSTANTINOPLE NEWSPAPER “CHAKATAMART”  
(XIX CENTURY ).....305



## PHILOLOGY

### **MIRZOYAN KNARIK**

|  |     |
|--|-----|
| THE STRUCTURAL AND SEMASIOLOGICAL<br>CHARACTERISTICS OF MODERN TURKISH<br>CONJUNCTIONS ..... | 314 |
|--|-----|

### **PETROSYAN TIGRAN**

|   |     |
|---|-----|
| THE LANGUAGE AND STYLE OF TEVFIK FIKRET'S<br>"HAZE" POEM..... | 323 |
|---|-----|

## DISCUSSION

### *2009 LOCAL ELECTIONS IN TURKEY*

### **SAFRASTYAN RUBEN**

|  |     |
|--|-----|
| UNEXPECTED RESULTS OF LOCAL ELECTIONS<br>IN TURKEY ..... | 332 |
|--|-----|

### **TER-MATEVOSYAN VAHRAM**

|   |     |
|---|-----|
| JUSTICE AND DEVELOPMENT PARTY IN THE LOCAL<br>ELECTIONS: COMPARATIVE ANALYSIS OF<br>ACHIEVEMENTS AND FAILURES ..... | 334 |
|---|-----|

### **HOVHANNISYAN ANUSH**

|  |     |
|--|-----|
| TURKEY: HONEST MEDIATION OR POLITICAL<br>BARGAINING..... | 346 |
|--|-----|

## REVIEWS

### **HOVHANNISYAN SIRAK**

|   |     |
|---|-----|
| DIFFICULTIES OF FAMILIARIZING WITH THE<br>CIVILIZATION OF "THE DAMNED LION" ..... | 362 |
|---|-----|

**TER-MATEVOSYAN VAHRAM**

“ZEITGEIST: GLOBAL POLITICS AND TURKEY’ BY HÜSEYİN  
BAĞCI: A REVIEW ESSAY .....368

***FROM THE HISTORY OF TURKISH STUDIES***

**SAFRASTYAN RUBEN**

JUBILEE OF WELL-DESERVED TURKOLOGIST .....376

## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆ

**ՕՍՄԱՆՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ.  
ԾԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Օսմանյան պետության ծագումնաբանության խնդիրը կարևորվում է նրանով, որ, ինչպես ընդգծում են ժամանակակից մասնագետներից շատերը, օսմանյան պետության հետագա պատմական զարգացման առանձնահատկությունները զգալիորեն պայմանավորված էին ծագումնաբանության փուլի առանձնահատկություններով<sup>1</sup>:

Օսմանյան պետության ծագումնաբանության առանձնահատկությունները բացատրող երկու հիմնական տեսություններ կան, որոնք առաջ են քաշվել դեռևս անցյալ դարում, սակայն մինչև այսօր չեն կորցրել իրենց նշանակությունը: Նրանցից առաջինի հեղինակն է բրիտանացի օսմանագետ Փոլ Վիթթը, որը գտնում էր, որ օսմանյան պետությունը իր գոյության առաջին փուլում հանդես էր գալիս որպես ղազինների պետություն (Ghazi State), այդպիսով՝ նախապատվություն տալով իսլամի կրոնի ռազմատենչ մեկնաբանության վրա հիմնված գաղափարական միասնությանը՝ որպես գլխավոր պետականաստեղծ գործոնի<sup>2</sup>:

Անցյալ դարի 70-80 - ական թվականներին այս տեսակետը սուր քննադատության ենթարկվեց ինչպես թուրք, այնպես էլ մի քանի արևմտյան օսմանագետների կողմից: Քննադատները հիմնականում բերում էին հետևյալ, պատմական իրականությանը չհամապատասխանող փաստարկեր. ինչպե՞ս կարող էին օսմանյան պետության հիմնադիրները լինել մուլեռանդ ու քրիստոնյաների նկատմամբ անհանդուրժող ռազմատենչ ղազիններ, եթե օսմանյան

---

<sup>1</sup> Տես, օրինակ. W. Pfaff, The wrath of nations: civilization and the furies of nationalism. New York, 1994, p. 102.  
<sup>2</sup> P. Wittek, The rise of the Ottoman Empire. London, 1938.

այդ պետությունը աչքի էր ընկնում «կրոնական հանդուրժողականությամբ»<sup>3</sup>: Արժե հիշատակել, որ այդ թեզի հեղինակը՝ Ճանաչված օսմանագետ Հալիլ Ինալչը իր ավելի վաղ աշխատություններում պաշտպանում էր «ղազիների պետության» հայեցակարգի կողմնակից: Նա գրում էր, որ դրանով կարելի է բացատրել օսմանյան պետությանը հատուկ ռազմատենչ բնույթը<sup>4</sup>:

Փոլ Վիթեքի տեսությունն ունի նաև իր կողմնակիցները մեր օրերի օսմանագետների շրջանում: Նրանցից կարելի է նշել Մեթին Հեփերի տեսակետը, որ գտնում է, որ այն հանգամանքը, որ օսմանյան պետությունը առաջացավ որպես «ղազիների պետություն», հանգեցրեց նրան, որ բանակը «բանալի» դերակատարում ստացավ<sup>5</sup>:

ԱՄՆ-ում բնակվող, ազգությամբ թուրք պատմաբան Ջեմալ Քաֆադարը, մասնակի ընդունելով Վիթեքի տեսությունը, ընդգծում է, թե օսմանյան պետության ծագումնաբանությունը պետք է դիտարկել որպես երկարատև, շուրջ հարյուր հիսուն տարի տևած գործընթաց, որի ընթացքում օսմանյան նվաճողները գերիշխանության հասնելու ու պահպանելու նպատակով օգտագործում էին բազմաթիվ միջոցներ, այդ թվում նաև ղազիական գաղափարախոսությունն ու քաղաքականությունը<sup>6</sup>:

Մյուս տեսությունը ստեղծել է թուրք պատմաբան Ֆուադ Քյոփրյուլյուն: Համաձայն վերջինիս, օսմանյան պետության առաջացումը պայմանավորված էր առաջին հերթին թուրքական էթնիկական գործոնով<sup>7</sup>: Այդ տեսությունը մեծաթիվ կողմնակիցներ ունի հիմնականում թուրք պատմաբանների շրջանում<sup>8</sup>:

---

<sup>3</sup> H. Inalcik, *The Ottoman Empire: the classical age, 1300 -1600*. London - New York, 1973, p. 7.

<sup>4</sup> H. Inalcik, *Land problems in Turkish history. – The Muslim world, 1955, 45, p. 222.*

<sup>5</sup> M. Heper, *Türkiye’de devlet geleneği*. [İstanbul], 2006, s. 49.

<sup>6</sup> C. Kafadar, *Between two worlds: the construction of the Ottoman State*. Berkeley, 1995, p. 121.

<sup>7</sup> F. Köprülü, *Osmanlı devletinin kuruluşu*. Ankara, 1959.

<sup>8</sup> M. T. Gökbilgin, *Rumelide yürükler, Tatarlar ve Evlâd-ı Fatihan*, İstanbul, 1957.

Նախապատվությունը տալով Պ. Վիթեքի տեսությանը՝ ընդգծենք, որ այն պետք է լրացվի անդրադարձով օսմանցի թուրքերի կողմից ուժային միջոցների կիրառման առանձնահատկություններին: Իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած, նրանք ընկալում էին իրենք իրենց որպես առաջամարտիկներ՝ քրիստոնյաների դեմ պայքարում: Այդ ստեղծում էր թուրքերի միջավայրում, իհարկե, համապատասխան ավանդույթների և հաստատությունների առկայության պայմաններում, հակաքրիստոնեական ռազմատենչ մոլեռանդության յուրահատուկ մթնոլորտ և թելադրում էր մեկ գերխնդիր՝ նվաճումներ ջիհադի քողի ներքո: 13-14-դդ. օսմանյան պետությանը բնորոշ էին համեմատաբար միատարր բնույթը, կրոնական մոլեռանդությունն ու գերռազմականացումը: Նրա գոյությունը հիմնականում ապահովվում էր զինված թալանի միջոցով, իսկ պետական գաղափարախոսությունը՝ արտաքին ու ներքին ջիհադի հայեցակարգն էր: Այդ տեսական դրույթով է պայմանավորված օսմանյան պետության ծագումնաբանության առանձնահատկությունների մեր ընկալումը:

\* \* \*

14-15-րդ դարերում ձևավորվեցին օսմանյան պետական կառույցի ու սոցիալական կառուցվածքի հիմնական բաղդրամասերը, ի հայտ եկան քաղաքական ու գաղափարական բնույթի մի շարք առանձնահատկություններ, որոնք իրենց խորը կնիքը դրեցին այդ պետության պատմության ողջ ընթացքի վրա:

Օսմանյան կայսրության սկիզբը դրվեց քայքայվող Իկոնիայի սելջուկյան սուլթանության կազմում գտնվող ոչ մեծ ուչբեյությունում (սահմանամերձ տիրություն) 13-րդ դարում: Այն պատկանում էր օղուզ թուրքերի քայքայված ցեղի մաս կազմող Օսմանի տոհմին: Ս. Շոուի բնորոշմամբ՝ այդ վաչկատուն ցեղը չունեւ արմատներ և պատրաստ էր իր ծառայությունները առաջարկել այն տիրոջը, ո-

րից ակնկալում էր ավելի մեծ շահ<sup>9</sup>: Այն քոչել էր Միջին Ասիայից եւ Իկոնիայի սելջուկյան սուլթանների կողմից նրանց մի մասի առաջնորդ էրթողուլը, Օսմանի հայրը, որպես ուչբեյություն ստացել էր քրիստոնյաներով բնակեցված տարածք Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում:

Սկզբնական շրջանում օսմանցիների թվաքանակը չէր անցնում 400 ընտանիքից<sup>10</sup>: Նրանց գոյության հիմնական աղբյուրը, ինչպես նաև գլխավոր զբաղմունքը, տեղաբնակ քրիստոնյա խաղաղ հողագործ բնակչության կողոպուտն ու ասպատակությունն էր, որին մասնակցում էր ողջ ցեղը, կանայք և երեխաները ներառյալ, ինչպես դա ընդունված էր քոչվոր ցեղերի մոտ: Սակայն արդեն Օսմանի օրոք որոշում է ընդունվում ավելի կազմակերպված բնույթ հաղորդել ռազմական գործողություններին, այդ նպատակով ստեղծվում են *աքընջըների* հեծելազորային ստորաբաժանումները: Այդ ոչ կանոնավոր ջոկատները, փաստորեն, լավ զինված հրոսակախմբեր էին, որոնք աչքի էին ընկնում իրենց դաժանությամբ: Հետագայում *աքընջըները* դարձան օսմանյան բանակի կարևոր ստորաբաժանումներ, որոնք սկսում էին իրենց գործողությունները հիմնական գործից երկու օր առաջ<sup>11</sup>: Նրանց հիմնական խնդիրն էր ոչնչացնել եւ թալանել հակառակորդի գույքը<sup>12</sup>, հրկիզել հանդիպակաց քաղաքները և գյուղաքաղաքները<sup>13</sup> և ոչ մեծ ջոկատներով ցրվելով հակառակորդի երկրում, սարսափ տարածել բնակչության շրջանում<sup>14</sup>:

---

<sup>9</sup> St. J. Show, *History of the Ottoman Empire and modern Turkey*. Vol. I: *Empire of the Gazis: the rise and decline of the Ottoman Empire, 1280-1808*. Cambridge, 1977, p. 13.

<sup>10</sup> D. Avcioğlu. *Türklerin tarihi*. Birinci kitap. Dördüncü basım. İstanbul, 1982, s. 162.

<sup>11</sup> İ. H. Uzunçarşılı, *Osmanlı devleti teşkilatından kapukulu ocakları*. II. Ankara, 1944, s.255.

<sup>12</sup> Şemseddin Sami, *Kamus-i Türki*. Dersaadet, 1318, s. 45 - 46.

<sup>13</sup> Ahmet Rasim, *Resimli ve haritalı osmanlı tarihi*. 2. cild, 2. tabı, İstanbul, 1328-1330, s. 149 - 150.

<sup>14</sup> M. Z. Pakalın, *Osmanlı tarih deyimleri ve terimleri sözlüğü*: I. İkinci basılış, İstanbul, 1971, s. 39.

Ուչբեյությունը չուներ հստակ սահմաններ, այդ պատճառով օսմանցիների ասպատակությունների գոհ էին դառնում ինչպես իրենց անմիջական իշխանության տակ գտնվող քրիստոնյաները, այնպես էլ հարևան բեյությունների կամ էլ սահմանակից Բյուզանդիայի հպատակները:

Օսմանյան ուչբեյությունը սկզբնական շրջանում ոչնչով չէր տարբերվում Իկոնիայի սելջուկյան սուլթանության արևմտյան սահմանամերձ տարածքներում գոյություն ունեցող այլ ուչբեյություններից<sup>15</sup>: Այստեղ լիովին իշխում էին կառավարման աշիրեթային (տոհմա-ցեղային) ձևերը<sup>16</sup>, որոնք համապատասխանում էին թյուրքական ցեղերի այն ժամանակվա մակարդակին եւ նպատակաուղղված էին զինված կողոպուտի առավել օպտիմալ կազմակերպմանը: Սոցիալական կառուցվածքը պարզունակ էր: Փաստորեն, օսմանյան ուչբեյությունում ողջ ցեղը իրենից ներկայացնում էր իշխող խավ, տեղաբնակ քրիստոնյա բնակչության կոլեկտիվ հարստահարիչ<sup>17</sup>: Նրա անդամների միջև էր բաժանված ողջ հողատարածքը՝ *իքթանների* (պայմանական տիրույթների) տեսքով:

Սակայն, օգտվելով իրենց աշխարհագրական դիրքի ընձեռած հնարավորություններից՝ անմիջական սահման այն ժամանակվա քրիստոնյա աշխարհի առաջատար ուժի՝ Բյուզանդական կայսրության հետ, օսմանյան բեյերը կարողացան իրենց նվաճողական նկրտումներին հաղորդել *ջիհադի* կամ *ղազավաթի* («անհավատների դեմ սրբազան պատերազմի») ձև և հանդես գալ որպես ողջ մահմեդական աշխարհի ներկայացուցիչներ: Դա նրանց հնարավորություն տվեց կենտրոնացնել իրենց ձեռքերում զգալի ուժ և հիմք նախապատրաստել լայնածավալ էքսպանսիայի համար:

---

<sup>15</sup> P. A. Гусейнов, Уджу – военно-феодалный институт в Малой Азии в XI - XII вв. – Тюркологический сборник 1974. М., 1978, с. 213-229.

<sup>16</sup> İ. H. Uzuncarşılı, Osmanlı devleti teşkilâtına medhal. İstanbul, 1941, s. 143.

<sup>17</sup> С. Ф. Орешкова, Государственная власть и некоторые проблемы формирования социальной структуры османского общества. – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 5.



Օսմանյան բեյությունը դարձավ մոլեռանդ եւ արկածախնդիր անհատ *ղազիների* "անհավատների" դեմ զինված պայքարի առաջամարտիկների կամ էլ նրանց այլևայլ խմբավորումների հավաքատեղի, որոնք այստեղ են համախառնվում Փոքր Ասիայի այլ բեյություններից<sup>18</sup>: Միջնադարյան թուրք պատմիչ ու բանաստեղծ *Աշըք Փաշազադեն* իր տարեգրության մեջ, բացի ղազիներից, հիշատակում է նաև երեք այլ համանման խմբավորումներ՝ լավ կազմակերպված, մահմեդական աշխարհի տարբեր տարածաշրջաններում լայնորեն տարածված ու մեծ համբավ վայելող *դերվիշներից* և *ախիներից*, ինչպես նաև *մարտնչող կանանցից* կազմված<sup>19</sup>: Դրանց պետք է ավելացնել նաև մահմեդական զանազան *թարիքաթների* (միստիկական եղբայրությունների) բազմաթիվ ներկայացուցիչներին<sup>20</sup>:

Այդ կազմակերպությունները կարևոր դեր կատարեցին օսմանյան պետականության կայացման մեջ: Մասնավորապես *ախիները* նպաստեցին կործանումից փրկված քաղաքների կյանքի վրա թուրքերի հսկողության հաստատմանը<sup>21</sup>: Մյուսները, համալրում էին *ուլեմաների* դասի շարքերը, որոնց դերը օսմանյան բեյությունում չափազանց մեծ էր: Այդ մահմեդական ֆանատիկոս կղերները ղեկավարում էին ձևավորվող պետական կառույցների մեծ մասը: Սակայն նրանց գլխավոր խնդիրն էր գեների ուժով «տարածել իսլամը անհավատների» շրջանում: Նրանցից շատերը մասնակցում էին ռազմական գործողություններին և, ինչպես գրում է թուրք պատմաբանը, «*մի բուն մյուրիդների* (աշակերտների - Ռ. Ս.) հետ միասին ձգնում էին հազարավոր թշնամիների»<sup>22</sup>: Նույն ախիները, ինչպես նաև կղերականները մեծ նշանակություն ունեցան օսման-

---

18 P. Wittek, *The rise of the Ottoman Empire*. London, 1938, p. 41.

19 А. М. Шамсутдинов, Проблемы становления османского государства по турецким источникам XIV-XV вв. – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 36 - 37.

20 F. Köprülü, *Osmanlı devletinin kuruluşu*. Ankara, 1959, s. 95 -102.

21 S. Yerasimos, *Az gelişmişlik sürecinde Türkiye*. 1. Cilt: Bizanstan Tanzimatı. İstanbul, 1977, s.194.

22 S. Yerasimos, *Az gelişmişlik sürecinde Türkiye*. 1. Cilt: Bizanstan Tanzimatı'a. İstanbul, 1977, s. 101.

յան բանակի առաջին կիսականոնավոր ու կանոնավոր ստորաբաժանումների ստեղծման համար: Մասնավորապես, *կադիների* ղեկավարության ներքո կազմավորվեցին առաջին *ենիչերիական* ջոկատները<sup>23</sup>:

Օսմանյան առաջին բեյերը նույնիսկ պաշտոնապես էին դիմում Փոքր Ասիայի այլ թյուրքական բեյությունների ղեկավարներին, խնդրելով զինված օգնություն ցուցաբերել իրենց՝ արևմուտքում «սրբազան պատերազմ» վարելու համար, և աջակցություն էին ստանում նրանցից շատերից<sup>24</sup>:

Օսմանյան բեյության հզորացման մեջ կարևոր դեր կատարեցին նաև Փոքր Ասիայից այստեղ մեծ քանակությամբ քոչած *յուրյուկները* և *թաթարները* (վաչկատուն թյուրքական ցեղեր): Նրանց այստեղ գրավում էր հարուստ ավարի հնարավորությունը: Ինչպես վկայում է թուրք պատմաբանը, նրանց միջավայրում նույնպես ակտիվություն էին ցուցաբերում ֆանատիկոս *դերվիշները*, որոնք դարձել էին զարգացման շատ ցածր մակարդակի վրա գտնվող և շամանիզմի ազդեցությունից դեռևս լիովին չձեռքազատված այդ քոչվորների հոգևոր առաջնորդները<sup>25</sup>: Այդ դերվիշների բարոյական հատկանիշների մասին պատկերացում է տալիս օսմանյան վաղ միջնադարի լավագույն գիտականերից մեկի՝ Ֆուադ Զյոփոյույուի *քալենդերիյե* թարիքաթին պատկանողների բնութագիրը, համաձայն որի նրանք այժմ էին ընկնում իրենց «*նիհիլիզմով*» և «*ահավոր իմմորալիզմով*»<sup>26</sup>:

Օսմանյան բեյերին և հետագայում՝ սուլթաններին հաջողվեց յուրյուկների ու թաթարների խոշոր զանգվածների առկայությունը օգտագործել, ինչպես նշում է մեկ այլ թուրք պատմաբան, «պետության համար ամենաբարենպաստ ձևով»<sup>27</sup>: Այդ «բարեն-

---

<sup>23</sup> И. Е. Петросян, К истории создания янычарского корпуса. – Тюркологический сборник 1978. М., 1984, с. 194.

<sup>24</sup> M. Akdağ, Türkiye'nin iktisadi ve içtimai tarihi, C. 1: 1243-1453. İstanbul, 1974, s. 153.

<sup>25</sup> F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s. 97 - 102.

<sup>26</sup> F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s.99.

<sup>27</sup> M. T. Gökgilgin, Rumelide Yürükler, Tatarlar ve Evlad-ı Fatihan. İstanbul, 1957, s.19.

պաստ» ձևերից էին նրանց օգտագործումը նվաճված հողերի գաղութացման համար, ինչպես նաև, որպես հիմնական զինուժ: Յուրյուկների և թաթարների մի մասին նվաճված տարածքներից հատկացվում էին ոչ մեծ հողակտորներ (*չիֆթլիք*), նրանց վրա պարտավորություն էր դրվում մշակել այն և անհրաժեշտության դեպքում մասնակցել զինված գործողություններին *յայյաների* ու *մյուսելլենների* նորաստեղծ ջոկատներում, դրա փոխարեն նրանք ազատվում էին հարկերի վճարումից, իսկ ռազմական գործողություններին մասնակցելու ընթացքում՝ ստանում էին ռոճիկ<sup>28</sup>: Այդ ստորաբաժանումները ստեղծվեցին համաձայն նախապես պատրաստված ծրագրի, որի հեղինակն էր ուլեմաների դասի ներկայացուցիչ *Ջենդերելի Քարա Հալիլը*, որը կապված էր *ախիների եղբայրության* հետ<sup>29</sup>: Պատահական չէր նաև այն հանգամանքը, որ *յայյաները* ու *մյուսելլենները* ստացան *հատուկ համազգեստ*, որը կրկնօրինակում էր *ախիների* հագուստը: Այդ համազգեստը, գրում էր մեկ այլ ուլեմա՝ Հոջա Սադեդդինը, որը վկայում էր նրանց *արտոնյալ դիրքի* մասին<sup>30</sup>:

Վերը նշված ստորաբաժանումների ստեղծումը օսմանյան պետության ձևավորման պատմության վաղ շրջանի կարևոր և բազմանշանակ իրադարձություններից էր: Այն բարձրացրեց բանակի մարտունակությունը, հնարավորություն տվեց ներգրավելու քոչվորների մի մասին պետական կառույցների մեջ, նպաստեց նրանց նստակյաց կյանքի անցմանը: Այդպիսով սկիզբ է դրվում օսմանյան գյուղացիությանը:

Մահմեդականացման քողի ներքո՝ քրիստոնյաների ստրկացման և թուրքացման քաղաքականություն օսմանյան բեյերը սկսեցին իրականացնել արդեն 14-րդ դարից: Այս ոլորտում օսմանյանների վաչկատուն տոհմը իր գոյության հենց սկզբից հանդես բերեց

<sup>28</sup> И. Е. Петросян, К истории создания янычарского корпуса. – Тюркологический сборник 1978. М., 1984, с. 192.

<sup>29</sup> Там же.

<sup>30</sup> D. Avcioglu, Türklerin tarihi. Birinci kitap. Dördüncü basım. İstanbul, 1982, s. 163.

բացառիկ մոլեռանդություն ու հետևողականություն: Նա օգտագործում էր ջիհադի հայեցակարգը տեղաբնիկ նստակյաց, հողագործությամբ զբաղվող, քրիստոնյա ազգաբնակչության վրա իշխանությունը հաստատելու և պահպանելու նպատակով<sup>31</sup>:

Մուրադ I սուլթանության շրջանում մտցվեց փենչիքի համակարգը, համաձայն որի՝ քրիստոնյա գերիների ընդհանուր թվաքանակի մեկ հինգերորդին 2-3 տարով ուղարկում էին փոքրասիական թյուրքական ցեղերի մոտ, որտեղ նրանց դավանափոխ էին անում, սովորեցնում թուրքերեն եվ օգտագործում էին ծանր ֆիզիկական աշխատանքների համար<sup>32</sup>: Դրանից հետո նրանք վերադարձվում էին սուլթանի արքունիք՝ համալրելով նրա անձնական ծառաների և նոր ստեղծված ենիչերիական զորքի կազմը<sup>33</sup> : Փենչիքը համապատասխանում էր Դուրանի պատգամին. «Եվ իմացեք, եթե դուք վերցրել էք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը, և նրա կողմից ուղարկվածինը...»<sup>34</sup>: Շարիաթի հարկային համակարգում նա մահմեդականներից պետության կողմից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր<sup>35</sup>: Այն գանձվում էր նաև Փոքր Ասիայի այլ թյուրքական բեյություններում<sup>36</sup>: Սակայն օսմանցիները հարմարեցրին այն ռազմական պահանջներին, ինչը նրանց տվեց հսկայական առավելություն մնացած բեյությունների նկատմամբ:

Հետագայում, երբ պակասեց ռազմագերիների հոսքը, մոտավորապես 14-րդ դարի կեսերից սկսվեց կիրարկվել *ղեշիրմեի* (մանկահավաքի) համակարգը, որի իրականացման ընթացքում ծնողներից

---

<sup>31</sup> С. Ф. Орешкова, Государственная власть и некоторые проблемы формирования социальной структуры османского общества. – Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы. М., 1986, с. 6.  
<sup>32</sup> W. Eton, A survey of the Turkish Empire. London, 1798, p. 62.

<sup>33</sup> И. Е. Петросян, К истории создания янычарского корпуса. – Тюркологический сборник 1978. М., 1984, с. 193 - 196.

<sup>34</sup> Сура 8: Добыча, 42. - Коран. Перевод и комментарии И. Ю. Крачковского. М., 1986, с. 157.

<sup>35</sup> Г. М. Керимов, Шариах и его социальная сущность. М., 1978, с. 173-179.

<sup>36</sup> К. А. Жуков, Эгейские эмираты в XIV - XV вв. М., 1988, с. 126.

խլում և ստրկացնում ու թուրքացնում էին օսմանյան իշխանության տակ գտնվող քրիստոնյաների արու զավակներին<sup>37</sup>: Դեշիրմեն, ինչպես նշվել է մասնագետների կողմից, հակասում էր շարիաթին<sup>38</sup>: Դիմելով դեվշիրմեյին առաջին թուրք սուլթանները լուծում էին կարևորագույն խնդիր. ոչ միայն հզորացնել բանակը, այլ նաև պահպանել իրենց իշխանությունը քրիստոնյա բնակչության վրա: Նույն նպատակին էին ծառայում հենց իրենք՝ ենիչերիները, որոնք օգտագործվում էին նաև Բալկանների մահմեդականացման գործընթացում<sup>39</sup>: Քրիստոնյաների բռնի մահմեդականացումը կազմում էր հպատակ ժողովուրդների նկատմամբ օսմանյան իշխանությունների կողմից իրականացվող քաղաքականության բաղկացուցիչ մասը, որը իր վերջնական տեսքով հանդես եկավ ավելի ուշ, Կոնստանդնուպոլսի գրավումից հետո, երբ, ինչպես նշում էր ժամանակին օսմանյան Թուրքիայի լավ գիտականերից մեկը, այն վերաճեց «կազմակերպված մոլեռանդության» համակարգի<sup>40</sup>:

Ի տարբերություն ավելի ուշ շրջանի Օսմանյան կայսրության՝ բեյության բնակչության կազմը ավելի միատարր էր: Վերնախավը կազմում էին թուրքական տարբեր ցեղերի ներկայացուցիչները՝ *դազիները*, օսմանյան տոհմի և հոգևոր զանազան եղբայրությունների ու թարիքաթների անդամները: Նրանց ձեռքում էր կենտրոնանում ռազմավարի հինական մասը: Նրանք էին տիրապետում անըդհատ ընդլայնվող երկրի հիմնական հողային և մարդկային ռեսուրսներին՝ *իքթաների* միջոցով, նրանք էլ ձևավորվող պետության ռազմական ու հոգևոր ղեկավարներն էին: Կարելի է համաձայնվել Քյոփրյուլյուի հետ, երբ նա գրում է, որ *14-րդ դարի բո-*

---

<sup>37</sup> Մ. Կ. Ջուլայան, Դեվշիրմեն (մանկահավաքը) Օսմանյան կայսրությունում ըստ թուրքական եւ հայկական աղբյուրների. – Պատմաբանասիրական հանդես, 1959, 2-3, էջ 247 – 256:

<sup>38</sup> Մ. Կ. Ջուլայան, Արեվմտյան Հայաստանը XVI-XVIII դդ. Երևան, 1980, էջ 328.

<sup>39</sup> E. Werner, Die Geburt einer Grossmacht - Die Osmanen (1300-1481). Berlin, 1966, S. 12-14.

<sup>40</sup> R. R. Madden, The Turkish Empire in its relations with Christianity and civilisation. London, 1862, p. 7.

լոր խոշոր պետական գործիչները թյուրքեր էին<sup>41</sup>: Այդպես սկսեց ձևավորվել օսմանյան իշխող ռազմաֆեոդալական դասակարգը: Դավանափոխ քրիստոնյաների ներգրավումը իշխող դասակարգի մեջ 13-14 դդ. կրում էր եզակի բնույթ: Այդ դասակարգի իշխանությունը հիմնվում էր զինված ուժի օգտագործման ամենադաժան ձևերի վրա: Որպես օժանդակ, սակայն կարևոր միջոց, հանդես էր գալիս քրիստոնյաների բռնի մահմեդականացումը, որը հասել էր մեծ չափերի: Իրականությանը չի համապատասխանում նույն հեղինակի պնդումը այն մասին, որ այդ շրջանում մահմեդականուցումը կրում էր «սահմանափակ բնույթ և ընթանում էր դանդաղ»<sup>42</sup>, քանի որ, ինչպես նշում է թուրք ճանաչված միջնադարագետներից Ի. Հ. Ուզունչարշըլըն, սովորաբար թուրքական նվաճումներից արդեն 10 -15 տարի անց բալկանյան քաղաքները ստանում էին թուրքական տեսք<sup>43</sup>: Քրիստոնյաների որոշակի քանակի պահպանումը պայմանավորված էր զուտ տնտեսական պատճառներով, քանի որ թյուրքական քոչվոր ու կիսաքոչվոր ցեղերը դեռևս չունեին տնտեսավարման անհրաժեշտ ունակություններ:

Չիֆթչիները (չիֆթլիքների տերերը), որոնք, ինչպես նշել էինք վերեում, ներկայացնում էին զարգացման ավելի ցածր մակարդակի վրա գտնվող թյուրքական ցեղեր, կազմում էին միջանկյալ խավ: Հետագայում, երբ յայաների ու մյուսելլենների ջոկատները կորցրեցին իրենց ռազմական նշանակությունը, նրանք զրկվեցին իրենց արտոնություններից ու համալրեցին մահմեդական գյուղացիության շարքերը: Ստորին խավը կազմում էին կենդանի մնացած քրիստոնյաները: Նրանց թիվը այդ շրջանում համեմատաբար մեծ չէր, քանի որ ռազմավարի մեծ չափերի և հասարակության ու պետության պարզունակ կառուցվածքի պայմաններում օսմանյան իշխող դասակարգը չուներ մեծ շահագրգռվածություն նրանց աշխատանքի արդյունքների մեջ:

<sup>41</sup> F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s. 83.

<sup>42</sup> F. Köprülü, Osmanlı devletinin kuruluşu. Ankara, 1959, s. 82.

<sup>43</sup> İ. H. Uzunçarşılı, Osmanlı tarihi. I. Cilt: kuruluştan İstanbul'un fethine kadar. Ankara, 1947, s. 267.

Այսպիսով՝ եզրակացնենք: Իրենց պատմության ամենավաղ շրջանից սկսած օսմանյան թուրքերը ընկալում էին իրենք իրենց որպես առաջամարտիկներ՝ քրիստոնյաների դեմ պայքարում: Այդ ստեղծում էր նրանց միջավայրում համապատասխան ավանդույթների և հաստատությունների առկայության պայմաններում հակաքրիստոնեական ռազմատենչ մոլեռանդության յուրահատուկ մթնոլորտ և թելադրում էր մեկ գերխնդիր՝ նվաճումներ ջիհադի քողի ներքո: 13-14-դդ. օսմանյան պետությունը բնորոշ էին համեմատաբար միատարր բնույթը, կրոնական մոլեռանդությունը ու գերռազմականացումը: Նրա գոյությունը հիմնականում ապահովվում էր զինված թալանի միջոցով, իսկ պետական գաղափարախոսությունը՝ արտաքին ու ներքին ջիհադի կոնցեպցիան էր: Այն, ըստ էության, ինչպես և Փոքր Ասիայի արևմուտքում առաջացած այլ թյուրքական բեյությունները, «ղազիների պետություն» էր: Սակայն նա միակ «ղազիների բեյությունն» էր, որը վերաճեց կայսրության: Այդ կայսրությունը դարերի ընթացքում ենթարկվեց բազմաթիվ ձևափոխումների, սակայն պահպանեց այն մոլեռանդ ու ռազմատենչ էությունը, որն ի հայտ էր եկել դեռևս նրա ծագումնաբանության ժամանակաշրջանում:

## ԹՈՒՐՔ-ՕՍՄԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Միջին դարերում Թուրքեստանի և Եվրասիայի անժայրածիր տափաստաններից ծայր էր առել թյուրքալեզու վաչկատուն ցեղերի հուժկու գաղթարշավ դեպի Արևմուտք: Հանգրվանելով հնագույն քաղաքակրթությունների օրրան Փոքր Ասիայում, նրանց հաջողվեց ստեղծել պետական կազմավորումներ, որոնք աստիճանաբար հզորանալով ու ծավալվելով, սկսեցին հավակնել դառնալու, ի հակակշիռ բյուզանդական կայսրության, Մերձավոր Արևելքում ուժային նոր կենտրոնի: Թուրքերը վերածնեցին, միավորեցին ու նոր շունչ հաղորդեցին իսլամական աշխարհին: Հիրավի, այսպիսով հրապարակ էր գալիս «անհաշտ ու մոլեռանդ իսլամի մի նոր տեսակ՝ թուրքական իսլամ»<sup>1</sup>:

1071 թ. օգոստոսի 19-ին, Փոքր Ասիայի արևելքում, Մանազկերտ քաղաքի մոտ տեղի ունեցավ ճակատամարտ սելջուկ-թուրքերի և բյուզանդացիների միջև: Այդ ճակատարտը իր հետևանքներով հանդիսացավ համաշխարհային պատմության բախտորոշ անցքերից մեկը: Դա թշնամական ահռելի ուժերի սովորական բախում չէր, այլ կենաց ու մահու գոտեմարտ երկու վիթխարի կայսրությունների և երկու համաշխարհային կրոնների միջև:

Մանազկերտի ճակատամարտն ավարտվեց բյուզանդական զորքերի սոսկալի պարտությամբ: Պրոֆեսոր Հ. Գելցերի արտահայտությամբ «դա Բյուզանդական մեծ պետության մահվան օրն էր»: Մանազկերտի աղետը ցնցել էր նաև քրիստոնյա աշխարհը: Ճակատամարտից երեք տարի անց, 1074 թ. Հռոմի Գրիգորիոս VII պապը կոչով դիմեց այն քրիստոնյաներին, որոնք պատրաստ են

---

<sup>1</sup> Լեո, Երկերի ժողովածու, Երկրորդ հատոր, Երևան, 1967, էջ 692:



«պաշտպանել քրիստոնեության սուրբ լույսը»: Այդ կոչում առաջին անգամ շոշափվում էր Կոստանդնուպոլսի վրա կախված վտանգը, ինչպես նաև «ծովից այն կողմ ապրող» քրիստոնյաներին ռազմական օգնություն ցուցաբերելու անհրաժեշտությունը:

1176 թ. սեպտեմբերին Միրիոկեֆալոնեի մոտակայքում սելջուկները երկրորդ խոշոր պարտությունը հասցրին բյուզանդացիներին: Մանուիլ կայսրը իր ջախջախիչ պարտությունը համեմատում էր Մանազկերտի ճակատամարտի ողբերգական ելքի հետ: Ընդ որում, նա նկատի չունեւ միայն հարցի ռազմական կողմը, այլ աչքի առաջ ուներ նաև այդ իրադարձության հեռու գնացող քաղաքական հետևանքները<sup>2</sup>:

Պատահական չէ, որ այդ իրադարձությունը ևս Եվրոպայում ընկալվեց որպես համաքրիստոնեական տարողություն ունեցող աղետ, որն ուժգին հարված էր հասցնում նաև «անհավատների» դեմ խաչակիրների փայփայած ծրագրերին, նսեմացնելով խաչակրության ողջ գաղափարախոսությունը:

Կարծես ճակատագրի ծաղր էր, որ Միրիոկեֆալոնեի մոտ տեղի ունեցածից քառորդ դար անց, խաչակիրները մի այնպիսի ծառայություն մատուցեցին թուրք-սելջուկներին, որը բախտորոշ նշանակություն ունեցավ ոչ միայն բյուզանդական կայսրության, այլև ողջ տարածաշրջանի համար: 1204 թ. չորրորդ խաչակրաց արշավանքի մասնակից լատինական ասպետները շարժվեցին ոչ թե դեպի Պաղեստին «Տիրոջ գերեզմանը և Սրբազան հողերը անհավատներից ազատագրելու» համար, ինչպես նախապես ծրագրված էր, այլ հանդես եկան հավատի գծով իրենց եղբայրների՝ Կոստանդնուպոլսի քրիստոնյաների դեմ: Նրանք գրոհով գրավեցին Արևելքի քրիստոնյաների պատվար համարվող այդ քաղաքը և այն մատնեցին կողոպուտի ու ավերածության<sup>3</sup>:

---

<sup>2</sup> Петросян Ю. А., Османская империя, Москва, 2003, с. 17.

<sup>3</sup> Рансимен С., Падение Константинополя в 1453 году, Москва, 1983, с. 13-16.

Ինչպես հայտնի է, XIII դարի վերջին տասնամյակներին Փոքր Ասիայի հյուսիս-արևմուտքում ծնունդ առավ օսմանյան բեյությունը (բեյլիք), որը իր ծննդյան առաջին իսկ օրերից դրսևորում էր անզուսպ ծավալապաշտական ձգտումներ: Օսմանի (1258-1324) անունով և՛ բեյությունը և՛ դինաստիան հետագայում կոչվեցին օսմանյան: Օսմանի ռազմիկները հանդես էին գալիս հավատի համար մարտնչողների դերում («ղազի»), քանի որ նրանց պայքարը ուղղված էր «անհավատ» բյուզանդացիների դեմ:

Օսմանի նվաճողական նկրտումները գնում էին շատ հեռուները: Իրար հետևից զավթելով բյուզանդական հողերը և դրանք միացնելով իր բեյլիքին, նա գերագույն նպատակ էր համարում Կ. Պոլսի գրավումը: Օսմանի մասին հյուսված լեգենդներից մեկում պատմվում է, որ մի անգամ երազում նա տեսնում է մի ծառ, որը հուժկու թափով աճելով, իր ճյուղերով ծածկում է ողջ աշխարհը: Այդ ծառի տակ Օսմանը նկատում է չորս լեռնաշղթաներ՝ Կովկասյան, Ատլասյան, Տավրոսի և Բալկանյան: Նրանց ստորոտներից սկիզբ էին առնում չորս գետեր՝ Տիգրիսը, Եփրատը, Նեղոսը և Դանուբը: Դաշտերում աճում էր հարուստ բերք, իսկ լեռները պատած էին խիտ անտառներով: Հովիտներում երևում էին քաղաքներ, որոնք զարդարված էին գմբեթներով, բուրգերով, սլացիկ սյուներով ու աշտարակներով, որոնց բոլորի վրա դրոշմված էր կիսալուսինը: Միանգամայն անակնկալ կերպով ծառի ճյուղերի տերևները սկսում են ձգվել ու երկարել, վերածվելով սրերի սայրերի: Բարձրանում է փոթորիկ, որն այդ սրերը տանում է դեպի Կ. Պոլսի կողմը<sup>4</sup>:

Այս լեգենդի թաքնված իմաստը նախ այն է, որ Օսմանի ծավալապաշտական երազանքների հանգրվանը Կ. Պոլիսն էր: Սակայն ամբողջությամբ վերցրած աշխարհակալ կայսրությունն ստեղծելու վերաբերյալ դա մի ամբողջ քաղաքական ծրագիր էր, որն Օսմանը ավանդ էր թողնում իր ժառանգորդներին: Իր կյանքի մայրամուտին գրավելով Աքիսար քաղաք-ամրոցը, Օսմանը իր զորքերով

---

<sup>4</sup> Лорд Кинросс, Расцвет и упадок Османской империи, Москва, 1999, с. 32.

հայտնվեց Բոսֆորի ափերին: Դրանով իսկ կատարվել էր Կ. Պոլիսը շրջափակելու ուղղությամբ առաջին լուրջ քայլը: Թուրքական պատմական ավանդույթի մատուցմամբ, գտնվելով մահվան մահճում, Օսմանը իր որդուն՝ Օրխանին, պատվիրել է. «Ուրախացրու իմ թռչող ոգին հաղթանակների փայլուն շարքով, քո ձեռքերով տարածիր կրոնը»: Կյանքին հրաժեշտ տալուց հետո Օլիմպոս լեռների ստորոտին Օսմանի համար կառուցվեց մի դամբարան, որը ծովահայաց կերպով նայում էր դեպի Կ. Պոլիս, կարծես ամեն վայրկյան հիշեցնելու համար «գերագույն նպատակի» մասին<sup>5</sup>:

Հոր մահվանից հետո ստանձնելով բեյությունը, Օրխանը (1324-1360) իր առաջնահերթ խնդիրն էր համարում իր հոր կիսատ թողած գործը ավարտին հասցնելը: Բրուսան գրավելուց և այն իր մայրաքաղաքը դարձնելուց հետո<sup>6</sup>, Օրխանը գրավեց Նիկեան<sup>7</sup>, իսկ ապա Մարմարա ծովի ափին գտնվող Նիկոմեդիան<sup>8</sup>: Այնուհետև նա սկիզբ դրեց օսմանների կողմից եվրոպական տարածքների ռազմակալմանը: 1338 թվականից թուրքերը սկսեցին պարբերաբար ասպատակ սփռել Թրակիայում: Ամենայն հավանականությամբ, Կ. Պոլսի պաշտպանունակության մակարդակը շրջափելու նպատակով Օրխանը երեք տասնյակ նավերով հայտնվեց Բյուզանդիայի մայրաքաղաքի պատերի մոտ: Տեղի ունեցած ճակատամարտում, սակայն, նրա ջոկատը ջախջախվեց բյուզանդացիների կողմից:

Օսմանցիները միակը չէին, որ երազում էին տիրանալ Կ. Պոլսին: Անատոլիական Կարասու, Սարուխան, Այդին, Մենթեշե և այլ ծովափնյա բեյությունները, որոնք գործում էին ինքնուրույն, առանց օսմանյան բեյության հետ կապեր ունենալու, 1359 թ. առաջին անգամ փորձ կատարեցին գրոհելու Կ. Պոլսի անառիկ համարվող պարիսպները<sup>9</sup>, սակայն կրեցին անհաջողություն:

---

<sup>5</sup> Лорд Кинросс, *նշվ. աշխ.*, էջ 35:

<sup>6</sup> Օսմանները Բրուսան վերանվանեցին Բուրսայի և այն դարձրին օսմանյան պետության առաջին մայրաքաղաքը:

<sup>7</sup> Թուրքերեն Իզմիր:

<sup>8</sup> Թուրքերեն Իզմիր:

<sup>9</sup> История Византии, том 3, Москва, 1967, с. 162.

Սուլթան Բայազիդ I-ի (1389-1402)<sup>10</sup> մտասնեռումը ևս Կ. Պոլիսն էր: Նա նույնպես կռահել էր, որ առանց այդ քաղաքին տիրելու հնարավոր չէր ամբողջական կայսրության ստեղծումը: Բայազիդը որոշեց փորձել իրականացնելու Օսմանի խորհրդանշական «երազը», առավել ևս, որ այդ նպատակի իրագործման համար կարծես թե ստեղծվել էր նպաստավոր իրադրություն<sup>11</sup>: 1394 թ. Բայազիդը բյուզանդական կայսր Մանուիլ II-ին ներկայացրեց վերջնագիր, պահանջելով ավելացնել իրեն վճարվող հարկերը: Միաժամանակ նա կայսրի առջև դնում էր հետևյալ խնդիրը. այսուհետև թուրք դատավորը (կադի) իրավասու է դատելու ոչ միայն Կ. Պոլսում ապրող մահմեդականներին, այլև քննության ենթարկելու մահմեդականների և քրիստոնյաների միջև ծագած խնդիրները: «Եթե չես ցանկանում ենթարկվել ինձ,- նախագզուշացվում էր կայսրը,- ապա փակիր քո քաղաքի դարպասները և կառավարիր նրա ներսում, իսկ պատերից դուրս բոլորը իմն է»<sup>12</sup>:

Ստանալով կայսրի մերժումը, սուլթանը հրամայեց ավերել ու կողոպտել Կ. Պոլսի շրջակայքը, քաղաքը մեկուսացնել ցամաքից և արգելք հանդիսանալ ծովի վրայով նրա մատակարարմանը հացով ու այլ սննդամթերքներով: Կ. Պոլսի յոթամսյա պաշարումից հետո, երբ քաղաքը սովի մատնվելու պատճառով կայսրը հարկադրված ընդունեց սուլթանի առաջադրած ծանր պայմանները, քաղաքի պաշարումը ժամանակավորապես հանվեց, սակայն երկու տարի անց Բայազիդը կրկին հայտնվեց քաղաքի պարիսպների մոտ, այն գրավելու վճռականությամբ: 1395թ. թուրքերի գրոհը հետնողվեց մայրաքաղաքի պաշտպանների կողմից: Գազազած սուլթանը հրամայեց գումարել դատարան, որը միապետի ճնշման ներքո

---

<sup>10</sup> Բայազիդ I-ը պատմության մեջ է մտել «Իլդիրիմ» («Կայծակնային») մականունով:

<sup>11</sup> Inalçik H., Bāyāzed I, Encyclopaedia of Islam. 2<sup>nd</sup> Edition, Leyden-London, 1954.

<sup>12</sup> Grecu V., Ducas. Istoria turco-bizantina (1341-1462), București, 1958, p. 77.

որոշում կայացրեց սպանել Պալեոլոգոսների կայսերական ընտանիքի բոլոր անդամներին:

Սակայն այդ դաժան դատավճիռը մեծ վեզիր Ալի-Փաշայի միջնորդությամբ չեղյալ հայտարարվեց: Վերջինս սուլթանին առաջարկեց կոմպրոմիսային տարբերակ՝ կտրել մի քանի բյուզանդական մեծատոհմիկ ազնվականների ձեռքերը և հանել աչքերը<sup>13</sup>:

Թուրքերի դեմ նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու վերաբերյալ Եվրոպայից ստացվող լուրերը ստիպեցին Բայազիդ I-ին հետաձգելու Կ. Պոլիսը գրավելու իր ծրագրերը: Բալկաններում տարած իր մեծ հաղթանակից հետո 1400 թ. սուլթանը կրկին գորաշարժ կատարեց դեպի Կ. Պոլիս: Սակայն քաղաքի գրավման այս փորձը ևս ավարտվեց անհաջողությամբ: Միանգամայն ակնհայտ էր, որ առանց պաշարողական տեխնիկայի և ուժեղ նավատորմի, որն անհրաժեշտ էր ծովային շրջափակում իրականացնելու համար, անհնար էր գրավել այդ ուժեղ ամրացված քաղաքը:

Անսպասելիորեն Բյուզանդիայի համար փրկություն եկավ Արևելքից: Կենտրոնական Ասիայից հեղեղի պես Փոքր Ասիա ներխուժեցին Լանկ-Թամուրի (1370-1405) հորդաները: 1402 թ. հուլիսի 25-ին Անգորայի<sup>14</sup> մոտ տեղի ունեցած ճակատամարտում օսմանցիները կրեցին ջախջախիչ պարտություն, իսկ Բայազիդ I-ը գերի ընկավ Թամուրի ձեռքը: Այդ ճակատամարտը կես հարյուրամյակ հետաձգեց մեռնող կայսրության կործանումը<sup>15</sup>:

Սուլթան Մուրադ II-ը (1421-1444 և 1446-1451), որի կառավարման շրջանում Օսմանյան կայսրությունը նշանակալիորեն ամրապնդվել էր, որոշեց իր ավարտին հասցնել Բյուզանդական կայսրության խորտակման գործը, որն այդ ժամանակ ապրում էր հոգևարքի ջղաձգումների մեջ<sup>16</sup>: Երբ սուլթանը 1422 թ. մեծ գորաշարժ կատարեց դեպի Կոստանդնուպոլիս և պաշարեց քաղաքը, կրկին հանդիպեց քաղաքի պաշտպանների հերոսական դիմադ-

<sup>13</sup> Лорд Кинросс, нշվ. աշխ., էջ 75-76:

<sup>14</sup> Ներկայումս Անկարա:

<sup>15</sup> История Византии, том 3, с. 172.

<sup>16</sup> Vasiliev A. A., History of the Byzantine Empire, Madison, p. 640.

րությանը: Հանդգվելով, որ այս անգամ ևս իրեն չի հաջողվելու իրականացնել իր նվիրական իղձը, սուլթանը անմիջապես հանեց պաշարումը, առավել ևս, որ իր ժառանգորդների միջև սկսվել էին դինաստիական երկպառակություններ և բացի այդ Անատոլիայից գալիս էին վատ լուրեր, որտեղ ինքնագլխության ձգտող Պերմիյան, Մենթեշե, Սարուխան, Այդին, Համիդ բեյլիքները դարձյալ գլուխ էին բարձրացրել<sup>17</sup>: Թեև հետագա տարիներին Մուրադը չէր դրսևորում ռազմաշունչ ձգտումներ Կ. Պոլսի նկատմամբ, սակայն չէր կարելի վստահ լինել, որ նրա նպատակների հետաձգումը կարող է երկար տևել:

Հովհաննես VIII Պալեոլոգոս կայսրը այն համոզմունքին էր, որ կայսրության փրկությունը միայն Արևմուտքի օգնության մեջ է: Որ միայն արևմտյան կաթոլիկ եկեղեցին կարող է համախմբել Արևմուտքի ուժերը Բյուզանդիան վերահաս կործանումից փրկելու համար: 1438/1439 թթ. Եվգենիոս IV պապի հրավերով գումարված Ֆերրարա-Ֆլորենցիայի տիեզերական ժողովում ունիա (միության համաձայնագիր) կնքվեց կաթոլիկ և ուղղափառ եկեղեցիների միջև: Լատիններին հաջողվեց կաթոլիկների հավատո հանգանակը և կրոնական ծեսերը պարտադրել հունադավան եկեղեցուն<sup>18</sup>: Ստորագրելով ունիան, կայսրը քաջ գիտակցում էր, որ իր այդ քայլը հանդիպելու է մայրաքաղաքի բնակչության ուժգին դիմադրությանը: Իսկապես, Ֆլորենցիայի ունիան զգվանքով մերժվեց հունական հոգևորականության մեծամասնության և ժողովրդական զանգվածների կողմից: Եկեղեցիների միության այդ ակտը աննկարագրելի հուզմունքի առիթ տալով չվավերացվեց հունական կղերի կողմից: Այն մեռնող քաղաքին բերեց նոր երկպառակություններ<sup>19</sup>: Իր հավատին և ավանդույթներին ջերմեռանդորեն նվիրված հասարակ ժողովուրդը հակված էր մտածելու, որ դաշինքը

---

<sup>17</sup> Getz F., Die Eroberung von Konstantinopel, Leipzig, 1920.

<sup>18</sup> Gibbon E., "Histoire de la décadence et de la Chute de l'Empire Romain", t. II, Paris, 1843, p. 838-845.

<sup>19</sup> Gill J., The Council of Florence, Cambridge, 1959, p. 349-350.

«հերետիկոս» Արևմուտքի հետ չի կարող փրկություն բերել իրեն, կամ փոխել իր ճակատագիրը<sup>20</sup>:

Դեռևս Մուրադ II-ի կենդանության օրոք գահ բարձրացած Մեհմեդ II-ը (1444-1446, 1451-1481) 1446 թ. գարնանը ծրագրել էր հարձակում գործել Կ. Պոլսի վրա և մեկ անգամ ընդմիջտ լուծել իր նախորդների անավարտ գործը: Սակայն մեծ վեզիր Խալիլ Չանդարլը փաշան կարողացավ հետ կանգնեցնել նրան այդ քայլից, որպես փաստարկ բերելով այն, որ օսմանների բանակը այդ ժամանակ ռազմական գործողություններ էր վարում երկու ճակատով՝ միաժամանակ Հունաստանի և Ալբանիայի սահմանների մոտ:

1451 թ. Մուրադ II-ի մահվանից հետո Մեհմեդը ստանում է գործողությունների կատարյալ ազատություն: Առհասարակ, քանի դեռ հայրը կենդանի էր, սուլթանական գահը գրավելու տարիներին նա իրեն պահում էր համեմատաբար զուսպ ու հավաքված<sup>21</sup>: Հոր մահվանից հետո ևս առաջին ամիսներին նա ընդունել էր խաղաղասերի կեցվածք: Իրար հետևից Ադրիանոպոլիս ժամանող օտարերկրյա դեսպանությունների նկատմամբ նա ցուցաբերում էր շեշտված սիրալիր վերաբերմունք և վերահաստատում իր հոր՝ Մուրադի կնքած պայմանագրերը: Երբ Կ. Պոլսից Կոստանտին XI Պալեոլոգոս Դրագասի (1449-1453) դեսպանները ժամանեցին իր մայրաքաղաքը, նրանք հաճելիորեն զարմացել էին Մեհմեդ II-ի կողմից նրանց նկատմամբ ցուցաբերած բարյացակամ ու մեղմ վերաբերմունքից: Սուլթանը ոչ միայն Դուրանի վրա երդվեց հարգել Բյուզանդիայի տարածքային ամբողջականությունը, այլև խոստացավ կայսրին վճարել տարեկան հարկ երեք հազար ասպերի չափով<sup>22</sup>:

Կ. Պոլսում Մեհմեդի այդ խաղաղասեր ու մեղմ վարքագիծը մեկնաբանվեց որպես թուլության նշան և հակում դեպի կոմպրոմիսների քաղաքականությունը: Դա պարզապես մոլորություն էր:

---

<sup>20</sup> St̄u Diehl Ch., De quelques croyances byzantines sur la fin de Constantinople, "Byzantinische Zeitschrift", XXX, 1930.

<sup>21</sup> St̄u Babinger F., Mehmed der Eroberer und seine Zeit. Weltenstürmer einer Zeitenwende, München, 1953.

<sup>22</sup> Hasluck F. W., Athos and its Monasteries, London, 1924, p. 50.

Նրա խաղաղասիրական վարքագիծը շինծու և կեղծ էր: Նրան ձեռնտու էր առայժմ խնամքով թաքցել իր նվաճողական մեծ ծրագրերը: Իրականում սուլթանը այրվում էր ժամ առաջ Կ. Պոլիսը գրավելու և «ռոմերի» կայսրությունը կործանելու մարմաջով: Նա ցանկանում էր միավորել թուրքերի եվրոպական և ասիական տիրույթները, որոնց արանքում սեպի պես խրված էր Կ. Պոլիսը, վերացնել կայսրության վերջին մնացուկները և այդ հիանալի քաղաքը դարձնել իր մայրաքաղաքը<sup>23</sup>:

Այդ մեծ նպատակի կենսագործման համար, սակայն, անհրաժեշտ էր խորքային եղանակով իրագործել նախապատրաստական աշխատանքներ: Նախ անհրաժեշտ էր ամրապնդել իր թիկունքը: Այդ նպատակով նա իր արևմտյան հարևանների հետ կնքեց մի շարք խաղաղության պայմանագրեր: Այնուհետև իր զորքերը շարժելով դեպի Արևելք՝ սուլթանը 1451-1452 թթ. ընթացքում ընկճեց Կարամանների ուժեղ բեյությունը և նրա էմիրի հետ կնքեց իր համար ձեռնտու պայմանագիր:

Մշտական վախ ունենալով իր իշխանության համար, սուլթանը ձեռնամուխ է լինում գահի բոլոր հավանական թեկնածուների ոչնչացմանը: Պատմվում է, որ երբ Անատոլիայից Մեհմեդի Էդիրնե ժամանելու կապակցությամբ 1451 թ. փետրվարի 18-ին պալատում կազմակերպվում է հանդիսավոր ընդունելություն, իր հոր՝ Մուրադի այրին, օսմանյան ազնվագարմ ընտանիքներից սերած մի կին, մոտենում է Մեհմեդին, որպեսզի ցավակցություն հայտնի հոր մահվան կապակցությամբ և շնորհավորի գահ բարձրանալու առթիվ: Մինչդեռ հենց այդ նույն պահին, նրա հրամանով, հարեմի լողարանում խեղդամահ արեցին այդ կնոջ իննամսյա որդուն՝ Ահմեդին՝ որն իր եղբայրն էր: Իսկ դժբախտ մանուկի մայրը տեղնուտեղը կնության տրվեց Մուրադ II-ի վեզիրներից մեկին՝ Իախաքփաշային, որը նշանակվել էր Անատոլիայի բեյլերբեյ<sup>24</sup>:

<sup>23</sup> Inalçik H., Mehmed the Conqueror (1432-1481) and His Time. – “Speculum”, XXXV (3), 1960, p. 408-427.

<sup>24</sup> St' u Wittek P., The Rise of the Ottoman Empire, London, 1938



Պալատում իր հավանական ու երևակայական թշնամիներից ազատվելուց հետո սուլթանը հանգուցային պաշտոններում նշանակեց իր նկատմամբ անվերապահ հավատարմությամբ աչքի ընկած մարդկանց, իսկ անվստահելիներին մասամբ հեռացրեց պաշտոններից, մասամբ վերացրեց<sup>25</sup>: Մեհմեդ II-ի նեմզ ու դավադիր, ծայրահեղ դաժան խառնվածքը բացառում էր քաղաքական ընդդիմության նույնիսկ չնչին գոյությունը: Նրա միայն անունը սարսափ էր ազդում իր հպատակների վրա:

Դեռևս 1396 թ. Բոսֆորի ասիական ափին սուլթան Բայազիդ I-ը կառուցել էր Անադոլուի հիսար ամրոցը: Մեհմեդ II-ը 1452 թ. մարտին հրամայեց Բոսֆորի հակառակ եվրոպական ափին, նեղուցի ամենանեղ տեղում, Անադոլուի հիսարի դեմ-դիմաց կառուցել Ռումելիի հիսար ամրոցը: Այդ երկու ամրոցների գոյությունը հնարավորություն էր տալու թուրքերին ցանկացած պահին Կ. Պոլիսը կտրել Սև ծովից և դրանով իսկ դադարեցնել մերձսևծովյան շրջաններից հացի մատակարարումը բյուզանդական մայրաքաղաքին, հսկողություն սահմանել նեղուցների նկատմամբ և ուժեղ հենակետ ստեղծել Կ. Պոլսի շրջապատման համար: Ամրոցի շինարարության նկատմամբ հսկողության գործը սուլթանն անձամբ վերցրել էր իր վրա: Ընդամենը չորս ու կես ամսվա ընթացքում ամրոցը կառուցվեց: Թուրքերն այն կոչեցին «բողազ քեսան» («կոկորդ կտրող»), իսկ հույները՝ Ռումելիի հիսար, որը բառացի նշանակում էր ռումերի (հույների) հողի վրա կառուցված ամրոց: Նոր ամրոցում սուլթանը տեղակայեց ուժեղ և լավ մարզված կայազոր, տեղադրեց խոշոր տրամաչափի թնդանոթներ և հրամայեց մաքսային ստուգման ենթարկել Բոսֆորի նեղուցով անցնող բոլոր նավերը: Ցանկացած նավ ամրոցի դիմաց պետք է իջեցներ առագաստներն ու կանգ առներ՝ նեղուցից անցնելու վարձը վճարելու և հետագա նավարկության թույլտվություն ստանալու համար: Այդ հրամանին չենթարկվելու դեպքում կարգադրված էր հրետանային կրակով խորտակել նավը: Օրինակ, երբ վենետիկյան մի խոշոր բեռնանավ չցանկացավ ենթարկվել սուլթանի հրամանին,

---

<sup>25</sup> St' u Inalçik H., Fatih Devri üzerinde tetikler ve vesikalar, Ankara, 1954.

այն ջրասույգ արվեց, իսկ անձնակազմի անդամները մահապատժի ենթարկվեցին: Այսպիսով կատարվել էր Կ. Պոլիսը շրջափակման ենթարկելու վճռական քայլ<sup>26</sup>:

Կ. Պոլիսում Ռումելիիիսար ամրոցի շինարարության լուրն ընդունվեց մեծ անհանգստությամբ: Այնտեղ հստակ գնահատական տվեցին նաև դրա հնարավոր հետևանքների վերաբերյալ: Ուստի Կոնստանդին XI կայսրը սուլթանի մոտ ուղարկեց մի դեսպանություն, որին հրամայված էր բողոք ներկայացնել այն կապակցությամբ, որ թուրքերը ամրոց են կառուցում բյուզանդական պետությանը պատկանող հողերի վրա, դրանով իսկ խախտելով գոյություն ունեցող պայմանագրերը: Ընդ որում, դեսպաններին հանձնարարված էր հիշեցնել սուլթանին, որ երբ ժամանակին Բոսֆորի ասիական ափին Բայազիդը կառուցեց Անադոլուիիսար ամրոցը, նա թույլտվություն էր խնդրել Կ. Պոլսից: Սակայն սուլթանը նույնիսկ հարկ չհամարեց ընդունելու դեսպանությանը, դրանով իսկ շեշտելով իր արհամարհանքը կայսրի և նրա իշխանության նկատմամբ:

Երբ ամրոցի շինարարությունը հասել էր իր ավարտին, կայսրը այնուամենայնիվ կատարեց ևս մեկ քայլ սուլթանի հետ բախումից խուսափելու համար: Նա իր դեսպանների միջոցով պահանջեց երաշխիքներ տալ, որ ամրոցի կառուցումը չի հանդիսանում Կ. Պոլսի վրա հարձակման նախանշան: Որպես պատասխան, Մեհմեդը պահանջեց իրեն հանձնել մայրաքաղաքը, որպես հատուցում կայսրին առաջարկելով Մորեան: Սակայն Կոնստանդինը կտրականապես մերժեց այդ առաջարկը, հայտարարելով, որ նման խայտառակությանը գերադասում է պատվավոր մահը ճակատամարտի դաշտում:

Այդ պահից սկսած Կ. Պոլիսում ամենուրեք իշխում էր համատարած սարսափը: «Դա քաղաքի վերջն է, մեր ժողովրդի վերջը: Դա Նեռի գալուստն է», - ողբում էր մայրաքաղաքի բնակչությունը<sup>27</sup>:

<sup>26</sup> Ostrogorsky G., History of the Byzantine State, Oxford, 1955, p. 482-498.

<sup>27</sup> Рансимен, С., նշվ. աշխ., էջ 9:

1452 թ. ծննդանը սուլթանը գիշեր-ցերեկ զբաղված էր Կ. Պոլսի պաշարման նախապատրաստական աշխատանքներով: Նա ծեռնամուխ էր եղել ստեղծելու հզոր հրետանային զորամասեր: Այդ գործում նրան մեծ ծառայություններ մատուցեց հունգարացի ինժեներ Ուրբանուսը, որը թնդանոթներ ծուլելու խոշոր մասնագետ էր: Նրա շնորհիվ սուլթանական բանակն ապահովվեց մեծ ու փոքր տրամաչափի բազմաթիվ թնդանոթներով: Մեհմեդ II-ը անձամբ զննում էր քաղաքի ամրությունները, կատարում տեղանքի ուսումնասիրություն, անքուն գիշերներ էր անց կացնում քաղաքի պաշտպանական ամրությունների գծագրերը ուսումնասիրելու վրա, պլանավորում էր իր զորքերի տեղակայման վայրերը և այլն:

Իր ժողովրդի և բանակի տրամադրությունները շոշափելու նպատակով սուլթանը սովորություն ուներ հասարակ զինվորի զգեստներով, երկու-երեք թիկնապահների ուղեկցությամբ, շրջել Ադրիանոպոլսի փողոցներում և հարցուփորձ անել մարդկանց: Եթե որևէ մեկը ճանաչեր ծպտված սուլթանին, վերջինս, որ բացարձակապես անտարբեր էր մարդկային կյանքի նկատմամբ, տեղնուտեղը դաշույնով սպանում էր իրեն ճանաչողին:

Միանգամայն ակնհայտ էր, որ դեռևս մինչև թուրքերի կողմից ռազմական գործողությունների սկսումը՝ Բյուզանդիայի մայրաքաղաքը արդեն դատապարտված էր: Օսմանյան նվաճումները հասել էին մինչև Դանուբի ափերը և սպառնում էին Կենտրոնական Եվրոպային: Բյուզանդական կայսրությունը, որն ըստ էության բաղկացած էր միայն մեկ, այն էլ դեգրադացվող քաղաքից, չէր կարող դիմակայել մի այնպիսի պետության, որը զբաղեցնում էր Բալկանյան թերակղզու և Փոքր Ասիայի տարածքի մեծ մասը, մի պետության, որն իր տրամադրության տակ ուներ ժամանակի ամենահզոր բանակը:

Մինչդեռ Կ. Պոլսում դրությունը չափազանց ծանր էր: Մայրաքաղաքը գտնվում էր դինաստիական ճգնաժամի, քաղաքական անկման և ներքին խորը երկպառակությունների մեջ: Դա դեգրադացվող ու անկում ապրող քաղաք էր: Նրա բնակչությունը, որը XII դարում իր շրջակա վայրերի հետ միասին կազմում էր մոտ մեկ միլիոն մարդ, այժմ հաշվվում էր ոչ ավել, քան հարյուր հազար, ընդ

որում բնակչության կողմից զանգվածորեն քաղաքը լքելու պատճառով մարդկանց թիվը գնալով նվազում էր<sup>28</sup>:

Երբ թուրքերի հարձակման նախօրյակին քաղաքում կատարվեց բնակչության մարդահամար, պարզվեց, որ մայրաքաղաքում մնացել է ընդամենը հիսուն հազարից էլ պակաս մարդ, իսկ քաղաքը պաշտպանելու համար գենք կրելու ընդունակ մարդկանց թիվը չի գերազանցում հինգ հազարը<sup>29</sup>:

Կ. Պոլսի անկման նախօրյակին մայրաքաղաքում սուր պայքարի մեջ էին երեք քաղաքական հոսանքներ՝ ազգային-ուղղափառական կուսակցությունը, արևմտական-լատինասիրական կուսակցությունը և թուրքասիրական կուսակցությունը<sup>30</sup>:

Բյուզանդական մեծ թվով պետական գործիչների համար միանգամայն պարզ էր, որ առանց Արևմուտքի օգնության մայրաքաղաքը և առհասարակ կայսրությունը ի վիճակի չէ շարունակելու իր գոյությունը: Եվ եթե այդ օգնությունը կարելի էր ստանալ միայն հռոմեական

Եկեղեցուն ենթարկվելու գնով, ապա պետք է գնալ այդ քայլին: Անշուշտ, կային նաև գործիչներ, որոնք թերահավատ էին, որ Արևմուտքը երբևիցե ի վիճակի կլինի փրկելու Բյուզանդիան:

Իսկապես, օրհասական պահին այդպես էլ ոչ ոք օգնության ձեռք չմեկնեց Կ. Պոլսին: Եվրոպական պետություններից չորաքանչյուրը իր սեփական տանը ուներ բազում խնդիրներ: Ուստի նրանցից ոչ մեկը ցանկություն չունեի գործեր և ֆինանսական միջոցներ տրամադրելու Արևելքում ինչ-որ նոր արկածախնդրության համար<sup>31</sup>: Թեև Եվրոպայում գտնվող հույն քաղաքական վտարան-

---

<sup>28</sup> Schneider A. M., Die Bevölkerung Konstantinopels im XV Jahrhundert. – Nachrichten der Akademie der Wissenschaften in Göttingen, Göttingen, 1949, p. 233-234

<sup>29</sup> Удальцова З. В., Завоевание турками Византии и падение Константинополя, История Византии, т. 3, с. 190-193.

<sup>30</sup> Ств Удальцова З. В., Борьба партий в Византии в XV веке и деятельность Виссариона Никейского, “Византийский временник”, том II, Москва, 1949.

<sup>31</sup> Gill J., նշվ. աշխ., էջ 382-383:

դիները համոզում էին կաթոլիկ երկրների միապետներին, որ անհրաժեշտ է առանց վայրկյան իսկ ուշացնելու հավաքել բանակ և այն շարժել դեպի Արևելք<sup>32</sup>, սակայն այդ հորդորները մնացին անպատասխան<sup>33</sup>: Իսկ 1447 թ. գահակալած Նիկողայոս V պապը թեև անտարբեր չէր հունական գործերի նկատմամբ, սակայն չգիտեր, թե Եվրոպայի աշխարհիկ տիրակալներից ում կարող էր դիմել օգնության կոչով: Բացի այդ, պապը առանձնապես հակված չէր օգնելու մի քաղաքի, որը շարունակում էր հրաժարվել կատարելու Ֆլորենտիայում իր հպատակների անունից կայսեր կողմից ստորագրված ունիայի պայմանները:

Նիկողայոս V պապը սահմանափակվեց լոկ 1453 թ. մարտին սննդամթերքի և զենքի մի խմբաքանակի առաքմամբ, որը մայրաքաղաք բերեցին երեք ջենովական նավեր: Միակ ոգևորիչ հանգամանքը այն էր, որ հունվարին բյուզանդական մայրաքաղաք Ժամանեց պաշտպանողական ամրությունների գծով հայտնի մասնագետ, ջենովացի Ջովաննի Ջուստինիանին 700 հոգուց բաղկացած և հիանալի զինված ջենովական ռազմիկների ուղեկցությամբ: Կայսրը նրան հանձնարարեց քաղաքի պաշտպանության գործը:

Ինչ վերաբերում է վենետիկցիներին, ապա նրանց ռազմական օգնությունը զուտ խորհրդանշական էր: Միայն վենետիկյան երկու ռազմանավեր շարժվեցին դեպի Կ. Պոլիս, այն էլ միայն պատերազմը սկսվելուց երկու շաբաթ հետո:

Այդ օրերին բյուզանդական դիվանագիտությունը լծվել էր եռանդուն գործունեության, կյանքի կոչելու համար կաթոլիկ Արևմուտքի ծավալուն պաշտպանողական մի դաշինք: Ընդ որում, եվրոպական պետություններին ներշնչվում էր այն միտքը, որ թուրքերի կողմից Կ. Պոլսի գրավման դեպքում մահացու վտանգ է ստեղծվելու նաև ողջ քրիստոնյա աշխարհի համար:

---

<sup>32</sup> Jorga N., Notes et extrait pour servir à l'histoire des Croisades au XVe siècle, t. IV, Paris-Bucarest, 1916.

<sup>33</sup> Gill J., նշվ. աշխ., էջ 187:

1452 թ. Կոստանդին XI կայսրը օգնության թախանձանքով վերջին անգամ դիմեց Արևմուտքին, սակայն դարձյալ ապարդյուն<sup>34</sup>:

1452 թ. նոյեմբերին Կ. Պոլիս ժամանեց պապական լեգատ կարդինալ Իսիդորը: Երբ Քրիստոսի ծննդյան նախօրեին Ս. Սոֆիայի տաճարում նա կայսրի և պալատականների ներկայությամբ կաթոլիկական ծեսով պատարագ մատուցեց և հրապարակեց Ֆլորենտինյան ունիայի դրույթները, քաղաքում սկսվեցին հուզումներ, որոնք ընթանում էին հետևյալ կարգախոսի ներքո. «Մեզ պետք չէ ո՛չ լատինների օգնությունը և ո՛չ էլ միավորումը նրանց հետ»: Այդ լարված ու ճգնաժամանային պահին բյուզանդական նավատորմի հրամանատար Լուկա Նոտարասը նետեց հետևյալ արտահայտությունը. «Ավելի լավ է քաղաքում որպես թագավոր տեսնել թուրքական չալման, քան պապական խուրը»<sup>35</sup>:

Կարդինալ Իսիդորի Կ. Պոլսում կատարած դերի մասին Կ. Մարքսը գրում էր. «Ծիրանի քլամիդի ներկայությունը քաղաքում հենց այն ժամանակ, երբ ամեն օր թուրքերը գրոհում էին քաղաքի վրա, պառակտում առաջացրեց այնտեղ»<sup>36</sup>: Աբրահամ Անկյուրացին ,Ողբ ի վերայ առման Կ. Պոլսոյ ի տաճկացե գրվածքում «անգութ լատինների» միջամտության հետևանք էր համարում բյուզանդական մայրաքաղաքի ողբերգությունը<sup>37</sup>:

Այսպիսին էր Բյուզանդիայի մայրաքաղաքի ներքին դրությունը, երբ սուլթան Մեհմեդ II-ը պատգամ ուղարկեց իր հսկողության ներքո գտնվող բոլոր շրջանները, որ ովքեր ընդունակ են սուր բռնելու,

---

<sup>34</sup> Bréhier L., Vieet mort de Byzance, Paris, 1947, p. 456; Dölger F., Regesten der Kaiserurkunden des Oströmischen Reiches, 5. Teil. München und Berlin, 1965, n. 3269.

<sup>35</sup> История дипломатии, т. 1, Москва, 1959, с. 213.

<sup>36</sup> Маркс К., Хронологические выписки. Архив Маркса и Энгельса, VI, с. 206-209.

<sup>37</sup> Տե՛ս Անասյան Հ. Ս., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957, էջ 29-35: Տե՛ս նաև «Ողբ մայրաքաղաքին Ստրմպոլու, Առաքել վարդապետի ասացեալ», «Անահիտ», 1901, N9:

զան և միանան իրեն: Արծագանքելով այդ կոչին, Կ. Պոլսի պատերի տակ կենտրոնանում էին նորանոր զորամիավորումներ<sup>38</sup>:

Մինչդեռ օտարերկրյա վարձկանների, գլխավորապես ջենովական և վենետիկյան ջոկատների հետ Կ. Պոլսի պաշտպանության ուժերը կազմում էին ընդամենը յոթ հազար ռազմիկներ: Այդ ուժերով բյուզանդացիները պետք է պաշտպանեին տասնչորս մղոն քաղաքային պարիսպներ, իրենց տրամադրության տակ ունենալով միայն թեթև հրանոթներ:

Քաղաքի արդյունավետ պաշտպանության համար առկա էր ոչ միայն մարդկանց, այլև դրամական միջոցների սուր պակաս: Ուստի կայսրը հիմնեց պաշտպանության ֆոնդ, որին իրենց կամավոր նվիրատվություններն էին անում մասնավոր անձինք, եկեղեցիներն ու վանքերը: Սկսեցին նույնիսկ ձուլել եկեղեցիների արծաթե սպասքեղենը, որը գնում էր դրամ հատելու վրա:

Այսպիսով, Կ. Պոլիսը արդեն կտրվել էր մնացած քրիստոնյա աշխարհից և մնում էր միայն հույսը դնել սեփական ուժերի վրա: Կործանման դատապարտված քաղաքում ուղղափառ հույների և կաթոլիկ լատինների միջև շարունակում էին մոլեգնել վեճերն ու անհամաձայնությունները, մեծ վնաս հասցնելով քաղաքի պաշտպանության գործին<sup>39</sup>:

Մեհմեդ II հիանալի հասկանում էր, որ Կ. Պոլսի նախկին պաշարումներն ավարտվել են անհաջողությամբ գլխավորապես այն պատճառով, որ քաղաքը գրոհի էր ենթարկվում միայն ցամաքի կողմից: Օգտվելով ծովի վրա իրենց ունեցած առավելությունից, բյուզանդացիները փաստորեն պաշարումը դարձնում էին անարդյունավետ, որովհետև ծովով իրենք կարող էին ստանալ այն ամենը, ինչ իրենց անհրաժեշտ էր: Ուստի սուլթանը հստակորեն գիտակցում էր, որ քաղաքի պաշարումը կատարյալ դարձնելու և ի վերջո այն գրավելու համար կենսականորեն անհրաժեշտ է, որ իր տրամադրության տակ ունենա նաև ռազմանավեր ու բեռնատար

<sup>38</sup> История Византии, т. 3, с. 190.

<sup>39</sup> Չամչյանց Մ., Հայոց պատմություն, Երևան, 1984, էջ 493:

նավեր<sup>40</sup>: Նա մեծագույն եռանդով սկսեց ստեղծել ռազմական ու տրանսպորտային նավատորմ և ի վերջո կարողացավ թուրքական դրոշի ներքո հավաքել մոտ 125 ռազմանավեր, չհաշված մեծ թիվ կազմող օժանդակ նավերը<sup>41</sup>: Երբ 1453 թ. գարնանը այդ հսկայական նավատորմը դուրս եկավ Գալիպոլիից որպեսզի մտնի Մարմարա ծով, հույները զարմանքով ու սարսափով նկատեցին, որ թուրքերը ստեղծել են մի նավատորմ, որը հինգ անգամ գերազանցում է իրենց ունեցածին:

1453 թ. հունվարի վերջին Մեհմեդ II-ը հավաքեց արքունիքի պաշտոնական անձանց ու իր մերձավորներին, որպեսզի հրապարակի իր պատերազմական ծրագրերը և հավանություն ստանա դրանք կենսագործելու համար: Հավաքի ժամանակ նա հայտարարեց, որ Թուրքական կայսրության անվտանգությունը երբեք չի կարելի ասահովված համարել, քանի դեռ Կ. Պոլիսը չի անցել թուրքերի ձեռքը: Սուլթանը փաստարկներ բերեց այն մասին, որ Կ. Պոլսի գրավման պլանը կառուցված է իրատեսական հիմքերի վրա: Շարունակելով իր խոսքը նա նշեց, որ թեև բյուզանդացիները ռազմական առունով թույլ են, բայց դրանով հանդերձ հանրահայտ իրողություն է, թե ինչպիսի վարպետությամբ նրանք կարողանում են սադրանքներ հյուսել թուրքերի թշնամիների շրջանում: Բացի այդ, վտանգ կա, որ գիտակցելով իրենց թուլությունը, բյուզանդացիները կարող են քաղաքը հանձնել իրենց դաշնակիցներին, որոնք կարող են և թույլ չլինել: Կ. Պոլիսը այնքան էլ անառիկ չէ, ինչպես պատկերացնում են: Նախկին պաշարումները հաջողությամբ չեն պսակվել արտաքին պատճառների հետևանքով: Այժմ ստեղծվել է միանգամայն հարմար պահ: Կրոնական երկպառակությունները ծվատում են քաղաքը: Իտալացիները անհուսալի են իբրև դաշնակիցներ և նրանցից շատերը պատրաստ են դավաճանության դիմելու: Բացի այդ, թուրքերը վերջապես կարողացան տիրապետող դիրքեր ձեռք բերել ծովի վրա: Սուլթանը նիստը եզրափակում է հետևյալ խոսքերով. անձամբ իր համար պարզ է

<sup>40</sup> История Византии, т. 3, с. 193-194.

<sup>41</sup> Gill J., նշվ. աշխ., էջ 377-380:



մի բան. եթե ինքը չկարողանա կառավարել կայսրությունը առանց Կ. Պոլսի, ապա կգերադասեր այն առիասարակ չկառավարել<sup>42</sup>:

Նիստին ներկա գտնվողները ապշած էին, թե բացարձակ գաղտնիության պայմաններում ինչպիսի լայնահուն ծրագրեր է մշակել սուլթանը: Նույնիսկ կառավարության այն անդամները, որոնք ներքուստ հավանություն չէին տալիս Մեհմեդ II-ի նկատառումներին, չհամարձակվեցին բարձրաձայնել իրենց առարկությունները: Վեզիրները միահամուռ կերպով պաշտպանեցին սուլթանի որոշումը և քվեարկեցին հոգուտ պատերազմի<sup>43</sup>:

Այսպիսով Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավման հարցը մտնում էր օրակարգ և սպասում էր իր լուծմանը: Մահմեդական հոգևորականությունը՝ աստվածաբան-ուլեմները և հասարակ մուլաները սկսեցին գաղափարական մշակման ենթարկել բանակը: Զինվորներին ներշնչում էին, որ ովքեր կներխուժեն քաղաք կամ կնահատակվեն շահիդի մահով, կարժանանան դրախտի հավետ երանությանը:

Փետրվարի 26-ի գիշերը յոթ նավեր Պյետրո Դավանցոյի ընդհանուր հրամանատարությամբ (վեցը Կրետե կղզուց, մեկը՝ Վենետիկից), որոնց վրա կային 700 իտալացիներ, դուրս գալով Ոսկեղջյուրից ճողոպրեցին: Նրանց փախուստը լրջորեն թուլացրեց Կ. Պոլսի պաշտպանությունը: Սակայն դրանից հետո այլևս ոչ մի մարդ՝ լինել հույն կամ իտալացի, այլևս չդրսևորեց նման փոքրոգություն և չհետևեց նրանց օրինակին<sup>44</sup>:

1453 թ. ապրիլի 2-ին կայսրը հրամայեց քանդել խանդակների վրա եղած կամուրջները և փակել քաղաքի դարպասները: Նույն օրը նա կարգադրեց Ոսկեղջյուրի մուտքի մոտ մեկ ավից մյուսը քաշել երկաթյա շղթա, նավերի մուտքը արգելակելու համար: Ապրիլի 5-ին ողջ թուրքական բանակը սուլթանի հրամանատարությամբ

---

<sup>42</sup> Kritovoulos, History of Mehmed the Conqueror. Princeton, 1954, p. 23-33; Taçi, Beyzade. Mahruca-i Fethnamesi, Istanbul, 1331, s. 6-8; Inalçik H., Fati Devri üzerinde tetikler ve vesikalar, I, Ankara, 1954, s. 125-126.

<sup>43</sup> Рансимен, С., նշվ. աշխ., էջ 75:

<sup>44</sup> Рансимен, С., նշվ. աշխ., էջ 83:

յամբ հավաքվեց Կ. Պոլսի պատերի մոտ, իսկ հաջորդ օրը մայրաքաղաքը վերցվեց շրջապատման օղակի մեջ: Հակառակորդների ուժերը աներևակայելի չափով անհավասար էին: Քաղաքի մեկ զինված պաշտպանին ընկնում էր ավելի քան քսան թուրք ռազմիկ: Թուրքական նավատորմը Բալթասոլլուի հրամանատարությամբ հրաման էր ստացել շրջափակել ծովափը, որպեսզի քաղաքը ծովի կողմից չստանար որևէ օգնություն: Մարմարա ծովի ափերի երկայնքով մշտապես երթևեկում էին թուրքական ռազմանավերը, թույլ չտալով, որ որևէ նավ մոտենա նավահանգիստներին: Սակայն Բալթասոլլուի գլխավոր խնդիրը Ոսկեջուր մտնելու ճանապարհին ստեղծված արգելափակոցների հաղթահարումն էր և ծովի կողմից քաղաքի ներխուժումը:

Ապրիլի 6-ին սուլթանի պատգամաբերները սպիտակ դրոշները ձեռքներին մուտք գործեցին քաղաք, կայսրին հանձնելու համար Մեհմեդ II-ի վերջին ուղերձը: Նրանում ասվում էր, որ մահմեդականների օրենքի համաձայն սուլթանը կերաշխավորի քաղաքի բնակիչների կյանքի և գույքի ապահովություն, եթե քաղաքը առանց դիմադրության, կամովին հանձնվի իրեն: Հակառակ դեպքում նա ներում չէր խոստանում և ոչ մեկին: Առաջարկը մերժվեց, քանի որ նախ քաղաքի բնակիչները չէին հավատում սուլթանի խոստումներին և ապա չէին ցանկանում դավաճանել իրենց կայսրին<sup>45</sup>: Պատասխան ուղերձում կայսրը գրում էր, որ ինքը կպաշտպանի իր ժողովրդին մինչև արյան վերջին կաթիլը: Այնժամ թուրքական թնդանոթները որոտացին: Ապրիլի 18-ին սուլթանը հրամայեց սկսել քաղաքի գրոհը: Բորբոքվեց աներևակայելի դաժան և արյունահեղ ճակատամարտ: Գրոհի առաջին իսկ ժամը ցույց տվեց, որ թեև մայրաքաղաքի պաշտպանների թիվը մեծ չէր, սակայն նրանցից յուրաքանչյուրը պատրաստ էր մարտնչել մինչև վերջ:

Ապրիլի 20-ին, Մեհմեդի համար միանգամայն անսպասելի կերպով, թուրքերը տանուլ տվեցին ծովային ճակատամարտը: Զենովական երեք նավեր, որոնք Հռոմի պապի կողմից Կ. Պոլիս

---

<sup>45</sup> Kritovoulos, History..., p. 40-41.

էին տանում զենք, ռազմամթերք և պարեն, ինչպես նաև բյուզանդացիներին պատկանող մի մեծ բեռնատար նավ ցորենի բեռով, որը զինված էր «հունական կրակով» կարողացան անցնել Ղարդաանելը և հայտնվել քաղաքի մոտ: Բորբոքվեց կատաղի ծովամարտ:

Քրիստոնյաների նավերը, որոնք ավելի լավ էին զինված և ավելի շարժունակ ու լավ կառավարելի էին, այդ անհավասար մարտում կարողացան հաղթանակ ձեռք բերել: Թուրքերը կորցրին բազմաթիվ ռազմանավեր, որոնք այրվեցին «հունական կրակով»: Ջենովացիների ու բյուզանդացիների նավերը կարողացան հաղթահարել թուրքերի ծովային պատնեշը և մուտք գործելով Ոսկեղջյուր՝ միացան այնտեղ կանգնած կայսերական նավատորմին: Սուլթանը, որը Պերայի շրջանում Բոսֆորի ափերի բարձրունքներից դիտում էր այդ ծովային ճակատամարտը, կատաղության մեջ էր: Նա նավատորմի հրամանատար Բալթասոլլուին մահվան դատապարտեց, սակայն ի վերջո փոխելով իր վճիռը հրամայեց նրան զանահարել մահակի հարվածներով, զրկեց նրան բոլոր աստիճաններից ու կոչումներից, իսկ ունեցվածքը բռնագրավեց և բաժանեց ենիչերիների միջև<sup>46</sup>:

Այդ անհաջողությունից հետո սուլթանը հրամայեց ցամաքով իր նավերի մի մասը հասցնել Ոսկեղջյուր: Այդ նպատակով կառուցվեց մի հսկա փայտյա հարթակ, որը տեղադրեցին Գալաթայի պատերի մոտ: Մեկ զիշերվա ընթացքում այդ հարթակի վրայով, որի վրա քսված էր յուղի հաստ շերտ, թուրքերը եզներին կապված պարաններով 70 ծանր նավեր քաշեցին մինչև Ոսկեղջյուրի հյուսիսային ափը և դրանք իջեցրին ծով: Ապրիլի 22-ի առավոտյան, քաղաքի պաշտպանների աչքի առջև, հույների պաշտպանության հենց կենտրոնում, հառնեց թուրքական նավատորմը իր բարձրացված առազաստներով ու ծածանվող դրոշմներով: Տպավորությունն այնպիսին էր, որ կարծես այդ նավերը ծնունդ են առել հենց ծովից, քանի որ այնտեղ մտնելու ճանապարհի չկար: Ոսկեղջյուրի հենց մուտքի մոտ, մարտական հարձակողական դիրքով շարք էին կազմել յոթանասուն թուրքական նավեր: Ոչ ոք չէր սպասում հարձակում այդ կողմից, որը հանդիսանում

---

<sup>46</sup> Рансимен, С., նշվ. աշխ., էջ 95-99:

էր քաղաքի պաշտպանության ամենաթույլ ու խոցելի տեղամասը: Այսպես թե այնպես, Ոսկեղջյուրի նկատմամբ հույները այլևս անդարձ կորցրել էին իրենց հսկողությունը: Իսկ թուրքերը հնարավորություն էին ստացել գործելու նրանց թիկունքում:

Մինչդեռ քաղաքի պաշտպանների վիճակը գնալով դառնում էր աղետալի: Կտրուկ վատթարացել էր սննդամթերքով բնակիչներին մատակարարելու գործը: Պաշարվածների հոգեկան ընկճված վիճակը ևս գնալով ավելի ու ավելի էր ծանրանում: Մայրաքաղաքում շրջանառվում էին ամեն տեսակի սև կանխագուշակություններ կայսրության մոտալուտ վախճանի մասին: Մարդիկ, որոնք տրված էին այդ նախապաշարմունքներին, իրենց ճակատագիրը արդեն համարում էին վճռված և այդ վճիռը, ըստ իրենց, երկնքից էր գալիս:

Մայրաքաղաքում ժամանակ առ ժամանակ արյունահեղ կռիվներ էին ծագում վաղեմի ավանդական թշնամիների՝ վենետիկցիների ու ջենովացիների միջև: Շատերը կասկածամտությամբ էին վերաբերվում օտարերկրյա վարձկանների նկատմամբ: Այդ բոլորին ավելանում էր նաև բյուզանդական հոգևորականության դժգոհությունը կայսրի նկատմամբ, որը պաշտպանության համար միջոցների փնտրտուքներում ոտնձգություն էր կատարում եկեղեցական գույքի նկատմամբ: Իսկ ամենավտանգավորը այն էր, որ կայսրին շրջապատող պալատականների շրջանում սկսել էին վերելք ապրել պարտվողական տրամադրությունները: Թուրքերը, ընդհակառակը, լցված էին վայրագ ոգևորությամբ, վստահ իրենց հաղթանակին: Ավարի տենչը մի կողմից և կրոնական մոլեռանդությունը մյուս կողմից՝ ուժ էին տալիս հարձակման թափին:

Գնալով լարվածությունը երկուստեք մեծանում էր: Չնայած մայրաքաղաքի պաշտպանների հերոսական դիմադրությանը, նրանց ուժերը սպառվում էին և ի վերջո 1453 թ. մայիսի 29-ին մոլեզնած օսմանյան բանակը ներխուժեց քաղաք և Արևելյան Հռոմեական կայսրության հին մայրաքաղաքն ընկավ:

Թեև թուրք-օսմանների կողմից Կ. Պոլսի գրավումը իրենից նշանավորում էր Բյուզանդական կայսրության կործանումը, սակայն իրականում դրա պատմական հետևանքները գնում էին շատ ավելի

հեռուները: Նախ թուրքերը ստացան ռազմահենադաշտ դեպի Արևմուտք իրենց հետագա հարձակման համար: Ստեղծվեցին բացառիկ բարենպաստ հնարավորություններ Եվրոպայում հետագա նվաճումների համար: Կ. Պոլիսը կարող էր լինել միակ պատմեշը, որը կարող էր արգելք հանդիսանալ թուրքերի ներթափանցմանը դեպի Եվրոպայի խորն ընկած շրջանները: Կտրուկ մեծացավ դեռևս իրենց անկախությունը պահպանող մերձդանուբյան երկրների և նույնիսկ Արևմտյան Եվրոպայի ստրկացման վտանգը: Լեոյի արտահայտությամբ, «Արևմտյան քրիստոնեության համար խեղդող իրականություն էր դառնում, որ զինված իսլամը սպառնում է իր դրոշը տնկել Եվրոպայի սրտում»: Առհասարակ այդ աղետը սպառնալիք էր ստեղծում ողջ արևմտյան քաղաքակրթության համար: Այն նաև համաեվրոպական մշակույթին հասցված ուժգին հարված էր: Կասկածից վեր է, որ Կ. Պոլսի գրավումից հետո քրիստոնեությունը դարձավ մի տեսակ «զլխատված մարմին», քանի որ այդ քաղաքը քրիստոնյա աշխարհի կողմից ընկալվում էր որպես «քրիստոնյաների փառք» և քրիստոնեության կուռ միջնաբերդ: Համաքրիստոնեական մտածողության համաձայն Բյուզանդական կայսրը «կայսր էր Աստծո կամոք՝ Vicarius Christ», ուստի կայսրն էր համայն քրիստոնեության: Հետևաբար Կ. Պոլսի գրավումը սկզբնավորելու էր նոր փուլ համաքրիստոնեական քաղաքական մտածողության մեջ: Սուրբ երկրի՝ Պաղեստինի և Երուսաղեմի ազատագրման գաղափարն աստիճանաբար սկսեց իր տեղը զիջել թուրքական վտանգին համատեղ դիմակայելու, թուրքերին Եվրոպայից դուրս մղելու և Կ. Պոլիսն ազատագրելու գաղափարին: Հիրավի, այսուհետև Կ. Պոլսի ազատագրումը դառնում էր քրիստոնյա աշխարհի արտաքին քաղաքականության գերակա խնդիրներից մեկը:

Կ. Պոլսի գրավումով, որը վերանվանվեց Ստամբուլի, թուրքերը հնարավորություն ստացան Ասիայի և Եվրոպայի ճանապարհների խաչմերուկում գտնվող և ռազմավարական կարևորագույն նշանակություն ունեցող այդ վայրում հիմնել իրենց կայսրության համար նոր մայրաքաղաք, մի հանգամանք, որն այսուհետև իրենց համար ապահովում էր մշտական ներկայություն եվրոպական

մայր ցամաքում: Հանրահայտ իրողություն է նաև, որ 1453 թվականից հետո, պատմական ավանդույթով, օսմանյան պետության նկատմամբ սկսեց կիրառվել Օսմանյան կայսրություն անվանումը:

4. Պոլսի անկման հետևանքով Եվրոպայից Ասիա և Միջերկրական ծովից դեպի Սև ծով տանող միջազգային առևտրական ճանապարհը փակվեց: Դրանից առաջին հերթին տուժեցին Վենետիկի և Ջենովայի վաճառականները, որոնց ձեռքբերում էր գտնվում ողջ լեանտյան առևտուրը: Թուրքական հսկողության սահմանումը նեղուցների՝ Բոսֆորի և Դարդանելի նկատմամբ սպառնալիքի տակ դրեցին ջենովական գաղութների գոյությունը Սև ծովի հյուսիսային ափերին: Հատկապես կործանման վտանգի առջև կանգնեց Կաֆա քաղաքը Ղրիմում, որի վրայով Ջենովան առևտրական կապերի մեջ էր թաթարների և Կենտրոնական Ասիայի երկրների հետ: Պատահական չէ, որ ընդամենը կես հարյուրամյակի ընթացքում Սև ծովում գոյություն ունեցող ջենովական մի ամբողջ «կայսրություն» թուրքերի և նրանց դաշնակից թաթարների հարվածների տակ անհետ կործանվեց<sup>47</sup>: Իսկ վենետիկնեցիները ստիպված էին կամ հսկայական մաքսատուրքեր վճարել և կամ ընդմիջտ հեռանալ Մերձավոր Արևելքի ու Էգեյան ծովի իրենց առևտրական հենակետերից:

Հետագա տարիների ընթացքում սուլթանի տիրապետության տակ անցավ Ադրիատիկ ծովի ու Հունգարիայի սահմաններից մինչև Պարսից ծոց հասնող առևտրական ուղին: Իսկ Տրապիզոնի կայսրության (1461) և Ղրիմի նվաճումից հետո (1475 թ.) Սև ծովը ուղղակի վերածվեց թուրքական «ներքին լճի»: Այս բոլորը արևմտյան աշխարհը գրկում էր Արևելքի հետ շփումներ ունենալու հնարավորությունից<sup>48</sup>:

---

<sup>47</sup> Heyd W., Histoire du commerce du Levant au Moyen Âge, t. II, Leipzig, 1936, p. 382-407.

<sup>48</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Բայբուրդյան Վ., Համաշխարհային առևտուրը և իրանահայությունը 17-րդ դարում, Թեհրան, 1996: Baibourtian V., International Trade and the Armenian Merchants in the Seventeenth Century, New Delhi, 2004.

Գիտության մեջ հայտնվել է այն տեսակետը, որ Կ. Պոլսի անկումից հետո ընկնում էր Միջերկրական ծովի և Թուրքիայի ցամաքային ճանապարհների բացառիկ նշանակությունը: Սկիզբ էր առնում ու աճում օվկիանոսային հաղորդակցությունն ու առևտուրը: Արևելքի հետ կապվելու համար նշանակություն էին ձեռք բերում Բալթիկ և Սպիտակ ծովերը: Առհասարակ պետք է նշել, որ Կ. Պոլսի՝ Արևելքի ու Մերձսևծովյան շրջանի հետ տարանցիկ առևտրի այդ գլխավոր կենտրոնի, գրավումը թուրքերի կողմից հանդիսացավ լուրջ խթանիչ գործոն, որը ստիպեց եվրոպական վաճառականներին ու ծովագնացներին սկսել դեպի Հնդկաստան տանող նոր ծովային ճանապարհի եռանդուն որոնումներ<sup>49</sup>:

Բյուզանդական կայսրության, ուղղափառ քրիստոնեության այդ պատվարի անկումից հետո, «Մոսկվան սկսեց բարձրանալ մինչև Երրորդ Հռոմի աստիճանի»<sup>50</sup>: Ռուսները դարձան ուղղափառության գլխավոր ջատագովներն ու պաշտպանները: Սակայն մյուս կողմից թուրքական պետության տիրույթների ընդլայնումն ու ծավալումը Ռուսիայի համար ուժեղացրին մշտական սպառնալիքը Ղրիմի խանի և մերձսևծովյան տափաստաններում թուրքերի օգնությամբ հաստատված թաթարների կողմից: Նրանք դարձան Ռուսական պետության համար ոխերիմ թշնամիներ, որոնց մեջքին միշտ կանգնած էր հզոր օսմանյան տերությունը:

Վերջապես Կ. Պոլսի անկումը նշանակում էր բյուզանդական բարձր քաղաքակրթության ավարտը: Տասնմեկ հարյուրամյակ շարունակ այդ քաղաքը հանդիսանում էր գիտության, մշակույթի ու լուսավորության կարևորագույն կենտրոն: Կ. Պոլիսը նաև մի քաղաք էր, որտեղ «ծաղկում էր գաղափարների ազատ փոխանակությունը և նրա բնակիչները իրենց համարում էին ոչ թե ինչ-որ

---

<sup>49</sup> Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք երկրորդ, Երևան, 1959, էջ 432, История Византии, т. 3, с. 214.

<sup>50</sup> Рансимен, С., նշվ. աշխ., էջ 165:

ժողովուրդ, այլ Հունաստանի և Հռոմի ժառանգորդներ, լուսավորված քրիստոնեական հավատով»<sup>51</sup>:

Կ. Պոլսի և առհասարակ Բյուզանդիայի նվաճումը թուրքերի կողմից ամբողջ դարաշրջաններ արգելակեց այն երկրների տնտեսական ու մշակութային զարգացումը, որոնք հարկադրաբար մտցվեցին Օսմանյան պետության կազմի մեջ, իրենց վրա կրելով թուրքական անագորույն լուծը:

Կ. Պոլսի անկման լուրը խորը ցնցում առաջ բերեց նաև Հայաստանում:

Մինչ այդ, հայերը հույների և իտալացիների հետ միասին անձնվիրաբար մասնակցել էին Կ. Պոլսի հերոսական պաշտպանությանը<sup>52</sup>: Աբրահամ Անկյուրացին ականատես է եղել այդ քաղաքի պաշարման, անկման ու ավերման բոլոր դեպքերին:

Այդ դեպքերի նկարագրությանն են նվիրած XV դարի երկու նշանավոր հիշատակարաններ՝ Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու ոտանավոր Ողբերը<sup>53</sup>: Պաշտպանելով հունական ուղղափառների տեսակետը, Անկյուրացին դատապարտում է եվրոպացիներին, որոնք իրենցից խնդրված օգնությունը պայմանավորում էին հույների համար դավանական զիջումներով:

Կ. Պոլսի անկման լուրը ծանր տպավորություն և խորը հուսահատություն էր առաջ բերել Հայաստանում նախ այն պատճառով, որ իր ազատագրական ոգորումներում հայ ժողովուրդը իր փրկությունը տեսնում էր ֆրանկներից: Դեռևս XIII դարում ինչ-որ Ազադրոն փիլիսոփայի վերագրված մարգարեության մեջ արտացոլված էր քաղաքական այն ակնկալիքը, որ հայերն ունեին Բյուզանդիայից:

<sup>51</sup> Рансимен, С., նշվ. աշխ., էջ 165:

<sup>52</sup> Տես Григорян К. Н., Из истории русско-армянских культурных связей X-XVII веков. Академия наук СССР. Труды отдела древнерусской литературы института русской литературы, IX, Москва-Ленинград, 1953, с. 332-333.

<sup>53</sup> Տես Անասյան Հ. Ս., Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին, Երևան, 1957: Առաքել Բաղիշեցի, Ուսումնասիրություն, քննական քննադրեր և ծանոթագրություններ Արշալույս Ղազինյանի, Երևան, 1971:



Տարված լինելով նմանատիպ քաղաքական սպասումներով,  
Առաքել Բաղիշեցին գրում էր.

«Գայցեն ծովով և ցամաքով  
Որպես զաստեղս որ ոչ թըւին  
Յորդորելով զամենեսին  
Աստուածառաք պատերազմին:  
Նախ զըՍտըմպօլ քաղաքն առնուն  
Ամենագօր կամօք փրկչին,  
Ապա յառաջ համարծակին,  
Եւ ի բոլոր աշխարհ սըփռին»:

Միանգամայն ակնհայտ է, որ Կ. Պոլսի անկման հետ միասին  
հայերը կորցնում էին իրենց ազատագրման հույսերի հզոր կռվա-  
նը<sup>54</sup>, ուստի նրանց պարուրում էին խաչակրաց արշավանքների ե-  
րազապատիր հույսերը, որոնք այդքան անպաճույճ բառերով ներ-  
կայացնում է Բաղիշեցին, փորձելով համոզել, որ Արևմուտքից ի  
վերջո գալու է օգնությունը:

Թեև Մեհմեդ II «Ֆաթիհ» («Հաղթական») կողմից Բյուզանդիա-  
յի մայրաքաղաքը գրավելուց հետո ընդամենը չորս ամիս անց, ըստ  
երևույթին խղճի խայթ զգալով, որ քրիստոնեության այդ նշանավոր  
կենտրոնի կործանման մեջ չափազանց մեծ էր կաթոլիկ եկեղեցու  
մեղքը, Հռոմի Նիկողայոս V պապը հատուկ բուլլայով նոր խաչակ-  
րաց արշավանք հայտարարեց թուրքական սուլթանի, այդ «երկ-  
րորդ Սենեքերիմի» դեմ, եվրոպական միապետներին հորդորելով ի-  
րենց և իրենց հպատակների արյունը թափել հանուն «սուրբ գործի»,  
սակայն դա արդեն ուշացած ու ժամանակավրեպ քայլ էր:

Ճիշտ է, թուրքերի դեմ խաչակրաց արշավանքներ կազմա-  
կերպելու գաղափարը այսուհետև դարձավ մի սրբազան պարտա-  
վորություն, որ կարդինալների ժողովը մշտապես դնում էր յուրա-  
քանջյուր նոր ընտրվող պապի առջև, սակայն ուշացումով գիտակց-  
ված Արևմուտքի ճակատագրական սխալն այլևս անուղղելի էր:

---

<sup>54</sup> Անասյան Հ. Ս., նշվ. աշխ., էջ 8:

## **ТРЕТИЙ ПОХОД СУЛЕЙМАНА I В ИРАН И ТУРЕЦКО-ИРАНСКОЕ ПЕРЕМИРИЕ ОТ 27 СЕНТЯБРЯ 1554 ГОДА.**

В 1514 году между Османской империей и сефевидским Ираном началась кровопролитная борьба за господство на Ближнем Востоке и в Закавказье, которая с перерывами продолжалась до 1555 г. Внешне турецко-иранские войны были облечены в религиозную оболочку, скрывавшую истинные замыслы противников. Османская правящая верхушка была особенно заинтересована в захвате богатых закавказских стран и торговых-транспортных путей, связывавших Европу с Азией и пролежавших через земли Кавказа. Немалое значение имели и фискальные интересы Порты. Реализации этих стремлений препятствовал Иран, пытавшийся, со своей стороны, также утвердиться в этом регионе.

Первый этап (1514-1516) турецко-иранских войн завершился победой Селима I (1512-1520), в результате которой Турция завоевала большую часть Восточной Армении, Курдистан и Северный Ирак.

В эпоху Сулеймана I, с целью завоевания восточных стран и усиления своего влияния в этом регионе Османская империя провела две военные кампании против Ирана (в 1533-1535 и 1548-1549 гг.). В ходе военных действий были захвачены Ирак, вся Восточная Армения и западная часть Самцхе-Саатабаго (Юго-Западная Грузия).

Со своей стороны, персы в 1538 г. утвердились в Ширване, в 1541 г. – в Шеки. Пытаясь покорить Восточную Грузию (Картли – Кахети), шах Тахмасп (1524 – 1576) предпринял четыре похода против этой страны (в 1541, 1546, 1551 и 1554 гг.). Их итогом было расширение владений Сефевидов. Одной из главных причин успеха Ирана было то, что в это же время

Османская Империя воевала в Европе и не могла уделить должного внимания восточной политике.

В затяжной борьбе двух империй - Османской и Сефевидской - за господство на Ближнем Востоке Грузия была уготова-на незавидная роль мишени агрессии то одной державы, то другой. Внутриполитическая ситуация в стране была крайне тяжелой. В этот период Грузия, в результате феодальных междоусобиц, окончательно распалась на отдельные царства и княжества. Политическая разобщенность страны препятствовала успешной борьбе против внешних врагов.

В ходе турецко-иранских войн цари - правители грузинских земель в зависимости от того, откуда исходила большая опасность, с юго-запада или с юго-востока, поддерживали то одну сторону, то другую и пытались по мере сил и возможностей использовать противоречия между завоевателями для защиты целостности своей страны

В 1552 г. иранские войска вторглись в восточные провинции Османской империи и добились определенных успехов. Продвижение иранских войск поставило под угрозу османское господство в этом регионе.

Находившийся в Эдирне Сулейман I, узнав о нападении персов, немедленно вернулся в столицу и принял чрезвычайные меры. Он решил сам возглавить поход против Ирана.

28 августа 1553 г. Сулейман покинул Стамбул. 8 ноября он прибыл в Алеппо, однако ввиду близкой зимы отложил поход на будущий год. Вместе с тем султан отправил часть своих войск из Кафы в Ширван через Северный Кавказ, чтобы с севера ударить по противнику. Порта обратилась также к узбекским ханам, призывая их принять участие в войне с Тахмаспом<sup>1</sup>.

9 апреля 1554 г. султан покинул Алеппо и прибыл в Эрзурум, а затем - в Карс и оттуда направился к границам Ирана. Это

---

<sup>1</sup> J. Hammer, *Historie de l'Empire Ottoman*, Paris, 1845.p,103-104; М. Сванидзе, *Из истории грузино-турецких отношений в XVI-XVII вв.* Тб., 1971 (на груз. языке).

был третий поход Сулеймана I против Ирана. Из Карса Сулейман отправил шаху Тахмаспу письмо, полное угроз, и призвал его к “мужественной борьбе”<sup>2</sup>.

Шах Тахмасп I /1524-1576/ в войне против Турции применил тактику своих предков. Уклоняясь от столкновения с главными силами турецкой армии, его войско попутно уничтожило все в местах возможного прохождения турецкой армии.

Основные части турецкой армии быстро продвигались вперед. 18 июля турки захватили Ереван, потом Карабах, 28 июля – Нахичевань. Затем продвижение начало замедляться, поскольку ряды османской армии стали быстро редеть, среди солдат свирепствовали эпидемии, остро ощущалась нехватка продовольствия. В этих условиях Сулейман I решил не продолжать наступления<sup>3</sup>.

Именно в это время султану сообщили, что сын шаха Тахмаспа Исмаил во главе грузинского отряда напал и разграбил караван, который (якобы на 3 тыс. верблюдах) вез продовольствие султанскому войску. Это известие было удручающим для османской армии, так как задача восстановления сил, подточенных голодом, усложнялась. Султан впал в ярость и приказал без промедления напасть на Грузию. Однако времени для осуществления карательной экспедиции оставалось очень мало, и, памятуя о том, что зима в этих краях очень сурова, он отказался от своего намерения. Решив провести зиму в Анатолии, он отложил наказание грузин на следующий год<sup>4</sup>.

Султан Сулейман окончательно убедился в невозможности уничтожения иранской армии и установления господства над сефевидским Ираном. Постепенно султан пришел к выводу, что следует начать мирные переговоры с Ираном. Это реше-

---

<sup>2</sup> Peçevi Tarihi, Hazırlayan B. S. Baykal, c. I, Ankara, 1999, s298-299; M. Cezar, M. Sertoğlu, Mufassal Osmanlı Tarihi, c. II, Ankara, 1997, s. 291

<sup>3</sup> Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-İran Siyasî Antlaşmaları, İstanbul, 2002, s. 61-63; З. М. Зулалян, Армения в первой половине XVI в., М., 1971, см. 35-37

<sup>4</sup> A Chronicle of the Carmelites in Persia, London, 1939, p. 38

ние было обусловлено тем, что шах Тахмасп избегал непосредственного столкновения с турецкими войсками, вокруг все было уничтожено и сожжено, приближалась зима, ощущалась нехватка продовольствия и др., поэтому султан был вынужден возвратиться и провести зиму в Эрзуруме, чтобы весной начать более масштабный поход против Ирана<sup>5</sup>.

Все это вызвало большие изменения. После этого тяжелого похода воцарилась атмосфера мира и благоденствия. По-видимому обе стороны осознали, что насильственные действия к добру не приведут.

Вследствие того, что и этот третий поход против Ирана не принес желаемого результата, султан Сулейман также избрал путь примирения<sup>6</sup>.

Таким образом, обе стороны склонялись к прекращению войны и заключению мира. Примечательно, что шаги предпринятые Ираном, с целью заключения мира, в Турции были встречены враждебно, турки не желали вести с противной стороной никаких переговоров.

30 июля Сулейман покинул Нахичевань и 6 августа прибыл в Баязид.

6 августа 1554 г., когда Сулейман Кануни находился в Баязиде, великому везиру Ахмед паше от иранской стороны было передано письмо - ответ на ранее посланное Сулейманом из Карса письмо шаху Тахмаспу, полное угроз и оскорблений.

Ответное письмо из Ирана содержало также угрозы, но при этом отмечалось, что лучше заключить мир. В письме ясно было выражено стремление к миру: "Если наш шах пойдет на вашу страну, вы увидите, что с вами случиться, мы будем беспощадны в мести. Вы не умеете вести рукопашный бой, вы мо-

---

<sup>5</sup>. J. Hammer, *Historie de l'Empire Ottoman*, Paris, 1845, p. 64; Remzi Kılıç, *XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-İran Siyasî Antlaşmaları*, İstanbul, 2002, s. 65

<sup>6</sup>.. Peçevî Tarihi, Hazırlayan Baykal B. S, c. I, Ankara, 1999, s. 303-35; F. Kızıoğlu, *Osmanlıların Kafkas Ellerini Fethi*, Ankara, 1976, s. 229-30; Remzi Kılıç, *XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-İran Siyasî Antlaşmaları*, İstanbul, 2002, s.66-67

жете только предательски палить из пушек и ружей; это же заслуга огня, а не ваша. Если вы даже десять раз придете в страну персов, вы не дождетесь сражения на поле брани, шах Исмаил поступил не предусмотрительно. Сражение с огнем из пушек и ружей – неоправданная наивность, подобные действия наносят ущерб обеим сторонам. Следует установить мир и покончить с этим положением. Только мир приносит добро и благополучие<sup>7</sup>.”

Фактически это письмо явилось поводом для начала мирных переговоров между Турцией и Ираном.

В своем ответе Ахмед паша писал, что установление мира между обоими государствами, принесло бы благополучие всему мусульманскому миру, продолжение же войны способствовало бы его распаду.

В письме Ахмеда паши также было сказано: “Ваше письмо получили... Теперь падишахи из двух путей должны выбрать один и следовать ему – война или мир. Они должны действовать в интересах своего народа и несомненно мир принесет добро. Наша страна ни к кому не питает ненависти, ясно всем, что мы стремимся к миру и согласию; в этом отношении мы никогда не изменим этому курсу... бесконечные нарушения слов исходят от вас.” Ранее, в письме было сказано: “Принято решение – надлежит напасть на Иран, действия которого ничем не оправданы. Следует вам заблаговременно подготовиться, так как великий падишах твердо решил, в этот раз полностью уничтожить Ардебиль. В течение нескольких месяцев наши войны грабят края Азербайджана, однако они не напали даже на наш след... вы прячетесь в горах. Если вы шах, то должны предпринять ответные действия за ущемление вашего населения и при нападении на вашу страну должны с нами мужественно сразиться, а если вы не имеете на это

---

<sup>7</sup>, Peçevî Tarihi, Hazırlayan B. S.Baykal, c. I, Ankara, 1999, s.305; J. Hammer, Historie de l'Empire Ottoman, Paris, 1845, p. 65-66; Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-Iran Siyasî Antlaşmaları, İstanbul, 2002, s.68

сил, должны признать себя побежденными. Если же причиной вашего бегства являются пушки и ружья, мы их оставим и именем нашего падишаха сообщаем вам, мы готовы сразиться с вами мечами и щитами. Если даже укроетесь под землей, с целью вашего обнаружения, мы приняли решение провести зиму около границы вашей страны. Цель нашего похода состоит в повторении того, что вы сделали в минувших годах на территории Турции... Теперь в этих странах развиваются турецкие флаги и если вы выйдете на поле брани, мы бросим пушки и ружья и мечами сразимся с вами. В конце письма великий везир намекал, что в интересах иранцев осудить войну и прислать посла, для заключения мирного договора. В противном случае, падишах возможно вновь направит войска против Ирана<sup>8</sup>.

Письмо великого везира, полное угроз, возымело действие. В особенности шах был озабочен решением султана двинуть войска в Азербейджан и Ардебиль, шах Тахасп серьезно стал думать о мирном соглашении.

Везири шах Тахмаспа послали также письмо беилербею Эрзурума Айс паше. В ответном письме Айс паша сообщал: и дадите нам, пришедшим в вашу страну, надлежащий ответ. “ На этот раз падишах намерен воевать и не собирается менять свое решение; это вызвано поведением персов и их преступлениями на турецкой земле. “ Далее следовало: “Если вы действуете по приказу шаха, и понесете ответственность за ваши преступления в вашей стране, то и сражайтесь с нами как воины. Если вы на это не способны, довольствуйтесь помилованием; если причина вашего страха в пушках и ружьях, то мы откажемся от них и сразимся с вами мечами и щитами, если даже вы влезете в муравейник, все равно мы найдем, если же вы

---

<sup>8</sup> Peçevî Tarihi, Hazırlayan B. S. Baykal, c. I, Ankara, 1999, s. 305-307; F. Kızıoğlu, Osmanlıların Kafkas Ellerini Fethi, Ankara, 1976, s.239; Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-Iran Siyasî Antlaşmaları, İstanbul, 2002, s. 68

выступите, мы оставим в стороне пушки и ружья и сразимся с вами мечами <sup>9</sup>.

Затем еще одно письмо было послано Аяс паше.

Правитель Эрзурума Аяс паша послал персам следующее ответное письмо: мы примем все меры для взятия Ардебилья и Тавриза, наше желание непоколебимо. Сколько раз вы спасались бегством от султана, а затем говорите о вашем героизме и мужестве. Знайте, что города Тавриз и Ардебиль находятся в западне, выбраться никто не сможет. С помощью господ бога падишах пожелал перезимовать возле границы. Наступит весна и Ардебиль и Тавриз окажутся в другом положении. Если вы будете просить нас о заключении мира, падишах даст согласие и не откажет вам”.

Переписка везирей, начавшаяся в Баязиде, положившая начало мирному соглашению между Турцией и Ираном, продолжалась и позднее. Эта переписка способствовала заключению мирного договора.

9 августа Сулейман Кануни покинул Баязид и минув Алашкирд, Чобан-копрусу, Хасанкале, 3 сентября прибыл в Эрзурум и остановился поблизости в местечке Сазлык.

Между тем, когда Сулейман направлялся в Эрзурум, шах Тахмасп отправил в Басиан войско, которое razорило город до прибытия туда султана. Персы учинили разбой также в Тао и захватили богатую добычу. Затем войска шаха направились к Олтиси. Здесь персам пытался оказать сопротивление местный османский военачальник Синан-бей, но был разбит, взят в плен и послан в ставку Тахмаспа.

В своем “Тезкере” Тахмасп это событие описывает так: “...затем я послал войско, дабы привели Синан-бея, который был блокирован в Куртской крепости, его я отправил вместе с Шах-Кули-агой, снабдив письмом к великому повелителю, в ко-

---

<sup>9</sup> Peçevi Tarihi, Hazırlayan B. S. Baykal, c. I, Ankara, 1999, s. 309-311; F. Kırzioğlu, Osmanlıların Kafkas Ellerini Fethi, Ankara, 1976, s. 230; Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-Iran Siyasî Antlaşmaları, İstanbul, 2002, s. 69



тором просил заключения мира. Я писал, что хотя великий повелитель в отношении меня совершил зло, однако мы платим за зло добром и предлагаем мир... После того как были отправлены посланники, мы сами двинули войска на Гюрджистан Луарсаба<sup>10</sup>...”

Военные действия шаха лишней раз свидетельствовали о том, что шах в борьбе с Портой исключительное значение придавал Картли и всеми средствами пытался усилить свое влияние в этих землях перед началом переговоров с султаном. Шаху было ясно, что в процессе мирных переговоров “вопрос о Гюрджистане” должен стать одним из важнейших и его решение будет способствовать их успешному завершению.

6 сентября Сулейману Кануни сообщили о походе шаха в Грузию. Сулейман срочно направил навстречу ему многочисленное войско, в составе которого были 4 тысяч янычар, войска бейлербеев Румелии, Анатолии и Карамана. Главкомандующим был назначен великий везирь Кара Ахмад паша. 9 сентября османские части подошли к Олтиси, но Ахмед паша получил известие, что персы решили уклониться от сражения. Поэтому 21 сентября войско великого везиря вернулось в Эрзурум и случилось с армией султана<sup>11</sup>.

Великий везирь Ахмед паша направил письма пограничным кизилбашским эмирам с просьбой содействовать освобождению из плена Синан бея к началу мирных переговоров. Синан бей был освобожден, и вместе с ним был отправлен представитель шаха Каджарлу Корчи башу Шах-Кулу ага. 26 сентября он явился в Эрзурум к Сулейману Кануни с предложением о заключении мира<sup>12</sup>.

---

<sup>10</sup> A Chronicle of the Carmelites in Persia, London, 1939, p. 40

<sup>11</sup> Peçevî Tarihi (Hazırlayan B. S. Baykal), c. I, Ankara, 1999, s. 312; F. Kırzioğlu, Osmanlıların Kafkas Ellerini Fethi, Ankara, 1976, s. 233-234

<sup>12</sup> Беседа шаха Тахмаспа с турецкими послами. Персидский текст с грузинским переводом, комментариями и предисловием издал К. Г. Табатадзе, Тбилиси, 1976, см. 53; Peçevî Tarihi, Hazırlayan B. S. Baykal, c. I, Ankara, 1999, s. 312; Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-İran Siyasî Antlaşmaları, İstanbul, 2002, s. 70

Освободив из плена Синан бея османского сановника, шах этим пытался склонить султана к миру. Шах-Кулу ага был принят Сулейманом, посол Ирана, войдя в зал султана, поцеловал руку султана Кануни и передал ему послание шаха Тахмаспа<sup>13</sup>.

Идея временного мирного договора между Турцией и Ираном была одобрена и Сулейман послал шаху письмо в котором было сказано: “До тех пор, пока со стороны сефевидов не будут совершены беспорядки и волнения и смута, турецкое победоносное войско не нарушит условий перемирия и не вторгнется в их владения”<sup>14</sup>.

Интересные сведения о ходе переговоров содержатся в европейских источниках, в частности в архиве кармелитов. В них отмечается, что посланник шаха, человек преклонных лет, убеждал султана, что ему, как мусульманину, не следует причинять зло другим мусульманам, так как это противоречит догматам ислама. Он говорил об этом так красочно и образно, что у султана, который в совершенстве владел персидским, навернулись на глаза слезы. В конце своей речи посланник умолял султана заключить мир с Тахмаспом. Эта мольба была такою горячею, что Сулейман внял ей. Старик посланник сообщил султану, что до отъезда в Эрзурум он побывал у Тахмаспа. Шах изъявил желание заключить мир при условии, что его авторитет не будет ущемлен. В свою очередь, султан для сохранения престижа Османской державы, настаивал на некоторых пунктах, которые умаляли авторитет противной стороны. Наконец, пришли к соглашению, что мирный договор будет заключен с тем условием, что каждый монарх останется в пределах тех владений, которые принадлежали ему до начала по-

---

<sup>13</sup> Peçevî Tarihi..., s. 315; A. Ekbar Diyanet, İlk Osmanlı-İran Antlaşması (1555 Amasya Musalahası), İstanbul, 1977, s.5; J. Hammer, Historie de l'Empire Ottoman, Paris, 1845, p.68-69; Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda ...,s. 70

<sup>14</sup> F. Kırzioğlu, Osmanlıların Kafkas Ellerini Fethi, Ankara, 1976,s. 239; Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda ...,s. 70

хода, причем страна, связанная договором с одной из держав и выплачивающая ей дань, не будет покорена другою<sup>15</sup>.

27 сентября в Эрзуруме (Сазлике) между Турцией и Ираном было достигнуто перемирие, и прекратилась война, которая с перерывами длилась 40 лет<sup>16</sup>.

Перемирие предусматривало территориальный раздел: так, например, с 1534 г. территории, которые захватили турки у персиян - Басра, Багдад, Шахризул, Ван, Бидлис, Эрзурум, Карс и Саатабаго - ныне стали владениями Турции и поэтому неприкосновенны.

Согласно перемирию, Турция и Иран разделили Грузию на сферы влияния: Месхети, Картли и Кахети отошли к Ирану, а Имерети, Мегрелия и Гурия, вплоть до границ Трапизона – к Турции<sup>17</sup>.

Если шах нарушит условия перемирия, то султан начнет поход на Восток и разорит Тавриз и Ардебиль<sup>18</sup>.

Таким образом, в процессе мирных переговоров между Турцией и Ираном было достигнуто соглашение по главным спорным территориальным вопросам, и тем самым были созданы благоприятные условия для подписания окончательного мирного договора.

Условия Эрзурумского перемирия были утверждены Амасийским мирным договором 1555 г.

28 сентября Сулейман покинул Эрзурум и 30 октября прибыл в Амасию.

---

<sup>15</sup> A Chronicle of the Carmelites in Persia, London, 1939, p. 40

<sup>16</sup> F. Kırzioğlu, Osmanlıların Kafkas Ellerini Fethi, Ankara, 1976, s. 240

<sup>17</sup> Сведения Искандера Мунши о Грузии, Персидский текст с грузинским переводом издал В. С. Путуридзе, Тб., 1969, ст.20

<sup>18</sup> F. Kırzioğlu, Osmanlıların Kafkas Ellerini Fethi, Ankara, 1976, s. 240; Remzi Kılıç, XVI-XVII Yüzyıllarda Osmanlı-İran Siyasî Antlaşmaları, İstanbul, 2002, s.71

## ՏՐԱՊԻԶՈՆԻ ՏԱՐԱԾԱԳՈՏԻՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ

### *Տրապիզոնի գավառի (սանջակի) կազմավորումը*

Օսմանյան կայսրությունն իր գաղափարաբանությամբ, ներքին կառուցվածքով և սոցիալ-տնտեսական համակարգով իսլամական երկիր էր, որն ի սկզբանե դարձավ քրիստոնեությանը հակոտնյա մի աշխարհ<sup>1</sup>: 16-րդ դարի սկզբին սուլթան Սելիմ Առաջինը Եգիպտոսը գրավելուց հետո յուրացրեց խալիֆի տիտղոսը, Կ. Պոլիսը հայտարարեց խալիֆի նստավայր՝ դրանով իսկ մեծացնելով կայսրության ազդեցությունն իսլամական աշխարհի վրա: Այնուհետև նրան հաջորդող սուլթանները ևս համարվում էին բոլոր մահմեդականների կրոնապետ<sup>2</sup>:

16-17-րդ դարերում Օսմանյան հսկայածավալ տերության մեջ հպատակ բնակչության մեծամասնությունը կազմում էին քրիստոնյաները: Ջավթված տարածքներում ժողովրդագրական պատկերը վերածնելու նպատակով օսմանյան իշխանությունները մշակել էին պետական կառավարման այնպիսի ամբողջական համակարգ, որի բուն նպատակը կայսրությանն օսմանա-մուսուլմանական բնույթ հաղորդելն էր, այլ կերպ ասած՝ նոր գրավված տարածքների մահմեդականացումը: Այդ համակարգի բաղադրիչներից էր վարչական բաժանումների քաղաքականությունը:

Օսմանյան կայսրության վարչական բաժանումների ամենահին ցուցակները համարվում են XVI դարի վերջին և XVII դարի սկզբներին կազմված Այնի Ալի Էֆենդիի «Օրենքների գրքույկները», ո-

<sup>1</sup> Бродел Ф., Время мира, материальная цивилизация, экономика и капитализм, XV-XVIII вв., т. 3, Москва, "Прогресс", 1992, с.480-486.

<sup>2</sup> Uzunçarşılı İ. H., Osmanlı Tarihi, İstanbul'un Fethinden Kanuni Sultan Süleyman'ın Ölümüne Kadar, II Cilt, Türk Tarih Kurumu Basımevi-Ankara, 1998, s. 292, 306.

րոնք առաջին անգամ հրատարկել է Մ. Բելինը<sup>3</sup>: 1960թ. արևելագետ Ա. Սաֆրաստյանը, համեմատական քննության ենթարկելով օսմանյան *դեֆթերիանտի* պետի՝ Այնի Ալի Էֆենդիի «Օրենքների գրքույկներն» ու Ֆերիդուն Բեյի «Սուլթանական գրությունները», ներկայացրել է XVII դարում կայսրության վարչական բաժանումները<sup>4</sup>: Հ. Անասյանն իր «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» մենագրության մեջ հիմք ընդունելով XVII դարի ֆրանսիացի հեղինակ Փ. Ռայկոտի ուսումնասիրությունը՝ այլ աղբյուրների համադրությամբ, անդրադարձել է նույն դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրության կազմում Արևմտյան Հայաստանի գավառների վարչական վիճակին<sup>5</sup>: Վարչական բաժանումների մասին արժեքավոր աղբյուր է նաև ռուս արևելագետ Ա. Տվերիտինովայի հրատարակած և ծանոթագրած XVII դարի թուրք հեղինակ Քոչի Բեյի<sup>6</sup> երկը: Արևմտյան Հայաստանի մասին խիստ կարևոր տեղեկություններ են պարունակում XVII դարի մյուս ուղեգիր-պատմագիրների՝ Քյաթիբ Չելեբիի<sup>7</sup> և Էվլիյա Չելեբիի<sup>8</sup> աշխատությունները:

<sup>3</sup> Belin M., Journal Asiatique sixieme serie, t. XV, 1870, p. 254-288.

<sup>4</sup> Սաֆրաստյան Ա., Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում (պատմական ակնարկ), Արևելագիտական ժողովածու, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, էջ 285-301:

<sup>5</sup> Անասյան Հ., XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երևան, 1961, էջ 15-20: Ricaut P., Histoire de l'etat present de l' Empire Ottoman trad. de l'anglois par Briot, II<sup>e</sup> ed., Paris, chez Sebastien Mabre. 1670, p. 542-544.

<sup>6</sup> Тверитинова А. С., Ученые записки Института Востоковедения, т. VI, Москва-Ленинград, 1953, с. 240-244.

<sup>7</sup> Քյաթիբ Չելեբի, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, թարգմանություն թուրքական բնագրերից, ներածական ակնարկներով, ծանոթագրություններով և հավելվածով, կազմեց՝ Ա. Սաֆրաստյան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., հ. Բ, Երևան, 1964 էջ 7-102:

<sup>8</sup> Էվլիյա Չելեբի, Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 4, Թուրքական աղբյուրներ, հ. Գ, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Խ. Սաֆրաստյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. Գ, Երևան, 1967:

Արևմտյան Հայաստանում օսմանյան իշխանությունների վարչական բաժանումների քաղաքականությանն անրադարձել է նաև Ե. Սարգսյանը<sup>9</sup>:

Հարցի պատմության ուսումնասիրման համար արժեքավոր աղբյուր են նաև օսմանյան Թահիրի դավթարները (**Tahrir defterleri**)՝ «Աշխարհագիր մատյանները», որոնց գրանցումները վերաբերում են կայսրության ժողովրդագրությանը, բնակչության տեղաշարժերին, տեղանուններին, հարկային քաղաքականությանը, ինչպես և վարչական բաժանումներին: Դավթարներ էին կոչվում Օսմանյան կայսրության և նրանից առաջ սելջուկյան տիրապետության տակ գտնվող երկրներում հայտնի գրանցման մատյանները, որոնք կենտրոնական իշխանության հրամանով և հսկողությամբ պարբերաբար կազմվում էին հատուկ հաշվառման միջոցով: Աշխարհագիր մատյաններն ստեղծվում էին անմիջապես՝ նոր գրավված տարածքներում հաշվառումներ կատարելուց հետո: Հաշվառումը բնակչության և հողի համընդհանուր գրանցումն էր: Դավթարները կազմվում էին ըստ վարչական միավորների՝ սանջակների, կազանների և նահիյեների<sup>10</sup>:

Սույն հոդվածում, XVI դարի «Աշխարհագիր մատյանների»<sup>11</sup>, ավելի ուշ՝ XIX դարում կազմված «Տարեգրքերի» (**Salname**)<sup>12</sup> գրանցումների և զուգահեռ աղբյուրների հիման վրա, քննության ենք ենթարկում կայսրության՝ Տրապիզոնի սանջակում իրականացրած վարչական բաժանումների քաղաքականությունը և կառավարման մարմինների առավել կարևոր գործառույթները:

---

<sup>9</sup> Саркисян Е. К., Политика османского правительства в Западной Армении, изд-во АН АССР, Ереван, 1972, с. 17-24.

<sup>10</sup> Օսմանյան աշխարհագիր մատյանների մասին տես Լ. Սահակյան, Բարձր Հայքի Բարբերդ, Սալեր, Դերջան գավառների տեղանուններն ու ժողովրդագրությունը XVI դարի օսմանյան աշխարհագիր մատյաններում, Երևան, 2007:

<sup>11</sup> Թուրք աղբյուրագետների լատինատառ տառադարձությամբ հրատարակած այդ նյութերն են՝ Gökbilgin T., XVI. Yüzyıl Başlarında Trabzon Livası ve Doğu Karadeniz Bölgesi, "Bellekten", Ankara, Cilt: XXVI, Sayı, 1024 Nisan, 1969. Bostan M. H., XV-XVI. Asırlarda Trabzon Sancağında Sosyal ve İktisadî Hayat, Türk Tarih Kurumu Basımevi, Ankara, 2002.

<sup>12</sup> Trabzon Vilayeti Salnamesi (1869-1904), 1-22 cilt. Hazırlayan K. Emiroğlu, Ankara, 1993-2009.

Ինչպես հայտնի է, սկզբնական շրջանում կայսրության հիմնական վարչական մեծ միավորը **սանջակն** էր (գավառ), որը հաճախ կոչվել է **լիվա**<sup>13</sup>: XIV դարի վերջին սանջակների միավորումը բերում է ավելի խոշոր վարչական մարմնի՝ **բեյլերբեյլիկի** կամ **էյալեթի** (նահանգ) առաջացմանը: XVII դարում կայսրության տարածքային աճի հետևանքով էյալեթների թիվը հասնում է 34-ի<sup>14</sup>: Օսմանյան վարչական բաժանումներն ու տարբեր գերատեսչությունների ստեղծումն անմիջականորեն փոխկապակցված միջոցառումներ էին:

Օսմանյան կայսրության վարչական բաժանումներն անքակտելիորեն կապված էին հողային, զինվորական, դատակրոնական պետական կառույցների հետ: Ռազմաավատական կառավարման շրջան՝ **թինարատերեից** մինչև **սանջակբեյ** ու ավելի բարձր՝ **բեյլերբեյ**, ենթարկվում էին մեծ վեզիրին: Այս համակարգին զուգահեռ ձևավորվում էին **ֆինանսահարկային** և **քաղիության** (**քաղի** դատավոր), այսինքն՝ մահմեդական դատակրոնական կառույցները: Ֆինանսական գերատեսչությունը ղեկավարում էր **բաշրեֆթերդարը**: Վերջինս պետական գանձարանի ղեկավարն էր, սուլթանական ամենաազդեցիկ պաշտոնյաներից մեկը: Նա ևս ենթարկվում էր մեծ վեզիրին, սակայն ուղղակիորեն, առանց միջնորդավորման, իսկ **քաղին**՝ շեյխ-ուլ-իսլամին, որն օսմանյան աստիճանակարգում հավասար էր մեծ վեզիրին: **Քաղիների** կառավարման շրջանները՝ **քաղըլըքները**, որոնք կոչվում էին նաև **կազաներ**<sup>15</sup>, հաճախ չէին համընկնում ռազմավարչական շրջանների հետ: Այդպիսի պետական վարչական կառույցը խոչընդոտում էր տեղական անջատողականությանը և նպաստում կենտրոնական իշխանության ամրապնդմանը:

<sup>13</sup> «Լիվա» արաբերեն նշանակում է նաև «դրոշ»:

<sup>14</sup> Орешкова С. Ф., Государственная власть и некоторые проблемы формирования социальной структуры османского общества. Османская империя. Система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, изд-во «Наука», Москва, 1986, с. 13.

<sup>15</sup> Gökbilgin T., նշվ. աշխ., էջ 293:

Թուրք աղբյուրագետ Թ. Գյոքբիլգինի հրատարակած աշխարհագիր մատյանների գրանցումների համաձայն Տրապիզոնում առաջին աշխարհագիրներն անցկացվել են սկսած Սելիմ Առաջինի (Յավուզ-Ահեդ) ժամանակաշրջանից (1515թ., հ. 921թ.): 1461թ. օսմանյան նվաճումից հետո Տրապիզոնն իր շրջակայքով երկար ժամանակ ունեցել է **սանջակի** կարգավիճակ: Այն կառավարվում էր **սանջակբեյի**, հատուկ պաշտոնյաների՝ **քաղիների և հրամանատարների**, ամրոցներում՝ **դիզդարների** (բերդապահների) և **սուբաշինների**<sup>16</sup>, **գահմների** և **էմիրների** (*ուներա* կառավարիչ), **ալայ բեյերի**<sup>17</sup>, **մուհաբբաշների**<sup>18</sup> միջոցով:

Օսմանյան աշխարհագիր մատյանների գրանցումները ցույց են տալիս, որ Տրապիզոնի սանջակը Սելիմ Առաջինի կառավարման առաջին տարիներին միանում է «Փոքր Ռումի էյալեթին» (**“Eyalet-i Rumiye-i Sugra”**): Դեռևս XV դարում Ռումի էյալեթի կազմի մեջ մտել են **Ամասիայի**, **Թոքաթ-Սվասի** (իմա՝ **Եվդոկիա-Սեբաստիա**), **Սոնիսա Նիքսարի** (իմա՝ **Նոր Կեսարիա**), **Շարքը-Գարահիսարի**, **Ջանիքի** (իմա՝ **Ճանիք**) լիվաները: Այս էյալեթը հաճախ կոչվել է նաև «Հին Ռումի վիլայեթ» (**“Vilâyet-i Rum-i Kadîm”**): Նրա հինգ լիվաներում կար 28 **կազա** կամ, որ նույնն է՝ **քաղիության** շրջան<sup>19</sup>:

Հետագայում Սելիմ Ահեդն էյալեթին բռնակցում է նոր շրջաններ՝ Տրապիզոնի լիվան՝ իր 8 քաղիությամբ, **Քենախի** (իմա՝ **Կամախ**) լիվան՝ իր 2 քաղիությամբ, **Քայրուրդի** (իմա՝ Բաբերդ) լիվան՝ իր 3 քաղիությամբ, Մալաթիայի լիվան՝ իր կազաներով, Դիվրիդի (իմա՝ Տևրիկ)-Դարենդեի լիվան՝ իր 2 քաղիությամբ: XVI դարի առաջին կեսին պատկանող աշխարհագիր մատյաններում «Հին

---

<sup>16</sup> **Սուբաշի**-սուբաշիի հրամանի տակ էին գտնվում գլխավոր գիշերապահ և անվտանգության ուժերը:

<sup>17</sup> **Ալայ բեյ**-ազատ թիմարատեր, սիպահիների ղեկավար, որը գտնվում էր սանջակբեյի հրամանատարության տակ:

<sup>18</sup> **Մուհաբբաշ**-լիազորված անձ, որը դատարան էր կանչում քրեական հանցագործներին, ինչպես նաև առևտրային կամ կենցաղային վեճեր ունեցողներին:

<sup>19</sup> Gökbilgin T., XVI. Yüzyıl Başlarında Trabzon Livası ve Doğu Karadeniz Bölgesi, s. 293-294.



**Ռումի վիլայեթը»** (“**Vilâyet-i Rum-ı Kadîm**”), տարածքային նոր միավորներ ձեռք բերելով, գրանցվել է որպես «**Նոր Ռումի վիլայեթը**» (“**Vilâyet-i Rum-ı Hâdis**”)<sup>20</sup> և էյալեթի կազմում արդեն կար 43 կազա, 42 թիմար, 46 ամրոց<sup>21</sup>:

Ա. Սաֆրաստյանի հրատարակած Այնի Ալի Էֆենդիի և Ֆերիդ-դուն Բեյի XVII դարի Օսմանյան կայսրության վարչական բաժանումների ցուցակում Ռումի<sup>22</sup> էյալեթը կրկին հիշվում է **Փոքր Ռումի էյալեթ՝** նոր լիվաների (սանջակ) հավելումներով: Այն չպետք է շփոթել Օսմանյան կայսրության եվրոպական մասի Ռումելիի էյալեթի հետ: XVII դարում **Փոքր Ռումի էյալեթի** կազմում էին ***Սվազի (Սեբաստիա), Ամասիայի, Չորումի, Բոզոքի, Դիվրիկի (Տևրիկ), Զանիքի (Ճանիք) և Արաբկիրի*** սանջակները: Շարքը Գարահիսարի սանջակը դուրս էր եկել Ռումի էյալեթի կազմից և մտել 1535թ. ստեղծված Էրզրումի էյալեթի ենթակայության տակ<sup>23</sup>:

Նույն թվականին Տրապիզոնի սանջակը ևս դուրս է գալիս Ռումի էյալեթից և միավորվում **Էրզրումի** էյալեթին<sup>24</sup>: Թուրք պատմաբան Մ. Բոսթանը ենթադրում է, որ Տրապիզոնն իր այս վարչական կարգա-

---

<sup>20</sup> Gökbilgin T., նշվ. աշխ., էջ 294:

<sup>21</sup> Gökbilgin T., նշվ. աշխ., էջ 295:

<sup>22</sup> Ռում նշանակում է հույն, թուրքերենում ունեցել է մի քանի նշանակություն: Միջին Ասիայում և նույնիսկ Թուրքիայում ապրող որոշ ժողովուրդներ օսմանյան թուրքերին անվանում էին ռում (օրինակ՝ Իկոնիայի սուլթանությունը կոչում էին նաև Ռումի սուլթանություն): Հռոմեական կայսրության երկու մասի բաժանվելուց հետո Բյուզանդական կայսրությունը կոչվել է Ռումերի երկիր: Հետագայում Ռումի երկիր (Ռումելի) է կոչվել նաև Օսմանյան պետության եվրոպական մասը: Համաձայն թուրքական աղբյուրների՝ Սվազ քաղաքը և վիլայեթը նույնպես կոչվել են «Ռումի» կամ «Ռում-ի սուդրա»՝ Փոքր Ռում (Տե՛ս Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, էջ 260):

<sup>23</sup> Սաֆրաստյան Ա., Օսմանյան կայսրության վարչական բաժանումը XVII դարում (պատմական ակնարկ), Արևելագիտական ժողովածու, հ. 1, էջ 296:

<sup>24</sup> Kunt M., Sancaktan Eyalete, İstanbul, 1978, s. 128. Emecen F. M., Trabzon Eyaletinin Batı Sınırı, Trabzon Tarihi Sempozyumu (6-8 Kasım 1998), Trabzon, 1999, s. 160-161.

վիճակը պահպանել է մինչև 1580թ<sup>25</sup>: Սակայն Թ. Գյոքբիլիզինն այն կարծիքին է, որ Տրապիզոնի սանջակը մինչև XVI դարի վերջը եղել է «Նոր Ռումի վիլայեթի» («*Vilâyet-i Rum-ı Hâdis*») կազմում<sup>26</sup>:

1486թ. «Մանրամասն թիմարային մատյանի» գրանցումից պարզվում է, որ Տրապիզոնի սանջակի մեջ մտել են **Տրապիզոնի** կազային ենթակա **Աքշաբադի** (իմա՝ **Պլատանա**), **Յոմուրայի** (իմա՝ **Ղուրանա**), **Սուրմենեի** (իմա՝ **Սև գետ**), **Մաչկայի** նահիյեները, ինչպես նաև՝ **Օֆի** (իմա՝ **Ուփիոս**), **Ռիզեի**, **Թորուլի** (իմա՝ **Արդասա**), **Աթինայի** (այժմ՝ **Փազար**), **Համշենի**, **Արհավիի կամ Լազի**, **Քուրթունի** (իմա՝ **Քորթուն**) **և Գիրեսունի (Կերասուն՝ հնում Փառնակիա)** կազաները<sup>27</sup>: Այս կազաները մատյաններում գրանցվել են նաև որպես քաղիության շրջաններ<sup>28</sup>:

Վերոնշյալ վարչական միավորների մի մասը տարբեր ժամանակներում եղել է Հայասայի, Վանի, Փոքր Հայքի թագավորությունների կազմում, որոշ մասն էլ համընկնում է Մեծ Հայքի Բարձր Հայք, Տայք աշխարհների տարբեր հատվածներին: Այս տարածագոտին հայ ժողովրդի բնօրրաններից է և դեռևս վաղնջական շրջաններից հայտնի էր իր հայաիոծ բնակավայրերով: Հույն աշխարհագրագետ Ստրաբոնի վկայությամբ Տրապիզոնից մինչև Կերասուն հսկայական հատվածը մտել է Փոքր Հայքի հայկական թագավորության մեջ. «Փոքր Հայքը բավական բերրի երկիր է: Ծովաց նման սա էլ ունեցել է միշտ իր բնիկ իշխանները, որոնք մերթ Մեծ Հայոց բարեկամներն էին և մերթ ինքնագլուխ: Իրենց հնազանդ էին Խաղտիք և Տիբարենները, այնպես որ իրենց իշխանությունը տարածվում էր մինչև Տրապիզոն և Փառնակիա»<sup>29</sup>:

<sup>25</sup> Bostan M. H., նշվ. աշխ., էջ 21:

<sup>26</sup> Bostan M. H., նշվ. աշխ., էջ 27, 31, 34, 35, 36, 39, 41, 42, 44:

<sup>27</sup> Gökbilgin T., նշվ. աշխ., էջ 293-294:

<sup>28</sup> Bostan M. H., նշվ. աշխ., էջ 26-27:

<sup>29</sup> Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյանը, Երևան, 1940, էջ 75: Տե՛ս նաև Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, «Հայաստան» հրատ., Երևան, 1987, էջ 80-81: Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 105, 190: Սև ծովի հարավային առափնյակի և Հայաստանի ու հայության հնագույն առնչությունների մասին տե՛ս նաև Վարդանյան Ս., Պատմական

XVI դարում Տրապիզոնի սանջակի սահմաններն արևելքում հասնում էին մինչև Մափավրի կազան. այն համապատասխանում է ներկայիս Ռիզեի նահանգի մեջ մտնող Չայելի գավառին: Սանջակի արևմտյան սահմանը ձգվում էր մինչև Օրդուի կազայի Շենսեդդինի (Բուլանջակ) նահիյեն, հարավում՝ Օրդուի կազայի մեջ մտնող Քրուկ-իլին, Շարքը Գարահիսարի սանջակի Ալուջարա և Շիրյանի (Շիրան) նահիյեն, Բայբուրդի (ինձա՝ Բաբերդ) սանջակին ենթակա Քովանս-Քալեի, Յաղմուրդերեսիի, Բայբուրդի, Քաբահորի և Իսփիրի (ինձա՝ Սպեր) նահիյեները<sup>30</sup>, ինչպես նաև մինչև Լիվանեի սանջակը (այժմ՝ Յուսուֆելի) և Արդվինի հարավային շրջանները: Հյուսիսում սահմանակից էր Սև ծովին<sup>31</sup>: Թ. Գյոքբիլգինը տալիս է հետևյալ նկարագիրը. «...սահմաններն, ինչպես հնում էր, ձգվում էին Ռումի էյալեթի կազմում մնացած Զանիք (Սամսուն) ներառելով Սև ծովի ողջ արևելյան ափերը»<sup>32</sup>: Փաստորեն, Տրապիզոնի սանջակի կազմում էին ներկայիս Թուրքիայի Հանրապետության համանուն նահանգի բոլոր գավառները, ինչպես նաև այսօրվա Գիրեսունի կենտրոնական կազայի և Քեշավիի, Դերելիի, Քարաբուլդուքի, Յաղլըդերեի, Գողանքենթի, Չանաքչլի, Էսփիյեի, Թիրեբուլուի, Գյորելեի (ինձա՝ Գուրիա) և Էյնեսիլի գավառները, այսօրվա Գյումուշխանեի նահանգի Քուրթուն և Թորուլ գավառները, Ռիզեի նահանգի բոլոր գավառները:

Մինչև Բաթումի սանջակի հիմնումը (1556թ.), աշխարհագիր մատյանների գրանցումներում այսօրվա Փազար և Չամլիհեմշին, Արդաշեն, Ֆընդըքլը գավառները, Արդվինի նահանգի Արիավի և Խոպա գավառները ևս մտնում էին Տրապիզոնի սանջակի կազմի մեջ: **Գոնիոյի** նահիյեն նույնպես ենթարկվել է Տրապիզոնի սանջակին:

---

ակնարկ, Չայն համշենական, գիրք 4-րդ, Երևան, 1999, էջ 7-15: Տե՛ս նույնի՝ Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 9-18:

<sup>30</sup> Miroğlu İ, XVI . Yüzyılda Bayburt Sancağı, İstanbul, 1975. (Տե՛ս գրքում գետնեղված քարտեզը):

<sup>31</sup> Bostan M. H., նշվ. աշխ., էջ 48:

<sup>32</sup> Gökbilgin T., նշվ. աշխ., էջ 294:

XVI դարի երկրորդ կեսին Տրապիզոնի սանջակի սահմանները կրում են մասնակի փոփոխություններ: *Աթինայի, Համշենի (Փազարհենշինի և Չամլըհենշինի), Արհավիի* կազաները և **Գոնիոյի** նահիյեն<sup>33</sup> միացվում են նորակազմ Բաթումի սանջակին, որը մոտ էր Գորելին (Գուրիա)<sup>34</sup>:

### ***Տրապիզոնի նահանգի (էյալեթի) ստեղծումը***

1581թ. «Ընդարձակ» և «Համառոտ» մատյանների գրանցումներում Տրապիզոնն արձանագրվել է որպես Բաթումին ենթակա սանջակ և այդ կարգավիճակը պահպանել մինչև XVII դարի սկիզբը, երբ այն սկսում է հիշատակվել որպես բեյլերբեյություն: Այնը Ալի էֆենդին 1609/1610թ. (հիջ. 1018) երկում նշում է, որ Տրապիզոնի և Բաթումի սանջակների միավորումով կազմավորվում է **Տրապիզոնի բեյլերբեյությունը**<sup>35</sup>: 1632-1641թթ. դավթարային գրանցումներում այս վարչական միավորը որոշ ժամանակ զուգահեռաբար անվանվել է և՛ **Բաթումի**, և՛ **Տրապիզոնի բեյլերբեյություն (էյալեթ)**<sup>36</sup>: 1650 թվականից ի վեր այն արդեն հայտնի էր միայն Տրապիզոնի էյալեթ անունով<sup>37</sup>:

---

<sup>33</sup> 1878թ. Բեռլինի պայմանագրով Գոնիոյի նահիյեն անցնում է Ռուսաստանին (Bostan M., նշվ. աշխ., էջ 35-40, 48-49): 1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կնքված 1878թ. Բեռլինի պայմանագրով Արդահանը, Կարսը և Բաթումի սանջակը, որի մեջ մտնում էր նաև Գոնիոյի նահիյեն, անցնում են Ռուսական կայսրությանը: Պայմանագրի մասին մանրամասն տես Կրակոսյա Ջ., Буржуазная дипломатия в Армении (70-ые годы XIX века), Ереванский Государственный Университет, Ереван, 1981, с. 132, 145-148, 154, 156, 213-215, 226, 265.

<sup>34</sup> Բյաթիբ Չելեբի, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, էջ 53:

<sup>35</sup> Ayn Ali Efendi, Kavânin-i Âli-i Osman der Hulâsa-i Mezamîn-i Defter-i Dîvân, İstanbul, 1979, s. 28-29. Տես նաև Tuncer H., Osmanlı İmparatorluğunda Eyâlet Taksimati, Ankara, 1964, s. 26, 35.

<sup>36</sup> Bostan M., նշվ. աշխ., էջ 22-23:

<sup>37</sup> Şahin İ., “Timar Sistemi Hakkında Bir Risâle”, Tarih Dergisi, sayı 32, İstanbul, s. 909.

XVII դարի թուրք տարեգիր Քյաթիբ Չելեբիի «Ուղեգրությունը» ևս փաստում է, որ հիշյալ սանջակների միավորումով կազմվել է բեյլերբեյություն<sup>38</sup>, որի մեջ մտել է նաև **Քունիայի** (իմա՝ **Գունիո**) սանջակը<sup>39</sup>: Այս սանջակը գտնվում էր Վիրքի սահմանի մոտ, գյուղաքաղաք էր, ուներ ծովեզրյա մի բերդ, որի մոտակայքում Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքով հոսող Ճորոխ գետը թափվում էր Սև ծով: Կազաներն էին **Աթնան, Էրխին, Սուլեն, Վիհեն** (իմա՝ **Վիչե<Վիտե**)<sup>40</sup>:

Ըստ Քյաթիբ Չելեբիի՝ Տրապիզոնի էյալեթն ուներ 14 բերդ, 404 կըլոջ<sup>41</sup>, թեզքերեով և առանց թեզքերեի 54 գեամեթ<sup>42</sup>, 398 թիմար, ջեբեյուններով<sup>43</sup> միասին 700 զինվոր<sup>44</sup>: Նա գրում է. «Այս էյալեթի երկարությունը 5-6 օրագնաց է, լայնությունը՝ երեք օրագնաց: Հսկա և դժվարանցանելի լեռներն իրենցից ներկայացնում են մի մեծ լեռնաստան, որի կարևոր մասը ընկած է ծովեզրյա շրջանում: Այս լեռները ծածկված են անժայրածիր անտառներով:... Կազաներն են՝ **Էթեկբան, Երդուլը, Ալչակալան, Էրխուհը, Օֆը, Փլադանան** (իմա՝ **Պլատանա**), **Թրիպուլին** (իմա՝ **Տրիպուլի**), **Ռեհվեհն, Սուրմենեն, Թուրլը, Գիրասունը** (իմա՝ **Կիրասուն**), **Քեշաբը, Քորթունը, Քունիեն, Մազկեն, Մայիրը, Մավերին, Յովաբուլին** (այլ անունով՝ **Քորեյլե**) և **Լեջեն**»<sup>45</sup>: Ինչպես

<sup>38</sup> Քյաթիբ Չելեբի, «Զիհան նյումա», Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, էջ 50:

<sup>39</sup> 1554թ. Տրապիզոնի սանջակին ենթակա Արհավի կազան կազմված էր չորս նահիյեից՝ Լազ, Քունիյե

(Գունյե), Արհավի և Իսքելե:

<sup>40</sup> Քյաթիբ Չելեբի, «Զիհան նյումա», էջ 52:

<sup>41</sup> **Քըլոջ (կըլոջ)**-բառացի նշանակում է սուր, թուր: Օսմանյան կայսրությունում ֆեոդալական հողաբաժինների (թիմար և գեամեթ) սիփահիների կողմից ռայաներին մշակելու տրվող հողերի երեք կամ հինգ հազար ակչեի եկամուտը կոչվում էր քըլոջ:

<sup>42</sup> **Թեզքերեով** թիմարներին բերաթները տրվում էր Ստամբուլից, իսկ առանց թեզքերեի թիմարները բեյլերբեյի կողմից ավելի փոքր եկամտի գումարով տրվող թիմարներն էին:

<sup>43</sup> **Ջեբեյու** էին կոչվում թիմարի և գեամեթի տերերի սեփական միջոցներով զինված պատերազմի ուղարկվող հեծյալ զինվորները:

<sup>44</sup> Քյաթիբ Չելեբի, «Զիհան նյումա», էջ 50:

<sup>45</sup> Նույն տեղում:

հետևում է Քյաթիբ Չելեբիի այս տեղեկություններից, XVII դարում Տրապիզոնի էյալեթը վերակազմավորվել է, իսկ կազաների թիվը՝ ավելացել: Այդ կազաների անուններն էլ մասամբ գրանցված են աղձատված, հնցյունական որոշակի շեղումներով, թորուլը՝ թուրլ, Մափավրին՝ Մավերի, Գոնիոն՝ Քունիյե, Պլատանան՝ Փլադանա:

Այս էյալեթի մասին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում նաև XVII դարի օսմանցի ուղեգիր Էվլիյա Չելեբին: Ըստ նրա՝ Տրապիզոնը (Թերեբ-էֆզունի) Ռումի երկրի սանջակներից էր, իսկ Տրապիզոնի էյալեթը բաղկացած էր *Տրապիզոն, Գյունուշխանե, Մախչա (իմա՝ Մաչկա), Ռիզե, Գյունիա* (իմա՝ Գոնիո) սանջակներից<sup>46</sup>: Էյալեթն ուներ 454 քըլըջ, ջեբելուների հետ միասին՝ 1850 զինվոր<sup>47</sup>: Նույն աղբյուրում մի քանի էջ հետո, որպես Տրապիզոնի սանջակներ են հիշատակվում *Խանջան, Ստորին Բաթունը, Վերին Բաթունը, Գունիան* և *Տրապիզոնը*: Փաշան նստում էր Տրապիզոնում: Էյալեթն ուներ *թիմարի ղեֆթերդար*<sup>48</sup>, *ղեֆթերի քեթխուդա*<sup>49</sup> և *չավուշների էմին*<sup>50</sup>: Ջեբելուների հետ միասին այնտեղ կար 1800 «անվանի զինվոր», իսկ «փաշայի ջեբելուները 1000 քաջերից են կազմված»: Փաշան *ալայի բեյի, չերիբաշիի* և *յուզբաշիի* հետ միասին ընդամենն ուներ 3000 զինվոր: Պատերազմի ժամանակ այդ բոլոր զինվորները զինված հավաքվում են փաշայի և *ալայի բեյի* դորշակի տակ: Չներկայացած զինվորի զեամեթը ուրիշին է տրվում<sup>51</sup>: Տրապիզոնի սանջակում կար 43 զեամեթ, 328 թիմար, Բաթունի սանջակում 5 զեամեթ, 72 թիմար<sup>52</sup>:

Նույն դարի մեկ այլ թուրք պատմագիր Մյունեջջիմ Բաշին, խոսելով Արմենիա երկրի<sup>53</sup> մասին, նշում է, որ **Տրապիզոնն Արմենիա-**

<sup>46</sup> Էվլիյա Չելեբի, նշվ. աշխ., էջ 26:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>48</sup> **Թիմարի ղեֆթերդար**-թիմարների հաշվետար պաշտոնյա:

<sup>49</sup> **Ղեֆթերի քեթխուդա**-էյալեթի ամբողջ հաշիվների կառավարիչ:

<sup>50</sup> **Չավուշների էմին**-դիվանում և արքունիքում ծառայող կրտսեր սպաների հաշվառում անցկացնող պաշտոնյա:

<sup>51</sup> Էվլիյա Չելեբի, նշվ. աշխ., էջ 41:

<sup>52</sup> Նույն տեղում:

<sup>53</sup> Տես Մյունեջջիմ Բաշի, Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին, հ. Բ, Երևան, 1964, էջ 183:

յի սևծովյան նավահանգիստն է<sup>54</sup>: Մեզանում Արմենիա երկրի մասին այս խիստ ուշագրավ տեղեկությունը մեկնաբանության չի արժանացել: Ավելորդ չենք համարում ամբողջությամբ մեջբերել Արմենիա վիլայեթի (երկրի) սահմանների և կարևոր քաղաքների նկարագրությունն ըստ Մյունեջիմ Բաշիի.

*«Արմենիայի վիլայթը մեծ է: Նրա Արևմտյան կողմը Արմեն վիլայթն է, արևելյան և հարավային կողմը՝ Արանի և Ադրբեջանի սահմաններն ու Ջիզիրեի մի քանի քաղաքներն են: Հյուսիսային կողմը նորից Արանի սահմաններն են: Այս երկրի մեծ մասը, լեռնային լինելով, բաժանվում է երեք մասի: Մի մասը՝ Գալիգա, Շիմշաղ և սրանց հարակից սահմաններն են, մյուս մասը՝ Հեզրան և Բաբի Ալան քաղաքներն ու դրանց միջև ընկած տարածությունը: Երրորդ մասը՝ Բերդան, Բաբ Էլ-Էբվաբը և հարակից մասերը: Ուրիշներն այս [երկիրը] բաժանում են չորս մասի, որից մի մասը Բելզան և Շիրվանն է և դրանց միջև ընկած տարածությունը: Մի մասը Մեզրանն է, որ Թիֆլիս է կոչվում, և Ֆիրուզ Աբադի ու Լեկեզի գավառները: Հաջորդ մասը՝ Սիրխանն (իմա՝ Սիսականը - Լ. Ս.) ու Նախիջևանն են, իսկ մյուս մասը՝ Խըրդ Բըրթը (իմա՝ Խարբերդը - Լ. Ս.), Ախլաթը, Էրզրումը և նրանց հարակից մասերը: Այս գավառներից ամեն մեկում անկախ վալիներ [կուսակալներ] են իշխում»<sup>55</sup>:*

Որպես Արմենիայի կարևոր քաղաքներ՝ թուրք պատմագիրը հիշատակում է **Երզնկան, Մուշը, Էզինը (իմա՝ Էրզրում), Մելազզերդը (իմա՝ Մանազկերտը), Բիթլիսը, Ախլաթը, Արձեշը, Ոստանը, Շիրվանը և Դեբիլը (իմա՝ Դվինը), որը մայրաքաղաք էր**<sup>56</sup>: Արմե-

<sup>54</sup> Մյունեջիմ Բաշի, նշվ. աշխ., էջ 199-200:

<sup>55</sup> Մյունեջիմ Բաշի, նշվ. աշխ., էջ 199:

<sup>56</sup> Արաբական և թուրքական աղբյուրներում Դվին տեղանունն աղճատվել է և գրանցվել է մի քանի ձևերով՝ Դեբիլ, Դուին, Դվին, Դաբիլ, Ադաբին, Դուվիյ, տե՛ս Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 2, Երևան, 1988, էջ 68: Վարդանյան Ս. Հայաստանի մայրաքաղաքները, Երևան, 1995, էջ 109:

նիա երկրի սահմանների և քաղաքների մասին գրում է նաև Քյաթիբ Չելեբին.

*«Համդուլլահը ասում է. Արմենի [Արմենիա] վիլայեթը բաղկացած է երկու նասից՝ Փոքր և Մեծ:... Մեծ Արմենիան Իրանի սահմանների մեջ է մտնում և հայտնի է Թուման Ախլաթ անունով: Սահմաններն են Փոքր Արմենիան, Ռումը, Դիարբեքիրը, Քուրդիստանը, Ադրբեջանը և Արանը: Երկարությունը երգեն էլ Ռումից հասնում է մինչև Սալմաս, իսկ լայնությունը՝ Արանից մինչև Ախլաթի վիլայեթի վերջավորությունը: Մայրաքաղաքը Ախլաթն է: ...Նվաստիս կարծիքով ներկայումս Մեծ Արմենիան բաղկացած է Վանի և Էրզրումի վիլայեթներից, իսկ Փոքր Արմենիան՝ Ադանայի և Մարաշի էյալեթներից: ...Թակվիմ-ալ- Բուլդանում<sup>57</sup> որպես Արմենիայի քաղաքներ են հիշատակված Էլբիստանը<sup>58</sup>, Ադանան, Արձեշը, Ադրբեջանը [Ադրբեջան]<sup>59</sup>, Բիթլիսը, Բարդան, Բիլեկանը, Թիֆլիսը, Ախլաթը, Դեբիլը, Սուլթանիյեն, Սիսը, Թարսուսը, Մալաթիան, Վանը, Ոստանը, Մուշը, երգեն էլ-Ռումը (Էրզրում) և Մալազկերտը»<sup>60</sup> (ընդգծումը մերն է-Լ. Ս.):*

Թեև Չելեբիի տված Արմենիա երկրի սահմանների ընդգրկումները թերի են<sup>61</sup>, այդուհանդերձ օսմանյան պատմագրի կողմից Հայաստան երկրի (Արմենիա) անվան ընդունումը ինքնին խոսում է:

Պատմիչների նկարագրություններից պարզորոշ երևում է, որ XVII դարում օսմանյան պաշտոնական պատմագրությունը ճանաչում էր գավթված Մեծ Հայաստանի գոյության փաստը և այն անվանում իր միջազգայնորեն ճանաչված անունով՝ Արմենիա: Իսկ Կիլիկիան՝ Ադանա և Մարաշ էյալեթներով նրանք ընդունում էին որպես Փոքր

<sup>57</sup> «Թակվիմ-ալ- Բուլդանը» արաբ պատմագիր և աշխարհագրագետ Աբու Ֆիդայի տարեցույցն է, որը Քյաթիբ Չելեբու համար ծառայել է որպես սկզբնաղբյուր (Քյաթիբ Չելեբի, Թուրքական աղբյուրներ..., հ. Բ, էջ 258):

<sup>58</sup> Էլբիստան-Ալբիստան, քաղաք Կիլիկիայում, Մարաշ գավառի Ջեյթուն գավառակում:

<sup>59</sup> Ադրբեջան-Ատրպատական:

<sup>60</sup> Քյաթիբ Չելեբի, «Զիհան նյումա», էջ 29-30:

<sup>61</sup> Տե՛ս նաև Փափագյան Ա., Թուրքական վավերագրերը Հայաստանի և հայերի մասին (16-19-րդ դարեր), Երևան, 1999, էջ 122-114, 121-122:



**Հայաստան:** Ինչպես տեսնում ենք, XVII դարում Հայաստանի տարածքի նկատմամբ Անատոլիա կամ Արևելյան Անատոլիա հնարովի տերմինները բնավ չեն օգտագործվել, քանզի դրանք իրականում վերաբերում են Մեծ Հայքից և Փոքր Հայքից արևմուտք ընկած Փոքր Ասիային<sup>62</sup>: Ավելին՝ XVI դարի «Իսլամական աշխարհացույցի» քարտեզում<sup>63</sup> և XVIII-XIX դարերի օսմանյան քարտեզներում նույնպես հստակ նշվում է Հայաստան երկիրը **Էրմենիստան** ձևով և տրվում են նրա սահմաններն ու կարևոր քաղաքները<sup>64</sup>:

Վերադառնալով Տրապիզոնին՝ նշենք, որ այն XVII դարի կեսին ձեռք էր բերել էյալեթի (նահանգի) կազավիճակ, ապա XIX դարում էյալեթը փոխարինվում է վիլայեթ տերմինով, որը պահպանվել է մինչև XX դարի 20-ական թթ.: Հանրապետական Թուրքիայի հռչակումից հետո Տրապիզոնի նահանգը կրկին ենթարկվում է վարչական վերաձևումների:

XIX դարում Տրապիզոնի էյալեթը բաղկացած էր Տրապիզոնի և Գոնիոյի լիվաներից: 1846թ. արված փոփոխություններից հետո Տրապիզոնի էյալեթի կազմում կար հինգ սանջակ՝ **Տրապիզոնի կենտրոնական սանջակը, Շարքը Գարահիսարի, Ջանիկի, Գոնիոյի**

---

<sup>62</sup> Зограбян А. Н., Орография Армянского нагорья, Ереван, 1979, с. 14-15. Դանիելյան Է., Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 2003, N 3, էջ 30-37:

<sup>63</sup> «Իսլամական Աշխարհացույցի քարտեզը» կազմվել է 1570-ական թթ., տրամագիծը 28.5 սմ, պահպանվում է Բողլիյան գրադարանում, Օքսֆորդ-Չեռ. or.317 f9v-10r, տե՛ս Գալյան Ռ., Հայաստանը համաշխարհային քարտեզագրության մեջ, Երևան, 2005, էջ 148:

<sup>64</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Սահակյան Լ., Տեղանունների թուրքացումը Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում, սեպտեմբերի 11, 2009, տե՛ս նույնի ռուսերեն և անգլերեն տարբերակները, <http://blog.ararat-center.org/?p=284>, <http://blog.ararat-center.org/?p=331>: «Ասիական Թուրքիա» քարտեզը հրատարակվել է 1803/4թ., չափսերը 72x54 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-ՕԻՕՑ 14999.հ. 2(2), f.18, «Միջերկրական շրջան»-ի երկրորդ քարտեզ, չափսեր 80x58 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-ՕԻՕՑ 14999.հ.2(2),f.5., «Օսմանեան երկիր», տրագրվել է 1867, չափսերը, 42x29 սմ, Բրիտանական գրադարան, Լոնդոն-Maps 42.d.1, f.2, տե՛ս Գալյան Ռ., նույն տեղում, էջ 226, 240, 246:

*և Բաթումի* սանջակները<sup>65</sup>: 1867թ. **Նահանգային կանոնադրության (Vilayet Nizamnamesi)** նոր վարչական փոփոխությունների համաձայն էյալեթի կազմում էին Տրապիզոնի կենտրոնական, Բաթումի, Ջանիկի և Գյումուշխանեի սանջակները: Գոնիոն և Շարքը Գարահիսարը դուրս էին եկել այս էյալեթի ենթակայությունից, սակայն ավելացել էր Գյումուշխանեի սանջակը: Կենտրոնական սանջակի վեց կազաներն էին **Տրապիզոնի կենտրոնականը, Գիրեսունը (հնա՝ Կիրասուն), Բուշաքը, Ռիզեն, Օֆը և Թրիպոլին (հնա՝ Տրիպոլի)**<sup>66</sup>:

1869թ. կազմված «Տրապիզոնի նահանգի տարեգրքի» (“**Trabzon Vilayeti Salnamesi**”) գրանցման համաձայն նահանգը բաժանվել է չորս՝ **Տրապիզոնի, Ջանիքի, Լազիստանի, Գյումուշխանեի** սանջակների<sup>67</sup>:

Տրապիզոնի սանջակի կազմում ըստ նույն տարեգրքի արձանագրվել են Բուշաքի, Կիրասունի, Ռիզեի, Օֆի, Տրիպոլիի կազաները: Ջանիկի սանջակը բաղկացել է Ունիեի, Չարշամբայի, Բաֆրայի կազաներից: Լազիստանի սանջակի կազմի մեջ են մտել Արհավիի և Լիվանայի (Արդվին) կազաները: Գյումուշխանեի սանջակը կազմվել է Թորուլի, Քելքիթի (Գայլգետ) կազաներից:

1877-78թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Տրապիզոնի սանջակները վերածնվում են, և Ռիզեն դառնում է Լազիստանի սանջակի կենտրոնը<sup>68</sup>: 1880թ. Տրապիզոնի վիլայեթի կազմում կար երեք սանջակ՝ **Տրապիզոնի կենտրոնականը, Գյումուշխանե և Լազիստանը**: 1888թ. **Ջանիքի (Սամսուն) մութասարիֆությունը**<sup>69</sup> կրկին ստանալով սանջակի կարգավիճակ՝ մտնում է Տրապիզոնի ենթակայության տակ<sup>70</sup>: Այսպիսով, 1890թ. Տրապիզոնի վիլայեթի

<sup>65</sup> Gündüz Ali, Hemsinliler, Dil-Tarih-Kültür, Ardanuç Kültür Yardımlaşma Derneği, Yayın No: 2, Ankara, 2002, s. 59.

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> Trabzon Vilayeti Salnamesi (1869), cilt 1. Hazırlayan K. Emiroğlu, Ankara, 1993, s. 147.

<sup>68</sup> Gündüz Ali, նշվ. աշխ., էջ. 61.

<sup>69</sup> **Մութասարիֆություն**-1. տիրույթ, 2. սանջակիբեյի պաշտոն, 3. սանջակ՝ այսինքն գավառ:

<sup>70</sup> Ali Gündüz, նշվ. աշխ., էջ. 61.

մեջ էին մտնում **Կենտրոնական, Ջանիքի, Գյումուշխանեի և Լազիստանի** սանջակները և 22 կազա<sup>71</sup>: 1896թ. Լազիստանի սանջակը կրկին փոփոխության է ենթարկվում և նրա կազաներն են դառնում Ռիզեն, Աթինան և Խոփան<sup>72</sup>

1904թ. Տրապիզոնի նահանգի վերջին «Սալնամեի» (Տարեգիրք) համաձայն նահանգի մեջ մտնում էին **Տրապիզոնի սանջակն** իր Կենտրոնական, Օրդուի, Գիրեսունի, Թիրեբուլուի (Տրիպուլի), Գյորելեի, Վաքվը Քեբիրի, Աքչաաբադի, Սյուրմենեի, Օֆի կազաների և տասներեք նահիեների, **Ջանիքի սանջակն** իր Սամսունի, Բաֆրայի, Թերմեի, Ունիեի, Ֆաթսայի կազաների և երեք նահիյեների, **Լազիստանի սանջակն** իր Ռիզեի, Աթինայի, Խոպայի կազաների և վեց նահիյեների, **Գյումուշխանեի սանջակն** իր Գյումուշխանեի, Թորուլի, Քելքիթի (իմա՝ Գայլգետ), Շիրանի կազաների և երկու նահիյեների հետ մասին<sup>73</sup>:

1908թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո **Ջանիքն**, ստանալով անկախ սանջակի կարգավիճակ, առանձնացվում է Տրապիզոնից և կրկին վիլայեթը վերադառնում է 1880թ. վարչական բաժանման կարգավիճակին: Ինչպես ցույց են տալիս թուրքական աղբյուրները, 1907թ. վերջին Տրապիզոնի վիլայեթում գրանցվել է 49, 1911թ.՝ 39 նահիյե (գյուղախումբ): 1918-1919թթ. **Տրապիզոնի կենտրոնական սանջակի** մեջ մտնում էին Օրդուի, Գիրեսունի, Տրիպուլիի, Գյորելեի, Վաքվը Քեբիրի, Աքչաաբադի, Մաչկայի, Սուրմենեի (իմա՝ Սև գետ) կազաները, **Լազիստանի** սանջակի կազաներն էին Ռիզեն, Աթինան և Խոպան, **Գյումուշխանեի սանջակը** բաղկացած էր Շիրանի, Թորուլի, Քելքիթի (Գայլգետ) կազաներից<sup>74</sup>:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին կազմված Տրապիզոնի շրջանային (ավան, գյուղախումբ) կազմակերպությունների «Ընդհանուր վարչական ներքին գերատեսչության» (İdâre-i

<sup>71</sup> Ali Gündüz, Hemşinliler, Dil-Tarih-Kültür, Ardanuç Kültür Yardımlaşma Derneği, s. 58.

<sup>72</sup> Ali Gündüz, նշվ. աշխ., էջ 59.

<sup>73</sup> Trabzon Vilayeti Salnamesi (1904), cilt 22. Hazırlayan K. Emiroğlu, Ankara, 2009, s. 871-873.

<sup>74</sup> A. Yüksel, Doğu Karadeniz Araştırmaları, Kitabevi, İstanbul, 2005, s. 17.

Սոմույյե Դահիլիյե Մյւծւրիյետի) գրանցումների համաձայն Տրապիզոնի կենտրոնական կազան բաղկացած էր երեք (*Յոմուրա, Շարլը, Թոնյա*), Գիրեսունի կազան երեք (*Աքքոյ, Քեշաք, Փիրազիզ*), Օրդուի կազան՝ հինգ (*Բուլանա, Փերշենթե, Հարսամանա, Այրասղը, Ուլուքեյ*), Լազիստանի սանջակը՝ յոթ (*Արհապի, Քուրա-ի Սեքա*<sup>75</sup>, *Վիչե* (իմա՝ *Վիժե*), *Քարադերե, Սափապիի, Արդաշեն, Համշեն*), Գյումուշխանեի սանջակը՝ վեց (*Քուրթուն, Յաղմուրդերե, Քոնաս* (իմա՝ *Քովանս*), *Քորում, Հարդիշ, Քյոսե*) նահիյներից, ընդհանուր առմամբ 24 նահիյե: Այս կարգավիճակը պահպանվել է մինչև 1918թ.<sup>76</sup>:

Այսպիսով՝ Տրապիզոնի նահանգը պարբերաբար ենթարկվել է վարչական վերածափումների, տարբեր ժամանակներում ունենալով տարածքային տարբեր ընդգրկումներ, որը օսմանյան կանխամտածված վարչական քաղաքականություն էր:

Գրավյալ տարածքներում ռազմավարչական միավորների ստեղծման և վարչական կառույցներում բացառապես մահմեդական պաշտոնյաների նշանակման միջոցով միաժամանակ ապահովվում էին քրիստոնեաբնակ շրջաններում մահմեդական տարրի ներմուծումը, ռազմաավատական հարաբերությունների ամրապնդումը և հարկային կեղեքիչ քաղաքականության գործադրումը:

Այսպիսի կառավարման համակարգի հիմնումը և վարչական բաժանումների քաղաքականության կիրառումը մի կողմից ավելի արդյունավետ էին դարձնում նորանվաճ տարածքների պետական վերահսկողությունը, մյուս կողմից՝ բացառում էին քրիստոնյաների համախմբված միատարր ապրելու հնարավորությունը՝ նպատակ ունենալով և պայմաններ ստեղծելով նրանց իսլամացման և թուրքացման համար:

---

<sup>75</sup> **Քուրա-ի Սեքա**-օսմաներենից թարգմանաբար նշանակում է «յոթ գյուղ»: Անունից դատելով՝ նահիյեն հավանաբար բաղկացած էր յոթ գյուղից:

<sup>76</sup> A. Yüksel, Doğu Karadeniz Araştırmaları, Kitabevi, İstanbul, 2005, s. 17-18.

**ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

*ՆԵՐՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

## **KEMALISM AS A SOCIAL MOVEMENT: TRANSFORMING PATTERNS OF COLLECTIVE IDENTITIES IN TURKEY**

### **Definitional framework for Kemalism**

The guiding philosophical basis of the Republic of Turkey has been Kemalism, named after the founding father of Turkey Mustafa Kemal Atatürk. Kemalism played a pivotal role in constructing a unified and an internationally recognized state, it also enormously empowered the state vis-à-vis the society. There are certainly many aspects of Kemalism and understandably it is not our intention to mention them all in the paper. But we do want to stop on one feature or a perspective of Kemalism that had been understudied - the social component of it. In this paper we explore the topic of Kemalism as a social movement, which will make it easier for us to clarify the roots how it became such an influential ideological construct in the Republican decades, an approach which in turn can help to understand how a party program can be transformed into a state ideology and then turned into a social movement. Once we do this, we might better understand and estimate the causes for the emergence, evolution and the current state of the Kemalist discourse in Turkey.

Why and how was a state ideology transformed into a social movement? Our paper will revolve around that question, because we think that there is not much clarity concerning the bonds of mentioned transformation. Prominent observers in the field like Niyazi Berkes, Kemal Karpat, Suna Kili, Andrew Mango and Metin Heper wrote immensely about Kemalism and its different manifestations<sup>1</sup>, however, they largely failed to capture the moment

---

<sup>1</sup> Niyazi Berkes, *The development of secularism in Turkey*, Montreal, McGill University Press, 1964; Karpat Kemal, *Turkish politics*, Princeton, NJ: Princeton University Press, 1959. Karpat Kemal, *Social change and politics*

of the transformation of Kemalist state ideology into a social movement. This was mainly because they did not believe that the corporatist structure of the state, which they saw as a powerful and an indissoluble tool for social domination, could suffer any division. They gave no credit to those speculations which situated Kemalism vis-à-vis other social and political adversaries. In a word, they treated Kemalism as a purely political and ideological phenomenon, existing above everything, without giving credits to its social capital.

Our tentative answer to the aforementioned question is that because of the diversification of the polity the advocates of the Kemalist felt that the possession of the leverages on ideological power were not sufficient to have the society to follow the centre, hence, the power structure of the Kemalists was diversified and expanded. As a result, along with the “elite Kemalism”<sup>2</sup> a new process was triggered thereby initiating Kemalism as a social movement. We suggest that it was done to cope with the emerging counter-forces more efficiently. By no means, that initiative needs to be considered as a thoroughly designed policy, it was a counter-measure and an instinctive balance creation effort against ethno-nationalist centrifugal forces (Kurds) and Islamists.

With that clarified, we deem it necessary to consider the following questions - why it is important to consider the Kemalist social movement, what possible difference will the findings make? It is widely accepted that one of the vulnerable parts of the Kemalist discourse is the consistent obscurity about its content and social

---

in Turkey: A structural-historical analysis, Leiden: E. J. Brill, 1973; Mango Andrew, Turkey: Emergence of a Modern Problem in *Aspects of modern Turkey*, ed. William Hale, London and New York, Bowker: 1976; Kili Suna, The Atatürk Revolution: A paradigm of modernization, İstanbul: Türk İş Bankası, Kültür Yayınları, 2003; Kili Suna, Kemalism, İstanbul, Robert College: School of business administration and economics, 1969; Metin Heper, The State tradition in Turkey, Hull: The Eothen press, 1985.

<sup>2</sup> We suggest this term to describe those forces in the elite of Turkey, which are in power positions and are regarded as the only devoted guardians of the Kemalist ideology acting versus those power circles in the elite, which seek compromise between Kemalism and other competing ideologies.

manifestations. Hence, Kemalism is a subject that has been more the object of speculation than research. The Kemalist social movement constitutes a part of a larger package of Kemalism and without a clear idea how that movement relate to Kemalism we can barely understand the complexity of Kemalism. Hence, although we acknowledge that Kemalism (or a portion of it) does not easily fall into the category of "social movement", we examine Kemalism from that perspective, because we think that approach can bring out more essential features of Kemalism that are otherwise difficult to notice.

Therefore, in this paper, we will detail the main features of the Kemalist power structure and delineate the internal dynamics within the Kemalist ideology. Once we do that we will have a plainer picture of those contextual characteristics which shaped Kemalism as a distinct social movement.

Initially (until 1935) Kemalism was a program of the ruling Republican People's Party (henceforth - RPP) but later on it was transformed into a state ideology and was inserted into the Constitution (in 1937). In the founding years of the state (1919-1923) the term "Kemalists" was in use to describe those members of the elite who were close associates of Mustafa Kemal<sup>3</sup>, the hero of the Independence War. From time to time, the term Kemalism was put in circulation, mainly by foreign, particularly Russian, observers, to denote the processes of founding the state and coping with the centrifugal forces. With a passage of time and with the consolidation of power Mustafa Kemal strengthened his authoritarian power through different agencies and measures. Hence, making Kemalism a guiding philosophy of the Republic became the sole *tour de force* in the 1930s. By the time, the central idea of Kemalism was to erect a homogenous, secular and nationalist society highly sensitive towards internal and external adversaries. In the minds of those who were close to Mustafa Kemal and his cause Kemalism became a

---

<sup>3</sup> The name Atatürk (forefather of Turks) was given to Mustafa Kemal after the 1934 Surname law.



synonymous of unquestioned devotion and sacrifice to the principles of the leader. After the death of Kemal Atatürk (1938) it was taken for granted that the internal stability of the country was firmly maintained, therefore, no major instances of social and political upheavals were imminent. During the presidency of İsmet İnönü (1938-1950), Kemalism was transformed into a political vision and a source of an ideologically cohesive power structure. However, the developments in the later decades brought a new social and collective identity to the Kemalists characterized by an identical collective experience of struggling against those forces who were striving to threaten the secular and homogenous order of the society.

As the multi-party politics got on its way (from 1946 onwards), the situation started to change albeit extremely slowly. The society started to be more vocal about the socio-political challenges and aspired to have its word on vital matters. In other words, the vernacular movements in Turkey started to gain weight and substance. This factor has not gone unnoticed by the Kemalist elite, which by the 1960s and 1970s did not possess those powerful ideological leverages, which once were in their undisputed 'territory'. So, the Kemalist elite and the military felt that the ground under their feet was moving, which meant they needed support from outside of the elitist circle. The Kemalist had problems acknowledging the fact that the corporatist structure of the state, which they saw as a powerful and an indissoluble tool for social domination, could suffer any division. By no means, that application for support has immediately been proceeded, since, at the outset, the Kemalists tried to rely on their resources first, by triggering the military interventions in 1960, 1971 and 1980. But the more they intervened the more they felt alienated from the social support. Hence, by the 1980s the Kemalists had to revise their policy of exclusion and tried to engage the society to be on their side and to defend those values that had been inherited from the founder of the state. Thus, we can identify at least three reasons that the Kemalists turned to the society and the social movements. One is that they felt alienated from the society

and did not enjoy the same backing as they used to and the existing power structures were not sufficient to have the society to follow the centre, and secondly, the social movements in Turkey were quite well organized possessing vital organizational and individual networks and last but not least, the emerging social and political forces, the political Islamist groups and ethno-nationalism of Kurds added more incentives to the Kemalists to broaden their front and engage new forces to deal with new “existential threats”.

Concurrently, the official interpretation of Kemalism ceased to exist by the 1960s and different “Kemalisms” started to appear. During the 1930s at least six interpretations or definitions of Kemalism were known (proposed and defended by Celal Bayar, İsmet İnönü, Recep Peker, journals of Kadro and Ulku, a group of Bergsonianists)<sup>4</sup>. But later decades, especially in the 1960s, 1970s and 1980s, more interpretations and definitions of Kemalism were circulated, which will be succinctly presented in the below lines. That implies that *Kemalism is* - new political stand on the revolutionary practices that had taken place between 1923 and 1935; a new nation- and state-building ideology; basic principles and values of the Turkish path to modernity; philosophical-political stand and genre; unfinished revolution advocated by positivist humanist groups; a late-Enlightenment movement that had its roots in the secular-rationalist tradition of ideological positivism; a zero-sum game between secular-modernist Kemalists in action and religiously oriented anti-modernists in reaction; an intellectual tradition of nationalism, modernism, Westernization, radical culturalism, secularism and romanticism; a conservative force; a rationalist dogma that aimed to realize a universal civilizing project; a source of philosophical inspiration; an omnipresent philosophical and political current; a power structure; a scientific breakthrough; a creative spirit to renew the

---

<sup>4</sup> Türkeş Mustafa, A Patriotic Leftist Development-Strategy Proposal in Turkey in the 1930s: The Case of the Kadro (Cadre) Movement, *International Journal of Middle East Studies*, Vol. 33, No. 1, 2001), pp. 91-114.

moral force; a positive phenomenon supporting the cultural and political reforms as logical consequences of the nationalist ideology of the Republic. All these definitions suggest that the empowered sections in the society aspired to broaden the actual front of Kemalism as much as possible and thereby insert their identities, values, goals and demands in it.

### **Social movements and social identities**

Based on the approaches and definitions mentioned above the Kemalist social movement has specific features in a sense that it deviates from classical approaches and definitions available in the scholarly literature. For instance, John A. Guidry claims that “*social movements are broad, intentional efforts by organized, collective actors who seek to alter patterns of authority, power, social values or behaviour*”<sup>5</sup>. We can agree with his characteristics and composition of the actors but we disagree with the action and the target he designates for the actors. In the Turkish case we encounter a different pattern of social movement, which aims to preserve all the objects that Guidry wants to change, i.e. “authority, power, social values or behaviour”. Peter Burke’s approach supports our claim, because he brings out two types of social movements. The first type that he refers to is the active social movement (which is “taking the initiative in the pursuit of precise aims such as national independence, the abolition of slavery or votes for women”), whereas the second type is the reactive social movement (which is “responding to changes that are already taking place and attempting to preserve a traditional way of life against threats from outside”)<sup>6</sup>. While disagreeing with his second term – reactive or reaction, which engages us into a prejudice from the very beginning and may serve

---

<sup>5</sup> Guidry John A., “Social movements” in *Encyclopaedia of government and politics*, ed. Mary Hawkesworth and Maurice Kogan, 2nd ed., London and New York: Routledge, 2004, p. 616

<sup>6</sup> Burke Peter, *History and social theory*, 2nd ed., Ithaca, N.Y.: Cornell University Press, 2005, p.92

little analytical purpose, we suggest another analytical term to better suit the general context of our claim – reflexive, that is when social movements are engaged in responsive relationships with the proposed change, which is one of mutual cause and effect and, hence, becomes active when there is an alert to the *status quo*. The term “countermovement” has also been in circulation by the end of the 1980s to describe those movements which had been developed in segments of the population whose ways of life, status and the rewards were challenged by other movements<sup>7</sup>. Zald and Useem even tried to describe the interactive dance between movement and countermovement to illustrate why countermovement varies in the speed and strength of their mobilization<sup>8</sup>. However, the suggested term (countermovement) fails short to explain the possibility of the state’s involvement in retraining other social movements, instead that term keeps the profile within the conflict of interests in the societal level, therefore, it is incomplete for our purposes. This terminology suggests that the term reflexive social movement is quite suitable to the main features of how the Kemalist social movement reacts and engages in the discourse about the change and status quo of the Turkish state. Some may try to equate the characteristics of the reflexive social movements with the conservative social movements (movements which want to preserve the existing norms and values), but, it is our belief that there are essential differences in their tactics, at least, in the Turkish context. While conservative social movements exist and consistently counteract the perceived challenges to the order, the Kemalist social movement, as stated above, reacts depending on the level of the grievance and the real significance of the perceived threat. That is to suggest, that although the Kemalist

---

<sup>7</sup> McAdam Doug, McCarthy John D. and Zald Mayer N., “Social movements” in *Handbook of Sociology*, ed. Neil J. Smelser, Newbury Park: Sage publications, 1988, p. 721.

<sup>8</sup> Mayer Zald and Bert Useem, “Movement and countermovement interaction: Mobilization, tactics and state involvement” in *Social movements in an Organizational Society*, ed. Mayer Zald and John McCarthy, (New Brunswick, NJ:) Transaction books), 1987.

social movement always exists, however, it becomes active and starts to counteract, when dramatized and highly publicized events are categorized as existential threats, meanwhile, in different circumstances, it is mainly in a 'standby mode'.

Guidry also suggest that "*Social movements usually begin with an organized response to a grievance*"<sup>9</sup>. We suggest that this approach downplays the potency of those social movements, which are established long before a grievance comes into force, hence they are capable of transforming their counteractive possibilities according to the challenges. To put it plainly, one doesn't need to establish a new social movement each time there is a new grievance. Therefore, a social movement can concurrently be both offensive and defensive.

Our next claim opposes Guidry's statement that "*movements are not always aimed at the state*"<sup>10</sup>. First of all, he fails to propose examples when the state itself acts via the channels of social movements, hence, the potency of the state is taken for granted and while its functionality agencies are downplayed. To put it plainly, some states also need the social movements to disseminate their perspectives. Thus, in the Turkish context we have the very example, where a state as a defensive strategy promotes those social movements the strategies of which are identical with the state.

By bringing all those counterarguments together, one might ask whether it is analytically justified to talk about the Kemalist social movement, if it so different from general patterns. Simply put is Kemalism a genuine social movement or a wishful identification with it? We argue that Kemalism is a social movement because it has the following characteristics common to other social movements: collective experience, collective identity, and a web of related activist networks organized through the process of collective action.

---

<sup>9</sup> Guidry, 2004, p. 617.

<sup>10</sup> Guidry, 2004, p. 621.

Speaking of the characteristics of the Kemalist social movement it is worth asking how different is it from other social movements in Turkey? For a long period of time, the Kemalist ideology, with all its like-minded counterpart organizations, occupied an over-privileged social position enjoying the institutional support of the state. That was partly because the Turkish state was not very tolerant towards social movements and non-governmental organization until the end of the 1980s<sup>11</sup>. The Kemalist social movement is also different in terms of its composition, simply because there is no single, legally registered organization named a Kemalist social movement, instead it is a synthesis or a hybrid of various mini-social movements. It is sheltering diverse organizations and NGOs, which, by the way, are not necessarily based in Turkey. For instance, one of the well-known representatives of the Kemalist current is the "*Atatürkçü düşünce derneği*" (The Atatürk Thought Association - henceforth - ATA), which was established on May 12 1989 by prominent intellectuals like Hıfzı Veldet Velidedeoğlu, Muammer Aksoy, Bahri Savcı, Münci Kapani, Bahriye Üçok and others. It expanded its influence in the country with over 400 branches and more than 70,000 members<sup>12</sup>. Other well-known Kemalist associations created in that period were "Societies for Contemporary Living", "Daughters of Atatürk", "Sons of Atatürk", "*Altıok Kemalizm*" (Six arrow Kemalism), a movement which is for strict interpretation and application of Kemalism's six principles, "*Kemalist İzciler Forum*" (Forum for Kemalist scouts), "*Atatürkçü düşünce topluluğu*" (Society of Atatürkist thought), "*Genç Atatürkçüler*" (Young Atatürkists) and many other associations and NGOs. Speaking of them, Zafer Toprak succinctly mentioned the following: "*As a matter of fact, the army is not obsessed with a*

---

<sup>11</sup> Şimşek Sefa, "New Social Movements in Turkey Since 1980", *Turkish studies* 5, no. 2 (2004), p. 112.

<sup>12</sup> Nowadays, the ATA stands in a very different position comparing to 1980s, simply because they are mostly related to marginal left groups in Turkey such as the "*Türkiye Komünist Partisi*", "*Türkiye İşçi Partisi*". Very often, the term "ulusalci" is used to define them

*dogmatic interpretation of Kemalism, there are the NGOs in Turkey which are more dogmatic in terms of being obsessed with Kemalism*<sup>13</sup>. These different organizations come together under the roof of the Kemalist social movement because their members experience identical existential perceptions and pursue the same strategy the ultimate aim of which is to preserve the legacy of Kemal Atatürk's revolutionary deeds.

There have been different efforts made by social scientists to explain the phenomenon of social movements. As a result, different theories emerged four of which, according to Guidry, are widely circulated among the scholars – a) political process/political opportunity structure, b) resource mobilization, c) new social movement, d) globalization and transnational connections<sup>14</sup>. Şimşek uses another methodology to match the existing theories the Turkish context. Without explaining the method of choice he willingly picked up two out of four above mentioned theories (b and c) and sought the compatibility of them not with specific social movements that he initially wanted to study (Islamism, feminism, the Alevi movement and Kurdish nationalism), but with the historic features of Turkey (homogenization, authoritarianism and ethno-political dimension), thereby trying to merge the characteristics social movements with their context of existence<sup>15</sup>. In other words, his major assumption is that since *“Turkish nation building has much more in common with the European experience than with the American one. [Then - VTM]... the new social movements theory, which reflects European social and political mobilization, better applies to Turkey than the resource mobilization paradigm that is based on American mobilization”*<sup>16</sup>. We consider this approach as a partial one as well as misleading, because each of them (Islamism, feminism, the Alevi movement and Kurdish nationalism) needs to be investigated

---

<sup>13</sup> Interview with Zafer Toprak, İstanbul, 04.05.2005.

<sup>14</sup> Guidry, 2004, p. 617.

<sup>15</sup> Şimşek, 2004, p. 116, 118.

<sup>16</sup> Şimşek, 2004, p. 119.

separately, as the factors and driving forces standing behind each of them vary from case to case, hence, it is wrong to bring together four different social movements (leaving aside the legitimacy of viewing them as social movements) and consider them as all new social movements and spread that “diagnosis” to other social movements existing or emerging in Turkey.

Alternatively, we suggest that the above mentioned political process/political opportunity theory (a) is more suitable to be used on explaining the Kemalist social movement. According to Guidry that theory can be applied in the cases when “*elite alliances break down and excluded social groups perceive a new opportunity to alter their position in the political system*”<sup>17</sup>. In its emphases this theory is considered an old

one, but nevertheless it entirely captures those characteristics, that are present in the discourse of the Kemalists. As mentioned, Kemalists feel their position either lost or threatened, which is why, they initiated a broad-based social movement to recapture the social space ‘unjustly’ occupied by other social forces. The Kemalists, which still hold the key positions in the bureaucracy, the military and the judiciary, believe that the social contract imposed by them had been disrupted by new forces.

In terms of what the basic traits of a social movement is, there are also various interpretations. Şimşek cites those brought by Popenoe: a) a new perspective to see things differently; b) an ideology maintaining group loyalty; c) a commitment to action; and d) a dispersed or decentralized leadership<sup>18</sup>. Again, Şimşek, by referring to Popenoe’s approach, fails to give credits to those social movements that do not necessarily have innovative socio-political agenda. That is why, we suggest that the Kemalist social movement is different also in terms of its character traits, because it vigorously tries a) to bring out old perspectives to new challenges (to fight

---

<sup>17</sup> Guidry, 2004, p. 617

<sup>18</sup> Şimşek, 2004, 113.



against heterogeneous and religious identity with the help of old symbols of militant nationalism and secularism, characteristic to the 1920s and 1930s), b) to encourage commitment to reflexive engagement (to voice their disagreement only when there is an existential threat) and c) to unify its constituency against a single target.

We also suggest considering the factor of symbols in making social movements working agencies. We don't intend to discuss the theory of symbols in length, therefore, we rather prefer to consider the decisive importance that the image of Kemal Atatürk played in consolidating the Kemalists. His image and personality, his visions and principles had been vital in clarifying the extent of the Kemalist movement. However, with its historical significance, it later became more of a hindrance than a help to those who wanted to have his image as a guiding light.

In the words of Mustafa Akyol *"Whenever there is a political crisis, his devotees, the Kemalists, rush to his shrine in drones and present wreaths as offerings. One of our retired generals recently said, "Whenever I despair, I read the Nutuk." ... the spiritual power it transmits is apparently not too dissimilar to what the Bible gives to a devout Christian"*<sup>19</sup>. The comparison of the Bible with the Nutuk<sup>20</sup> points us to the incessant symbolic significance that the Nutuk enjoys among those who consider themselves Kemalists. Mustafa Akyol goes on in the same article and gives the following summary to the description of the Kemal's cult *"The result of this strict mental blueprint is detachment from reality. That's why, despite all its rhetoric on "science and reason" as guiding lights for society, Kemalism has become an irrational*

---

<sup>19</sup> Akyol Mustafa, "The gospel according to Atatürk", *Turkish Daily News*, Saturday, November 10, 2007

<sup>20</sup> The "Nutuk" is a famous historical speech delivered by Mustafa Kemal in October, 1927, which lasted six days and gave a meticulous account of the independence war (starting from 1919), and the founding years of the republic until the day of delivering his speech.

*ideology. When its adherents are challenged by rational arguments, they respond by emotional reactions. They take extra tours to Anıtkabir and sing more anthems*<sup>21</sup>. We consider this statement suitable to the general trend dominating among the members of the Kemalist social movement. Another handicap present in this context is the fact that the Kemalist social movement, developed around the personality and the legacy of Kemal Atatürk, is a unidirectional process, with limited innovative agendas. The Kemalist social movement's political backing is limited and it has a few often repeated issues on the agenda, which are continuously brought into discussion (preservation of the unitary character of the state and safeguarding secularism). The Kemalist social movement has difficulty in renewing its identity and its demands. A possible solution could be transforming it into a "movement party", which will have a clearly defined constituency.

A decisive component of each social movement is to have a capable and a "charismatic" leader in the Weberian sense "*endowed with supernatural, superhuman or at least specifically exceptional powers and qualities*"<sup>22</sup>. The functions of the leader are clear and there is no need to elaborate on them in this paper, however, it is important to note that, after the death of Kemal Atatürk, the Kemalist social movement has been constantly lacked a single leader who could mobilize and coordinate the efforts of the active members of the movement. From time to time, the names of the leaders of the RPP or the heads of the Turkish army were identified as provisional leaders of the Kemalist social movement, but in the later decades these names ceased to be associated with the broader coalition of the Kemalist movements.

---

<sup>21</sup> Akyol, 2007

<sup>22</sup> Weber Max, *Economy and society*, English trans., reissue, 3 vols., Berkeley, 1920, p 241.

### **Membership to the Kemalist social movement**

The research on boundaries and criteria for the membership in the Kemalist social movement is one of the confusing tasks for any observer. At the outset, it seems rather obvious how the Kemalists situate themselves in relation to their adversaries. The situation is noticeably different when we try to dig into the internal dynamics of their motivations to that particular social movement. Leaving aside the 'elite Kemalists', which represent the power basis of Kemalism, we will discuss the grassroots of Kemalism. There is a Kemalist umbrella, which incorporates Kemalist organizations, NGOs, think-tanks, members of the bureaucracy and ordinary citizens. The only thing that unites them is their target to cope with the all the threats coming from Islamists and Kurds who want to dismantle the secular and homogenous structure of the Turkish state. However, both their strategies and tactics vary depending on their perception of the threat and level of organization. In other words, Kemalism, as a social movement, is so enormous and diverse that it possesses social movements in itself.

The definition of a Kemalist is made through different channels of identification. For some it is sufficient to say "I am a Kemalist, because I am against the Islamists", for others, being a Kemalist resembles being a secular-nationalist, for yet others, to follow the principles and the legacy of Kemal Atatürk is sufficient to be named a Kemalist. Moreover, there are different efforts to distinguish between Kemalism and Atatürkism. The boundary between those terms is never distinct. Some people clearly identify themselves in the following way "I am a Kemalist, but no way an Atatürkist" and vice versa. Those who call themselves Kemalists want to see the state playing an assertive and a firmer role in handling the key issues facing the state and the society, while the Atatürkists prefer the vital matters of the state to be handled with an utmost care, without violence and major social upheavals and without disrupting the social contract. The latter group also wants the principles of Kemal Atatürk

be interpreted not at will, but with a distinctive devotion to his cause<sup>23</sup>.

The internal dynamics of evolution of the Kemalist social movement need also be stressed. The major turning point of the Kemalist social movement is the year 1980, when the third military intervention took place in Turkey. Being a Kemalist before the 1980 was not like those newly emerged Kemalists. In order to have a more precise view of how the Kemalist social movement evolved it is worthwhile to look back to the earlier decades. After the foundation of the Republic, the Kemalist social movement was active, to use the Guidry's term, it was striving for a change of the social order, to abolish the legacy of the Ottoman Empire, to eliminate the negative repercussions of the WWI, the war with the neighbouring countries, etc. It is not a coincidence that in the early 1920s the people, who were named as Kemalists, stood by Mustafa Kemal's side. In later decades the term Kemalism was made more precise and clarified, accordingly it was much easier to become a member of a Kemalist movement, simply because there existed no other social movement. During the 1950s, the Kemalist social movement started to stress the importance of generating new identities in response to the multiparty politics. The process was accelerated after the first military intervention in 1960, the ultimate target of which was to reconstruct the Kemalist cause of development. In other words, the Kemalists felt that they had to encourage the military intervention since the Kemalist social and political order was endangered. Rather interestingly though, the constitution that followed the military intervention in 1961 was rather liberal. It encouraged social liberties and pluralism. As a result, newly emerging social and political forces made Kemalism become one among many. Kemalism was deprived of its privileges, it was no longer an asset to be a member of a Kemalist social movement. The next phase started in 1980, when the

---

<sup>23</sup> For an introduction of that discourse see Esra Özyürek, "Miniaturizing Atatürk: Privatization of state imagery and ideology in Turkey", *American Ethnologist* 31, no. 3 (2004): 375.

third military intervention was initiated by the army generals 'to safeguard the state against internal rivals'. As stated above, the third military intervention was designed to recover the Kemalist principles, to encourage all the efforts to diversify Kemalism and to empower all the movements, which aimed to newly disseminate the principles of Kemalism. In other words, the 1980 intervention intended to resurrect Kemalism through multiple channels. As a result, the 1980s and 1990s were the decades when Turkey witnessed an unprecedented mushrooming of various Kemalist movements. There are several factors that can explain that boom. First of all, the neo-Kemalism as a new wave of Kemalism was directly supported and sponsored by the state, enjoyed the support of those citizens who wanted Kemalist principles to play pivotal role in helping Turkey to cope with the internal and external challenges. Secondly, unlike the previous decades, the Islamists and Kurdish nationalists became more organized and more vocal, which led the Kemalists to feel threatened and disturbed about their social statuses and possible changes in the social and political structure of the state.

The most important characteristic of the 1990s has been the emerging influence of political Islam in Turkish politics. The main discourse of that decade was the increasing conflict between political Islamism and laicism. This is the period when Islamic discourses paid lip service to the laicist symbols and images of the Republic just as much as the Kemalists utilize Islamic symbols and images.

In the 1990s a dozen of Kemalist intellectuals were assassinated the majority of whom were the columnists in the leading secular and left-leaning newspaper *Cumhuriyet* (Çetin Emeç, editor in chief of the daily *Hürriyyet*; Maummar Aksoy, he was a Law Professor at the Ankara University and the President of the Turkish Law Society, who also wrote extensively on Kemalism; Bahriye Üçok, she was secular theologian; Onat Kutlar, who was a prominent writer and poet and many other). The murder of Uğur Mumcu in 1993, a die-hard Kemalist and human rights activist who had been investigating Islamic underground groups for the *Cumhuriyet*, engendered an

unprecedented wave of resentment and his funeral turned into demonstration of furious citizens who demanded more watchful attitude towards the ever-growing influence of Islamic circles, which attacked on secular personalities and gravely challenged the stability of the country. Ahmet Taner Kışlalı, another staunch Kemalist, an intellectual, a columnist for the same *Cumhuriyet*, a former Minister of Culture, noted that *“Mumcu’s death shocked the nation, it was a kind of mass awakening, with people everywhere saying: What can I do to save democracy and Kemalism?”*. He also linked the renewed interest in Atatürk to the Mumcu’s murder<sup>24</sup>. In 1999, A. T. Kışlalı was also assassinated in Ankara by a bomb placed in his car.

The last instance when the Kemalist social movement was consolidated was the recent developments around the candidacy for the president of the Republic. A candidate from the ruling Justice and Development Party (which has ideological roots in the Islamic politics of Turkey) was nominated for that prestigious position. The reaction to that ‘grievance’ turned into mass rallies in major cities of Turkey organized mainly by the NGOs and associations, which associated themselves with the secular course of Mustafa Kemal. This broad-based coalition of the Kemalist movements protested against the candidate of the ruling party on the grounds that ‘he might endanger and threaten the secular character of the Turkish state’. This motto alone was sufficient to establish a coalition of forces ready to appose the tendency of the ruling party. The “Republican” rallies (as they were coined later), in spite of time constraints, demonstrated the mobilization strength of the Kemalists. The final result, however, was not very satisfying for them, because the candidate from the ruling party succeeded in being elected, but the lessons learned from that clash of interests became important factors that the ruling party had to take into consideration.

Another point worthy of consideration is the level of engagement of the Turkish Armed forces in the discourse of the Kemalist

---

<sup>24</sup> Howe Marvine, Turkey: A nation divided over Islam’s revival, Colorado: Westview press, 2000, p. 21.

mobilization. For many decades the Turkish army has been an outspoken proponent of the secular character of Turkey. That is to suggest that all the social movements, which pursued the same target, found strong assistance from the army. When we also consider the fact that for the last five decades the army intervened into Turkish politics five times in order to preserve the legacy of Atatürk, we can perhaps discern the level of responsibility that the army generals put on themselves. The army is one of the most organized institutions of the Turkish Republic, hence, any support coming from it is widely welcomed among the various Kemalist movements. More than that, the army founded a few enterprises and industries to secure financial aspects of its involvement. All this evidence suggests that army plays crucial role in making the Kemalist voice heard, ultimately, the army constitutes, to put it mildly, a key element in the hierarchy of the Kemalist social movement.

### **Conclusion**

Social movements constitute an under-researched aspect of Kemalism. The state ideology of Kemalism, which is now undergoing significant ideological transformations, is faced with a crucial question – how it can be efficiently developed to cope with the ever increasing pressure from the inside and outside forces demanding reforms in its structure and accents. In that context social movements have a central role to play, since they constitute the grassroots of Kemalism. No matter how ambiguous the term Kemalism has been and remains, it is still associated with the power, dominance and ideological vision set by the eternal leader of the Turks, Mustafa Kemal Atatürk and pursued by his followers, the Kemalists. It is still a powerful denominator, it still enjoys a wide popular backing, especially among those who are not intend to be silent spectators of the major identity transformations rapidly occurring in Turkey.

The state ideology of Kemalism was transformed into a social movement, for of the following reasons – a) with the passage of the time other popular voices became widely heard, as a result Kemalism became one among many other ideologies, b) the additional factors of the increasing level of societal participation, social movements and social communication enhanced the actual size and potency of other social movements, c) the routines of previous engagements in power relations became obsolete and Kemalism was faced to leave aside its statist-authoritarian measures, d) Kemalism had to look for a wider popular support through social movements to make their level of engagement far-reaching and productive. To sum up, there are different mass based social movements in Turkey arguing for the preservation of Atatürk's legacy, opting for protecting the secular, republican and nationalist characters of the state, however, by force of pursued objectives, all these movements are united under one broader movement – the Kemalist social movement, in order to cope more efficiently with the those forces which want the opposite. Another distinctive feature of the Kemalist social movement/s is that for the last two decades their members have tried to counteract adversaries not only with the assistance of the state agencies, but to a great extent with rules of engagement characteristic of the civil society.

By no means can we consider the task of correlating of Kemalism and social movements solved thanks to this paper. It is an extremely interesting subject which requires further deliberate research, because the sooner it is scrutinized the better for the researchers involved in the study of the Kemalist discourse.



## ԹՈՒՐԹԻԱՅԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԹԻՈԱՅԻՆ ՏԵՆՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Թուրքիան իրականացնում է իր զինված ուժերի (այսուհետ՝ ՋՈՒ, թուրք. *Silahlı kuvvetler*) արդիականացման լայնածավալ ծրագրեր, որոնք առնչվում են ինչպես նորագույն զինատեսակների ձեռքբերմանը, այնպես էլ տեղական ռազմական արտադրական բազայի զարգացմանը: Լուրջ ուշադրություն է դարձվում երկրի ՋՈՒ-ում նորագույն տեխնոլոգիական զենքերի ու ռազմական տեխնիկայի ներդրման ու ապահովման հարցերին:

Թուրքիայի ռազմական ոլորտի արդիականացման հիմքերը դրվեցին հատկապես 1991 թ. Պարսից ծոցի պատերազմի իրադարձություններից հետո, քանի որ Թուրքիայի զինվորական շրջանակները պարզ հասկացան, որ երկրի ՋՈՒ-ն իրենց թույլ և արդեն հնացած սպառազինությամբ չեն կարող դիմագրավել 21-րդ դարի նոր մարտահրավերներին<sup>1</sup>: ՋՈՒ-ի արդիականացման գործընթացն սկսվեց հետսառըպատերազմյան նոր մարտահրավերներին դիմակայելու համար, քանի որ փոխվում էր Թուրքիայի աշխարհաքաղաքական դերն արդեն հանդես գալով որպես տարածաշրջանային տերություն, որը ներքին և արտաքին սպառնալիքներին դիմագրավելու համար ավելի շատ ռազմական ուժի կարիք էր զգում:

Ելույթ ունենալով 2005 թ. աշնանը Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության (*Savunma Sanayii Müsteşarlığı*) հիմնադրման 20-ամյակին նվիրված համաժողովում՝ Թուրքիայի ՋՈՒ-ի Գլխավոր շտաբի (այսուհետ՝ ՂՇ, թուրք. *Genel Kurmay*) Գլխավոր պլանավորման և սկզբունքների մշակման դեպարտամենտի ղեկավար Հիլմի Աքըն Ջորլուն նշել է, որ Թուր-

---

<sup>1</sup> Elliot Hen-Tov, *The Political Economy of Turkish Military Modernization*, *Middle East Review of International Affairs*, Vol. 8, No 4, (December 2004), p. 50

քիան իր գեոստրատեգիական դիրքով լինելով եզակի երկիր, գտնվելով երեք մայրցամաքների խաչմերուկում, հանդիսանալով էներգետիկ տարանցիկ տարածք, միաժամանակ երաշխավորված չլինելով շրջապատող տարածաշրջաններից եկող տարբեր մարտահրավերների ու սպառնալիքների նկատմամբ, հարկադրված է ունենալ 21-րդ դարի ռազմական ու քաղաքական պահանջներին համապատասխանող ՋՈՒ՝ դրա հաջողության ամենակարևոր գրավականը համարելով տեղական հզոր և արդյունավետ ռազմաարդյունաբերական համալիրի կայացումն ու զարգացումը<sup>2</sup>:

ՋՈՒ-ի արդիականացման ռազմավարության հիմքում էական և հիմնական դերակատարություն է տրվում երկրի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանը: 1996 թ. թուրքական ռազմաարդյունաբերական ընկերությունների ներկայացուցիչների հետ Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելի անցկացրած խորհրդակցության ժամանակ մանրամասն ուսումնասիրվել են ռազմաարդյունաբերական համալիրի զարգացմանն ուղղված հետազոտ պլանները, որի արդյունքում պաշտպանության նախարարության կողմից մշակվել է այդ ուղղությամբ իրականացվելիք քայլերի վերաբերյալ առանձին փաստաթուղթ<sup>3</sup>:

Թուրքիայի պաշտպանական հայեցակարգի հիմքում է դրված այդ երկրի բանակի կարիքների ապահովման համար սեփական ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման ռազմավարությունը: Այդ երկրի ռազմական գերատեսչությունը ՋՈՒ-ի հզորացման և արդիականացման գործում էական է համարում երկրում ռազմական տեխնոլոգիաների և գիտատար ուղղությունների ներդրումների ու աջակցության վրա հիմնված բանակային ապա-

---

<sup>2</sup> Թուրքիայի պաշտպանական արդյունաբերության գլխավոր վարչության հիմնադրման 20-ամյակին նվիրված համաժողովում Թուրքիայի ՋՈՒ Գլխավոր շտաբի Գլխավոր պլանավորման և սկզբունքների մշակման դեպարտամենտի ղեկավար Հիլմի Աքըն Ջորլուի ելույթը: [http://www.ssm.gov.tr/browser\\_tr.asp?srcURL=library/docs/tr/kurumsal/SSM\\_20\\_yil.htm&title=](http://www.ssm.gov.tr/browser_tr.asp?srcURL=library/docs/tr/kurumsal/SSM_20_yil.htm&title=)

<sup>3</sup> С. Косиков, Военно-политический потенциал Турции, Востоковедный сборник (выпуск второй) М., 2001, стр. 212-217, <http://www.middleeast.org.ua>

հովման սեփական արդյունաբերական համալիրի գոյության ու զարգացման անհրաժեշտությունը: Թուրքիայի ԶՈՒ-ի զՇ նախկին պետ Հիլմի Օզքյոքն իր վերջին ելույթներից մեկում անդրադարձել էր արդյունաբերական դարաշրջանի անվտանգության համաչափ տեսություններից տարբերվող «համաչափ և անհամաչափ մարտահրավերների միասնության» էությունը պարունակող 21-րդ դարի պատերազմների՝ «Գիտության դարաշրջանի պատերազմ» նոր հայեցակարգի առանցքային նշանակությանը: Թուրքիայի զինվորական շրջանակների համար ռազմավարական խնդիր է դիտվում տարածաշրջանում առաջատար տերություն դառնալն ու առաջին հերթին ռազմական առումով գերակայություն ապահովելը: Ինչպես նշել է Հ. Օզքյոքն իր ելույթներից մեկում՝ «Թուրքիան վերածնվող քաղաքական աշխարհագրության կենտրոնում տեղ է գտնում որպես տարածաշրջանային ուժ, իսկ դրա առաջնային պայմաններից է հզոր և պատերազմի պատրաստ, ինչպես նաև տեխնոլոգիապես հարուստ և գիտության ազդեցությունը կրող ԶՈՒ-ի գոյությունը»<sup>4</sup>:

Սառը պատերազմի ավարտը հանգեցրեց աշխարհաքաղաքական նոր վերածնունդների, ինչի արդյունքում փոխվեց տարբեր երկրների անվտանգության ու պաշտպանական հայեցակարգերի ողջ ռազմավարությունը: Հետսառըպատերազմյան նոր ժամանակաշրջանի սկիզբը որոշ անորոշությունների առաջ կանգնեցրեց պաշտոնական Անկարային՝ իր արտաքին և հատկապես անվտանգության քաղաքականության հետագա ուղեգծի սահմանման և պաշտպանական նոր ռազմավարության որդեգրման առումով: Թուրքիայի համար օրակարգային խնդիր դարձավ նախ և առաջ տարածաշրջանային, անվտանգության և պաշտպանական քաղաքականության հրամայականների վերաիմաստավորումը: Թուրքիայի քաղաքական ու զինվորական շրջանակների մոտ մտավախություն կար, որ Սառը պատերազմի ավարտով Թուրքիան կկորցնի իր ռազմավարական նշանակությունը, Արևմուտքի և

<sup>4</sup> Özkök, Türkiye bölgesel güç olacak, <http://www.haber7.com>, 24.08.2006

ԱՄՆ-ի համար և կիսայտնվի տարածաշրջանային մեկուսացման վտանգի առջև: Թուրքիայում անհանգստությունն այն էր, որ իր անմիջական հարևանների կողմից կարող է ընդունվել կասկածամտությամբ կամ նույնիսկ թշնամաբար: Սառը պատերազմի ավարտը Թուրքիային ստիպեց ներգրավվել իր անմիջական տարածաշրջանային գործընթացներում, քանի որ այն Թուրքիայի համար և նոր հեռանկարներ էր բացում, և նոր մարտահրավերներ<sup>5</sup>:

Սկսված աշխարհաքաղաքական փոփոխություններն ու զարգացումները ստիպեցին Թուրքիային առավել զգուշորեն և հետևողականորեն հստակեցնել միջազգային ու տարածաշրջանային, անվտանգության ու պաշտպանական քաղաքականության գերակայություններն ու նոր մարտահրավերները: 1990-ական թթ. կեսերին Թուրքիայի պաշտպանական հայեցակարգը հիմնվում էր տարածաշրջանային մարտահրավերներին դիմակայելու միջոցով, երկրի տարածքային ամբողջականությունն ապահովելու տրամաբանության վրա: Թուրք ռազմական պատասխանատուները Ռուսաստանը, Հունաստանը, Իրաքը, Իրանը և Սիրիան դիտում էին որպես Թուրքիայի հիմնական սպառնալիքներ՝ ելնելով այդ երկրների կողմից Թուրքիայի նկատմամբ տարածքային հավակնություններից և թուրքական սահմանին ռազմական ուժեր կենտրոնացնելու նրանց ռազմական կարողություններից<sup>6</sup>:

Նախկինում Թուրքիայի արտգործնախարարության քարտուղարի տեղակալ և Վաշինգտոնում այդ երկրի դեսպան Շյուքրյու Էլբեդադը, ամենայն հավանականությամբ արտահայտելով զինվորականության մոտեցումները, Թուրքիայի հարևաններից Հունաստանը և Սիրիան դասում էր որպես սպառնալիք ներկայացնող երկրներ, որոնք տարածքային հավակնություններ ունեն Թուրքիա-

---

<sup>5</sup> Henri J. Barkey, Turkey and The New Middle East, A Geopolitical Exploration, Reluctant Neighbour, Turkey,s Role in the Middle East, United States Institute of Peace Press, 1996, pp. 30-31

<sup>6</sup> Michael Robert Hickok, Hegemon Rising: The Gap Between Turkish Strategy and Military Modernization, The Eurasian Politician - Issue 3 (February 2001), <http://www.cc.jyu.fi/~aphamala/pe/issue3/hickok.htm>

յից: Ըստ նրա՝ սառըպատերազմյան շրջանի համեմատ Թուրքիան 90-ական թթ. սկզբին գտնվում էր բազմակողմ ռազմական գործողությունների մեջ ներքաշվելու սպառնալիքի առջև և պետք է պատրաստ լիներ անհրաժեշտության դեպքում իր հարևաններից որևէ մեկի հետ ռազմական գործողությունների մեջ մտնել<sup>7</sup>:

Թուրքական պաշտպանական հայեցակարգում սկզբունքային նոր ռազմավարություն հայտնվեց, ըստ որի երկրի ՋՈՒ-ը պատրաստ են լինելու կանխել Թուրքիայի դեմ հարձակումներն ու սպառնալիքները մինչև թուրքական տարածքին հասնելը: Անկարայի պաշտպանական հայեցակարգի «առաջնային հարձակման» (forward engagement) ռազմավարությունը ենթադրում էր ռազմական գործողությունների սկսման դեպքում դրանք կանխել երկրի սահմաններից դուրս, զինված գործողություններն իրականացնել թշնամու տարածքում<sup>8</sup>: Ռազմավարական այս պլանավորման տրամաբանությունից է բխում երկրի օդային տարածքի ու հակահրթիռային պաշտպանության կայուն ու ժամանակակից համակարգի ներդրումը, եթե հաշվի առնենք վերջին տարիներին մերձավորարևելյան տարածաշրջանում սպառազինությունների աճող մրցավազքն ու հրթիռային տեխնոլոգիաների զարգացումը:

Թուրքիայի համար հենց տարածաշրջանում անկանխատեսելի զարգացումների հնարավորության պարագայում խիստ հրատապ է դառնում սեփական զարգացած հակաօդային պաշտպանության (այսուհետ՝ ՀՕՊ, թուրք. *Hava savunma*) համակարգի ներդրումը, քանի որ տարածաշրջանում արդեն անվերահսկելի դարձած հրթիռային տեխնոլոգիաների տարածումն ու հատկապես Իրանի կողմից բալիստիկ հրթիռների զարգացումը թուրքական ռազմաքաղաքական շրջանակների կողմից դիտարկվում են որպես ազգային անվտանգության մարտահրավերներ: 90-ական թթ. Թուրքիան լուրջ անհանգստություն էր հայտնում Իրանի, Իրաքի ու նաև Սիրիայի

---

<sup>7</sup> Şükrü Elekdağ, 2 ½ War Strategy, Center for Strategic Research, Journal of International Affairs, Perceptions, Vol.1, March-May, 1996

<sup>8</sup> Michael Robert Hickok, նշվ.աշխ.:

կողմից քիմիական ու կենսաբանական զենքերի ու հրթիռների զարգացման հնարավորությունների կապակցությամբ: Թուրքիան Մերձավոր Արևելքում լրջորեն գիտակցեց բալիստիկ հրթիռների լայնամասշտաբ կիրառման մարտահրավերները Ծոցի պատերազմում, երբ Իրաքն սկսեց օգտագործել Scud-Bs և Al-Hussein հրթիռները, իսկ հետագայում արդեն լուրջ մտավախություններ սկսեց առաջ բերել Իրաքի կողմից զանգվածային ոչնչացման զենքի (այսուհետ՝ ՋՈՋ, թուրք. *Kitle Imha Silah*) օգտագործման հնարավորությունը<sup>9</sup>: Թուրքիայի համար ներկայումս լուրջ մարտահրավեր է ներկայացնում Իրանի կողմից հրթիռային տեխնոլոգիաների զարգացումը, միջուկային ոլորտում իրանական ծրագրերն ու տարածաշրջանային զարգացումների անկանխատեսելիության գործոնը:

Ընդհանուր առմամբ, Թուրքիայի պաշտպանական հայեցակարգն ու ռազմավարությունը ենթադրում են այնպիսի պաշտպանական համակարգի առկայություն, որն ի վիճակի լինի առավել արդյունավետ արձագանքել և հակահարված տալ ժամանակակից մարտահրավերներին ու արտաքին վտանգներին:

## **ՈԱԶՄԱՆԱՐԳՈՒՄԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԹԻՌԱՀՐԵՏԱՆԱՆՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ**

Թուրքիայի ռազմական արդյունաբերության ոլորտում գործում են մի քանի ընկերություններ, որոնք մասնագիտացված են ռազմական տեխնիկայի, սպառազինության ու տարբեր զինատեսակների արտադրության ոլորտում: Հրթիռային տեխնոլոգիաների ու զենիթահրթիռային, հրետանային համալիրների արտադրության ոլորտում գործում են թուրքական Roketsan ու Aselsan ընկերությունները, ինչպես նաև մի քանի այլ ընկերություններ տարբեր բաղադրամասերի արտադրական գործընթացում:

---

<sup>9</sup> Şebnem Udum, *Missile Proliferation in the Middle East: Turkey and Missile Defence*, Turkish Studies Institute, Vol.4, N3, 2003, p. 76

Հրթիռային արտադրության ոլորտում է մասնագիտացած Roketsan թուրքական ընկերությունը, որը հիմնադրվել է 1988 թ-ին, իր գործունեությունն սկսել է Եվրոպական կոնսորցիումի համար Stinger հրթիռների շարժիչների արտադրությամբ: Ընկերությունը հիմնականում գործում է հրթիռային համալիրների, ինչպես նաև առանձին բաղադրամասերի նախագծման ու արտադրության ոլորտում: Ընկերության բաժնետերերն են Թուրքիայի ՋՈՒ-ի զարգացման հիմնադրամը, ASELSAN և MKEK ռազմաարդյունաբերական ընկերությունները<sup>10</sup>: Այդ ընկերությանն է պատկանում փոքր հեռահարության հրթիռների, ինչպես նաև հրթիռների տարբեր բաղադրիչների՝ վեկտորային կառավարման մասերի, մարտազինիկների, կառավարման համակարգերի արտադրությունը, ինչպես նաև ռազմաօդային ուժերի (այսուհետ՝ ՌՕՈՒ, թուրք. *Hava kuvvetleri*) համար RAPIER Mk-2 ՀՕՊ համալիրների, հրթիռների արտադրությունն ու արդիականացումը: Ընկերությունն այժմ աշխատանքներ է իրականացնում Թուրքիայի ՋՈՒ-ի համար մեծ հեռահարության ՀՕՊ համալիրների ստեղծման համար: Հակատանկային հրթիռների ծրագրի շրջանակներում ընկերությունը թուրքական բանակին տրամադրեց սեփական նախագծման T-122 MBRL և T-107 MBRL համազարկային կրակի ռեակտիվ համակարգ (այսուհետ՝ ՀԿՌՀ), որոնց ընդհանուր թիվը ներկայումս սպառազինության մեջ կազմում է շուրջ 90 միավոր<sup>11</sup>:

Ընկերությունը վերջին տարիներին ստանձնել է փոքր և միջին հեռահարության հակատանկային հրթիռների նախագծման ու արտադրության պարտավորությունը, որ առաջադրվել էր Պաշտպանական արդյունաբերության խորհրդի նիստում: Փոքր հեռահարության հրթիռները նախատեսված են մարտական մեքենաների, իսկ միջին հեռահարության հրթիռները՝ արտադրության մեջ գտնվող T-129 ATAK հարվածային ուղղաթիռների համար<sup>12</sup>:

---

<sup>10</sup> Թուրքական Roketsan ընկերության կայք, <http://www.roketsan.com.tr>

<sup>11</sup> <http://www.roketsan.com.tr/122eng.html>

<sup>12</sup> Hürriyet, 07.05.2008

Roketsan թուրքական ընկերության տնօրեն Հուսեյն Բայսաքը 2005 թ. վերջին հայտարարեց, որ տարբեր տեսակի հեռահար գործողության հրթիռների արտադրության համար ընկերությունն ունի բոլոր անհրաժեշտ մարդկային, գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքները<sup>13</sup>:

Թուրքական աղբյուրների համաձայն՝ այժմ Թուրքիայում աշխատանքներ են ընթանում 1000 կմ հեռահարության բալիստիկ հրթիռների նախագծման ու արտադրության ուղղությամբ, որոնց արտադրությունը սկսվելու է առաջիկա տարիներին: Սակայն ըստ թուրք մասնագետների՝ հնարավոր են այդ աշխատանքները ձգձգվեն, ինչը կապված է տեխնոլոգիական բարդությունների հետ: Հրթիռային նախագծերին ի պաշտոնե ավելի լավ ծանոթ թուրք պահեստի գեներալ Արմաղան Քուլօղլուի համոզմամբ՝ չնայած, որ Թուրքիան արդեն տիրապետում է հրթիռային տեխնոլոգիաներին և կարող է ինքնուրույն իրականացնել աշխատանքները, այնուամենայնիվ դեռևս բարդություններ են առկա հեռահար հրթիռների արտադրության ոլորտում: Ըստ նրա՝ ներկայումս ավելի իրատեսական է մինչև 600 կմ հեռահարության հրթիռների արտադրությունը, որի ուղղությամբ տարվում են հստակ աշխատանքներ<sup>14</sup>:

2002 թ. հունվարի 14-ին թուրքական Milliyet թերթը հրապարակել էր մի հոդված, որում նշվում էր, որ Թուրքիայում արտադրված առաջին բալիստիկ հրթիռի փորձարկումն անցել է հաջող: Թերթի տեղեկատվության համաձայն՝ «J missile» կոչվող հրթիռը չինական տեխնոլոգիաների հիման վրա թուրքական Roketsan ընկերության կողմից նման առաջին արտադրանքն էր: Դրա առաջին փորձնական արձակումը կատարվել է 2001 թ. Դեկտեմբերին՝ Ստամբուլի մերձակա ափամերձ շրջակայքում: Ըստ թերթի հաղորդման՝ փորձարկված այդ հրթիռը հանդիսացել է չինական M-7 հրթիռի կառա-

---

<sup>13</sup> Yeni Şafak, 03.10.2005

<sup>14</sup> Türkiye 1000 kilometrelik füzeler üretecek, <http://www.haberturk.com>, 2008-09-03



վարման և ուղղորդման համակարգով ավելի կատարելագործված նախատիպը՝ 150 կմ գործողության շառավղով<sup>15</sup>: Թուրք-չինական համագործակցության արդյունքում ստացված տեխնոլոգիաների շնորհիվ Թուրքիայում 2002 թ. հաջողությամբ սկսվեց YILDIRIM B-611 անվանումն ստացած հրթիռային համալիրի փորձարկումները, որի հեռահարությունը ըստ թուրքական տվյալների հասնում է մինչև 250 կմ, իսկ բալիստիկ հրթիռի քաշը՝ 1200 կգ: Ներկայումս այն Թուրքիայի ցամաքային զորքերում (այսուհետ՝ ՑՁ, թուրք. *Kara kuvvetler*) գտնվող ամենամեծ հեռահարության հրթիռային համալիրն է<sup>16</sup>: Հարկ է նշել, որ որոշ մասնագետներ կասկածի տակ են դնում նման բնութագրերի հավաստիությունը:

Մինչև 2007 թ. այդ նախագծի մասին գրեթե հստակ տեղեկատվություն չկար, միայն այդ նույն թվականին տեղի ունեցած շքերթի ժամանակ պարզ դարձավ, որ այդ նույն «J missile» անվանումը կրող հրթիռը հանդիսանում է մարտավարական YILDIRIM հրթիռային համալիրը: Չնայած հիշյալ համալիրի մասին չկան լիարժեք տեղեկություններ: Հայտնի է, որ Roketsan ընկերությունն աշխատանքներ է իրականացնում դրանց կատարելագործման ուղղությամբ<sup>17</sup>:

Roketsan ընկերությունն առաջիկայում նպատակ ունի էլ ավելի մեծացնել արտադրության շրջանակները՝ դառնալով հրթիռաշինության առաջատար ընկերություն: Ընկերության կողմից արտադրված ՀԿՌՀ-ները թուրքական արտադրության առաջին նման արտադրանքն էին, որ արտահանվեցին մի շարք երկրներ: Մասնավորապես Միացյալ Արաբական Եմիրությունների հետ ստորագրված համաձայնագրի շրջանակներում ընկերությունը վաճա-

---

<sup>15</sup> С.Л. Сардановский, Аспекты политической безопасности Черноморья, <http://www.bsarg.crimeainfo.com/03-Sardanovsky.rtf>

<sup>16</sup> Operasyonda Yeni Füzeler de Denendi, <http://www.etikhaber.com,> 17.12.2007; “Türk füzeleri Yunanistan'ı vurabilir!”, <http://www.ajansege.com,> 15.07.2008

<sup>17</sup> Arda Mevlutoglu , Turkish Surface to Surface Rocket and Missile Systems – III, Air Combat Information Group (ACIG), [http://s188567700.online.de/CMS/index.php?option=com\\_content&task=view&id=192&Itemid=47,](http://s188567700.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=192&Itemid=47,) 21.07.2008

ռեց T-122 ՀԿՌՀ-ներ, ինչպես նաև ստանձնեց այդ երկրի ՋՈՒ-ում գտնվող 122 մմ տրամաչափի ՀԿՌՀ-ների արդիականացման աշխատանքները: Մինչև 2008 թ. ընկերության արտահանման ծավալները կազմել են շուրջ 500 մլն դոլար<sup>18</sup>:

Ընկերությունը երկար ժամանակ է աշխատանքներ է իրականացնում 70 մմ «Cirit 2.75» լազերային կառավարման հակատակային հրթիռի ստեղծման ուղղությամբ, որը պետք է օգտագործի T-129 ATAK հարվածային ուղղաթիռների կողմից: Այժմ արդեն աշխատանքներ են իրականացվում դրանց խմբաքանակային արտադրության ուղղությամբ<sup>19</sup>:

Թուրքիան 80-ական թթ. վերջից տարբեր նախագծեր մշակեց զենիթահրթիռային ու հրետանային նոր համալիրների ձեռքբերման, համատեղ արտադրության ու տեխնոլոգիաների զարգացման ուղղությամբ: Թեև թուրքական կողմը նախապատվությունը տալիս էր այդ ոլորտում ԱՄՆ-ի հետ համագործակցությանը, այնուամենայնիվ տեխնոլոգիաների տրամադրման շուրջ ստեղծված անհամաձայնությունների պատճառով, Թուրքիան, որպես այլընտրանք, պայմանագիր ստորագրեց չինական ընկերության հետ՝ WS-1 ՀԿՌՀ-ի համատեղ արտադրության շուրջ: 1996 թ. ստորագրված թուրք-չինական ռազմական պայմանագրով չինական կողմի աջակցությամբ Թուրքիայում Roketsan և KALEKALIP ընկերությունների բազայի հիման վրա 1997 թ. սկսվեց չինական WS-1B ՀԿՌՀ-ների նմանօրինակը հանդիսացող T-300 KASIRGA համալիրների արտադրությունը՝ 250 մլն դոլար ընդհանուր բյուջեով, KASIRGA-ի հրթիռներն ունեն 100 կմ հեռահարություն, 150 կգ մարտազլխիկով: Ներկայումս թուրքական բանակի սպառազինության մեջ են գտնվում մոտ 30 միավոր WS-1A/B (KASIRGA) ՀԿՌՀ<sup>20</sup>:

---

<sup>18</sup> [http://www.tskgv.org.tr/index.php?option=com\\_content&task=view&id=62&Itemid=70](http://www.tskgv.org.tr/index.php?option=com_content&task=view&id=62&Itemid=70)

<sup>19</sup> Jereed (Cirit) (Turkey), Air-launched rockets, <http://www.janes.com/extracts/extract/jalw/jalwa052.html>

<sup>20</sup> <http://theasiandefence.blogspot.com/2009/02/roketsan-t-300-kasirga-hurricane.html>

Հրթիռների արտադրության ոլորտում 90-ական թթ. կեսից լուրջ համագործակցություն սկսեց ծավալվել հատկապես Իսրայելի ռազմաարդյունաբերական ընկերությունների հետ: 2003 թ. սկսեցին քայլեր ձեռնարկվել Իսրայելի հետ ՀՕՊ հրթիռների համատեղ արտադրության ուղղությամբ: Էլմադադում (Թուրքիա) տեղակայված Roketsan ընկերությունը սկսեց համագործակցել իսրայելական Rafael ընկերության հետ՝ Popeye հրթիռների համատեղ արտադրության ոլորտում: Թուրքական կողմը հետագայում էլ իր շահագրգռությունն էր հայտնում Իսրայելի ավիացիոն արդյունաբերության (Israeli Aviation Industry) հետ համատեղ միջին հեռահարության «օդ-երկիր» հրթիռների, ինչպես նաև Arrow 2 հակաբալիստիկ հրթիռային համալիրների (ATBMs) և AGM-142 Popeye 2 «օդ-երկիր» դասի միջին հեռահարության հրթիռների համատեղ արտադրության վերաբերյալ<sup>21</sup>:

2009 թ. փետրվարի 22-26-ը Արաբական Միացյալ Էմիրություններում անցկացված պաշտպանական արդյունաբերության միջազգային ցուցահանդեսին մասնակցող թուրքական Roketsan ընկերությունը 90 մլն դոլար արժողության պայմանագիր ստորագրեց Ալ-Ջաբեր ընկերության հետ՝ հրթիռային համակարգերի արտադրության վերաբերյալ, որոնք ՋՈՒ-ին կհանձնվեն 2010 թ.: Համակարգի հիմնական մասը կարտադրվի Թուրքիայում, իսկ որոշ բաղադրամասեր ԱՄԷ-ում: Roketsan ընկերությունը պատրաստվում է առաջիկայում հրթիռների արտադրության վերաբերյալ պայմանագիր ստորագրել արաբական Burkan ռազմաարդյունաբերական ընկերության հետ<sup>22</sup>:

Էլեկտրոնային սարքավորումների ու հրամանատարական հսկողության միջոցների արտադրության ոլորտում գործում է Aselsan պետական ընկերությունը: Ընկերության հիմնական արտադրատեսակներն են ռազմական կապի միջոցները, տեղեկատ-

---

<sup>21</sup> Eugene Kogan, Cooperation in the Israeli-Turkish Defence Industry; Conflict Studies Research Centre; Middle East Series 05/43; [http://www.da.mod.uk/CSRC/documents/middle\\_east/05\(43\)-EK](http://www.da.mod.uk/CSRC/documents/middle_east/05(43)-EK), p. 10-11

<sup>22</sup> Hürriyet, 23.02.2009

վական, ռադարային, էլեկտրասպտիկական, ինչպես նաև հրթիռային տարբեր բաղադրամասերը, մարտագլխիկներն ու կառավարման համակարգերը: Ընկերության արտադրատեսակներին են պատկանում ներկայումս թուրքական բանակի սպառազինության մեջ գտնվող ATILGAN Kaideye Monteli Stinger, ZIPKIN Kaideye Monteli Stinger ցամաքային շարժական և BORA ծովային ՀՕՊ համալիրների արտադրությունը<sup>23</sup>:

Aselsan ընկերությունն արտադրական ոլորտում արդեն դուրս է եկել սպառազինության միջազգային շուկա՝ մեծացնելով արտահանման տեսակներն ու ծավալները: 2006 թ. ընկերությունն իր արտադրության ոլորտում հաջողություն գրանցեց էլեկտրասպտիկական նորագույն «գիշեր-ցերեկ դիտարկման և թիրախի հայտնաբերման» ASELFIR-300T համակարգի ստեղծման գործում, որը կարող է տեղադրվել օդային և ծովային միջոցների վրա: Նախնական փուլում նախատեսվում է 10 նման համակարգով զինել անօդաչու ինքնաթիռները, այնուհետև նաև 50 համակարգ տեղադրել մարտավարական-հարվածային ուղղաթիռների վրա<sup>24</sup>:

2006 թ. դեկտեմբերի կայացած Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում որոշում կայացվեց առաջիկա 10 տարիների պաշտպանական արդյունաբերության նախագծերում առաջնային դերակատարություն հանձնել Aselsan ընկերությանը: Հատկապես այդ ընկերությունը ստանձնեց երկրի ՌՕՈՒ-ի ինքնաթիռների մի մասի և ժանդարմական հրամանատարությանը պատկանող ուղղաթիռների ավիացիոն համակարգերի արդիականացման աշխատանքներն իրականացնելու պարտավորությունը<sup>25</sup>: Ջենիթաիրթիռային ու հրետանային համալիրների արտադրության ոլորտում գիտական և տեխնոլոգիական մշակումներն իրականացնում է Թուրքիայի գիտական ու տեխնոլոգիական հետազոտությունների խորհուրդը (TÜBİTAK), որը կատարում է նաև

---

<sup>23</sup> Տես Aselsan ընկերության կայքէջ: <http://www.aselsan.com.tr>

<sup>24</sup> <http://www.gbulten.ssm.gov.tr>, 17.09.2006

<sup>25</sup> <http://www.gbulten.ssm.gov.tr>, 18.12.2006

հետազոտություններ ու զարգացման նախագծեր տարբեր բնագավառներում<sup>26</sup>:

Փոքր հեռահարության հրթիռահրետանային համակարգերի արտադրության մշակումներն սկսել են իրականացվել 80-ական թթ. կեսերին՝ Թուրքիայի Ռազմական արդյունաբերության հետազոտական ինստիտուտի (SAGE)-ի կողմից սեփական բյուջեով, որի առաջին արդյունքը եղան G-67 և SAGE 71 փոքր հեռահարության հակատանկային հրթիռների մշակումներն ու ստեղծման աշխատանքները: Հետագայում ՋՈՒ-ի կարիքներն ապահովելու նպատակով ինստիտուտը MKEK ընկերության հետ համագործակցությամբ սկսեց աշխատանքներ իրականացնել ՀԿՌՀ-ների միջին ու մեծ հեռահարության հրթիռների արտադրության ուղղությամբ, ինչի արդյունքը եղավ 107 մմ Anadolu և 122 մմ Mizrak չղեկավարվող հրթիռների արտադրությունը<sup>27</sup>:

Թուրքիայի Ռազմական արդյունաբերության հետազոտական ինստիտուտի (SAGE), որը գտնվում է TÜBITAK-ի կազմում, աջակցության ու մշակումների արդյունքում հնարավոր դարձավ Թուրքիայի ՑՁ-երի հրամանատարության հետ համագործակցությամբ իրականացնել մի շարք ծրագրեր, որոնցից նշանավորներն են TOROS 230A միջին հեռահարության, TOROS 260A մեծ հեռահարության ՀԿՌՀ-ների հրթիռների արտադրությունը<sup>28</sup>:

---

<sup>26</sup> 1963 թ. հիմնադրված այդ պետական գործակալությունը հիմնականում տնտեսական ու տեխնոլոգիական զարգացմանն ուղղված ծրագրեր է իրականացնում և գործում է որպես թուրքական կառավարությանը կից նխորհրդատվական մարմին գիտական-տեխնոլոգիական ոլորտում: Խորհրդին պատկանող 15 տարբեր հետազոտական ինստիտուտներում աշխատում են շուրջ 1000 մասնագետներ: Տես <http://www.tubitak.gov.tr>

<sup>27</sup> Arda Mevlutoglu, Turkish Surface to Surface Rocket and Missile Systems – II, Air Combat Information Group (ACIG), [http://s188567700.online.de/CMS/index.php?option=com\\_content&task=view&id=191&Itemid=47](http://s188567700.online.de/CMS/index.php?option=com_content&task=view&id=191&Itemid=47)

<sup>28</sup> TOROS 230-ը ունի մինչև 65 կմ, իսկ TOROS 260-ը՝ 110 կմ հեռահարություն, Տես <http://www.sage.tubitak.gov.tr>; Türk füzelerinin özellikleri, <http://www.internethaber.com>, 17.12.2007; [http://www.janes.com/extracts/extract/jaa/jaa\\_1138.html](http://www.janes.com/extracts/extract/jaa/jaa_1138.html)

Հրետանային զենքերի, պայթուցիկ սարքավորումների, թեթև սպառազինության ու տարբեր զինատեսակների արտադրության մեջ ամենամեծ ընկերությունը Մեքենաշինական և քիմիական արդյունաբերական պետական ընկերությունն է (թուրք. *Makina ve Kimya Endüstrisi Kurumu-MKEK*): Սպառազինության արտադրությունն իրականացվում է ընկերության՝ Անկարայում, Քըրըքալեյի և Չանքըրի նահանգներում գտնվող 12 գործարաններում<sup>29</sup>:

Հրետանային, հրաձգային զինատեսակների ու զենիթահրթիռային համալիրների արտադրությունը կենտրոնացված է Քըրըքալեյի և Չանքըրի գործարաններում: TÜBITAK-SAGE-ի ու MKEK ընկերության ստորագրած համաձայնագրով դեռևս 90-ականների կեսին սկսվեց T-107 և T-122 ՀԿՌՀ -ների խմբաքանակային արտադրությունը<sup>30</sup>: T-122 Sakarya ՀԿՌՀ հետագա կատարելագործման արդյունքում հնարավոր եղավ ապահովել Roketsan ընկերության կողմից արտադրված TR-122, TRB-122, TRK-122, SR-122, SRB-122, SRK-122 և այլ 122 մմ տրամաչափի հրթիռների կիրառումը: Համալիրի արտադրությունը շարունակվել է մինչև 2008 թվականը և ցամաքային ուժերին հանձնվել շուրջ 70 համալիր<sup>31</sup>:

Միաժամանակ Թուրքիան դեռևս չի կարող տեղական ռազմաարդյունաբերության միջոցով ապահովել հակաօդային ու հրթիռահրետանային համակարգերի պահանջարկը, ուստի մեծ է մնում արտերկրներից դրանց ձեռքբերման մասնաբաժինը:

2007 թ. հունվարին 82-ի հրամանատարության սպառազինության ուժեղացման շրջանակներում 80 հատ միջին հեռահարության հակատանկային հրթիռային համալիրների (յուրաքանչյուր համալիրի համար 10-ական հրթիռներով, ընդհանուր 800 հրթիռ) (OMTAS)

---

<sup>29</sup> Տես MKEK ընկերության կայքէջ:

<http://www.mkek.gov.tr/english/hakkimizda.aspx>

<sup>30</sup> Вооруженные силы и военная экономика стран Азии, информационно-аналитический справочник, Российская Академия Наук, Институт Востоковедения, Отв. ред. А.З. Егорин, 2000, с. 77-78

<sup>31</sup> Տես <http://theasiandefence.blogspot.com/2009/01/roketan-t-122-sakarya-system.html>, 29.01.2009

ծեռքբերման նպատակով մրցույթ հայտարարեց, որին մասնակցում էին ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան ընկերությունները<sup>32</sup>: Երկար ձգձգումներից հետո թուրքական կողմը կատարեց իր վերջնական ընտրությունը և չնայած, որ թուրքական սպառազինության հիմնական մասը ամերիկյան և իսրայելական արտադրության են, այնուամենայնիվ նախապատվությունը տրվեց ռուսականին: 2008 թ. ապրիլին Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության գործադիր կոմիտեի նիստում հաստատվեց միջին հեռահարության հակատանկային հրթիռային համալիրների ձեռքբերման 200 մլն դոլար արժողության ծրագիրը, որտեղ թուրք զինվորականները նախապատվությունը տվեցին ռուսական «Ռոստրոննէքսպորտ»-ին պատկանող «Корнет-Е» համալիրին: Ըստ նախատեսվածի՝ Թուրքիան գնել է 80 այդպիսի համալիր և 800 հրթիռ<sup>33</sup>: Հայտամրցույթին մասնակցում էին ամերիկյան Raytheon Tow կոնսորցիումը և իսրայելական Rafael պետական արդյունաբերական ընկերությունը, որոնց մերժումը կապված է ավելի շատ այդ երկրների նկատմամբ քաղաքական ճնշում գործադրելու Թուրքիայի մարտավարական քայլի հետ:

2007 թ. հուլիսին ԱՄՆ Կոնգրեսը հավանություն տվեց Պենտագոնին՝ Թուրքիային վաճառել շուրջ 51 Block II Tactical Harpoon հականավային հրթիռներ, ինչպես նաև առանձին սարքավորումներ և անհրաժեշտ ծառայություններ տրամադրել 159 մլն դոլար ընդհանուր արժողությամբ: Ձեռք բերված հրթիռներն օգտագործվելու են երկրի ռազմածովային ուժերի (այսուհետ՝ ՌԾՌԻ, թուրք. *Deniz kuvvetleri*) կողմից՝ թարմացնելով և ավելի ուժեղացնելով ՌԾՌԻ-ում գոյություն ունեցող հրթիռային արսենալը<sup>34</sup>:

Թուրքական կառավարությունը նաև դիմել էր ԱՄՆ-ին «օդ-օդ» դասի միջին հեռահարության կատարելագործված AIM-120C-7 AMRAAM հրթիռներ, ինչպես նաև 2 հրթիռային կառավարման-ուղ-

<sup>32</sup> [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 05.02.2007

<sup>33</sup> [http:// www.gbulten.ssm.gov.tr](http://www.gbulten.ssm.gov.tr), 11.04.2008

<sup>34</sup> <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20070702.aspx>

դորդման համակարգ, առանձին բաղադրամասեր ու ծառայություններ գնելու կապակցությամբ 157 մլն դոլար ընդհանուր արժեքով: 2008 թ. սեպտեմբերին պարզ դարձավ, որ ԱՄՆ Պաշտպանական անվտանգության համագործակցության գործակալությունը տեղեկացրել է Կոնգրեսին այդ վաճառքի հնարավորության մասին<sup>35</sup>:

Ընդհանուր առմամբ, ինչպես հրթիռային արտադրությունը, այնպես էլ ռազմական արդյունաբերությունը<sup>36</sup>, գրանցում են լուրջ հաջողություններ, ինչը հնարավորություն է տալիս բացի սեփական կարիքներն ապահովելուց, դուրս գալ նաև միջազգային շուկա:

Թուրքիայի ռազմական արդյունաբերության զարգացումն իր մեջ պարունակում է ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ սոցիալ-տնտեսական, տեխնոլոգիական նպատակներ, քանի որ թուրքական ընկերությունների ներգրավումը արդյունաբերության մեջ լուրջ խթան կհանդիսանա ընդհանրապես երկրի արդյունաբերական զարգացման համար, կնպաստի այդ ոլորտում գիտական եւ տեխնոլոգիական նորագույն մշակումներին: Ռազմաքաղաքական առումով այն հնարավորություն կտա Թուրքիային դուրս գալ արտաքին կախումից, դառնալ տարածաշրջանային ռազմական տերություն և բարձրացնել միջազգային հեղինակությունը<sup>37</sup>:

Ռազմական արտադրանքի արտահանումը ոչ միայն ֆինանսական եկամուտներ կապահովի, այլ ավելի շատ ռազմավարական, ռազմաքաղաքական առավելություն կունենա Թուրքիայի համար:

---

<sup>35</sup> Zaman, 29.09.2008

<sup>36</sup> Թուրքիայի ռազմական արդյունաբերության մասին մանրամասն տես Լ. Հովսեփյան, Թուրքիայի ռազմաարդյունաբերական համալիրի զարգացման և զինված ուժերի արդիականացման ռազմավարությունը, Անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները, ՔՀԻ, Վերլուծական նյութեր 1, Եր. 2007

<sup>37</sup> Savunma Sanayii Hedefleri, Vizyon 2023 Projesi. Savunma, Havacılık ve Uzay Paneli ÖN RAPORU. Ek-4, [http://www.vizyon2023.tubitak.gov.tr/teknolojiongorusu/paneller/savunmauza\\_yvehavacilik/raporlar/SHU\\_EK4.pdf](http://www.vizyon2023.tubitak.gov.tr/teknolojiongorusu/paneller/savunmauza_yvehavacilik/raporlar/SHU_EK4.pdf)



Դեռևս 2004 թ. մայիսին հրապարակված «Պաշտպանական կարիքների ապահովման նոր ռազմավարության» համաձայն, Թուրքիան պետք է մեծացնի իր սեփական ռեսուրսների, տեխնոլոգիաների օգտագործումն ու թուրքական ընկերությունների մասնակցությունը պաշտպանական նախագծերում՝ նպատակ ունենալով բարձրացնել տեղական ներդրումների աստիճանը պաշտպանական ծրագրերում: Ըստ 2007-2011 թթ. Ռազմաարդյունաբերության քարտուղարության ռազմավարական ծրագրի՝ մինչև 2010 թ. երկրի ՋՈՒ-ին անհրաժեշտ ռազմական տեխնիկայի ու սպառազինության շուրջ 50 %-ը պետք է ապահովվի թուրքական տեղական ռազմաարդյունաբերության միջոցով<sup>38</sup>: Նշենք, որ 2004 թ. այդ ցուցանիշը կազմում էր 25 %: Հետագա 4 տարիների ընթացքում թուրքական ռազմաարդյունաբերական համալիրը լուրջ հաջողություններ գրանցեց՝ ավելացնելով տեղական արտադրության մասնաբաժինը՝ այն հասցնելով ավելի քան 42 %-ի<sup>39</sup>:

Վերջին տարիներին Թուրքիայի ռազմական արդյունաբերությունը գրանցել է հաջողություններ նաև ռազմական արտադրանքի արտահանման ծավալների առումով: Մինչև 2011 թվականը նախատեսվում է թուրքական ռազմաարդյունաբերական արտադրանքի տարեկան արտահանման ընդհանուր ծավալը հասցնել 1 մլրդ դոլարի: 2007 թվականի դրությամբ այն կազմել է շուրջ 400 մլն դոլար<sup>42</sup>:

---

<sup>38</sup> Savunma Sanayii Müstaşarlığı, Startejik Plan 2007-2011,s.16, <http://www.sp.gov.tr/documents/planlar/SSMSP0711.pdf>

<sup>39</sup> <http://www.ssm.gov.tr/TR/dokumantasyon/basinbulteni/Pages/20080506.aspx>

*ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

## 1945-1946 ԹԹ. ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ՍԵՎԾՈՎՅԱՆ ՆԵՂՈՒՑՆԵՐԻ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին «չեզոքության» քողի տակ ի նպաստ ֆաշիստական բլոկի երկրների Թուրքիայի վարած երկակի խաղը, հատկապես՝ ԽՍՀՄ-ին վերաբերող ծավալապաշտական ծրագրերը և Մոնտրոյի համաձայնագրի խախտման դեպքերը, սրել են Մոսկվայի և Անկարայի հարաբերությունները: Արդյունքում՝ հետպատերազմյան տարիներին ԽՍՀՄ-ը առանց վարանելու Թուրքիայից պահանջել է վերանայել սևծովյան նեղուցներին վերաբերող Մոնտրոյի համաձայնագիրը, ինչը, սակայն, սահմանափակվել է միայն կողմերի միջև նոտաների փոխանակմամբ:

Դեռևս 1943 թ. անգլիական գաղտնի ծառայությունները տեղեկացնում էին, որ սևծովյան նեղուցների հարցը պատերազմի ավարտից հետո հայտնվելու է միջազգային ասպարեզում<sup>1</sup>: Սակայն Ի. Ստալինը նեղուցների հարցն պաշտոնապես առաջին անգամ բարձրացրել է 1944 թ. հոկտեմբերին՝ Մոսկվայում Ու. Չերչիլի հետ հանդիպման ժամանակ: Մեծ տերությունների կողմից ավելի ուշ այն քննարկվել է Ղրիմի, այնուհետև Պոտսդամի խորհրդաժողովներում: Եվ չնայած Մեծ տերությունները որևէ համաձայնության չեն եկել, սակայն մի հարցում նրանք համակարծիք էին. Մոնտրոյի համաձայնագիրը պետք է վերանայել: Հաշվի առնելով դա՝ Պոտսդամի խորհրդաժողովում Մեծ տերությունները համաձայնության եկան սևծովյան նեղուցների կառավարման վերաբերյալ իրենց առաջարկների փաթեթը Թուրքիային ներկայացնելու հարցում:

<sup>1</sup> Служба Внешней Разведки Российской Федерации, Архив СВР России, Сборник документов (1935-1945), М., 2006, с. 167.

Մինչդեռ ավելի ուշ պարզ դարձավ, որ կողմերից ոչ մեկը չէր պատրաստվում զիջումների գնալ: Խորհրդային Միության ներկայությունը նեղուցների տարածքում ցանկալի չէր ոչ միայն Թուրքիայի, այլև Մեծ Բրիտանիայի ու ԱՄՆ-ի համար: Անկարային ներկայացված սևծովյան նեղուցների հարցին առնչվող վերջիններիս հայտարարագրերը դա են վկայում:

Ի դեպ, 1945 թ. նկատելի էր նաև, որ ԱՄՆ-ն հետաքրքրություն էր սկսել ցուցաբերել Թուրքիայի նկատմամբ: Դրանով է պայմանավորված, որ Վաշինգտոնն առաջինն է նրան հանձնել սևծովյան նեղուցներին վերաբերող նոտան<sup>2</sup> (1945 թ. նոյեմբերի 2-ին): Ամերիկյան փաստաթուղթն անդրադառնում էր այն հանգամանքներին, որոնք կարևորում են Մոնտրյոյի համաձայնագրի վերանայման անհրաժեշտությունը՝ նախևառաջ հիշատակելով, որ սևծովյան նեղուցների վերահսկման ու օգտագործման հարցերն անմիջականորեն վերաբերում են «միջազգային անվտանգությանը», բացի այդ, նշված էր, որ նեղուցների անվտանգությամբ հետաքրքրված է ինչպես Թուրքիան, այնպես էլ սևծովյան պետությունները: Վերջում, առաջարկվում էր նեղուցների հարցը քննարկելու նպատակով մի նոր խորհրդաժողով հրավիրել՝ հետևյալ դրույթներով.

- նեղուցները պետք է միշտ բաց լինեն առևտրական բոլոր նավերի առջև,
- նեղուցները պետք է միշտ բաց լինեն սևծովյան երկրների ռազմական նավերի նավարկության համար,
- ոչ սևծովյան պետությունների ռազմական նավերի անցումը նեղուցներից, բացառությամբ հատուկ դեպքերի կամ էլ առանց ՄԱԿ-ի թույլատվության, արգելվում էր<sup>3</sup>:

Նկատենք, սևծովյան նեղուցների հարցի լուծման այս տարբերակը ԱՄՆ-ի նախագահ Հ. Տրումենը, ստանալով Չերչիլի համաձայ-

<sup>2</sup> Батюк В., Евстафьев Д., Первые заморозки. Советско-американские отношения в 1945–1950 гг., М., 1995, с. 29.

<sup>3</sup> Arçayürek C., Şeytan Üçgeninde Türkiye, Ankara, 1987, s. 296.

նությունը, ներկայացրել էր դեռևս Պոտսդամում<sup>4</sup>: Այն հնարավորություն էր տալիս ապահովել նեղուցներով սևծովյան երկրների ռազմանավերի ազատ անցումը «բոլոր ժամանակներում»: Սակայն ամերիկյան կողմի առաջարկը չէր արժանացել Ստալինի հավանությանը: Այդտեղ տեղ չէին գտել խորհրդային կողմի՝ Թուրքիային ներկայացված պահանջները: Այսինքն՝ ԽՍՀՄ-ը նորից չէր մասնակցում Թուրքիայի հետ համատեղ նեղուցների վերահսկման գործընթացին: Անգլիան ևս, այս հարցում իր շահերից ելնելով, հանդես էր գալիս Թուրքիայի պաշտպանությամբ: 1945 թ. նոյեմբերի 21-ին Անկարային ներկայացրած Լոնդոնի՝ նեղուցներին նվիրված նոտան այնքան էր նման ամերիկյանին, որ թուրք հեղինակներն անգլիական փաստաթուղթը որակել են որպես «ամերիկյան կրկնօրինակ»<sup>5</sup>: Դա վկայում է, որ երկու կողմն էլ սևծովյան նեղուցների հարցում համակարծիք են: Սակայն Մեծ Բրիտանիան Թուրքիայում արդեն իր դիրքերը զիջում էր, փոխարենն ԱՄՆ-ն էր ամրապնդվում այս տարածաշրջանում: Եթե պատերազմի տարիներին ամերիկյան դիվանագետների զեկուցագրերը միայն դիտարկումների բնույթ էին կրում, ապա պատերազմից հետո դրանցում մշակվում էին հնարավոր այն քայլերը, որոնք ձեռնտու էին Թուրքիային: ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև սկսված դիվանագիտական պատերազմը ևս չի վրիպել ԱՄՆ-ի պետքարտուղարության ուշադրությունից: 1945 թ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպանության կողմից Վաշինգտոն ուղարկված մի շարք զեկուցագրերում բացահայտ խոսվում էր ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև ծագած խնդիրների մասին:

1945 թ. դեկտեմբերի 19-ին ԱՄՆ-ի պետքարտուղարության միջազգային կազմակերպությունների բաժնի աշխատակից Հարի Հարվորդի պատրաստած զեկուցագրի՝ «Նեղուցների հարցը» ենթագլխում ասվում է. «ԱՄՆ-ն նորից է առաջարկել վերանայել Մոնտրոյի համաձայնագիրը: Թուրքական պատվիրակությունը խորհրդային

---

<sup>4</sup> Советский Союз на международных конференциях периода Великой Отечественной войны, т. VI, с. М., 1980, 150-151.

<sup>5</sup> Arcaşürek C., s. 298.

պահանջին ընդառաջ գնալով՝ այս հարցը վերջնական ձևով կարող է առաջադրել ՄԱԿ-ի Գլխավոր Խորհրդում կամ Անվտանգության հանձնաժողովում: Այդ դեպքում ԱՄՆ-ի պատվիրակությունը խորհուրդ կտա կողմերին ՄԱԿ-ի սահմանադրության 10-րդ և 11-րդ կետերի համաձայն հարցը լուծել բանակցությունների միջոցով»<sup>6</sup>:

1946 թ. մարտի 18-ին էլ թուրքական «Վաքիթ» թերթը տեղեկացրել է, որ Վաշինգտոնը Անկարային և Թեհրանին երաշխիքներ է տվել անվտանգության հարցում՝ վստահեցնելով, որ վերջիններիս կապաշտպանեն արտաքին ուժերի, այսինքն՝ ԽՍՀՄ-ի ագրեսիայից: Ըստ թերթի՝ ամերիկյան կողմը հիշեցրել է, որ Թուրքիայի քաղաքականությունը հիմնվում է ՄԱԿ-ի կանոնակարգի վրա: Այլ կերպ ասած՝ ԽՍՀՄ-ի ներկայացրած պահանջները կարող են ներկայացվել այս նորաստեղծ կազմակերպության քննարկմանը<sup>7</sup>:

Անկարայի կառավարությունը ևս նախընտրում էր ԱՄՆ-ի առաջարկած տարբերակը: Քանի որ, ի տարբերություն խորհրդային առաջարկների, ինչպես նշում են թուրքական հեղինակները, ամերիկյանը և անգլիականը չէին վնասում Թուրքիայի «անկախությանը և տարածքային ամբողջականությանը»: Այդ մասին բազմիցս հայտարարել են Թուրքիայի վարչապետ Շ. Սարաջօղլուն, արտգործնախարար Հ. Սաքան և արտգործնախարարության գլխավոր քարտուղար Ֆ. Էրկինը: Հասան Սաքան 1946 թ. ապրիլի 16-ին ամերիկացի լրագրողներին տված հարցազրույցում ասել է, թե Թուրքիան պատրաստ է վերանայել Մոնտրոյի համաձայնագրի որոշ կետեր, եթե միայն դրանք չեն խախտում նեղուցներում Թուրքիայի ինքնիշխան իրավունքը: Ավելին, նա նշել է, որ այս հարցում իրենց տեսակետը համընկնում է Անգլիայի և Ամերիկայի տեսակետներին<sup>8</sup>: Թուրքական մամուլն էլ խորհրդային պահանջները ներկայացնում էր որպես

---

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, февраль-июнь, 1946, После сообщения об американской гарантии, «Вакит», с. 46.

<sup>8</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, февраль-июнь, 1946, Заявление Хасана Сака на пресс-конференции американских журналистов 16 апреля 1946 года, «Ватан», с. 56-57.

նվաճողական ծրագիր Միջերկրական ծով դուրս գալու նպատակով: «Անկարա» թերթը հուլիսի 6-ին «Մեր նեղուցները» հոդվածում գրում էր, որ Ռուսաստանը, Պետրոս I-ից սկսած ձգտել է վերահսկել նեղուցները և դուրս գալ Միջերկրական ծով: ԽՍՀՄ-ը ինչպես քրդական, այնպես էլ Կարսի և Արդահանի հարցերն օգտագործում է իր նպատակին հասնելու համար<sup>9</sup>, արձանագրում էր թերթը: Սակայն դա նորություն չէր, բոլորն էլ հասկանում էին, թե ինչ է իրականում թաքնված խորհրդային պահանջների հետևում: Մոսկվան ևս չէր թաքցնում, որ իր համար առաջնայինը նեղուցների հարցն է:

Խորհրդային Միությունը, որը 1936 թ. կնքված Մոնտրոյի համաձայնագրի վերանայման հիմնական շահագրգիռ կողմն էր, Պոտոսդամի խորհրդաժողովից մեկ տարի անց է միայն Թուրքիային ներկայացրել նոտան: Առաջին նոտան ԽՍՀՄ-ը հղել է 1946 թ. օգոստոսի 7-ին (Պոտոսդամում ձեռք բերված համաձայնությամբ վերոհիշյալ փաստաթղթի վերաբերյալ խորհրդային կողմը տեղեկացրել է նաև ԱՄՆ-ին ու Մեծ Բրիտանիային)<sup>10</sup>: Թուրքիային առաջարկելով վերանայել Մոնտրոյի համաձայնագիրը խորհրդային կողմը նշում էր, որ Պոտոսդամի խորհրդաժողովում երեք Մեծ տերությունները սկզբունքային համաձայնության են եկել, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին նեղուցներում գործող ռեժիմը իրեն չի արդարացրել և չի ապահովել դրանց անվտանգությունը<sup>11</sup>: Անդրադառնալով պատերազմի տարիներին Թուրքիայի կողմից Մոնտրոյի համաձայնագրի խախտման բազում դեպքերին և Մոսկվայի՝ ժամանակին ներկայացված բողոքի նոտաներին, փաստաթղթում մասնավորապես ասվում էր. «Բերված փաստերից երևում է, որ Գերմանիայի ու նրա դաշնակիցների դեմ մղված անցած պատերազմի ընթացքում նեղուցների վերաբերյալ համաձայնագիրը թշնամական պետություններին չխանգարեց նեղուցներն օգտագործել

---

<sup>9</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, февраль-июнь, 1946, июль-ноябрь, 1946, Наши проливы, «Анкара», с. 26-27.

<sup>10</sup> Erkin F., Türk-Sovyet ilişkileri ve Boğazlar, Ankara, 1968, s. 415.

<sup>11</sup> Известия, 13. VIII. 1946.

ռազմական նպատակներով՝ Խորհրդային Միության և դաշնակից այլ պետությունների դեմ, ըստ որում՝ թուրքական կառավարությունը չի կարող պատասխանատվություն չկրել նման վիճակի համար»<sup>12</sup>: Խորհրդային կողմը պահը բաց չէր թողել թուրքերին հիշեցնելու, որ պաշտոնական Մոսկվան պատերազմի տարիներին բազմաթիվ անգամ հայտարարագրերով դիմել է Անկարայի կառավարությանը՝ պահանջելով նեղուցների մուտքը փակել գերմանական և իտալական նավերի առջև: Մինչդեռ անտեսելով այդ նախազգուշացումները, Թուրքիան շարունակում էր աջակցել առանցքի երկրներին՝ դրանով իսկ խախտելով Մոնտրոյում հաստատված նեղուցների ռեժիմը:

Նոտայում ԽՍՀՄ-ը թուրքական կողմին առաջարկում էր հաստատել նեղուցների նոր ռեժիմ, որը բխելու էր հետևյալ դրույթներից.

- նեղուցները միշտ պետք է բաց լինեն բոլոր երկրների առևտրական նավերի համար,
- նեղուցները միշտ պետք է բաց լինեն սևծովյան պետությունների ռազմանավերի համար,
- նեղուցներով ոչ սևծովյան պետությունների ռազմանավերի անցումը, բացառությամբ հատուկ դեպքերի, պետք է արգելվի,
- նեղուցների կանոնակարգի սահմանումը պետք է մտնի Թուրքիայի և սևծովյան մյուս երկրների իրավասության մեջ,
- Թուրքիան և Խորհրդային Միությունը, որպես նեղուցներում առևտրական նավագնացությունն ու դրանց անվտանգությունը ապահովելու մեջ ամենից ավելի շահագրգիռ պետություններ, համատեղ պետք է կազմակերպեն նեղուցների պաշտպանությունը՝ այլ տերությունների կողմից սևծովյան պետությունների դեմ թշնամական նպատակներով դրանց օգտագործումը կանխելու համար<sup>13</sup>:

---

<sup>12</sup> Սահակյան Ռ., Սովետա-թուրքական հարբերությունների պատմության հակազդիտական լուսաբանումը ժամանակակից թուրք պատմագրության մեջ, Ե., 1964, էջ 112-113:

<sup>13</sup> Erkin F., s. 415.



Այսինքն՝ ԽՍՀՄ-ը պահանջում էր, որ Թուրքիան և Խորհրդային Միությունը համատեղ իրականացնեն սևծովյան նեղուցների ելումուտի վերահսկումը: Ավելին, Խորհրդային այս առաջին նոտան իր բնույթով վերջնագիր էր հիշեցնում:

Ի տարբերություն Թուրքիայի՝ Անգլիան և ԱՄՆ-ն ավելի օպերատիվ էին գործում: Նրանք պատասխան ուղերձներ առաջինն են հղել ԽՍՀՄ-ին: Ինչպես վկայում են ամերիկյան փաստաթղթերը, Վաշինգտոնում այս հարցի շուրջ քննարկումներն սկսվել էին օգոստոսի 9-ից: Անկարան բավականին արագ էր գործել, Խորհրդային նոտան ստանալուն պես այն ուղարկել էր այդ պահին Փարիզում գտնվող ԱՄՆ-ի պետքարտուղար Ջ. Բյորնսին: Ըստ ամերիկյան փաստաթղթերի՝ Վաշինգտոնը Խորհրդային կողմի պահանջներին մոտեցել է լրջորեն, քանի որ Սպիտակ տունը չէր դադարում իրեն կշտամբել «իրանական ճգնաժամում» ԽՍՀՄ-ի գործողությունների հարցում ցուցաբերած «փափկության» համար և այս անգամ ձգտում էր ցուցաբերել ավելի «կոշտ քաղաքականություն»<sup>14</sup>: Օգոստոսի 15-ին Վաշինգտոնից Բյորնսին ուղարկված մի գրության մեջ տեղեկացվում էր, որ նախագահ Հ. Տրումենին սևծովյան նեղուցների վերաբերյալ զեկույց է ներկայացվել, որում ամերիկյան կողմը հանգել է այն եզրահանգման, որ ԽՍՀՄ-ի հիմնական նպատակը Թուրքիային վերահսկելն է: Այդ պատճառով նրանք գտնում են, որ ժամանակն է կանխել Թուրքիայի վրա ձեռնարկվող Խորհրդային հարձակումները: Եվ եթե դա չարվի ՄԱԿ-ի կողմից, ապա ԱՄՆ-ն, այլ պետությունների հետ հակահարված կտա ԽՍՀՄ-ին<sup>15</sup>: Երկու օր անց էլ՝ օգոստոսի 17-ին, Փարիզ ուղարկված մեկ այլ հեռագրում ԱՄՆ-ի պետքարտուղարությունը Բյորնսին տեղեկացնում էր, որ պատրաստվում են ԽՍՀՄ-ին ներկայացնել պատասխան հայտարարագիր<sup>16</sup>: 1946 թ. օգոստոսի 19-

---

<sup>14</sup> Егорова Н., «Иранский кризис» 1945 – 1946 гг.: взгляд из российских архивов. М., 1995, с. 114.

<sup>15</sup> Arcayürek С., s. 320.

<sup>16</sup> Кальвокоресси П., Мировая политика после 1945 г., ч. 1, М., 2000, с. 59.

ին ԱՄՆ-ի պետքարտուղարությունը Վաշինգտոնում ԽՍՀՄ-ի գործերով հավատարմատարին է հանձնել Թուրքիային ներկայացված օգոստոսի 7-ի նոտայի պատասխանը: Դրանում ասվում էր, որ խորհրդային կողմի առաջարկած սկզբունքների նկատմամբ ամերիկյան դիրքորոշումը պարզ կդառնա, այն բանից հետո, երբ համեմատվեն թուրքական կառավարությանն ուղղված 1945 թ. նոյեմբերի 2-ի ամերիկյան և 1946 թ. օգոստոսի 7-ի խորհրդային նոտան<sup>17</sup>: Այսպիսով, թուրք-ամերիկյան հարաբերությունները կարևոր փուլ էին թևակոխում. սկիզբ էր դրվում այս երկու պետությունների համագործակցությանը:

Անգլիական կողմը ԽՍՀՄ-ին նոտան ներկայացրել է ԱՄՆ-ից մի քանի օր անց՝ օգոստոսի 21-ին: Փաստաթղթում նշված էր, որ «նեղուցների ռեժիմը պետք է համապատասխանի Միավորված ազգերի կազմակերպության նպատակներին և սկզբունքներին»<sup>18</sup>:

Թուրքիային Խորհրդային կողմի առաջարկած հինգ սկզբունքներից երեքի շուրջ ԽՍՀՄ-ը, ԱՄՆ-ն և Մեծ Բրիտանիան համակարծիք էին: Բանավեճերն ընթանում էին վերջին IV և V կետերի շուրջ: Թուրքիայի նման Անգլիան և ԱՄՆ-ը դեմ էին նեղուցների տարածքում խորհրդային ազդեցության մեծացմանը: Առաջարկված IV կետը, ըստ ամերիկյան կողմի, չէր կարող ընդունվել, քանի որ «նեղուցների ռեժիմի հարցը գտնվում է ոչ միայն սևծովյան, այլ նաև այլ տերությունների, ներառյալ և Միացյալ Նահանգների մտահոգությունների շրջանակում»<sup>19</sup>: Բրիտանական կողմն էլ հիշեցնում էր, թե «վաղուց միջազգայնորեն ընդունված է, որ նեղուցների ռեժիմում, բացի սևծովյան տերություններից, շահագրգռված են նաև մյուս երկրները»<sup>20</sup>: Ինչ վերաբերում է V կետին, ապա այս հարցում ևս այս երկու պետությունները միանշանակ ասում էին, թե

---

<sup>17</sup> Hurewitz J., *Diplomacy in the Near and Middle East. A Documentary Record 1914-1956*, vol II, New-York, 1972, p. 270-271.

<sup>18</sup> Капитанец И., *Битва за Мировой океан в «холодной» и будущих войнах*, М., 2002, с. 82.

<sup>19</sup> Hurewitz J., p. 270-271.

<sup>20</sup> Arcayürek C., s. 301.

ԽՍՀՄ-ը Թուրքիայի հետ համատեղ չի կարող իրականացնել նեղուցների վերահսկումը՝ պնդելով, որ Թուրքիան պետք է շարունակի մնալ նեղուցների պաշտպանության հիմնական պատասխանատուն: Իսկ նեղուցների շուրջ ծագած խնդիրները, ԱՄՆ-ի կարծիքով, պետք է լուծվեին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի շրջանակում<sup>21</sup>:

Հետաքրքիր է, երբ օգոստոսի 19-ին հրապարակվել է ամերիկյան պատասխանը խորհրդային կողմին, թուրքական մամուլում հրատարակված հոդվածներում նշվել է, թե իրենք հիմնականում աջակցություն էին սպասում հենց ԱՄՆ-ից և ուրախ են, որ Ամերիկայի տեսակետը համընկնում է իրենց տեսակետի հետ: Ավելին, նշվում էր, որ այն իր բովանդակությամբ բավականին կտրուկ է և թուրքերից շուտ է ներկայացվել, ինչը վկայում է, որ Վաշինգտոնը շահագրգռված է, որ նեղուցների հարցը լուծվի Թուրքիայի օգտին: Շեշտվում էր, որ ամերիկացիները նույնիսկ առաջարկել են հարցը ներկայացնել ՄԱԿ-ի քննարկմանը: Լրագրող Ասին Ուսը դրա «անհրաժեշտությունը» պատճառաբանել է յուրովի: Օգոստոսի 22-ին «Վաքիթ» թերթում հրապարակած հոդվածում նա գրել է. «Ռուսական նոտան Երրորդ համաշխարհային պատերազմի բացահայտ նախանշում է: ...Եվ ԽՍՀՄ-ի կողմից հրահրվող պատերազմի պատասխանատվությունը չպետք է դրվի միայն Թուրքիայի վրա՝ չնայած որ Թուրքիան անհրաժեշտության դեպքում պատրաստ է կատարել իր պարտականությունը: Սակայն պետք է պարզել նաև, թե Միացյալ Ազգերը ևս կկատարի՞ իր պարտականությունը...»<sup>22</sup>:

Այսպիսով, ԱՄՆ-ի ու Մեծ Բրիտանիայի նոտաներից պարզ է դառնում, որ սևծովյան նեղուցների խնդիրը դուրս է եկել ԽՍՀՄ-ի և Թուրքիայի հետաքրքրության շրջանակից ու դարձել միջազգային հարց: Ամերիկյան ու Անգլիան ևս արդեն շահագրգռված կողմ էին,

---

<sup>21</sup> Hurewitz J., p. 271.

<sup>22</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов (7 августа), «Вакит», с. 10.

ինչը Թուրքիային թույլ էր տալիս լրջորեն չնոտենալ Խորհրդային Միության առաջարկներին և առանց վախի մերժել դրանք: Դրա վկայությունը 1946 թ. օգոստոսի 14-ին մեջլիսում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Փեքերի ունեցած ելույթն է<sup>23</sup>: Այդ առիթով Թ. Ունալը նշել է. «Թուրքական կառավարությունն անգլիական և ամերիկյան կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո խորհրդային պահանջները մերժեց»<sup>24</sup>: Այլ կերպ ասած՝ Վաշինգտոնից և Լոնդոնից հետո միայն պատասխան ուղերձ ներկայացնելով Մոսկվային՝ Անկարան դրանով իսկ ապահովագրել է իրեն միջազգային ասպարազում ԽՍՀՄ-ի դեմ միայնակ մնալուց:

ԽՍՀՄ-ին Թուրքիան իր պատասխանը հղել է 1946 թ. օգոստոսի 22-ին: Դրանում բերելով անհիմն բացատրություններ՝ Անկարան փորձում էր արդարացնել պատերազմի տարիներին իր վարած քաղաքականությունը: Թուրքական փաստաթուղթը նախևառաջ հերքում էր խորհրդային կողմի ներկայացրած այն փաստերը, թե ֆաշիստական բլոկի երկրների ռազմական նավերն առևտրական դրոշի ներքո քողարկված ազատ ելումուտ են արել սևծովյան նեղուցներով: Միաժամանակ չէր հերքում թե՛ գերմանական «Ջեթֆալկե», թե՛ իտալական «Տավրիզիո» ռազմանավերի՝ նեղուցներով Սև ծով մտնելու, ինչպես նաև գերմանական «Էմս» ու «Կրիգստրանսպորտ» տիպի տարբեր ջրատարողությամբ 13 նավերի՝ Սև ծովից Էգեյան ծով անցնելու դեպքերը: Ըստ Անկարայի՝ գրանցված այս միջադեպերը որևէ կերպ չէին սպառնում ԽՍՀՄ-ի անվտանգությանը: Ավելին, Մոսկվայի նախազգուշացումներից հետո նմանատիպ դեպքերը կանխվել են: Ինչ վերաբերում է խորհրդային նոտայում բարձրացված հարցի բուն էությանը, ապա թուրքական կառավարությունը, որոշ վերապահումներով, քննարկման համար հիմք էր ընդունում առաջին երեք կետերը՝ ընդգծելով, որ դրանք կրկնում են համաձայնագիրը ներկայիս պայմաններին հարմարեցնելու վերաբերյալ 1945

---

<sup>23</sup> Öztürk K., Türkiye Cumhuriyeti hükümetleri ve programları, İstanbul, 1968, s. 290-291.

<sup>24</sup> Սահակյան Ռ., էջ 115:

թ. նոյեմբերի 2-ին ԱՄՆ-ի արած առաջարկները: Հետևելով ԱՄՆ-ին ու Անգլիային՝ Թուրքիան ևս մերժում էր IV ու V կետերը՝ միաժամանակ պատճառաբանելով, թե ինչու չեն կարող ընդունել խորհրդային կողմի առաջարկները: Ըստ թուրքական կողմի՝

- համաձայնագրի վերանայումը բացառում է նոր ռեժիմի մշակումը, որի ընդհանուր կառուցվածքը կտարբերվեր Մոնտրոյի ռեժիմից,
- խորհրդային հայտարարագրում անտեսվում են համաձայնագրի անդամ մյուս երկրների շահերը,
- պետական և ազգային տեսանկյունից նեղուցների համատեղ պաշտպանության վերաբերյալ խորհրդային առաջարկն անընդունելի է, քանի որ դա կնշանակեր Թուրքիայի անվտանգության ոչնչացում:

Նոտայում Թուրքիայի կառավարությունը խորհրդային կողմին կոչ էր անում վերականգնել բարեկամական հարաբերությունները, ինչը Սև ծովում ԽՍՀՄ-ի անվտանգության երաշխիքն է: Ինչ վերաբերում է Թուրքիայի անվտանգությանը, ապա նշվում էր, որ դրա երաշխիքը ՄԱԿ-ի միջազգային ուժերն են<sup>25</sup>:

Խորհրդային Միությանն ուղղված նման բովանդակությամբ պատասխանը վկայում է, որ թուրքական մամուլում մինչ այդ օրը տեղ գտած հոդվածները ոչ այլ ինչ էին, եթե ոչ Անկարայի կառավարության պատվեր: Թերթերում հրապարակված այդ հոդվածների միջոցով Թուրքիայի կառավարությունը հող էր ստեղծում հետագա անակնկալ զարգացումների համար՝ ժողովրդին հասկացնելով, թե ԽՍՀՄ-ի առաջարկները սպառնում են երկրի ինքնիշխանությանը:

Այսպիսով, թուրքական կողմի պատասխանով ավարտվում էր սևծովյան նեղուցների շուրջ սկսված քննարկումների առաջին փուլը: Այն կարևորվում է նրանով, որ պարզաբանում էր ոչ միայն ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի, այլև այս հարցի շուրջ շահագրգիռ մյուս կողմերի՝ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դիրքորոշումը: Ավելին, ինչպես իրավացիորեն նկատել է ֆրասիական «Լե Ռեսպուբլիկ» թերթը, «Նե-

<sup>25</sup> 50 yılın Tutanağı 1923-1973, İstanbul, 1973, s. 122-123.

ղուցների հարցը կարելի է համարել ռուս–անգլո–սաքսոնական խնդիր, քան ռուս–թուրքական»<sup>26</sup>: Մինչդեռ պետք է նկատել, որ առաջին հայտարարգրերի փոխանակումից հետո Անկարայի, Վաշինգտոնի և Լոնդոնի հետագա քայլերը կախված էին միմիայն Մոսկվայի պահվածքից: Այդ առումով թուրքական մամուլը տարբեր կանխատեսումներ էր անում՝ ենթադրելով, որ՝

- Խորհրդային Միությունը կիրաժարվի իր պահանջներից և, որպես հիմք ընդունելով ամերիկյան առաջարկները, որի հետ համամիտ է և Թուրքիան, կհամաձայնվի մասնակցել սևժովյան նեղուցների հարցի առնչությամբ հրավիրված միջազգային խորհրդաժողովին,
- ԽՍՀՄ-ը կշարունակի ճնշում գործադրել Թուրքիայի վրա, որի արդյունքում հնարավոր է պատերազմի սանձազերծում,
- ԽՍՀՄ-ը ոչ կիրաժարվի, ոչ էլ ճնշում կգործադրի՝ թույլ տալով, որ նեղուցների հարցը օդում կախված մնա<sup>27</sup>:

Վերլուծելով այս վարկածները՝ թուրք լրագրողներն այն եզրակացությանն էին հանգել, որ հավանականությունը շատ քիչ է, թե իրադարձությունները կզարգանան 1-ին և 2-րդ կետերի սցենարների հիման վրա: Թուրքական կողմը բացառում էր, որ Խորհրդային Միությունը կիրաժարվի իր պահանջներից, քանի որ այդ դեպքում կհեղինակագրվի միջազգային ասպարեզում, այն էլ այժմ, երբ հայտնվել է «գերտերության» կարգավիճակում<sup>28</sup>: Հասկանալի է, որ Անկարան նախընտրություն էր տալիս հարցի լուծման հենց այս տարբերակին՝ պատճառաբանելով, թե միայն նման զարգացումը հնարավորություն կտա վերականգնել խորհրդա–թուրքական հարաբերություններն ու ապահովել նեղուցների անվտանգությունը: Մինչդեռ դա միակ միջոցն էր Թուրքիայի համար՝ ստեղծված իրա-

---

<sup>26</sup> Ваисс М., Международные отношения после 1945 года, М., 2005, с. 214.

<sup>27</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, с. 12.

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 12:

վիճակից «առանց վնասների» դուրս գալու: Ինչ վերաբերում է 2-րդ կետին, ապա թուրքական մամուլը նշում էր, թե հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երկրորդ համաշխարհային պատերազմը նոր է ավարտվել, և ԽՍՀՄ-ը դեռևս ամբողջությամբ չի վերականգնել իր ուժերը, պատերազմ սկսելու վարկածը ևս հավանական չէր համարվում: Ըստ թուրքերի՝ խորհրդային կողմը նախընտրություն էր տալու 3-րդ վարկածին՝ անդելով, որ դա բխում է ԽՍՀՄ-ի շահերից<sup>29</sup>:

Իհարկե, ԽՍՀՄ-ին չէր կարող բավարարել Թուրքիայի պատասխանը, քանի որ վերջինիս ներկայացված պահանջների կարևոր կետերում՝ նեղուցների համատեղ պաշտպանության ու նոր կանոնակարգի վերաբերյալ ապագա խորհրդաժողովի մասնակից երկրների հարցերում, հստակորեն նկատելի էին տարածայնությունները: Մյուս կողմից՝ ԱՄՆ-ն, Անգլիան և Թուրքիան համաձայն էին նեղուցներով ռազմանավերի անցման կանոնակարգի փոփոխմանը՝ հոգուտ սևծովյան պետությունների: Չնայած դրան՝ պաշտոնական Մոսկվան չէր պատրաստվում նահանջել իր ներկայացրած պահանջներից, իսկ Անկարան՝ սևծովյան նեղուցներում ամրագրված իր դիրքերը զիջել ԽՍՀՄ-ին: Ամերիկյան և անգլիական փաստաթղթերը վկայում են, որ Թուրքիայի վերնախավում նույնիսկ խոսում էին ԽՍՀՄ-ի դեմ ռազմական գործողություններ սկսելու մասին: Սեպտեմբերի 9-ին արտգործնախարար Սաքան նեղ շրջանակում շեշտել է, որ Թուրքիան պատրաստ է հարձակվել ԽՍՀՄ-ի վրա՝ չնայած վստահ է, որ դրա անհրաժեշտությունը չի լինելու: Նա ակնարկել է, թե սևծովյան նեղուցներում համատեղ հանգրվաններ ստեղծելու և դրանք միասին կառավարելու ԽՍՀՄ-ի առաջարկն անընդունելի է, քանզի հետո թուրքերի վզին կփաթաթվեն այլ պայմաններ ևս<sup>30</sup>:

---

<sup>29</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Высказывания печати по вопросу проливов, с. 13.

<sup>30</sup> Douglas B., Dean Acheson and the Making of U.S. Foreign Policy, New York, 1992, p. 239.

Խորհրդային կառավարությունը սևծովյան նեղուցներին վերաբերող երկրորդ նոտայով Թուրքիային դիմել է 1946 թ. սեպտեմբերի 24-ին<sup>31</sup>: Թուրքական մամուլը չորս օր ուշացումով՝ սեպտեմբերի 28-ին է միայն անդրադարձել այս փաստաթղթին: Իսկ սեպտեմբերի 29-ին արդեն թուրքական բոլոր թերթերը հրապարակել էին նոր նոտայի բովանդակությունը<sup>32</sup>: Այս նոտան տպագրվել է նաև ինչպես այդ տարիների խորհրդային մամուլում, այնպես էլ այս թեմայով գրված աշխատություններում:

Փաստաթղթում Մոսկվան չի դադարում Անկարային մեղադրել Մոնտրոյի համաձայնագրի խախտման, նեղուցներով ֆաշիստական բլոկի երկրների նավերի անցումը թույլատրելու մեջ, բացի այդ չէին ընդունվում թուրքական կառավարության՝ այդ հարցի հետ կապված բացատրությունները: Նոտայում նշվում էր, որ իրականությանը չեն համապատասխանում թուրքական կողմի այն բոլոր պնդումները, թե, իբր, նեղուցներով թշնամական նավերի անցումը սպառնալիքի տակ չէր դնում ԽՍՀՄ-ի անվտանգությունը, թե Թուրքիան իրեն լիովին արդարացրել է նեղուցների պահակի դերում, թե Թուրքիայի շնորհիվ առանցքի երկրները չեն հանդգնել խախտելու նեղուցների կանոնակարգը: Հարց էր տրվում, ապա այդ դեպքում ինչու՞ էր պատերազմի տարիներին երկրին ուղղված գերմանական սպառնալիքի պայմաններում խորհրդային գլխավոր շտաբը սևծովյան շրջանի պաշտպանության նպատակով հարկադրված ռազմական գործողությունների գլխավոր ուղղությունից հանել զգալի քանակությամբ զինված ուժեր: Խորհրդային կողմի պնդմամբ դա վկայում է, որ Մոնտրոյի համաձայնագիրը չի համապատասխանում սևծովյան երկրների անվտանգության շահերին՝ մեկ անգամ էլ առաջարկելով նեղուցներով անցուդարձի նոր ռեժիմը համաձայնեցնել ինչպես Թուրքիայի, այնպես էլ հիշյալ երկրների հետ: Խորհրդային Միությունը հիշեցնում էր, որ Սև ծովը փակ

<sup>31</sup> Внешняя политика СССР, т. VI, М. 1962, с. 664.

<sup>32</sup> ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արխիվ, Обзор турецкой прессы, июль-ноябрь, 1946, Первые комментарии новой ноты Советского Союза о проливах, с. 15.



ծով է, ըստ այդմ՝ նեղուցները ծովային միակ ճանապարհն են սև-ծովյան պետությունների համար: Ուստի, ԽՍՀՄ-ի և մյուս երկրների կենսական շահերից է բխում, որ Խորհրդային Միությունը ևս անմիջականորեն մասնակցի նեղուցների պաշտպանությանը: Հայտարարագրում նշվում էր, որ ԽՍՀՄ-ի հետ համատեղ նեղուցների պաշտպանությունից Թուրքիայի հրաժարվելը սևծովյան տերություններին զրկում է տարածաշրջանում պատշաճ մակարդակի անվտանգություն ապահովելու և երաշխավորելու հնարավորությունից: Մոսկվան կողմ էր նեղուցների հարցի քննարկման նպատակով խորհրդաժողով հրավիրելուն<sup>33</sup>:

Թուրք հեղինակների գնահատմամբ՝ իրենց ներկայացված այս երկրորդ փաստաթուղթը չէր տարբերվում առաջինից և կրկին վերջնագիր էր հիշեցնում: Պատմաբան Թահսին Ունալի կարծիքով՝ խորհրդային կողմի այս երկու նոտաները վկայում են, որ նեղուցների հարցում ԽՍՀՄ-ը վերադարձել է ցարիզմի քաղաքականությանը և, իբր, դա է պատճառը, որ Թուրքիան խզել է իր հարաբերությունները Ռուսաստանի հետ՝ թեքվելով դեպի ժողովրդավարական աշխարհը<sup>34</sup>:

Այն, որ այս հարցում ԱՄՆ և Մեծ Բրիտանիան դիտորդի դերում չէին և հանդես էին գալիս որպես շահագրգիռ կողմ, վկայում է նաև այն փաստը, որ նեղուցներին վերաբերող խորհրդային նոտաներին միշտ առաջինն են արձագանքել: Սեպտեմբերի 24-ի փաստաթուղթն էլ բացառություն չի եղել: Վաշինգտոն ուղարկված մի տեղեկատվության մեջ նշվել է, որ Խորհրդային Միությունը «հանգրվանների վրա չի կանգնել, միայն համատեղ պաշտպանությանն է անդրադարձել»: Միաժամանակ ընդգծվել է, որ Մոսկվան Անկարային առաջարկել է հանդիպել, սակայն թուրքական կողմը նախընտրում է մինչ այդ հանդիպել ԱՄՆ-ի ու Անգլիայի հետ<sup>35</sup>: Հոկտեմբերի 5-ին դեռ Փարիզում գտնվող ԱՄՆ-ի պետ-

<sup>33</sup> Внешняя политика СССР, т. VI, с. 664-670.

<sup>34</sup> Unal T., 1700 den 1958 e kadar Türk Siyasi Tarih, Ankara 1958, s. 291.

<sup>35</sup> Arcayürek C., s. 321.

քարտուղար Բյորնսին հեռագիր է ուղարկվում, որում նրան հայտնում են, թե «ԱՄՆ-ի օգոստոսի 19-ի տեսակետն անփոփոխ է: Պոտտլանդում երեք Մեծ տերությունների կողմից ընդունվել է որոշում նեղուցների և Մոնտրոյոյի համաձայնագրի հետ կապված»: Հեռագրի վերջում կրկնվում է, որ նեղուցների պաշտպանությունը Թուրքիայի պարտականությունն է, իսկ նեղուցներին սպառնացող վտանգի դեպքում խնդիրը պետք է հանձնվի ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի հայեցողությանը<sup>36</sup>: Ավելի ուշ պարզ կդառնա, որ սևծովյան նեղուցների հարցում անփոփոխ է նաև Անգլիայի տեսակետը: Այլ կերպ ասած՝ ԱՄՆ-ն ու Անգլիան բացահայտ շարունակում էին պաշտպանել Թուրքիայի շահերը: Այդ մասին են վկայում 1946 թ. հոկտեմբերին 9-ին Վաշինգտոնի և Լոնդոնի ԽՍՀՄ-ին ներկայացրած պատասխան նոտան:

Անկարան Մոսկվային հղեց իր պատասխանը հոկտեմբերի 18-ին, որտեղ կրկին հերքում էր Մոնտրոյոյի համաձայնագրի խախտման և նեղուցներով «թշնամական նավերի» անցման վերաբերյալ խորհրդային կողմի բոլոր մեղադրանքները: Թուրքիան ընդունում էր սևծովյան պետությունների շահերը պաշտպանելու նպատակով Մոնտրոյոյի համաձայնագիրը վերանայելու, հատկապես նեղուցներով անցուդարձի և դրանց վերահսկողության պայմանները, ինչպես նաև համաձայնագրի հավելված 2-ը փոփոխելու անհրաժեշտությունը: Առաջարկվում էր համաձայնագրի վերահսկումը հանձնել ՄԱԿ-ին, բացառել դրան Ճապոնիայի մասնակցությունը, փոխարենը ներգրավել ԱՄՆ-ին: Թուրքիան իր դաշնակիցների նման չէր համաձայնվում ապագայում հրավիրվելիք հնարավոր խորհրդածողովի մասնակիցների կազմի և նեղուցների համատեղ պաշտպանության վերաբերյալ ԽՍՀՄ-ի առաջարկներին: Հայտարարագրում նաև նշվում էր, որ Թուրքիան ոչ միայն սևծովյան, այլև միջերկրածովյան տերություն է, ուստի ապագա հանդիպման մասնակիցների կազմը չի կարող սահմանափակվել սևծովյան երկրնե-

---

<sup>36</sup> Кочкин Н., СССР, Англия, США и «Турецкий кризис» 1945–1947 гг. – Новая и новейшая история, М., 2002, № 3, с. 67.

րով, իսկ նեղուցները համատեղ պաշտպանելու հարցում Թուրքիայի համաձայնությունը կնշանակեր սեփական ինքնիշխանության կիսում օտարերկրյա տերության հետ, ինչին պատրաստ չէր:

Ըստ թուրքական կառավարության՝ համաձայնագրի վերանայման նախապատրաստական աշխատանքները, որին այդքան ձգտում էր Պոտոսդամի խորհրդաժողովը, շնորհիվ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի՝ Անկարային արած հաղորդումների և ԽՍՀՄ-ի ու Թուրքիայի միջև կարծիքների փոխանակման, գտնվում էին ավարտական փուլում: Ավելին, թուրքերը պատրաստակամություն էին հայտնում Մոնտրոյոյի համաձայնագիրը վերանայելու նպատակով այն ստորագրած բոլոր երկրների, բացառությամբ Ճապոնիայի, և, ըհդհակառակը, ԱՄՆ-ի մասնակցությամբ նոր վեհաժողով անցկացնելու հարցում<sup>37</sup>:

Այսպիսով, Խորհրդային Միությանն ուղղված թուրքական պատասխան նոտայով կարելի է ավարտված համարել նաև սևծովյան նեղուցներով ելումուտի հարցի շուրջ քննարկումների երկրորդ փուլը: Այն ևս անարդյունք էր. կողմերն այդպես էլ համաձայնության չեկան: Պետք է նկատել նաև, որ նոտաների փոխանակումն հիմնականում ընթացել է ոչ թե ԽՍՀՄ-ի և Թուրքիայի միջև, այլ ԽՍՀՄ-ի ու ԱՄՆ-ի: Անկարան միայն հետևում էր Վաշինգտոնի ցուցումներին՝ թույլ տալով վերջինիս ազդեցության մեծացումը տարածաշրջանում:

Սևծովյան նեղուցների հարցի շուրջ հետազայում ևս փոփոխություններ չգրանցվեցին. Մոսկվան և Անկարան շարունակում էին պնդել իրենց տեսակետները: ԽՍՀՄ-ի արտաքին գործերի նախարարությունը Թուրքիային ուղղված 1946 թ. հոկտեմբերի 26-ի իր պատասխան նամակում նշում էր, որ խորհրդային կառավարու

թյունը համաձայն չէ այն դիրքորոշմանը, թե Պոտոսդամի վեհաժողովի որոշմամբ երեք, այն է՝ Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի կառավարություններից յուրաքանչյուրի ու Թուրքիայի միջև նախատեսված բանակցությունները հարկավոր է ավարտ-

---

<sup>37</sup> Vali Ferenc A., *The Turkish Straits and NATO*, Stanford, 1972, p. 278-297.

ված համարել: Մոսկվայի գնահատմամբ՝ վաղ է քննարկել նեղուցների նոր կանոնակարգի հաստատման նպատակով խորհրդաժողով հրավիրելու հարցը<sup>38</sup>: Վեհաժողով այդպես էլ չհրավիրվեց, չնայած խնդիրը դեռ շարունակում էր մնալ օրակարգում մինչև 1953 թ. մայիսի 30-ը, երբ ԽՍՀՄ-ը Անկարայից ունեցած իր հավակնություններից պաշտոնապես հրաժարվել է:

---

<sup>38</sup> Архив внешней политики Российской Федерации (АВП РФ), Черноморские проливы. Сборник документов 1917-1946 гг., М., 1947, с. 247.

## **ОСНОВНЫЕ КОНТУРЫ ТУРЕЦКО-ГРУЗИНСКОГО ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОГО СОТРУДНИЧЕСТВА: ДИНАМИКА И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ**

Политика Турции, по отношению к Южному Кавказу носит многоуровневый характер, что обусловлено ее долгосрочными геополитическими и геостратегическими интересами в регионе. Заинтересованность Турции в Грузии, в первую очередь, обуславливалась изначально тем обстоятельством, что последняя, представлявшая собой с геополитической точки зрения энерго-коммуникационный транзит (который, в самом начале 90-х гг., по известным причинам, по-сути являлся недействующим) являлась одним из основных вариантов выхода Турции на республики Центральной Азии. Однако, следует отметить, что несмотря на большой интерес, который изначально испытывала Турция по отношению к Южному Кавказу в целом, и к Грузии в частности, Анкара не спешила устанавливать официальные военные связи с Тбилиси.<sup>1</sup> Доминантой

---

<sup>1</sup> Более того, здесь следует отметить, что на формирование политики Турции по отношению к Грузии, определенное воздействие на начальном этапе оказала негативная позиция северокавказских общин, поддерживавших, в силу этнической общности абхазскую сторону в грузино-абхазском конфликте. В дальнейшем, по мере замораживания конфликтов в Грузии и ряда иных факторов, Турцией стала вестись более сбалансированная политика, выражением которой явился видимый отход от однозначно проабхазских позиций. Так, например, в сентябре 1996г., МИД Турции, проинформировал представителей Абхазии в Стамбуле о том, что резидентам из данного отсоединившегося региона Грузии не может быть более позволено находиться в Турции с паспортами советского типа, выданными сухумскими властями. Все абхазы, желающие въехать в Турцию, должны отныне приобретать действительные грузинские паспорта из Тбилиси.». (см.: *Abkhazian Access to Turkey Curbed*, *The Jamestown Monitor*, Vol.2 (177), 24 September 1996).

тогда являлась политика экономического проникновения<sup>2</sup> и активизация в некоторых других сферах – например, религиозной.<sup>3</sup> Политика Анкары активизировалась лишь по мере замораживания конфликтов в Грузии, и практически параллельно появившихся сообщений об углеводородном изобилии ресурсов каспийского региона, что открывало перед Турцией, солидаризовавшейся на данном этапе с политикой США, большие перспективы для усиления собственного влияния. Как отмечает М.Челикбала: «Со временем, Турция начала принимать [более] активное участие в происходящих по-соседству развитиях. В качестве конкретного отражения данного политического изменения, Турция стала членом наблюдательной миссии UNOMIG из пяти стран в Грузии, которая была учреждена, чтобы обеспечивать податливость в соглашении о прекращении огня между Грузией и Абхазией с 1993 г».<sup>4</sup> Что касается

---

<sup>2</sup> Об этом более подробно см.: Егиазарян А. Грузия: структурные проблемы экономики и турецкая экономическая экспансия. (1994-2007.). Ереван-Москва, 2007; см. также нашу публикацию: Иванов В. Некоторые аспекты турецко-грузинского экономического взаимодействия: экономика, детерминированная политикой// Турция: энергетика и международные экономические связи. Аналитические записки, Выпуск 2, Ер., ГНКО, «Институт политических исследований», 2008, стр.134-148.

<sup>3</sup> Касательно религиозной сферы, имеется в виду попытка усиления турецкого влияния в мусульманонаселенных регионах Грузии и, в первую очередь, в Аджарии. Как известно, Аджария являлась единственной автономией в составе СССР, образованной в соответствии с религиозным, а не этническими признаком. Положения Карского договора от 13 октября 1921г., закрепили роль Турции, наряду с СССР в качестве протектора Аджарской АССР. После распада СССР, Турция, используя как момент географического соприкосновения, так и наличия мусульманской общины в Аджарии, посредством деятельности исламских проповедников, пыталась активизировать исламский фактор в автономии. Беспрецедентный рост молелен, посылка учеников в турецкие медресе и т.д. – все это свидетельствует о неослабном внимании Турции к внутригрузинским делам.

<sup>4</sup> Mithat Celikpala, From a Failed State to a Weak One? Georgia and Turkish-Georgian Relations//The Turkish Yearbook, Vol.XXXV, p.181. [http://www.politics.ankara.edu.tr/dosyalar/MMTY/36/7\\_mithat\\_celikpala.pdf](http://www.politics.ankara.edu.tr/dosyalar/MMTY/36/7_mithat_celikpala.pdf).

интереса и отношения Грузии к вопросу военно-политического и военно-технического сотрудничества с Турцией, то последняя практически изначально рассматривалась грузинскими политическими кругами сквозь призму налаживания Грузией военно-политических взаимоотношений с Западом и интеграции в евроатлантические структуры. Грузинскими политиками придавалось важное значение помощи Турции грузинским ВС в вопросе их модернизации и соответствия стандартам НАТО.<sup>5</sup> По мере усиления надежд, связанных с реализацией значимых геополитических проектов, все большего крена на Запад вектора внешнеполитического развития Грузии и определенного ослабления российских позиций на Южном Кавказе, позиции Турции и Грузии все более сближались, что привело их к установлению тесного сотрудничества и в военной сфере.

Началом установления официального военно-технического и военно-политического сотрудничества между Турцией и Грузией принято считать подписание 4 апреля 1996г., Соглашения о сотрудничестве в военной сфере. Данное соглашение явилось одним из 10 соглашений, подписанных в тот же день президентами С.Демирелем и Э.Шеварднадзе. Соглашение подразумевало передачу турецкого опыта для обучения грузинских ВС.<sup>6</sup> С этого момента, военно-техническое и военно-политическое сотрудничество между двумя странами стало развиваться поступательными темпами. В 1997г., также был заключен ряд договоров, в которых уже детально оговаривался

---

<sup>5</sup> В Грузии, в контексте желания избавления от внешнеполитического влияния Москвы, сотрудничеству с Турцией и, в том числе и в военной сфере, придавалось большое значение. Между тем, И.Мурадян, в одной из своих статей отмечал: «Из общения с грузинскими политиками и политологами можно сделать вывод, что в Грузии совершенно не задумываются над ситуацией, когда после вывода российских войск и неразмещения в стране войск государств НАТО Грузия может неожиданно оказаться в большой политической зависимости от Турции...». (см.: Мурадян И. Геоцивилизационный выбор Грузии.// Центральная Азия и Кавказ, № 2 (8), 2000, стр.95.).

<sup>6</sup> Turkish Press Review, April 5, 1996,

<http://www.byegm.gov.tr/YAYINLARIMIZ/CHR/ING/04/96x04x05.TXT>.

тот или иной вид помощи, предоставляемый турецкой стороной Грузии.<sup>7</sup> 1998г., также был в этом смысле весьма результативным. Во время визита турецкого премьер-министра М.Йылмаза в Тбилиси в марте 1998г, последний охарактеризовал Грузию в качестве «страны, с которой Турция имеет общие интересы, в направлении которых Турция будет расширять сотрудничество во всех сферах».<sup>8</sup> А 15 апреля 1998 г. Генштаб ВС Турции подписал с Министерством обороны Грузии Меморандум о взаимопонимании в вопросах военного сотрудничества. Данный документ предусматривал турецкую помощь в формировании соответствующей материально-технической базы Грузии и оказание организационно-методической помощи в подготовке офицерских кадров для ее вооруженных сил. Помимо этого, грузинские военнослужащие получили возможность обучения в военно-учебных заведениях Турции. Кроме того, в грузинском секторе Черного моря начали регулярно проводиться совместные турецко-грузинские военно-морские учения, в ходе которых отрабатывались операции по обеспечению безопасности будущих нефтепроводов из Каспия по южному маршруту.<sup>9</sup> В 1998 году из Грузии в Турцию для прохождения учебы был направлен первый поток военнослужащих. С того времени, в Военной академии Турции ежегодно проходит обучение от 30 до 60 грузинских офицеров. Помимо этого, Турцией стали выделяться также финансовые гранты, направленные как на восстановление и модернизацию ряда объектов военной инфраструктуры Грузии, так и с целью снабжения военно-техническими средствами грузинских ВС. Так, в 1998г. Турция выделила 4 гранта вооруженным силам Грузии, на общую сумму в \$ 5,5 млн. На эти средства были построены спорткомплекс Объединенной военной академии Грузии,

---

<sup>7</sup> Mithat Celikpala, Ibid, p.189.

<sup>8</sup> E.Karagiannis, Turkish-Georgian partnership and the pipeline factor. //Journal of Southern Europe and the Balkans, 2004, №1, Vol.6, p.19.

<sup>9</sup> См.: Россия и Закавказье в современном мире. М., 2002. С. 356.



электронный мир учебного центра в Гори, а в Тбилиси открыта военная гостиница).<sup>10</sup> В марте 1999 г., было заключено очередное соглашение, согласно которому турецкие офицеры должны были организовать учебные курсы для грузинской военной полиции и погранвойск.<sup>11</sup> Как уже было отмечено, процесс укрепления турецко-грузинских военно-политических связей протекал параллельно со сворачиванием грузино-российских отношений в военной сфере. Так, на Стамбульском саммите ОБСЕ, в 1999г. (ноябрь) Грузия, наряду с Азербайджаном и Узбекистаном отказалась пролонгировать ДКБ и заодно, поставила вопрос о выводе российских баз со своей территории.<sup>12</sup> В том же, 1999г., по настоянию Грузии, российская сторона окончательно передала функции контроля над турецко-грузинской границей грузинским пограничникам.<sup>13</sup> 17 ноября 1999г. в Тбилиси состоялось подписание очередного турецко-грузинского протокола о выделении гранта на модернизацию ВС Грузии. Всего, в 1999г., Турция выделила Грузии гранты в размере \$ 2,1 млн. на реализацию 8 программ по модернизации ВС Гру-

---

<sup>10</sup> [http://infospace.narod.ru/1arhiv/news10\\_02\\_2001.htm](http://infospace.narod.ru/1arhiv/news10_02_2001.htm).

<sup>11</sup> Nasuh Uslu, *The Russian, Caucasian and Central Asian Aspects of Turkish Foreign Policy in the Post Cold War Period*//*Alternatives: Turkish Journal of International Relations*, Vol.2, No. 3&4, Fall&Winter 2003, p.172.

<sup>12</sup> В контексте Адаптированного Д.ОБСЕ, стороны договорились, что РФ обязалась вывести до 31 декабря 2000г. с принадлежащих ей баз в Вазуани и Гудаута вооружение и военную технику и ликвидировать эти базы до 1 июля 2001г. (см.: *Final Act of the Conference of the States Parties to the Treaty on Conventional Armed Forces in Europe*//*SIPRI Yearbook 2000*. SIPRI: Oxford University Press, 2000. p. 645-646.).

<sup>13</sup> Как отмечает П.А.Белов: «Начиная с 1996г. руководство Грузии все чаще стало делать заявления о необходимости поэтапной передачи охраны государственной границы Грузии ее собственными Пограничными силами и постепенном выводе российской пограничной группировки. В 1997г. российские пограничники передали грузинской стороне функции пограничного контроля... 1 ноября 1999г. все подразделения ПГ ФПС России были выведены с территории Грузии». (П.А.Белов. *Пограничное сотрудничество между РФ и Грузией*//*Грузия: проблемы и перспективы развития*, Т.2, М.: РИСИ, 2002, стр. 21-22.).

зии. Наиболее крупные из них – модернизация Марнеульского военного аэродрома, Коджорского учебного центра министерства обороны, адаптация системы связи в грузинской армии к требованиям НАТО, а \$ 700 тыс. получили грузинские пограничники.<sup>14</sup> С 1999г, грузинские ВС начали принимать участие в миротворческих операциях KFOR на Балканах. Причем, данный процесс также увязывался с поддержкой турецкой стороны. Так, за исключением выплаты зарплат, Турция финансировала участие грузинского взвода в рамках миротворческой операции в Косово, где тот находился под общим оперативным командованием турецкого батальона.<sup>15</sup> По мере ослабления российских позиций на Южном Кавказе, инициативность Турции на данном направлении все возрастала. В январе 2000г., Турция, устами своего президента С.Демиреля озвучила Пакт стабильности на Южном Кавказе, (по типу Пакта стабильности на Балканах) который нашел положительный отклик в Грузии. Однако, явное желание Турции замкнуть на себе все инициативы в данном регионе, а также противоположные позиции разных региональных и международных акторов сделали эту идею недействующей.<sup>16</sup>

23 июня 2000г, во время визита турецкой делегации во главе с тогдашним начальником Генштаба Турции, генералом Х.Киврикоглу между Турцией и Грузией было заключено новое

---

<sup>14</sup> Минасян С. Военно-политические аспекты региональной безопасности и проблемы контроля над вооружениями на Южном Кавказе. [http://www.noravank.am/file/article/120\\_ru.pdf](http://www.noravank.am/file/article/120_ru.pdf).

<sup>15</sup> Svante E.Cornell, Roger N.McDermott, Regional Security in the South Caucasus: The Role of NATO. The Central Asia-Caucasus Institute, 2004, p. 25.

<sup>16</sup> Вообще, Турция неоднократно пыталась (хотя и весьма осторожно), внедриться в процесс миротворчества и медиаторства в южно-кавказских конфликтах. Так, например, по под эгидой турецкой стороны (относительно Южной Осетии турецкие инициативы не выходили за рамки самых общих деклараций) 7-9 июня 1999г. в Стамбуле, состоялись грузино-абхазские переговоры, по поводу конфликта в Абхазии. (см.: "Abhazy'a'y'a İstanbul Barışı", Milliyet, 9 June 1999). Еще до этого, как уже было отмечено, турецкая сторона с 1993г., принимает участие в миссии UNOMIG.

военное соглашение. В соответствии с данным соглашением, Грузии должен был быть выделен грант, в размере \$ 2,8 млн. для постройки военных учебных центров в Коджори и Гори и полигона для стрельбы возле Тбилиси, реконструкции военных баз в Вазиани и Марнеули и обучения грузинских военных летчиков в военно-летных учреждениях Турции.<sup>17</sup> А 17 октября 2000г. в Анкаре был подписан нашумевший протокол, предусматривавший выделение турецкой стороной гранта в размере \$ 1 млн. 125 тыс. на проведение работ по модернизации Марнеульского аэродрома (расположен в 40 км. от Тбилиси. Протокол так и назывался: “О модернизации и эксплуатации Марнеульского аэродрома”). На эти средства, должна была быть реконструирована взлетно-посадочная полоса, отремонтированы два самолета и построены два ангара. Со своей стороны, Грузия обязалась в течение пяти лет обеспечивать турецким самолетам на аэродроме в Марнеули бесплатное и внеочередное обслуживание. С этой целью там будет нести службу группа турецких военнослужащих.<sup>18</sup> Вообще, следует отметить, что сотрудничество двух стран в рассматриваемой сфере приняло планомерный характер с 2000г., так как именно с этого момента начали подписываться ежегодные планы о двустороннем военном сотрудничестве. В этом смысле, хотя турецкая сторона и стремилась синхронизировать на определенном этапе свое сотрудничество с Грузией в рамках программ НАТО, однако, уже тогда, двустороннее военное сотрудничество между обеими странами стало принимать самостоятельный характер (т. е., вне зависимости от чьих-либо сопутствующих интересов). Кроме того, в чисто геополитическом отношении, расширение турецко-грузинских, а также турецко-азербайджанских связей рассматривалось турецкой стороной в качестве попытки сбалансирования как влияния

---

<sup>17</sup> S. Larrabee, I. Lesser, *Turkish Foreign Policy in Age of Uncertainty*, Santa Monica, 2003, p. 105-106.

<sup>18</sup> Интерфакс, 17.10.2000.

РФ, в перспективе Ирана, развивающихся российско-армянских отношений, так и установления собственного влияния в регионе. Это дало повод многим экспертам заговорить о формировании оси Турция-Грузия-Азербайджан. Между тем, армянской стороной неоднократно указывалось на опасность развития турецко-грузинских и турецко-азербайджанских отношений (в первую очередь, в военно-политической сфере) так как это могло привести к нарушению регионального баланса сил.<sup>19</sup> С грузинской стороны также, как уже было отмечено, наблюдалась большая заинтересованность в блокировании с Турцией в контексте ухудшения взаимоотношений с РФ. Визит Э.Шеварднадзе в Турцию 29-30 января 2001г., совпал с кризисом вокруг Панкиси. А 29 января 2001г., министры обороны Грузии и Турции Д.Тевзадзе и Э.Чакмакоглу подписали соглашение о сотрудничестве в сфере военного производства, предусматривающее совместное производство некоторых видов оружия. Турция, в частности, активно интересовалась тбилисским авиационным заводом, производящим военные самолеты. Кроме того, военная промышленность Грузии освоила производство минометов разных типов и калибров. Грузия и Турция достигли также договоренности об отказе использования противопехотных мин в десятикилометровой зоне на границе. Во время визита, президенты Э.Шеварднадзе и А.Н.Сезер подписали Декларацию о сотрудничестве, положения которой перекликались с Пактом стабильности на Кавказе. Во время визита Э.Шеварднадзе в Турцию премьер-министр Б.Эджевит подчеркнул «стратегический характер» двусторонних взаимоотношений, добавив, что «проблемы Грузии являются нашими проблемами. Безопасность Грузии является нашей безопасностью». Турецкая пресса объясняла данное заявление в качестве отражения намерений Турции по созданию турецко-

---

<sup>19</sup> Так, например, 25 апреля 2001г., министр ИД РА В. Осканян, заявил, «что это может нарушить региональный баланс». (см.: "Georgian-Turkish Military Ties Disturb Armenia", RFE/RL Newsline, 25 April 2001.).

грузинской оси для противопоставления по особым взаимоотношениям между Арменией и Россией.<sup>20</sup> В начале июня 2001г. в Грузии побывала представительная делегация генерального штаба Турции, в ходе визита которой было подписано соглашение о предоставлении этой натовской страной военной помощи Тбилиси на сумму \$ 2,5 млн. Вслед за этим визитом последовал очередной – на этот раз министра обороны Турции Э.Чакмакоглу. На встрече со своим грузинской коллегой Д.Тевзадзе, глава турецкого военного ведомства обсудил, как разумно распределить выделенные средства, чтобы и турецкие военно-политические интересы в этой стране были учтены. Основной темой грузино-турецких переговоров являлись вопросы, связанные с помощью Анкары в вопросах реформирования грузинской армии. Предполагалось, что из выделенных Турцией денег примерно \$ 2 млн. пойдет на оснащение и перевооружение сухопутных войск грузинской армии, плюс будет профинансирована деятельность военной академии в Тбилиси и восстановлен аэродром в Марнеули. Еще \$ 500 тыс. предназначалось для финансирования деятельности грузинских пограничников. За минувшие 4 года это являлось уже 4 грантом, выделенным Турцией, при этом общая сумма турецкой помощи Грузии составляла \$ 14,6 млн. (В 1998 г. турецкий грант составил 5,5 млн., в 1999 г. - 2,6 млн. и в 2000 г. - \$ 4 млн.).<sup>21</sup> В сентябре 2001г. Турцией было передано грузинской стороне 2 вертолета УН-1Н «Ирокез». В ходе осеннего визита тогдашнего министра обороны Грузии Г.Бежуашвили в Анкару была также достигнута договоренность о том, что на базе завода «Арсенал» (Тбилиси) при финансовой поддержке Турции будет создан современный производственный комплекс по ремонту военной техники и вооружений. Однако, как отмечает М.Челикбала: «Но вновь, без поддержки Запада, казалось, что для Тур-

---

<sup>20</sup> Mithat Celikpala, op. cit., p.192.

<sup>21</sup> Мухин В. Аэродром в Марнеули будут обслуживать турки. Общая военная помощь Грузии со стороны Анкары превысила 14 млн. долл. [http://www.ng.ru/cis/2001-07-05/5\\_airport.html](http://www.ng.ru/cis/2001-07-05/5_airport.html)).

ции будет очень тяжело уравнивать Россию и Иран. Как результат, Турция предложила, чтобы существующее предварительное трехстороннее соглашение по экономическому сотрудничеству, по восстановлению Грузии между Анкарой, Вашингтоном и Тбилиси, заключенное в январе 2001г., следует расширить, чтобы включить туда политические и военные дела».<sup>22</sup> Данное требование нашло отклик в Вашингтоне, и Грузию посетила военная делегация США, чтобы дать оценку происходящему в настоящее время как двустороннему (Грузия-США), так и трехстороннему (США-Грузия-Турция) военному сотрудничеству и дать советы по запланированным реформам грузинских ВС. Однако, после событий 11 сентября 2001г, когда под лозунгом борьбы с терроризмом началось прямое вовлечение США в южно-кавказский регион, турецкая сторона, хотя и не декларируя напрямую свое беспокойство перспективами установления непосредственных и более прочных связей американцев со странами региона, тем не менее, начала относиться к инициативам последних с большой долей осторожности. Стало очевидным, что США, в рамках своей южно-кавказской политики намереваются напрямую курировать процесс становления ВС Грузии. Как результат данных развитий, в конце февраля 2002г., военный персонал и техника США прибыли в Грузию в качестве части давно существовавшего плана по укреплению независимости Грузии. Это было началом Грузинской программы Обучи и Оснасти. (GTEP).<sup>23</sup> Основной целью программы являлось поддержка Грузии путем подготовки эффективных и мобильных подразделений для борьбы против международного терроризма. США начали данную програм-

---

<sup>22</sup> Mithat Celikpala, *op. cit.*, p.193.

<sup>23</sup> Программа GTEP стоимостью 64 млн долларов США призванная усилить грузинские ВС, началась весной 2002г. Обучение проводилось в следующих подразделениях: 12-й пехотный батальон «Коммандос», 23-й Сачхерский горно-стрелковый батальон, 11-й Телавский пехотный батальон, 13-й Шавнабадский пехотный батальон, смешанная бронетанковая рота.

му весной 2002г. Помимо этого, в рамках этой программы грузинские силы должны были подготавливаться для охраны БТД. Позже, данный проект был связан с натовской программой ПРМ. Конечно, Турция также не осталась в стороне от данных развитий (это, в частности, проявилось в создании Turkish Partnership for Peace Training Centre (TU PTC), который с 2002г., же начал проводить обучающие курсы в ряде стран и, в том числе и в Грузии, в рамках проекта «Increasing the Efficacy of TU PTC in NATO»<sup>24</sup>. Вдобавок к вышеприведенным развитиям, начиная с 2002г., Турция помогает реструктурировать Национальную военную Академию Грузии по натовским стандартам. В ходе визита в Грузию начальника Генерального штаба Турции Х.Курвиоглу в 2002г. была достигнута договоренность о выделении гранта в \$ 2,8 млн. на совершенствование тыловой сферы грузинской армии. Дополнительно, в 2002г. Турцией было передано Грузии военное снаряжение, в основном современные средства связи, для оснащения 4 батальонов грузинской армии, подготавливаемых в рамках американской программы «Обучи и оснасти». (GTEP)<sup>25</sup>. Здесь следует отметить, что хотя турки и приняли участие в обучении грузинских ВС наряду с американцами в контексте вышеуказанных программ, однако ряд шагов, нацеленных на возможность маневрирования турецкой дипломатией все же был осуществлен. Более того, как отмечает Р.Сафростян: «Осень 2001 – весна 2002 года явились переломным периодом как для всего региона, так и для российско-турецких отношений. Именно тогда, как реакция на террористическую атаку против США в сентябре 2001 года, начались два процесса геополитического характера, которые продолжают по сей день. Началом первого из них стал дипломатический документ, который, однако, остался незамеченным даже многими специа-

---

<sup>24</sup> см.: официальный сайт турецкого центра Turkish Partnership for Peace Training Centre (TU PTC): <http://www.bioem.tsk.mil.tr>.

<sup>25</sup> Турция выделила около 3 миллионов долларов на модернизацию тыловой сферы грузинской армии // РИА «Ореанда», 11.06.2002.

листами. Этим документом стало подписанное в Нью-Йорке в ноябре 2001 года между Россией и Турцией «Соглашение о сотрудничестве в Евразии», по которому предусматривалось проведение периодических консультаций между внешнеполитическими ведомствами двух государств для урегулирования региональной политики с целью ее определенной координации. Фактически, две региональные державы отреагировали на еще только зарождавшиеся намерения единственной сфердержавы – США, расширить сферы своего влияния на веразийском континенте под предлогом борьбы с исламским терроризмом. Вышеотмеченные намерения США материализовались в регионе весной 2002 года, когда началось размещение американских советников в Грузии.<sup>26</sup> Опасение потери собственной роли в глазах Запада и США, побудили Турцию, по замечанию того же автора пойти на то, что он охарактеризовал как «геостратегическое перемирие».<sup>27</sup> Наряду с этим, сотрудничество Грузии и Турции в военно-политической сфере стало приобретать, как уже было отмечено, (во всяком случае, с турецкой стороны, подобного рода тенденция существовала), все более самостоятельный характер, что было оформлено очередной серией соглашений, протоколов, и иного рода дипдокументов, нацеленных на дальнейшее развитие и углубление двусторонних связей именно в рассматриваемой сфере. 18 апреля 2003г. в Тбилиси на переговоры по вопросам безопасности, в частности посвященные «путям дальнейшего развития военного сотрудничества», прибыла представительная турецкая делегация во главе с начальником генштаба Турции Хильми Озкоком. По информации турецких и грузинских СМИ, Озкок и министр обороны Грузии Давид Тевзадзе «в деталях» обсудили вопросы о подготовке грузинского военного персонала турецкими инструкторами, о выделении грузинской армии финансо-

---

<sup>26</sup> Цитируется по пространному резюме на русском яз.: Р.Сафрастьян. Россия и Турция на Южном Кавказе: Геостратегическое перемирие?// 21-й Век, № 4 (10), 2005, стр. 45-46.

<sup>27</sup> Там же, стр. 46.



вой помощи на 2003-2004 гг. и о модернизации грузинской военно-воздушной базы. Турция высказала желание помочь в подготовке морского антитеррористического подразделения в составе грузинской черноморской флотилии.<sup>28</sup> В целом же, как отмечалось в ряде СМИ, «Только с 1998 по 2004 гг. Турция оказала Грузии безвозмездную военную помощь на сумму 37 млн. 400 тыс. долларов».<sup>29</sup>

После «революции роз», и прихода нового грузинского руководства к власти, сотрудничество в военно-политической и военно-технической сфере между обеими странами не только не было свернуто, но еще более углубилось. Одним из первых шагов М.Саакашвили после его избрания в январе 2004г., стало отправление посла в Турцию с целью заверения турецких официальных лиц о его приверженности к трубопроводу БТД. Кроме того, в начальные месяцы своего правления, М.Саакашвили, подтвердил приоритетность Турции во внешней политике Грузии, когда во главе значительной делегации, состоявшей из группы министров, офицеров и бизнесменов, 20 мая 2004г., посетил Турцию с визитом. Во время визита М.Саакашвили встретился с премьер-министром Турции Р.Т. Эрдоганом, и с начальником турецкого генштаба. В ходе данных встреч также было уделено внимание вопросам военно-политического сотрудничества между двумя странами.<sup>30</sup> Тогда же, в 2004г. турками была завершена частичная реконструкция Марнеульского аэродрома и 25 декабря состоялась церемония его переда-

---

<sup>28</sup> <http://www.civil.ge>.29.04.2003. О собственно ВМС Грузии и службе ее береговой охраны, более подробно см.: Чуприн К. Морские амбиции Тбилиси. В ВМС Грузии десятки катеров и 531 моряк. 11.04.2008.[http://nvo.ng.ru/forces/2008-04-11/3\\_tbilisi.html](http://nvo.ng.ru/forces/2008-04-11/3_tbilisi.html).

<sup>29</sup> Арешев А. Вооруженные силы и внешнеполитический курс Турции на современном этапе.//Вопросы стратегии и безопасности. Составитель, редактор, автор предисл. и примечаний А.Айвазян, 2-е изд., Е., «Лусакн», 2007, стр.123-124; см. Также: Финмаркет (Москва). 19 октября 2004.).

<sup>30</sup> <http://www.civil.ge>. 21.05.2004.

чи МО Грузии. Как сообщалось, на его реконструкцию турецкая сторона потратила около \$3 млн.<sup>31</sup>

9 мая 2005г. был подписан очередной документ, согласно которому Анкара, в целях содействия Грузии в сфере переподготовки ее ВС, выделяла последней очередной грант в размере \$ 1,55 млн.<sup>32</sup> 19 ноября 2005г. состоялась церемония открытия военной базы в Сенаки, которая была построена в соответствии со стандартами НАТО и рассчитана на 3500 военнослужащих. (Строительство началось в апреле 2005г.) Строила – грузино-турецкая компания International Building Company.<sup>33</sup> Продолжалась также помощь, оказываемая турецкими специалистами в обучении грузинского спецназа. Так, весной 2005г. в рамках турецко-грузинской программы сотрудничества в военной сфере, 39 грузинских военнослужащих батальона специального назначения «Коджори» отправились в турецкий город Измир, где прошли курс специального обучения на базе центра парашютной подготовки.<sup>34</sup> Увеличение роли Турции в вопросе строительства грузинских ВС было зафиксировано и в Концепции национальной безопасности Грузии, где характеру партнерства с ней был придан стратегический характер.<sup>35</sup>

28 февраля 2006г. между Турцией и Грузией был подписан очередной Протокол об осуществлении логистики. Тогда, в МО Грузии прибыла делегация из 5 членов, возглавлявшаяся военным атташе, бригадным генералом Ю.Озтекином. Выделенный тогда же в рамках Протокола трансферт предусматривал выделение Грузии материально-технической помощи на сумму 1,8 млн. долларов. Помощь была предоставлена для реализации различных проектов: экипировка Академии МО и командования ВМФ,

---

<sup>31</sup> Там же.

<sup>32</sup> см.: новостной архив Министерства обороны Грузии: <http://www.mod.gov.ge>. 09.05.2005.

<sup>33</sup> Там же. 09.05.2005.

<sup>34</sup> Грузинский спецназ будет обучаться в Турции. 28.04.2005. <http://www.defense-ua.com/rus/news/?id=16639&prn=yes>).

<sup>35</sup> National Security Concept of Georgia. <http://www.mod.gov.ge/?l=E&m=3&sm=1>

экипировка специальных сил с целью приведения их в соответствие со стандартами НАТО, снабжение техническое Генштаба и дальнейшая модернизация Марнеульского аэродрома.<sup>36</sup> 5 июля 2006г. начала строиться новая военная база в Гори, рассчитанная на 4000 военного персонала. Строила все та же грузино-турецкая компания International Building Company (была открыта 18 января 2008г.).<sup>37</sup> 28 ноября 2006г. был подписан очередной Договор об осуществлении финансовой поддержки в МО Грузии. Согласно документу, Турция выделяла Грузии \$ 1,8 млн. Одна часть денежных средств досталась Грузии в виде технико-материальной помощи. Другая – пошла на покрытие расходов грузинских миротворцев в Косово, находящихся под командованием турецкого батальона.<sup>38</sup>

Весной 2007г. Турция предоставила Грузии очередной грант на сумму \$ 2,1 млн. Тогда ВС Грузии были переданы материально-технические средства в рамках гранта, предусмотренного по заключенному в 2005г. турецко-грузинскому соглашению. Торжественная церемония передачи состоялась 3 мая на Марнеульском военном аэродроме В тот же день на Марнеульском военном аэродроме состоялась церемонии закладки фундамента зданий военной эскадрильи и штаба. Причем, согласно договору, 2 млн. были предоставлены в виде средств связи, а 100 тыс. – собственно деньгами. Помимо этого, грузинской стороне были предоставлены устройство навигации NDB, приемная антенна, аппаратура связи для военно-морских кораблей UHF и двигатели 40HP для кораблей военного назначения, а также 120 комплектов униформы для военнослужащих ВМС и 10 комплектов полной амуниции для военных ныряльщиков.<sup>39</sup> Посетившая Грузию 6-8 июня 2007г. очередная делегация ВС Турции, во главе

---

<sup>36</sup> см.: новостной архив Министерства обороны Грузии: <http://www.mod.gov.ge>.28.02.2006.

<sup>37</sup> Там же. 05.07.2006.

<sup>38</sup> Там же.

<sup>39</sup> Турция предоставила ВС Грузии техническую помощь. <http://www.regnum.ru>. 03.05.2007.

с начальником департамента образования командования ВС А.Семерджи, предложила руководству ВС и Национальной обороны Грузии разработку программ по обмену студентами, для повышения их образовательного уровня в военной сфере.<sup>40</sup> 23 августа 2007г., было объявлено, что Грузия присоединилась к системе обмена данными в рамках НАТО. (NATO Air Situation Data Exchange (ASDE) system.) Грузия присоединилась к данной программе через Турцию, по случаю чего был подписан специальный меморандум о взаимопонимании, между Грузией, Турцией и НАТО.<sup>41</sup> 17 октября 2007г., Грузию посетила очередная делегация турецких ВС с трехдневным визитом, возглавляемая бригадным генералом от ВВС Б. Кокабабуком. В рамках двусторонней программы сотрудничества, турецкая сторона завершила строительство штаб-квартиры эскадрильи, которое было начато в июне 2007г. Открытие новой штаб-квартиры состоялось 18 октября 2007г. на Марнеульском аэродроме.<sup>42</sup> В декабре 2007 г. оборонными ведомствами двух стран был подписан очередной протокол о безвозмездном выделении Турцией на 2008 г. \$ 2 млн 125 тыс. Основная часть этих средств пойдет на модернизацию и переоснащение аэродрома Марнеули, грузинских сил морской обороны, подразделений спецназначения, тылового и инженерного обеспечения, академии Минобороны.<sup>43</sup> 4 февраля 2008г., в Грузии был подписан очередной план военного сотрудничества на 2008г.<sup>44</sup>

14 марта 2008г., турецкая сторона, на базе военного соглашения, заключенного в 2005г., и в рамках Протокола логистической реализации, предоставила грузинским ВМФ оче-

---

<sup>40</sup> ВС Турции и Грузии обсудили вопросы в сфере военного образования. <http://www.regnum.ru.06.06.2007>.

<sup>41</sup> <http://www.newsgeorgia.ru.23.08.2007>.

<sup>42</sup> см.: новостной архив Министерства обороны Грузии: <http://www.mod.gov.ge.18.10.2007>.

<sup>43</sup> Арунова М. Турция-Грузия: сотрудничество и проблемы. <http://www.iimes.ru/rus/stat/2008/15-10-08c.htm>.

<sup>44</sup> см.: новостной архив Министерства обороны Грузии: <http://www.mod.gov.ge.04.02.2008>.

редной грант в виде радио-технических средств навигации для грузинских ВМФ. Общая сумма выделенной помощи составила \$ 255 371.<sup>45</sup>

Продолжались также совместные турецко-грузинские учения. Так, 11 апреля 2008г. турецкие боевые корабли – фрегат TCG ORUCREIS (F-245) и авизо TCG BOZCAADA (F-500) посетили Батумский порт. 14 апреля корабли покинули порт, с целью проведения учений, в которых должны быть вовлечены грузинские корабли Иверия и Местия. Корабли турецких ВМС используют Батумский порт в качестве такового, в соответствии с соглашением, о двустороннем сотрудничестве, подписанном между Турцией и Грузией в 2008г.<sup>46</sup> Таким образом, вплоть до войны в Южной Осетии Турция активно способствовала милитаризации Грузии и, по-существу, является одним из тех государств, которые несут в себе долю вины в вооружении грузинских ВС и способствованию нарушения военно-политического баланса в регионе. Как следует из вышеизложенного, турецко-грузинское сотрудничество охватывало практически все направления военно-технической и военно-политической сферы, начиная от помощи в военно-технической сфере, включая предоставление ряда технико-материальных средств, вплоть до организации подготовки и обучения военных кадров и проведения совместных учений.<sup>47</sup>

---

<sup>45</sup> Gurcistana'a Askeri Yardım, [http:// www.askerhaber.com](http://www.askerhaber.com), 17.03.2008.

<sup>46</sup> см.: новостной архив Министерства обороны Грузии: <http://www.mod.gov.ge>. 11.04. 2008.

<sup>47</sup> В целом, согласно данным, размещенным на сайте МО РФ, Турцией Грузии в период с 1997 по 2007гг., было предоставлено финансовой помощи на сумму около 45 млн. долл. Кроме того, предоставлена финансовая помощь в размере 2,65 млн. долл. для закупки систем ПВО. (Более подробно см.: Военная помощь Грузии со стороны иностранных государств. [http://www.mil.ru/files/table\\_15\\_05.doc](http://www.mil.ru/files/table_15_05.doc).) Конечно, размеры турецкой помощи грузинской армии несопоставимы с той же турецкой помощью, оказанной Азербайджану, (о турецко-азербайджанском военно-техническом сотрудничестве, более подробно см.: Հոլիւմիլյան Լևոն, Թուրք-ադրբեջանական ռազմական համագործակցությունը Ադրբեջանի զինված ուժերի բարեփոխումների համատեքստում. ՀՀ ԳԱԱ

Одним из основных военно-политических итогов войны в Южной Осетии стало усиление позиций Москвы в регионе. Турецкая дипломатия, всегда очень чутко реагирующая на политические изменения, происходившие в регионе, довольно оперативно отреагировала и на этот раз. Пресловутая Платформа по стабильности и сотрудничеству, предложенная Р.Т.Эрдоганом, отражала как опасения Турции по поводу безопасности своих коммуникационных путей и внутренней стабильности, так и нараставшее в турецких политических кругах раздражение по поводу политики США, неуступчивости ЕС и т.д.<sup>48</sup> По всей видимости, основным мотивом, натолкнувшим стороны на сотрудничество (быть может очень краткосрочное, учитывая всю историю русско-турецких отношений), являлось общее неприятие, на данном этапе политики США в регионе. Ограничившись заявлениями о поддержке территориальной целостности Грузии и сделав своеобразный реверанс в сторону Москвы, Турция стремится сохранить свои позиции в регионе. Турецкая дипломатия вряд ли отказалась от идеи закрепления в Грузии и использования ее территории и в качестве плац-

---

Արեւելազիտուրքյան հնարարուտ, Մերձավոր Արևելք, Պատմություն, քաղաքականություն, մշակույթ, Հոդվածների ժողովածու, 4, Երևան 2007, էջ 77-81) однако, не следует упускать из виду то немаловажное обстоятельство, что территория Грузии является транзитом во всех отношениях, а военные цели – служат геополитическими, то есть, являются в данном конкретном случае своеобразными подцелями.

<sup>48</sup> В самой Грузии без особого энтузиазма отнеслись к турецкой идее. Так, М. Саакашвили лишь ограничился следующим заявлением: «Предложенная Анкарой Кавказская платформа безопасности пока еще четко не сформулирована, но мы всегда приветствуем многосторонние механизмы. Думаю, что не должно быть каких-либо эксклюзивных региональных механизмов. Но считаю, что какое-либо дополнение к уже существующим структурам ЕС, которые будут открыты для всех позитивных игроков в регионе можно будет лишь приветствовать». <http://www.civil.ge.22.03.2009>. Более подробно о турецкой инициативе и сопутствующих аспектах, см., например: Igor Torbakov, *The Georgia Crisis and Russia-Turkey Relations*, The Jamestown Foundation, Washington DC, 2008; см. также: Bulent Aliriza, *Turkey and the Crisis in the Caucasus*, CSIS, September 9, 2008.

дарма и в качестве геополитического транзита. Да и сама политика Турции, ориентированная на помощь ВС Грузии в вопросе их стандартизации к требованиям НАТО носит двойственный аспект. С одной стороны – Турция тем самым балансирует влияние РФ, а также наряду с США вовлекается в строительство грузинских ВС, а с другой – получает возможность для политического маневра, путем неофициального торможения членства Грузии в НАТО. Так, В. Конончук отмечает: «Неофициально, как бы то ни было, Турция нацелена на торможение данного процесса, чтобы не антагонизировать свои взаимоотношения с Россией».<sup>49</sup> Однако, по всей вероятности, до поры до времени, турки будут действовать более осторожно. А внешняя политика Грузии может быть поставлена перед довольно неприятной дилеммой: с уменьшением удельного веса американской политики на Южном Кавказе в целом, и в Грузии в особенности, она рискует либо очутиться под слишком большим влиянием Турции, или турецко-азербайджанского альянса, (и многие аспекты турецко-грузинского многостороннего взаимодействия, в условиях, когда собственно грузинские ВС находятся в состоянии кризиса, могут быстро трансформироваться в негативные,) либо, внешнеполитический вектор развития Грузии вполне вероятно, что может измениться. Впрочем, на сегодняшний день, даже возможные последствия войны в Южной Осетии не берется предугадать никто. Но в том, что для Турции вряд ли имеются тайны, касательно состояния грузинских ВС (причем во всей динамике их становления и дальнейшего развития) вряд ли приходится сомневаться. Причем, на 2009г., уже подписан очередной план двустороннего сотрудничества между Турцией и Грузией.<sup>50</sup>

---

<sup>49</sup> Wojciech Kononczuk, A Caucasian ally? Turkish-Georgian Relations. CES Report, Warsaw, 2008, p. 38.

<sup>50</sup> см.: новостной архив Министерства обороны Грузии: <http://www.mod.gov.ge>.26.02.2009.

## ԹՈՒՐԷ- ԱՄԵՐԻԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ 2003-2008ԹԹ.

1947թ. ԱՄՆ-ում «Թրումենի հայեցակարգի» հռչակումից հետո Թուրքիան դասվեց ԱՄՆ մերձավորագույն դաշնակիցների թվում՝ միջազգային հարաբերություններում գրեթե միշտ հանդես գալով ԱՄՆ դիրքորոշումների աջակցությամբ և համապատասխանաբար օգնություն և պաշտպանություն ստանալով ԱՄՆ-ից: Սակայն սկսած 2003թ. մենք ակնատես ենք թուրք-ամերիկյան հարաբերությունների աստիճանական վատթարացման գործընթացին: Թուրքիայում ակտիվորեն քննարկվում է երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումների փոփոխման հնարավորությունը, ընդ որում հավանական սցենարներից է ԱՄՆ-ից կախվածության թուլացումը և վերջինիս մրցակիցների հետ հարաբերությունների խորացումը:

Տասնամյակներ շարունակ թուրք-ամերիկյան հարաբերությունները բնորոշվել են որպես ռազմավարական, սակայն այսօր նման բնորոշման համար հիմքերը բավականին քիչ են՝ ելնելով թե՛ իրաքյան պատերազմի, և թե՛, ինչն ավելի կարևոր է՝ արտաքին քաղաքական առաջնահերթությունների տարբեր ընկալումներից: Արդյունքում Սառը պատերազմի առաջին օրերից մինչ այժմ արմատական վերազնահատման չենթարկված թուրք-ամերիկյան հարաբերությունները լուրջ հարցականի տակ են<sup>1</sup>: Հարաբերությունների վատթարացումն ակնհայտ է նաև թուրք վերլուծաբանների և մեկնաբանների զեկույցներում և հրապարակային հայտարարություններում: Անգամ այնպիսի արևմտամետ մեկնաբան, ինչպի-

---

<sup>1</sup> Ian O. Lesser, Turkey, the United States and the Delusion of Geopolitics” Survival, Vol 48, No 3, Autumn 2006, p. 83, The same point is made in Soner Cagaptay, *Turkey at the Crossroads: Preserving Ankara’s Western Orientation* (Washington DC: Washington Institute For Near East Policy Studies, 2005)



սին Սեյֆի Թասհանն է, որը երկար ժամանակ հանդես էր գալիս Արևմուտքին ինտեգրվելու կոչերով, այժմ բացահայտորեն հայտարարում է, որ ԱՄՆ-ը չհայտարարված սառը պատերազմ է մղում Թուրքիայի դեմ<sup>2</sup>: Պատահական չէ, որ 2005թ. Թուրքիայում իրականացված սոցիոլոգիական հարցումների արդյունքում հարցվածների 80 տոկոսը կարծիք է հայտնել, որը տարածաշրջանում ԱՄՆ քաղաքականությունը սպառնալիք է Թուրքիայի անվտանգությանը<sup>3</sup>: Հարաբերությունների վատթարացման անուղղակի ապացույցներից է նաև այն փաստը, որ 2005թ. Թուրքիայում առավել շատ վաճառված գրքերից մեկը 2004թ. իրատարակված «Մետաղե Փոթորիկ» նովելն էր, որտեղ նկարագրվում էր թուրք-ամերիկյան ռազմական բախումը իրաքյան Քիրքուք քաղաքի վերահսկողության համար<sup>4</sup>:

Որո՞նք են երկու երկրների հարաբերություններում նկատվող նման փոփոխությունների պատճառները, և ինչպիսի՞ն է թուրք-ամերիկյան հարաբերությունների հեռանկարը կարճաժամկետ տեսլականում: Սույն հոդվածում կփորձենք ներկայացնել այս հարցադրումների պատասխանները: Միաժամանակ նշենք, որ մենք անդրադարձել ենք միայն երկկողմ քաղաքական հարաբերություններին՝ չվերլուծելով թուրք-ամերիկյան հարաբերությունների այնպիսի կարևոր բաղադրիչներ, ինչպիսիք են համագործակցությունը ռազմական ոլորտում, առևտրա-տնտեսական հարաբերություններն ու մշակութային շփումները:

Խոսելով թուրք-ամերիկյան հարաբերությունների աստիճանական վատթարացման մասին, կարելի է առանձնացնել նման զարգացումների երեք հիմնական պատճառներ: Առաջինը դա Թուրքիայի ներքաղաքական կյանքում տեղի ունեցող դինամիկ փոփո-

---

<sup>2</sup> Seyfi Tashan, “Is it a Cold War For Turkey?”, [http://www.foreignpolicy.org.tr/documents/270207\\_b.html](http://www.foreignpolicy.org.tr/documents/270207_b.html)

<sup>3</sup> Phillip Gordon and Omer Taspinar, “Turkey on the Brink”, Washington Quarterly, Vol 29, No 3, Summer 2006, pp. 65-66.

<sup>4</sup> Fiona Hill and Omer Taspinar, “Turkey and Russia: Axes of the Excluded?”, Survival, Vol 48, No 1, Spring 2006, p. 83.

խություններն են՝ որոնք նկատելի են հատկապես 2002թ. նոյեմբերին իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո: Եթե նախկինում թուրքական պետության բոլոր կարևորագույն ոլորտները վերահսկվում էին քեմալական վերնախավի կողմից, այժմ աստիճանաբար այդ վերնախավի ազդեցությունը թուլանում է ի հաշիվ նոր ձևավորվող էլիտայի, որը շատ ավելի մեծ կարևորություն է տալիս Թուրքիայի իսլամական ժառանգությանը, և որի տնտեսական հիմքը Անատոլիայում ձևավորված նոր տնտեսական վերնախավն է ի հակադրություն ավանդական «ստամբուլյան վերնախավի»: Թուրքիայի ներքաղաքական կյանքի այս արմատական փոփոխությունները որոշակի ազդեցությունն են թողնում թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա, թեև այդ ազդեցությունը միանշանակ չէ:

Երկրորդ կարևոր պատճառը «Սառը պատերազմի» ավարտն է և ԽՍՀՄ փլուզումը, որը հանգեցրեց երկու երկրներին միավորող կարևորագույն գործոններից մեկի՝ «խորհրդային սպառնալիքի» վերացմանը: «Սառը պատերազմի» ավարտից հետո Թուրքիայի և ԱՄՆ-ի մոտեցումները որոշակիորեն տարբերվում են ինչպես տարածաշրջանային զարգացումների, առկա և ապագա անվտանգության սպառնալիքների, այնպես էլ տարածաշրջանի առանձին պետությունների հետ հարաբերությունների խնդրում: Այս հանգամանքն ավելի ակնհայտ է Ռուսաստանի, Իրանի և Սիրիայի հանդեպ երկու երկրների դիրքորոշումների խնդրում:

Հարաբերությունների աստիճանական սառեցման երրորդ և, թերևս, ամենազլխավոր պատճառը 2003թ. ամերիկյան ներխուժումն է Իրաք, դրան հաջորդած իրադարձությունները և թուրքական կողմի դիրքորոշումը՝ առաջին հերթին քրդական հարցի կապակցությամբ:

Այժմ ավելի հանգամանորեն անդրադառնանք վերոհիշյալ պատճառներին առանձին-առանձին: Ինչպես նշեցինք, երկկողմ հարաբերություններում նկատվող լարվածության հիմնական պատճառներից մեկը թուրքական քաղաքական-պետական համակարգում նկատվող արմատական փոփոխություններն են, որոնց

հետևանքով ժամանակակից թուրք հասարակությունն ու պետությունը շատ ավելի դժվար ընկալելի են դարձել ԱՄՆ քաղաքական և վերլուծական շրջանակների համար: Աշխարհիկ քեմալականները (որոնք վերահսկում էին թուրքիայի ներքին և արտաքին քաղաքականությունը 1923թ. հանրապետության հռչակումից հետո) շարունակում են զգալի ազդեցություն ունենալ պետական տարբեր ինստիտուտների վրա, (քաղաքական համակարգում նրանց շահերը արտահայտում է ժողովրդա-հանրապետական կուսակցությունը), սակայն նրանք հարկադրված են իրենց ազդեցության մի որոշակի հատվածը զիջել այն քաղաքական ուժերին, որոնց հայացքները ձևավորվել են կրոնի ազդեցությամբ, որոնք սերում են Անատոլիայի աստիճանաբար հզորացող բիզնես շրջանակներից և որոշակիորեն հակադրվում «Եվրոպական թուրքիային»<sup>5</sup>: Այս քաղաքական հոսանքի վառ ներկայացուցիչն է «Արդարություն և զարգացում» կուսակցությունը: Կուսակցությունը ձևավորվեց 2002թ. թուրքիայի սահմանադրական դատարանի կողմից արգելված երկու իսլամական «Բարեկեցություն» և «Առաքինություն» կուսակցությունների հիման վրա: Արդեն 2002թ. նոյեմբերին կայացած ընտրություններում կուսակցությունն ստացավ ձայների 35 տոկոսը և ձևավորեց միակուսակցական կառավարություն: Էլ ավելի տպավորիչ էր «Արդարություն և զարգացում» կուսակցության հաղթանակը 2007թ. հուլիսին կայացած արտահերթ խորհրդարանական ընտրություններում, երբ այն ստացավ ձայների գրեթե 47 տոկոսը<sup>6</sup>: Ի տարբերություն «Սպիտակ թուրքերի», ինչպես հաճախ անվանում են քեմալական էլիտային, թուրքիայում այժմ իշխող կուսակցության վերնախավը շատ ավելի քիչ ազդեցություն է կրել արևմտյան գաղափարների և կառույցների կողմից:

Նմանատիպ փոփոխություններն ակնհայտ են նաև թուրք հասարակության շրջանում: Թուրքիայում իրականացված վերջին սո-

---

<sup>5</sup> Rajan Menon and Enders S.Wimbush, "The US and Turkey: End of an Alliance?", *Survival*, Vol. 49, No 2, Summer 2007, p.129

<sup>6</sup> Svante Cornell and Kemal Kaya, "Turkey's Elections; Democratic Islamists?", SAISPHERE, 2007, p.20-3.

ցիոլոգիական հարցումները վկայում են այստեղ սեկյուլարիզմի հանդեպ հակվածության աստիճանական նվազման մասին: Այսպես, Սոցիոլոգիական հեղինակավոր «Փյուն հետազոտական կենտրոնի» կողմից 2007թ. իրականացված հարցումները ցույց են տալիս, որ 46 երկրների շարքում վերջին հինգ տարիների ընթացքում Թուրքիան երկրորդն է սեկյուլարիզմի աջակիցների թվի նվազման հարցում: Եթե 2002թ. Թուրքիայում հարցվածների 73 տոկոսն է դրական պատասխանել հետևյալ հարցին՝ «Համաձայն եք, որ կրոնը դա անձնական հավատի խնդիրն է և այն պետք է տարանջատել կառավարության քաղաքականությունից», ապա 2007թ. նույն հարցին դրական է պատասխանել հարցվածների ընդամենը 55 տոկոսը<sup>7</sup>:

Միաժամանակ նշենք, որ սխալ կլիներ քեմալականներին համարել միանշանակ արևմտամետներ, իսկ «Արդարություն և զարգացում» կուսակցության կողմնակիցներին՝ միանշանակ «արևմուտքի» հակառակորդներ: Վերջին տարիների ընթացքում հենց քեմալականների շրջանում զգալիորեն ավելացել է քննադատությունը ԱՄՆ հասցեին, որին վերջիններս մեղադրում են վարչապետ Ռեջեպ Թայիպ Էրդողանի կառավարությանը ցուցաբերած աջակցության համար որպես «չափավոր իսլամական» կառավարություն, որը կարող է հաջող մոդել հանդիսանալ մահմեդական աշխարհի համար: Քեմալականների կարծիքով, նմանատիպ հարցադրումներն առնվազն վիրավորական են թուրքական հանրապետության հենասյունը հանդիսացող գաղափարների համար: Միաժամանակ, քեմալականները քննադատում են ամերիկյան և ընդհանրապես արևմտյան գործարար շրջանակներին՝ պնդելով, որ վերջիններս աջակցում են «Արդարություն և զարգացում» կուսակցության քաղաքականությանը: Վերջին տարիներին արևմտյան կապիտալը հսկայական միջոցներ է ներդրել թուրքական տնտեսության մեջ, և, քեմալականների կարծիքով, քանի դեռ կառավա-

---

<sup>7</sup> World Publics Welcome Global Trade-But Not Immigration, 47 Nation Pew Global Attitude Survey, p. 37, See at <http://pewglobal.org/reports/pdf/258.pdf>

րության քաղաքականությունը նպաստում է թուրքական տնտեսության աճին, արևմտյան գործարար շրջանակները, որոնք նաև որոշակի ազդեցություն ունեն իրենց երկրների քաղաքական համակարգի վրա՝ «մատների արանքով» են նայում թուրքիայի գործող կառավարության՝ երկիրն աստիճանաբար իսլամականացնելու քաղաքականությանը<sup>8</sup>:

Այնուամենայնիվ, չնայած վերջին տարիներին թուրքիայի ներքաղաքական համակարգում նկատվող արմատական փոփոխությունների ազդեցությունը թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա միանշանակ չէ, կարելի է արձանագրել, որ ներքաղաքական շատ ավելի բարդ ներկայանակը դժվարացնում է ԱՄՆ քաղաքական և վերլուծական շրջանակներում թուրքիայի նկատմամբ հստակ ընկալումների և հետևաբար հստակ քաղաքական ուղեցիչի ձևավորման գործընթացը, ինչն իր հերթին նպաստում է երկկողմ հարաբերություններում որոշակի սառնության ձևավորմանը:

Ինչպես նշեցինք, երկկողմ հարաբերություններում նկատվող փոփոխությունների կարևոր պատճառ է նաև ԽՍՀՄ փլուզումը և «սառը պատերազմի» ավարտը: 1947թ. Թրումենի հայեցակարգի հռչակումից և 1952թ. թուրքիայի՝ ՆԱՏՕ-ին անդամակցելուց հետո ընդհուպ մինչև ԽՍՀՄ փլուզումը 1991թ. դեկտեմբերին, երկու երկրների միջև ձևավորված ռազմավարական դաշնակցային հարաբերությունների հիմնական պատճառը հասկանալի էր: Ենթադրյալ խորհրդային վտանգը, ԽՍՀՄ զսպման ամերիկյան քաղաքականությունը և ՆԱՏՕ-ն երկու երկրներին միավորող լուրջ գործոններ էին, և չնայած այս շրջանում ևս ժամանակ առ ժամանակ կողմերի արտաքին քաղաքական շահերը միշտ չէ որ համընկնում էին, այնուամենայնիվ, վերոհիշյալ գործոններն զսպիչ դեր էին կատարում հարաբերությունների կտրուկ վատթարացման դեմ:

ԽՍՀՄ փլուզումից հետո երկու երկրների ղեկավար շրջանակների, ինչպես նաև վերլուծաբանների համար շատ ավելի դժվար է

---

<sup>8</sup> Zeyno Baran, “Turkey Devided”, Journal of Democracy, Vol 19, No 1, January 2008, p. 60-1.

հստակ պատասխան տալ հետևյալ հարցին՝ ի՞նչն է ի վերջո միավորում թուրքիային և ԱՄՆ-ին: Որպես հնարավոր պատասխան կարող է բերվել երկու երկրների ղեկավար շրջանակների, գոնե արտաքուստ, հակվածությունը ժողովրդավարական արժեքներին: Սակայն այսօր ԱՄՆ-ը սերտ հարաբերություններ ունի այնպիսի երկրների հետ, որտեղ ժողովրդավարության վիճակը բարվոք չէ, (Սաուդյան Արաբիա, Եգիպտոս, Պակիստան): Բացի այդ, ԱՄՆ-ն անցյալում սերտ դաշնակցային հարաբերություններ էր պահպանում թուրքիայի հետ նաև այն ժամանակ, երբ թուրքական զինվորական շրջանակները բացահայտորեն հակաժողովրդավարական քայլեր էին իրականացնում: Թերևս, կարելի է պնդել, որ թուրքամերիկյան հարաբերություններում պատմությունը, միասնական արժեքային համակարգն ու մշակութային ընդհանրությունները բավականին թույլ դեր են խաղում:

«Սառը պատերազմի» ավարտն աստիճանաբար առաջ բերեց նաև տաբեր ընկալումներ՝ կապված տարածաշրջանային զարգացումների և ազգային անվտանգությանն սպառնացող հնարավոր վտանգների ընկալման խնդրում: Նման տարրընկալումների օրինակ են ԱՄՆ-ի և թուրքիայի դիրքորոշումները Ռուսաստանի հետ հարաբերությունների հարցում, ինչն առավել վառ է արտահայտվում հատկապես սկսած 2002-2003թթ.: Եթե նշված ժամանակահատվածում ռուս-ամերիկյան հարաբերություններում գնալով աճում էր լարվածությունն ու փոխադարձ անվստահությունը, ինչը նույնիսկ որոշ փորձագետների թույլ էր տալիս խոսել նոր «սառը պատերազմի» մասին, ապա ռուս-թուրքական հարաբերություններում, ընդհակառակը, ջերմացում էր նկատվում: 2000թ. սկսած երկու երկրների միջև իրականացվող առևտրի ծավալներն զգալիորեն ավելացել են: Արդեն 2003թ. երկկողմ առևտրի ծավալները կազմում էին 6.8 միլիարդ ԱՄՆ դոլար և Ռուսաստանը թուրքիայի երկրորդ առևտրային գործընկերն էր Չերմանիայից հետո: Երկու երկրները սերտորեն համագործակցում են նաև էներգետիկ բնագավառում: Թուրքիա ներմուծվող բնական գազի շուրջ 70 տոկոսը գալիս է Ռուսաստանից Սև ծովի հատակով անցնող «Կապույտ

հոսք» գազամուղով: Ջգալի աճ է արձանագրել նաև Թուրքիա այցելող զբոսաշրջիկների թիվը: 2004թ. Թուրքիա են այցելել շուրջ 1.7 միլիոն ռուս զբոսաշրջիկներ և այս առումով ռուսները զիջում են միայն գերմանացիներին<sup>9</sup>: Թուրքական ընկերություններն իրենց հերթին ակտիվորեն ներդրումներ են կատարում ռուսական տնտեսության մեջ: 2007թ. Ռուսաստանում կատարված թուրքական ներդրումների ծավալը կազմել է 28 միլիարդ դոլար՝ 2005թ. համեմատությամբ աճելով 10 միլիարդ դոլարով<sup>10</sup>:

Երկու երկրներին սակայն չի միավորում միայն գազը, զբոսաշրջիկներն ու ներդրումները: 2005թ. հուլիսին Սոչիում Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի և Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի միջև կայացած հանդիպման ժամանակ կողմերը որոշակի պայմանավորվածություններ են ձեռք բերել աջակցել միմյանց չեչենական և քրդական խնդիրներում<sup>11</sup>: Երկու երկրների շահերը որոշակիորեն համընկնում են նաև Մերձավոր Արևելքում: Թե՛ Թուրքիան և թե՛ Ռուսաստանը լուրջ վերապահումներ ունեն Իրաք ամերիկյան ներխուժման խնդրում, և երկու պետություններն էլ հանդես են գալիս Իրանի միջուկային ծրագրի շուրջ ստեղծված վիճակի խաղաղ հանգուցալուծման օգտին<sup>12</sup>: Երկու պետություններն էլ աստիճանաբար խորացնում են իրենց հարաբերությունները Սիրիայի և Իրանի հետ, ինչը խոչընդոտում է նշված պետությունները մեկուսացնելու ԱՄՆ ջանքերին: Միաժամանակ թե՛ Թուրքիայում և թե՛ Ռուսաստանում գնալով ուժեղանում են ազգայնական և հակաարևմտյան տրամադրությունները, որոնք

---

<sup>9</sup> See “An Historic Turkish–Russian Exchange”, Turkey Now (website of the Turkish–US Business Council), January 2005, at <http://www.turkey-now.org/default.aspx?pgID=111>.

<sup>10</sup> Andrew Purvis, “Istanbul’s Economic Tension. A Lawsuit Threatens to Undo the Pro-Islamic Government’s Record of Reform and Growth” Time Europe, Vol. 171, No 20, May 19, 2008, p. 51.

<sup>11</sup> Fiona Hill and Omer Taspinar, *ibid.* p. 84

<sup>12</sup> Fiona Hill, Omer Taspinar, “Russia and Turkey in the Caucasus: Moving Together to Preserve the Status Quo?”, IFRI, Research Programme Russia/NIS, *Russie.Nei.Visions* N 8, January 2006, p. 7.

աստիճանաբար թափանցում են նաև քաղաքական շրջանակներ<sup>13</sup>:

Թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա բացասական ազդեցություն է թողնում նաև Իրանի և Սիրիայի նկատմամբ երկու երկրների տարբեր դիրքորոշումները: Ինչպես հայտնի է, Իրանը Ջորջ Բուշի վարչակազմի կողմից շրջանառության մեջ մտցված «Չարիքի առանցքի» մաս է կազմում: ԱՄՆ-ն Իրանին մեղադրում էր միջազգային ահաբեկչությանն աջակցելու (առաջին հերթին դա վերաբերում է Լիբանանում գործող «Հեզբոլլա» կազմակերպությանը), միջուկային զենք ձեռք բերելու մտադրություն ունենալու և Իրաքում ամերիկյան ուժերի դեմ պայքարող ապստամբներին զենք և զինամթերք մատակարարելու մեջ: Միջազգային ահաբեկչությանն աջակցելու խնդրում ԱՄՆ-ն մեղադրանքներ էր ուղղում նաև Սիրիային՝ պնդելով, որ այդ երկիրը զգալի աջակցություն է ցուցաբերում ինչպես «Հեզբոլլային», այնպես էլ պաղեստինյան ինքնավարության տարածքում գործող «Համաս» կազմակերպությանը, որը փաստացի վերահսկում է Գազայի հատվածը: ԱՄՆ-ը տարբեր քայլեր է ձեռնարկում միջազգային հարաբերություններում նշված երկրների մեկուսացման ուղղությամբ՝ առաջին հերթին տարածաշրջանի մյուս պետություններից պահանջելով խզել, կամ առնվազն սահմանափակել հարաբերությունները վերոհիշյալ երկրների հետ: Բնականաբար, ԱՄՆ-ն նման դիրքորոշում ակնկալում է տարածաշրջանում իր դաշնակիցներից: Սակայն եթե 1990-ական թվականներին թուրք-իրանական և առաջին հերթին թուրք-սիրիական հարաբերությունները բավականաչափ լարված էին, ապա «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության գալուց հետո այստեղ նկատվում են որոշակի փոփոխություններ՝ ուղղված դեպի հարաբերությունների աստիճանական բարելավմանը, ինչն, իհարկե, չի կարող գոհացնել պաշտոնական Վաշինգ-

---

<sup>13</sup> Marlène Laurelle, *Russo-Turkish Rapprochement through the Idea of Eurasia: Alexander Dugin's Networks in Turkey*, The Jamestown Foundation, April 2008, p. 3.



տոնին և չի կարող որոշակի ազդեցություն չթողնել թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա:

Թուրք-իրանական և թուրք-սիրիական հարաբերություններում վերջին տարիներին նկատվող ջերմացումն ունի իր լուրջ պատճառները: ԽՍՀՄ փլուզումից հետո Թուրքիան կանգնած է սեփական անվտանգությանն սպառնացող շատ ավելի բազմազան մարտահրավերների առջև՝ ավելի ու ավելի թափ հավաքող քրդական անջատողականություն, Իրաքում ընթացող միջհամայնքային բախումներ, որոնք կարող են տարածվել նաև Իրաքի սահմաններից դուրս, Իրանի աստիճանական հզորացում, և որոշ չափով, Լիբանանի տրոհման հնարավոր վտանգ: Քանի որ վերոհիշյալ մարտահրավերների մեծ մասը գալիս էր Մերձավոր Արևելքից, բնական է, որ Թուրքիան ավելի մեծ ուշադրություն պետք է դարձներ այս տարածաշրջանին իր արտաքին քաղաքականության համատեքստում՝ փորձելով կարգավորել հարաբերությունները տարածաշրջանում ազդեցիկ դերակատարում ունեցող Սիրիայի և Իրանի հետ:

Թուրք-իրանական հարաբերությունների ջերմացման նշան էր 2004թ. հուլիսին Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայյիփ Էրդողանի՝ Թեհրան կատարած այցելությունը, որի ընթացքում կողմերը ստորագրեցին համաձայնագիր՝ անվտանգության ոլորտում համագործակցելու վերաբերյալ: Համաձայնագրում Քրդական աշխատավորական կուսակցությունը հստակորեն սահմանվում է որպես ահաբեկչական կազմակերպություն<sup>14</sup>: Թուրքիան հանդես է գալիս Իրանի միջուկային ծրագրի ծուրջ ստեղծված իրավիճակի խաղաղ հանգուցալուծման օգտին՝ ճանաչելով խաղաղ միջուկային տեխնոլոգիաներ ունենալու Իրանի իրավունքը: Թուրքական կողմի նման դիրքորոշումը ևս նպաստում է երկկողմ հարաբերությունների ջերմացմանը:

---

<sup>14</sup> Stephan F. Larabee, “Turkey Rediscovered the Middle East, Foreign Affairs, July-August 2007, see at <http://www.foreignaffairs.org/20070701faessay86408/f-stephen-larabee/turkey-rediscovered-the-middle-east.html>

Վերջին տարիներին զգալիորեն բարելավվել են նաև թուրք-սիրիական հարաբերությունները: 1980-90-ական թվականներն աչքի էին ընկնում այդ հարաբերություններում առկա լարվածության բավական բարձր մակարդակով: Երկկողմ լարված հարաբերությունների գագաթնակետը 1998 թ. հոկտեմբերն էր, երբ Թուրքիան սպառնաց ռազմական գործողություններ սկսել Սիրիայի դեմ, եթե վերջինս չդադարեցնի Քրդական բանվորական կուսակցությանը ցուցաբերվող աջակցությունը: Պաշտոնական Դամասկոսը հարկադրված էր զիջել՝ Սիրիայից արտաքսելով Քրդական աշխատավորական կուսակցության առաջնորդ Աբդուլլահ Օջալանին և փակելով Սիրիայի տարածքում գործող քրդական գրոհայինների ճամբարները:

Այս քայլը նպաստեց թուրք-սիրիական հարաբերությունների աստիճանական բարելավմանը, ինչի ապացույցն էր 2005թ. հունվարին Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի՝ Անկարա կատարած այցելությունը, որը Սիրիայի նախագահի առաջին այցելությունն էր Թուրքիա 1946թ. ի վեր: Պաշտոնական Վաշինգտոնը փորձում էր հետ պահել Թուրքիային Սիրիայի հետ սերտ հարաբերությունների հաստատումից: Մասնավորապես, 2005թ. գարնանը ԱՄՆ իշխանությունները փորձեցին հասնել Թուրքիայի նախագահ Ահմեդ Սեզերի՝ Դամասկոս կատարելիք այցելության չեղյալ հայտարարմանը, սակայն Թուրքիայի նախագահը, որն այս հարցում վայելում էր նաև վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի լիակատար աջակցությունը, տեղի չտվեց ամերիկյան հորդորներին<sup>15</sup>:

Միաժամանակ նշենք, որ ամերիկյան նոր վարչակազմի՝ Իրանի և Սիրիայի հետ հարաբերությունների բարելավմանն ուղղված նախաձեռնությունները որոշակիորեն մեղմում են այս խնդրում առկա թուրք-ամերիկյան հակասությունները և չի բացառվում, որ ԱՄՆ-ն կփորձի օգտվել Թուրքիայի միջնորդությունից ԱՄՆ-Իրան

---

<sup>15</sup> Stephan F. Larabee, *ibid.*, <http://www.foreignaffairs.org/20070701faessay86408/f-stephen-larabee/turkey-rediscovers-the-middle-east.html>

և ԱՄՆ-Սիրիա հնարավոր բանակցությունների կազմակերպման ընթացքում:

Որոշակիորեն տարբերվում են նաև ԱՄՆ-ի և Թուրքիայի դիրքորոշումները պաղեստինա-իսրայելական հակամարտության և, մասնավորապես, Պաղեստինյան ինքնավարությունում զգալի ազդեցություն ունեցող ՀԱՄԱՍ շարժման նկատմամբ:

Այնուամենայնիվ, ոչ մի խնդիր այնպիսի բացասական ազդեցություն չի գործել թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա, ինչպես 2003թ. ամերիկյան ներխուժումն էր Իրաք, դրան հաջորդած իրադարձությունները և Թուրքիայի դիրքորոշումն այդ խնդրում: Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ն ակտիվորեն փորձում էր ստանալ Թուրքիայի համաձայնությունն այդ երկրի տարածքից Իրաք ներխուժման հարցում: Սակայն շուրջ վեց ամիս տևած բանակցություններից հետո 2003թ. մարտի 1-ին Թուրքիայի խորհրդարանը մերժեց ամերիկյան զորքերին Թուրքիայի տարածքից Իրաք ներխուժման թույլտվության տրամադրման ամերիկյան կողմի առաջարկը<sup>16</sup>:

Ամերիկյան պաշտոնական շրջանակների կարծիքով, այս որոշումը ոչ միայն հարկադրեց փոխել պատերազմի նախնական ծրագրերը, այլև նպաստեց հետպատերազմյան Իրաքում իրավիճակի բարդացմանը: Պատահական չէ, որ ԱՄՆ պաշտպանության նախկին նախարար Դոնալդ Ռամսֆելդը 2005թ. մարտին (երբ նա դեռ զբաղեցնում էր այդ պաշտոնը) հայտարարեց, որ Իրաքում ստեղծված անկայուն իրավիճակի պատճառներից մեկն էլ այն հանգամանք է, որ Թուրքիան չթույլատրեց ամերիկյան չորրորդ հետևակային դիվիզիային Թուրքիայի տարածքով հյուսիսից մտնել Իրաք՝ երկրորդ ձևակատ բացելով Սադդամ Հուսեյնի դեմ<sup>17</sup>:

Իրաքի խնդրում թուրք-ամերիկյան հակասությունները չեն սահմանափակվում միայն Թուրքիայի տարածքը որպես Իրաք ներ-

---

<sup>16</sup> Fiona Hill and Omer Taspinar, "Turkey and Russia: Axis of the Excluded", p. 82.

<sup>17</sup> See <http://www.cnn.com/2005/WORLD/meast/03/20/iraq.anniversary/>

խուժման պլացդարմ տրամադրելու պաշտոնական Վաշինգտոնի խնդրանքի մերժմամբ: Թուրքիայում լուրջ կասկածներ կան Հյուսիսային Իրաքի քրդաբնակ շրջաններում ԱՄՆ վարած քաղաքականության առնչությամբ: Թուրքական որոշ շրջանակներ գտնում են, որ ԱՄՆ-ն անուղղակիորեն աջակցում է այդ տարածքում անկախ քրդական պետության ստեղծմանը, ինչը միանշանակ լուրջ խթան կհանդիսանա Թուրքիայի քրդաբնակ շրջաններում ընթացող անջատողական շարժման ակտիվացման համար: Չնայած ԱՄՆ իշխանությունները բազմիցս հայտարարել են, որ չեն ցանկանում հասնել Իրաքի մասնատմանը և անկախ քրդական պետության ստեղծմանը, այդ հավաստիացումները միանշանակորեն չեն ընդունվում թուրքական քաղաքական շրջանակների կողմից:

2003թ. Հյուսիսային Իրաքում ԱՄՆ զինված ուժերի կողմից թուրքական հատուկ ծառայությունների 11 գործակալների ձերբակալումն ու հրապարակային նվաստացումը (միջազգային տարբեր հեռուստաընկերություններ ցուցադրեցին գլխներին պարկեր հագցրած թուրք զինվորներին), բնականաբար չէր կարող նպաստել թուրք-ամերիկյան հարաբերությունների բարելավմանը<sup>18</sup>:

Հյուսիսային Իրաքում ԱՄՆ իրական նպատակների առնչությամբ թուրքական կողմի կասկածներն էլ ավելի ուժեղացան այն բանից հետո, երբ 2007թ. թուրքական ուժերը Քրդական աշխատավորական կուսակցության մարտիկներից առգրավվեցին ամերիկյան արտադրության զենքեր, այդ թվում M-16 ավտոմատներ: Այս խնդիրը քննարկելու համար 2007թ. հուլիսին ԱՄՆ պաշտպանության նախարարության պատվիրակությունը հանդիպումներ ունեցավ թուրքական գլխավոր շտաբի, արտգործնախարարության և այլ գերատեսչությունների ներկայացուցիչների հետ: Ամերիկյան կողմի պնդումների համաձայն, Քրդական աշխատավորական կուսակցության գրոհայիններից խլված ամերիկյան զենքերը նախատեսված են եղել իրաքյան բանակի համար, սակայն Իրաքում

---

<sup>18</sup> Andrew McGregor, *Massoud Barzani Conducting Dangerous Games in Northern Iraq*, Terrorism Focus, Vol IV, Issue 23, July 17, 2007, p. 4.

դրանց մի մասը ապօրինաբար տրվել է քրդերին իրաքյան անվտանգության ծառայության որոշ աշխատակիցների կողմից: Այնուամենայնիվ, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հայտարարեց, որ այս խնդրի կապակցությամբ ամերիկյան կողմի բացատրություններն այնքան էլ համոզիչ չեն<sup>19</sup>:

Իրաքի խնդրի հետ կապված Թուրքիային անհանգստացնում է նաև Քիրքուքի ապագա ճակատագիրը և այդ հարցում ԱՄՆ վարած քաղաքականությունը: Շուրջ մեկ միլիոն բնակչություն ունեցող բազմազգ (այստեղ բնակվում են քրդեր, արաբներ, թուրքմեններ և ասորիներ) քաղաքի մերձակայքում են գտնվում Իրաքի առավել խոշոր նավթահանքերը, ինչն էլ ավելի է մեծացնում քաղաքի հետագա ճակատագրի շուրջ առկա լարվածությունը:

Դեռևս 1970-ական թվականներին Սադդամ Հուսեյնը Քիրքուքից արտաքսել է շուրջ 600.000 քրդերի՝ նրանց փոխարեն վերաբնակեցնելով արաբների: 2003թ. Հուսեյնի վարչակարգի տապալումից հետո Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության կառավարությունը քայլեր է ձեռնարկում Քիրքուքից վտարված քրդերին այնտեղ վերաբնակեցնելու ուղղությամբ: Իրաքի նոր սահմանադրության 140-րդ հոդվածը նախատեսում է, որ մինչև 2007թ. ավարտը քաղաքում պետք է հանրաքվե անցկացվեր՝ Քիրքուքի հետագա ճակատագիրը որոշելու համար<sup>20</sup>:

Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության կառավարությունը ցանկանում է Քիրքուքն ընդգրկել իր սահմաններում, ինչը լուրջ անհանգստություն է առաջ բերում թուրքական պաշտոնական շրջանակներում, որոնք գտնում են, որ նավթային հարուստ շրջանների հայտնվելը քրդական ինքնավարության սահմաններում լուրջ խթան կհանդիսանա հետագայում Հյուսիսային Իրաքի տարածքում անկախ քրդական պետության ստեղծման համար: Թուրքական իշխանությունները պնդում են, որ քրդական կողմը

<sup>19</sup> Andrew McGregor, *PKK Arms Scandal Fuels Turkish Suspicions*, Terrorism Focus, Vol IV, Issue 27, August 14, 2007, p. 4

<sup>20</sup> Ramzi Mardini, *Kurdish-Sunni Accord Gives Kirkuk a Chance at Reconciliation*, Terrorism Focus, Vol IV, Issue 41, December 11, 2007.

թուրքմեններին Քիրքուքից և նրա մերձակայքից վտարելու միտումնավոր քաղաքականություն է իրականացնում՝ քաղաքի էթնիկ կազմը փոփոխելու նպատակով: Պաշտոնական Անկարան ամերիկյան կողմից պահանջում է ճնշում գործադրել Հյուսիսային Իրաքի քրդական ինքնավարության կառավարության վրա՝ նմանատիպ քաղաքականությունը դադարեցնելու նպատակով:

Միևնույն ժամանակ ամերիկյան իշխանությունները հակված չէին կտրուկ քայլեր ձեռնարկել Հյուսիսային Իրաքում Քրդական աշխատավորական կուսակցության գրոհայինների գործունեությունը կասեցնելու կամ էլ Քիրքուքի շուրջ ստեղծված իրավիճակը կտրուկ փոփոխելու համար: Իրաքյան պատերազմում առաջմ քրդերն ամերիկացիների, թերևս, առավել հավատարիմ դաշնակիցներն են, և պաշտոնական Վաշինգտոնը չէր ցանկանում էլ ավելի թուլացնել իր դիրքերն Իրաքում՝ վատթարացնելով հարաբերությունները դաշնակիցների հետ: Բացի այդ, Հյուսիսային Իրաքի քրդաբնակ շրջաններն աչքի են ընկնում համեմատական կայունությամբ և ամերիկացիները չէին ցանկանում անկայունության ևս մեկ օջախ ավելացնել Իրաքում: Ակնհայտ է, որ իրաքյան խնդիրը կարճաժամկետ և միջնաժամկետ տեսլականում կշարունակի որոշակի բացասական դեր խաղալ թուրք-ամերիկյան հարաբերություններում:

Ահա սրանք են, մեր կարծիքով, 2003-2008 թթ. ընթացքում թուրք-ամերիկյան հարաբերություններում նկատվող որոշակի սառնության հիմնական պատճառները: Այժմ փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչպիսին կլինի այդ հարաբերությունների զարգացման վեկտորը ԱՄՆ նոր նախագահ Բարաք Օբամայի վարչակազմի օրոք:

Կարծում ենք, որ առաջիկա մի քանի տարիների ընթացքում այդ հարաբերություններում կտրուկ փոփոխությունների արձանագրումը քիչ հավանական է: Հարաբերությունների կտրուկ բարելավում չի արձանագրվի, միաժամանակ հազիվ թե դրանք էլ ավելի վատթարանան՝ ռազմավարական առումով կասկածի տակ դնելով երկու երկրների հարաբերությունների դաշնակցային մակարդակը: Թե՛ ԱՄՆ-ն և թե՛ Թուրքիան որոշակիորեն զգում են

առնվազն դրական երկկողմ հարաբերությունների կարիքը և նմանատիպ դիրքորոշման համար կան մի շարք հստակ պատճառներ:

Թուրքիան գտնվում է ռազմավարական նշանակության նեղուցների և ծովային հանգույցների կիզակետում՝ (Միջերկրական ծով, Սև ծով, Բոսֆորի և Դարդանելի նեղուցներ), հանգույցներ, ուրոնք կարևոր դեր են խաղում համաշխարհային առևտրում:

Թուրքիան որոշակի դերակատարում ունի նաև Իրաքում կայունության ապահովման խնդրում, հանգամանք, որը չափազանց կարևոր է ԱՄՆ-ի համար: Առանց թուրքական կողմի հետ համագործակցության, կայուն Իրաքի ստեղծումը շատ ավելի դժվար կլինի, ավելին՝ թուրք-ամերիկյան հարաբերությունների հետագա վատթարացումը կնվազեցնի ԱՄՆ հնարավորությունները՝ Հյուսիսային Իրաքում թուրքական ուժերի կողմից լայնածավալ և երկարաժամկետ ռազմական գործողությունների և տեսականորեն Հյուսիսային Իրաքի որոշ հատվածների, առաջին հերթին Քիրքուք քաղաքի և նրա մերձակայքի օկուպացիայի կանխման խնդրում, (այս կապակցությամբ նշենք, որ ԱՄՆ վերաբերմունքը միանշանակ չէր 2008թ. փետրվարի 21-ից Հյուսիսային Իրաքում թուրքական զինված ուժերի կողմից իրականացրած «Արև» գործողության վերաբերյալ, և որոշ վերլուծաբանների կարծիքով, նաև ամերիկյան կողմի ներգործությունն էր պատճառը, որ թուրքական զինուժի գործողություններն ընդամենը մեկ շաբաթ տևեցին):<sup>21</sup> Մինչդեռ իրադարձությունների նման զարգացումը բոլորովին ձեռնտու չէ ամերիկյան կողմին, որն իր առաջնահերթ խնդիրն է համարում Իրաքում կայունության ապահովումը, ինչը թույլ կտա Օբամային կատարել մինչև 2011 թ. վերջը Իրաքից ամերիկյան ուժերի դուրս բերման խոստումը:

Թուրքիայի հետ հարաբերությունները ԱՄՆ համար կարևոր են նաև Աֆղանստանում Օբամայի որդեգրած նոր ռազմավարության հաջող իրականացման համատեքստում:

---

<sup>21</sup> Frank Hyland, *Turkey's Generals and Government Deny US Interference in Operation Gunes*, *Terrorism Focus*, Vol 5, Issue 10, March 11, 2008, p. 6-8.

Թուրքիան կարևոր է դեր է խաղում Ռուսաստանը շրջանցող նոր նավթամուղերի և գազամուղերի կառուցման և շահագործման խնդրում, խողովակաշարեր, որոնք հնարավորություն կտան դիվերսիֆիկացնել Եվրամիության կողմից սպառվող նավթի և գազի աղբյուրները, կասայան ավազանի էներգետիկ ռեսուրսները կապել Եվրոպական շուկաների հետ և որոշ չափով նվազեցնել Եվրամիության երկրների՝ Ռուսաստանից ունեցած էներգետիկ կախվածությունը, հանգամանք, որը վերջին տարիների զարգացումները հաշվի առնելով, հույժ կարևոր է ինչպես բուն Եվրամիության, այնպես էլ ԱՄՆ համար: Այս տեսանկյունից կարելի է առանձնացնել «Նաբուկկո» ծրագիրը, որը նախատեսում է գազամուղի կառուցում Թուրքիայից Ավստրիա՝ Բուլղարիայի, Ռումինիայի և Հունգարիայի տարածքով:

Եվ վերջապես չպետք է մոռանալ Թուրքիայի տարածքում տեղակայված ամերիկյան Ինջիրլիկ ռազմակայանի մասին: Ադանայից ընդամենը 10 կմ հեռավորության վրա գտնվող ռազմակայանը 1955թ. իր բացման օրվանից կարևոր դերակատարում է ունեցել ինչպես Սառը պատերազմի տարիներին, այնպես էլ Իրաքյան երկու պատերազմների և Աֆղանստանում ընթացող ռազմական գործողությունների ժամանակ: Նշենք, որ ԱՄՆ-ն չունի ռազմակայանը օգտագործելու երկարաժամկետ թույլտվություն և պարբերաբար հարկադրված է Թուրքիայի հետ քննարկել ռազմակայանի օգտագործման թույլտվության երկարացման խնդիրը, հանգամանք, որը բավականին կարևոր լծակ է թուրքական իշխանությունների ձեռքում:

Իհարկե, սխալ կլիներ պնդել, որ թուրք-ամերիկյան հարաբերությունների հետագա վատթարացումից միակ «տուժող» կողմը լինելու է ԱՄՆ-ն: Անկախ ամեն ինչից, Թուրքիան ևս ունի ԱՄՆ պես հզոր տերության հետ դրական հարաբերությունների կարիքը: ԱՄՆ-ի հետ դաշնակցային հարաբերությունները կարևոր դեր են խաղում Թուրքիայի համար ռազմավարական առումով սեփական անվտանգության ապահովման խնդրում:

ԱՄՆ-ն ՆԱՏՕ-ի անդամ ամենահզոր պետությունն է, և ԱՄՆ-ի հետ դրական հարաբերությունների առկայությունը նպաստում է նաև ՆԱՏՕ-ում Թուրքիայի դիրքերի ամրապնդմանը, ինչը ևս



կարևոր է ռազմավարական տեսանկյունից Թուրքիայի անվտանգության ապահովման համար:

Թուրք-ամերիկյան բարենպաստ հարաբերությունները կարևոր են պաշտոնական Անկարայի համար նաև Իրաքում տեղի ունեցող գործընթացների նկատմամբ որոշակի ազդեցություն ունենալու տեսանկյունից: Ակնհայտ է, որ առաջիկա տարիների ընթացքում ԱՄՆ-ը պահպանելու է իր ազդեցությունն Իրաքում և լուրջ դերակատարություն է ունենալու այնտեղ սպասվող զարգացումներում: Իրաքի ապագան և առաջին հերթին Հյուսիսային Իրաքում քրդական հնարավոր անկախ պետության ստեղծումը Թուրքիայի ազգային անվտանգությանն սպառնացող լրջագույն մարտահրավերներից մեկն է, և այս հարցում ԱՄՆ դիրքորոշումը չափազանց կարևոր է Թուրքիայի համար: Թուրք-ամերիկյան բարենպաստ հարաբերություններն էականորեն կմեծացնեն Անկարայի հնարավորությունները՝ հարկ եղած դեպքում Իրաքում ԱՄՆ քաղաքականության նկատմամբ որոշակի ազդեցության գործադրման տեսանկյունից:

Ահա սրանք են խնդիրների այն շրջանակը, որոնց ամկայությունը, մեր կարծքիով, երկու երկրներին էլ ետ կպահի երկկողմանի հարաբերությունների հետագա վատթարացմանն ուղղված քայլերի իրականացումից:

Ամփոփելով մեր հոդվածը՝ նշենք, որ թուրք-ամերիկյան հարաբերություններում վերջին տարիներին նկատվող սառնությունն ունի օբյեկտիվ պատճառներ և արտացոլում է երկու երկրների միմյանցից որոշակիորեն տարբերվող դիրքորոշումները տարածաշրջանային զարգացումների և սեփական անվտանգությանն սպառնացող մարտահրավերների առնչությամբ: Միևնույն ժամանակ, երկու երկրներն էլ զգում են փոխադարձ դրական հարաբերությունների կարիքը, հանգամանք, որը կարճաժամկետ և միջնաժամկետ տեսլականում կլինի երկու երկրների փոխհարաբերությունների զարգացման ուղղությունը որոշող հիմնական գործոնը և կկանխի դրանց հետագա վատթարացման հնարավոր գործընթացները:

## ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐ

## **ЗАВОЕВАНИЕ ТЮРКАМИ ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ В X- XI ВВ. И ВОЗНИКНОВЕНИЕ НА ЕЕ ТЕРРИТОРИИ ПЕРВЫХ ТЮРКСКИХ ГОСУДАРСТВ**

X-XI вв. важный период в истории стран и народов центральноазиатского макрорегиона. В его оседло-земледельческих областях, к концу IX в. были преодолены разрушительные последствия арабского завоевания, их зависимость от Арабского (Аббасидского) халифата ослабла, а реальная власть вернулась в руки местных элит. Политическая стабильность и внешняя безопасность создали исключительно благоприятные условия для экономического подъема, развития городской жизни и международной торговли, роста благосостояния населения, расцвета духовной культуры. Многообразное творчество энциклопедистов ал-Хорезми, Розы, Фараби, ибн Сина, поэтические шедевры, созданные Фирдоуси, Рудаки, Балхи, Дакики и др., заставляют ученых сравнивать исследуемый период с эпохой Ренессанса<sup>1</sup>.

---

<sup>1</sup> Впервые понятие «возрождение» для обозначения полосы культурного и литературного подъема в странах Востока ориенталисты начали употреблять еще в начале прошлого XX в., причем, если Э. Браун вкладывал в это понятие скорее оцененный смысл, то А. Мец акцентировал внимание на восприятии элементов античного культурного наследия, что сближало «восточный Ренессанс» с европейским. Более точно к трактовке этого вопроса подошел Р. Фрай, определявший как Ренессанс культурный подъем, который происходил в X-XI вв. в Центральной Азии при Саманидах, а затем в Западном Иране при Буидах, при том, что в первом случае преобладало литературное начало, а во втором – философское. См.: Browne E. A literary History of Persia. – London; Cambridge, 1902-1924. – Vol. I-IV; Мец А. Мусульманский Ренессанс. – М., 1963; Frye R. Notes on the Renaissance of the 10-th and 11-th centuries in Eastern Iran // Central Asiatic Journal 1. – Vol. I. - № 12. Указанный всплеск интеллектуальной деятельности оказал большое и благотворное влияние не только на страны мусульманского Востока, но и на христианский Кавказ. См.: Чалоян В.К. Армянский Ренессанс. – М., 1963.

Тем не мене, несмотря на свои немалые достижения, уже в XI в. местное возрождение выдохлось, подорванное крушением главного регионального интеграционного проекта – державы Саманидов. Падение Саманидов было связано не с попыткой арабской реконкисты в Центральной Азии, а с ее завоеванием северными соседями – тюркскими племенами. Разделенные на множество субэтнических (родоплеменных, клановых и т.п.) групп, тюрки не создали своего единого государства, а разделили завоеванный регион между несколькими, яростно враждовавшими между собой государственными образованиями. Их безраздельное господство в Центральной Азии продолжалось до первой половины XIII в., когда тюркских завоевателей сменили новые захватчики монголы.

Проникновение тюрков в центральноазиатское междуречье и соседние с ним области началось задолго до их силового захвата в XI вв. В течение VIII-IX вв. тюрки в больших количествах переселялись в Мавераннахр, Тохарстан, Хорасан, Хорезм и Фергану в связи, с чем доля тюркского субстрата в населении местных оазисов неуклонно возрастала. Этому процессу способствовали несколько причин.

Во-первых, в период арабского завоевания произошло существенное расширение северо-восточных границ центральноазиатской ойкумены. В ее состав, (в состав Хорасанского наместничества Арабского халифата) были включены периферийные области правобережья Сырдарьи, лежавшие на границе (Уструшана, Ферагана, Чач, Илак), а некоторые и за границей (Испиджаб, Хафтруд), примыкавшей к Мавераннахру обширной степной зоны, населенной кочевыми тюркскими племенами. Интеграция этих областей вела к вовлечению местного населения в общерегиональную производственно-торговую экономическую систему, в основе которой лежала торговля по Великому Шелковому пути. Кочевники-тюрки играли в ней важную роль, - на значительном протяжении трансконтинентальной торговой трассы они исполняли роль проводников, охраняли караваны и места их стоянок (караван-сарай).

Во-вторых, в военно-политической жизни государств региона в этот период все большее значение приобретают отряды тюркских вооруженных наемников, поступающих на службу к многочисленным центральноазиатским властителям. Парадоксально, но одновременно с успешным развитием торговли, ремесел, ирригационного земледелия, с возвращением языка фарси в государственное делопроизводство, местное население все больше предпочитало занятия коммерцией и госслужбу тяжелой и рискованной военной карьере. Показательным в этом смысле является неизбежный переход вооруженных сил Саманидов от народного ополчения и отрядов газиев (стража многочисленных пограничных крепостей на границе оазисов и тюркских кочевий) на «профессиональные» отряды во главе с тюркскими предводителями, укомплектованные их соплеменниками (а зачастую и родственниками).

До середины X в. в отношениях саманидских правителей и их наемников царило взаимопонимание. Тюркские сабли надежно защищали обширные владения династии, а также пресекали мятежи недовольных вельмож и народные выступления. Однако со временем, в этих отношениях усиливается отчуждение, вылившееся в последствии в многочисленные измены тюркских военачальников, обусловившие военный крах правящего режима. Подобное стало возможным ввиду неприятия тюрками религиозных и шире идеологических экспериментов, которые стали возможными при Саманидах и в которых последние сами принимали активное участие.

Отстаивая независимость своих владений и, укрепляя собственную власть, Саманиды, как и их предшественники Бармакиды, Тахириды, Саффариды вступали в конфликт с Арабским халифатом, политически объединившим все пространство населенное мусульманами. Фактически, их политика являлась формой народно-освободительного движения народов Центральной Азии, направленного против иноземных захватчиков. Необходимость в собственных парадигмах государственного и социального строительства, намеренно альтерна-

тивных арабским как навязанным извне, подталкивала упомянутые восточноиранские (таджикские) аристократические дома к апелляции к местной центральноазиатской аутентичности. Тем более что подобная политика находила живой отклик и поддержку у большинства подданных.

Его проявлением является возникновение и распространение в регионе поэзии шуубизма. Хотя и арабоязычная, она высеивала нравы арабских кочевников-бедуинов, подчеркивала их дикость и не цивилизованность в сравнении с преимущественно городским населением Ирана и Центральной Азии<sup>2</sup>. После возвращения языка фарси в делопроизводство, получает широкое распространение фарсиязычная литература, не только использующая родной язык, привычные формы и образы, но и воспевающая местные традиции.

При Саманидах литература открыто стала проповедовать новую государственную идеологию, основанную на реабилитации и героизации доисламского прошлого региона, призванную обосновать необходимость его самостоятельного (без Халифата и остального мусульманского сообщества) развития с опорой на собственные силы. Выполняя заказ правящей династии, Абумансур Мухаммад ибн Абдараззак по сохранившимся сасанидским книгам и устным эпическим поэмам восстановил в прозе исторический свод «Шахнаме» (Книга владык) – тенденциозную историю иранских династий, от легендарных авестийских Каенидов до исторически достоверных Ахеменидов, Аршакидов и Сасанидов.

По указанию эмира Нуха Саманида (976-997 гг.) поэт Абумансур Дакики предпринял попытку переложить сочинение Абдараззак в стихотворную форму, прерванную, правда, убийством поэта в 977 г. Апофеозом работы над «Шахнаме»

---

<sup>2</sup> Очевидная антиарабская направленность шуубистской поэзии вызывала жесткую ответную реакцию со стороны халифатских властей. Так поэт Абдаллах ибн ал-Мукаффа был казнен в 759 г., был засечен до смерти Башшар ибн Бурд Тохаристани. Абунавас (VIII в.), первый раскрывший тему вина и богохульства и в этом смысле, ставший предтечей Омар Хайяма, был подвергнут остракизму.

стало подключение к ней Абулкосима Фирдоуси. Его поэтический гений произвел на свет шедевр, по размеру превышающий «Илиаду» и «Одиссею» вместе взятые. Великая поэма Фирдоуси по сути гимн древнему и раннесредневековому Ираншахру – стране ариев, великой империи, населенной легендарными героями, могучими государями – предтечами современных автору саманидских эмиров. Сакральная география «Шахнаме» выглядит таким образом, что именно Ираншахр, а не Аравия с Меккой является центром земли, колыбелью человеческой цивилизации. Вполне в традициях древних эпических гимнов не иранские (не арийские) народы напротив изображаются Фирдоуси как несимпатичные, злобные, мстительные и вероломные<sup>3</sup>

Обычно аполитичные тюркские бойцы, за деньги и почести готовые служить любому (правоверному) властителю и рубить головы кому угодно, в том числе и своим соплеменникам, были явно не готовы принять подобные великодержавные, отчасти шовинистические экзерсисы таджикской духовной элиты. Их раздражали и откровенно антиарабские, а кое-где уже и антиисламские пассажи придворных поэтов. Так, главный враг авестийских ариев – царь Заххок – демон пустыни, в «Шахнаме» уже наделяется чертами злого арабского царя, пытающегося подчинить себе Центральную Азию<sup>4</sup>. А Дакики и вовсе дописался до необходимости отказа от ислама и возвращения к зороастрийской вере предков. В переводе В. Левика это выглядит следующим образом:

И добро и зло Дакики изведал,  
Ныне жаждет он четырех услад:  
То – коралл вина, вера Заратуштры,  
Чанга нежный стон, алых губ гранат<sup>5</sup>.

---

<sup>3</sup> Негматов Н.Н. Сюжеты эпоса в искусстве Уструшаны и „Шахнаме“ Фирдоуси // Памяти устода Рудаки. – Т. I. - Душанбе, 1978, с. 92-102.

<sup>4</sup> Птицын Г.В. К вопросу о географии “Шахнаме” // Труды Отдела Востока Государственного Эрмитажа. – Л., 1947. – Вып. V, с. 303.

<sup>5</sup> Антология таджикской поэзии с древнейших времен до наших дней. – М., 1951, с. 109.

Аналогичные негативные эмоции вызывали скрытые и явные симпатии саманидских правителей к еретическому движению карматов, имевшему большой успех среди центральноазиатского городского населения. Не вдаваясь в сущность карматского учения, вряд ли понятного не мусульманам, а также в его социально-экономическую подоплеку (любимую советской историографией), отметим главное – карматы предлагали иной ислам, отличный от официальной религии Аббасидских халифов, неподконтрольный им. Это само по себе привлекало к новому учению симпатии, как правящих кругов, так и близкой к ним по духу интеллигенции, например самого Рудаки. Усилившееся карматское движение, уступки эмира Насра II (907-914 гг.) руководителям карматов вместо решительных мер правительства против них обусловили недовольство и среди ортодоксального мусульманского духовенства. Недовольные группы: тюркская дворцовая гвардия, часть знати и духовенства составили заговор. Его участники планировали устроить ночной пир военачальников в честь предстоящего похода против кочевников, на этом пиру убить Насра, а заодно перебить и всех последователей ненавистной ереси. Однако о готовящемся покушении узнал сын эмира Нух ибн Наср. Предупрежденный эмир, обманом заманил к себе главаря заговорщиков и казнил его. Затем вместе с сыном он явился на устроенный пир, объявил о раскрытии заговора и эффектно бросил к ногам пирующих полководцев голову их незадачливого предводителя. Впрочем, Наср тут же заявил об отречении от престола в пользу своего сына Нуха, которого до сего момента никто не подозревал в особых симпатиях к карматству.

Тем не менее, тюркская гвардия все-таки захватила власть в столице (Бухаре), выдвинув в качестве нового руководителя восстания дядю Нуха - Ибрагима ибн Ахмада. Лишь с большим трудом эмиру удалось тогда справиться с мятежниками, захватить и ослепить Ибрагима, и его ближайших сторонников.



В период правления следующего эмира Абдулмалика ибн Ну-ха (954-961 гг.) произошли события, послужившие прологом к падению державы Саманидов и захватом ее территории тюркскими ордами. В это время на пост главного хаджиба выдвигается начальник гвардии и крупный феодал тюрков Алп-тегин. Вместе с просвещенным визирем Абуали Бальами, он сосредоточил в своих руках всю полноту власти в стране. Однако дворцовым интриганам удалось поссорить эмира с Алп-тегином, после чего последний попал в опалу. Впрочем, ему хватило сообразительности не дожидаться расправы и бежать со своими сторонниками на периферию. По-видимому, с Алп-тегином ушло достаточное количество преданных своему командиру и хорошо подготовленных бойцов. Во всяком случае, им удалось захватить Газну (античн. Гандхара), а в последствии и целый ряд прилегающих к ней афганских и индийских земель. После смерти Алп-тегина в 963 г., их боевое братство не распалось, напротив на должность преемника и нового военного вождя был избран его шурин Сабук-тегин. Таким образом, на восточных границах саманидского эмирата возникло устойчивое государственное объединение, известное как государство Газневидов. Газневидским тюркам суждено было сыграть важнейшую роль в тюркском завоевании и последующем переделе Центральной Азии.

Полномасштабной тюркской агрессии владения Саманидов подверглись в правление эмира Ну-ха II (976-997 гг.), вынужденного отражать сильнейший натиск орд караханидов, обрушившийся на северо-восточные границы эмирата. Несмотря на кажущуюся рыхлость внутреннего устройства государства Караханидов, фактически это было даже не государство в строгом смысле этого слова, а союз тюркских кочевых племен (ягма, карлуков и др.) оно обладало мощным военным потенциалом. Собранные караханидами в Хафтруде и Кашгаре многочисленные конные отряды, в 992 г. стремительно ворвались в Мавераннахр.

Начавшаяся война вскрыла военное бессилие государства Саманидов, перед лицом тюркского нашествия. Крупные военачальники тюрки по происхождению не поддержали своего правителя, а хорасанский наместник Абуали Симджури, бывший тайне заодно с караханидским вождем Богра-ханом открыто отказал эмиру в помощи. Посланный навстречу врагу полководец Фаик перешел на его сторону, и войско было разбито. Поднять же народ под лозунгом религиозной войны было уже невозможно ввиду распространения ислама среди тюрков. Караханидские войска легко овладели столичной Бухарой, а Нух принужден был спасаться бегством. Положение спасла только внезапная смерть Богра-хана, после которой захватчики, основательно ограбив Бухару, вернулись домой.

Возвратившийся в Бухару Нух, обратился за помощью к Сабук-тегину, правителю Газны и с его помощью разгромил мятежные силы Абуали Симджури и Фаика в Хорасане, а также в районе Балха. За эту услугу наместничество Хорасана было передано сыну Сабук-тегина – Махмуду. Тем не менее, в 995-996 гг. северо-восточные области, в бассейне Сырдарьи переходят под контроль Караханидов. Здесь образовывается ферганский удел с центром в Узгене, который достался Арслан-илеку Насру. В Хорасане и Мавераннахре напротив чрезвычайно усилилось влияние другой тюркской династии - Газневидов.

В 997 г. к власти пришли Мансур ибн Нух Саманид (997-999 гг.) и Махмуд Газневи (997-1030 гг.). Боясь их растущего сближения, сторонники прокараханидской ориентации при саманидском дворе, правитель Нишанпура Бектузун и вернувшийся на службу Фаик ослепили своего государя и возвели на престол его брата Абдулмалика ибн Нуха. Это послужило поводом к вооруженному вмешательству Махмуда, который принудил самозванца уступить ему сначала левобережную часть бассейна Амударьи, а затем и весь Хорасан<sup>6</sup>.

---

<sup>6</sup> Абу-л-Фазл Баихаки. История Масьуда (1030-1041) / Пер. с перс., введ., комм. и прил. А.К. Арендса. – М., 1969, с. 776-779.

Таким образом, в 999 г. под властью Саманидов остался лишь Мавераннахр. Неудовлетворенный одним только ферганским уделом, караханидский илек Наср ждал лишь удобного случая для захвата богатых оазисов Мавераннахра. Случай представился ему летом того же 999 г., когда Абдулмалик потерпел поражение от Махмуда Газневи в борьбе за Хорасан и бежал в Бухару вместе с дважды изменником Фауком. Сюда же стекались остатки разгромленного саманидского войска. С внезапной смертью Фаука, рухнули надежды Абдулмалика на успешное продолжение борьбы и возвращение Хорасана. Сам он не обладал ни авторитетом, ни энергией необходимой для консолидации растерявшихся сторонников. В этот момент илек Наср начал свой поход на Бухару. Подойдя к Бухаре, хитрый хан, заверив доверчивого эмира в своей дружбе, выманил и захватил, вышедших для его торжественной встречи военачальников Абдулмалика. Накануне решающих боестолкновений армия Саманидов вновь оказалась обезглавленной<sup>7</sup>.

Видимо, после этого Саманиды прибегли к последнему средству, а именно – через проповедников в мечетях обратились к населению Бухары с призывом помочь в борьбе с нашествием Караханидов. Однако бухарцы отнеслись к этому призыву довольно холодно и в свою очередь обратились за советом к авторитетным факифам (мусульманским законникам). Памятуя о карматских симпатиях и сасанидских амбициях Саманидов последние вынесли фатво согласно которому выходило так, что если Саманиды и Караханиды борются за власть, а не за веру, то мусульманам не стоит вмешиваться и напрасно проливать кровь.

23 октября 999 г. Наср занял Бухару и остановился во дворце эмиров. Не сумев организовать сопротивление, Абдулмалик пытался скрыться, но был схвачен и вместе со своим братом

---

<sup>7</sup> В.В. Бартольд считал, что саманидские военачальники добровольно сдались, Насру, то есть имела место очередная тюркская измена. См.: Соч. – Т. I. с. 329.

Абуибрагимом Исмаилом ибн Нухом и другими членами правившего дома отправлен в Узген и заточен в темницу.

В этой ситуации единственным представителем свергнутой династии не опустившим руки и проявившим настойчивость в борьбе за ее реставрацию стал Абуибрагим Исмаил. С помощью обслуживавшей его невольницы он бежал из заточения, сначала скрывался в Бухаре, а затем перебрался в Хорезм. Здесь он стал собирать уцелевшие войска и принял почетное прозвище «ал-Мунтасир» («Победоносный») как свидетельство серьезности своих планов и намерений. В 1000 г. его хаджиб Арслан Балу выступил к Бухаре, разгромил стоявшие здесь караханидские войска и вновь занял город. Остатки разбитых тюркских отрядов отступили к Самарканду, преследуемые Арслан Балу. Навстречу ему из Самарканда выступил брат хана наместник Самарканда Джафар-тегин, объединивший все караханидские силы стоявшие в Мавераннахре. В сражении у моста через Зеравшан Джафар-тегин потерпел жестокое поражение и попал в плен с большим числом своих беков. Все они были заключены в тюрьму в качестве заложников за родственников Мунтасира, находящихся в узгенском плену.

После победы Мунтасир вступил в Бухару, приветствуемый ее жителями как законный правитель. Бухарский монетный двор стал чеканить монеты с его именем. Однако когда караханидский илек Наср направил против него свои основные силы, Мунтасир не смог оказать им должного сопротивления. Оставив Бухару без боя, он отступил в Хорасан, где продолжил свою борьбу, но теперь уже против Махмуда Газневи. В начале он добился частичных успехов и в марте 1001 г. даже занял столицу края Нишанур. Однако вскоре должен был оставить его и отступить дальше на запад к Рею. Обеспокоенный возможностью сговора Мунтасира с Караханидами, Махмуд Газнев отправил к Насру посольство. Был заключен союз,

скрепленный браком Махмуда и дочери Насра, а также установлена граница двух государств по Амударье<sup>8</sup>.

В сентябре 1001 г. Мунтасир снова взял Нишанур, но в сражении под Серахсом был разбит и остался лишь с небольшим числом своих сторонников. В отчаянных поисках союзников Мунтасир обратился к бывшим вассалам Саманидов огузам (гузам)<sup>9</sup>. Конфедерация этих тюркских племен располагалась в низовьях Сырдарьи, ее политическим центром был город Янгикент. Хотя часть, входивших в нее племен, вела оседлый образ жизни, основная масса занималась традиционным кочевым скотоводством. Заинтересованность в расширении кочевий и приобретении новых баз для зимовок толкала огузскую аристократию на постоянные набеги. То есть по своей агрессивности конфедерация огузов ничем не уступала караханидской, собственно на это и рассчитывал Мунтасир.

Вначале события казалось, подтверждали правильность сделанного выбора. С помощью новых союзников в августе 1003 г. ему удалось разгромить войска Насра илекхана. Победителям досталась огромная добыча, множество пленных, в том числе 18 знатных военачальников и огузы были не прочь договориться с Караханидами, имея в руках таких знатных пленников. Мунтасир, опасаясь сговора огузов с врагами, принял решение отступить и искать других союзников.

Поздней осенью 1003 г. с 700 пешими и конными воинами он переправился через Амударью и обратился к Махмуду Газневи с просьбой помочь ему вернуть Бухару. В ответ последний предоставил в распоряжение Мунтасира город Абиверд. Видимо, по его же указанию, наместник в Нисе тоже провозгласил хутбу с именем Мунтасира. Под Дабусией Мунтасир наконец

---

<sup>8</sup> Kitab Zainu'l Akhbar, composed by Abusaid Gardizi, ed. Muhammad Nazim. – London, 1928. – p. 63.

<sup>9</sup> Об огузской конфедерации см.: Толстов С.П. Города гузов // Советская этнография. – 1947. - № 3. с. 55-102; Он же. По древним дельтам Окса и Яксарта. – М., 1962. – с. 273 и сл.; Агаджанов С.Г. Очерки истории огузов и туркмен Средней Азии. – Ашхабад, 1969.

вновь разбил войска илекхана. И что самое главное в Мавераннахре, наконец, началось народное движение за восстановление власти Саманидов. К нему присоединился предводитель самаркандских газиев Харрис, известный под прозвищем Ибн Аламдор, со своим трехтысячным отрядом. Кроме того, городские шейхи Самарканда дали ему в помощь 300 гулямов. Вновь выразили желание встать под командование Мунтасира и огузы.

Укрепив, таким образом, свои силы, он в мае 1004 г. в битве при Бурнамаде (Зап. Уструшана) разгромил, теперь уже самого илека Насра, который бежал в Фергану для сбора нового войска. Преследуя его, Мунтасир атаковал противника на равнине между Джизаком и Хавасом. Но цепь измен и предательств продолжалась. Огузы, захватившие в предыдущей битве богатую добычу, вновь отказались от продолжения борьбы. А в самый критический момент сражения один из крупных тюркских военачальников с четырьмя тысячами своих воинов перешел на сторону противника. Это предрешило исход сражения, и Мунтасир снова бежал в Хорасан.

Но даже после этого, Абубрагим Мунтасир не прекратил своих отчаянных попыток реставрации поверженной династии. Перебываясь из одного района Хорасана в другой он нигде не находил себе места. Наконец, зимой 1004-1005 гг. он в четвертый и последний раз появился в Мавераннахре. Однако воины, утомленные поражениями, неудачами и бесплодными скитаниями, сообщили людям Насра о его местопребывании. Правда, Мунтасиру в этот раз удалось скрыться от погони, но уже в начале 1005 г. он был предательски убит арабом-бедуином, у которого остановился на ночлег<sup>10</sup>. Мунтасир остался единственным представителем дома Саманидов, боровшим-

---

<sup>10</sup> Фролова О.Б. К вопросу об источнике сведений Ибн ал-Асира о правлении Саманидов (X в.) в Средней Азии // Памяти акад. И.Ю. Крачковского. – Л., 1958. – С. 36-43. Ibn-el-Athiri, Chronicon quod perfectissimum inscribitur ed. C.J. Tornberg, I-XIV, Ups, 1851-53 et Lugduni Batavorum 1867-1876. – Т. IX. с. 113

ся за возобновление его власти над Мавераннахром. Его личное поражение означало окончательное прекращение господства местных династий и переход его в руки тюркских завоевателей.

На руинах разгромленного эмирата возникли две мощные военные тюркские империи, поровну поделившие саманидское наследие. Караханидам достались Фергана, Чач (Ташкентский оазис), Илак, Уструшана, Испиджаб, множество мелких горных владений в верховьях Кафирнигана, Вахша и Пянджа – Хутмаль, Чаганиан, Бадахшан, Кабадиан, Дарваз, а также огромные Бухарский и Самаркандский оазисы. Газневиды получили контроль над Гератом и Тохаристаном (античн. Бактрия) с центром в Балхе. В состав их владений вошел расположенный в бассейнах Мургаба и Геруруда богатый Хорасан, со значительными по тем временам городами Нишапуром, Мервом, Абивердом, Тусом, Нисой, Серахсом и деревней Санабад (нынешняя столица региона г. Мешхед). Овладев Гурганом, газневидские отряды достигли Каспия, а затем подчинили себе Хорезм. Третий активный игрок огузы остались без наследства и были временно выведены из активной геополитической игры.

Положение центральноазиатских земель оказавшихся под тюркским владычеством было исключительно тяжелым. Поскольку у лихих степных наездников в принципе отсутствовали навыки управления государством, вся их внутренняя политика сводилась к запугиванию и грабежу покоренного населения с целью выколачивания средств для продолжения междоусобной вооруженной борьбы. Окрыленные победой над Мунтасиром, Караханиды попытались развить успех и уже в 1006-1007 гг. вторглись в Хорасан. Однако неизменно удачливый в войнах Махмуд Газневи отразил вторжение, разбив противника в пух и прах. Поражение Караханидов было столь убедительным, что больше они никогда не пытались проверять на прочность обороноспособность Газневидов, довольствуясь завоеваниями к северу от Амударьи. Перехвативший инициативу и первенство Махмуд Газневи сам перешел в наступление.

Подавив восстания бунтующих провинций, сильно потеснив в Иране Буидов, он увлекся походами в Индию.

Его многочисленные кампании, разорительные для мирного населения, с чисто военной точки зрения были успешными, приносившими богатую добычу и громкую воинскую славу. Вокруг имени удачливого кондотьера образовался ореол непобедимости, привлекавший в его дружину множество тюркских бойцов, желавших причаститься славных побед. В то же время, постоянное игнорирование интересов местных элит в угоду тюркской военной верхушки подрывало центральную власть, делало ее положение на завоеванных землях неустойчивым. Оба упомянутых фактора стали причинами переселения части племен огузов из Приаралья на территории подконтрольные Газневидам. Для усиления контроля над северо-западным пограничьем своих владений, стратегическим тылом его семнадцати индийских походов, Махмуд Газневи разрешил огузам поселиться в районе Абиверда, Серахса, Нисы и Мерва, обязав защищать порученные территории от внешних и внутренних врагов.

Пока был жив великий воин, огузы блюли вассальную верность, но после 1030 г. их поведение по отношению к преемнику Махмуда Масуду стало дерзким. Огузские вожди из рода Сельджука Тогрул-бек и Чагры-бек намеренно провоцировали конфликт, намереваясь выйти из повиновения, а заодно прихватить часть центральноазиатских владений своих прежних сеньоров. Война вспыхнула в 1038 г. За пять лет сельджуки наголову разбили неудачливого Масуда, отняв у Газневидов все территории к северу и западу от Гиндукуша и вытеснив их в Газну и Пенджаб.

Дальнейшая экспансия сельджуков развивалась по восходящей. Нейтрализовав центральноазиатских конкурентов, они обратились на запад. Одерживая одну победу за другой, сельджуки захватили Иран, взяли Багдад, вытеснили византийцев из Армении и Малой Азии и дошли до Босфора. Эти феноменальные успехи сопровождалась жестокими экзекуциями покоренно-



го населения. Многие города Востока, такие как Исфahan или Шираз были превращены в руины.

Для Центральной Азии, эпоха, последовавшая за падением государства Саманидов и его тюркским завоеванием, стала периодом политической нестабильности, экономического упадка и серьезного культурного кризиса. На сто с лишним лет она превратилась в арену жестоких вооруженных столкновений между сельджукскими султанами, вечно бунтующими против них местными тюркскими эмирами, а также Газневидами, не оставлявшими попыток вернуть утраченное влияние на региональную политику. Бесконечные военные кампании воинственных тюркских вождей привели к непомерному росту налогового гнета, разорению крестьянства, упадку торговой и ремесленной активности в городах. Закономерное недовольство новыми порядками неоднократно становилось причиной стихийных восстаний, например, в Хорезме в 1016-1017 гг., жестоко подавляемых тюркской военщиной.

Прогрессивные, гуманистические и патриотические идеи, выдвинутые центральноазиатским Ренессансом, в условиях иностранной оккупации региона были отвергнуты в угоду религиозной реакции. Понижение общего интеллектуально уровня было напрямую связано с низкими эстетическими запросами новой региональной элиты – тюркских ханов (илеков, тегингов, беков), племенных и клановых вождей, их вооруженных вассалов, наемников и гулямов. По сравнению со своими противниками, караханидскими и газневидскими тюрками – типичными солдафонами, Саманиды и в частности Мунтасир, были образованными людьми, ценившими и понимавшими искусство. Сам последний Саманид был практикующим поэтом, до нас дошло следующее его стихотворение:

Я часто слышу: «Для чего ты бежишь от жизненных даров?

Ты мог бы жить в хоромах пышных, среди узорчатых ковров».

Ужель на музыку и пенье сменю я меч и трубный зов?

Ужель не лучше конский топот бесед застольных и пиров?

Кипенье крови на кольчугах всегда я предпочесть готов  
И пьяным поцелуем кравчих, и таинству хмельных пиров  
Поля сражений, свод небесный – вот лучший трон мой, лучший кров.

Стрела и лук – мои тюльпаны и лилии моих садов<sup>11</sup>.

Новые тюркские властители Центральной Азии напротив демонстрировали полное равнодушие к прекрасному. выдающиеся деятели культуры, воспитанные предыдущей просвещенной эпохой в условиях новых реалий подвергались репрессиям и травле. Ярким примером подобного отношения служат биографии двух крупнейших деятелей мировой культуры Абулкосима Фирдоуси и Абуали ибн Сино.

Фирдоуси, закончивший первую часть «Шахнаме» в 994 г., вторую смог завершить только в 1010 г., то есть после падения Саманидов. Поэт сделал попытку преподнести ее новому владыке родного Хорасана Махмуду Газневи. Последний не только не оценил, сделанного подарка, но всячески поощрял притеснения Фирдоуси фундаменталистским духовенством и завистниками. Через несколько лет величайший из поэтов Востока скончался в нищете и атмосфере нетерпимости, созданной вокруг него газневидским режимом. Родственникам даже не было позволено похоронить покойного на мусульманском кладбище и он был похоронен в своем саду в Тусе (ныне развалины города расположены в 25 км. от совр. Мешхеда).

Не меньше испытаний выпало на долю другого выдающегося ученого, мыслителя и литератора ибн Сино. Подобно Фирдоуси, после утверждения в Центральной Азии тюркских милитаристских режимов он подвергся гонениям. В поисках спасения от них он в разное время скрывался в Ургенче, Абиверде, Гургане, Рее, Казвине, Хамадане и Исфахане. Ибн Сино скончался в 1037 г. от тяжелой болезни, вызванной лишениями и невзгодами скитальческой жизни, в самом расцвете своего творчества.

---

<sup>11</sup> Рудаки. – Сталинабад, 1949. с. 119.

Привыкшие за свою многовековую историю к опустошительным иноземным вторжениям, жители Центральной Азии научились довольно быстро восстанавливать порушенное. И до того, после завоевания арабов и в последствии после монгольских и тимуридских погромов трудолюбивым дехканам и жителям древних городов, в общем, удавалось возобновлять уничтоженный экономический и культурный потенциал своего региона. Тем не менее, в известном смысле тюркское завоевание все же стоит особняком, поскольку целый ряд знаний в области ирригационных технологий и земледелия после XI в. был утрачен навсегда, а литературные высоты, достигнутые центральноазиатскими поэтами в эпоху Саманидов, так и остались непревзойденными.

## ՍԱՄՑԻՆԵ - ՋԱՎԱԽՔՈՒՄ ԹՈՒՐՔ ՄԵՍԻՆԵՐԻ /ԱՀԻՍՎԱ/ ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

2007 թ. հունիսի 22-ին Վրաստանի խորհրդարանը, առաջին ընթերցմամբ՝ 134 «կողմ» եւ 14 «դեմ» ձայներով, ընդունեց բռնի տեղահանվածների հայրենադարձության մասին օրինագիծ, համաձայն որի Վրաստանը պատրաստակամություն է հայտնում ընդունելու թուրք-մեսխերին (վրացիները նրանց անվանում են մահմեդական մեսխեր կամ վրացի մահմեդականներ), որոնք անցյալ դարի 40-ականներին տեղահանվել ու արտաքսվել են Վրաստանից: Օրինագիծը վերնագրված է «խորհրդային իշխանությունների կողմից 20-րդ դարի 40-ական թականներին Վրաստանից բռնի տեղահանվածների հայրենադարձության մասին»<sup>1</sup>: Հաստատվում է նաեւ նրանց հայրենադարձի կարգավիճակ տալու ընթացակարգը: Այնուհանդերձ քվեարկությունը անցել է մի խումբ ընդդիմադիր պատգամավորների բացակայության պայմաններում, որոնք ի նշան բողոքի դուրս էին եկել դահլիճից:

Վրաստանի «ժողովրդավարական ճակատ» ընդդիմադիր խմբակցության պահպանողական ներկայացուցիչները մինչ այդ կոչ էին արել իրենց գործընկերներին «ձայն չտալ Վրաստանի դեմ ուղղված, դանդաղ գործողության այս ականին»: Նրանք պահանջում էին մինչեւ Վրաստանի տարածքային ամբողջականության վերականգնումը հետաձգել հայրենադարձության մասին որեւէ օրենքի ընդունում, որպեսզի խուսափեն հերթական հակամարտությունից ու հնարավոր էթնիկ բախումներից: Իրականում թուրք-մեսխերի վերադարձի հարցում շահագրգռված են առավելապես այլ պետություններ: Այդ առումով ընդդիմադիր լեյբորիստական կուսակցության տեղեկատվական գրասենյակից հայտնում են, որ «օ-

---

1. A-Info, Ջավախքի տեղեկատվական կայք, 25.06.2007, <http://www.a-info.org/arm/index.php?>

րինագիծը մշակվել ու նախապատրաստվել է պանթուրքական շարժման ֆինանսավորմամբ՝ հատկացվել է 100 միլիոն եւրո, որից վրացական կառավարությունն արդեն մոտ 400 հազարը իրացրել է»<sup>2</sup>: Եւ ընդհանարապես, նման պարտավորություն իշխանությունը պիտի ստանձնի միմիայն ժողովրդի համաձայնությամբ եւ հանրաքուէի միջոցով:

Հետաքրքիր է, որ դեռեւս չկա նաեւ թուրք-մետսիերի հայրենադարձության հստակ ժամանակացույց եւ որ ամենակարեւորն է՝ Սամցխե-Ջավախքի ո՞ր շրջաններում պիտի վերաբնակեցվեն: Եւ վերջապես բոլորին ավելի քան պարզ է, որ նրանց զանգվածային վերաբնակեցումը երկրամասի յուրաքանչյուր շրջանում հղի է նոր հակամարտությունների առաջացմամբ:

Ինչ վերաբերում է այս օրենքի ընդունման ընդհանրապես նպատակահարմարությանը, ապա խորհրդարանական մեծամասնության ղեկավար Պետրոզի Բոկերիան հայտարարել է, որ այն հիմնավորված է ինչպէս քաղաքական ու պատմական հրամայականով, այնպէս էլ Եւրախորհրդին անդամակցելիս /1999-ին/ ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ: Բոկերիան գտնում է, որ չի կարելի նման կարեւորության խնդիրներ թողնել սերունդներին եւ այսօր պետք է ուղղել սխալը մի ժողովրդի նկատմամբ, որին անարդարացիորեն տեղահանել ու արտաքսել են: Ինչպէս վրացի իշխանություններն ասում իրենք «վերականգնում են պատմական արդարությունը»:

Ըստ ընդունված օրինագծի, նրանք, ովքեր ցանկանում են հետագայում ստանալ Վրաստանի քաղաքացիություն, պետք է մինչեւ 2009 թ. հունվարի 1-ը իրենց բնակության երկրներում վրացական դեսպանություն եւ հյուպատոսություն ներկայացնեն անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը նախ հայրենադարձի կարգավիճակ ստանալու եւ հետո գրանցվելու համար: Սակայն վրացական կա-

---

2. BAGIN Լրատվական Կենտրոն, 01.07.2007, Թբիլիսիում անցկացվեց «Կլոր սեղան» թուրք-մետսիերի հիմնախնդրի շուրջ, <http://www.bagin.info/default.asp?>

ռավարությունը չի ստանձնում ընդհանրապես բնակարաններով ապահովելու եւ ունեցվածքի տարբեր փոխհատուցումների ֆինանսական խնդիրները լուծելու:

**Տեղեկանք.** 1944 թականին այժմյան Սամցխե-Ջավախքի եւ մասամբ էլ Աջարիայի տարածքից Միջին Ասիա եւ Ղազախստան տեղահանվեցին մոտ 100 հազար մեսխեթի թուրքեր, քրդեր, հեմ-շիլներ /մահմեդականացած հայեր/ եւ ազերիներ՝ «դավաճանություն» մեղադրանքով: Հետագայում թուրք-մեսխեթ էթնիկ անվանումը տարածվեց բոլոր այն ազգերի վրա, որոնց բռնի տեղահանել էին Վրաստանի այդ տարածքներից: Միայն 1956 թ. ԽՍՀՄ Պերագույն Խորհրդի նախագահության հատուկ հրամանագրով բռնագաղթածներին շնորհեցին ազատ տեղաշարժի իրավունք, իսկ 1974թ. ԽՍՀՄ կառավարությունը նրանց թույլատրեց վերադառնալ հայրենի բնակատեղերը, սակայն զանգվածային հայրենադարձություն տեղի չունեցավ, քանզի Վրաստանի իշխանությունները ամեն կերպ խոչընդոտում էին: Ինչեւէ, 1989 թ. Ֆերգանայում թուրք-մեսխեթի եւ ուզբեկների միջեւ տեղի ունեցած էթնիկ բախումների արդյունքում ավելի քան 75 հազար մեսխեթ ստիպված հեռացան: Նույն թւի հունիսին ԽՍՀՄ Պերագույն Խորհրդի Ազգությունների պալատում ստեղծվեց մի հանձնաժողով, որը պետք է ուսումնասիրեր պատմական հայրենիք վերադառնալու հնարավորությունները: Այնուհանդերձ այդ տարիներին թուրք-մեսխեթը բնակություն հաստատեցին հիմնականում Ադրբեջանում, Ռուսաստանում եւ մասամբ Հյուսիսային Կովկասում: Իսկ 1989 թ. սեպտեմբերին թուրք-մեսխեթի 10-րդ համագումարը վերջնական որոշում ընդունեց վերդառնալ պատմական հայրենիք՝ Մեսխեթի<sup>3</sup>:

Ընդհանրապես գոյություն ունի երեք վարկած այն մասին, թե ինչպես են թուրքերը հայտնվել Վրաստանի Մեսխեթիում, որը սահմանակից է Թուրքիային: Ըստ առաջին տարբերակի, թուրքերը

---

3.Сергей Маркедонов, Что будет с Джавахком, Проект Института национальной Стратегии, М., ноябрь 2005

Վրաստանի այս շրջանում սկսել բնակվել օսմանցի թուրքերի պարբերական արշավանքների ժամանակ դեռևս 16-17-րդ դարերում, երբ այդ երկրամասը վերջնական անցավ թուրքական տիրապետության տակ: Համաձայն երկրորդ` թուրքական տարբերակի, նրանք այստեղ հայտնվել են ավելի առաջ` սելջուկ-թուրքերի արշավանքների եւ հետո արդեն նրանց զանգվածային միգրացիայի արդյունքում: Այս տարբերակը կարծես այնքան էլ չի հակասում առաջինին: Ըստ երեւույթին եղել է թուրքերի միգրացիայի երկու խոշոր ալիք եւ նրանց ինչ որ հատված բնակություն է հաստատել առաջինի ժամանակ , իսկ հետագայում նրանց միացել են երկրորդ ալիքի տեղակոխվածները: Ըստ երրորդ տարբերակի` վրացի մի խումբ պատմաբաններ պնդում են, թե մեսխեթի թուրքերը դրանք պարզապես թրքացած վրացիներ են, որոնք հարկադրաբար իսլամ են ընդունել թուրքական տիրապետության օրոք<sup>4</sup> :

ԽՍՀՄ-ի տարածքում բնակվող թուրք-մեսխեթի ընդհանուր թիվը նախկինում հաշվվում էր մոտ 200 հազարից ավելի, սակայն ազգային նախաձեռնության մի խմբի տվյալների համաձայն, այսօր նրանց թիւը հասնում է մոտ 400 հազարի:

1999 թ. Վրաստանը անդամակցեց Եւրախորհրդին, որի ընթացքում պարտավորվեց թուրք-մեսխեթի հայրենադարձության համար ստեղծել բոլոր անհրաժեշտ տնտեսական եւ քաղաքական պայմանները: Սակայն մեսխեթը Վրաստանում հայրենադարձության իրենց բնակավայրերի հարցում միաբան չեն, օրինակ «Վաթան» հայրենակցական միության անդամները գտնում են, որ պետք է վերադառնալ միայն Սամցխե-Ջավախեթի շրջանները, որտեղ իբր մինչ հիմա դատարկ են նրանց նախնիների գյուղերը, իսկ «Խսնա» /«Փրկություն»/ ընկերության ղեկավարները, որոնք համարում են իրենց մահմեդականացած վրացիներ` պատրաստ են բնակվելու Վրաստանի յուրաքանչյուր շրջանում: «Վաթանի» ակ-

---

4.Виктор Солахян, Проблема месхетинских турок и новые подходы к ее решению, Южно-Кавказский Институт Региональной Безопасности, SCIRS, 2003

տիվիստներն արդեն ձեռնամուխ են եղել գրասենյակի բացմանը Թբիլիսիում, որը զբաղվելու է հայրենադարձության ու տեղավորման հարցերով: Նրանք նաեւ հայտարարել են, որ բարդություններ առաջանալու դեպքում, վրացական իշխանությունները երբեք չպետք է հիշատակեն ֆինանսական խնդիրները որպես պատրվակ, քանզի ԵՄ-ն իր վրա է վերցրել այդ կարեւոր հարցը:

Իհարկե հար եւ նման հայտարարություններն ու մոտեցումները, մանավանդ այդ օրինագծի խորհրդարանական ընդունումից հետո, իրենց արծազանքը գտան Ջավախքի ինչպես հայ, այնպես էլ վրացի ազգաբնակչության շրջանում: Ջավախահայերի մոտ պատմական հիշողությունը կապված ցեղասպանության հետ անմիջապես արտահայտվեց ողջ համայնքի տրամադրությունների ու դիրքորոշման վրա: Ի դեպ իրականում այսօրվա հայաբնակ շրջաններից շատ քիչ թույլ թուրք-մեսխեր են արտաքսվել: Իսկ վրացի պահպանողական ընդդիմադիր կուսակցության անդամները Ախալցխայի շրջանում ձեռնարկել են ստորագրահավաք ընդդեմ թուրք-մեսխերի վերադարձի եւ պահանջել են ստեղծել հատուկ հանձնաժողով, որը կուսումնասիրի այդ հայրենադարձության նպատակահարմարությունը: Պահպանողականները գտնում են նաեւ, որ իշխանությունները պետք է վերջնական հայտարարեն հայրենադարձվողների հստակ քանակը, նրանց բնակեցման շրջանները (հաշվի առնելով տեղացիների կարծիքը), եւ թե ո՞րքան հավատարիմ կլինեն Վրաստանին այն մահմեդական եկվորները, որոնք հեռացել են 60 տարի առաջ ու դարձել են բոլորովին այլ արժեքների ու մշակույթի կրողներ:

Թուրքիան առաջիններից արծազանքեց այս օրինագծին, քանզի վերջին շրջանում առիթը բաց չէր թողնում «նախատելու» վրացիներին իերնց ազգակիցների ներգաղթի օրինականացման հարցերում կրավորական դիրքի համար: Նրանց պաշտոնական դիրքորոշումը հնչում է հետեւյալ կերպ. «Նախ ահիսկա-թուրքերի (պետք է հասկանալ թուրք-մեսխերի, ժամանակակից թուրքերը նրանց անվանում են «ահիսկա», Ա.Հ.) վերդարարձը Սամցխե-Ջավախեթի՝ պատմական արդարության վերականգնում է, ուստի պետք է ստեղծել բոլոր



անհրաժեշտ պայմանները նախնիների հողի վրա նրանց էթնիկ մշակութային հետազա գարգացումը ապահովելու: Ինչ վերաբերում է վրացական իշխանություններին եւ Վրաստանի արդի էթնոազգային միավորումներին, ապա անհանգստության հիմնական պատճառը սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակն է, որը խոչընդոտելու է հայրենադարձների տեղավորման ու նրանց ազատ գործունեության հնարավորությունները: Միաժամանակ բացահայտ է եւ այն, որ ահիսկա-թուրքերի ներգաղթի հետ կապված խնդիրների լուծումը չպետք է իրականացվի վրացիների, հայերի եւ ընդհանրապես երկրամասում ապրող այլ ազգությունների քաղաքացիական ու քաղաքական իրավունքների հաշվին»<sup>5</sup>: Ի դեպ 1992 թ. Թուրքիան ընդունել է հատուկ մի օրենք, որի համաձայն թուրք-մեսխեթի բնակեցումը Թուրքիայի տարածքում բավական պարզեցվել է: Ընդ որում այնտեղ տեղափոխվածները, որոնք բնակություն են հաստատել հիմնականում Բուրսայում, կարծես այլեւս ցանկություն չեն հայտնում Վրաստան վերադառնալու:

Այսօր աշխարհի շատ երկրներում ապրում են թուրք-մեսխեթ, որոնց թիւն ըստ տարբեր աղբյուրների տվյալների տատանվում է 300-ից 400 հազար, այդ թւում Ուզբեկստանում, Ղազախստանում, Ղրղզստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ուկրաինայում, Թուրքիայում եւ Ադրբեջանում /այս երկրներում նրանց քանակը, ըստ տարբեր աղբյուրների իրարամերժ է, ուստի չի նշվում/: Իսկ օրինակ ՌԴ Կրասնոդարի երկրամասում բնակվող մոտ 14 հազար թուրք-մեսխեթի մեծ մասն արդեն մեկնել են ԱՄՆ եւ մնացել է ընդամենը 1-2 հազարը:<sup>6</sup> Ըստ ամերիկյան այդ ծրագրի, Ռուսաստա-

---

5. Мамука Бакашвили, Турок-месхов оттолкнул от Грузии Шеварднадзе, Российско-грузинский аналитический сайт: Газета "24 саати", Тбилиси, 11/07/2007

6. Կուբանի պետ. համալսարանի պրոֆեսոր Միխայիլ Սավվաի ելույթից, վերնագրված «Կրասնոդարի մարզի հայերը ժամանակակից միգրացիոն իրողությունների համատեքստում»: Գիտագործնական միջազգային կոնֆերանս «Հայկական համայնքները արդի փուլում. Գոյապահպանության հեռանկարներ» թեմայով, Երեւան, 19-20 հունիսի, 2007 թ.:

նից ԱՄՆ մշտական բնակության մեկնող թուրք-մեսիսերի համար սահմանվել է քուտա՝ 22 հազար մարդ:

Եւրամիությունը Վրաստանում թուրք-մեսիսերի վերաբնակեցման համար պատրաստ է սկզբնական շրջանում հատկացնել 40 միլիոն եւրո: Ավելին, եւրոպական առաջատար պետությունները հայրենադարձության այս գործընթացը դիտում են որպէս եւրոպականացման հերթական չափորոշիչ - ստուգարք Վրաստանի համար:

Որոշ տվյալների համաձայն, հարեւան Ադրբեջանում ապրում են 70-ից մինչեւ 100 հազար թուրք-մեսիսեր եւ հենց սրանց վերաբնակեցման հարցն է, որ տազնապում է Ջավախքի հայերին: Բավական մտահոգիչ է այս պարագայում նաեւ վրացական իշխանությունների մոտեցումներն ընդհանրապէս էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ՝ «եկվորներ» ու «բնիկներ» ձեւակերպումների կամ նման այլ որակումների առումով: Պարզվում է արխագները, օսերը եւ այդ թւում նաեւ հայերն ու ռուս դուխոբորները եկվորներ են, իսկ ասենք թուրք-մեսիսերի (կամ ինչպէս վրացիներն են ասում՝ մահմեդական մեսիսեթների) վերաբնակեցումը կատարվելու է նրանց «նախնիների հողի» վրա, այսինքն ստացվում է, որ նրանք «բնիկներ են» սվանների ու մեգրելների նման: Ինչեւէ, արդի թուրքական քաղաքական ղեկավարությունը, որը պարբերաբար հիշեցնում էր իր ստրատեգիական գործընկերոջը Վրաստանին թուրք-մեսիսերի /ահիսկա/ հայրենադարձությունը օրինականացնելու վերաբերյալ պաշտոնական փաստաթղթի կամ օրենքի բացակայության մասին, այսօր կարող են ավելի հստակեցնել իրենց կողմնորոշումները /ներգաղթող թուրք - բնիկների հաշվին/ Հարավային Կովկասի այդ երկրամասում, որտեղ ռազմավարական ծրագրերն ու պանթուրքական հեռանկարները շատ դեպքերում լիարժեքորեն չէին իրականացվում միայն հայ ազգաբնակչության ներկայության պարագայում, այսօր կարող է «կանաչ լույս» վառվել:

Ջավախքը, գաղտնիք չէ, վերջերս բավական լուրջ դեր խաղաց այդ տարածաշրջանով ստրատեգիական տարբեր ենթակա-

ռույցների՝ էներգակիրների կառուցման, դրանց նպատակաուղղված պաշտպանության ու հետագա զարգացման անհրաժեշտության հրատապ խնդիրներում: Այսօր այդ օրինագծի ընդունման եւ թուրք ազգայնականների ակտիվացման հանգամանքները թույլ են տալիս համաձայնվելու մի շարք վերլուծաբանների նաեւ այն կարծիքի հետ, որ ԽՍՀՄ փլուզման շեմին Ֆերգանայի (Ուզբեկստան, 1989 թ.) արյունալի դեպքերը թուրքական հատուկ ծառայությունների իրականացվող ծրագրի ընդամենը առաջին փուլն էր: Մեկ այլ վարկածի համաձայն, Մեսխեթի թուրքերին Երկրորդ աշխարհամարտի տարիներին ոչ թե արտաքսել, այլ ընդամենը վերադարձրել են իրենց նախնիների պատմական հողի վրա՝ Միջին Ասիա ապրելու: «Ուստի չարաչար սխալվում են այն վրացի գործիչները, ովքեր համարում են նրանց հարկադիր մահմեդականություն ընդունած վրացիներ: Եւ եթե Վրաստանը ժողովրդավարական պետություն է եւ ընդունում է մարդկանց ազատ տեղաշարժի սկզբունքը, իսկ մեսխեթն էլ էթնիկ վրացիներ են, ապա վերջիններս կարող էին անկախություն ձեռք բերելուց հետո ազատ հայրենիք վերադառնալին առանց որեւէ հատուկ օրինագծի ընդունման»<sup>7</sup>, նույնիսկ եթե ժամանակին Վրաստանը ստանձնել էր այն որպես պարտավորություն ԵԽՄԿ-ում:

Վրաց հասարակայնությունը միանշանակ չի ընդունել թուրքմեսխեթի կամ մահմեդական մեսխեթի հայրենադարձության մասին օրենքը, որն ինչպես հայտնի է ընդունվել է մեծ ուշացումով: Այսինքն ի սկզբանե ե՛ւ խորհրդարանում, ե՛ւ նրանից դուրս այն իր հակառակորդներն ուներ, որոնք համարյա 7-8 տարով հետաձգել էին օրինագիծը: Վրաստանի խորհրդարանին կից Եւրոպական կենտրոնի ազգային փոքրամասնությունների հարցերով խորհրդական Լոմսաձեն հայտարարել է, որ դեռեւս մի քանի տարի առաջ

---

7. Грузия / Общество, Органы власти, Международные отношения, Права человека, Этнос. В Грузии репатриация месхов-мусульман вызывает споры. В тбилисском бюро РИА «Новости» состоялся круглый стол по вопросам репатриации месхов-мусульман в Грузию. Кавказский Узел / Новости, 01/07/2007

մահմեդական-մեսիսերի հայրենադարձման պետական հանձնաժողովը մշակել ու ներկայացրել է «Հայրենադարձության նախապատրաստման պլան», որտեղ մանրամասն նկարագրված է վերաբնակեցման ողջ գործընթացը՝ փուլ առ փուլ: Ըստ այդ ծրագրի, սկզբնական շրջանում նախատեսվում էր տարեկան մոտ 3 հազար հոգու ներգաղթ, որոնք ի դեպ պետք է տեղավորվեին Վրաստանի ողջ տարածքում: Միաժամանակ նախատեսված էին այն բոլոր միջոցառումները, որոնք անհրաժեշտ են բացառելու եւ խուսափելու բյուրոկրատական արգելքներից մանավանդ նորաբնակների ինտեգրման հարցերում եւ որոշ գերատեսչությունների պաշտոնեաների հետ շփումների ընթացքում: Այսինքն օրինագծի ընդունումը բնավ անսպասելի չէր եւ վրաց հասարակայնությունը տեղյակ էր եւ անգամ նախապատրաստված:

Վերջապես Եւրամիությունը բացի այն, որ սկզբնական շրջանի համար նախատեսել էր մի քանի տասնյակ միլիոն եւրո, խոստացել է հոգալ նաեւ հայրենադարձությունից հետո առաջացած ծախսերը:

Իհարկե նման դեպքերում պետք է անդրադառնալ համաշխարհային փորձին եւ դա հասկանում են Վրաստանի քաղաքական ու հասարակական գործիչները: Թբիլիսիում Իսրայելի դեսպանը մեծապես օգնել է իշխանություններին եւ ըստ որոշ աղբյուրների տրամադրել է իրենց մոտ եղած համապատասխան օբեկտներն ու փաստաթղթերը: Բացի այդ օրինագծի վրա աշխատել են նաեւ հրեա իրավաբաններ, տարբեր փորձագետներ: Այսպիսով, բոլոր այն 8 պետություններում, որտեղ բնակվում են մեսիսեր, վրացական դեսպանություններին եւ հյուպատոսություններին կից պետք է ստեղծվեն հատուկ հանձնաժողովներ, որոնք սկզբնական շրջանում պետք է ընդունեն անհատական դիմումներ եւ ուղարկեն Հայրենադարձության գերատեսչություն /կարգավիճակով հավասարված նախարարության/, որն էլ պետք է արձանագրի եւ ուսումնասիրի այդ տվյալները, որից հետո սկսվելու է խմբակային /քուտային/ հայրենադարձման գործընթացը: Համարյա այնպես, ինչպես մինչ հիմա հայրենադարձություն է իրականացնում հրեական

պետությունը: Հակամարտությունների կարգավորման հարցերով նախկին պետնախարար Գեորգի Խահնդրավան ընդգծել է, որ պետք է անպայման ստեղծվեն նաեւ տեղական ու տարածաշրջանային հատուկ խմբեր, որոնք պիտի հետեւեն կենցաղային ու ենթակառուցվածքային ապահովման հարցերին եւ որ ամենակարելւորն է՝ Թբիլիսիում պետք է բացվի վրացերեն լեզվի ուսումնասիրման կենտրոն՝ հատուկ ներգաղթող մեսխեթների համար:

«Ժողովրդավարական ճակատ» ընդդիմադիր խմբակցությունը, որը փատորեն բոյկոտել էր այդ օրինագծի ընդունումը, գտնում է, որ անհրաժեշտ են հիմնավոր փոփոխություններ օրենքում: Նախ հայրենադարձները պետք է տիրապետեն վրացերենին, որպեսզի նրանց քաղաքացիություն շնորհվի եւ երկրորդ՝ պետք է սահմանվեն հստակ քուտաներ /դրանք կարող են լինել տարածքային, շրջանային կամ տարեկան/, որոնք կկարգավորեն վերադարձող մեսխեթի քանակը եւ իհարկե կկանխեն անկանխատեսելի վտանգները Վրաստանի համար: Ընդունված Օրենքը Վրաստանի ընդդիմադիր պատգամավորներն արդեն որակել են որպես «տեղահանվածների հայրենադարձության հետ ոչ մի կապ չունեցող փաստաթուղթ»<sup>8</sup>, որը քաղաքական այլ նպատակներ ու մեկնություններ ունի: Այն է՝ իշխող կուսակցության առաջնորդներից մեկի Գ. Բոկերիայի եւ նրա համախոհների կողմից Եւրախորհրդին տված խոստման կատարումն է՝ ընդ որում Վրաստանի համար ամենածանր գնով: Իսկ իրականում իշխանություններին բնավ չի հուզում մեսխեթի հիմնախնդիրը եւ ընդհանրապես պետության շահերը: Նրանք ակնկալում են հարյուրավոր միլիոն եւրոյի ներհույք, որը կփոշիանա հենց ճանապարհին: Ընդդիմադիրները նշում են նաեւ, որ Վրաստանի արդի իշխանություններին բնորոշ է ծայրահեղությունները, ուստի կամ նրանք «կչարչարեն մեսխեթին բյուրոկրատական իրենց քաշքշուկներով, կամ էլ ներս կթողնեն այն-

---

8. BAGIN Լրատվական Կենտրոն, 01.07.2007, Թբիլիսիում անցկացվեց «կլոր սեղան» թուրք-մեսխեթի հիմնախնդրի շուրջ, <http://www.bagin.info/default.asp?>

քան մեծ թույլ մահմեդականների, որ լրացուցիչ խնդիրներ ու սպառնալիքներ կառաջանան պետության անվտանգությանը»<sup>9</sup>:

Այսպիսով Վրաստանի խորհրդարանի այս օրինագիծը դառնում է լուրջ փորձաքար ոչ միայն իշխանությունների, այլ նաեւ այն մեսիսների համար, ովքեր խորհրդային բռնություններից տուժածների շահավետ դիրք էին ընդունել, որոնց ի դեպ հալածում են անգամ 21-րդ դարում, եւ որոնք հոծ զանգվածներով տեղափոխվում են մշտական բնակության ԱՄՆ ու մասամբ էլ Թուրքիա: Վրաց իշխանություններն անշուշտ հիանալի գիտակցում են, որ կգտնվեն հատ ու կենտ երկրներ, որտեղից զանգվածային հայրենադարձության բուռն ցանկություն կառաջանա դեպի Վրաստան, ուստի ապավինում են 2 պարզ ու կանխատեսելի հանգամանքների՝ առաջինը, եթե իրականում թուրքերի բազմահազար հայրենադարձություն տեղի չունենա, ապա Եւրոպայի եւ միջազգային հանրության առջեւ հանդես կգան որպես խոսքի տեր եւ ժողովրդավար, երիտասարդ պետություն, որը հարգում է փոքրամասնությունների իրավունքները եւ երկրորդ՝ եթե այնուամենայնիվ թուրք-մեսիսերն առավելապես Ադրբեջանից ու Միջին Ասիայից փորձեն օգտվել այս իրավունքից եւ հաղթահարելով վրացական բյուրոկրատիայի բազում քաշքշուկները, սկսեն զանգվածային ներգաղթ իրենց նախկին բնակավայրերը, ի դեպ հիմնականում Ադիգենի, Ասպինձայի եւ մասամբ էլ Ախալցխայի շրջաններ, ապա վրաց իշխանությունները, վտանգն իրենցից հեռացնելու նպատակով՝ կփորձեն տեղում հրահրել հայ-թուրքական բախումներ, որոնք կդառնան արդարանալու ամենահիմնավոր ու «տրամաբանական» պատրվակը եւ Եւրոպայի, եւ Թուրքիայի առջեւ: Իսկ դրա մասին նրանք (վրացիները) ժամանակին, ապահովագրելով իրենց ժողովրդավար համբավը, զգուշացրել են միջազգային հանրությանն ու կառույցներին:

Իհարկե վրացական քաղաքական ընտրանին ամեն զնով աշխատելու է թուրքական այս հերթական «արշավանքից» կամ էթ-

---

9. Նույն տեղում

նիկ-տարածքային ընդլայնումից դուրս պրծնել չնչին վնասներով, ուստի եթե հարկ լինի, ապա վտանգի սուր սայրն առանց վարանելու կշռջեն դեպի Ջավախքի ամենակտիվ դերակատարի՝ հայ համայնքի վրա: Այսինքն նույնիսկ փոքր թուվ վերաբնակեցված թուրք-մեսխերն իրենց խնդիրներով, անմիջապես դառնալու են լրացուցիչ լծակ ջավախահայության, միաժամանակ եւ Հայաստանի նկատմամբ:

### **Ադրբեջանի թուրք-մեսխերը եւ Վրաստանի խորհրդարանի օրենագիծը**

Պատահական չէ, որ Վրաստանի խորհրդարանի հունիսի 22-ի որոշմանը առաջիններից արձագանքեցին թուրք-մեսխերի ազգային, հասարակական կազմակերպություններից «Վաթան» հայրենակցական միության ադրբեջանական ներկայացուցչությունը: Մասնաճյուղի նախագահ Իբրահիմ Բուրխանովը անմիջապես հայտարարեց, որ նրանք անպայման վերադառնալու են, ընդ որում միայն Ջավախք, որն իրենց պատմական հայրենիքն է: Նա նաեւ նշել է, որ Ադրբեջանի թուրք-մեսխերը հասկանում են, որ Օրենքի իրականացման ընթացքում առաջանալու են խոչընդոտներ, քանզի Վրաստանում կան ուժեր, որոնք դեմ են նրանց հայրենադարձմանը: Սակայն օգնության հույսերը նրանք կապելու են նախ Վրաստանի ժողովրդավար արդի իշխանությունների, հետո միջազգային կառույցների ու բարեկամ պետությունների հետ: Դժվար չէ կռահել, թե բարեկամ պետություններից ո՞վ է առաջինը: Ըստ օրինագծի պայմանների՝ ուժի մեջ մտնելուց 6 ամսվա ընթացքում պետք է ստեղծվի Հայրենադարձության հիմնադրամ, որը կգործի դոնոր պետություններից եւ միջազգային կազմակերպություններից փոխանցվող դրամական միջոցների հաշվին: Ահավասիկ մի նոր առիթ դեպի Վրաստան պանթուրքական ֆինանսական հոսքի, որը տակավին նոր երեւոյթ չէ եւ վրաց ժողովրդավար իշ-

խանութիւններն ասես արդեն հավուր պատշաճի են ընդունում այդ գումարները կամ ավելի ճիշտ նվիրատվութիւնները:<sup>10</sup>

Նույն Բուրխանովը եւ իր թուրք-ահիսկա համայնքը գտնում են, որ միայն Ջավախքում կա ավելի քան 20 գյուղ, որտեղից նրանք վտարվել են եւ այսօր դրանք բնակեցված են հայերով: Այս ամիթով բավական հետաքրքիր է Բուրխանովի դիմումը վրաց իշխանութիւններին, առ այն, որ նրանք պետք է ապացուցեն, որ հայերն ու թուրքերը կարող են նույն տարածքում խաղաղ գոյատեւել: Ընդհանրապէս թուրք-մեսխետի հայրենադարձութեան «հավակնութիւնները 5 շրջանների նկատմամբ է, որոնք գտնվում են Վրաստանի հարավ-արեւելյան մասում՝ Թուրքիայի հետ անմիջական հարեւանութեամբ /տես Հավելված թիւ2/»<sup>11</sup>, այսինքն Սամցխե-Ջավախքում: Ի դեպ նրանց հիմնական բնակատեղերում արդեն վաղուց վրացիներ են ապրում:

Իսկ Ադրբեջանում ահիսկա-թուրքերը, թուվ ավելի քան 70 հազար /որոշ տվյալներով, մինչեւ 100 հազար/ բնակվում են հիմնականում Սաբիրաբադ-Սահաթլի եւ Ղուբա-Խաչմասում, ինչպէս նաեւ այլ քաղաքներում՝ Շամխորում, Ղազախում եւ այլն: Նրանք առաջին անգամ այստեղ հայտնվեցին Ուզբեկստանից (Ֆերգանա-

---

10. Խոսքը վերաբերում է Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծի վրացական հատվածի շինարարության համար Ադրբեջանի Պետական նավթային ֆոնդի միջոցներից հատկացվող 200 մլն դոլար վարկի մասին, որը տրվում է 25 տարի ժամկետով, տարեկան 1% դրույքով եւ Վրաստանը կարող է այն մարել շինարարության գործարկումից հետո, այսինքն տրանզիտային վճարումների հաշվին: Վարկային առաջին մասնաբաժնի հատկացումը կատարվել է հուլիսին /2007թ./ եւ Ադրբեջանի միջազգային բանկը «Մարաբդա - Կարծախ երկաթուղի» վրացական ընկերությանը (որը մայրուղու շինարարության վրացական ողջ հատվածի կապալառու է), փոխանցել է 40 մլն դոլար, որը պետք է ծախսվի 29 կմ-անոց այն հատվածի շինարարության վրա, որ սկսվում է վրաց-թուրքական սահմանից՝ Կարծախից եւ ձգվում մինչեւ Ախալքալաք:

11. «Турки-месхетинцы обязательно вернуться в Джавахетию, и грузинские власти должны доказать, что турки и армяне могут мирно сосуществовать», Интервью с председателем общества тюрк-месхетинцев Азербайджана «Ветен» Ибрагимом Бурхановым, Газета СНГ, 18.07.2007



յի հայտնի դեպքերից հետո) դեռևս 1989 թին, համարյա Հայաստանի ազերիների հետ միասին եւ ստացան փախստականի կարգավիճակ: Մեսխերը անմիջապես ձեռնամուխ եղան Վրաստան տեղափոխվելու գործընթացին, քանզի հիանալի գիտակցում էին, որ եթե հարցը ձգձգվի, ապա մի քանի տարի հետո կվերապրեն երրորդ տեղահանությունը: Այդպես էլ եղավ, ԽՍՀՄ ՊԽ կողմից ստեղծված հատուկ հանձնաժողովը 2 տարի անց այլևս ոչ մի լիազորություն չուներ: Եւ միայն 1995 թ. առաջին ու դեռևս վերջին թուրք-մեսխերը /մոտ հազար հոգի/ Ադրբեջանից, միջազգային հասարակական կազմակերպությունների աջակցությամբ, տեղափոխվեցին Վրաստան:

Իհարկե Վրաստանի արդի սոցիալ-տնտեսական վիճակի եւ փոքրամասնությունների բազում չլուծված խնդիրների ու ներքաղաքական պարբերական անկայունության պարագայում շատերը, անգամ Ադրբեջանի թուրք-մեսխերը, դեռ ձեռնպահ կմնան վերջնական որոշում ընդունելուց: Չնայած ըստ հարցախույզի արդյունքների (իրականացրած Փոքրամասնությունների հարցերով եւրոպական կենտրոնի (ECMI) կողմից՝ մի շարք երկրներում), թուրք-մեսխերի մեծամասնությունը հայտարարել է, թե ուզում են վերադառնալ իրենց պատմական հայրենիքը, սակայն դա ընդամենը ցանկության արտահայտություն է եւ ոչ ավելի: Փորձագետները գտնում են, որ այս փուլում զանգվածային հայրենադարձություն չի լինելու, քանզի մեսխերից շատերը սոցիալական ու տնտեսական համեմատաբար բարեկեցիկ պայմաններում են այն պետություններում, որտեղ նրանց արդեն չորրորդ սերունդն է աճում:

Թերեւս ընտելացած լինելով տարագրությանը, թուրք-մեսխերն Ադրբեջանում քաղաքական ու հասարակական ակտիվ գործունեությամբ չեն զբաղվել, տնտեսական պահանջներ համարյա չեն ներկայացրել եւ աշխատել են հարցերը լուծել սեփական ուժերով: Վերջապես անցել է ավելի քան 18 տարի եւ նրանք արդեն ինտեգրվել են նոր միջավայրում, որտեղ լուրջ խնդիրներ ու վտանգներ չեն եղել: Այսինքն փախստականների այս համայնքի մասին

Աղբբեջանի քաղաքական ղեկավարությունը համարյա մոռացել էր:<sup>12</sup>

Այնուամենայնիվ, հետաքրքիր է, որ ե՛ւ վրացական, ե՛ւ աղբբեջանական մամուլը, անդրադառնալով մեսխերի վերաբնակեցման տարաբնույթ հարցերին, անընդհատ շեշտում են, որ տեղահանվելուց հետո նրանց գյուղերն ու բնակավայրերը զբաղեցրել են ջավախահայերը, որոնց հետ այնուամենայնիվ առանձնակի խնդիրները չեն ուզում ունենալ ո՛չ ազերական մեսխերը, ոչ էլ առավել եւս վրացական արդի իշխանությունները: Այսինքն հարցի բոլոր մեկնաբանություններում որպես պատրվակ նշվում է այն, որ իբր ոչ ոք մտադիր չէ հայերին նեղացնել կամ տեղահանել: Սակայն իրականում բնավ այդպես չէ: Թուրք-մեսխերի գերակշռող մասին բռնի տեղահանել են հիմնականում արդի Սամցխե-Ջավախքի երեք շրջաններից՝ Ադիգենից, Ախալցխայից եւ Ասպինձայից, իսկ այդ շրջաններն այժմ բնակեցված են մեծամասամբ վրացիներով /բացի Ախալցխայից/, քանզի նրանք են գրավել թուրք-մեսխերի գյուղերն ու տները: Իհարկե որոշ եւ շատ քիչ մասը հեռացել է նաեւ հայաբնակ շրջաններից, սակայն դա այնքան չնչին է, որ չի կարող քաղաքական, տնտեսական եւ այլ շահարկումների առարկա դառնալ: Այսինքն թուրք-մեսխերի վերադառնալու դեպքում, եթե խնդիրներ առաջանան, ապա դրանք պետք է քննարկվեն ու հարթվեն հիմնականում, կամ միմիայն տիտղոսային ազգի՝ վրացիների հետ: Սակայն շահարկվում է մեկ այլ տրամադրություն կամ միտում, ըստ որի ե՛ւ վրացական, ե՛ւ ազերական կողմը փորձելու են հետագայում հայրենադարձության ու վերաբնակեցման հետ կապված յուրաքանչյուր ծախողված հարց ու բացասական գործընթաց կապել Ջավախքի հայերի անվան հետ:

Ամփոփելով, անհրաժեշտ ենք համարում առանձնացնել եզրահանգումային մի շարք դրույթներ, որոնք մեր հասարակության

---

12. Ирада Гусейнова, Беженцы, их положение и роль в современном азербайджанском обществе, Южно-Кавказский Институт Региональной Безопасности, SCIRS, Июль 2006

Եւ համապատասխան գերատեսչությունների համար պետք է դառնան հատուկ ուշադրության ու քննարկումների առարկա, քանզի իրենց մեջ պարունակում են ինչպես հնարավոր վտանգներ, այնպես էլ տարածաշրջանային, գեոքաղաքական շրջադարձերի եւ ուժերի վերադասավորման լուրջ սպառնալիքներ: Այսպես.

- Վրաստանի խորհրդարանը սույն թւի հունիսին ընդունել է օրենք՝ «20-րդ դարի 40-ական թւականներին խորհրդային իշխանությունների կողմից Վրաստանից բռնի տեղահանվածների հայրենադարձության» մասին, որը միանշանակ չի ընդունվել ոչ վրացական հասարակության կողմից, ոչ էլ իրենց՝ թուրք-մեսխերի: Ուստի կառավարությունը նախապատրաստում է մեկ այլ լրացուցիչ օրինագիծ, որը վերաբերվելու է զուտ թուրք-մեսխերի հայրենադարձությանը եւ այդ գործընթացի իրավական կողմերին ու մանրամասներին: Վրացական խորհրդարանը թերեւս աշնանը կքննարկի ու կհաստատի այն, ինչը ավելի կհստակեցնի հենց թուրք-մեսխերի /ահիսկա/ հայրենադարձման խնդիրը ու հետագա իրավիճակը:
- Վրացական իշխանությունները ակնհայտորեն չեն ցանկանում նորից կենտրոնացնել թուրք-մեսխերին իրենց նախկին բնակավայրերում՝ Թուրքիայի սահմանամերձ շրջաններում /Սամցխե-Ջավախքում/, հիմնալի գիտակցելով, որ արդյունքում կստանան անվերահսկելի մի նոր համայնք: Ուստի փորձում են վերադարձող մեսխերին հնարավորինս բնակեցնել Վրաստանի այլ տարածքներում: Այս հարցում անհրաժեշտ է համագործակցել եւ աջակցել վրաց իշխանություններին:
- Վրաստանի արդի իշխանությունները թուրք-մեսխերին համարում են էթնիկ վրացիներ /մահմեդական մեսխեր/, որոնք հարկադրաբար ընդունել են մահմեդականություն, ուստիեւ ազգային փոքրամասնություն չեն, կամ ինչպես իրենք են բնորոշում՝ «եկվորներ» չեն, ինչը բավական մտահոգիչ հանգամանք է:
- Թուրք-մեսխերի հայրենադարձմանը դեպի նախկին բնակավայրեր (այսօրվա Սամցխե-Ջավախքի շրջաններ) մեծապես նպաստում եւ աջակցում են Թուրքիան, Ադրբեջանը եւ թուրք-

մեսիսերի «Վաթան» հայրենակցական միությունը: Ուստի նրանց հոծ զանգվածների վերաբնակեցման պարագայում Վրաստանը ձեռք է բերում լրացուցիչ լծակ ջավախահայության եւ Հայաստանի նկատմամբ:

- Թուրքիան եւ Ադրբեջանը ամեն կերպ կծգտեն բնակեցնել իրենց ազգակիցներին հենց Սամցխե-Ջավախքում որպեսզի իրականացնեն հեռահար ստրատեգիական նպատակները. նախ ապահովեն լրացուցիչ օժանդակություն տարածաշրջանով անցնող կարեւորագույն նշանակության էներգակիրների եւ հաղորդակցության այլ մայրուղիների հետագա անվտանգության համար եւ միաժամանակ ստեղծեն ամուր գործոն, որը վստահորեն կապահովի ազերա-թրքական թիկունքային կապը տարածաշրջանում յուրաքանչյուր անսպասելի շրջադարձի՝ ռազմական բախումների ընթացքում:
- Համաձայն ուսումնասիրությունների արդյունքի, իրենց նախնիների բնակատեղերն են ցանկանում վերադառնալ հիմնականում Ադրբեջանի եւ մասամբ էլ Միջին Ասիայի թուրք-մեսիսերը: Սակայն նույն հարցման տվյալների համաձայն, առաջիկա մի քանի տարիներին չի ակնկալվում զանգվածային հայրենադարձություն, քանզի շատ երկրներում մեսիսերը ապրում են բավական բարեկեցիկ պայմաններում:
- Ինչպես վրացական, այնպես էլ ազերական մամուլը եւ հասարակայնության տարբեր ներկայացուցիչներ փորձում են ներկայացնել այնպես, իբր թուրք-մեսիսերի լքած բնակավայրերը վաղուց գրավել են Ջավախքի հայերը եւ նրանց հայրենադարձության ժամանակ որոշակի էթնիկ խնդիրներ կառաջանան ջավախահայության հետ: Իրականում այդպես չէ: Մեսիսերի գերակշռող մասը արտաքսվել է այն շրջաններից, որտեղ այսօր հիմնականում վրացիներ են ապրում, իսկ հայաշատ շրջաններից /Ախալքալաքից, Նինոծմինդայից եւ Ծալկայից/ հեռացել են քիչ թուվ թուրք-մեսիսեր:
- Թուրքիայի եւ Ադրբեջանի համար թուրք-մեսիսերի, կամ ահիսկա-թուրքերի վերադարձը Ջավախքի շրջաններ ունի նաեւ այլ

հեռահար նպատակներ: Նախ զանգվածային վերաբնակեցման միջոցով հնարավոր կլինի ստիպել հայերին հեռանալ որոշ բնակավայրերից, այսինքն մասամբ կփոխվի երկրամասի դեմոգրաֆիական պատկերը եւ կնվազի ջախսահայերի հաշվեկշիռն ու նշանակությունը որպես քաղաքական գործոն: Երկրորդ՝ ամրապնդելով իրենց դիրքերը Հարավային Կովկասի այս կարելուր հատվածում ազերա-թրքական գործոնը վերջնականապես կդառնա որոշիչ ու առաջնային տարածաշրջանային համարյա բոլոր հիմնախնդիրներում:

- Վերջապես առանց ավելորդ խոչընդոտների եւ լիարժեքորեն կիրականանան ազերա-թրքական ստրատեգիական ծրագրերը կապված էներազակիրների ու ստրատեգիական նշանակության բեռների ու հումքի Արեւելք-Արեւմուտք տեղափոխման, չափազանց խոշոր ֆինանսական ակնկալիքների, հաղորդակցության բոլոր տեսակի ուղիների նպատակայնության, անվտանգության եւ ընդհանրապես համաթուրքական միավորման պլանները:
- Ինչ վերաբերում է Վրաստանին, ապա հաշվարկն առավել քան պարզ է: Այսպես, եթե այնուհանդերձ թուրք-մեսխերի զանգվածային վերաբնակեցում տեղի չունենա, ապա Եւրոպայի եւ միջազգային հանրության առջեւ հանդես կգան որպես խոսքի տեր, ժողովրդավար պետություն, որը պատմական արդարությունը եւ փոքրամասնությունների իրավունքները վերականգնելու նպատակով, արեց ամեն հնարավորը: Եւ երկրորդ՝ եթե նույնիսկ հազարավոր թուրք-մեսխեր առավելապես Ադրբեջանից ու Միջին Ասիայից փորձեն օգտվել այս օրենքից եւ հաղթահարելով վրացական բյուրոկրատիայի բազում քաշքշուկները, վերադառնան իրենց նախկին բնակավայրերը Ջավախքում, ապա առաջացած վտանգն իրենցից հեռացնելու նպատակով՝ վրաց իշխանությունները կփորձեն տեղում հրահրել հայ-թուրքական պարբերական բախումներ: Իսկ Եւրոպայում եւ Թուրքիայում հայ-թուրքական հակասությունները կընկալվեն որպես դառը փորձ, ինչի մասին վրացիները «Ժա-

մանակին զգուշացրել են» եւ իրենց ապահովագրել են: Ուստի միջազգային հանրությունը նորից կփորձի հաշտության եզրեր ման գալ ավանդական այդ հակամարտության մեջ, բնավ չմեղադրելով վրացական իշխանություններին:

- Ե՛ւ Վրաստանը, ե՛ւ Թուրքիան ու Ադրբեջանը թուրք-մեխխերի հնարավոր հայրենադարձությամբ ու տեղի դեմոգրաֆիական պատկերի փոփոխությամբ, շահագրգռված են թուլացնել Սամցխե-Ջավախքում հայկական ազդեցությունը եւ ընդհանրապես ջավախահայության պատմական ու քաղաքական նշանակությունը ստրատեգիական այդ կարեւոր հատվածում:
- Վերջապես տարածաշրջանային զարգացումներն ու գեոքաղաքական շրջադարձերը մեզ ստիպում են լուրջ մտահոգվել, քանզի մոտ ապագայում հնարավոր է այնպիսի իրադրություն, երբ հայ-վրացական փոխհարաբերությունները առավելապես կախված կլինեն թուրք-ազերական դաշինքի կամքից, նրանց գերիշխանությունից ու միտումներից:

Մյուս կողմից Վրաստանի թրքանպաստ քաղաքականության շարունակվելու պայմաններում կգա այնպիսի պահ, երբ համագործակցության տարբեր ոլորտներում Վրաստանի «եղբայրական ազահությունը» չափավորելու անհրաժեշտությունը դիվանագիտական հիմնահարցից կվերածվի մեզ համար ազգային անվտանգության հիմնախնդրի:

Երեւան, հուլիս-օգոստոս 2007 թ.

# Հավելված 1







ՀԱՅ – ԹՈՒՐԲԱԿԱՆ  
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՄԱՄԱՇԵՆ-ՀԱՄՇԵՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՇՈՒՋ

Հայագիտության համար կարևորություն է ներկայացնում Համամաշեն-Համշենի և համանուն իշխանության հիմնադրման ժամանակի ճշգրտումը: Ուսումնասիրողները՝ այդ հարցը հետազոտելիս, մեր կարծիքով, բաց են թողել հայկական սկզբնաղբյուրների մի քանի կարևոր տեղեկություններ և, զլխավորը, համաձայն մեր քննության, խախտել են Հովհան Մամիկոնյանի ու Ղևոնդի՝ Համամ անունը կրող իշխանների վերաբերյալ տեղեկությունների ժամանակագրական հերթականությունը:

Համշենի և համանուն իշխանության հիմնադրման ժամանակաշրջանի ճշգրտման հարցում մեծ է Հովհան Մամիկոնյանի հաղորդման կարևորությունը, քանի որ այն գրեթե ամբողջությամբ լույս է սփռում այդ խնդրի վրա: Ուստի անհրաժեշտ ենք համարում Հովհան Մամիկոնյանի հաղորդումը մեջ բերել ամբողջությամբ. «...Վահան յաւելեալ առ հարս իւր՝ մեռանի...՝ կացեալ իշխան Տարաւոյ եւ Ապահունեաց ամս Լ: Բայց որդի նորա Տիրան հրամանաւ Վաշդենայ Վրաց իշխանին եւ հաւր իւրոյ Վահանայ գնաց ի դուռն Խոսրովայ յառաջ քան զգալն Հերակղի ի Պարսիկս<sup>1</sup>:

Եւ եղեալ Խոսրովայ ընդ որդեգիրս, լեալ մարգպան Հայոց՝ առնու զաւր բազում եւ գնայ ի վերայ Յունաց, որպէս թէ ի պատերազմ:

---

<sup>1</sup> Բյուզանդիայի Մորիկ կայսեր (582-602) մահից հետո, որը պարսից Խոսրով Բ Փարվեզի (591-628) դաշնակիցն էր, Խոսրովն արշավեց Բյուզանդիա և՝ ծանր կորուստներ պատճառելով կայսրությանը, հասավ Կոստանդնուպոլսի հարևանությամբ գտնվող Քաղկեդոն քաղաքը: Բյուզանդիայի կայսր Հերակլը (610-641) 628թ. հակահարձակման անցավ և ջախջախեց պարսիկներին (տե՛ս «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ. Աբգարյանի, Երևան, 1979, էջ 122-128, «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Դ, Թեոփանես Խոստովանող, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Հ. Բարթիկյանի, Երևան, 1983, էջ 30-31):

Բայց յղ է կայսր, թե մի՛ ինչ երկնչիր յիմոյ գալոյս, այդ տուր ինձ քաղաք մի, զի ժողովեալ զգաւրս Հայոց՝ մնացից քեզ ի թիկունս: Իսկ նա ուխտ սիրոյ դնէր ի միջի՝ ո՛չ միայն մարգպան Հայոց եւ Պարսից համարել, այլ եւ դեմեալեկոս<sup>2</sup> առնել բովանդակ Հոռոմոց:

Ձայտսիկ լուեալ Վաշդեան Վրաց իշխանն<sup>3</sup>, առաքէ առ Խոսրով՝ եթէ. «Նենգեաց քեզ Տիրան եւ եղեւ ընդ Յոյսնս: Արդ՝ առաքեա՛ ուր թագար այրուծի ընդ Վանանդ, եւ ես տաց զնա ի ձեռս քո»: Իսկ թագաւորն կոչեաց զՋոզիկ՝ Վրաց իշխանորդին, եւ արար մարգպան...: Եւ ինքն առաքեաց զաւր առ Վաշդեան հինգ հազար:

Իսկ Վաշդեան գրեալ թուղթ առ Տիրան. «Նեղեցար պանդխտութեամբ<sup>4</sup>. արդ՝ արի եկ, զի խորհեսցուք ինչ ի վերայ արքայի»: Իբ-

---

<sup>2</sup> Հավանաբար, նկատի ունի մարգպանի պաշտոնը, քանի որ խնդրո առարկա հիշատակության շարունակության մեջ պատմիչը տեղեկացնում է, թե Հերակլ կայսրը, ջախջախելով պարսիկներին, կատարեց իր խոստումն ու Տիրանին կարգեց Հայոց մարգպան:

<sup>3</sup> Ամենայն հավանականությամբ, «Վաշդեան»-ը «Վարդան» անվան աղավաղումն է, քանի որ համշենի բարբառում «Վարդան»-ը հնչում է «Վաշտոն» կամ «Վաշդոն» ձևով: Սակայն, եթե «Վաշդեան»-ը հայկական «Վարդան»-ն է, ապա ինչու՞ է նա կոչվում «Վրաց իշխան»: Հայտնի է, որ մինչև 609/10 թ. Վիրքի եկեղեցին, ինչպես Աղվանքի եկեղեցին, հայադավան էր ու ենթարկվում էր Հայոց եկեղեցու կենտրոնական իշխանությանը: 609/10 թ. վրաց կյուրոն եպիսկոպոսը, օգտվելով պարսկա-բյուզանդական պատերազմներից, որոշեց ազատվել հայոց եկեղեցու գերիշխանությունից և ընդունեց բյուզանդական եկեղեցու դավանանքը, որից հետո վրաց եկեղեցին դարձավ քաղկեդոնական դավանանքի հետևորդ: Այդ ժամանակ արդեն Գուգարքի բղեշխությունը պարսից արքունիքի կողմից մտցված էր Վրաց կամ Վարջան մարգպանության մեջ (տես Բ. Հարությունյան, Մեծ Հայքի Գուգարք աշխարհը ըստ «Աշխարհացոյց»-ի, «Բանբեր Երևանի Համալսարանի», 1977, թիվ 2, էջ 187-188): Հավանական է, որ քաղկեդոնականությունը պարտադրվել էր նաև Համշենից արևելք գտնվող Գուգարքի Կղարջք գավառի հայությանն ու տեղի հայ Վարդան իշխանին: Այդ պատճառով էլ նրա «վրաց իշխան» կոչվելը պայմանավորված էր արդեն վրացադավան հայերին իշխելով, այսինքն՝ նշանակում էր «վրացադավան հայերի իշխան»:

<sup>4</sup> Հավանաբար, Տիրանն արդեն հեռացել էր Բյուզանդիա և այնտեղ ինչ-որ քաղաք էր ստացել, ինչի համար խնդրել էր կայսերը: Հնարավոր է, որ այդ քաղաքը գտնվելիս լինել Վանանդ գավառում, քանի որ Վաշդեանը առաջարկում էր պարսից արքային զորք ուղարկել Վանանդ, որպեսզի ինքը նրա օգնությամբ կարողանա բռնել ու կայսեր ձեռքը հանձնել

րել ընթերցաւ զթուղթն, ի նոյն աւուր եկն թուղթ մի ի Համամայ՝ քեռորդոյն Վաշդենայ՝ ծանուցանել զնենգութիւնն, որ ինչ առաջի կայր ի գաւրացն՝ եկելոցն ի Պարսից: Եւ նորա վաղվաղակի թուղթ գրեալ ի Վաշդեան՝ յամաւթ առնելով վասն ծածուկ իրացն:

Եւ բարկացեալ Վաշդեան՝ ետ ածել զՀամամ եւ ծայրատել զոտս եւ զծեռս նորա: Եւ առեալ զպարսիկս՝ անց ընդ գետն Ճորոխ եւ գնաց ի քաղաքն Համամայ, որ կոչի Տամբուր, եհար սրով եւ հրով եւ գերեաց գքաղաքն:

Իսկ սուրբ եպիսկոպոս քաղաքին Մանկնոս անիծեաց սաստիկ զհշխանն: Եւ նորայ հրաման տուեալ պարսկացն կոտորել զքահանայսն յեկեղեցին, որ կոչի սուրբ Սիովն<sup>5</sup>:...Եւ ի վաղիւն միւսուն ճայթեալ ամպոց երկնից՝ հրայրեաց արարին զնա (իմա՛ եպիսկոպոսին), մինչ նստէր առ դուռն քաղաքին Տամբուրայ: Ջայս յետոյ շինեաց Համամ՝ զիր անուն դնելով Համամաշէն: Եւ ի գլուխ ել աղաւթք Մանգնոսի, զի երեք հազար այր ի միում զհշերի սատակեցան, եւ այլքն փախեան, եւ քաղաքն աւեր մնաց:

Ապա ի սոյն ամի ելանէ Հերակղ եւ սպանանէ զխոսրով: Եւ հիշեաց զերդումնն, զոր ընդ Տիրան եւ ընդ ինքն, եւ կացուցեալ մարգպան ամենայն Հայոց: Եւ ինքն գնաց ի Կոստանդինուպալիս:

Եւ յետ Ը ամի եկն Աբդաշահիմ՝ քեռորդին Մահմեդի, բազում աղխիւ՝ տասն եւ ու հազար առն եւ ձիոյ ընդ իւր բերեալ: Խնդրէր հարկս ի Հայոց...»<sup>6</sup>:

---

Տիրանին: Խնդիրն այն է, որ 591թ. բաժանումից հետո Վանանդն անցել էր Բյուզանդական կայսրությանը (տե՛ս Սեբեոս, էջ 84, Թովմա Արծրունի և Անանուն, Պատմութիւն տանն Արծրունեաց, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Վ. Վարդանյանի, Երևան, 1985, էջ 140: Տե՛ս նաև Երեմյան Ս., Մարգպանական Հայաստանը և հարևան երկրները 387-628թթ., Երևան, 1980), ուստի և մեր տեսակետը միանգամայն հավանական է:

<sup>5</sup> Սուրբ Սիովն եկեղեցին հիշատակվում է նաև Սուրբ Խաչիկ (Խաչքար) վանքի միջնադարյան տարեգիրների կողմից, որպես գլխավոր և եպիսկոպոսամիստ եկեղեցի (տե՛ս М. Кузуб, Амшеницы-коренные æððâæèè Понта,-«Еркрамас» (Газета армян России), թիվ 6 (136), 2006, էջ 6.):

<sup>6</sup> Յովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարաւնոյ,-«Մատենագիրք Հայոց», Է դար, Անթիլիաս, 2005, էջ 1122-1123:

Ղևոնդը հաղորդում է, որ երբ Արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքայության<sup>7</sup> փոխարքա Ուլբեդլան կամ Ուբայդալլահը (788-791)<sup>8</sup> Արմինիա ոստիկանության<sup>9</sup> արաբ ամիրա (ոստիկան) նշանակեց Սուլեյմանին (788-790), վերջինս դաժան հալածանքներ սկսեց հայ նախարարների ու ժողովրդի նկատմամբ: Հաջորդ տարին՝ 789թ., Ուբայդալլահին անձամբ եկավ Հայաստան և անտանելի վիճակ ստեղծեց երկրում: 789թ. հայ նախարարներից ոմանք՝ Շապուհ և Համամ Ամատունի նախարարների գլխավորությամբ և 12 հազար ժողովրդով, որոշեցին հեռանալ իրենց տիրույթներից, շարժվեցին Խաղտիքի<sup>10</sup> ուղղությամբ, ճանապարհին Ճորոխ գետի ափին պարտության մատնեցին իրենց հետապնդող արաբական զորքին ու՝ անցնելով գետը, բնակություն հաստատեցին Խաղտիքում՝ Բյուզանդիայից որպես ժառանգական տիրույթ ստանալով այդ հողերը<sup>11</sup>:

---

<sup>7</sup> Արաբական խալիֆայության Հյուսիսային փոխարքայության մեջ մտնում էին Հայաստանը, Վիրքը, Աղվանքը, Ատրպատականը, երբեմն՝ Ջազիրան (վերին Միջագետք) և Կուր գետի ստորին հոսանքի ու Դարբանդի միջև տարածվող մերձկասպյան երկրները (տե՛ս Тер-Гевондян А., Армения и Арабская Халифат, Ереван, 1977, էջ 151-155):

<sup>8</sup> Փոխարքաների ու Արմինիա ոստիկանության ոստիկանների թվականները մենք բերում ենք ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի կազմած ցուցակի (տե՛ս նույն տեղում, էջ 276):

<sup>9</sup> Արաբները 701թ. նվաճեցին Հայաստանը, Վիրքը, Ափսազքը, Եգերքը, Աղվանքը, Կուր գետի ստորին հոսանքի և Դերբենդի միջև գտնվող երկրները, որոնցից կազմեցին մի վարչական շրջան, որը Հայաստանի անունով կոչեցին Արմինիա, քանի որ Հայաստանը տարածաշրջանի ամենահզոր ռազմաքաղաքական ուժն էր, իսկ հայ ժողովուրդը՝ տեղի բնակչության ամենամիտարր ու մեծաթիվ հատվածը (տե՛ս Ա. Տերիազարյան, Արմինիա ոստիկանությունը (պատմա-աշխարհագրական ուսումնասիրությունը), պատմ. գիտ. թեկնածուի գիտ. աստճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2006, էջ 26-30):

<sup>10</sup> Խաղտիքը կամ ճանիքը գրավում էր լեռնային այն շրջանը, որն ընկած էր ճորոխ գետի, Սև ծովի առափնյա շերտի և Պարխարյան լեռների միջև՝ մինչև Տրապիզոն: Այն հարավում և արևելքում սահմանակցում էր Բարձր Հայքին, իսկ արևելքում՝ Տայքին (տե՛ս Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, թարգմ. Ա. և Է. Խոնդկարյանների, Երևան, 1987, էջ 36):

<sup>11</sup> Տե՛ս «Պատմություն Ղևոնդեայ Մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 166-169:

Համշենի հիմնադրման հարցով մանրամասնորեն զբաղվել է Լ. Խաչիկյանը: Ըստ Լ. Խաչիկյանի՝ Համշենի մասին առաջին տեղեկությունը հաղորդում է Ղևոնդը, որով հնարավորություն ենք ստանում որոշելու Համշենի հայկական իշխանության հիմնադրման ստույգ ժամանակը: Նա քննության է առնում պատմիչի վկայությունը, այն համարում Հովհան Մամիկոնյանի տեղեկության հետ ու գալիս այն եզրակացության, թե իբր Համամ Ամատունու քաղաքը սկզբում կոչվում էր Տամբուր, որը պարսկական բանակի (ըստ Խաչիկյանի՝ պետք է լինի արաբական) օգնությամբ ավերեց վրաց իշխան Վաչղեանը: Դրանից հետո, համաձայն Լ. Խաչիկյանի, Համամը Տամբուրի տեղում նոր քաղաք կառուցեց ու իր անունով կոչեց Համամաշեն-Համշեն: Իսկ Հովհան Մամիկոնյանի հիշատակությունը նա համարում է խառնաշփոթ ու ժամանակավրեպ մի ավանդություն, որում կան իրական դեպքերի արձագանքներ: Այն, որ Համամը, ըստ Հովհան Մամիկոնյանի, վրաց Վաչղեան իշխանի ազգականն էր, Լ. Խաչիկյանի կարծիքով, ցույց է տալիս, որ հայ նախարարները նախապես ծանոթ էին Խաղտիքին՝ ազգակցական կապեր ունենալով Ճանիքի (Լագիստան) իշխանների հետ: Ի վերջո, Լ. Խաչիկյանը, ելնելով Ղևոնդի հաղորդումից, Համշենի հայկական իշխանության ստեղծման ժամանակը համարում է 789-790թթ., իսկ դրա հիմնադիրներին՝ Ամատունի նախարարական տոհմի պայագատներ: Ամատունիների իշխանությունը գտնվում էր Այրարատում, ուստի՝ նրանց հետ Համշեն ներգաղթած բնակչության մեծամասնությունը Այրարատ աշխարհից պետք է լինեին<sup>12</sup>:

Ղևոնդի վկայությունը պարզից էլ պարզ է: Հայ նախարարները հեռանում են Հայաստանից 12 հազար ժողովրդով և բնակություն հաստատում Խաղտիքում, որի տարածքներից և Փոքր Հայքի հյուսիսային հատվածից հետագայում կազմավորվեց բյուզանդական Խալդիա (Խաղտիք) բանակաթեմը<sup>13</sup>: Բյուզանդիան նրանց ընդու-

<sup>12</sup> Տե՛ս Լ. Խաչիկյան, Էջեր համշինահայ պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի», 1969, թիվ 2, էջ 115-118:

<sup>13</sup> Տե՛ս «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», «Բյուզանդական աղբյուրներ», Բ, Կոստանդին Օիրանածին, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթ. Յ. Բարթիկյանի, Երևան, 1970, էջ 170:

նուն է գրկաբաց, քանի որ նրանք թշնամի էին արաբներին և հետո, այդպիսի մեծ խումբը զգալիորեն կուժեղացնելու հիշյալ շրջանի բյուզանդական գործը, որը տեղակայված էր Արմինիա ոստիկանության սահմանին<sup>14</sup>: Անկասկած, հենց այս Համամն է, որը վերակառուցել է ավերված Տամբուրն ու այն իր անունով կոչել Համշեն: Սակայն, Հովհան Մամիկոնյանի վերևում մեջ բերված վկայությունը հարց է առաջացնում. ինչպե՞ս կարող էր Համամ Ամատունին վերակառուցել Տամբուրն ու վերանվանել Համշեն, եթե, Հովհան Մամիկոնյանի վկայության համաձայն, նա դրանից առաջ «Վրաց» իշխանի կողմից մահապատժի էր ենթարկվել: Լ. Խաչիկյանը, քանի որ Հովհան Մամիկոնյանի տեղեկությունը համարում է խառնաշփոթ ու ժամանակավրեպ, պատմիչի այդ տեղեկությանը կամ ուշադրություն չի դարձրել, կամ պարզապես սխալ է համարել:

Հովհան Մամիկոնյանի վերոհիշյալ վկայությունը, մեր կարծիքով, ստույգ է և իր մեջ պարունակում է ճշգրիտ ժամանակագրական տվյալներ: Այդ վկայության քննությունը մեզ այն համոզմանն է բերում, որ գոյություն են ունեցել երկու Համամ, մեկը՝ Ամատունի, իսկ մյուսը, հավանաբար, Մամիկոնյան: Վրաց իշխան Վաշդեանի հրամանով մահապատժի ենթարկվածը եղել է Համամ Մամիկոնյանը, որին պատկանել է Տամբուր քաղաքը, իսկ այդ քաղաքը վերականգնողը և այն իր անունով Համշեն վերանվանողը եղել է Համամ Ամատունին: Խնդիրն այն է, որ երկու Համամների նույնացումը, ինչպես այդ արել է Լ. Խաչիկյանը, հակասում է Հովհան Մամիկոնյանի և Ղևոնդի տեղեկություններին, որոնք մի Համամին հիշատակում են VIIդ. սկզբին, իսկ մյուսին՝ VIIIդ. վերջին:

Հովհան Մամիկոնյանի վկայությունը քննելիս հարկ է ուշադրություն դարձնել ևս մեկ անչափ կարևոր իրողության: Հայտնի է, որ մագաղաթյա մատյանները գրվում էին մեկ օրինակով, իսկ հետագայում, եթե ինչ-որ մեկը իր համար պատվիրում էր այդ երկից, գրիչները նրա համար նոր օրինակ էին արտագրում: Կախված այն հանգամանքից, թե ինչքան ժամանակ էր անցել բնագրի գրվելու

---

<sup>14</sup> Տե՛ս Ղևոնդ, էջ 123:

պահից, երբեմն գրիչները տեքստի մեջ ներմուծում էին իրենց ժամանակաշրջանի իրողությունները: Մասնավորապես, նրանք այդպես են վարվել Մ. հայկական «Աշխարհացոյց»-ի հետ, որտեղ հիմնականում արտացոլված է Մեծ Հայքի III դ. վարչաքաղաքական կացությունը<sup>15</sup>: Այն մեզ է հասել երկու խմբագրությամբ՝ համառոտ<sup>16</sup> և ընդարձակ<sup>17</sup>: Ընդարձակ խմբագրությունն իր մեջ ընդգրկում է հետագա դարերի իրադարձություններին վերաբերող հավելումներ: Գրիչները նրա մեջ մտցրել են իրենց ժամանակաշրջանում տիրող վարչա-քաղաքական իրավիճակի մասին հիշատակումներ, որոնք հիմնականում վերաբերում են VII դ., ինչի պատճառով ուսումնասիրողների զգալի մասը այն վերագրում է VIII դ. հեղինակ Անանիա Շիրակացուն, չնայած, որ մյուսները կարծում են, թե դրա հեղինակը Մովսես Խորենացին է<sup>18</sup>: Հաշվի առնելով այդ իրողությունը, ակնհայտ է, որ Հովհան Մամիկոնյանի տեքստում, անկախ այն բանից, թե երբ է գրվել այն, «Ձայս յետոյ շինեաց Համամ՝ զիւր անուն դնելով Համամաշէն» հատվածը բնագրում ներմուծվել է հետագա ինչ-որ գրիչի կողմից, որը, հավանաբար, Համամ Ամատունու ժամանակակիցն է եղել կամ էլ ապրել է նրանից հետո: Նա ցանկացել է ներկայացնել Տամբուր ավերված քաղաքի հետագա ճակատագիրը:

Եթե Հովհան Մամիկոնյանի տեքստը քննարկենք առանց հիշյալ ընդմիջարկության, ապա կարող ենք արձանագրել.

ա. Վրաց Վաշդեան իշխանի քրոջ որդի Համամը, ամենայն հավանականությամբ, Մամիկոնյանների տոհմից է եղել: Դրա մասին են վկայում նրա մտերմությունն ու սրտացավությունը Տարոնի Տի-

---

<sup>15</sup> Տե՛ս Բ. Գարությունյան, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի, Երևան, 2001, մասն Ա, էջ 52:

<sup>16</sup> «Աշխարհացոյց»-ի համառոտ խմբագրությունը տե՛ս Աբրահամյան Ա., Անանիա Շիրակացու մատենագրությունը, Երևան, 1944, Патканов К., Армянская география VII века по П.Х. (принусывавшаяся Мусею Хоренскому), Санктпетербург, 1877 և այլն:

<sup>17</sup> «Աշխարհացոյց»-ի ընդարձակ խմբագրությունը տե՛ս «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացույ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881:

<sup>18</sup> Տե՛ս Բ. Գարությունյան, նշվ. աշխ., էջ 52:



րան Մամիկոնյան իշխանի նկատմամբ, ինչպես նաև այն, որ Տամբուր-Համշենի իշխանությունը գտնվում էր Տայքի Մամիկոնյանների տիրույթների անմիջական հարևանությամբ:

Կարևոր է նաև այն, որ Համշենի բնակչության մեջ պահպանվել են հիշողություններ այն մասին, որ հին դարերում Համշենում իշխել են Մամիկոնյանները, որոնց տոհմին պատկանող բազմաթիվ իրեր պահվում էին Համշենի խաչքար անունը կրող վանքում<sup>19</sup>: Դա է ցույց տալիս նաև Մովսես Խորենացու և Փավստոս Բուզանդի այն վկայությունը, թե Մամիկոնյանները «Ճենաց» արքայազուններ էին<sup>20</sup>: Հայ պատմագրության մեջ վաղուց արդեն հիմնավոր կերպով ցույց է տրված, որ այդ վկայության հիման վրա Մամիկոնյաններին չինական ծագում վերագրելը սխալ է, քանի որ Ճենաց երկիրը ոչ թե Չինաստանն է, այլ Խաղտիքը կամ Ճենք-Ճանիք-Ճանիքը (այժմ` Ջանիկ)<sup>21</sup>:

բ. Մամիկոնյանների ճանիքի և Տայքի տիրույթները միմյանց սահմանակցում էին Պարխարյան (Լազիստանի, Պոնտական) լեռների ջրբաժանով<sup>22</sup>,

---

<sup>19</sup> Տե՛ս Մ. Կոչյճ, նշվ. աշխ., էջ 6:

<sup>20</sup> Տե՛ս «Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց», բնագիրը Բ. Պատկանյանի, Երևան, 1987, էջ 306:

<sup>21</sup> Տե՛ս «Աշխարհացոյց Մովսէսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց», հրատ. Ա. Սուքրեան, Վենետիկ, 1881, էջ 27. «...ճանիւս որ են Խաղտիք»: Տե՛ս նաև Ն. Ադոնց, նշվ. աշխ., էջ 447-448:

<sup>22</sup> Տե՛ս «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, թուղթ առ Վահան Մամիկոնեան», քննական բնագիրը Գ. Տեր-Սկրտչյանի և Ստ. Մալխասյանի, Երևան, 1982, 174-176: Այն փաստը, որ Մամիկոնյանների իշխանությունը տարածվում էր նաև հին Խաղտիքի վրա, ցույց են տալիս Մ. պատմիչ Եղիշեի վկայությունները: Նա հաղորդում է, որ Ավարայրի ճակատամարտից առաջ Հայոց մարզպան Վասակը կեղծիքներով իր կողմն էր գրավում «ընդ ամենայն կողմանս ամրականաց աշխարհին, ի Տնորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց» (Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 190): Պատմիչի հաջորդ հաղորդումը ևս դրա վկայությունն է: Նա վկայում է, որ Ավարայրի ճակատամարտից հետո որոշ հայ նախարարներ և նրանց հարազատներ հեռացան ու ամրացան Խաղտիքում, որտեղից հարձակվեցին հարևան Տայքի վրա, ուր մտել էին պարսկական զորքերը (նույն տեղում, էջ 252-256):

զ. Համամ Մամիկոնյանի քաղաքը կոչվում էր Տամբուր: Տամբուրի իշխանությունը սահմանակցում էր Վաշդեանի իշխանությանը Ճորոխ գետով,

դ. «վրաց» Վաշդեան իշխանը մահապատժի է ենթարկում Համամ Մամիկոնյանին և ավերում նրա քաղաքը, որից հետո այն ամայանում է երկար ժամանակով,

ե. ակնհայտ է, որ Համամ Մամիկոնյանի մահապատիժը և Տամբուրի ավերումը տեղի են ունեցել Պարսկաստանի վրա Հերակլ կայսեր (610-641) հարձակման և Խոսրով II Փարվեզի (591-628) մահվան տարում, այսինքն՝ 628թ.,

զ. «Զայս յետոյ շինեաց Համամ՝ զհւր անուն դնելով Համամաշէն» տեղեկությունը վերաբերում է 789թ. դեպքերին:

Այն, որ Հովհան Մամիկոնյանի հաղորդումը ոչ թե մտացածին է, այլ իրական, ցույց է տալիս այն փաստը, որ պատմիչը նշում է, թե արաբների առաջին արշավանքը տեղի է ունեցել այդ դեպքից ուղիղ 8 տարի անց, այսինքն՝ 636/637թ.: Խնդիրն այն է, որ այդ իրադարձությունը հենց այդ թվականին են դնում մյուս հայկական սկզբնաղբյուրները<sup>23</sup>:

Փաստորեն, Տամբուրն ավերակ մնաց մինչև 789թ., այսինքն՝ մոտավորապես 160 տարի: Սեբեոսի հաղորդումից պարզվում է, որ 653թ. արաբները Համշենի շրջանը դրեցին հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու (634-655) իշխանության տակ: Հայտնի է, որ 652թ. կնքվել էր հայ-արաբական պայմանագիրը, որի պատճառով նույն թվականին Բյուզանդիայի կայսր Կոստաս III-ը (641-668) ներխուժեց Հայաստան: Սակայն, երբ 653թ. զարնանը նա հեռացավ Կոստանդնուպոլիս, Թեոդորոս Ռշտունին հակահարձակման անցավ, արաբական 7 հազարանոց զորքի օգնությամբ Տայքի վրայով ներ-

---

<sup>23</sup> Ղևոնդ, էջ 7, «Ստեփանոսի Տարօնեցույ Ասողկան Պատմութիւն տիեզերական», հրատ. Ստ Մալխասեանց, Ս. Պետերբուրգ, 1885, էջ 98, «Պատմութիւն Շապիոյ Բագրատունւոյ», ի լոյս ածին Գ. Տէր-Մկրտչեան եւ Սեսրոպ Եպիսկոպոս, Էջմիածին, 1921, էջ 15-17: Այդ մասին մանրամասնորեն տե՛ս Ա. Եղիազարյան, Արաբների արշավանքը Ատրպատականի վրայով դեպի Հայաստան, ԵՊՀ «Տարեգիրք», Երևան, 2005, էջ 89-90:

խուժեց Համշեն, գրավեց այն, ինչպես նաև Տրապիզոնը, որից հետո արաբները ճանաչեցին նրա իշխանությունը Հայաստանի և Այսրկովկասյան երկրներ վրա՝ մինչև Տրապիզոն<sup>24</sup>: Թեոդորոս Ռշտունու մահից հետո բյուզանդացիներին հաջողվեց ետ գրավել այդ տարածքները:

701թ. արաբները վերջնականապես նվաճեցին Հայաստանն ու Անդրկովկասյան երկրներն ու կազմավորեցին Արմինիա ոստիկանությունը: Արմինիայի արևմտյան սահմանին արաբա-բյուզանդական անընդհատ պատերազմների հետևանքով ստեղծվեց սահմանային ամրությունների մի գոտի: Այն սկսվում էր Կիլիկիայի ծովափից և տարածվում մինչև Եփրատ գետի վերին հոսանքում գտնվող Կամախ քաղաքը<sup>25</sup>: Համշենը մնաց Բյուզանդական կայսրության կազմում, ինչի վկայությունն է Ղևոնդի վերոհիշյալ հաղորդումը: Այդ է ապացուցում նաև պատմիչի մյուս հաղորդումը, համաձայն որի՝ 747-750թթ. ապստամբության ժամանակ հայ նախարարները հեռանում են Տայքի ամրությունները, որպեսզի կապ հաստատեն բյուզանդական զորքերի հետ, «որք էին ի կողմանս Պոնտոսի»<sup>26</sup>:

789թ. մի քանի հայ նախարարներ՝ Շապուհ և Համամ Ամատունիների գլխավորությամբ, իրենց տիրույթներից հեռացան, հաստատվեցին ավերակ Տամբուր քաղաքի մոտակայքում: Համամ Ամատունին վերակառուցեց<sup>27</sup> ավերված քաղաքն ու իր անունով կոչեց Համամաշեն, որը հետագայում աստիճանաբար վերափոխվեց Համշենի (այժմ՝ Հեմշին):

---

<sup>24</sup> Տե՛ս Սեբեոս, էջ 138-144:

<sup>25</sup> Տե՛ս Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական սահմանային ամրությունների գոտին (Սուղուր),-«Պատմա-բանասիրական հանդես», 1981, թիվ 2, էջ 134-149:

<sup>26</sup> Ղևոնդ, էջ 123:

<sup>27</sup> Այն, որ անհայտ գրիչը նշում է, թե «Համամը, սակայն, հետո վերաշինեց քաղաքը և իր անունով կոչեց Համշեն», ցույց է տալիս, որ Համամ Ամատունին ավերված Տամբուրի տեղում ոչ թե նոր քաղաք է կառուցել, ինչպես նշում է Լ. Խաչիկյանը (տե՛ս Լ. Խաչիկյան, նշվ. աշխ., էջ 117), այլ պարզապես վերակառուցել է Տամբուրը:

Փաստորեն, Համշենի պատմությունը սկսվում է ոչ թե VIII դ. վերջից, այլ այդ ժամանակ սկսվում է միայն այդ հայաշխարհի պատմության մի նոր ժամանակաշրջան: Մինչև 628 թ. Տամբուր-Համշենում իշխում էին Մամիկոնյանները, իսկ դրանից հետո՝ սկսած VIII դ. վերջից՝ Ամատունիները: Տեղի հայ ազգաբնակչությունը անընդհատ ավելանում էր Հայաստանի տարբեր շրջաններից այնտեղ գաղթող հայության հաշվին: Ինչ վերաբերում է 628 թ. ավերված Տամբուրին և տեղի հայկական իշխանությանը, ապա այն գոյություն է ունեցել այդ թվականից առաջ:

**ՀԱՅԵՐԻ ԴԵՐՈՒ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔՈՒՄ  
(19-րդ դ.)**

Օսմանյան կայսրության տերերն իրենց բնույթով քոչվորական տիպի ժողովուրդների ներկայացուցիչներ էին: Այն երկրները, որ նրանք նվաճել էին՝ նստակյաց ժողովուրդների պետություններ էին, ուր տարբեր մշակութային ավանդույթներ ունեցող ազգեր արդեն դարեր ի վեր զբաղվում էին հողագործությամբ, արհեստներով, արվեստներով, վաճառականությամբ, ունեին գիտական, գրական բանավոր ու գրավոր ավանդույթներ, որոնք պիտի շարունակվեին արդեն որպես հպատակ ժողովուրդների գլխավոր զբաղմունք և գոյության միջոց: Գերավարված ժողովուրդների հետ ապրելով, մահմեդական մասը աստիճանաբար պիտի սկսեր նրանց նման մշակել՝ հողը, ընդօրինակել նստակյաց հպատակ ժողովուրդների զբաղումները, նորովի փորձելով ապահովել իր կյանքը, շնորհիվ իր հպատակների՝ տեր դառնալով նաև մշակութային նոր արժեքների:

Հայերի դերը Օսմանյան կայսրության մշակութային կյանքի ամենատարբեր ոլորտներում չափազանց զգալի է եղել: Արևմտահայ մշակույթը, չնայած սոցիալ-տնտեսական տաժանելի ու անարդար պայմաններին, 18-րդ դարից սկսած այնպիսի մի հզոր զարթոնք է ապրել, որ դուրս է եկել զուտ ազգային, հայկական սահմաններից, դարձել Կայսրությունում լուսավորությանը, եվրոպականացմանն ուղղված շարժման առաջամարտիկ:

Այս ներազդման, համագործակցության հաջողությունն առանձնապես պայմանավորված էր բոլորին հասկանալի, մի ընդհանուր արտահայտչամիջոցի գոյությամբ, որը դարձավ հայատառ թուրքերենը:

Հայատառ թուրքերեն գրականության առաջին նմուշները պատկանում են 14-րդ դարին: Բռնի մահմեդականացման, թուրքացման քաղաքականության արդյունքում Արևելյան վիլայեթներում իրենց պատմական հողերի վրա ապրող ավելի քան կես միլիոն հայեր թրքախոս էին դարձել: Լեզուն կտրելու, մահվան սպառնալիքով արգելված է եղել խոսել հայերեն: Քարոզն անգամ եկեղեցիներում թուրքերեն է հնչել: Ահա մեր ժողովրդի թուրքախոս այս հատվածի համար է ծնունդ առել հայատառ թուրքերենը՝ որպես արևմտահայության ինքնապահպանման ու ուժացման դեմ պայքարի միջոց, հաղորդակցման միջոց ոչ միայն հայերեն չիմացողների, թրքալեզու դարձածների, այլ նաև մասամբ հայերենին տիրապետողների համար:

Որպես մշակույթի մի հզոր, բազմաժանր ու ինքնուրույն, ինքնաբավ ճյուղ, հայատառ թուրքերենի ինստիտուտը ոչ միայն արդարացրել է արևմտահայությանը ծառայելու իր առաքելությունը, այլև վերաճել է ավելի լայն գործոնի: Նա, առավելապես գոյության տպագրական<sup>1</sup> շրջանում, ծառայել է նաև Օսմանյան կայրության

---

<sup>1</sup> Արձակ, նաև չափածո հայերեն ու հայատառ թուրքերեն բազմաթիվ ժամանակագրություններ (խրոնիկաներ) Կայսրության որոշակի ժամանակաշրջանում կատարված դեպքերի, նրա սուլթանների, վեզիրների պատմության թերևս միակ գրավոր, եզակի ու բացառիկ հավաստի աղբյուրներն են հանդիսանում: Այսօր էլ հայատառ թուրքերեն մատենագիտությունը անսպառ աղբյուր է ներկայացնում Թուրքիայի պատմության ու կյանքի տարբեր բնագավառների ուսումնասիրության համար: Այս առումով կարևոր էր ստամբուլահայ մատենագիր ու բանասեր, բազմաթիվ թուրքական պարբերականներին ու հանրագիտարաններին իր գիտական հոդվածներով 40 տարի աշխատակցող Պևրոզ Բամպուլկձյանի թուրքերենով եղած աշխատությունների քառահատոր գիտական հետմահու հրատարակությունը Օսման Քյոքերի կողմից: Այն տուրք է նաև հայ (հայատառ թուրքերեն) մատենագրության, որը թուրքական պատմագրության համար անփոխարինելի արժեք է ներկայացնում: Մեզ հետաքրքրող նյութի առնչությամբ այստեղ կգտնեք նաև այն հայ երևելի տոհմերի, ամիրայական գերդաստանների մասին, որոնք սերնդե սերունդ իրենց ձեռքում են պահել մի շարք պալատական պաշտոններ՝ ճարտարապետների, փողերանոցի, վառողարանի, ժամագործների, նկարիչների, ոսկերիչների ու արծաթագործների, ակնագործների և այլն:

թուրքալեզու ժողովուրդներին, իր մեծագույն ներդրումն ունենալով նրանց ընդհանուր, մշակութային զարգացման, լուսավորության գործում: Այս պնդումն առաջին հերթին և առավելապես վերաբերում է թուրք ժողովրդին:

Ձեռագիր մի հսկայական, եզակի ու անգնահատելի ժառանգություն, որը գեղարվեստական, պատմական<sup>2</sup>, գիտությունների վերաբերող երկեր են: Արդեն միայն հայատառ թուրքերեն բանահյուսական, աշուղական գրականությունն իրական գանձարան է ոչ միայն հայկական մշակույթի, այլև կայսրության այլ ժողովուրդների, առաջին հերթին թուրք ժողովրդի մշակույթի համար:

Առաջին հայկական գրքերը տպագրել են Վենետիկում, 1512-3թթ. Հակոբ Մեղապարտի կողմից<sup>3</sup>:

---

Stu` Pamukciyan Kevork, *Ermeni Kaynaklarından Tarihe Katkılar, Yayına hazırlayan Osman Köker. Cilt 1-İstanbul yazıları; Cilt 2-Ermeni Harfli Türkçe Metinler; Cilt 3-Zamanlar, Mekânlar, İnsanlar; Cilt 4-Biyografileriyle Ermeniler, Aras Yayıncılık, İstanbul, 2002-2003, s. 249, 255, 373, 449.*

<sup>2</sup> Արծակ, նաև չափածո հայերեն ու հայատառ թուրքերեն բազմաթիվ ժամանակագրություններ (խրոնիկաներ) Կայսրության որոշակի ժամանակաշրջանում կատարված դեպքերի, նրա սուլթանների, վեզիրների պատմության թերևս միակ գրավոր, եզակի ու բացառիկ հավաստի աղբյուրներն են հանդիսանում: Այսօր էլ հայատառ թուրքերեն մատենագիտությունը անսպառ աղբյուր է ներկայացնում թուրքիայի պատմության ու կյանքի տարբեր բնագավառների ուսումնասիրության համար:

<sup>3</sup> Օսմանյան կայսրությունում տպագրական գործի մասին գրելը համեմատաբար դյուրին է, քանզի այս մասին նյութերի տղություն գոյություն չունի: Ավելին, մեր մշակույթի այս ճյուղին նվիրվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, ժամանակակիցների մեծ ու փոքր աշխատություններ: Մենք առավելապես արժեքավոր ենք գտնում Թեոդիկի(Թեոդորոս Լափչինյանի) «Տիպ ու տառ»-ը (Կ.Պոլիս, 1912), նվիրված հայ տպագրության 400 ամյակին, 1512-1912թթ., նրա և Ազգային Ս.Փրկիչ հիվանդանոցի երկարամյա, բովանդակալից ու մինչ օրս իրենց արժեքը չկորցրած «Տարեցոյց»ները: Գալով թուրքական մշակույթին առավելապես ծանայություն մատուցած հայատառ թուրքերեն գրականությանն ու պարբերական մամուլի հրատարակություններին, ապա այս մասին տես մեր Հ.Ստեփանյան «Հայատառ թուրքերեն գրականությունը» մենագրությունը (Եր. 2001) և «Հայատառ թուրքերեն գրքերի եւ հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն» (Ստամբուլ, 2005) աշխատությունները, առանձին հոդվածներ:

Առաջին հայկական տպարանը Կ.Պոլսում հիմնադրվել է Աբգար Թոխաթեցու(Եվդոկացու) կողմից 1564թ. Վալիդե խանում, գործել մինչև 1569թ: Նրանից է սկսվում Օսմանյան կայսրությունում հայկական տպագրական գործի, տպագրական մշակույթի փառավոր ճանապարհը, տալով տպագրիչների, տառաստեղծների, տառածուլների, հրատարակիչների, տպարանատերերի հարյուրավոր անուններ, որոնք մեծագույն ավանդ են ունեցել մեր ժողովրդի և Օսմանյան կայսրության զարգացման պատմության մեջ<sup>4</sup>:

1677թ. ակնցի Երեմիա Քյոմուրճյանը Ստամբուլի Գումգափու թաղում երկրորդ հայկական տպարանն է հիմնադրում<sup>5</sup>:

Գրիգոր Մարզվանցին (Մերջանզադե Գրիգոր դպիր Մարզվանցի, ?-1735) և Աստվածատուր Կոստանդնուպոլսեցին (1670-1747) 1694թ. հիմնադրվում են Պոլսի 3-րդ, «Աստվածատուր Դպրի» հայկական տպարանը, որը գոյտևում է մոտ 45 տարի:

19-րդ դարի սկզբին Կ.Պոլսի հայ տպարանների թիվը հասնում է 25-ի:

---

1486 թ. Մայնցում, դեռևս Գուտենբերգի կողմից հիմնադրված տպարանում հրատարակվել է Բերնարդ ֆոն Բրայդենբախի «Ճանապարհորդություն դեպի ավետյաց եկիր» գիտական նկարագրող ուսումնասիրությունը՝ "Peregrinatio in Terrum Sanctam": Այս գործն արդյունք էր Մայնցի տաճարի դեկան և գանձապահ Բերնարդ ֆոն Բրայդենբախի 1483-1484 թթ. Երուսաղեմ կատարած ճանապարհորդության: Գրքում շարադրված են հայերի մասին եզակի հետաքրքրություններ կայացնող նյութեր: Այստեղ տպագրված է փայտի վրա փորագրված մի աղյուսակ: Այն ներկայացնում է հայկական այբուբենը և տառերի անվանումները: Աղյուսակն արված է եղել պալատական նկարիչ Ռոյվիխի կողմից, որն ուղեկցել է Բերնարդ ֆոն Բրայդենբախին իր ճանապարհորդության ընթացքում: Այսպիսով առաջին տպագիր հայկական այբուբենը 515 տարեկան է: (Այս մասին տես՝ «Հայրենիքի ծայն» թերթ: Եր., 1986, հունվարի 22):

<sup>4</sup> Առաջին հայերեն Աստվածաշունչը Կ.Պոլսում տպագրվել է 1705թ. Պետրոս Լաձինացու կողմից: Առաջին հունական տպարանը Իզմիրում Օքսֆորդի Բալլիոլ կոլեջի շրջանավարտ Նիկողեմուս Մետաքսասի 1627թ.Անգլիայից բերված մամուլով ու տպագրական տառերով է հիմնադրվում: Թուրքական առաջին տպարանը միայն 1728 թ. է հիմնադրվում:



Հայատառ թուրքերեն տպագիր գրականությունն ընդարձակ աշխարհագրություն ունի: Հրատարակվել է աշխարհի մոտ 50 քաղաքների 200-ից ավելի տպարաններում: Միայն Կ.Պոլսում 1730թ. սկսած այն տպագրվել է մոտ 85 տպարաններում: Ունեցել է իր սոցիալ-քաղաքական, կրոնական կողմնորոշումը, իր գրական, լուսավորական նպատակները: Ավելի քան 250 տարիների ընթացքում տպագրված հայատառ թուրքերեն գրքերի թիվն անցնում է 2500-ից: Հավելենք այս ամենին թատրոնի համար կատարված 500-ից ավել թարգմանությունները, փոխադրությունները, նրանց կրթական, լուսավորական, մշակութային առեւտի նշանակությամբ: Հայատառ թուրքերեն մամուլը կազմում է մոտ 130 անուն պարբերականների 1840-1947թթ. ընկած ժամանակաշրջանում<sup>5</sup>:

Մի շարք հայ տպագրիչներ մեծագույն պարգևների են արժանացել, մասնավորապես Արապյան ամիրայական տոհմը ի դեմս նրա ամենափայլուն ներկայացուցչի՝ ակնցի Պողոս (Օհաննեսյան) Արապյան Ապուլչեխցու (Արապ օղլու 1742-1835): Նա մոտ 70 տարի նվիրաբերել է տպագրական գործին: Եղել է առաջին տպագրիչը հայ թերթերի ու թուրք պաշտոնաթերթերի: Եղել կայսերական տպարանի ղեկավարը, բացի հայկական նոր տառերից, թուրքական տառեր ստեղծել<sup>6</sup>:

---

<sup>5</sup> Տես՝ Ստեփանեան Յ.Ա. Հայատառ թուրքերեն գրքերի եւ հայատառ թուրքերեն պարբերական մամուլի մատենագիտություն. Ստամբուլ, 2005թ.

<sup>6</sup> 1769թ. մոտ 10 տարի վրաց Հերակլ թագավորի հրավերով Թիֆլիս է գնացել, այնտեղ ծուլել վրացական տառեր, հիմնել տպարան: Մասնակցել է Էջմիածնում հայկական առաջին տպարանի կատարելագործմանը: 1791թ. Պողոս Արապյանը *Նեսիհ* և *Թալիզ* տառատեսակների «մայր» տառերն է ստեղծել, որոնք տպագրության պատմության մեջ նրա անվամբ մտել են որպես «Արապ օղլու»ի տառեր: Պողոս Արապյանն առաջինն ու միակն է եղել, որ իր գոպակի (ֆեսի) վրա կրել է Սուլթան Մահմուդի շնորհած արույրե «Մամուլ» նշանը: Կայսերական տպարանում տպագրվող «Թագվիմ ի Վագայի» թուրքական անդրանիկ պաշտոնաթերթի ու նրա հայերեն տարբերակի՝ «Յայտարար լրոյ Մեծի Տէրութեանն Օսմանեան» 500 օրինակի համար 2000 դրուշ անսեվարձ էր ստանում: Թերթերն անվճար հղվում էին տարբեր գավառների առաջնորդներին, կառավարիչներին: «Մաթապաաի Ամիրե»-ի (Արքունի

Մյուս հայտնի տպագրիչը, որը մեծագույն ծառայություններ է մատուցել Օսմանյան կայսրությունում, դա Հովհաննես Մյուհենդիսյանն է (1810-1891): Նրա գործունեությունը սկսվում է 1839 թվականից: Հայտնի է եղել որպես «անգուգական տպագրիչ և գրածուլիչ»<sup>7</sup>:

Օսմանյան կայսրությունում առաջին թղթադրամները տպագրել է Ռաֆայել Գազանձյանը: Սակայն այս թղթադրամները զուրկ են եղել գեղարվեստական արժեքից և որ ավելի կարևոր է՝ սկսել էին կեղծվել: Այդ իսկ պատճառով նոր թղթադրամների տպագրության գործը հանձնարարվում է Հովհ. Մյուհենդիսյանին<sup>8</sup>:

---

տպարան, որն ուներ նաև հայերեն տառեր) տնօրեններն եղել Պողոս Արապյանը, Հովհաննես Մյուհենդիսյանը, Հակոբ Պոյաձյանը, Ճանիկ Արամյանը, որոնք զբաղվել են նաև օսմաներեն տառերի ծուլման գործով:<sup>7</sup> Հովհաննես Մյուհենդիսյանը, լավագույնն է հանդիսանում այս խնդրի համար հատուկ հրավիրված ֆրանսիացի մրցակիցներից ու նախընտրելին: Հովհ.Մյուհենդիսյանը Արքունի փողերանոցում սկսում է տպագրել 5000 դուշանոց, 100, 500, 250 *ֆայլզլը* կոչված գայիմեները: Ավելի ուշ, 1857թ. վերջերին տպագրել են նաև 1000 և 100 ոսկիանոց *Թահվիլաթը մումթագ*-ները, 100-անոց, 50,20 և 10-անոց *գայիմեն*ները: Նա իր ժամանակի ամենահայտնի տպագրիչն էր: Ամերիկայից բերել էր տվել 3 նորահնար երկաթյա և 5 վիմատիպ մամուլներով տպագրական հաստոցներ, Փարիզից՝ արագատիպ մամուլներ, լիտոգրաֆիայի, գալվանիկայի պրոցեսները կատարող մեքենաներ: Մյուհենդիսյանի գործունեությունը կապված էր ոչ միայն տպագրական գործի զարգացման հետ Օսմանյան կայսրությունում: *Նրա շնորհիվ են Թուրքիա մուքք գործել գալվանիստիկայի, ստերիոտիպի, ցինկոգրաֆիայի նորույթները*: Նրա տպարանում էին տպվում Պատրիարքարանի գործերը, թերթեր, գրքեր, որոնք տարածվում էին ողջ Կովկասում: Նա նաև ծուլածո տառեր էր վաճառում տպարաններին: Տպագրում էր մաքսային տոմսեր, տոմարներ:<sup>8</sup> Հովհաննես Մյուհենդիսյանը (1810-1891) եղել է նաև երաժշտագետ: Եկեղեցական երաժշտության գիտակ: Նա է պատրաստել հայկական խազերի տպագրական մայր օրինակները: Հետևել է ոսկերչության, աշխատել Արքունի փողերանոցում, աշխատավարձի քննության պատճառով թողել, ոսկերչի խանութ բացել Զուխաճը խանում, շնորհիվ իր արվեստի ձեռակերտների անմրցելի նրբության, դարձել ոսկերչապետ, հայտնվել ժամանակի ամիրայական մի քանի հայտնի գերդաստանների թվում:

Հովհ. Մյուհենդիսյանը ևս հայտնի է եղել իր տառաստեղծ գործով: Մոտ 13 տեսակի *բունթո* տառեր է ստեղծել: Կատարելագործել *թայիզ*-ները:

Հայ տպարանատերերից շատերի գործունեությունը դուրս է ելել հայկական շրջանակներից: Բազմաթիվ հայկական տպարաններում են տպագրվել թուրք հեղինակների օսմաներեն, հայերեն, հայաստառ թուրքերեն երկերը, թարգմանությունները, փոխարդրությունները, ինչպես նաև հայ հրատարակիչների, պատասխանատու խմբագիրների կամ հայ տպարանատերերի օսմաներեն, ինչպես նաև ֆրանսերեն կամ հայերեն, հունարեն, օսմաներեն, ֆրանսերեն, քառալեզու, հնգալեզու<sup>9</sup> պարբերականները, օտա-

---

Նա հայտնի էր ոչ միայն տառերի, այլև տպագրական գործիքների, տառեր ձուլելու մեքենաների, հաստոցների ստեղծմամբ: Իր կյանքի լավագույն տարիները նա նվիրում է օսմանյան այբուբենի տառերի կաղապարների ամենավերջին կատարելությամբ պատրաստելու գործին: Հովհ. Մյուհենդիսյանի տպագրական ձեռակերտներից են դրոշմաթղթերը(*վարագայի սահիհե*), որոնց նմանը ոչ Ֆրանսիայում և ոչ էլ մի այլ տեղ կարելի էր գտնել: 80 տարեկանում ձեռնամուխ է լինում ձեռագրի տեսքով *որգզա* տառերի ստեղծմանը, որն ավարտում է մահվանից քիչ առաջ, 1891թ.: Դրանք նրա գործունեության գլուխգործոցն են համարվել: Նրան անվանել են «Թուրքական Գուտենբերգ»<sup>9</sup>

<sup>9</sup> **Թադեոս Տիվիթյանը** (1810-1878), պոլսահայ, որ տիրապետում էր հունարեն, բուլղարերեն, իտալերեն լեզուներին, Օսմանյան կայսրությունում առաջինն էր, որ ձուլեց բուլղարերեն տառերը, տպագրեց բազմաթիվ գրքեր, որոնք ուղարկվում էին Բուլղարիա, մտավոր, հոգևոր սնունդ հասցնում այդ երկրին: **Ռուբեն Քյուրքյանը** (1825-1870), Մյուհենդիսյանի տպագրիչ այս աշակերտը հայտնի է եղել իր տպագրությունների մաքրությամբ: Նրա ստեղծած և իր անունով կոչված տառերը ամենահայտնիներն են եղել ժամանակին: Նրա ժամանակ տառերը ձեռքով էին ձուլում: Նա հնարել է «թուլումպայով» ձուլելու տեխնիկան: **Երվանդ Փայազաշյանը** երբայական պարբերականների համար պատրաստել է երբայական գրեր, նաև օսմանյան զարդագրերի մայր օրինակներ: **Կարապետ Քեչիշյան** (1850-1910)՝ գրավաճառ Օսմանյան զինվորական և քաղաքական վարժարանների(Հարբիե), տպագրիչ: Հրատարակել է անհամար էժան օսմաներեն և հայաստառ թուրքերեն դասագրքեր, հանդեսներ: Զիկագոյի միջազգային ցուցահանդեսում ստացել է «Ոսկե մեդալ», Ճապոնիայի Միկադոյից՝ «Ծագող Արեգակական պատվանշան»-ը, Սերբիայի թագավորից՝ «Ռագովայի» Ա աստիճան, Օսմանյան կառավարությունից՝ «Մեճիտիե» և «Օսմանիե» շքանշանները, «Արիեստի շքադրամ» (Սանայի մադալյասը): Ունեցել է «Ուլայի» բարձր աստիճան, եղել է Նյու-Յորքի բարեգործական ընկերության պատվավոր անդամ: Օսմանյան թերթերով ու գրքերով

րալեզու գրքեր, որոնք տարածվել են ողջ Կովկասով: Հայ տպագրիչների մի մասը Պոլսի Ջինվորական վարժարանում (Հարբիյե) սկսել են դասավանդել նաև տպագրական գործ, մասնավորապես լիտոգրաֆիա<sup>10</sup>:

Լրագրող, հրատարակիչ Նագգաշյան Սիհրանը(1850-1944), որ առավելագույնս ծառայել է թուրքական տպագրական մշակույթին, 1879-ին հրատարակում էր "Tercimanı Şarkı" (Թերճիմանը շարքը՝ Արևելքի թարգման) պարբերականը, որը հետո վերածվում է թուրքական առաջին մեծ օրաթերթի՝ "Sabah"-ի, որի արտոնատերն է եղել:

Հայերի կողմից, հիմնականում նաև հայկական տպարաններում են հրատարակվել թուրքական (օսմաներենով) հետևյալ հայտնի պարբերականները՝ Sabah, Saadet, Servet, Yeni Fikr, Hazine-i Fünün, Ceride-i Fenniye ve Edebiye Servet, İrtika, Tarik, Malümat, Terakkı, Maarif, Geveze, Hafta Karakuş Ezop, Nevsal-i Osmani, Necat-ı Millet, Şikayet, Istanbul, Musavver Turkistan, Resimli Gazete, Resimli Ziraat Gazetası, Yeni Gazete, Mekteb և ֆրանսերենով պարբերականների մեծ մասը՝ La Reforme, L'Eclair, La Patrie, Intransigent, Jeun Turc, La Verité, Renaissance, L'Information d'Orient, Indicateur General des transports en Turquie և այլն:

Բացի հրատարակիչ-տպարանատերերից, կարևոր ավանդ է վերապահված եղել հայ գրածուլիչներին (որոնք տպարանատեր չեն եղել): Նրանք տառեր են մատակարարել հայկական և օտար տպարաններին, հսկայական ավանդ են ունեցել մեծ քաղաք-

---

ասպարեզը ողողած այս անծի գործ շարունակել են նրա զավակները՝ «Կ.Քեշիշյան Որդիք» տպարան անվամբ:

*İmeron, Hermes, İdisis, Hayat- ı Ticari, Perde* հայ, հուն, թուրք, ֆրանսերեն քառալեզու թերթերը հրատարակվել են Սիլիթադի Էֆենդիի կողմից, հայ խմբագիրների, տպարանատերերի հետ միասին:

<sup>10</sup> Հարբիյեում լիտոգրաֆիայի (վիմագրության) դասավանդող վարպետ Երվանդ Թերզյանը 1902թ. արժանանում է «ՍԵՃԻՍԻԿԵ» 4-րդ կարգի պատվանշանի:

ների, գավառներում տպագրական գործի հիմնադրման ու զարգացման մեջ:

Օսմանյան կայսրության լուսավորական մթնոլորտի հաստատման մեջ մեծազույն ավանդ են ունեցել հայ գրավաճառները:

Ամենահայտնին Քիթապճը Մարգարն է (178(9)9-1845)<sup>11</sup>: Նա պոլսահայ գրավաճառների նահապետն է համարվում: Նա 1805թ. Կոսկա թաղամասում, Աբրահամ Ամիրայի տպարանի մոտ հիմնում է «Մարգարյան գրախանութ» առաջին գրավաճառանոցը:

Հայատառ թուրքերենը ինքնուրույն ու ինքնաբավ մի գրականություն է, հարուստ, որակով, միմյանց չկրկնող՝ հանուն արևմտահայության ու Օսմանյան կայսրությունում զարթոնքի ու ազգային ինքնագիտակցության բարձրացման:

Այս գրականությունը, արևմտահայ հայագիր գրականության հետ միասին Օսմանյան կայսրության եվրոպականացման, նոր գաղափարների ներթափանցման, զարթոնքի ընդհանուր շրջանի ծնունդ տվողներից ու շարժիչ ուժերից է հանդիսացել: Այս լեզվով են թարգմանվել ու կարդացել համաշխարհային, ողջ եվրոպական դասականներին ու ժամանակի հայտնի, բուլվարային, արկածային, թերթնային գրականության արձաներին: Այս լեզվով են հիմնականում գործել հայկական թատերախմբերը, ներկայացնելու համար թուրքերեն լեզվով իրենց խաղացանկը: Հայատառ թուրքերենով են գրել, թարգմանել, փոխադրել հայ թատրոնը շրջապատած թուրք լուսավորիչները՝ ծնունդ տալով թուրքական դրամատուրգիային, թուրք նոր գրականությանն ու գրական «թուրքերենին»: Այս լեզվով տպագրվել են հարյուրավոր պարբերականներ, որոնք աննկարագրելի պատմական դեր են ունեցել Օսմանյան

---

<sup>11</sup> Նրա, ապա նաև որդու՝ Հարություն Մարգարյանի գրատունը ժամադրավայր է եղել տարբեր ազգերի մտավորականների, գրականության մարդկանց համար: Նրանք չեն սահմանափակվել հին ու նոր գրքեր վաճառելով: Նրանք են մղել ամիրաներին, հովանավորելու մեծաքանակ գրքերի հրատարակությունները, նոր ոգի մտցրել գրավաճառության մեջ: Հեղինակների հետ պայմանավորվելով, նրանք իրենց միջոցներով տպագրել են գրքեր: Քիթապճը Մարգարի մահվանից հետո իր գրքերը գնել են ու վաճառել Փարիզի Ազգային Մատենադարանին:

կայսրության սոցիալ-քաղաքական, գիտական, մշակութային կյանքում, կենցաղում, նոր աստիճանի բարձրացնելով հայ լրագրողական մշակույթը, միաժամանակ ծնունդ տալով ժամանակահունչ թուրքական լրագրողական մշակույթին: Հայատառ թուրքերեն որոշ պարբերականների հեղինակությունն այնքան մեծ է եղել, որ մյուս ազգերի առաջադեմ մտավորականությունը, մասնավորապես թուրքերը ոչ միայն համագործակցել են դրանց, այլև սովորել են հայկական այբուբենը և ամեն օր կարդացել այդ թերթերը, նախընտրելով այն օսմաներենով հրատարակվողներից:

Արևմտահայերի կողմից ստեղծվել է մեծաթիվ գրականություն: Հայատառ թուրքերեն պարբերական հարուստ մամուլը, ինքնուրույն ու թարգմանական, մասնավորապես ֆրանսիական արկածային գրականությունը օրը օրին, սովորության ուժով կարդացվում էին մեծ ու փոքր քաղաքների հասարակական վայրերում, սրճարաններում, թեյարաններում, պաշտոնատեղիներում՝ հարյուրապատիկ մեծացնելով ընթերցողների շրջանակը:

Ստեղծվել է օսմաներեն լեզվի ուսուցման դասագրքերի, բառարանների աննախընթաց առատություն (հայերեն, հայատառ թուրքերեն, օսմաներեն բացատրական տեքստերով): Ամենից շատ այն օգնել է նոր թուրքերեն լեզվի կայացմանը, նրա բառացանկի հարստացմանը: Հայ լեզվաբանների հեղինակած թուրքերենի (հայատառ թուրքերենով) հարյուրի մոտ դասագրքերով ու բառարաններով սեփական լեզուն տասնամյակներ շարունակ սովորել են թուրքերը դպրոցներում, նորաբաց մասնագիտական տարբեր, նաև բարձրագույն, բժշկական, տնտեսագիտական, նույնիսկ զինվորական ուսումնական հաստատություններում՝ կրկին հայատառ թուրքերենով օգտագործվող մասնագիտական (ինքնուրույն ու թարգմանական) գրականության հետ միասին:

Հայատառ թուրքերեն գրականությունն օգտագործվել է ստեղծելու համար կայսրություն մուտք գործող գիտության, տեխնիկայի, գյուղատնտեսության, արհեստների ու մշակույթի գրականություն, որը կոչված էր ծառայելու ոչ միայն հայ, այլև Օսմանյան կայսրության թուրքախոս ազգերին, թուրքերին: Հայատառ թուրքերենը եղել

է կենդանի օրգանիզմ և ծառայել է ողջ կայսրության շահերին: Ի-գուր չէ, որ պալատական վերնախավային շրջանակներում 19-րդ - դարի կեսերին հարց է առաջացել օսմաներեն լեզվի արաբական այբուբենը փոխարինելու հայկականով, որի կենսունակությունն արդեն ապացուցված էր:

1850-1870-ական թթ., քաղաքական կյանքի համար համեմատաբար բարենպաստ տարիներին, հայատառ թուրքերեն գրականությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի թրքախոս հատվածի հոգևոր վերելքին, նրա ազգային-ազատագրական ոգու վերածննդին և ընդհանուր առմամբ Օսմանյան կայսրությունում հասարակական մտքի զարթոնքին: Գեղարվեստական գրականություն (ինքնուրույն և թարգմանական), պատմական աշխատություններ, լուսավորական գրականություն, հրապարակախոսություն, փիլիսոփայական տրակտատներ, գիտական, գիտա-հանրամատչելի գրքեր, դասագրքեր, բառարաններ, իրավագիտական ակտեր, դիվանագիտական գրագրության որոշակի մասը, տարբեր տեսակի ուղեցույցներ, բժշկական, կենցաղային՝ երգարաններից մինչև երազահաններ ու խոհարարական գրքեր, առողջապահական հրատարակություններ, գրքեր երեխաների համար և այլն:

Նույնիսկ աբդուլհամիդյան բռնապետության դաժանագույն գրաքննության տարիներին, երբ խստագույնս արգելք էր դրված ազգային ինքնագիտակցության զարգացմանը նպաստող յուրաքանչյուր գրքի ու հոդվածի վրա, երբ արգելված էին անգամ հայերեն թատերական ներկայացումները, հայատառ թուրքերեն գրականությունը կարողացավ կատարել իր քաղաքացիական պարտքը՝ մշակութային, հասարակական-քաղաքական համախմբման առաքելության առումով:

Հայատառ թուրքերեն գրականությունն անկասկած իր հսկայական ազդեցությունն ունեցավ թուրք գրողների ու հասարակական գործիչների նոր սերնդի ձևավորման ու զարգացման վրա: Վերջիններս հանդես էին գալիս հանուն Օսմանյան կայսրությունում սահմանադրական բարեփոխումների անցկացման և թուրք հասարակության մեջ աշխարհիկ, մշակութային կյանքի զարգացման:

Այս մեծ գործին մասնակիցներն էր արևմտահայ մտավորականության ընտրանին, ուսուցչից, փաստաբանից, վաճառականական խավից, պալատական պաշտոնյաից մինչև Կայսրությունը արտասահմանյան երկրներում ներկայացնող դիվանագիտական հաստատությունների հայ աշխատակիցները՝ որոնք չափազանց մեծ թիվ են կազմել, հիմնականում վարել են թարգմանիչների, գրասենյակի ղեկավարների, առաջին քարտուղարների պաշտոնները, տարբեր նախարարություններում, դատական և իրավական, բանկային ու առևտրական ասպարեզում ղեկավար պաշտոններ վարող հայ մասնագետները: Քիչ չեն եղել դեսպաններն ու մանավանդ՝ գլխավոր հյուպատոսները, խորհրդականները, կառավարության արտաքին գերատեսչության ամենապատասխանատու բաժինները տնօրինողները: Վերջիններիս ավանդն օսմանյան դիվանագիտական մշակույթում, տասնամյակներ շարունակ նրա ունեցած հաղթանակներում՝ անկարելի է անտեսել:

Հայատառ թուրքերեն գրականության մի խոշոր հատված իրենից ներկայացնում է թարգմանություններ՝ կատարված թատրոնի համար: Այդպիսի ստեղծագործությունների թիվը հասնում է մոտ 500-ի: Օսմանյան կայսրությունում լուսավորական շարժման զարգացման գործում նկատելի դեր են խաղացել այդ թատերախմբերի երկրով մեկ կատարած հյուրախաղերը: Այս հյուրախաղերը համընկել են մանավանդ «զուլումի» տարիներին, երբ Կ.Պոլսում ոչ միայն արգելված էին հայերեն ներկայացումները, այլև թուրք հեղինակների ու եվրոպական թարգմանական պիեսների մեծ մասը: Այնուամենայնիվ, հրատարակված չլինելով հանդերձ, այդ պիեսները ներկայացվել են ավելի քան հարյուրավոր անգամներ, նշանակալի դեր խաղացել Օսմանյան կայսրության ժողովուրդների հոգևոր զարգացման գործում: Այդ բեմադրություններից շատերն ավելի կարևոր են եղել, քան հրատարակված որոշ ստեղծագործություններ: Չպետք է անտեսել այն հանգամանքը, որ կայսրությունում անգրագետների ու թուրքերեն կարդալ չիմացողների թիվը հսկայական է եղել, իսկ զարգացած ու թուրքերենին տիրապե-



տողների թիվը՝ սահմանափակ: Դրանք բոլորը միասին դիտել և հասկացել են բեմում հնչող հայ դերասանների պարզ թուրքերենը:

Հայկական թատերախմբերի հետ համագործակցած թուրք մտավորականների ցանկն իրենից ներկայացնում է թուրք նոր գրականության դասականների, լուսավորիչների համարյա լրիվ ցուցակը: Այն է՝ Նամըք Քեմալ, Ահմեդ Միդհատ, Շամսեդդին Սամի, Էբուզգիյա Թեֆիք, Ռաջափզադե Էքրեմ, Ալի Հայդար, Հասան Բեդրեթին, Աբդուլիսկ Համիդ և շատ-շատերը: Բացի նյութական կողմից, թատրոնը թուրք լուսավորիչներին գրավել է նրանով, որ հենց թատրոնի միջոցով է հնարավոր եղել արտահայտել իրենց ամենամեծ երազանքները և թուրք առաջադեմ մտավորականության տրամադրությունները: Թատրոնի հանդես գալուց հետո պայքարի մի մասը տեղափոխվում է բեմ: Թուրքական թատրոնի պատմաբանների կողմից այս շրջանն ուսումնասիրվում է որպես թուրքական ազգային թատրոնի, օպերայի և երաժշտական թատրոնի սկզբնավորման ժամանակաշրջան (Մեթին Անդ, Ահմեդ Ֆեհիմ, ուրիշներ):

Թուրք թատերագետները, դերասանները արդարացիորեն նշում են, որ եթե չլինեին հայ դերասանապետերի թատերախմբերը<sup>12</sup>, նրանց կողմից նյութական վարձատրությամբ թուրք հեղինակներին տրվող առատ պատվերները, ապա դժվար թե ստեղծվեր թուրքական դրամատուրգիան:

Ավելի քան 50 տարիներ Թուրքիայի բնակչության ամենատարբեր, թրքախոս և թուրքերենին տիրապետող խավերը այսկերպ հաղորդակցվել են թատերական մշակույթի հետ: Եթե Օսմանյան սահմանադրության վերականգնման տարիներին թուրք կինն աստիճանաբար հասարակական ասպարեզ մտավ և Թուրքիայում ծայր առավ կանանց էմանսիպացիայի խնդիրներին ուղղված շարժումը՝ առատորեն տպագրվող հայատառ թուրքերեն թարգմանա-

---

<sup>12</sup> 1876թ. լորդ Սոլսբերին Պոլիս իր այցելության ժամանակ գնում է Կետիկփաշայի Օսմանյան թատրոնը, Վարդոպյանի թատերախմբի ներկայացումը և ապշած մնում բարձր մակարդակից:

կան գրականության հետ միասին այն միանգամայն կարելի է վերագրել հատուկ կանանց համար տրվող ցերեկային ներկայացումների դաստիարակչական մեծ ազդեցությանը, հայ առաջադեմ կանանց հրատարակած պարբերականներին, նրանց հասարակական կազմակերպություններին, որոնց մաս են կազմել կայսրության երևելի ընտանիքների, պալատի կանայք, դիվանագիտական ներկայացուցչությունների եվրոպացի անդամուհիների հետ միասին սկիզբ դնելով կանանց առաջադիմական շարժմանը Օսմանյան կայսրությունում: Թուրքական հարեմներում փակված կանանց համար թատրոնը դառնում էր եվրոպական քաղաքակրթության հետ շփվելու լավագույն հնարավորությունը: Այն մղում էր հարեմի և հանդիսատես մյուս կանանց կարգալու ֆրանսերենից առատորեն թարգմանվող վեպերը: Հայատառ թուրքերեն սիրային, արկածային վեպերը տարածված էին Ստամբուլի ողջ հարուստ ու միջին ընտանիքներում, հարեմներում ու ամեն մի կնոջ ու երիտասարդ աղջկա բարձի տակ կարելի էր այն գտնել:

Հայկական, մասնավորապես հայատառ թուրքերեն ձեռագրերում պահպանվել են ոչ միայն հայագգի, այլև թուրքական, արևելյան բազմապիսի ու բազմառձ հազարավոր թուրքերերեն երաժշտական ստեղծագործություններ<sup>13</sup>:

---

<sup>13</sup> Կոմպոզիտոր, նոտագետ (Բաբա)Համբարձում Լիմոնձայանի (1768-1839) անունը նվիրական անուն է թուրքական երաժշտական մշակույթում: Ստեղծել է հայկական նոտագրության խազերը: Նրա և իր հետևորդների, աշակերտների շնորհիվ (հայկական և եվրոպական նոտագրությամբ) մեզ են հասել ոչ միայն ժամանակի հայ ստեղծագործողների, աշուղների երգերը, ժողովրդական ստեղծագործությունները, այլև արևելյան գործեր, ժամանակի թուրք ստեղծագործողների հեղինակային երգերի նոտագրությունը, բառերով, նոտագրության բոլոր անհրաժեշտ գործոններով: Հայտնի անուններ՝ Ուդի Աֆեթ(Հաբեթ), Ուդի Սեդեֆչի Տիգրան, Քեմանի Տիգրան, Քեմանի Նուբար Չոմլեկձյան, Քեմանի Սեպուհ, Քեմանի Թաթոս, Քեմանի Նիկողոս, Քեմանի Քրիս, Քեմանի Գրիգոր ՋուլիայանԹամբուրի Հովակիմ, Թամբուրի Հարություն, Համբարձում չերչյան, Նիկողոս Թաշձյան, Արիստակես Քաղնա Հիսարյան,Լավթաձը Օվրիկ, Ուդի Արշակ Չոմլեկձյան, Ուդի Բույուք(մեծ) Սարգիս, Ուդի Սարգիս Քըլըճյան(Փոքր

Արևմտահայ մթնոլորտի, նրա մշակութային գործիչների ստեղծագործական ներդրման արդյունքում Կայսրություն է մուտք գործել եվրոպական նոտագրության, դասական երաժշտական մշակույթը, հրատարակվել են երաժշտական ու երաժշտագիտական պարբերականներ, Ստամբուլի հայ բարձրաշխարհիկ խավի կողմից կազմակերպված պարահանդեսների, բարեգործական երեկույթների, համերգների կազմակերպմանը մասնակցել են տերության պալատական, բարձրաստիճան խավը, դիվանագիտական ներկայացուցչությունների անդամները, սուլթանական ընտանիքի անդամ արքայազներն ու արքայադուստրերը: Ստամբուլյան դահլիճները զբաղված են եղել հայ դերասանների, երգիչների, երգչախմբերի, երաժիշտների համերգներով: Դրանց մեծագույն մասը եվրոպական կրթություն ստացած, արդեն հայտնի դեմքեր են եղել: Հրավիրյալ երաժիշտների հետ համատեղելույթներում ժամանակի դասականների հետ մեկտեղ հնչել են հայ կոմպոզիտորների ու նրանց մշակմամբ ազգային գործեր: Երաժշտական այս բուռն մթնոլորտի մաս են կազմել երաժշտական ստեղծագործությունների տպագրությունները երկրում և արտասահմանում, երաժշտական գործիքների արտադրությունը:

Միջազգային ցուցահանդեսներում բազմաթիվ մրցանակներ շահած ու համաշխարհային հռչակ ձեռք բերած Զիլձյան ընտանիքի ծնծղաները 1623թ.ից դարձել էին յուրատեսակ այցեքարտ Թուրքիայի համար ու մինչ օրս էլ ծնծղայագործ 400 ամյա գերդաստանի միայն անունը կրող ծնծղաները լավագույն որակի արտահայտիչներ են թե դասական և թե այլ նվագախմբերի համար:

---

Սարգիս), Քանոնի նուբար, Քանոնի Առաքել, Քանոնի Սիիրան Քավուքձյան, Քանոնի Մաքսուդ, Քանոնի Արամայիս, Քանոնի Համբարձում, Անտուան Մեզձյանը: Նրանք օգտագործել են հայկական նոտագրությունը, որն ավելի տարածված էր: Օսմանյան բանակի նվագախմբերը երկար ժամանակ հենց այս նոտաներով են աշխատել: Մատենադարանի 118 հայատառ թուրքերեն ձեռագիր տաղարաններ ամփոփում են ոչ միայն հայ, այլև թուրք և այլ ազգերի ստեղծագործողների հարյուրավոր նմուշներ:

Տիգրան Չուխաճյանի (1837-1898) անունը կապվում է թուրքական օպերայի, կոմիկական օպերաների, քայլերգերի ստեղծման պատմության հետ: Թուրք դասական երաժշտության հիմնադիր կոմպոզիտոր, երաժշտագետ, դիրիժոր Տիգրան Չուխաճյանի գործերը կատարում էին նաև իտալական օպերային խմբերը, ներկայացվում Ռումինիայում, Բելգիայում, Անգլիայում: 1895թ. Չուխաճյանի «Ձեմիրեն» իտալական «Ֆրանձինի» խմբի կողմից ներկայացվում է Փարիզի «Օպերա-բուֆում»: Նա 1866թ. հիմնադրում է Օսմանյան Օպերային Միությունը, 800 տեղանոց համերգային, և օպերային թատրոն հիմնադրում 1874թ.-ին: Հայ ճարտարապետների կողմից կառուցվում էին թատրոնի շենքեր ոչ միայն հայկական թատերախմբերի համար<sup>14</sup>:

Մահմուդ Բ սուլթանի օրոք (1808-1839) մեծ քաղաքներում, գավառներում հայ երաժիշտների, երաժշտության հայ ուսուցիչների<sup>15</sup> բեղմնավոր գործունեության արդյունքում հիմնադրված սիմֆոնիկ, կամերային, փողային նվագախմբերը, երգչախմբերը, երաժշտական միություններն ու հրատարակությունները, թատերախմբերը, պարային մասնավոր դպրոցները, սպորտային տարբեր խմբերն ու թիմերը, հասարակական հարյուրավոր կազմակերպությունները ողջ երկրով մեկ, առանձնապես Ստամբուլը դարձնում էին եվրոպական որակների հավակնող քաղաք:

Հայ մասնագետները երաժշտություն են դասավանդել են նաև գինվորական, ռազմածովային դպրոցներին կից երաժշտական դպրոցներում, աճեցրել շատ ու շատ երաժիշտներ, այդ թվում թուրքական երաժշտության շատ երախտավորների, իսկ Օսմանյան Գեղարվեստից վարժարանի հայ դասախոսներն ու բազմաթիվ տաղանդավոր սաներ մեծագույն ներդրում են ունեցել գեղարվեստ-

---

<sup>14</sup> 1891թ. Պերայում, Թեփեբաշըյում ճարտարապետ Հովսեփ Ազնավուրը կառուցեց քաղաքապետարանի դրամայի ու կոմեդիայի թատրոնը:

<sup>15</sup> Դրանց ղեկավարներն իրենց արժանի դիրքն են գրավում համայնքում, Պոլսի գեղարվեստասեր միջավայրում, արժանանալով նաև սուլթանական պալատի և թուրքական կառավարության, օտար տերությունների կողմից մեծ ու փոքր շնորհների, պատվանշանների:

տի տարբեր ճյուղերի հիմնադրմանը, զարգացմանը, երկրի մշակութային զարգացմանն ու դրա ներկայացմանը Կայսրության սահմաններից դուրս, մասնակցել միջազգային բազմաթիվ ցուցահանդեսների, իսկ սեփական երկրներում սկիզբ դրել ամենամյա, պարբերական ցուցահանդեսների:

Հայ մանրանկարչության լավագույն ավանդույթները շարունակվել են Օսմանյան կայսրության ժամանակ ևս: Նկարիչների մի մասը դուրս գալով ազգային շրջանակներից, մեծ ճանաչման ու փառքի են հասել, դառնալով Կայսրության լավագույն նկարիչները, ծառայել պալատում<sup>16</sup>, հեղինակել թուրք սուլթանների ու նշանավոր այրերի դիմանկարներ, պատմական, պատերազմական (մասնավորապես հայտնի ծովամարտերի) թեմաներով հայտնի, մեծարժեք կտավներ, կայսրության պատմական վայրերի ու չքնաղ բնության, ծովային թեմաներով անհամար նկարներ թողել<sup>17</sup>:

Պերայում, քաղաքի ամենաեվրոպական հատվածում կենտրոնացված են եղել հայկական լուսանկարչատները, տպարաններ, դեղարաններ, բժշկական մասնավոր ընդունարաններ, փաստաբանական ու ապահովագրական գրասենյակներ, ոսկերիչներ, տարբեր այլ արվեստագետների ու արհեստավորների խանութներ, փոքրիկ ֆաբրիկաներ, ամենատարբեր խանութներ, մասնավորապես պերճանքի, շքեղ, եվրոպական նորածև հագուստեղենի ու կերպասեղենի հայտնի վաճառատներ, ծաղարաններ, ճաշարաններ, Թոքթայան պանդոկը: Հայ լուսանկարիչներն այնպիսի համբավավոր անուններ են ունեցել, որ Պոլիս այցելող արքայական ու իշխանական տոհմերի հայտնի մարդիկ, օտար դիվանագետներ պարտք են համարել անպայման լուսանկարվել այստեղ:

---

<sup>16</sup> Մանասների 16-րդ դարում Կեսարիայից Պոլիս գաղթած այս ընտանիքը 18-րդ դարից սկսած ավելի քան 200 տարի մեծագույն ծառայություններ է մատուցել արվեստի (նկարչության, մանրանկարչության), ապա նաև դիվանագիտության ասպարեզում: Նրանք 2 դար ամենահայտնի պալատական նկարիչների տոհմն են եղել:

<sup>17</sup> Տես Կարո Քյուրքմանի երկհատոր ալբոմը, նվիրված Օսմանյան կայսրության հայ նկարիչներին:

Իհարկե ամենահայտնի լուսանկարչատունը, որը նախակարապետն է եղել Օսմանյան կայսրությունում այս արվեստի՝ դա արքայական նկարիչ Աբդուլլահ եղբայրների արվեստանոցն է եղել, ապա նաև լուսանկարչատունը:

Սաբահ և Ժոայիե, Ֆեբուս, Նադիր, Սեպուհ Մանասի, Գարագաշյան եղբայրների, Պառնաս, Էզլը, Ռոման, Վիրանյան, Կարոյան<sup>18</sup>, Ապօլլոն, Մեզաք, Սիմոն, Ճամլձա, Էլ Շարք և հարյուրի հասնող հայկական լուսանկարչատներ են գործել Կայսրության ողջ տարածքում, հանդիսանալով մշակույթի այս ճյուղի առաջամարտիկները:

Նրանք արտասահմանյան դիվանագիտական ներկայացուցիչների պատվերով լուսանկարել են սուլթանների, փաշաների, Պոլսի նավամատույց եկած անգլիական, ճապոնական բրիգանդինաներ, ծառայել որպես արքայական պալատի լուսանկարիչներ: Նրանց գործերից փոստային բացիկներ են տպագրվել... Սուլթանական շնորհներ են ստացել: Աբդուլլահների ալբոմները պետական գանձարանի միջոցներով հրատարակվել<sup>19</sup> են տարբեր երկրների կառավարությունների, հայտնի գրադարանների համար: Սա Օսմանյան կայսրության պատմության տեսանելի լավագույն հուշարձաններից է: 1906թ. հիմնադրվել է Հայ գեղարվեստական Ակադեմիա Պերայում, ուր գծագրության, նկարչության բոլոր ճյուղերը կարճ ժամանակում կարող էին սովորել, փարիզյան հատուկ մեթոդով: Եղել են մասնավոր օրեր օրհորդաց դասավանդության համար: Նրանք մեծ հաջողությամբ մասնակցել են միջազգային և պարբերաբար ցուցադրվել Կայսրության տարբեր քաղաքներում կազմակերպված ցուցահանդեսներին:

---

<sup>18</sup> Եւս Կարօ (Մկրտիչ Յովհաննէս Կարոյանը հնարել է իր անունը կրող լուսանկարչական կարոօրաֆ գործիքը:

<sup>19</sup> 1894 Ամերիկյան գրադարաններին նվիրելու համար Աբդուլլահ եղբայրների տարբեր նկարները կրկնօրինակելու համար մոտ 20 հազ դրուշ է ծախսվում Ներքին գործերի նախարարության բյուջեից

1906թ. Էրզրունում Կովկասահայ կինոմասնագետների կողմից կինոթատրոն է բացվում:

Կայսերական գեղարվեստի դպրոցն ուներ ճարտարապետության<sup>20</sup>, քանդակի, փորագրության, յուղաներկի, ածխանկարի, ջրաներկի, գրաֆիկայի, բաժիններ, ուր եվրոպացի, թուրք մասնագետների հետ միասին դասախոսում էին Փարիզի, Իտալիայի Գեղարվեստի ակադեմիաների հայազգի շրջանավարտ մասնագետները: Նրանք հանդիսացել են նաև երկրում թանգարանների, առանձին հայտնի հավաքածուների հիմնադիրներն ու առաջնեկները:<sup>21</sup>

Հայ նկարիչները, գեղագիրները (կալլիգրաֆները) աշխատանքի լայն ասպարեզ են ունեցել: Նրանք դասավանդել են, հեղինակել բազմաթիվ լուսանկարչական ու նկարչական ցուցահանդեսներ, կազմել տարաբնույթ ալբոմներ, նվիրված Օսմանյան կայսրության կյանքի ամենատարբեր կողմերին, ազգերին, արհեստներին, տարազներին, տարբեր ազգերի, դասակարգերի ու տարբեր զբաղումների մարդկանց, Օսմանյան կայսրության ընդարձակ տարածքի առանձին քաղաքներին, գյուղերին, պատմական վայրերին: Հրատարակվել են առանձին անհատների դիմանկարներով, նույնիսկ առանձին հաստատությունների, շենքերի, պալատների և այլնի նկարներով ալբոմներ: Նույնպիսի լուսանկարչական շարքեր ծառայել են նաև փոստային բացիկների, դրոշմաթղթերի<sup>22</sup> ստեղծման ու տպագրման ժամանակ:

---

<sup>20</sup> Ճարտարապետության բաժնի հայ շրջանավարտները Միհրան Ազարյանը և Հրանտ Յաղուայանը մասնագիտանում են մզկիթների շինարարության մեջ, թուրքական պալատների տարբեր մասերի նախագծման մեջ: Մզկիթների ճարտարապետների գերակշռող մասը հայ ճարտարապետներն են եղել դեռևս Օսմանյան Կայսրության կազմավորման շրջանից:

<sup>21</sup> 1900թ. Գյուղատնտեսության նախարարության վիճակագրական բաժնի ղեկավար Արտաշես Սյուրմեյանը նշանակվում է Ենիչեղիների թանգարանի տնօրեն:

<sup>22</sup> 1914թ. լոնդոնյան տպագրության շարքի 10 փարանոց երկու դրոշմաթղթերի վրա հայ մանրանկարիչը աչքի համար անտեսանել ձևով

Հնագիտական թանգարանի հիմնադիր Օսկան Էֆենդին, Թուրք լեզվական ընկերության հիմնադիր Հակոբ Մարթայանը (Դիլաչար), Ռոբերտ Կոլեջի գեղագրության ուսուցիչ Չերչյանը, որը հեղինակել էր Աթաթուրքի ստորագրությունը և շատ ուրիշ հայեր որոշակի դեր են խաղացել Օսմանյան կայսրության հասարակական կյանքի տարբեր բնագավառներում ներդնելով որոշակի մնայուն արժեքներ:

Հայ Պոլիսը հիմնականում կազմված է եղել հայ արհեստավորներից: Պոլսահայ բանասեր Հարություն Մրմրյանի կազմած 65 էսնաֆների (արհեստագործների) ցուցակին դեռ պետք է հավելվեր շուկաներում, խաներում զբաղված 2 տասնյակից ավել անուն-արհեստավորները: Իսկ եթե դրանց էլ հավելենք կապիտալիստական հարաբերությունների սկզբնական ու հետագա զարգացման շրջանում երկրով մեկ հայկական ամենատարբեր ֆաբրիկաների, գործարանների, մթերանոցների, առևտրական նոր տիպի գործունեության հիմնադրման երևույթը, եվրոպայից բերված տեխնիկական ամենավերջին նորույթի հաստոցներով ու նորամուծություններով, գյուղատնտեսության տարբեր ճյուղերում եվրոպականացման հեղափոխական զարգացումը, ապա այն պատկերացում կտա ողջ երկրի տարբեր ոլորտներում զբաղվածության, ավելի ճիշտ այս ասպարեզներն իրենց ձեռքերում կենտրոնացրած հայ գործարար

---

հայերեն գրել է՝ «Աստված մեծ է» բառերը: Երբ այն հայտնաբերվեց, նոր շարք տպագրվեց առանց հայ վարպետի «միջամտության», իսկ հեղինակը՝ գեղագրության ուսուցիչ Հաթթաթ (կալիգրաֆ) Հակոբը բանտարկվեց, մահապատժի ենթարկվեց: Այդ դրոշմանիշներն այսօր հազվագյուտների շարքին են պատկանում նամականիշների ու թղթանիշների հավաքածուներ կազմողների շրջանակում (ֆիլատելիական): Այսօր թուրք հրատարակիչ Օսման Քյոքերի կողմից հայկական փոստային բացիկների «Սիրելի եղբայրս» անունով շրջիկ ցուցահանդեսներ է կազմակերպվում տարբեր եվրոպական երկրներում, հրատարակվում ավբոմ:



ու սեղանավորական, վաճառականական խավի, բնակչության մասին<sup>23</sup>:

Վերջին տարիներին թուրքիայում հայ գիտնականների կողմից լույս աշխարհ են գալիս հանրագիտարանային արժեքի շքեղ հրատարակություններ, նվիրված Օսմանյան կայսրության տարբեր ասպարեզներում հայերի ունեցած ներդրմանն ու դերին<sup>24</sup>:

Նշանակալի է եղել ավանդը նույնիսկ այնպիսի ոլորտներում, ուր քրիստոնյաների ներկայությունը եթե ոչ արգելված, գոնե ցան-

---

<sup>23</sup> Մրմրեան Հ., Թուրքահայոց հին վաճառականութիւնը եւ վաճառականները, Կ.Պոլիս, 1910, 156 էջ:

<sup>24</sup> Բոլորին են հայտնի Բարսեղ Թուղլաճիի (Բարսեղ Թուղլաճեան) հրաշալի մենագրություն-ալբոմները պալատական ճարտարապետներ Պալյան գերդաստանի, երաժշտական գործիքների, կղզիների, հայտնի այլ գերդաստանների մասին և վերջապես այս տարի հրատարակված կրթողային հայկական եռահատոր հանրագիտարանը: Մինչ այդ՝ հայտնի էր հայազգի կաթոլիկ գիտնական Չարքի գիրքը (1953թ.), որը հայ երևելի անձանց ունեցած դերի մասին է Օսմանյան կայսրության մեջ: Այն ավելի պետական, ռազմական կառավարման ոլորտում հայազգի պաշտոնյաների մասին է: Այս մասին է Հրաչյա Աճառյանի մի հոդվածը: *Stu' Çark Y.G., Türk Devleti Hizmetinde Ermeniler 1453-1953, İst., 1953, s 302.*

Հրաչյա Աճառյան, Հայոց դերը Օսմանյան կայսրության մեջ: Երևան, 1999:

Մյուս գիտնականը՝ Կարո Քյուրքմենն է՝ իր արծաթագործությանը, պղնձագործության, Անատոլիայի, Օսմանցիների կշռի ու չափի գործիքների, կայսրության հայ նկարիչների, պղնձագործության, հայկական մեծահամբավ մի ոլորտի՝ Կուտինայի ձենապակու մասին տպագրած ու տպագրվելիք ծավալուն, շքեղ, զարմանալի աշխատություններով: *Stu' Garo Kürkmen, Osmanlı İmberatorluğunda ErmeniRessamlar, İst., 2004, 2 cilt, 988s. Garo Kürkmen, Anadolu Ağırılık ve Ölçüleri. İst.; Garo Kürkmen, Gümüş Damgaları, İst.; Garo Kürkmen, Osmanlılarda Ölçü ve Tartılar, İst.;*

Արսեն Յարմանի Օսմանյան կայսրության առողջապահության մեջ հայերի նպաստի, Ս.Փրկիչ ազգային հիվանդանոցի մասին հսկա աշխատությամբ առիթն օգտագործվել է առաջին անգամ բարձր մակարդակով, փաստաթղթային ու նկարագարող հարուստ նյութի հիման վրա ժամանակակից թուրքերենով ներկայացնել հայ ժողովրդի պատմությունը սկսած ուրարտական շրջանից մինչ օրս : *Stu'*

*Yarman Arsen, Osmanlı Sağlık Hizmetlerinde Ermeniler ve Surp Pırgiç Ermeni Hastanesi Tarihi, İst., 2001, s. 865*

կալի չի եղել: Այդ ասպարեզներից առաջինը ռազմական բնագավառն էր, ուր հայերը դարերով ոչ միայն որպես զինվորներ, հրամանատարներ, ռազմական, իրավաբանական ուսումնարաններում տարբեր մասնագիտությունների ու առարկաների դասախոսներ, դասագրքերի հեղինակներ են եղել, բանակի, պալատի մատակարարներ, թարգմանիչներ, խորհրդականներ, բժիշկներ են ծառայել, այլև այս բնագավառի բազմաթիվ կարևոր հայտնագործությունների հեղինակներ<sup>25</sup> են եղել, բազմիցս փրկելով երկիրը ծանրագույն քաղաքական, պատերազմական իրավիճակներում:

Արևմտահայ մշակույթի ու նրա գործիչների համար 19-րդ դարը կայսրության բոլոր առաջավոր, մտավորական ու լուսավորական ուժերի համագործակցության հրաշալի շրջան է եղել, որն իր պտուղներն է տվել ի դեմս թուրք նոր, ինքնուրույն ու թարգմանական գրականության ու նոր ձևավորված գրական լեզվի, պարբերական մամուլի, գիտությունների, արվեստների, կապիտալիստական նոր ծնունդ առնող տնտեսական հարաբերությունների զարգացման: Այս համագործակցությունը 20-րդ դարի արշալույսին արդեն գոյություն չուներ:

---

<sup>25</sup> Ծովային խարիսխի այժմյան տեսքի գյուտը, վառողի, զենքերի ու դրանց կատարելագործման, ծովային հրդեհների մարման ու ամենատարբեր բնագավառներում հարյուրավոր այլ գյուտեր, միտված երկրի տնտեսական կյանքի տարբեր կողմերի զարգացմանը: Դրանց մի մասը թուրքական և միջազգային պատենտներ են ստանում:

## **NATIONALISM AND ETHNIC CONFLICT IN THE MIDDLE EAST: FOCUS ON TURKISH-ARMENIAN RELATIONS IN THE OTTOMAN EMPIRE**

This paper examines the nature of Turkish-Armenian relations in the early twentieth century, focusing on the role of Armenians in Ottoman Turkey, the class structure of the Armenian community, their position and role vis-a-vis European capital and the Ottoman state, and their relations with Turks, especially Turkish capital, as well as their political position in the balance of class forces in late Ottoman society. To place the Armenian community within the proper social context of the Ottoman Empire, comparisons are also made with other (mainly Greek and Jewish) minorities concentrated within the immediate domain of the Ottoman central state.

The purpose of such analysis is twofold: (1) to delineate the class position and role of the Armenian community in late Ottoman society; and (2) to explain the rise of Turkish nationalism ushered in by the Young Turk revolution of 1908 and the subsequent hostilities towards Ottoman minorities, especially Armenians, that led to the massacre of 1.5 million Armenians in 1915 - the first genocide of the 20th century committed against a people with the premeditated purpose of exterminating an entire ethnic population<sup>1</sup>.

The implications of this analysis go beyond attempts at understanding the Armenian genocide as such; they help place in the proper context the subsequent rise of Kemalism in post-Ottoman Turkey and the continued oppression of other ethnic minorities in Turkey to this day, especially the Kurds.

Moreover, an understanding of the roots of nationalism and ethnic rivalry in late Ottoman society and modern Turkey may help

---

<sup>1</sup> Adjarian Hrachya, "Hayots dere Osmanian Kaysrutyeay medj." Banber Erevani Hamalsarani, Yerevan, 1967; Charles Issawi, In Economic History of Turkey, Chicago 1980.

us understand the phenomenon of nationalism in general and its rise in other formations undergoing a similar experience throughout the Third World.

### **The Class Structure of Late Ottoman Society and the Role of Ethnic Minorities**

From its formation in the late 13th century to its disintegration and collapse in the early 20th century, Ottoman society was dominated by a strong central state that, despite continued dynastic struggles at the throne, lasted for over 600 years. Dominated by the Asiatic mode of production for centuries, land in the Ottoman formation was the property of the state which controlled and regulated it through a system of administrative structures<sup>2</sup>. However, the state's land allocation system (timar), which involved the granting of land to warriors who took part in the Empire's military adventures, together with the administration of state lands by the tax collectors in rural areas, who maintained de facto control of the land, eventually led to the development of private ownership of land and other means of production and the emergence of a landowning class. Some of these landowners were Armenian, others were Greek and Kurdish, and still others Turkish. The broad masses of the people in rural areas, however, were either peasants, tilling small parcels of land, or were serfs or laborers working on lands controlled by large landowners<sup>3</sup>. In the cities and urban areas, merchants engaged in local and international trade, small scale manufacturers and self-employed artisans and businessmen, together with the state bureaucracy and workers in different branches of production and services constituted the bulk of the population.

---

<sup>2</sup> Berberoğlu Berch, Turkey in Crisis: From State Capitalism to Neocolonialism. London 1982, p. 5.

<sup>3</sup> Berberoğlu Berch, Turkey in Crisis...., p 8.

## The Class Structure of Ottoman Society in the Early Twentieth Century

To gain greater insight into the class structure of the Ottoman social formation at the turn of the century, it is necessary to take account of the structure of class forces dominating the Empire's economy and polity during the final phase of its development.

Political power in the Empire rested in the throne of the central authority, the Padisah or Sultan, and his administrative deputy called the Sadrizam or Grand Vizir. Below this, and under the direct control of the Sultan, there existed the large but carefully organized Ottoman Palace bureaucracy<sup>4</sup>. The dominant economic interests in Ottoman Turkey during this period were made up of a grouping of big landowners (the ayans, derebeys, and agas) in the countryside, and comprador capitalists of mainly minority ethnic origin in major urban centers. In 1913, the traditional landed gentry (the ayans and derebeys), together with the agas, constituted 5% of the farmer families and owned 65% of the arable land. Given their vast economic power in the countryside, the big landowners were able to monopolize local political power and, through links with the rural Islamic clergy, impose their social and cultural domination over the peasantry. The subjugation of the peasant masses by the landlord-clergy coalition (the esraf) thus served the double function of exploitation and legitimization.

Largely involved in import-export trade and domestic marketing tied to European imports, the minority commercial interests, comprised of Greek and Armenian merchants and primarily concentrated in large urban centers, made up the basis of the Empire's comprador bourgeoisie<sup>5</sup>. The role of minority compradors

---

<sup>4</sup> Berkes Niyazi, *The Development of Secularism in Turkey*, Montreal 1964, p.11-16; see also Divitçioğlu Sencer Asya, *Üretim Tarzı ve Osmanlı Toplumunu*, İstanbul 1971, p. 47-108; Sencer, M. *Osmanlı Toplum Yapısı*, İstanbul 1963.

<sup>5</sup> Avcioğlu, Doğan, *Türkiye'nin Düzeni*, İstanbul, Tekin Yayınevi, 1975, p. 284-286; see also Lewis Bernard. *The Emergence of Modern Turkey*, 2nd

has been pivotal in two contradictory respects. First, through their key position in the urban economy they were in effect the agency for external economic penetration and control. Second, their position in the economy, vis-a-vis national industrial development, hindered the transition to the capitalist mode of production. Consequently, on balance, while their strategic role in accelerating contact with the West played a progressive role in the admittedly limited transformation of the Asiatic mode in an earlier period, the continued existence of the minority bourgeoisie as a comprador class -- as opposed to their transformation into industrial capitalists -- perpetuated the backward structure of Ottoman industry and contributed instead to the further dependence of the Ottoman economy on European capital through debt bondage and as supplier of raw materials, which assisted the development of capitalism in Western Europe. It is this latter role of minority comprador agents of European imperialism that in good part gave rise to the nationalist movement of the Society of Union and Progress and to the Kemalist forces who made a last ditch effort to save the Turkish state in the final years of the Ottoman Empire.

Closely linked with the minority comprador group and the Palace bureaucracy was foreign finance capital or the imperialist bourgeoisie. The penetration into Ottoman Turkey of imperialist finance capital during this period was based on the Empire's role as a raw materials-supplying semi-colony of the expanding European economy. Concentrated largely in the raw materials sector, foreign capital was also engaged in the construction of a network of railways in Western and Central Anatolia, with the sole purpose of accelerating the process of raw materials extraction in Turkey. The absence of the development to any significant degree of European manufacturing industries in Ottoman Turkey was "compensated" for by the flow into the Empire of European goods that were handled through the intermediary of the minority comprador bourgeoisie.

---

ed., New York 1968, p. 454-456; Gibb H. A. R. and H. Bowen, *Islamic Society and the West*, Vol. I, London 1957.

Hence, it was in this classic sense -- as an exporter of raw materials and importer of finished goods -- that the Ottoman Empire became, in essence, a de facto semi-colony<sup>6</sup>.

The dependent structure of the Ottoman economy during the 19th century, coupled with its tributary position in the Mediterranean economy encompassing the period since the early 16th century, did not permit the development of large-scale local industry. Consequently, there never developed a full-blown class of industrialists that would resemble the classical European national industrial bourgeoisie. While a limited expansion did take place in small-scale manufacturing and processing industries, it was largely the minority comprador bourgeoisie that, in addition to its traditional place in commerce, extended into the ownership and control of these industries and prospered under the terms of the Empire's externally-oriented economy. The small number of ethnic Turkish firms that operated in Ottoman Turkey at the time, however, had interests that were diametrically opposed to those of the imperialist and minority bourgeoisies. Although weak in numbers and economic strength, the political aspirations of Turkish industrialists coincided with and took expression in the leadership of the Nationalist forces as their economic position began to deteriorate with the further expansion into industry and trade of the metropolitan and minority bourgeoisies. It was this deterioration in the position of the Turkish national bourgeoisie that later drove its members on to the side of the Nationalist leadership in the struggle against the forces of imperialism and reaction, represented mainly by the Palace and the minority comprador bourgeoisie. Given the limited size and restricted nature of both national and foreign-owned local industry, the size of the working class was also small: in 1915, the number of workers employed in the industrial sector totalled only 13,485. Moreover, the ethnic composition of the working class was highly

---

<sup>6</sup> Çavdar T. Osmanlıların Yarı Sömürge Oluşu. İstanbul 1970; see also Ergil Doğu. "From Empire to Dependence: The Evaluation of Turkish Underdevelopment." Ph.D. Dissertation. State University of New York at Binghamton, 1975, p. 130-131.

fragmented: 60 percent of all those employed in Ottoman industry were Greeks, 15 percent Armenians, 10 percent Jews, and only 15 percent Turks. Such ethnic diversity became an obstacle to the development of working-class unity.

*The small, specifically Turkish segment of the working class was not only scattered among many small establishments, and not only isolated politically and culturally from the overwhelming majority of Turks who remained on the land as peasants, it was also culturally and politically isolated from the non-Turkish segments of the working class<sup>7</sup>.*

This split within the working class reached its peak during the liberation struggle when non-Turkish workers identified with and joined the ranks of forces of their own ethnic groups and fought against the forces of Turkish national liberation. Isolated as they were in Istanbul and Izmir -- the main centers of industry which came under the control of foreign occupation forces during the liberation struggle -- Turkish workers were cut off from Anatolia and could not contribute directly to or affect the outcome of the national liberation struggle. Thus, several factors -- mainly the numerical inferiority, ethnic heterogeneity, and geographical isolation of the Ottoman working class -- held back the workers from direct participation in the National Front, which otherwise might well have influenced the direction and outcome of the liberation struggle.

In the Turkish countryside, the majority of the rural population consisted of small-holding peasants. Dispersed throughout the Anatolian interior and engaged in subsistence agriculture, the Turkish peasantry was under the direct control of big landowners who exercised economic, political and cultural domination over them through links with the rural Islamic clergy<sup>8</sup>. While 1% of farmer

---

<sup>7</sup> Ergil Dogu. "From Empire to Dependence: The Evolution of Turkish Underdevelopment." Ph.D. Dissertation. State University of New York at Binghamton, 1975, p. 240.

<sup>8</sup> Özgür Ö., *Türkiye'de Kapitalizmin Gelişmesi*, İstanbul 1972, p. 79-81; see also Cem I., *Türkiye'de Geri Kalmışlığın Tarihi*, İstanbul 1970, p. 310-311; Avcıoğlu Doğan, *Türkiye'nin Düzeni*. İstanbul 1975, p. 286-300.



families in 1913 accounted for 3,000,000 hectares (or 39%) of arable land, 87% of farmer families had access to only 2,700,000 hectares (or 35%) of arable land. This disparity in wealth and economic position did not, however, lead to the radicalization of the small-holding peasantry; neither did it ensure its voluntary participation in the national liberation struggle. Although objectively occupying a revolutionary position in terms of its class interests, the Turkish peasantry, given the enormous economic and political power and socio-religious control exercised over them by the dominant esraf, was unable to develop revolutionary class consciousness and transform the agrarian structure through united class action. Despite the grip of the landlords and the clergy over the peasant masses throughout Turkey, there were a number of mass peasant uprisings in Ottoman-Turkish history (e.g., Celali Isyanlari) which challenged the rule of the esraf and the traditional landed gentry.

Finally, in addition to the small-holding peasantry, rural Turkey also contained a class of small merchants and local artisans, who, together with doctors, lawyers, teachers and locally based government officials, made up the core of the Anatolian petty bourgeoisie. It was in this intermediate group that the Kemalist forces first found their crucial support in laying the basis of their national campaign among the masses of the Anatolian peasantry. Dominated and controlled by imperialism and the minority bourgeoisie in the urban centers and oppressed under the rule of the ayan, the derebey, and the esraf in the countryside, the Ottoman petty bourgeoisie was highly fragmented, weak and lacked an organizational base to consolidate its power to serve its own class interests in national politics.

Moreover, the lack of an organizational link between the urban and the rural areas among the different sections of the petty bourgeoisie was a major obstacle to the development of petty-bourgeois class solidarity throughout Ottoman Turkey. Among the different strata of this class, it was the sections associated with the various bureaucratic organizations

of the state -- above all, junior army officers and nationalist intellectuals and journalists, who in an earlier period had embraced Unionist politics and had participated in the Young Turk nationalist movement -- that emerged as the top leadership of the nationalist movement which came to confront the various ethnic groups holding an important position in Ottoman society.

### **The Role of Ethnic Minorities in the Ottoman Social Formation**

Ethnic minorities -- made up of Armenians, Greeks, Jews, and numerous other national groups situated throughout the empire -- played an important role in the Ottoman social structure. Concentrated mainly in Istanbul and Izmir, the Greeks, the Armenians, and, to a lesser extent, the Jews had already obtained a commanding lead in the trade and finance of the Ottoman Empire by the late 18th century<sup>9</sup>. As the ethnic population grew in size over the decades, their position further improved and began to play a dominant role in key branches of the Ottoman economy by the end of the 19th century. In the Ottoman capital, Istanbul, Armenians, Greeks, and Jews together constituted upwards of half the population of the city during this period. Of the 1 million inhabitants of Istanbul, 500,000 were Turks, 400,000 Armenians and Greeks, and 100,000 Jews and Europeans<sup>10</sup>. Elsewhere, in Izmir and other major cities of the Empire, although relatively smaller in population size the minority communities had obtained a disproportionate control of the local economy and reaped substantial wealth from the Empire's commerce, finance, and other economic activities. A German account of the role of Greeks, Armenians, and Jews in the Ottoman economy, published in 1912 in Berlin, states:

---

<sup>9</sup> Issawi Charles, *The Economic History of Turkey 1800-1914*, Chicago 1980, p. 54

<sup>10</sup> Adjarian Hrachya. "Hayots dere Osmanian Kaysrutyeay medj." *Banber Erevani Hamalsarani Yerevan* 1967, p. 62.

*They have divided everything between them or together dominate the terrain. Practically all that concerns the immediate necessities of life is in Greek hands. All branches related less directly to living but rather to the acquisition of civilization are almost exclusively in the sphere of the Armenians; they have the large textile businesses, the large iron, tin, and zinc businesses, and also all that pertains to the building trade. Only the small fancy-goods, haberdashery, and colonial goods trades are left to the Jews. Even the money business--from large bankers down to paltry money-changers--is, in Constantinople, mainly in Greco-Armenian hands; there are only small Jewish bankers there, and very few money-changers.... The antiquity dealers and rug merchants of Constantinople are almost without exception Sephardim<sup>11</sup>.*

In Izmir and Salonika, however, the Jews played a more active role in trade and commerce, though Greek and Armenian presence in the former was quite substantial.

In his book «The Economic History of the Middle East and North Africa» Charles Issawi points out the central role played by Armenian, Greek, and Jewish compradors in the Empire's import-export trade by focusing on "the growth of export-import firms that could handle and finance the outward flow of agricultural produce and the inward flow of manufactures and other consumer goods". "These firms," he adds, "were almost wholly foreign:"

British in Egypt and Iraq, French in Syria and North Africa, British and Russian in Iran, British, French, Austrian, Italian, and others in Turkey.... Their access to the farmers was through small merchants and moneylenders recruited chiefly from minority groups--Armenians, Greeks, Jews, Syro-Lebanese Christians--who advanced money, bought crops for resale to the exporters, and marketed the goods consumed in the countryside. Sometimes minority members

---

<sup>11</sup> Sussnitski Alphons. "Die wirtschaftliche Lage der Juden in Konstantinopel." Allgemeine Zeitung des Judentums (Berlin) (8, 12, and 19 January 1912), Charles Issawi, The Economic History of Turkey, Chicago 1980, p. 70.

established their own contacts with Britain, France, and other industrial countries, setting up branches of export firms<sup>12</sup>.

Thus, "In Turkey," writes Issawi, "the Greeks, Armenians, and Jews, in that order, dominated the urban sector and controlled a considerable part of the rural."

The Galata bankers, consisting of Levantines and minority members, had controlled finance, and their replacement by modern banks only enlarged the field; in 1912, of the 112 bankers and bank managers in the Ottoman Empire only one was a Muslim Turk. In industry, it has been estimated that only 15 percent of capital belonged to Turks. In commerce, Armenians and Greeks established themselves in Europe early in the 19th century and handled most of its trade with Turkey. In agriculture, millets were particularly active in such important cash crops as silk and cotton<sup>13</sup>.

In other activities, the percentage breakdown for 1912 was as follows:

| <u>Economic Activity</u> | <u>Turks</u> | <u>Greeks</u> | <u>Armenians</u> | <u>Others</u>    |
|--------------------------|--------------|---------------|------------------|------------------|
| Internal trade           | 15           | 43            | 23               | 19               |
| Industry and crafts      | 12           | 49            | 30               | 10               |
| Professions              | 14           | 44            | 22               | 20 <sup>14</sup> |

Another, Turkish account of the economic activities of Greeks, Armenians, and Jews in western Turkey (mainly Istanbul and Izmir) provides a more detailed description of their involvement in foreign export trade--in this case the shipment abroad of agricultural products:

---

<sup>12</sup> . Issawi Charles., *The Economic History of the Middle East and North Africa*, New York 1982, p. 6.

<sup>13</sup> . Issawi Charles., *The Economic History of the Middle East and North Africa*, New York p. 89-90.

<sup>14</sup> . Indzhikyan O. G., *Burzhuziyya osmanskoi imperii*, Yerevan, 1977, p. 211-14, cited in Issawi C., *The Economic History of the Middle East and North Africa*, p. 90.

*Almost all the produce from a vast segment of Anatolia connected with Izmir used to come there and fill the large area from the Fruit Market as far as the Customs. And in this area swarmed people of all nations and also those whose origins were unknown but who used to be known as the residents of Izmir. These people carried various papers of identification, as if they were Europeans, but their hive consisted of Greeks, Armenians, and especially Jews. This hive had a ceaseless activity, its members buzzing around and endlessly sucking the available honey supply to the extent of flooding their gizzards. There were also a few Turkish shops here and there....*

*When the producer in Anatolia was not bound by contract to a foreign export merchant, he would bring the remainder of his crop to the middlemen at the Fruit Market.... Thus, the Turkish merchants constituted mostly, in fact wholly, this class of people who satisfied themselves by being the middlemen between the producers and the export merchants...*

*In this commercial battleground, the producers were the victims; the foreign and semi-foreign elements the profiteers; the Turks the onlookers. Certainly, the strongest, most active, and cleverest were the Jews<sup>15</sup>.*

Thus, as the above partial, Turkish account of the role of ethnic minorities in the Ottoman formation clearly demonstrates, the Armenian, Greek, and Jewish tripartite ethnic enclave in Ottoman Turkey came to be viewed in Turkish eyes as a "semi-foreign element," having interests contrary to that of the vast majority of the Ottoman population and the Turkish nation in general. Strong, ideologically-ridden nationalist views similar to the one expressed above were instrumental in the hands of the Young Turks in fueling feelings of resentment among the Turkish population against all non-Muslim ethnic minorities in Ottoman society, especially against Armenians, given their close proximity to centers of Ottoman state power during the late nineteenth and early twentieth centuries.

---

<sup>15</sup> Uşaklıgil Halit Ziya. *Kırk Yıl*, 5 vol, Istanbul, 1936, Excerpted in «The Economic History of Turkey», Charles Issawi. Chicago 1980, p. 72-73.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ  
ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ 19-ՐԴ դարի  
ՎԵՐՋԻՆ 20-ՐԴ դարի սկզբին**

Արևմտահայ կրթական գործի կազմակերպումը, թեև սկսվել է 19-րդ դարի սկզբներից միայն՝ գերազանցապես հայության միջոցներով ու նախաձեռնությամբ, այնուհանդերձ հաղթահարելով բազմաթիվ արգելքներ ու խոչընդոտներ, լայն թափ է ստացել և մեծ հաջողություններ արձանագրել: Մինչև 19-րդ դարը Օսմանյան կայսրությունում, հատկապես գյուղական բնակավայրերում հայերն առավել հաճախ կապված են եղել վանքերի ու եկեղեցիների գործունեության հետ, որոնք պաշտամունքայինից բացի ունեցել են գիտակրթական նշանակություն և մեծ դեր խաղացել հայ ժողովրդի ազգային-մշակութային կյանքում:

Սկսած 19-րդ դարից՝ հատկապես Ազգային սահմանադրության հաստատումով (1863թ.), արևմտահայերը ձեռնամուխ եղան իրենց ազգային ներքին կյանքի վերականգնման, կանոնակարգման ու զարգացման գործին: Հարկ է նշել, որ հատկապես կրթության կազմակերպման ընթացքում հայերն ավելի հաճախ են հանդիպել խոչընդոտների, քանի որ 19-րդ դարում Օսմանյան կայսրությունում հայկական դպրոցների ու եկեղեցիների կառուցման թույլտվությունը (արտոնագիր) ձեռք է բերվել մեծ դժվարությամբ, կայսերական հատուկ հրովարտակով՝ «Ֆերման»-ով:<sup>1</sup>

Օսմանյան կայսրությունում հայության կրթական շարժման կենտրոնը սկզբնապես եղել է Կ. Պոլիսը. դեռևս 1790-ական թթ. հիմնականում եկեղեցիներից ստացված հասույթներով Կ. Պոլսում

<sup>1</sup> Տե՛ս, Սարգսեանց Լ., Այց Թիւրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890, էջ 152, ինչպես նաև Գասպարեան Հ. Յ., Չմշկածագ եւ իր գիւղերը, «Պայծառ» տպարան, 1969, էջ 133:

բացվեցին մի քանի հայկական դպրոցներ, իսկ արդեն 1850-ական թթ. Պոլսի բոլոր հայկական թաղամասերում գործել են այդպիսի դպրոցներ:<sup>2</sup> 1859թ. դրությամբ Կ. Պոլսում գործել են հայկական 42 վարժարաններ՝ 4376 աշակերտ, 1155 աշակերտուհիներով և 197 ուսուցիչներով,<sup>3</sup> 1866թ.՝ 46 դպրոցներ (32 արական, 14 իգական)՝ 4700 աշակերտ, 1472 աշակերտուհիներով և 142 ուսուցիչներով,<sup>4</sup> իսկ 1871թ.՝ 48 վարժարաններ՝ 3936 աշակերտ, 1886 աշակերտուհիներով և 224 ուսուցիչներով:<sup>5</sup> Շուտով Պոլսի օրինակով հայկական բոլոր գավառական կենտրոններում, ապա նաև գյուղերում հիմնականում տեղի հայ բնակչության միջոցներով հիմնվեցին երկսեռ վարժարաններ, ուսումնարաններ: Մինևույն ժամանակահատվածում Օսմանյան կայսրության բոլոր հայաբնակ շրջաններում հիմնականում առաջադեմ հայ երիտասարդների նախաձեռնությամբ հիմնվեցին նաև մի շարք կրթա-մշակութային ընկերություններ ու կազմակերպություններ, որոնց գլխավոր նպատակը Օսմանյան կայսրությունում հայկական դպրոցների ստեղծումն ու կրթության, լուսավորության տարածումն էր: Այդ ընկերությունների թվում էին 1846թ. Մուրադ-Ռաֆայեյան սաների նախաձեռնությամբ հիմնված «Համագգային Ընկերութիւնը», Իզմիրում՝ «Սիւնեացը», Կ.Պոլսում՝ «Անձնուէրը», Սեբաստիայում՝ «Սենեքերիմեանը», Բրուսայում՝ «Ուսումնասիրացը»,<sup>6</sup> «Հայոց Միացեալ Ըն-

<sup>2</sup> 1853թ. հոկտեմբերի 22-ին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի նախաձեռնությամբ կազմվում է նաև արևմտահայ անդրամիկ Ուսումնական խորհուրդը՝ «Հայոց Ազգային դաստիարակութեան և կրթութեան ընդհանուր տեսչութիւն»-ը, որը զգալիորեն նպաստել է արևմտահայ կրթական համակարգի կազմակերպմանը: Տե՛ս, Թէոդիկ, Անձնուն տարեցոյը , ԺՁ. տարի, Կ. Պոլիս, 1922, էջ 373-374:

<sup>3</sup> «Հայաստանի կոչնակ», յունուար 2, 1926, մեջբերված է Գալուստեան Հ. Գր., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Չեյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 427:

<sup>4</sup> Современное армянское общество. армяне Османской Империи, перевелъ съ французскаго Тер- Акоповъ Б., Тифлисъ, 1878, стр. 40-41.

<sup>5</sup> «Հայաստանի կոչնակ», յունուար 2, 1926, մեջբերված է նույն տեղում, էջ 427:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 427:

կերութիւնը»,<sup>7</sup> Խարբերդում՝ «Սմբատեան եւ Հոգեսէրը», Հուսեյնի-կում՝ «Անձնուէրը», Մեգրեում՝ «Ուսումնասիրաց ու Ազգասիրացը»,<sup>8</sup> Էրզրումում՝ «Արծնեանը», «Ուսումնասիրացը», «Ընթերցասիրացը», «Սիսականը»,<sup>9</sup> Ադանայի նահանգում՝ «Ազգանուէր Հայուհեացը»<sup>10</sup> և բազմաթիվ այլ ընկերություններ, որոնցից շատերը հետագայում միավորվեցին:<sup>11</sup>

Թուրքական կառավարության կողմից վերոնշյալ ընկերություններից շատերը մշտապես գտնվել են հետապնդման մեջ՝ իրենց գործունեության ընթացքում հանդիպելով բազմաթիվ բռնությունների ու արգելքների: Ասվածի լավագույն օրինակը Չմշկածագի (Խարբերդի նահանգ) «Միացեալ Ընկերութիւնն» էր. 1880թ. հունիսին Չմշկածագում գործող «Արարատեան Կրթական», «Դպրոցասիրաց Արեւելեան» և «Կիլիկեան» ընկերությունները միանալով՝ կազմեցին «Միացեալ Ընկերութիւնը», որն իր խնամակալության տակ էր առել շուրջ 46 դպրոցներ և որոնց թիվը տարեցտարի աճում էր, ինչն, իհարկե, չէր կարող վրիպել Օսմանյան կառավարության ուշադրությունից: Վերջինիս կարգադրությամբ, առանց որևէ հիմնավորման, 1886թ. սեպտեմբերին ձերբակալվեցին ու քստորվեցին ընկերության տնօրեն Սկրտիչ Սարյանն ու տեսուչ Մարկոս Նաթանյանը, որից հետո ընկերության գործունեությունն աս-

---

<sup>7</sup> 20-րդ դարի սկզբին միայն «Հայոց Միացեալ Ընկերութիւնն» իր խնամակալության տակ ուներ շուրջ 60 վարժարաններ, նախակրթարաններ՝ ավելի քան 6000 երկսեռ աշակերտներով, տես «Հայաստանի կոչնակ», ԼԱ. տարի, թիւ 26, յունիս, 1931, էջ 809-811:

<sup>8</sup> Ճիզմէճեան Մ. Գ., Խարբերդ և իր գաւակները, Ֆրէզնոյ, 1955, էջ 140:

<sup>9</sup> Քօսեան Յ., Բարձր Հայք. Կարին քաղաքը, հատոր Ա, Վիեննա, 1925, էջ 245-246:

<sup>10</sup> «Հայաստանի կոչնակ», ԼԱ. տարի, թիւ 26, յունիս, 1931, էջ 810:

<sup>11</sup> Հարկ է նշել, որ արդեն 1880-ական թթ-ից սկսած արևմտահայ կրթության կազմակերպման ու զարգացման գործում մեծ ակտիվություն սկսեցին դրսևորել նաև հայ կանայք, ինչպես օրինակ Վանում, ուր 1890-1891 թթ. «Ս. Սանդխտեան» օրիորդաց ուսումնարանի սաները հիմնեցին «Վանուհեաց» ընկերությունը՝ նպատակ ունենալով բաց դասախոսությունների միջոցով կրթություն տարածել և լուսավորել տարբեր խավերի: Տես, Գէորգ Շէրենց, Սրբավայրեր, Թիֆլիս, 1902, էջ 10:



տիճանաբար դադարեցվեց: Չմշկածագի թաղական խորհուրդն ու հոգաբարձուների խորհուրդը 1886-1887թթ. ուսումնական տարվա համար որպես տնօրեն է նշանակում Պետրոս Ադամյանին, սակայն կառավարությունը, չդադարեցնելով հետապնդումները, 1887թ. հունվարին խուզարկում է Ադամյանի տունը և հայտնաբերելով ազգային-ազատագրական երգեր պարունակող մի երգահան ու Ղևոնդ Ալիշանի «Սիսուան» աշխատությունը, ձերբակալում է՝ ուղարկելով Էրզրումի բանտ:<sup>12</sup>

Չնայած այսօրինակ հետապնդումներին ու խոչընդոտներին, թեև մշտապես վախի մթնոլորտում, Օսմանյան Կայսրության տարածքում հայերը շարունակում էին պայքարը իրենց կրթա-մշակութային կյանքի պահպանման ու զարգացման ուղղությամբ, ինչը թերևս պայմանավորված էր վերջիններիս՝ կրթության նկատմամբ ունեցած առանձնահատուկ ձգտումով: Այս առումով ուշագրավ է ֆրանսիացի գիտնական, աշխարհագրագետ Է. Ռեկյուի բնորոշումը օսմանահպատակ հայերի վերաբերյալ. «Ինչպես Էրզրումում, այնպես էլ Կ. Պոլսում հայերը թուրքերից տարբերվում են առավել բաց ու ազատ ոգով և ուսման նկատմամբ մեծ ձգտումով... Ցանկացած եվրոպական պետություն ուրախ կլիներ իր տրամադրության տակ ունենալ այնպիսի հիանալի մշակութային զենք, ինչպիսիք հայերն են»:<sup>13</sup> Ցավոք, քաղաքական պայմանների թելադրանքով ուսումնական մեկ ընդհանուր ծրագրի մշակման հնարավորություն այդպես էլ չընձեռնվեց, և չնայած Ուսումնական Խորհուրդների՝ գործին հնարավորինս նմանօրինակություն հաղորդելու ջանքերին, կրթության կազմակերպումը կրում էր գերազանցապես տեղական բնույթ:<sup>14</sup>

<sup>12</sup> Գասպարեան Հ. Յ., նշվ. աշխ., էջ 132,144:

<sup>13</sup> Տե՛ս, E. Reclus, L'Asie Mineure, Paris, 1885, p. 341. Մեջբերված է Диев Гр. А., Армянский вопрос в Турции, Москва, 1893, стр. 44-45.

<sup>14</sup> 1908թ. Օսմանյան սահմանադրության հռչակումից հետո Խարբերդի Ազգային կենտրոնական վարժարանի տնօրեն Թվկատիցու (Հովհաննես Հարությունյան) նախաձեռնությամբ կազմվեց «Ուսումնական խորհուրդ»,

Որպես համեմատություն նշենք, որ ի տարբերություն հայերի, ինչպես մշակույթի բոլոր ոլորտներում, կրթության հարցում ևս - թուրքերը չափազանց անմխիթար վիճակում են գտնվել. այսպես, 1880-ական թթ. վերջին շուրջ 21 հզ թուրք բնակչություն ունեցող Տրապիզոն քաղաքն ուներ ընդամենը 1450 թուրք սովորող (կազմում է բնակչության 6 %-ը), որից միայն 25 աղջիկ էր սովորում գրել և կարդալ, մինչդեռ միևնույն ժամանակահատվածում Տրապիզոնի ընդամենը 6000 հայ բնակչությունից միայն հայկական դպրոցներում սովորում էին 1200 հայ աշակերտներ, որը կազմում է բնակչության 20%-ից ավելին:<sup>15</sup> Նշենք մեկ այլ օրինակ ևս. նույն ժամանակահատվածում Ադանայի ողջ վիլայեթում գործող թուրքական թվով 70 կրթօջախների հաճախել են ընդամենը 1500-2000 մուսուլման երկսեռ աշակերտներ, մինչդեռ նահանգի 13 հայկական դպրոցներում սովորում էր շուրջ 1200 երկսեռ հայ աշակերտ:<sup>16</sup> 20-րդ դարի սկզբին կայսրությունում գործող թուրքական տարրական դպրոցների ուսումնական ամբողջական ծրագիրը և դասընթացը կայանում էր արաբական ու թուրքական (նկատի է ունեցել օսմաներեն, Ս. Պ.) տառաձանաչության և Ղուրանի առանձին «սուրաներ» անգիր սովորելու մեջ:<sup>17</sup> Շատ գավառներում, ինչպես օրինակ՝ Չմշկածագում, թուրքերն ընդհանրապես իգական դպրոց չունեին, և քիչ թվով աղջիկներ միայն հաճախում էին կրոնական աղոթքներ սովորեցնող կանանց տները՝ աղոթք լավագույն դեպքում արաբական այբուբենի տառերը սովորելու:<sup>18</sup>

19-րդ դարում կրթության ոլորտում Օսմանյան կառավարության գործադրած բռնություններից ու հետապնդումներից զերծ չմնացին անգամ օտարերկրյա միսիոներները, որոնք իրենց գոր-

---

մշակվեց միատեսակ կրթական ծրագիր, որը, սակայն, կիրառվեց միայն Խարբերդի նահանգում: Տե՛ս, Ճիզմէճեան Ս. Գ., նշվ. աշխ., էջ 405:

<sup>15</sup> Գասպարեան Հ. Յ., նշվ. աշխ., էջ 156:

<sup>16</sup> «Կիլիկիա». փորձ աշխարհագրութեան արդի Կիլիկիոյ, Պետերբուրգ, 1894, էջ 52:

<sup>17</sup> Թովչեան Ե., Երիտասարդ Թիւրքիան եւ հայերը, մասն առաջին, Թիֆլիս, 1909, էջ 24-25:

<sup>18</sup> Գասպարեան Հ. Յ., նշվ. աշխ., էջ 156:

ծունեության հենց առաջին շրջանում բացեցին բազմաթիվ երկսեռ դպրոցներ, նախակրթարաններ ու վարժարաններ՝ կրթության հարցում այլընտրանք ստեղծելով հայերի համար:<sup>19</sup> Քաջ գիտակցելով միսիոներների ստանձնած հովանավորի դերը կայսրության քրիստոնյա ժողովուրդների, հատկապես հայերի նկատմամբ՝ կառավարությունը մշտապես արգելքներ է ստեղծել՝ ամեն կերպ փորձելով խաթարել նրանց գործունեությունը: 19-րդ դարի կեսերին արևմտահայ կաթոլիկ պատրիարքության և եպիսկոպոսների խնդրանքով Ֆրանսիայից մի խումբ միաբաններ ու մայրապետեր ժամանեցին Թուրքիա՝ կրթական և դաստիարակչական գործը զարգացնելու համար. բացվեցին տասնյակ երկսեռ վարժարաններ, ուր սովորում էին զգալի թվով հայ աշակերտներ:<sup>20</sup> 1887թ. թուրքական կառավարության պահանջով միաբանության բոլոր դպրոցները փակվեցին և միայն Կ. Պոլսում ֆրանսիական դեսպանության ճնշման տակ՝ վերաբացվեցին, որից հետո անընդհատ գտնվել են հետապնդման մեջ մինչև 1914թ. դեկտեմբերը, երբ բոլոր դպրոցները փակվեցին, իսկ միաբանները բռնի արտաքսվեցին երկրից:<sup>21</sup>

Օսմանյան կառավարության գործադրած բռնությունները երբեմն հասնում էին ծայրահեղության՝ փորձելով արմատախիլ անել հայ ազգային ինքնության ցանկացած դրսևորում: Այսպես, հաշվի առնելով հայերի՝ կրթության նկատմամբ ունեցած մեծ ձգտումը, ամերիկյան միսիոներությունը 1878թ. Խարբերդում հիմնում է «Արմենիա» երկսեռ քոլեջը, որի խնամակալությունն ըստ պայամանա-

---

<sup>19</sup> Խոսքը մասնավորապես վերաբերում է ամերիկյան միսիոներական շարժմանը, որն իր առաջին կայանները Արևմտյան Հայաստանում և Թուրքիայի հայաբնակ այլ գավառներում հաստատել է դեռևս 1830-ականներին. Տրապիզոնում՝ 1835թ.-ից, Էրզրումում՝ 1839թ.-ից, Այնթապում՝ 1848թ.-ից, Դիարբեքիում՝ 1850թ.-ից, Խարբերդում՝ 1852թ.-ից: Տե՛ս, Ճիզմէ՛ճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 103:

<sup>20</sup> 1914 թ. դրությամբ միայն Ամասիայում (Սեբաստիայի նահանգ) գործող «Հիսուսյան» արական վարժարանում սովորում էին 320, իսկ իգականում՝ 350 հայ աշակերտներ: Տե՛ս, Սիմոնեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 622:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 621- 622:

վորվածության, մինչև 1925թ. ստանձնելու էին ամերիկացիները, որից հետո այն հանձնվելու էր հայերին:<sup>22</sup> Հիմնադրման օրվանից թուրքական կառավարությունն ամեն կերպ փորձել է խոչընդոտել քոլեջի աշխատանքները՝ խուզարկություններ, սպառնալիքներ ու ձերբակալություններ կազմակերպելով, մինչև անգամ արգելելով քոլեջի նորաբաց տպագրատան աշխատանքներն ու բռնագրավելով մարմնամարզության դասընթացի ժամանակ կիրառվող բոլոր պարագաներն ու հայոց պատմության դասագրքերը:<sup>23</sup> Ի վերջո, 1888թ. Խարբերդի վալիի պահանջով նախ քոլեջի «Արմենիա» անունը արգելվեց և երկար բանակցություններից հետո հաստատությունը վերանվանվեց «Եփրատ»՝ դրանից առաջ 8 տարիների շրջանավարտների վկայականների վրա կնքված «Արմենիա» անուններն էլ փոխելով, ապա և արգելելով բոլոր դասագրքերում առկա «հայ», «գենք», «դանակ», «սուր», «պատերազմ» և նմանատիպ այլ բառերի կիրառումը:<sup>24</sup> Քոլեջի անվանափոխումից հետո էլ սպառնալիքներն ու խուզարկությունները չդադարեցին՝ 1901, 1902, 1903թթ. հասնելով իրենց գագաթնակետին. այդ տարիներին եղան նաև ուսուցչական կազմի և ղեկավարության ձերբակալություններ:<sup>25</sup>

Վերը թվարկված բռնաճնշումները, սակայն, մի փոքր մասն են կազմում այն այլատյաց ու հակահայ վարքագծի, որը թուրքական կառավարող շրջանները մշտապես դրսևորել են հայկական մշակույթի յուրաքանչյուր ոլորտի, այդ թվում և կրթության նկատմամբ: Արևմտահայ կրթա-մշակութային կյանքի զարգացման ընթացքը մեծապես խաթարեցին 1894-1896թթ. համիդյան ջարդերը, որոնք ուղեկցվեցին հայկական մշակութային արժեքների, այդ թվում և կրթօջախների ոչնչացմամբ: Կողոպտվեցին ու հրկիզվեցին հարյուրավոր դպրոցներ, ինչպես օրինակ Ազգային Կենտրոնական

<sup>22</sup> Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 130:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 138-139:

<sup>24</sup> Տե՛ս, Վահէ Հայկ, Խարբերդ ևւ անոր ոսկեղէն դաշտը, Նիւ Եորք, 1959թ., էջ 330-331, ինչպես նաև Ճիզմեճեան Մ. Գ., նշվ. աշխ., էջ 139:

<sup>25</sup> Վահէ Հայկ, նշվ. աշխ., էջ 330-331:

(Թլկատինցու անվան) և «Սմբատեան» վարժարանները, «Եփրատ» քոլեջը Խարբերդում,<sup>26</sup> «Պարթևկան» վարժարանը Չնշկա-ծագում,<sup>27</sup> «Գայիանեան» օրիորդաց ուսումնարանը, Անգղ և Ավե-րակ գյուղերի դպրոցները Վանում,<sup>28</sup> Բինկյան գյուղի (Սեբաստիա-յի գավառ) «Ս. Մեսրոպեան» և «Նազլեան» վարժարանները՝ շին-ված 1852թ. (ժանդարմներն այրել են նաև վարժարաններին տրված արտոնագրերը)<sup>29</sup> և բազմաթիվ այլ կրթօջախներ: Ըստ 1896թ. մի տեղեկագրի. «...այրուեցան ու կողոպտուեցան շատ մը գիւղական եկեղեցիներն ու դպրոցներն, սպանուեցան քահանա-ներն ու ուսուցիչներն...»:<sup>30</sup> Կառավարության հրամանով 1895թ. գրեթե բոլոր նահանգներում հայական դպրոցները փակվեցին և շուրջ 1 տարի դադարեցրին իրենց աշխատանքները:<sup>31</sup> Ամենայն հայոց կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանի պահանջով Տրապիզոնի Տեր Ղևոնդ քահանայի կողմից 1896թ. կազմված տեղեկագրում մասնավորապես ասվում է. «Տրապիզոնի արեւելեան գիւղերը, ո-րոնք կրթական մեծ յառաջդիմութիւն ունէին, այժմ միայն 2 դպրոց եւ 2 ուսուցիչ ունին 90 աշակերտներով: Արեւմտեան կողմի գիւղե-րու բոլոր դպրոցները գոց են...»:<sup>32</sup>

Հուսալքման շրջանը, սակայն, երկար չտևեց. չնայած շարու-նակվող ճնշումներին՝ դարձյալ սեփական միջոցներով հայերը ձեռնամուխ եղան իրենց դպրոցների վերականգնմանն ու կանոնա-կարգմանը: 1899-1900թթ. ուսումնական տարվա սկզբից թուրքա-կան կառավարության պահանջով պաշտոնապես արգելվեց հայ

---

<sup>26</sup> Տե՛ս, նույն տեղում, էջ 389-392, 402-408, նաև Ճիզմէճեան Ս. Գ., նշվ. աշխ., էջ 350:

<sup>27</sup> Գասպարեան Հ. Յ., նշվ. աշխ., էջ 247-248:

<sup>28</sup> Գէորգ Շէրենց, նշվ. աշխ., էջ 12, 85-86, 100:

<sup>29</sup> Ջարդարեան Ե., Պատմագիրք Տիվրիկ քաղաքի, Լիբանան, 1972, էջ 282:

<sup>30</sup> «Արարատ» (ամսագիր, Սբ. Էջմիածին), 1896, դեկտեմբեր, էջ 585, մեջբերված է Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, Հայաստանի վանքերուն եւ եկեղեցիներուն մշակութային կորուստը 1894-1896 եւ 1915-1925 տարիներուն, ք տպագրութիւն, Վենետիկ-Ս. Ղազար, 2001, էջ 26-28:

<sup>31</sup> Սիմոնեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 716-717:

<sup>32</sup> Մեջբերված է Յովակիմեան Յ., Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէյրուք, 1967, էջ 168-169:

ժողովրդի պատմության դասավանդումը, թեև մինչ այդ այս առումով արգելքներ բազմիցս եղել են: Փոխարենը շարունակվում էր ընդհանուր և օսմանյան պատմության դասավանդումը, ավելին 1901թ. թուրքերենի դասավանդման համար կառավարությունը հայկական բոլոր դպրոցներին անվճար թուրք ուսուցիչներ է հատկացրել:<sup>33</sup>

Ըստ Ազգային կենտրոնական վարչության ուսումնական խորհրդի պատրաստած «վիճակացոյց»-ի՝ պատվիրված Մաղաքիա Օրմանյանի կողմից,<sup>34</sup> արդեն 1901-1902թթ. Օսմանյան կայսրության տարածքում գործել են 803 հայ ազգային վարժարաններ՝<sup>35</sup> 81208 աշակերտներով և 2088 ուսուցիչներով, որից Արևմտյան Հայաստանի տարածքում՝ 441 վարժարան՝ 37141 աշակերտներով և 921 ուսուցիչներով:<sup>36</sup> Ընդ որում բերված թվերը վերաբերում են միայն հայ առաքելական համայնքին. վիճակացոյցից դուրս են մնացել հայ կաթոլիկ և բողոքական համայնքներին պատկանող դպրոցներն ու աշակերտները,<sup>37</sup> ինչպես նաև մասնավոր դպրոցներ ու օտար վարժարաններ հաճախած երկսեռ աշա-

---

<sup>33</sup> Սիմոնեան Գ. Յ., նշվ. աշխ., էջ 716-717: Հարկ է նշել, որ մամանատիպ օրենքներ թուրքական կառավարությունը կիրառել է նաև կայսրությունում բնակվող քրիստոնյա մյուս ազգերի նկատմամբ, սակայն ավելի ուշ. 1915թ. հուլիսին կառավարության որոշմամբ հունական բոլոր դպրոցներն անցել են պետության հսկողության տակ, պարտադրված ավելացվել են թուրքերենի դասաժամերը, ընդ որում պատմություն և աշխարհագրություն առարկաները դասավանդվել են թուրքերենով: Տե՛ս, Ակցոլլու Յ. Ջ., Անիծված առյուծի բնաջնջումը, թարգմանությունը՝ Վարդանյան Լ., Երևան, 2007, էջ 78:

<sup>34</sup> 1896-1907թթ. Կ. Պոլսի հայոց պատրիարք:

<sup>35</sup> Գրականության մեջ հանդիպող 818 թիվը անճշտություն է, քանի որ սխալմամբ հաշվված են նաև վիճակացոյցում ընդգրկված Բուլղարիայի, Եգիպտոսի և Կիպրոսի հայկական 15 դպրոցները:

<sup>36</sup> Հաշվումները կատարված են մեր կողմից: Տե՛ս, Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց Թուրքիոյ, տետր Բ., վիճակ 1901-1902 տարւոյ, Կ. Պոլիս, 1903:

<sup>37</sup> Մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Օսմանյան կայսրության տարածքում միայն հայ բողոքական համայնքին պատկանող վարժարանների թիվը շուրջ 350 էր: Տե՛ս «Հայաստանի կոչնակ», ԼԱ. տարի, թիւ 26, յունիս, 1931, էջ 810:

կերտները, որոնք զգալի թիվ են կազմել:<sup>38</sup> Վիճակացույցում ընդգրկված չեն նաև Կ. Պոլսի թաղային վարժարանները. այսպես, միննույն ժամանակահատվածում Կ. Պոլսում գործել են 40 հայկական վարժարաններ՝ 5580 աշակերտներով և 304 ուսուցիչներով:<sup>39</sup>

Ադանայի և հարակից շրջանների 1909թ. կոտորածները ևս ուղեկցվեցին մեծ ծավալի հայկական կրթօջախների ոչնչացմամբ: Համաձայն Մաղաքիա Օրմանյանի տեղեկագրի՝ միայն Ադանայի նահանգի հաշվառված 37 գյուղերում ու քաղաքներում 1909թ. ջարդերի հետևանքով հրկիզվել կամ ավերվել են 50-ից ավելի հայկական եկեղեցիներ ու դպրոցներ,<sup>40</sup> որոնցից միայն Ադանա քաղաքում՝ 6 եկեղեցի, 5 դպրոց, իսկ Ջերբի-Բերեքեթի գավառում (Ադանայի նահանգ)՝ 6 եկեղեցի, 12 դպրոց:<sup>41</sup>

Ադանայում ամերիկյան միսիոներության ղեկավար Ու. Ն. Չեմբրըսը Մերսինից 1909թ. մայիսի 1-ին Ադանայի ջարդերի մասին հեռագրելով Լոնդոն՝ փաստում է հետևյալը. «Ապրիլ 12/25ին, զօրքերն ու Պաշտօնագույնները սարսափելի հրացանածգութիւն մը սկսան Հայոց վարժարանին վրայ, ուր երկու հազար անձինք ապաստանած էին: Իսկոյն հրդեհեցավ շէնքը... Աւերիչ հրդեհն անխափան շարունակեցաւ մինչև առաւօտ, հրոյ ճարակ ըլլալով չորս եկեղեցիք և անոնց դպրոցները»,<sup>42</sup> իսկ Սուրեն Պարթևյանը, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից ջարդերից անմիջապես հետո Ադանա ուղարկված օգնության հանձնախմբի անդամ էր և անձամբ ականատես է եղել կատարվածին, ապրիլի 17/30-ին գրում է. «... Ատանայի մէջ Հայ տուն, շուկայ և ազգային հաստատութիւն գրեթէ չէ մնացած... Մուշեղեան դպրոցն ու նոր շուկան, որ

---

<sup>38</sup> Վիճակացոյց գաւառական ազգային վարժարանաց թուրքիոյ, տետր Ա, վիճակ 1901տարւոյ, Կ. Պոլիս, 1901, տես բոլոր գավառներին կից ծանոթագրութիւններում:

<sup>39</sup> Թովչեան Ե., «Լոյս» պատկերագրող օրացոյց հանդէս, Թիֆլիս, 1905, էջ 491:

<sup>40</sup> Օրմանեան Մ., Ազգապատում, հատոր գ., էջմիածին, 2001, էջ 5869-5870:

<sup>41</sup> Adossidès A., Arméniens et Jeunes-Turcs, Paris, 1910, p. 104-105.

<sup>42</sup> «Բյուզանդիոն», 3,822, ապրիլ 25-8 մայիս, 1909, էջ 3:

դէպքն սկիզբը վրիպած էին հրդեհէն, այրուեր, մոխրացեր են, իրենց մէջ ապաստանած հարիւրաւոր էակներ ածխացնելով»:<sup>43</sup>

Օսմանյան կայսրությունում հայկական կրթա-մշակութային հաստատություններին վերջնական հարված հասցվեց 1915-1923թթ. ընթացքում, երբ թուրքական կառավարությունը հայ բնակչության բնաջնջման հետ մեկտեղ ծրագրավորված կերպով ձեռնամուխ եղավ նաև նրա հազարամյա մշակութային ժառանգության կանխամտածված ոչնչացմանը: Կայսրության քրիստոնյա ազգաբնակչության կրթօջախներն արմատախիլ անելու թուրքական կանխամտածված քաղաքականության մասին է վկայում 1913-1916թթ. Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Հենրի Մորգենթաուն, ով ականատես է եղել թուրքերի կողմից հայերի դեմ գործադրված բռնություններին և իր հուշերում գրել է. «Երբ թիւրք կառավարութիւնը ջնջեց քափիթիւլասիօները եւ այդ կերպով թիւրքերը ազատագրուեցան օտար տէրութիւններու տիրապետութիւնէն, ատով քայլ մը առած եղան դէպի համաթիւրքութեան գաղափարին իրականացումը: Ես ականարկած եմ այն դժուարութիւններուն՝ զորս ունեցայ իրենց հետ, քրիստոնեայ վարժարաններու շուրջը: Զանոնք արմատախիւելու կամ գէթ թիւրք հաստատութիւններու փոխակերպելու իրենց որոշումը՝ նոյն արմատական ծրագիրին մէջ ուրիշ մանրամասնութիւն մըն էր լոկ»:<sup>44</sup>

Հայտնի է, որ 1915թ. մայիսի 16-ին թուրքական կառավարության կողմից ընդունվեց հատուկ հրամանագիր (բաղկացած է 34 հոդվածներից)՝ տեղահանված հայերի շարժական և անշարժ գույքի բռնագրավման մասին.<sup>45</sup> համաձայն այդ հրամանագրի՝ բռնագրավվեցին նաև հայկական բոլոր կրթօջախները: Այս մասին է վկայում Կ.Պոլսում Գերմանիայի դեսպան Վանգենհայմի 1915թ. մայիսի 18/31-ի հեռագիրը՝ ուղղված Բեռլին՝ արտգործնախարարությանը, ուր մասնավորապես ասվում է. «Էնվեր փաշա, պատերազմական

<sup>43</sup> Պարթևեան Ս., Կիլիկեան արհաւիրքը, Կ. Պոլիս, 1909, էջ 31:

<sup>44</sup> Ամերիկյան դեսպան Հենրի մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, թարգմանիչ՝ Ենովք Արմեն, Երևան, 1990, էջ 235-236:

<sup>45</sup> Ղազարեան Հ. Գ., Ցեղասպան թուրքը, Պէյրուս, 1968, էջ 226-235:



կացութենէն օգտուելով, մտադրած է փակել մեծ թիւով հայ դպրոցներ, արգիլել հայերու նամակագրութիւնները, փակել հայ թերթերը... Ան խնդրեց, ստիպողաբար, որ իր թետերը չբռնենք»,<sup>46</sup> իսկ Կեսարիայի կրթական վարչութեան տնօրէն Մեհմեդ Թևֆիգ բեյի՝ սեպտեմբեր 12, 1915 թվակիր պաշտոնագրից տեղեկանում ենք, որ միայն Կեսարիայի ու Դեվելի գավառակներում (Անգորայի նահանգ) միևնույն ժամանակահատվածում բռնագրավվել են 24 հայկական դպրոցներ:<sup>47</sup>

Խարբերում ամերիկյան հյուպատոս Լեսլի Դեյվիսն, իր տեղեկագրերից (11 հուլիս, 1915 թվակիր) մեկում ներկայացնելով «Եփրատ» քոլեջի կրած կորուստները, փաստում է հետևյալը. «Մեր շէնքերէն եօթը հատը, կառավարութեան ձեռքը կը գտնուին, մէկուն մէջ ժանտարմաներ կը բնակին, միւսները պարապ կը մնան: Ինչքերու և անձերու կորուստի մասին ճշգրիտ հաշիւ մը չեմ կրնար ցոյց տալ: Շատ բաներ գողցուած են, շատ մը ուրիշ բաներ քանդուած և աւերուած... Եփրատ Գոլէճէն մանչ և աղջիկ, մեր աշակերտներէն մեծ մասը տարագրուած են: Մասամբ սպաննած են զանոնք, մասամբ աքսորած, մասամբ ալ թուրք հարէմներու մեջ արգելափակած: Գոլէճին ուսուցիչներէն չորսը սպաննուած են և երեքը տակաւին ողջ»:<sup>48</sup>

Օգտվելով պատերազմական իրավիճակից՝ թուրքական կառավարութիւնը բռնագրավված հայկական դպրոցների մեծ մասը վերածեց գորակայանների. միայն Կ. Պոլսում գինվորական իշխանութեան կողմից գրավվեցին և գորակայանների վերածվեցին «Էստեան», «Ս. Ներսէսեան», «Լեւոնեան-Վարդուհեան», «Տատեան», «Ս. խաչ», «Սէմէրճեան-Ճեմարան», «Արամեան-Ունճեան», «Պէգճեան», «Պէրպէրեան», «Տայեան Հայ Օրիորդաց» վարժարանները:<sup>49</sup> Կրթօջախների մնացյալ հատվածը հայերի տեղահանութիւն-

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 222:

<sup>47</sup> Նույն տեղում, էջ 224:

<sup>48</sup> Հայկական ջարդերը. Տոքթ. Եոհանէս Լեփսիուսի տեղեկագիրը, Պէրլուք, 1965, էջ 85:

<sup>49</sup> Թէոդիկ, Նշվ. աշխ., էջ 376-381:

նից հետո կողոպտվեց, հրկիզվեց ու ավերվեց, ինչպես օրինակ Էրզրունում, երբ բնակչության տեղահանությունից հետո՝ 1916թ. փետրվարի 15-ին, թուրքերը ռմբակոծությամբ քանդեցին առաջնորդարանը, շուկան՝ հրկիզելով հայերին պատկանող բոլոր վարժարանները:<sup>50</sup> Ավերածություններից զերծ չմնաց նաև Զմյուռնիա (Իզմիր) հայաշատ նահանգը. 1922թ. սեպտեմբերի 9-ին, քենալական բանակը, ներխուժելով քաղաք, 4 օր շարունակ կողոպտել ու ավերակների է վերածել այն՝ հրկիզելով 50-ից ավելի շինություններ, այդ թվում և 21 եկեղեցի, 32 դպրոց:<sup>51</sup>

Համաձայն 1919թ. Պողոս Նուբար Փաշայի և Ավետիս Ահարոնյանի կողմից ստորագրված հուշագրի՝ Թուրքիայում ամբողջությամբ կամ մասամբ կործանվել են 26 բարձրագույն վարժարաններ, 1439 դպրոցներ, 42 որբանոցներ,<sup>52</sup> իսկ «Հայասերների միջազգային դաշնակցության գործադիր ժողով»-ի փոխնախագահ Անթոնի Քրաֆթ-Պոնառն ուղղված նամակում Ավ. Ահարոնյանը հայտնում է հետևյալը. «Գալով հայ ժողովրդին ազգային ժառանգութեան՝ ինչպես անշարժ ստացուածքներ, եկեղեցական կալուածներ, կրօնական դպրոցներ, վանքեր ու մենաստաններ, դպրոցական հաստատութիւններ, մատենադարաններ, հնութեանց հաւաքածոներ... ամենքը քանդուեցան, կողոպտուեցան կամ յափշտակուեցան: Մնացածն ալ թիւրք կառավարուիւնը իւրացուց»:<sup>53</sup>

Հայկական կրթա-մշակութային հաստատությունների ոչնչացումն այսքանով չսահմանափակվեց, այլ շարունակվեց նաև հետագա տարիներին. 1970-ական թթ., Կ.Պոլսի Հալաջօղլու թաղամասում Ոսկեղջյուրի կամրջի շինարարության պատրվակով Ս.

---

<sup>50</sup> Ակունի Ս., Միլիոն մը հայերու ջարդի պատմութիւնը , բ տպագր., Կ. Պոլիս, 1920, էջ 144:

<sup>51</sup> Joseph Burt, The People of Ararat, London, 1926, p. 90.

<sup>52</sup> Tableau approximatif des réparations et in demnités pour les dommages subis par la Nation Arménienne en Arménie de Turquie et dans la République arménienne du Caucase, Paris, 1919, p. 8, մեջբերված է Հ. Տաճատ վրդ. Եարտըմեան, Նշվ. աշխ., էջ 45:

<sup>53</sup> Քրաֆթ-Պոնառ Ա., Հայկական խնդիրը, Պրնեէն և Ժընէվ, Զուլիցերիա, 1927, էջ 21:

Ստեփանոս եկեղեցու հետ մեկտեղ քանդվել են «Ներսիսեան» վարժարանն ու «Գալֆաեան» որբանոցը:<sup>54</sup> Եթե մինչև Առաջին համաշխարհային պատերազմը Օսմանյան կայսրության տարածքում գործել են շուրջ 1996 հայկական դպրոցներ՝ 173022 աշակերտներով, որից Արևմտյան Հայաստանի տարածքում՝ 1251 դպրոց՝ շուրջ 76548 աշակերտներով,<sup>55</sup> ապա 1985թ. դրությամբ ամբողջ Թուրքիայում երեք հայկական համայնքները միասին ունեցել են ընդհամենը 23 դպրոց՝ 4091 աշակերտներով,<sup>56</sup> որոնց թիվն տարեցտարի նվազել է: Արդեն 1987թ. Թուրքիայում գործել է 21 հայկական դպրոց,<sup>57</sup> իսկ 2005թ. դրությամբ՝ 16 դպրոց՝ 3219 աշակերտներով և 412 ուսուցիչներով:<sup>58</sup>

Հարկ է նշել, որ մեր օրերում դարձյալ շարունակվում են թուրքական հետապնդումներն ու խոչընդոտները հայկական կրթական հաստատությունների նկատմամբ, և թերևս այս հանգամանքով է պայմանավորված Թուրքիայում հայկական կրթօջախների ամենամյա նվազումը: Բացի այն, որ արգելված է հայոց պատմության, հայոց լեզվի,<sup>59</sup> հայ կրոնագիտության և երաժշտության դասավանդումը, կան ընդհանրապես պատմական թեմաներով գեղարվեստական գրականության ուսումնասիրությունը, գործում են նաև

---

<sup>54</sup> Ըստ թուրքական «Գազեթ բասար» շաբաթաթերթի, մեջբերված է «Մարմարա» օրաթերթ, օգոստոս 15, 1997թ.:

<sup>55</sup> Համաձայն 1913-1914թթ. Կ Պոլսի Հայոց Պատրիարքարանի կողմից կազմված ցուցակագրության, տե՛ս, Kévorkian R. H., Paboudjian P. B., Les Arméniens Dans L'empire Ottoman Ala Veille Du Génocide, Paris, 1992, p. 57-60.

<sup>56</sup> Օրացոյց Պատրիարքութեան Հայոց Թիւրքիոյ 1985, մեջբերված է, Հայ ընտանիք, 1985, Ս. Ղազար-Վենետիկ, Մխիթարեան Հրատարակութիւն, էջ 42:

<sup>57</sup> Garbis Der Yeghajian, Conversations in Silence, California, 1989, p.132.

<sup>58</sup> <http://armenians-1915.blogspot.com/2005/09/396-16-armenian-schools-in-turkey.html>.

<sup>59</sup>1985թ. երկու հայ դատապարտվել են այն բանի համար, որ Ղիարբեքիրի ու Կեսարիայի շրջաններում բնակվող քիչ թվով հայերի համար հայոց լեզվի դասընթացներ են կազմակերպել. նրանք մեղադրվել են «թուրք որբերին հայացնելու» փորձերի մեջ: Տե՛ս, Հովհաննիսյան Ա., Թուրքիա. մշակութային ցեղասպանություն, Երևան, 2005, էջ 12:

հրահանգներ, որոնք սահմանափակում են հայ երեխաների՝ հայկական դպրոցներում սովորելու հնարավորությունը. այսպես, հայ երեխաներին արգելում են ընդունվել հայկական դպրոց, եթե նրանք չեն բնակվում տվյալ դպրոցի շրջակայքում:<sup>60</sup> Դեռևս 1987թ. հունիսի 18-ին Եվրախորհրդարանի կողմից ընդունված բանաձևի 6-րդ կետում կոչ է արվել թուրքական կառավարությանը արդարացի վերաբերմունք դրսևորել հայ ժողովրդի ինքնության, լեզվի, կրոնի, մշակույթի, կրթական համակարգի նկատմամբ, սակայն, ինչպես ցույց են տալիս հետագա իրադարձությունները, նմանատիպ միջազգային կոչերն ու որոշումներն անգամ չեն ազդում թուրքական կառավարող շրջանների՝ հայկական կրթօջախների նկատմամբ հետապնդումների և ընդհանրապես հայկական մշակութային արժեքների նկատմամբ բռնությունների դադարեցմանը:

Այսպիսով, բազմաթիվ փաստեր վկայում են, որ հայկական կրթօջախները՝ որպես արևմտահայ մշակութային ժառանգության մի ճյուղ, Օսմանյան կայսրությունում մշտապես գտնվել են ոչնչացման վտանգի տակ, կամ ոչնչացվել են, և այս երևույթը շարունակական բնույթ է կրել՝ որպես պետական քաղաքականություն տիրապետելով թուրքական բոլոր վարչակարգերում: Ակնհայտ է, որ պետական քաղաքականության նման դրսևորումը հետապնդում է մեկ ընդհանուր նպատակ, այն է, ոչնչացնել հայկական քաղաքակրթության ցանկացած հետք հայերի պատմական հայրենիքում՝ զրկելով նրանց իրենց ազգային բնութագրից:

---

<sup>60</sup> Տե՛ս, Garbis Der Yeghajian, Conversations in Silence, p.188, ինչպես նաև Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ12:

## ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**В.А. ПОТТО О МЕСТЕ И ЗНАЧЕНИИ КАВКАЗСКОГО  
ФРОНТА  
В РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЕ 1828 - 1829 гг.**

В последние годы тема войны и мира повсеместно актуализировалась до такой степени, что начали говорить об определенной (и специфической) милитаризации общественного сознания и об утверждении соответствующей культурной моды. Имеет место весомая заявка на концептуальное и методологическое обоснование новой исторической дисциплины, предпринятая созданной по инициативе Е.С. Сенявской, Ассоциацией военно-исторической антропологии и психологии «Человек и война»<sup>1</sup>.

В этом ракурсе определенный интерес представляет пятитомный труд В.А. Потто, в котором русско-турецкая война 1828 - 1829 годов рассматривается на уровне фактологии, предметной конкретики. Анализ означенного труда интересен в силу двух причин. Одна из них состоит в том, что в историографии войны 1828 - 1829 годов отсутствуют (по крайней мере мы не обнаружили) исследования, посвященные тому аспекту, который является целью нашей работы. Второ́й аспект связан с тем, что и сам упомянутый труд никогда прежде не рассматривался в данном ракурсе.

Подобная «избирательность» (условно говоря) нашего исследования, обязывает нас сказать вначале несколько слов об авторе рассматриваемого труда.

Генерал-лейтенант Василий Александрович Потто (01.01.1836 – 29.11.1911. Даты приводятся по старому стилю)

---

<sup>1</sup> Военно-историческая антропология: Ежегодник. 2002: Предмет, задачи, перспективы развития. - М., 2002; Мир и война: культурные контексты социальной агрессии / Под ред. И.О. Ермаченко, Л.П. Репиной. - М., 2005.

принадлежит к когорте исследователей, заложивших основы российского военного востоковедения. Возникнув в первой половине XIX века как прикладная, научно-практическая форма исследований, к 1917 году военное востоковедение России превратилось в самостоятельную отрасль знаний о Востоке в широком смысле этого понятия.

В официальных российских справочных изданиях сведения об интересующем нас авторе весьма скудные. Довольно подробная справка приводится в биобиблиографическом словаре М.К. Басханова, из которой следует, что В.А. Потто является выходцем из дворян Тульской губернии. Образование он получил в Орловском Бахтина кадетском корпусе, из которого вышел в 3-й Драгунский Новороссийский полк (1855 г.). Из обширного послужного списка Потто отметим наиболее важные для нас вехи его жизненного пути <sup>2</sup>.

Потто являлся участником Крымской войны (1853 – 1855 гг.) и подавления мятежа (уже в качестве капитана) в Царстве Польском (1863 – 1864 гг.). В 1887 г. полковник был определен на службу штаб-офицером при войсках Кавказского военного округа, затем прикомандирован на шесть месяцев к Главному штабу для «письменных занятий» (1892 г.). В 1896 году ему присваивают звание генерал-майора. В 1899 году Потто назначают начальником военно-исторического отдела при штабе Кавказского военного округа, а в 1907 году он получает звание генерал-лейтенанта.

В период службы на Кавказе Потто собирал устные рассказы, песни и исторические предания горских народов и казаков. Совершил несколько поездок по Кавказу, отличился при взятии крепости Карс в Азиатской Турции. Служба на Кавказе и поход в Закавказье дали огромный исторический и фактологический материал, который впоследствии Потто использовал в ряде своих работ. Все это говорит о том, что нашего

---

<sup>2</sup>Басханов М.К. Русские военные востоковеды до 1917 г.: Биобиблиографический словарь. - М., 2005, с. 192 – 193.

героя, во-первых, никак нельзя причислить к кабинетным ученым. Во-вторых, его труд содержит богатейший материал для изучения рассматриваемой темы в проблемном поле интеллектуальной истории.

Всеобщую известность Потто как военному историку принес монументальный пятитомный труд «Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях»<sup>3</sup>, ставший уникальным по богатству фактический материал о войнах России с Османской империей, Персией и горскими народами Кавказа. Для завершения этого труда император Александр III распорядился выдать полковнику Потто, в то время уже уволенному со службы и оставшемуся без средств к существованию, единовременное пособие в четыре тысячи рублей.

Во «Введении» к первому тому указывается, что первой целью Потто была популяризация истории Кавказской войны, которая у него охватывает период с начала XVI века по 1831 год (В XIX в. подобная периодизация была «в порядке вещей»). Заметим, что в отдельных случаях в работе автора упоминаются и более поздние события XIX века. В центре исследования Потто находится описание военных событий и государственных решений, военно-стратегических успехов и деятельности полководцев, ему, как и другим современникам, присуща героизация войны, интерес к выдающимся личностям. Вместе с тем его труд не является специальным военно-научным сочинением. Автор стремился дать в «общедоступном изложении ряд рассказов, легенд, эпизодов и биографий, расположенных в хронологическом порядке, которые могли бы вполне ознакомить не только с внешней стороной вековой кавказской борьбы, но и с внутренней, насколько эта последняя отразилась в легендах, солдатских песнях, в рассказах товарищей и тому подобное». Второй целью Потто было «выдвинуть ... на

---

<sup>3</sup> Потто В.А. Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях. Т. 1 - 5. - Тифлис, 1885 – 1891гг.



первый план человека как важнейший элемент войны, его подвиги, его страдания, успехи и неудачи», что должно «иметь военно-воспитательное значение»<sup>4</sup>.

Переходя непосредственно к теме нашего исследования, отметим, что в четвертом томе «Кавказской войны», озаглавленном «Турецкая война 1828 - 1829 гг.» Потто уделял особое внимание роли военных действий на Кавказе и их специфике для успехов российских войск на Балканском (Дунайском) фронте в период русско-турецкой войны 1828 - 1829 годов, которая началась в сложных международных и внутренних условиях. Характеризуя состояние и степень готовности противоборствующих сторон к началу военных действий, автор пишет: «Еще не замолкли громы персидской войны 1826 - 1828 годов, а политические обстоятельства в Европе сложились так, что сделали неизбежным для России столкновение с Турцией»<sup>5</sup>.

К этому времени генерал от инфантерии А.П. Ермолов был смещен (1827 г.) и на его место назначен генерал-адъютант Иван Федорович Паскевич (1827 – 1831 гг.), герой Отечественной войны 1812 г., получивший в результате успешных военных действий на Кавказе приставку Эриванский.

И.Ф. Паскевича тревожил тот факт, что действующие на Кавказском фронте «войска не могли прийти из Персии раньше конца апреля, а до тех пор вся пятисотверстная русская граница, простиравшаяся тогда от гурийских берегов Черного моря до Талыши и оттуда, по окраине бывшего Эриванского ханства, до Арарата, лежала открытой перед неприятелем. Малочисленные гарнизоны, разбросанные на огромном пространстве, достаточны были только для нужд внутренней службы»<sup>6</sup>.

---

<sup>4</sup> Потто В.А. Кавказская война: В 5 томах. Т. 1: От древнейших времен до Ермолова. - М.: ЗАО Центрполиграф, 2007, с. 5.

<sup>5</sup> Потто В.А. Кавказская война: В 5 томах. Т. 4: Турецкая война. 1828 - 1829. - М.: ЗАО Центрполиграф, 2007, с. 5.

<sup>6</sup> Потто В.А. Кавказская война: В 5 томах. Т. 4,... с. 5.

Тогда как «Турция находилась в положении несравненно выгоднейшем. По всей границе её с Россиею, на всех удобных входах в нее расположились сильные крепости, ждавшие только момента, чтобы внести смерть и ужас в ряды дерзких пришельцев, покусившихся нарушить их грозное молчание. Потти, Батум, Кобулеты, Ацхур, Хертвис, Ахалцихе, Ахалкалаки, Карс, Магазберт, Кагызман и Баязет, возвышая к небу вершины своих башен, составляли оплот мусульманского могущества». Одиннадцать областей Азиатской территории Османской империи «подчинялись одному общему правителю в лице сераскира Арзерумского, которому вверялось бесконтрольное владычество над Армениею и Анатолиею»<sup>7</sup>.

В преддверии войны Порты, «сосредоточивая всевозможные средства в Азиатской Турции для предстоящей войны», назначила «высшим правителем ее наиболее доверенного, опытного и искусного сановника. В Арзерум (Эрзерум. – С.М.) отправлен был трехбунчужный паша Галиб, которому не только отданы были под непосредственное начальство одиннадцать пашалыков, обыкновенно составлявших Арзерумский сераскират, но и верховное право заимствовать из всех азиатских владений Порты то число войск и те средства, какие по местным обстоятельствам он сам признает необходимым для успешного хода войны»<sup>8</sup>.

Интерес представляет характеристика Галиб-паши, о котором Потти отзывается как о человеке чьи «дипломатические и государственные способности не подлежали сомнению». Но, «к сожалению [для турок. - С.М.], это был человек, не обнаруживший военных дарований и не имевший даже военной опытности. Султан, отдавая в его распоряжение весь ход военных действий в Азиатской Турции, рассчитывал главным образом на его глубокий ум, столь важный в эти минуты для управлением обширным краем».

---

<sup>7</sup> Там же, с. 8.

<sup>8</sup> Потти В.А. Кавказская война: В 5 томах. Т. 4, с. 9-10.

В помощь Галиб-паше, «в качестве вождя действующих войск, назначен был человек закаленный в боях, - Киос Магомет-паша, некогда сражавшийся в Египте против Наполеона и потом участвовавший в четырех европейских кампаниях против русских, сербов и греков. От сочетания этих двух выдающихся умов» Порта ожидала «наилучшие результаты»<sup>9</sup>.

Современные исследователи несколько иначе оценивают положение России и Турции. Они отмечают, что обе стороны были плохо подготовлены к военным действиям. На Кавказском театре военных действий регулярных турецких войск почти не было и основную ударную силу составляли иррегулярные части. В русской армии наиболее боеспособным был Отдельный Кавказский корпус, имевший богатые боевые традиции. Главным театром военных действий считался Дунайский фронт, при самом поверхностном отношении русского главного штаба к Кавказскому фронту. Николай I ошибочно считал, что уже само появление русской армии за Дунаем заставит Порту направить к нему парламентеров<sup>10</sup>.

Согласно общему плану войны, начертанному российским императором, «перед войсками Кавказского корпуса лежали две задачи: 1) отвлечь турецкие силы с Дуная и 2) овладеть в Азиатской Турции местами, необходимыми для округления и обеспечения русских границ». Для достижения этих целей считалось «достаточно покорить два пашалыка – Карский и Ахалцихинский – и взять две приморские крепости – Потю и Анапу. Дальнейшие завоевания из-за «крайней ограниченности средств, предполагались слишком обширными и даже «безнужными»<sup>11</sup>.

В то время когда эти задачи ставились перед Паскевичем, для Петербурга еще не был решен вопрос о мире с Персией, и потому были разработаны два плана предстоящих действий.

---

<sup>9</sup> Там же с. 10

<sup>10</sup> Ибрагимбеи Х.М. Россия и Азербайджан в первой трети XIX в. - М., 1969, с. 216 – 224; Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII – начало XIX в. - М., 1, с. 88.

<sup>11</sup> Потто В.А. Кавказская война: В 5 томах. Т. 4: , с. 13.

В случае продолжения персидской войны, разумеется, нельзя было привлечь значительные силы для сражения с турками, однако российский император Николай I требовал наступательных действий, «ибо, - как писал граф Дибич Паскевичу, - лучшее средство для обороны с малыми силами против азиатских народов, без сомнения, есть решительное на них нападение». В случае же получения известия о начале военных действий на Дунае «генерал Красовский с войсками, расположенными в Эриванской области, и с остальными полками двадцатой дивизии, которые должны были к тому времени уже вернуться из-за Аракса», должен быстро наступать на Карс, «в то время как генерал-адъютант Синягин с войсками, находящимися в Грузии (третьи батальоны шести казацких полков), должен овладеть Ахалкалаками». После взятия этих двух крепостей оба отряда должны соединиться под общей командой генерала Красовского и приступить к осаде Ахалцихе.

На тот случай, если мир с Персией будет заключен, главный штаб должен известить Паскевича о том, что, по решению государя состав Кавказского корпуса следует уменьшить, и «потому войска, прибывшие на Кавказ по случаю персидской войны – Сводный гвардейский полк, двадцатая пехотная и вторая уланская дивизии, вместе с шестью донскими казачьими полками, - должны быть немедленно возвращены в Россию. Впрочем, по выходе этих войск из Грузии Паскевичу, в случае крайней необходимости, разрешалось задержать их на Кавказской линии в виде резерва и даже употребить для взятия Анапы»<sup>12</sup>.

Потто отмечает, что оба плана основывались «на недостаточно верных сведениях о средствах, которыми могла располагать Порты в Азиатской Турции, и потому на практике должны были встретить громадные затруднения». С заключением мира с Персией первый план уничтожился сам собою. «Но относительно второго плана Паскевич поспешил возвра-

---

<sup>12</sup> Там же

зять, что, лишившись двадцатой пехотной дивизии, корпус его будет гораздо слабее числом, чем при Ермолове при самом открытии персидской кампании...»<sup>13</sup>.

В результате требования Николая I «в распоряжении Паскевича оставалось всего пятьдесят один батальон пехоты, одиннадцать эскадронов кавалерии, семнадцать казачьих полков и сто сорок четыре орудия. Но большая часть их (Потто перечисляет какие именно. – С.М.) ... оставалась или в персидских пределах, или занимала важнейшие пункты Закавказского края» - Потто указывает какие именно и суммирует: «Всего тридцать шесть батальонов, три эскадрона, десять казачьих полков и восемьдесят шесть орудий. Собственно же в наступательных действиях против турок могли принять участие только пятнадцать батальонов пехоты, восемь эскадронов кавалерии, семь казачьих полков и пятьдесят восемь орудий, не считая осадных. Боевая сила этого корпуса не превышала пятнадцати тысяч человек, но зато это были войска, испытанные в трудах и лишениях, покрытые славой недавних побед, предводимые вождем (Паскевичем. – С.М.), одно имя которого устрашало врагов»<sup>14</sup>.

Следует отметить тот факт, что на протяжении всего четвертого тома Паскевич характеризуется автором только с положительной стороны и предстает чуть ли не былинным героем.

Потто сообщает о том, что в Кавказской армии было немало полков, принимавших участие в войне 1812 года, в нее входили также и ссыльные декабристы, солдаты Семеновского и Черниговского полков. К 1827 году в рядах отдельного Кавказского корпуса числилось более 2800 ссыльных солдат-декабристов<sup>15</sup>. Среди тех кто штурмовал Карс в 1828 году был и декабрист прапорщик Пущин, представленный к ордену Свято-

---

<sup>13</sup> Там же.

<sup>14</sup> Потто В.А., Кавказская война: В 5 томах. Т. 4:, с. 15 - 16

<sup>15</sup> Фадеев А.В. Россия и восточный кризис 20-х годов XIX в. - М., 1958, с. 217.

го Георгия 4-й степени, но получивший награду только в 1857 году <sup>16</sup>.

Посылая главные силы к Дунаю, султан Махмуд II (1808 - 1839) еще в апреле 1828 года требовал от Галиб-паши «со всей азиатской армией громить насколько возможно русские владения за Кавказом» <sup>17</sup> с тем, чтобы отвлекать на себя силы России с основного Дунайского фронта.

Начало военных действий, однако, сразу обнаружило отличия от планов обеих сторон. В то время как Паскевич только готовился к походу, а вторая российская армия графа П.Х. Витгенштейна, еще только собиралась на реке Пруте, на берегах Черного моря произошло «событие, весьма важное для дальнейших судеб войны в Азиатской Турции», - пала Анапа, которую султан называл «ключом азиатских берегов Черного моря». Из-за отдаленности от театра военных действий и «по совершенному недостатку войск на Кавказе, Анапа включена была в черту действий» российской Дунайской армии. Потто замечает, что в каждой войне с Турцией взятие Анапы «входило в число важнейших стратегических соображений» <sup>18</sup>.

Таким образом, совершенно неожиданно для Петербурга и Стамбула, военные действия на Кавказском фронте развернулись гораздо активнее, а главное, результативнее, чем на Балканах. Если к осени 1828 года Дунайская армия России после первых успехов в июле-августе увязла в длительной осадной войне, то Отдельный Кавказский корпус при активной помощи местных ополчений на своем левом фланге покорил весь Баязетский пашалык, на правом – занял Гурию и овладел крепостью Потти, в центре – передовые войска корпуса стояли в Карсе, Ардагане и Ахалцихе. «В общей сложности они завладели тремя пашалыками, взяли девять крепостей и укрепленных замков, триста пятнадцать орудий, сто девяносто пять зна-

---

<sup>16</sup> Потто В.А., Указ соч Т. 4, с. 39.

<sup>17</sup> Там же с. 20.

<sup>18</sup> Там же, с. 55 - 56, 58.

мен, одиннадцать бунчуков и до восьми тысяч пленных. ... никогда еще азиатская Турция не терпела такого погрома, и ни одна кампания, веденная русскими, не стоила так дешево, как Турецкая кампания Паскевича»<sup>19</sup>, в которой он укрепил и расширил свою операционную базу.

Успехи Кавказского корпуса «в турецкой Армении сильно встревожили константинопольский двор», и султан Махмуд II «обратил теперь особое внимание на свои азиатские владения. ... Прежние начальники..., старый Галиб и ... Киос Магомет-паша, обвиненные в слабости и недостатке военных способностей, были смещены и сосланы в отдаленные провинции». Вместо них были назначены «новые, более энергичные люди. Отважный старец Гаджу-Салех, паша майданский, назначен был арзерумским сераскиром с такими полномочиями, каких до него не имел ни один из правителей этого сераскириата, а в помощь к нему, главнокомандующим всеми войсками в Азиатской Турции, был избран Гаджу-паша Сивазский, и султан требовал, чтобы они не только остановили дальнейшие успехи русских, но и возвратили все, что Порта потеряла в Азии в минувшую кампанию». Для выполнения поставленной цели «во всей Азиатской Турции объявлено было поголовное вооружение» и общая численность турецкой армии, которую Порта предполагала собрать к весне 1829 года, должна была составить свыше 200-тысяч солдат при 156 орудиях.

Сопоставляя силы противоборствующих сторон, Потто указывает, что «силы, которыми располагал Паскевич, совершенно не соответствовали громадным средствам, подготовляемым противником. ... а между тем из Петербурга, основываясь на успехах» кампании 1828 года, требовали дальнейшего расширения планов похода, чтобы тем облегчить тяжелую войну на Дунае. Поставленный в столь трудное положение, Паскевич должен был «обратиться к изысканию местных

---

<sup>19</sup> Потто В.А. Указ соч., Т. 4, с. 192.

средств, чтобы хоть сколько-нибудь уравновесить свои силы с силами противника»<sup>20</sup>.

Не могу пройти мимо того факта, уже отмечавшегося исследователями, что, начиная с 1819 года участие местных жителей в экспедициях правительственных войск России приобрело наибольшее распространение в Дагестане<sup>21</sup>. Генерал неоднократно сообщал государю о храбрости и весомом вкладе в борьбе с турками мусульманских полков, находившихся под его командованием, среди которых был «отборный полусотенный отряд дагестанских горцев». Однако при использовании местных военных ресурсов Паскевичу приходилось сохранять традиционные для Кавказа способы комплектования и организации иррегулярных формирований. Прежде всего население боялось введения рекрутской повинности, и даже слухи о ее введении порождали серьезные волнения. Были и иные причины. Так, например, в 1829 году кумыки отказались идти в ополчение под воздействием пропаганды дервишей и т.д.

Попутно заметим, что в контексте своего труда Потто неоднократно (см. ниже) опровергает широко бытовавшее в России и Европе мнение о якобы изначально присущем «диким» горцам стремлению к одной только наживе, которое не изжито и сегодня. Причем оппоненты Потто сами указывают некоторые причины такого поведения. «...Горцы не были склонны к скучной сторожевой службе. Они предпочитали повоевать, пострелять, пограбить и разойтись. Вообще бездействие в течение нескольких дней способно было полностью деморализовать любое кавказское ополчение»<sup>22</sup>.

Добычей, взятой в бою, не пренебрегали и солдаты, однако это не носило характер постоянного и повсеместного явления. Например, во время боя в предместье Баурам-Паша (бои

---

<sup>20</sup> Там же с.197-199.

<sup>21</sup> Лапин В.В. Национальные формирования в Кавказской войне XVIII-XIX вв. // Кавказ и Россия – прошлое и настоящее. История, обычаи, религия. Сб-к. - СПб., 2006, с. 53.

<sup>22</sup> Лапин В.В. Указ соч., с. 59 - 60, 63.



за Карс), «вбегая на редут, солдаты проходили через небольшой оставленный турками лагерь; палатки стояли на самой дороге, но ни один гренадер не заглянул в них поживиться добычей – так сильно было стремление солдат скорее захватить орудия и знамя». Потто сообщает, что после взятия крепости Муравьев отметил отличительную черту «войск Кавказского корпуса, в коих славолюбие превышает чувство корысти»<sup>23</sup>. В труде Потто приводится много примеров подобного «славолюбия» не только регулярного войска, но и «вспомогательных войск», сформированных из местного населения.

В данном случае отметим, что еще в кампанию 1828 года Паскевичу «удалось собрать ополчение, хотя немногочисленное, но служившее весьма усердно, - и он осыпал его наградами», причем «честолюбие и гордость мусульман польщены были этим настолько, что когда в начале 1829 года Паскевич обнародовал прокламацию о созыве конных татарских полков, мусульмане наперерыв просили позволения записаться в них, стремясь раздобыть не добычу, на которую уже не рассчитывали, а блестящие успехи и славу русского оружия. Соревнованию этому поддались даже джаробелоканские лезгины, вызвавшиеся добровольно поставлять под русские знамена отборных всадников. Воодушевление охватило и (христианскую. – С.М.) Грузию»<sup>24</sup>.

Эти слова Потто нуждаются в пояснениях. «Татарами» он именовал азербайджанцев. Набиравшаяся в Азербайджане регулярная конница действительно отличалась высокими боевыми качествами, так как состояла из добровольцев, представлявших феодальные служилые сословия (беков, меликов с их нукерами, маафов), для которых военное дело было наследственной профессией и делом сословной чести, а в конкретных исторических условиях XIX в. это играло роль «сословного

---

<sup>23</sup> Потто В.А. Кавказская война: В 5 томах. Т. 4, ... с.49 - 50

<sup>24</sup> Там же, с. 207.

лифта», что покажет позже и рекрут Николай I 1846 года и многое другое.

Паскевич разработал свой план кампании 1829 года, в который, однако, вынужден был внести коррективы, так как государь требовал более решительных военных действий, но без новых подкреплений. Генералу следовало «ограничиться одними рекрутами». На исходе был уже февраль 1829 года, «повсюду шли приготовления к новой кампании, - как вдруг громовым ударом пронеслась по Грузии весть об истреблении в Тегеране русского посольства (убийство А.С. Грибоедова ... - С.М.), моментально изменившая весь ход событий». Вероятность новой войны с Персией грозила Паскевичу войной на два фронта, когда «весь мусульманский мир» уже «глухо заволновался. Но беда не приходит одна: почти в то же время пришло известие, что турки предприняли необычайный зимний поход и, перебравшись на лыжах через заваленные снегом горы, внезапно, среди глубокой зимы, осадили Ахалцихе. Это было сигналом к открытию военных действий в то время, как приготовления к ним со стороны России были далеко не окончены<sup>25</sup>. В результате зимнего наступления «русский гарнизон в Ахалцихе был осажден Ахмет-беком, Гурия ожидала вторжения турок, а в Арзеруме собиравались огромные турецкие силы...». Паскевич вынужден был просить подкреплений, но Петербург медлил и ему вновь пришлось изыскивать «местные средства»<sup>26</sup>.

Таким образом, решительные наступательные действия на Кавказе теперь все чаще сменяются боями за удержание стратегически важных участков. Весной 1829 года ситуация осложнилась заявлениями Франции и Англии о том, «что не позволят России удержать за собой ни одного аршина из числа завоеванных ею земель»<sup>27</sup>.

---

<sup>25</sup> Потто В.А. Указ соч., с. 209

<sup>26</sup> Там же, с. 241- 243.

<sup>27</sup> Там же, с. 293.

Между тем меняется ситуация за Дунаем. К середине лета 1829 года военное поражение Порты было предрешено. На Балканах пала Силистрия (19 июня), на Кавказе Карс (21 - 23 июня), а «27 июня почти без боя сдалась мощная крепость Эрзерум» (Арзерум), где в плен был взят сам сераскир и четыре паша, до 15 тысяч человек и 150 орудий.

Значительную роль в этих сражениях играли уже упоминавшиеся военные формирования местных жителей. В их числе были и чеченцы, о которых В.В. Лапин сообщает, что Паскевич пригласил на службу знаменитого Бей-Булата, явившегося в Тифлис с 60-ю чеченскими джигитами, из которых, однако, «только половина отправилась в действующую армию. На параде в честь взятия Эрзерума чеченцы стояли в одном ряду с казаками линейного полка. В отряд Бей-Булата сначала собралось 195 человек, но в район боевых действий отправилось всего 33 всадника». Резюмируя, В.В. Лапин замечает: «Об их участии в боях сведений не сохранилось»<sup>28</sup>.

Со взятием крепости Эрзерум (запиравшую пути внутрь Малой Азии), собственно, и закончилась кампания 1829 года. На Кавказе был разгромлен последний резерв Порты - армия Хакыпаша. На Балканском (Дунайском) фронте турецкие войска были разбиты при Кулевче и не оказали серьезного сопротивления армии генерала от инфантерии графа И.И. Дибича, совершившей переход через южные отроги Балкан. 20 августа 1829 года без боя пал Адрианополь (Одрин)<sup>29</sup>.

В период переговоров, проходивших со 2 по 14 сентября, России удалось не допустить вмешательства представителей Англии и Австро-Венгрии в обсуждение условий мира и в целом был принят российский проект договора. Петербург, опасавшийся изменений в системе государственной власти в Турции, учитывавший «нараставшее освободительное движе-

---

<sup>28</sup> Лапин В.В. Указ соч., с. 53 – 54.

<sup>29</sup> Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII – начало XIX в. - М., 1978, с. 91.

ние в Южной Болгарии, реальную перспективу восстаний» предписывал Дибичу и Паскевичу обеспечивать прежний порядок и «послушание» населения в занятых районах». Министр иностранных дел К.В. Нессельроде, руководствуясь предписанием Петербурга, писал И.И. Дибичу, что положение вещей, существующее в Османской империи, должно быть «сохранено самым строгим образом». 14 сентября 1829 года был подписан мирный Адрианопольский (Одринский) договор<sup>30</sup>, завершивший очередную острую фазу Восточного вопроса.

Однако на Кавказском фронте о заключении мира не знали и военные действия продолжались. 17 сентября 1829 года генерал Гессе «потерпел неудачу под Цихис-Дзири, и теперь надо было заботиться уже о спасении самой Гурии. И Гурия, и Коблиенский санджак, и Ахалцихский пашалык лежали перед неприятелем открытыми. Дела на правом фланге принимали серьезный оборот, готовились кровавые события, как вдруг, - пишет Потто, - 29 сентября прискакал курьер с известием о заключении мира. Гроза рассеялась, и страшный Ахалцихе на вечные времена остался за Россией»<sup>31</sup>.

Потто весьма подробно излагает причины того, почему известие о мире дошло до Паскевича так поздно. Мы ограничимся лишь несколькими цитатами: «Война окончилась. Но то, что в Румелии (Балканы. – С.М.) приобрело уже право законности и стало свершившимся фактом, долго еще не было известно ни в Арзеруме, где находилась главная квартира Паскевича, ни в суровых горах Лазистана, где сераскир собирал последние разрозненные силы Турции». Потребовался целый месяц, чтобы известие о мире дошло до Кавказа.

Потто с горечью замечает: «А в этот месяц сколько напрасно было пролито крови и угасло человеческих жизней! Су-

---

<sup>30</sup> Юзефович Т. (составитель). Договоры России с Востоком, политические и торговые. - СПб., 1869. с. 71 - 84; Восточный вопрос во внешней политике России. Конец XVIII – начало XIX в. - М., 1978 с. 94.

<sup>31</sup> Потто В.А. Указ соч., с.414.

ществуй в то время электрическая проволока (телеграф. - С.М.) – и не было бы ни беирутских погромов, ни цихис-дзирских штурмов, где с обеих сторон так много было выказано героических усилий, так много совершено подвигов, и совершенно» напрасно, так как «они уже бессильны были изменить в судьбах России и Турции» то, что уже было решено и подписано в Адрианополе.

Потто подчеркивает тот факт, что Дибич «не промедлил ни минуты, чтобы известить Паскевича о заключении мира, и два курьера немедленно повезли к нему это известие в Малую Азию»<sup>32</sup>. Но из-за происков турецких чиновников оба курьера – ротмистр Могучий и штабс-капитан Дюгамель – смогли доставить известие о мире только в конце сентября.

Впоследствии стало известно, что «сераскир еще за несколько дней до приезда Могучего получил султанский фирман, извещавший его о начале мирных переговоров; вместе с тем константинопольский двор требовал, чтобы сераскир воздержался от всяких наступательных действий, избегая сражений, теперь уже бесполезных. Знал об этом ... и трапезундский паша, но молчал в угоду сераскиру, который задумал воспользоваться истекающими днями войны, чтобы разбить Паскевича, ослабленного, как он полагал, последними неудачами на правом фланге и роспуском войск на зимние квартиры. На этой победе сераскир хотел основать свою личную военную славу».

О прибытии Дюгамеля в Трапезунд сераскир «получил известие в ночь с 26 на 27 сентября, когда обе армии стояли друг против друга» и, следовательно, еще можно было остановить кровопролитие, но, «в ожидании результатов сражения, сераскир с умыслом задержал эти депеши, и только жестокий беирутский погром заставил его не скрывать уже более известия о мире». Ночью 28 сентября посланный им офицер доставил Паскевичу «письмо, в котором сераскир писал, что мир заключен и что с этим известием едет курьер от графа

---

<sup>32</sup> Потто В.А. Указ соч., с. 445 – 446.

Дибича, а до его приезда предлагал заключить перемирие», однако с тем условием, «чтобы русские войска не двигались ни шагу вперед. Такому заявлению сераскира, тотчас после проигранного им сражения», нельзя было доверять. «Тем не менее Паскевич отправил к нему чиновника Влангали и подполковника Яновича с ответом, что он соглашается на перемирие», но при условии, что турецкие войска будут распущены, а русский корпус продвинется «еще на один переход. ... Но заключать перемирие оказалось не нужным: Дюгамель уже был в турецком лагере и предъявил фирман о мире»<sup>33</sup>.

Подводя итоги, Потто пишет: «...в течение четырех месяцев кампании 1829 года кавказские войска прошли около шестисот верст от границы почти до Трапезунда, уничтожили многочисленную турецкую армию, пленили главнокомандующего и самого сераскира – правителя обширного края, овладели столицей Анатолии, покорили пашалыки: Арзерумский, Мушский и часть Трапезундского со всеми их крепостями, взяли двести шестьдесят две пушки, шестьдесят пять знамен, десять бунчуков и повелительный жезл сераскира»<sup>34</sup>.

«Нельзя не сознаться, - продолжает Потто, - что польза, приобретенная Россией за Кавказом, далеко не соответствовала блестящим успехам Кавказского корпуса и ожиданиям самого Паскевича», который дважды писал Нессельроду и один раз Дибичу, «где должны остановиться наши приобретения» в Азиатской Турции. Особенно он настаивал на присоединении Карского пашалыка. Однако Дибич, получивший предложения Паскевича уже после подписания Адрианопольского договора, «не мог, да и не имел особенной надобности заботиться о выгодах кавказского края, - и эта ошибка, - заключает Потто, - прискорбна тем более, что европейские державы, настаивая при заключении мира на целостности турецких владений в Европе, мало заботились о ее азиатской территории. Даже сама Тур-

---

<sup>33</sup> Там же, с. 447 – 448.

<sup>34</sup> Потто В.А. Указ соч., с. 449.

ция не особенно отстаивала тогда три завоеванных нами пашалыка и самый Батум...»<sup>35</sup>.

Особый интерес представляет довольно идилический пассаж Потто о том, какое влияние оказала война 1828 – 1829 гг. на Османскую империю: «Мусульманское население и даже турецкие войска скоро забыли (в это трудно поверить. – С.М.) страшные удары минувшей войны, да и все внимание их было поглощено тогда новыми реформами, которые с таким изобилием сыпались султаном Махмудом. Древняя военная организация, созданная первыми завоевателями, была вполне, им разрушена; спаги и янычары, составлявшие ее основание, или истреблены, или лишены всякого значения; их заменила новая регулярная армия, устроенная по образцу европейскому, и если эта армия не покрыла турецких знамен победными лаврами в минувшую войну с гяурами, то это было приписано неспособности ее вождей и недостаткам, еще коренившимся в ее организации. На исправление этих недостатков и было обращено теперь внимание ее молодого султана»<sup>36</sup>.

Анализируя труд Потто, следует помнить, во-первых, о том что мы имеем дело не просто (и не только) с военно-историческим исследованием, основанном на изучении источников, но и с работой, в которой излагаемые события преподносятся (преломляются) через призму личного восприятия автора, участника Крымской войны 1853 – 1856 годов и русско-турецкой войны 1877 - 1878 годов (напомним, что в 1887 г. автор служил штаб-офицером при войсках Кавказского военного округа). Непосредственное участие в этих войнах наложило на изображение событий 1828 - 1829 годов – нельзя исключить «оптический эффект» их слияния. На Потто повлияла и вне-научная, общественно-политическая конъюнктура тогдашних настроений российского общества. Таким образом, участников исторических событий мы воспринимаем через исследова-

---

<sup>35</sup> Там же, с. 456-459.

<sup>36</sup> Там же, с. 451.

тельскую рефлексию Потто и его личностного (приязненно-го/неприязненного) отношения к описываемым акторам.

Во-вторых, военные действия в 1828 году развернулись почти одновременно на двух театрах – балканском и кавказском. Но если в российской Дунайской армии под командованием П.Х. Витгенштейна насчитывалось от 94 до 100 тысяч воинов, то в составе Отдельного Кавказского корпуса под командованием И.Ф. Паскевича было около 40 тысяч человек. Причем Петербург мало заботился о состоянии Кавказской армии, что подтверждают и другие исследователи <sup>37</sup>.

Отдельный Кавказский корпус выполнял две основные задачи, поставленные Николаем I, – отвлекал часть турецких сил с Балканского полуострова и поддерживал порядок в Закавказье. Для выполнения последней задачи Паскевичу пришлось выделить значительную часть войск. Для решения же первой задачи считалось достаточным «покорить два пашалыка – Карский и Ахалцихтинский. Дальнейшее продвижение войск в глубь азиатских владений Турции считалось нецелесообразным». Однако решительные и результативные действия на Кавказском фронте значительно превзошли ожидания государя, оказав тем самым весьма существенную помощь российской Дунайской армии, что повлияло на исход войны с Турцией.

На заключительном этапе войны последовал ряд новых успехов кавказских российских войск – были взяты крепости Карс и Эрзерум, взятием которого, собственно, и закончилась кампания 1829 года. Попутно заметим, что свидетелем взятия Эрзерума был А.С. Пушкин, который с 13 июня по 14 июля находился в войсках Кавказского корпуса и позднее описал это в «Путешествии в Эрзерум».

Весьма своеобразную оценку сути Адрианопольского договора дал А.Б. Широкопад, по мнению которого Россия очень ма-

---

<sup>37</sup> Киняпина Н.С. Внешняя политика России первой половины XIX века. - М., 1963, с. 142 - 143; Киреев Н.Г. История Турции XX век. - М., 2007, с. 32.



ло приобрела, а Турция очень много потеряла. После смерти Екатерины II «так и повелось, что в результате русско-турецких войн Россия выигрывает копейки, Турция много теряет, а выигрывает Европа, то есть Англия, Франция, Австрия и т.д.»<sup>38</sup>.

История XVIII – XIX веков. свидетельствует о том, что на протяжении всего периода продвижения России на Кавказ одним из главных стратегических противников была Турция. Причем Закавказский фронт считался второстепенным во всех войнах с Турцией и его главной задачей было отвлечение части турецких военных сил от главного Балканского (Дунайского) фронта. Несмотря на то, что война на Кавказе практически на всем своем протяжении имела откровенно периферийный характер, Кавказский корпус не только успешно справился с поставленными задачами, но своими героическими и успешными действиями внёс весомый вклад в дело победы России над Османской империей.

---

<sup>38</sup> Широкоград А.Б. Турция. Пять веков противостояния. - М., 2009. (Друзья и враги России), с.241

## ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Վ. ԳՈՐԴԼԵՎՍԿԻՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՈՆԻ ԻՍԼԱՄԱՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ակադեմիկոս Վ.Ա. Գորդլևսկին (1876-1956)՝ ռուսական և խորհրդային թուրքագիտության ամենանշանավոր դեմքերից մեկը, հեղինակել է բազմաթիվ հիմնարար աշխատություններ, որոնք նվիրված են թուրքերենի, թուրք գրականության ու բանահյուսության, Օսմանյան կայսրության ու Թուրքիայի Հանրապետության ինչպես քաղաքական պատմության, այնպես էլ մշակույթի (մասնավորապես՝ մամուլի), տնտեսական հարաբերությունների տարաբնույթ հիմնահարցերի: 1899թ. ավարտելով Մոսկվայի Արևելյան լեզուների Լազարյան ինստիտուտը, իսկ 1904թ. նաև Մոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետը՝ նա 1907թ.-ից մինչև 1948թ. թուրքերեն ու թուրք գրականության պատմություն է դասավանդել Լազարյան ինստիտուտում (վերակազմավորվել է որպես Մոսկվայի Արևելագիտության ինստիտուտ), այնուհետև ղեկավարել է նախկին ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության ինստիտուտի Մերձավոր և Միջին Արևելքի երկրների լեզվի ու գրականության սեկտորը<sup>1</sup>: Իմի բերելով ճանաչված արևելագետի կյանքի օրոք

---

<sup>1</sup> Վ. Ա. Գորդլևսկու կյանքի ու գործունեության մասին մանրամասն տե՛ս E.Э. Бертельс, В.А. Гордлевский, в кн. Академику В.А. Гордлевскому к его 75-летию, М., 1953, его же., В.А. Гордлевский “Краткие сообщения Института востоковедения”, М.,1956, N22. Ռուսաստանյան առաջատար թուրքագետ-պատմաբանները արդարացիորեն հենց Վ. Ա. Գորդլևսկուն են անվանում «օսմանագետ-թուրքագետների մոսկովյան դպրոցի հիմնադիր»: St’u C.Ф. Орешкова, Некоторые размышления о развитии тюркологии и османологии. Turcica et Ottomanica: Сборник статей в честь 70-летия М.С. Мейера, М., 2006, стр. 27. Ավադ. Վ. Գորդլևսկու գիտական ժառանգության մասին տե՛ս նաև Ալ. Սաֆարյան, Զիյա Գյոքալփը՝ թուրք կանանց իրավունքների մասին,

հրատարակված ու նաև անտիպ, բայց բացառիկ հետաքրքրություն ներկայացնող ուսումնասիրությունները՝ նախկին ԽՍՀՄ ԳԱ կողմից ստեղծված խմբագրական հանձնախումբը 1960-ական թթ. հրատարակում է Վ. Գորդլևսկու «Ընտիր երկերը»՝ չորս ծավալուն հատորով<sup>2</sup>:

Կարծում ենք, մասնագետների և ուսանողների համար այսօր էլ հետաքրքիր կարող են լինել Օսմանյան կայսրության ազգային ու կրոնական փոքրամասնությունների հիմնահարցերի մասին (այդ թվում «Հայկական նյութ» պարունակող) Վ. Գորդլևսկու հրապարակումները, գրառումները, բնականաբար անկախ այն հանգամանքից, որ դրանցում տեղ գտած առանձին գնահատականներ ակնհայտորեն պարտադրված են խորհրդային կաղապարներով և ընդունելի չեն<sup>3</sup>:

---

«Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Երևան, 2006, հ.4, էջ 13-37:

<sup>2</sup> St' u B.A. Гордлевский, Избранные сочинения. т. I (Исторические работы), М., 1960, т. II (Язык и литература), М., 1961, т. III (История и культура), М., 1962, т. IV (Этнография, история востоковедения, рецензии), М., 1968.

<sup>3</sup> Օրինակ, հիշելով թուրք գրող, լրագրող ու պատմաբան Ահմեթ Ռեֆիք Ալթընայի (1880-1937) «Երկու կոմիտե երկու կոտորած» ("iki komite-iki katil") բրոշյուրի մասին, Վ. Գորդլևսկին գրել է, որ նրանում հեղինակը «խիստ դատապարտել է իմպերիալիստական պատերազմի ժամանակ հայ ժողովրդի ձակատագրի հետ անխղճաբար խաղացող երիտթուրքերի ու դաշնակների քաղաքականությունը», (B.A. Гордлевский, Собрание сочинений, т. IV, стр. 463): Պարզ է, որ տասնամյակներ շարունակ խորհրդային (ըստ էության՝ պրոթուրքական և անպայման հակադաշնակցական) պատմաբանների բազմաթիվ հրապարակումներում էլ արտացոլվել են թուրք պատմագրության ու հրապարակախոսության մեջ շեփոկվող «հայ կոմիտեականների գործունեության» ու «փոխադարձ ջարդերի» մասին պնդումները՝ նպատակաուղղված Հայոց ցեղասպանության ժխտմանը: Հարկ է նշել նաև, որ նմանատիպ ու շատ ավելի գեռիկ պնդումներ, փաստորեն, գերիշխող են եղել նաև խորհրդահայ պատմագրության մեջ՝ մինչև 1950-ական թթ.: Մանրամասն տե՛ս Ն. Սարուխանյան, Մեծ եղեռնի լուսաբանումը խորհրդահայ պատմագրության մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1995, թիվ 2, էջ 42, Ս.Սարինյան, Հայ գաղափարաբանություն (պատմաքննական տեսություն), Երևան, 1998, էջ 121, Է.Դ. Զոհրաբյան, Հայոց

Վ. Գորդլևսկու «Փոքր Ասիայում գաղտնի քրիստոնյաների պատմության շուրջ (Տրապիզոն ուղևորությունից)» հոդվածի (թվագրված է՝ 13 փետրվարի, 1914թ.) հիմքում ընկած է հեղինակի գեկուցումը՝ կարդացված Մոսկովյան հնագիտական ընկերության Արևելյան հանձնաժողովում: Հոդվածը տպագրվել է ռուսական «Քրիստոնյա Արևելք» հանդեսում<sup>4</sup> և նվիրված է Տրապիզոնի վիլայեթի այն քրիստոնյա հույներին, ովքեր օսմանյան ճնշման տակ առերևույթ իսլամ էին ընդունել, սակայն գաղտնի շարունակել էին քրիստոնեություն դավանել: Վերջիններս ապրում էին սփռված՝ Ռիզեից մինչև Քըզըլ-ըրմաքի գետաբերանը, հիմնականում Գյումուշհանեի քաղաքում, իսկ այդ քաղաքի Ստավրի գյուղի անվամբ էլ երբեմն ստուգաբանվել է ուղղափառ-քրիստոնյա հույների կողմից նրանց տրված «ստավրիոտ» անունը<sup>5</sup>:

Հոդվածում Վ.Գորդլևսկին փորձել է հարցականի տակ դնել մեկ այլ ուսումնասիրողի՝ Ռ. Ժանենի այն դրույթը, որ «ստավրիոտների» ձևավորումը բացատրվում է օսմանցիների (իմա՝ թուրքերի)<sup>6</sup> կրոնական ֆանատիզմով. ռուս ակադեմիկոսը, կարծես

---

ցեղասպանության հիմնահարցը խորհրդահայ պատմագրության մեջ – Հայոց Մեծ եղեռն 90, հոդվածներ ժողովածու, Երևան, 2005, էջ 102-105: Օսմանյան կայսրության փլուզման և ազգային փոքրամասնությունների (հույների, հայերի, հրեաների) մասին պաշտոնական թուրք պատմագրության մոտեցումների ու գնահատականների մասին մասնավորապես տե՛ս Solahi R. Sonyel, *Minorities and the Destruction of the Ottoman Empire*, (Atatürk Supreme Council for Culture, Language and History), Publications of Turkish Historical Society (Serial VII- No 129), Ankara, 1993), Սողոմոնյան Ա., Թուրքական պատմագիտական ընկերության ստեղծումը և գործունեությունը (1923-1970-ական թթ.), (մենագրություն), «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», հ. II, Երևան, 2005:

<sup>4</sup> “Христианский Восток”, т. III, вып. I, 1914, стр. 32-43, см. также В.А. Гордлевский, *Избранные сочинения*, т. III, стр. 324-334.

<sup>5</sup> Մեզ համար ընդունելի է եզրի՝ նաև Վ.Գորդլևսկու կողմից ավելի ճշմարտացի համարված բացատրությունը՝ «խաչ կրող», տե՛ս В.А. Гордлевский, *указ. соч.*, стр. 326.

<sup>6</sup> Ռուսական և խորհրդային արևելագետների (այդ թվում՝ Վ.Ա. Գորդլևսկու) կողմից «թուրք-թուրքական լեզուներ», «թուրք-թուրքերեն-անատոլիական թուրքերեն-ադրբեջանական թուրքերեն», «օսման

թե, փորձում է «նրբերանգեր» հավելել քրիստոնյաների ու մուսուլմանների դարավոր փոխառնչություններին՝ կատարելով պատմագիտական էքսկուրսիաններ, այսուհանդերձ ինքն էլ այնուհետև փաստում է, որ քրիստոնյաների կյանքը Փոքր Ասիայում իհարկե հեռու էր իդիլիայից: Նշում է, որ «օսմանցիների» (հմա՝ թուրքերի) նկատմամբ տածած վախը նույնպես հանդիսանում էր «ստավրիոտների» ձևավորման գործոններից մեկը, սակայն Վ. Գորդլևսկին կրկին ընդգծում է, որ «դա միակ գործոնը չէր»<sup>7</sup>: XX դ. սկզբին «ստավրիոտները» անդում էին, որ քողարկվել են երկու դար՝ սեփական կրոնական ինքնությունը պահպանելու նպատակով ապրելով համախմբված ու մշակելով «ադապտացիոն» չգրված նորմեր (օրինակ, աղջիկներին կնության տալ իրենց համայնքի աղքատներին, բայց ոչ մուսուլմաններին)<sup>8</sup>: Ներէթնիկ ինքնագիտակցության այս դրսևորումները առկա են նաև բռնի կրոնափոխության ենթարկված այլ ժողովուրդների և մասնավորապես հայերի շրջանում<sup>9</sup>:

Ընդհանրապես պետք է նշել, որ եկվոր թյուրքական ցեղերի հիմնած պետությունների քաղաքականության մեջ բնիկ քրիստոնյա ժողովուրդների ձուլումը միշտ էլ կարևոր տեղ է զբաղեցրել: Հայտնի է նաև, որ ձուլման ամենատարածված մեթոդներից է եղել բռնի կրոնափոխությունը այն է՝ իսլամացումը, և Օսմանյան կայսրության պատմությունը ևս հարուստ է քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ բռնի իսլամացման քաղաքականության, երբեմն նաև լայնամասշտաբ, դրսևորումներով: Սուլթան Մեհմեթ II-ի կողմից

---

(«էթնոնիմ»)- օսմաներեն կամ օսմանական թուրքերեն» եզրերի կիրառության մասին մանրամասն տե՛ս Գ.Ա. Благова, Вариантные заимствования тюрко-тюрок и их лексическое обособление в русском языке (К становлению обобщающего имени тюркоязычных народов), “Тюркологический сборник”, М., 1973, стр. 93-140.

<sup>7</sup> Տե՛ս Բ.Ա. Гордлевский, указ. соч., стр. 327-328.

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 328-329:

<sup>9</sup> Այս մասին տե՛ս Մելքոնյան Ռ., Ներքին ամուսնությունների սովորույթը Թուրքիայի ծպտյալ հայերի շրջանում, «Հանրապետական», Երևան, 2008, թիվ 5/58/, էջ 6-10:

Տրապիզոնի նվաճումից հետո՝ XV դարում մերձսևծովյան տարածքներում էլ ավելի մեծ թափով ընթացավ բռնի իսլամացման գործընթացը, որը տևեց դարեր: Այդ տարածքներում բնակվող այլ ժողովուրդների թվում բռնի իսլամացման ենթարկվեց Սև ծովի հարավ-արևելյան ափերում երկար դարեր բնակվող Հայության մի հատված, որն ավելի շատ հայտնի է համշենահայություն անվամբ<sup>10</sup>: Ընդհանրապես տարբեր դարերում բռնի իսլամացված հայերի պատմության ուսումնասիրությունը գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում մեզ համար, և այդ առումով ևս օտար հեղինակի հաղորդած տվյալները արժանի են ուշադրության: Գորդլևսկին իր վերոհիշյալ հոդվածում անդրադառնում է նաև իսլամացված հայերին<sup>11</sup>, այդ թվում Սև ծովի տարածաշրջանում (Ռիզեի սանջաքում) ապրող իսլամ ընդունած, բայց գաղտնի քրիստոնեություն դավանող հայերին: Նա գրում է. «Փոքր Ասիայի խորքերում հայկական գյուղերի բնակիչները՝ փրկվելով մուսուլմանների ճնշումներից, զանգվածաբար իսլամ էին ընդունում: Այդպես է, օրինակ, 200 տարի առաջ ձևավորվել էրմենիս գյուղը (Սվազի /Սեբաստիայի Ա.Ս., Ռ.Մ./ վիլայեթում): Էրմենիսի բնակիչները մոլեռանդ են, սակայն ընտանեկան ազգանուններում դեռևս պահպանվում է քրիստոնեական ծագման մասին հիշողությունը (Փափազօղլու): Պատմում են, որ հայ հոգևորականի կինը, տեսնելով օսմանցիներին, համոզել է գյուղի ժողովրդին փախչել անտառ. նրան հետևել էին 12 ընտանիք, որոնք հետագայում հիմնեցին Քյոթնյու

---

<sup>10</sup> Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի իսլամացման մասին տե՛ս նաև Սահակյան Լ., Օսմանյան կայսրությունում համշենահայերի բռնի մահմեդականացման քաղաքականության հետևանքները, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», Երևան, 2006, հ. 4, էջ 207-228: Իսլամացված համշենահայերի շրջանում ներկայումս ինքնության դրսևորումների մասին հետաքրքիր հոդվածով է հանդես եկել Թուրքիայում բնակվող համշենահայ մանկավարժ Մահիր Օզքանը, որի հոդվածի հայերեն թարգմանությունը տե՛ս «Հանրապետական», Երևան, 2008, թիվ 9 /62/, էջ 14-17, (թուրքերենից հայերեն թարգմանությունը՝ Ռուբեն Մելքոնյանի):

<sup>11</sup> Տե՛ս В.А. Гордлевский, указ. соч., стр. 328-329.

գյուղը: Հարևան հունական Իպսալը գյուղի բնակիչները (ովքեր պրոզելիտներ էին) ծիծաղում են Քյոթնյուի բնակիչների վրա, ովքեր փախել էին Էրմենիսից. «Քյոթնյուլեր գիթթի!» - «Վատերը գնացին» (այս արտահայտությունը գործածվել է, ըստ երևույթի, թուրքերեն *քյոթնյու*-վատ բառի նմանությամբ Ա.Ս., Ռ.Ս.): Սակայն Իպսալըի բնակիչների շրջանում էլ դեռևս պահպանվել են քրիստոնեության հետքեր. նրանք հացի վրա խաչ են պատկերում, և երբ նրանց հարցնում են պատճառը, պատասխանում են. «Այդպես էին անում մեր նախնիները»: Սվազում հայերը պատմում էին, որ 1895թ. հայկական ջարդի ժամանակ մուսուլմանները ստիպում էին նրանց ուրանալ քրիստոնեությունը: Ոմանք, սակայն, դրսևորում էին անսովոր անասանություն. մի հայի վրա 19 փամփուշտ են պարպել, իսկ նա պազել է ձեռքերը և անընդհատ պնդել. «Ես քրիստոնյա եմ»: Այնժամ օսմանցիները (ինն՝ թուրքերը Ա.Ս., Ռ.Ս.), սարսափելով, որոշել են, որ նա սուրբ է ու խոնհարվել են նրա առաջ»<sup>12</sup>: «Գյալուրների» ու պրոզելիտների (մասնավորապես «ստավրիտների») նկատմամբ անսքող արհամարանքն ու թշնամանքը արտացոլվել են նաև թուրքական առածներում, ասացվածքներում և երգերում, որոնք նույնպես չէին կարող վրիպել թուրքական բանահյուսության նկատմամբ մշտական հետաքր-

---

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղում: 1912 թ. նաև Պ.Ի. Ավերյանովը գրել է հայկական ամբողջական գյուղերի իսլամ ընդունելու՝ որպես հալածանքներից խուսափելու, կյանքը և ունեցվածքը փրկելու պարտադրված միջոցի մասին, տե՛ս П.И. Аверьянов, Этнографический и военно-политический обзор азиатских владений Османской империи, СПб., 1912, стр. 16. Իսկ ռուս հայտնի աշխարհագրագետներից մեկը 1858թ. Օսմանյան կայսրություն կատարած ուղևորության ժամանակ Սև ծովի առափնյա քաղաքներում հանդիպել է ծպտյալ քրիստոնյա հոյներին, որոնց մեջ անգամ եղել են «մուսուլման հոգևորականներ», որոնք ցերեկը մզկիթում նամազ են արել և քարոզ կարդացել, իսկ գիշերը իրենց հավատակիցների հետ հավաքվել գաղտնի եկեղեցիներում ու կատարել քրիստոնեական պատարագ: Այդ իսլամացված հոյն «իմամ-քահանաներից» մեկը նույնիսկ ինքնաբացահայտվել է ու խնդրել փրկել իր աղջկան՝ Ֆաթմա-Սոֆիային, որպեսզի նա չդառնա մուսուլմանների հարեմի գրիդ: Տե՛ս, Чихачев П., Письма о Турции, М. 1960, стр. 23-25.

քություն ցուցաբերած այնպիսի կարկառուն հետազոտողի ուշադրութունից, ինչպիսին էր Վ. Գորդլևսկին<sup>13</sup>: «Երեկ Էվլիյա<sup>14</sup> էր այսօր՝ Իյա» («Ղյուն Էվլիյա, բուգյուն Իյա»), «Ում մուսուլման կոչեցինք, ծոցից խաչ դուրս եկավ» («Քիմինե մյուսլուման դեդիք, հաչը քոյնունդան չըքթը»), «Երկար փողոցը ցեխտո դարձավ, քրոմցիները գյավուր դարձան» («Ուզուն սօքաք չամուր օլդու, քրոմլուլար գյավուր օլդու») <sup>15</sup>: Գորդլևսկու աշխատության մեջ ներկայացված բանահյուսական այս օրինակներն ի ցույց են հանում հասարակ ժողովրդի մոտ այլակրոնների և անգամ կրոնափոխների նկատմամբ նրանց անսքող բացասական վերաբերմունքը: Հարկ է հավելել, որ թուրքական բանահյուսության մեջ (ընդ որում տարբեր տարածքների) նման օրինակներ բազմաթիվ են:

Մեր սույն համեստ հրապարակումը, անշուշտ, չէր հավակնում ներկայացնել օսմանագիտության և հայագիտության հատման վիթխարի տիրույթի պրոբլեմատիկային Վ. Գորդլևսկու բազում անդրադարձների ողջ համալիրը, որը ուրույն բացահայտումների ու մտորումների նյութ է խոստանում արևելագիտության պատմության հետազա ուսումնասիրողներին: Միևնույն ժամանակ, ակադեմիկոս Վ. Գորդլևսկու հաղորդած տվյալները կարևոր սկզբնաղբյուր են Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների բռնի իսլամացման և նաև դրա անմիջական հետևանք ծպտյալ քրիստոնյաների ուսումնասիրության համար:

---

<sup>13</sup> Մանրամասն տե՛ս նաև, В. Гордлевский, Из истории османской пословицы и поговорки, - "Живая старина", вып. II-III, М., 1909, стр. 116, նույնը՝ Избранные сочинения, т. II, стр. 273.

<sup>14</sup> Բառացի՝ սուրբ, բարեպաշտ, աստվածահաճո, աստվածավախ, առաքինի, արդարակյաց. այսինքն՝ բարեպաշտորեն կատարում էր իսլամի պատվիրանները:

<sup>15</sup> Տե՛ս, В. А., Гордлевский, Избранные сочинения, т. III, стр. 330-333.



**ՀԱՅԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ Կ. ՊՈԼՍԻ  
«ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹԻ  
ՆՅՈՒԹԵՐՈՒՄ (1918Թ.)**

1918 -1924 թթ. Կ.Պոլսում, որպես «Ազատամարտի» իրավա-  
հաջորդ, հրատարակվել է «Ճակատամարտ» օրաթերթը գրեթե այլ  
խմբագրակազմով և Հայաստանի Առաջին Հանրապետության հիմ-  
նադրումից հետո ՀՅԴ որդեգրած նոր ծրագրին ու մարտավարու-  
թյանը հարազատ բաժիններով և թեմաներով: Օրաթերթի խմբագի-  
րը Հակոբ Ճուղյանն էր: Պատասխանատու տնօրեններն էին Մա-  
նուկ Ասլանյանը և Շավարշ Միսաքյանը, իսկ արտոնատերը՝  
Վրթանես Մարտիկյանը:

Նորաբաց թերթն ունեցել է 3 անվանում՝ «Արդարամարտ»/  
1918 թ. թիվ 1-12/, «Արիամարտ»/ 1918թ. թիվ 13-32/, «Ճակատա-  
մարտ»/ 1918թ. թիվ 33-ից մինչև 1924թ./:

1918թ. նոյեմբեր- դեկտեմբեր ամիսներին «Ճատատամար-  
տում» հրատարակված նյութերը նվիրված են այդ շրջանում հա-  
յությանը հուզող առավել էական խնդիրներին : Թվարկենք մի քա-  
նիսը.

- հայոց ցեղասպանությունն ապացուցող վավերագրերի,  
զաղտնի փաստաթղթերի, ականատեսների վկայությունների  
հրապարակում.
- Թուրքիայում 1918 թ. ստեղծված՝ Հայկական ջարդերի և  
տարագրության քննիչ մարմնի գործունեության ներկայացում.
- հայոց եղեռնի կազմակերպիչների ու պատասխանատուների  
փնտրտուք,
- հայ դատի և եղեռնը վերապրածների իրավունքների և շահերի  
պաշտպանություն,
- հայ համայնքի կամ կոտորածից հետո իրենց բնակավայրերը  
վերադարձող հայերի հիմնահարցերի և թուրքական

կառավարության կողմից դրանց «լուծման» ուղղությամբ տարվող աշխատանքների վերլուծություն.

- անդրադարձ Թուրքիայի քաղաքական կյանքին.
- Հայաստանի Առաջին Հանրապետության ներքին ու արտաքին քաղաքական կյանքի լուսաբանում:

Մուդրոսի գինադադարից հետո Կ. Պոլսում համեմատաբար «նպաստավոր» պայմաններ էին ստեղծվել մամուլում եղեռնը վերապրողների խնդիրների արժարծման համար: Այդ տարիները կարծես նմանվում էին 1908 թ. հուլիսյան հեղաշրջմանը հաջորդած ժամանակահատվածին:

«Արդարամարտը» 1918 թ. նոյեմբերի 22-ի / թիվ 3/ «Ալ կախահան չկա, ինչու՞ եք կեցեք» խմբագրականում անդրադառնում է Թուրքիայի քաղաքական կացությանը. «Չորս տարի շարունակ պապանձեցաւ ամէն լեզու: Ինչու՞: Որովհետեւ հալածանք ու բանտ, աքսոր ու կախաղան կար: Անցաւ տառապանքի շրջանը: Համաձայնութեան ջախջախիչ յաղթանակը բացաւ լեզուները, որոնք պապանձած էին. բոլորը սկսան խօսիլ»: Օրաթերթն առաջին համարներից սկսած՝ նույնպես օգտվում է ընձեռնված խոսքի ազատության իրավունքից: Այն ոչ միայն ներկայացնում է հայ ժողովրդի նկատմամբ թուրքական պետության կողմից մշակված և իրագործված ցեղասպանությունն ապացուցող փաստեր, այլև պատասխանատվության է կանչում մեղավորներին: Թիվ 8-ի «Լուր տվեք մեզ անոնց մասին» խմբագրականում նշվում է, թե 4 տարի է, ինչ լուր չունեն հայ ազգի փառավոր զավակներից. «Ու՞ր տարիք զանոնք, դուք, որ ձեր ցեղին տխուր արգանդէն չկրցաք մէկ հիւլէն իսկ ստեղծել այն անմահներուն զորս երամ- երամ իրենց օձախէն և մեր սրտերէն ժողվեցիք ու ղրկեցիք հեռաւոր անապատներուն ու հեռաւոր գեղեցններուն: Ու դուք, որ մեծ ճիւղներուն յաջորդեցիք ու բազմեցաք անոնց սեւ աթոռներուն վրայ, ձեզի՛ ենք: Հաշի՛ւ տուէք մեզ՝ մեր մեծ եղբայրներուն մասին»: «Արդարամարտը» հաշիվ է պահանջում թուրքական կառավարությունից: Թիվ 3-ում տպագրված Վահան Շահրիմանի «Դժոխային ծրագիրը» վերլուծական հոդվածում այդ մասին գրված է. «1915- ի սեւ եղեռնը՝ ան-

հատական վատութիւն մը չէ: Անիկա՝ կատարելագործեալ շարունակութիւնն է պետական հայահալած ծրագրին: Այդ ծրագրին գոյութիւնը ուրացած են միշտ թուրքերը: Բայց անիկա ծանօթ է ամբողջ քաղաքակիրթ աշխարհին: Օսմանեան դահլիճները՝ իբր նուիրական ժառանգութիւն մը՝ իրարու փոխանցած են այդ գաղտնի ծրագիրը, որ հայոց եղերական կործանումը կը պատրաստէր... Հայերը բնաջինջ ընելու ծրագիր մը կայ, առաջուց պատրաստուած: 1915-ին, այդ ծրագրին տէր կեցան դարձեալ թուրք վարիչները իրենց բոլոր շրջապատով հաւաքաբար, մինչեւ 1918, մինչեւ Սէիմէտ Թալէաթ դահլիճին խայտառա՛կ տապալումը: Եւ ուրեմն, անո՛նք, անհատաբար թէ հաւաքաբար, պատասխանատու են բոլոր հայասպան չարիքներու՛ն, զորս ի զուր պարտկել կը ջանան»: «Արիամարտի» 1918թ. դեկտեմբերի 13-ի /թիվ 19/ «Ընթացիկ կյանքը» բաժնում տպագրված են վավերագիր 2 փաստաթուղթ: Դրանք գտնվել էին Իթթիհատի կենտրոնական գրասենյակում կատարված խուզարկության ժամանակ: Այդ փաստաթղթերը կամ ծածկագիր հեռագրերը «կապացուցանէին նոյն կուսակցութեան հայկական ջարդերուն մէջ կատարած դէրը... Յայտնի է թէ ջարդերը կազմակերպելու համար Իթթիհատի կեդրոնէն մարդիկ դրկուած և չէթաներ կազմակերպած են: Կարգ մը նահանգներու մէջ Իթթիհատի ներկայացուցիչներն ալ մասնակից են այս գործին»: Նշվում է նաև, թե «Թալէաթ փաշա հետեւեալ հեռագիրը քաշած է Մալաթիոյ Իթթիհատի ակումբին.- «Ոչնցացուցէ՛ք այն բոլոր հայերը որոնք հող հաւաքուած են և պիտի հաւաքուին, բոլոր նիւթական եւ բարոյական պատասխանատուութիւնը իմ վրայ ըլլալու պայմանաւ»: Ինչպէս յայտնի է, հայկական ջարդերը կազմակերպելու համար, պատերազմի սկիզբէն իսկ, Տօքտ. Պէհաէտտին և Տօքտ. Նազըմ Արեւելեան Նահանգները կը պտղտէին: Տօքտ. Նազըմ՝ Պէհաէտտին Շաքիրի հետեւեալ ծածկագիր հեռագիրը դրկած է. «Կը պահանջուի հայերը տարագրել և վտանգաւոր նկատուածները ոչնչացնել: Արդեօք այսպէս կ'ըլլա՞յ եղբայրս»:

«Արդարամարտը» իր «Հայաջինջ սարսափները» կամ «Վերապրողները» խորագրի ներքո 1918թ. առաջին համարներից սկսած՝

տպագրում է ականատեսների վկայությունները իրենց բնակավայրում կատարված ջարդերի մասին : 1919 թ. այդ պատմություններին զուգահեռ ներկայացվում են հայերի հերոսական ինքնապաշտպանության դրվագները և անվանի ֆիդայիների քաջագործությունները:

Չկա «Ճակատամարտի» որևէ համար, որտեղ տպագրված չլինեն նշված անձանց կամ հայ կամավորական ջոկատների ու խմբերի լուսանկարները: Այս կերպ օրաթերթը կարծես փորձել է ընթերցողներին և թուրքական կառավարող շրջանակներին հասկացնել, թե անկարելի է ոչնչացնել կամ կոտրել հայ ժողովրդի ազատատենչ ոգին: Մեծ է այս կարգի հողվածների ու լուսանկարների պատմական արժեքը: Դրանք այսօր կարելի է օգտագործել հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում: Բերենք օրինակներ: Թիվ 10-ում «Ատաբազաի հայերը» թղթակցության մեջ «Ճակատամարտի» սեփական թղթակիցը պատմում է տեղի հայկական համայնքի մասին: Նա գրում է.«Ատափազար» Պոլիսի մօտ ամենէն հոծ հայ բնակչութիւն ունեցող քաղաքն էր: 3500- էն ասելի հայ ընտանիքներ կային հոս, մօտաւորապէս 20.000-ի հասնող հայութիւն մը, տեղահանութենէն քիչ առաջ առաջնորդարանին կողմէ կատարուած վիճակագրութեան մը համաձայն: Այժմ, ամէն կողմէ քաղուած ճշգրիտ տեղեկատուութիւններ կը հաստատեն թէ տարագրուած երեք հազար հինգ հարիւրէ ասելի Ատափազարցի հայ ընտանիքներէն հազիւ 800-ի չափ միայն կրցած է ճողոպրիլ... այս հայաջինջ ընդհանուր կոտորածէն, ու մնալ` ընդհանրապէս Էսկիշէհի-րէն Գոնիա ու շրջակայքը զանազան տեղեր... Եթե ասոնց վրայ ասելցնենք հրաշքով ողջ մնացած ընտանիքի բեկոր անհատները, ընդհանրապէս կիներ ու աղջիկներ` արաբներէ գողցուած կամ 10-20 դրուշի փոխարէն ծախու առնուած, ինչպէս նաև զինուորագրութենէ վերադարձող ու վերադառնալիք երիտասարդները- որոնց շատ շատերուն ընտանիքները` հայր, մայր, քոյր, եղբայր, կին ու զաւակներ, անխնայ ջարդուած են կամ Արաբիոյ անապատներուն մէջ սովամահ եղած մեռած- ընդամէնը կ'ունենանք Ատափարզարէն տարագրուած 20000 հայութենէն` 5000 միայն, այսինքն գրեթէ մէկ չորրորդը»: Թղթակցությունից տեղեկանում ենք Ատաբազարի հա-

յության տեղահանության մանրամասների մասին. «Հրացանի բուներուն, սօփաներու և խարազաններու հարուածներուն տակ, ասկէ երկուք ու կէս տարի առաջ, Արափազարէն 3500 տուներ 3 օրուան մէջ պարպեցին ու քշեցին դէպ ի անստուգութիւն, դէպ ի մահ, դէպ ի գուլում»: «Արիամարտի» 1918 թ. դեկտեմբերի 13-ի համարում/թիվ 19/ Պողոս Հաճյանը ականատեսի պատմածի հիման վրա է գրում իր նյութը: Այն վերնագրված է՝ «Մուշի հայութիւնը տեղահան չեղավ, այլ ամբողջովին ջարդվեցավ»: Այստեղ ասվում է, որ պատերազմի 1-ին տարում Մուշի գրեթէ բոլոր երիտասարդները զինվորագրվում են: Կառավարութիւնը ժողովրդին ճնշում էր ծանր տուրքերով՝ առգրավելով գյուղացիների ուտելիքի և սերմնացուի պաշարները: Դեպքերի վկան պատմում է, որ 1915 թ. ամռանը Վարդավառի կիրակի օրը «յանկարծ անօրէն խուժանը, այր ու կին, մեծ ու պզտիկ մինչեւ գլուխնին զինուած մեր գիւղը լեցուեցան, ինչպէս շրջակայ հայ գիւղերը: Գիւղը ալան- թալանի տրուած կ'այրի, գնտակը կարկուտի պէս կը տեղայ: Սպանուած սիրելիներուդ վրայ լալ անգամ չես ուզեր, տսկումը մեծ է, ամէն մարդ իր հոգին ազատելով կը գբաղի: Գիւղին մէջ գտնուող այրերէն ոչ մէկն այլեւս ողջ չտեսայ»: Նույն ականատեսի վկայութեամբ ամբողջ քաղաքի Չորի թաղը «որ Հայ կեդրոն կրնայ համարուիլ», 3 օր շարունակ ռմբակոծվում է, և «տուն մը անգամ» կանգուն չի մնում: Այս դեպքերից 10 օր հետո թուրքերը նորից հարձակվում են Մուշի վրա: Ոստիկանների հսկողութեան տակ հավաքում են քաղաքի բոլոր կանանց և աղջիկներին Ստեփան Սարգսյանի տան մէջ: «Հոն կը սկսի տռամին ամէնէն քստմնելին... Շատ փոքրիկ աղջնակներ այս տանջանքին տակ աւանդեցին իրենց մաքուր հոգին. քանի~ պառաւ կիներ մեռան զարհուրելի չարչարանքի տակ»: Հետո 2 խմբի են բաժանում այս կանանց ու աղջիկներին: Գեղեցիկներին և երիտասարդներին ընտրում են իրենց համար որպէս կին, իսկ մնացածներին այրում են Վառուկի Շահնազարի տանը: Ըստ դրում նույն մահվանն են արժանանում նաև առաջին խմբից նրանք, ովքեր հրաժարվում են ամուսնանալ թուրքերի հետ: Նրանց այրում են Մուշի մոտ գտնվող Կառնէն գյուղում: Այդտեղ այրում են նաև Մուշ քաղաքի երևելիներից շատերի

կանանց ու աղջիկներին՝ թվով 2000-ից ավելի: Սողոմ և Հունան գյուղերից բերված 100-ավոր կանանց էլ թուրքերը այրում են Կառնեն գյուղում գտնվող Պողոս Խաչատրյանի մարագում: Հողվածագիրը փաստում է. «Ժառը արմատէն խլելու և աղբիւրը ակէն չորցնելու իթթիհատեան ծրագիրը բառ առ բառ գործադրուեցաւ Մուշի վրայ: Այս մեծ ջարդին ռահվիրան և ոգին կրնայ համարուիլ քաղաքիս փոխկառավարիչ, ժանտարմայի հազարապետ Վասիթ պէյ, Մուսա պէյ, Տէվրիշ պէյ, ֆալամագ, Հազգը Մուսա եւ այլն»: Վասիթ բէյի հրամանով սուկալի տանջանքներով նահատակվում են «Վարդան վրդ. Յակոբեան ու Թօփալեան գերապայծառը: Ան էր որ հաւաքեց քաղաքին բարեկեցիկ դասակարգը՝ վեց հարիւրի չափ ու Պիթլիս դրկելու պատրուակով Հաւատուորիկ ձորին մէջ նահատակեց... Մուշը աւերակ մըն է այլեւ... Բայց Մուշ չի պիտի մեռնի. ժամանակ մը պիտի ապրի իր սգաւոր օրերուն մէջ մինչեւ գան իր դարիպ տղաքները»:

Բերված օրինակներից բացի նմանաբնույթ բազմաթիվ վավերագրային արժեքով թղթակցություն- հոդվածներ են մշտապես տպագրվել «Ճակատամարտում»: Այստեղ «Դեպի մահ» խորագրի ներքո ականատեսների վկայություններ կան անվանի հայ մտավորականներից շատերի նահատակության մասին: Ասենք՝ 1918 թ. թիվ 21 և թիվ 25 համարներում ներկայացվում են Գրիգոր Ջոհրապի և Վարդգես Սերենկյուլյանի ձերբակալությունը, աքսորի և սպանության պատմություններն՝ ըստ օրաթերթի աշխատակցի կողմից հայթայթված վկայությունների: Շարքի պատասխանատուն եղեռնից հրաշքով փրկված Երվանդ Օտյանն էր: Նա կոնկրետ «Ջոհրապ և Վարդգես» նյութում առաջին անգամ մեզանում ներկայացնում է Ջոհրապի ձերբակալության մանրամասները: Այդ նյութում կարդում ենք. «Ձերբակալման գիշերը Ջոհրապ, Սէրքըն տ'Օրիանի մէջ մինչեւ կէս գիշեր թուղթ խաղացեր է Թալէաթ փաշայի և Խալիլ պէյի հետ: Յետոյ ոտքի կ' ելլէ մեկնելու համար: Թալէաթ ինքն ալ ոտքի կ'ելլէ ու մօտենալով Ջոհրապի՝ անոր երեսը կը համբուրէ: Համակրանքի այս անսովոր ցոյցը կը շփոթեցնէ Ջոհրապը.

- Ինչու՞ համար այս համբոյրը, կը հարցնէ:
- Սրտէս բխաւ, կը պատասխանէ միւսը:

Ջօհրապ դուրս կ' ելլէ սրահէն չափազանց յուզուած: Նախագ-  
գացունը կ'ունենայ թէ այդ համբոյրը աղետաւոր նշան մըն է ...Կ'  
որոշէ հետիոտն երթալ մինչեւ իր Այազ Փաշայի բնակարանը: Հա-  
զիւ ճամբայ ելած՝ կը նշմարէ որ մէկը կը հետապնդէ զինքը... Ջօհ-  
րապ անհամբեր ետին դը դառնայ և կ'ըսէ.

- Արդեօք զի՞ս կը հետապնդէք:
- Այո՛, կը պատասխանէ միւսը, որ ոստիկանութեան քօմիսէր  
մըն է եղեր...

Ջօհրապ, ճարահատ, ճամբան կը շարունակէ ու կը հասնի  
բնակարանը, որուն դրան առջեւ ոստիկան մը կը սպասէր:

- Ի՞նչ է ձեզի տրուած հրամանը, կը հարցնէ Ջօհրապ:
- Ձեզ ոստիկանատուն տանել:
- Եւ եթէ երթալ չուզիմ:
- Այն ատեն բռնի պիտի տանինք:
- Չէ՞ք գիտեր որ ես մէկուս եմ:
- Գիտենք, բայց մեզի տրուած հրամանը բացարձակ է:

Քօմիսէրը կը յայտնէ նաև որ հետևեալ առտու իսկ, այսինքն  
քանի մը ժամէն,

ճամբայ պիտի ելլէ, հետաեւ բար անհրաժեշտ գոյքերը կրնայ  
հետը առնել... »:

«Ճակատամարտը» ներկայացնում է նաև Վարդգես Սերենկյու-  
յանի ձերբակալության հանգամանքները. «Վարդգէս Ոստիկանու-  
թեան Տնօրէն Պէտրիի գացած էր, իր Այալի ընկերներուն համար  
ծեռնարկներ ընելու և վերստանալու համար «Ազատամարտի»  
սնտուկէն յափշտակուած 450 օսմ. ոսկին զոր նոյն օրը պիտի յանձ-  
նէին, իբրեւ խմբագիրներուն իրաւունքը: Շաբաթներով անուշ լեզու  
կտրած հրէշը հազիւ Վարդգէսի բարեւն առած, կը պօռայ երեսին.

- Մենք ալ քեզ կը փնտռէինք:
- Եւ բրտօրէն կ'առաջնորդէ բանտ»:

Ձերբակալութեան հաջորդ օրը վաղ առավոտյան Ջօհրապին ու  
Վարդգեսին Պոլսի Հայդար փաշայի կայարանից գնացքով ուղար-

կում են Դիարբեքիր: Ճանապարհին նրանց տեսնողների վրա «խորին տպաւորութիւն թողած էր Ջօհրապի ընկճուած վիճակը. մինչ Վարդգէս զուարթ անտարբերութեամբ և ծիծաղկոտ դէմքով մը կը շատախօսէր իրենց մօտեցողներուն՝ Ջօհրապ հազիւ լռութիւնը կը խզէր քանի մը խօսք արտասանելու համար: Ամբողջ ժամեր անընդհատ կը ծխէր, մտածմունքի մէջ ընկղմած:

- Մեզի մեռցնել կը տանին, կը կրկնէ եղեր Ջօհրապ»:

Երբ Աղանայում նրանց է մոտենում վաճառական Միհրան Բոյաջյանը և առաջարկում դրամական օգնություն, նրանք հրաժարվում են: Հալեպում տեղաբնակ մի խումբ հայեր Ջոհրապին ու Վարդգէսին խնդրում են համաձայնվել, որ նրանց փախցնեն: «Յանդուգն ծրագիր մը թէև, բայց ո՛չ անգործադրելի: Վարդգէս հաւանութիւն կը յայտնէ, սակայն Ջօհրապ կ' ընդդիմանայ, առարկելով թէ իր առողջութիւնը չի ներեր»: Վարդգէսը ընկերոջը մենակ չի թողնում: Ջոհրապը հավանաբար վերջին հույսը չէր կորցրել իր թուրք գործընկերներից: Նա նամակ է ուղարկում Ջեմալ փաշային՝ խնդրելով նրա օգնությունը: « Ջօհրապի այդ վերջին գրութիւնը, պերճախօս թուրքերէնով մը գրուած... անպատասխան և ապարդիւն կը մնայ» : Հալեպից երկու ասքորականներին տանում են Ուրֆա: Մեկ- երկու օրից այդտեղից նրանց կառքով ուղարկում են Դիարբեքիր: «Ահռելի եղեռնը տեղի կ' ունենայ Ուրֆայէն քանի մը ժամ անդին: Թուրք չէթներու խումբ մը կը պաշարէ կառքը: Չէթներու պետը Խալիլ պէյը եղած է, Էնվերի մէկ ազգականը...»: Ոճրագործության մասին հալեպահայ համայնքում պատմել է Ջոհրապին և Վարդգէսին Դիարբեքիր տանող կառքի՝ իրեն թուրքի տեղ դրած կառապանը:

ՀՅԴ պաշտոնաթերթը իր նյութերով փաստում է հայ մարտիրոսագրությունը և թուրքական իշխանություններից ու միջազգային կառույցներից պահանջում է դատապարտել մեղավորներին: «Ճակատամարտի» հրապարակումներից պարզ է դառնում, որ գինադադարից հետո հայ ժողովրդին դեռ շարունակում են սպառնալ ջարդերն ու կոտորածները: Թուրքիայում հայահալած քաղաքականությունը չէր փոխվել:



## ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

## ԺԱՍԱՆԱԿԱԿԻՑ ԹՈՒՐՔԵՐԵՆԻ ՇԱՂԿԱՊԵՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԻՄԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Շաղկապը չթեքվող խոսքի մաս է և կապերի հետ մտնում է սպասարկու թերիմաստ բառերի խմբի մեջ: Արտահայտելով քերականական որոշակի հարաբերություն՝ շաղկապը իրար է կապակցում շարահյուսական տարբեր միավորներ: Քերականագիտության մեջ շաղկապի խոսքիմասային առանձնահատկությունը պայմանավորված է նրա շարահյուսական դերով:

Շաղկապ են կոչվում այն բառերը, որոնք խոսքի մեջ ցույց են տալիս բաշխական տարբեր վերաբերություններ՝ իրար շաղկապելով համադաս բառեր կամ համադաս և ստորադաս նախադասություններ<sup>1</sup>: Շաղկապի մեկ այլ սահմանման համաձայն, շաղկապի գնահատման և բնորոշման հանար անհրաժեշտ է նկատի ունենալ ինչպես իմաստային, այնպես էլ շարահյուսական և ձևաբանական հատկանիշները<sup>2</sup>:

Թուրք քերականագետներից Ն. Քոչի բնորոշմամբ նույն պաշտոն ունեցող բառերը, բառային խմբերը կամ նախադասությունները միմյանց կապող բառերը կոչվում են շաղկապ<sup>3</sup> : Նշենք, որ թուրքերենը հարուստ է շաղկապներով կամ որպես շաղկապ օգտագործվող բառային խմբերով<sup>4</sup>: Ժամանակակից թուրքերենի շաղկապներն ըստ կառուցվածքի բաժանվում են չորս խմբի՝

1. Պարզ կամ բուն շաղկապներ (Yalın bağlaçlar)–ve-և, ile-և, de-էլ, dahi-էլ, ama-բայց, bile- նույնիսկ, yani-այսինքն, eğer-եթե, lâkin-սակայն, meğer-քանի որ, hem-և:

<sup>1</sup> Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 242:

<sup>2</sup> Գ. Գարեգինյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, 1984, էջ 42:

<sup>3</sup> N. Koç, Yeni Dilbilgisi, Ankara, 1996, s. 245.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 246:

2. Ածանցավոր (Türemiş bağlaçlar) -üstelik-բացի այդ, հավելյալ<sup>5</sup>, gerçekten–հսկապես, örneğin – որպես օրինակ, açığıcası-պարզապես, kısacası-կարճ ասած, yoksa-չնայած:
3. Բաղադրյալ կամ բարդ (Birleşik bağlaçlar) öyleyse - չնայած , kimbilir- ով գիտի, veyahut - կամ, meğerse – չնայած. nitekim- և ahwa հենց այդպես:
4. Խնքավորված (Öbekleşmiş bağlaçlar) – որոշ շաղկապներով կազմվում են շաղկապային խմբեր, հատկապես – ki շաղկապը կարող է հանդես գալ տաբեր շաղկապների հետ՝ ստեղծելով շատ շաղկապային կառույցներ<sup>6</sup>, այսպես՝

ա) ki շաղկապով ստեղծված շաղկապներ

oysaki – այնուամենայնիվ, այն դեպքում, halbuki – այնուամենայնիվ, mademki – քանի որ, sanki – կարծես, söyleki – հատկապես, այսպիսով, yeter ki – բավականին, demek ki – նշանակում է, nerede kaldı ki - ` էլ որտեղ այստեղ, ne var ki – ինչ կա որ:

բ) Թանվամայի /գոյականական կապակցության/ կաղապարով ստեղծված շաղկապներ՝

Bunun için – սրա համար, bundan dolayı – այդ պատճառով, hետևաբար, bu yüzden - այդ պատճառով, bu bakımdan - այս տեսանկյունից, buna göre- սրա համաձայն, görünüşe göre- տեսածի համաձայն, o halde – հետևաբար, şu halde – այդ դեպքում, bundan başka – բացի այդ, sözün kısası - կարճ ասած:

գ) Կրկնադիր շաղկապներ՝

---

<sup>5</sup> Տես Ալ., Սաֆարյան, Աշ., Սողոմոնյան, Տ., Լոքնագրոգյան, Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, երրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2007, էջ 262: Ռ.Ղազարյան՝ տալիս է նաև՝ դրանից դուրս, բացի դրանից, ի լրումն (Տես Ռ. Ս. Ղազարյան, Թուրքերեն-հայերեն բառարան, Երևան, 2003, էջ 505):

<sup>6</sup> H. Hengirmen, Yeni Dilbilgisi Yabancılar için, İstanbul, 1999, s. 98.

ne...ne – ոչ... ոչ, hem...hem - և...և, gerek gerek /se/-ինչպես... այնպես էլ, ya ya- կամ...կամ, olsun ...olsun- թե...թե, kâh...kâh կամ...կամ, ister...ister /se –երբեմն...երբեմն:

Ժամանակակից թուրքերենի շաղկապներն ու կապերը (հետադրություններ) բնութագրման պլանում և իրենց գործառնությունը շատ նման են և դա է պատճառը, որ դեռևս որոշ լեզվաբաններ դրանք միմյանցից հստակ չեն տարբերել: Մ. Հենգիրմենը, շաղկապներն ու կապերը տարանջատելով, նշում է, որ կապերը բառեր են, իսկ շաղկապները բառային խմբեր<sup>7</sup> :

Մ. Էրգինը շաղկապները համարում է խոսքի փոքր միացություններ, որոնք միմյանց շաղկապում են բառեր, բառային խմբեր և նախադասություններ: Ըստ նրա՝ թուրքերենում բուն շաղկապներ չեն եղել, և դրանց առկայությունն արդյունք է օտար փոխառությունների: Եվ նա թուրքերենի շաղկապների մեծ մասը համարում է արաբապարսկական ծագման: Թուրքերենում այսօր էլ լայն կիրառություն ունեցող *ve* շաղկապը արաբապարսկական ծագման է և տարբեր ժամանակներում օգտագործվել է հնչյունական տարբեր ձևերով՝ *ve*, *vu*, *vü*, *ilê/ile...* - շաղկապը ևս արաբական ծագման է<sup>8</sup>: Մ. Էրգինը տալիս է շաղկապների հետևյալ դասակարգումը՝

ա) *Sıralama edatları*- համակարգված կամ թվարկող շաղկապներ՝ *ve* - “, *ile* - “, *dahi* – էլ,

բ) *Denkleştirme edatları* – համագործություն կամ համանմանություն արտահայտող շաղկապներ՝ *ya*, *veya*, *yahut*, *veyahut* և այլն:

գ) *Karşılaştırma edatları* – հետադրություն արտահայտող շաղկապներ՝ *ya..ya*, *hem..hem*, *ne..ne*, *da(de).. da(de)* – էլ...էլ,

Թուրք լեզվաբանն առանձնացնում է նաև *զխխալոր շաղկապներ*, որոնք նախադասությունները կապում են միմյանց իմաստային տեսանկյունից և դրվում են նախադասության սկզբում: Դրանք են՝ *fakat*-սակայն, *ancak*- միայն, *yalnız*- միայն, *ama*-բայց, *çünkü*-ո-

<sup>7</sup> H. Hengirmen, ԿՅԻ. 3ԲԷ., չԳ 99-100

<sup>8</sup> M.Ergin, Türk Dilbilgisi, İstanbul, 1962, s. 333..

րովհետև, mademki-քանի որ , sanki- կարծես, yoksa-հավանաբար, hâle- հատկապես և այլն: Նախադասության վերջում դրվող շաղկապներից Մ. Էրգինն առանձնացնում է՝ dahi - էլ , de – էլ ise-»թե, ki-որ, kim-ով, bile- նույնիսկ, değil-ոչ շաղկապները<sup>9</sup> : Սրանք շաղկապում են բառեր, բառային խմբեր, և գտնվելով նախադասության վերջում՝ այն կապում են նախորդող բառերի, բառային խմբերի կամ էլ նախադասությունների հետ:

Համաձայն իրենց գործառույթի և իմաստային առանձնահատկության շաղկապների այս վերջին խումբը Մ. Էրգինը դասակարգվում է հետևյալ տարանջատումով՝

ա) Vasıta ve beraberlik edatları- միջոցի և միասնության շաղկապներ՝ ile, bile.

բ) Sebep edatları - պատճառի շաղկապներ՝ için, üzere,dolayı,diye, ve sair.

գ) Bezerlik edatları – նմանություն մատնանշող շաղկապներ՝ gibi, tek

դ) Başkalık edatları - տարբերություն մատնանշող շաղկապներ՝ başka, özge, gayri

ե) Miktar edatı – չափի շաղկապներ՝ kadar:

զ) Zaman edatları – ժամանակի շաղկապներ՝beri, önce, evvel, böyle, sonra, geri.

է) Yer ve yön edatları – տեղի և ուղղության շաղկապներ՝ kadar, değin, dek, karşı, doğru, yana, tarak, içeri, üzere, ara, öte<sup>10</sup>:

Թուրքերենում –dik, -dik, -acak,-ecek դերբայական ածանցներով կառույցները ևս ,նախադասության վերջում դրվող շաղկապների նման են օգտագործվում: (-DİK, -acak ածանցներով գործողության անուններն ունեն սահմանական եղանակի ժամանակային հատկություններ: -DİK-ով ձևն արտահայտվում է գործողություն՝ անցյալում կամ ներկայում: -DİK " -acak ածանցներով դերբայական

<sup>9</sup> M.Ergin, նշվ. աշխ., էջ 334-336:

<sup>10</sup> M.Ergin, նշվ. աշխ., էջ 334-336:

կառույցները հայերեն թարգմանվում են դերբայական դարձվածների կամ բարդ ստորադասական նախադասության միջոցով<sup>11</sup>):

Ժամանակակից թուրքերենում շաղկապավոր կառույցները ավելի շատ դրսևորվում են բանավոր խոսքում, իսկ գրավոր խոսքում գերիշխող է դերբայական դարձվածներով կամ ծավալած լրացական անդամով նախադասությունները: Եթե թուրքերենում շաղկապների մեծ մասի հիմքերն օտար են կամ փոխառյալ, ապա հայերենի շաղկապների զգալի մասը գալիս է գրաբարից<sup>12</sup> :

Ժամանակակից թուրքերենի շաղկապներն իմաստային առումով, ըստ արտահայտած հարաբերության բնույթի կիրառական հատկանիշների, բաժանվում են երկու խմբի՝ համադասական և ստորադասական: Ն. Կոնոնովը համադասական շաղկապները տարանջատում է՝

1. միավորիչ կամ բաղիյուսական (соединительные)- ve, da/de, dahi, ile, ne...ne, hem... hem.

2. ներհակական շաղկապներ (противительные)- ama, fakat, lâkin, ancak, mademki, meğer

3. տրոհական շաղկապներ(разделительные) ya da, yahut, veya, veyat, ya...ya, gerek...gerek /gerekse/, ister...ister/ կամ...կամ/ olsun... olsun /թե...թ», ha... ha /և...և/:

4. տրոհական – հաշվողական շաղկապներ (разделительно-перечислительные) kâh... kâh /մերթ...մերթ/, bazen...bazen / երբեմն...երբեմն/ , bir... bir.

---

<sup>11</sup> Ալ., Սաֆարյան, Աշ., Սողոմոնյան, Տ., Լոքմազյոզյան, Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, երրորդ լրամաշակված հրատարակություն, էջ 129:

<sup>12</sup> Ա.Ս. Գ. Աբրահամյան, Չթեքվող խոսքի մասերը, նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունները ժամանակակից հայերենում, Երևան, 1965: Սաֆարյան Ալ., Սահակյան Լ., Ամիրխանյան Լ. Ժամանակակից թուրքերենի դերբայների դասակարգման հիմնահարցերի շուրջ, «Արևելագիտության հարցեր» (հոդվածների ժողովածու), պատ. խմբ. Գ.Վ.Մելիքյան, հատոր VI, Երևան, 2006, էջ 296-317: Սաֆարյան Ալ., Սահակյան Լ., Ամիրխանյան Լ. Ժամանակակից թուրքերենի դերբայի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2007, էջ 79-84:

Նշենք, որ ժամանակակից թուրքերենի ստորադասական շաղկապները քիչ են: Նախադասության շղթայում դրանք ձևավորում են ժամանակի, պայմանի, պատճառի և հիմունքի իմաստ արտահայտող կաղապարներ:

Թուրքերենի շաղկապն արտահայտչական պլանում հանդես է գալիս որպես բառ-մասնիկ, իբրև երկրորդական ձևույթ: Ստորև, որպես հավելված կներկայացնենք ժամանակակից թուրքերենի շաղկապները՝ հայերեն համարժեք թարգմանություններով:

***ժամանակակից թուրքերենի շաղկապների և շաղկապական բառերի բառարան***

A

açıkçası- ճիշտն ասած  
aksi halde(aksi takdirde)- հակառակ դեպքում  
ama (amma, amma da)-բայց  
ancak–սակայն (ունի նաև մակբայի իմաստ, «միայն» իմաստով)  
anlaşılabilir-ենթադրվում է, երևի  
ayrıca- հատկապես (մակբայ է հանդիսանում, սակայն կիրառվում է նաև որպես շաղկապ)

B

böyle olmakla birlikte (beraber) - –չնայած, այնուամենայնիվ  
bari -գոնե, թեկուզ  
bazen...bazen - երբեմն...երբեմն  
belki...belki - հնարավոր է... հնարավոր է  
bile — նույնիսկ  
bir...bir — մեկ...մեկ, և...և՛  
bu nedenle (bu sebeple) - այդ պատճառով  
bundan dolayı - այդ պատճառով, հետևաբար  
bunun üzerine — հետևաբար  
bununla birlikte (bununla beraber) — համենայն դեպս, չնայած  
bunun için - դրա համար  
bu yüzden - այդ պատճառով

## Ç

çünkü – որովհետև

## D

da - էլ

da...da - էլ...էլ

dahi – նույնիսկ, էլ

demek – ուրեմն, հետևաբար

demek ki - հետևաբար

demek oluyor ki – նշանակում է, ուրեմն

derken – հանկարծ

dolayısıyla — որի պատճառով, որի հետևանքով

## E

eğer - եթե

## F

fakat — սակայն

## G

gel gelelim - ավաղ, ինչ արած

gel gör ki - արի ու տես, որ

gerek... gerek – կան...կան, ինչպես...այնպես էլ

## H

ha...ha- այնպես...ինչպես, և...և՛

halbuki- այն ժամանակ, երբ, այն դեպքում, երբ, թեև

hatta- նույնիսկ

hele- դեռևս

hem - և

hem...hem - (hem...hem de) - և՛...և՛, թե՛...թե՛, ինչպես...այնպես էլ



her ne kadar – չնայած որ, չնայած այն բանին , որ  
hiç değilse – ծայրահեղ դեպքում, գոնե  
hiç olmazsa - ծայրահեղ դեպքում, գոնե

#### I

ile - և  
ister... ister(ister... isterse) – կան...կան, թեկուզ...թեկուզ

#### K

kâh... kâh – մե՛րթ...մե՛րթ, երբեմն...երբեմն  
kaldı ki - բացի այդ, ավելին  
ki - որ  
kimi(si)... kimi(si) — ոմանք...մյուսները, մեկը...մյուսը

#### L

Lâkin – սակայն

#### M

madem – քանի որ  
meğer, meğerki, meğerse – եթե նույնիսկ, չնայած

#### N

nasıl ki - այնպես, ինչպես (նման այն բանին, ինչպես)  
ne de olsa- ամեն դեպքում  
ne var ki- բայց, սակայն  
ne...ne, ne...ne de-ne yapalım ki – ոչ ...ոչ, ոչ ...ոչ էլ  
nitekim - այսպես, հենց այդպես, և այսպես

#### O

o halde- այդ դեպքում, հետևաբար  
olsun...olsun – թե...թե  
oysa, oysaki - այնուամենայնիվ, թեև  
öyle ki - այդ պատճառով, այսպիսով

öyleyse - այդ դեպքում, ուրեմն  
onun için - այդ պատճառով

S

sanki – կարծես  
sözün kısası – կարճ ասած

Ş

şayet - եթե  
şu halde - այդ դեպքում, հետևաբար

T

tâki – որ, որպեսզի

Ü

üstelik - ավելին, ավելացնելով

V

ve - և  
veya - կամ  
velhasıl – կարճ ասած  
veyahut – կամ էլ

Y

ya – կամ  
ya da – կամ էլ  
ya...ya – կամ...կամ  
yahut – հակառակ դեպքում  
yalnız – սակայն, բայց  
yani - այսինքն  
yeter ki - եթե միայն  
yoksa – հակառակ դեպքում

Z

zaten - բացի այդ  
zira – որովհետև (հնացած)

*ՊԵՏՐՈՍՅԱՆ ՏԻՊՐԱՆ*

## **ԹԵՎՖԻՔ ՖԻՔՐԵԹԻ «ՄԱՌԱՆՈՒՐ» ԲԱՆԱՍՏԵԾՈՒԹՅԱՆ ԼԵՁՈՒՆ ԵՎ ՈՃԸ**

Թուրք գրականության ականավոր ներկայացուցիչ Թևֆիք Ֆիքրեթի (1867-1915) ստեղծագործական լավագույն տարիներն անցան Աբդուլ Համիդ II-ի (1876-1909) բռնապետական վարչակարգի՝ «զուլումի» ժամանակաշրջանում: Աբդուլհամիդյան վարչակարգը 19-րդ դարի վերջի թուրքական հասարակության ամենահետադիմական խավերի տիրապետության արտահայտությունն էր, որը Օսմանյան կայսրությունը վերստին հետ շարտեց դեպի միջնադարյան այն կենսապայմանները, որոնք հարյուրամյակի կեսերին մեծ դժվարությամբ սկսել էին տեղը զիջել նոր ժամանակի բուրժուական իրավակարգերին: «Զուլումի» դարաշրջանը վատթարագույն ժամանակ հանդիսացավ նաև թուրքական մշակույթի համար: Թանգիմաթի և սահմանադրական շարժման տարիներին նշանակալի հաջողությունների հասած լրագրությունը վերացել էր կյանքից սուլթանական գրաքննիչների ջանքերով: Շեշտակիորեն պակասեց թերթերի թիվը, իսկ պահպանված մի քանի հրատարակություններ տպագրում էին միայն սուլթանին ու Բարձրագույն Դռանը հաճելի հոդվածներ<sup>1</sup>: Այդ ընթացքում թերթերը գրում էին միայն սուլթանի առողջության, թուրքական բանակի «հաղթանակների» և «լավ բերքի» մասին: Անգամ հարսանիքների ժամանակ մարդիկ պետք է ոստիկանությանը հայտնեին հյուրերի անունները<sup>2</sup>: Աբդուլ Համիդի կառավարման կարևորագույն գործիքներն էին ոստիկանական ուժերը, հատուկ գործակալները, լրտեսները, մատնիչները, որոնք վերահսկողության

<sup>1</sup> Гасратян М. А., Орешкова С. Ф., Петросян Ю. А., Очерки истории Турции, Москва, 1983, с. 138-139.

<sup>2</sup> Радий Фиш, Писатели Турции-книги и судьбы, Москва, 1963, с.21.

1901 թվականին սուլթանական կառավարության հրամանով փակվում է «Servet-i Fünun» հանդեսը<sup>5</sup>: Ֆիքրեթն արդեն հանդեսից բաժանվել էր, հեռացել գրական միջավայրից ու պարփակվել իր ներաշխարհում: Նա գալիս է այն համոզման, որ անհրաժեշտ է պայքարել սուլթանական վարչակազմի դեմ և իր պոեզիան ծառայեցնում է այդ գործին:

Մի անգամ՝ վաղ առավոտյան, Ֆիքրեթը բացում է պատուհանը և տեսնում, որ մառախուղը պատել է Ստամբուլը:

«Արդյո՞ք այսպիսի մի խավարամտության մառախուղ չի պատել ողջ երկիրը», - մտածում է պոետն ու սկսում գրել «Մառախուղ» («Sis») բանաստեղծությունը<sup>6</sup>:

«Մառախուղ» բանաստեղծությամբ թուրք գրականության մեջ Ստամբուլն առաջին անգամ է ներկայացվում որպես այդաստիճան գարշելի, զազրելի ու անհիճյալ քաղաք:

---

<sup>3</sup> Желтяков А. Д., Печать в общественно-политической и культурной жизни Турции (1729- 1908гг.), Москва, 1972, с. 176.

<sup>4</sup> Ruşen Eşref, Tevfik Fikret, Hayatina Dair Hatıralar, 1919, s.100, տես նաև İsmail Parlatır, Tevfik Fikret, Ankara, 2004, s. 71

<sup>5</sup> Հանդեսի մասին մանրամասն տես Seyit Kemal Karaalioglu, Kapak Resimleyen A.Galip Batu, İsmail Tunç, Türk Edebiyatı Tarihi, Tanzimattan Cumhuriyete, İstanbul, 1982, ss. 513- 546.

<sup>6</sup> Радий Фиш, Писатели Турции-книги и судьбы, Москва, 1963, с.26.

Ֆիքրեթից առաջ Ստամբուլի մասին գրել են շատ պոետներ, սակայն կարծես թե երբևէ այդքան զգվանք ու ասելություն չեն արտահայտել, ինչը տեսնում ենք Ֆիքրեթի մոտ: Ավելին՝ թուրք հին գրականության մեջ Նեդիմը և Նաբին Ստամբուլը ներկայացրել են որպես բարձր մշակույթի կենտրոն<sup>7</sup>: Թուրք ուսումնասիրող Մեհմեթ Քափլանը նշում է, որ շատ հավանական է, որ Ֆիքրեթը, Ստամբուլը ներկայացնելով որպես «անիծյալ քաղաք», ընդօրինակել է արևմտյան այն հեղինակներին, ովքեր սարսափով էին խոսում Աբդուլ Համիդի ժամանակաշրջանի մասին: Գալաթասարայ լիցեյում և Ռոբերտ քոլեջում Ֆիքրեթը մեծ շրջապատ և մտերիմ հարաբերություններ է ունեցել օտարերկրացիների հետ, և հավանաբար յուրացրել է Արևելքի, Օսմանյան կայսրության, Ստամբուլի հանդեպ ունեցած նրանց հայացքները<sup>8</sup>:

«Մառախուղ» բանաստեղծության մեջ ի հայտ են գալիս Ֆիքրեթի արվեստի յուրահատկությունները: Ֆիքրեթը Ստամբուլի նյութեղեն իրերը բացահայտում է որպես քաղաքի յուրօրինակ ոգու արտաքին դրսևորում: Ստամբուլը ներկայացնելու Ֆիքրեթի արտահայտչամիջոցներն ու մեկնաբանությունները հետագայում մեծ ազդեցություն թողեցին երիտթուրքերի եւ հանրապետական շրջանի թուրք գրականության վրա:

Բանաստեղծությունը գեղարվեստական առումով բավականին ներդաշնակ է: «Մառախուղ»-ում գերիշխում է սոցիալական մոտիվները: Բանաստեղծության մեջ իշխող տարրերն են «նողկանքը/ատելությունը» («nefret») և «անեծքը» («lânet»): Թուրք ուսումնասիրող Ահմեթ Համիդ Թանփընարը «Մառախուղ» բանաստեղծությունը որակել է որպես «սարսափելի ու դաժան մի նգովք, ողբերգությունից ողբերգության անցնող տառապանք»<sup>9</sup>:

Խորհրդային շրջանի արևելագետ Վ. Գարբուզովան գրում է, որ Ֆիքրեթն այլաբանորեն, սակայն բոլորին հասկանալի ձևով, հա-

<sup>7</sup> Mehmet Kaplan, Şiir Tahlilleri I, Tanzimattan Cumhuriyet'e kadar, İstanbul, 1997, s. 110.

<sup>8</sup> Նույն տեղում, s. 110.

<sup>9</sup> Ahmet Hamdi Tanpınar, Edebiyat Üzerine Makaleler, İstanbul, 1969, s. 288.

մարծակ կերպով հանդես է գալիս ատելի վարչակարգի դեմ: Մառախուղը, որը պատել է Ստամբուլը, արդուլհամիդյան վարչակարգն է, որը խանգարում է մարդկանց ոչ միայն տեսնել, այլ անգամ ապրել ու շնչել<sup>10</sup>:

Բանաստեղծության մեջ նկարագրվում է մառախուղն ու նրա հետևում ընկած քաղաքը: Բանաստեղծությունը սկսվում է հետևյալ տողերով.

صارمش ينه آفاكى بر دود معند  
بر ظلمت بيضا كه پيا پى متزايد

Պատել է կրկին հորիզոնը մի կամակոր մառախուղ

Ճերմակ խավար, որ աստիճանաբար մեծանում է (տարածվում է)<sup>11</sup>:

Ֆիքրեթն այստեղ մառախուղի արտաքին տեսքի հետ փորձում է նաև տալ մառախուղի հոգևոր նկարագիրը: Ֆիքրեթը մառախուղը բնութագրում է որպես համառ ու կամակոր («dûd-i muannid»), անվանում «Ճերմակ խավար» («zulmet-i beyzâ»), «փոշոտ ու սարսափելի պղտորություն/թանձրություն» («Bir tozlu ve heybetli kesâfet»), մառախուղը համեմատում է «խոր խավարի վարագույրի» հետ («derin sûtire-i muzlim»): Խոսվում է քաղաքի նյութական գեղեցկության ու բարքերի անկման մասին, որոնք միավորվել են «գեղեցիկ անբարոյականի» կերպարի ներքո: Ֆիքրեթը Ստամբուլը համեմատում է «բռնության հրապարակի» («sahn-i mezâlim»), «ողբերգություն զարդարող/քողարկող փայլող հրապարակի» («sahne-i zî-şâ'şaa-i hâile-pirâ») հետ:

Ֆյունունականների հայտի սկզբունքներից է՝ «արվեստն արվեստի համար է» («sanat sanat içindir»): Պաշտպանելով այս սկզբունքը՝ նրանք միաժամանակ առանձնացնում են գեղեցկություն («güzellik») և բարոյականություն («ahlâk») հասկացությունները, ընդ որում՝ առաջինը գերադասելով երկրորդից: Գեղագիտական հա-

<sup>10</sup> Гарбузова В.С., Поэты Турции XIX века, Ленинградский Университет, 1970, с. 78.

<sup>11</sup> Tevfik Fikret, Rûbab- ı Şikeste, İstanbul, 2005, s. 295.

յացքները վառ արտահայտված են նաև Ֆիքրեթի մոտ, սակայն նա առաջնային տեղը տալիս է բարոյականությանը: Պոետը թեև խոստովանում է Ստամբուլի գեղեցկությունը, սակայն խոր աստելություն է արտահայտում քաղաքի նկատմամբ՝ բարոյականության անկման պատճառով: «Մառախուղ» բանաստեղծության մեջ Ֆիքրեթը զարգացնում է գեղեցկության և բարոյականության միջև եղած հակադրությունը՝ առաջ քաշելով «կեղտոտ անբարոյականի» կերպարը.

خارجدن ، اوزاقدن آچیلان کوزلره سوزکون  
چشمان کبودکله نه مونس کورونورسک  
مونس ، فقط أك کیرلی قادینلر کبی مونس

Արտաքինից, հեռվից նայող աչքերի համար մելամաղձոտ,  
Կապուտաշյա ինչ հաճելի ես երևում:  
Հաճելի, սակայն ամենակեղտոտ կանաց նման հաճելի<sup>12</sup>:

Ֆիքրեթն իր աստելությունն է արտահայտում գոյություն ունեցող նյութական և հոգևոր կեղտի նկատմամբ. «կեղտ» («levs») բառը պարպերաբար կրկնում է: Պոետը տարանջատում է «երկերեսանիության կեղտ» («levs-i riyâ»), «նախանձության կեղտ» («levs-i hased»), «չափանդության կեղտ» («levs-i teneffî») <sup>13</sup>:

Բանաստեղծության մեջ նաև ներկայացված է Ստամբուլն իր ճարտարապետությամբ: Այստեղ ևս ուշադրության են արժանի Ֆիքրեթի մեկնաբանություններն ու նկարագրման եղանակները: Ճարտարապետական շինությունների շարքում հայտնվում են «մահաբեր աշտարակներ», «մռայլ պալատներ», «չարքերի նման սյուներ», «տանիքները փլված դպրոցներ» և այլն: Ֆիքրեթը նկարագրում է կեղտոտ ու փոշոտ փողոցները, «արագիլի և ուրուի հայրենիք դարձած հին ու մեռյալ սև կտուրներով տները, որոնք դառնությունով լցված օջախներ են դարձել»: Այնուհետև Ֆիքրեթը խոսում է սրբատեղերի մասին («սև mâbed»): Այստեղ ըստ երևույ-

<sup>12</sup> Սույն տեղում, s. 296.

<sup>13</sup> Սույն տեղում, s. 296.

թին Ֆիքրեթը նկատի է ունեցել Այա Սոֆյա<sup>14</sup>: Քանի որ այն արքունական պալատին ամենամոտ սրբավայրն էր: Պոետը քիչ հետո խոսում է նաև այլ մզկիթների մասին:

Բանաստեղծության վերջին հատվածում հեղինակը պատասխանում է հարցին, թե որոնք են այն դրդապատճառները, որոնք հանգեցրին քաղաքի անկմանը: Ֆիքրեթը մեղավոր է ճանաչում հոգին պղտոր, բարոյականությունը կորցրած մարդկանց: Ֆիքրեթը նկարագրում է Ստամբուլում ապրող մարդկանց կյանքը, նրանց վարքուբարքը, քաղաքում տիրող քաղաքական-սոցիալական իրավիճակը՝ քննադատելով Աբդուլ Համիդի վարչակարգը, որը պատճառ է դարձել հոգևոր կյանքի անկման, ծայրահեղ աղքատության: Մարդիկ մոռացել են արժանապատվության մասին, քաղաքում տիրում է համատարած վախի և սովի մթնոլորտ: Ֆիքրեթը քննադատում է այն մարդկանց, ովքեր հույսը դրել են Աստծու վրա և «ամեն ինչ ակնկալում են երկնքից»: Սակայն, մարդկանց նման «ստորացումը» («zül») իրականում կրոնի հետ կապված չէ<sup>15</sup>: Պետք է նշել, որ «կրոն-բնություն», «Աստված-մարդ» հակադրությունները Ֆիքրեթի հայացքների յուրահատկություններից է: Այս հակադրությունները Ֆիքրեթը զարգացնում է «հետսահմանադրական» ստեղծագործություններում: Ալլահին հավատացող և նրան ապավինող մարդուն հակադրում է սեփական ուժերին, բնությանը հավատացող և իր վրա հույսը դնող մարդուն: Նման կերպարի դերում հանդես է գալիս Ֆիքրեթի որդի Հալուքը, որը գալիս է՝ «ապագան արարելու»<sup>16</sup>:

Ֆիքրեթի մոտ գերիշխում է մաքրության ու պարզության զգացումը: Նրա համար ամենագարշելի արարածն աշխարհի վրա աճառակի, անբարոյականի կերպարն է:

Ստամբուլը հենց նման մի կնոջ հետ է համեմատում՝ ատելության ուժգին ցատումով: Քաղաքի զինվորական ու մտավորական խավը քաղաքականապես դատապարտված է, երիտասարդությունը

<sup>14</sup> Mehmet Kaplan, Tevfik Fikret: Devir-Şahsiyet-Eser, İstanbul, 2007, s. 151.

<sup>15</sup> Նույն տեղում, s. 152.

<sup>16</sup> Mehmet Kaplan, Şiir Tahlilleri I, Tanzimattan Cumhuriyet'e kadar, İstanbul 1997, s. 113.



անհոգ է, երեխաները՝ անբան ու անապաստան: Ֆիքրեթը մեծ ցավ է ապրում, որ ազգի զավակները նման իրավիճակում են հայտնվել<sup>17</sup>:

Ահա, այս անծայրածիր խավարի ու գարշառքի համապատկերը ծածկում է աստելությամբ ու անեծքով լի մառախուղը.

اورتون ، اوت اى هائله... اورتون ، اوت اى شهر  
اورتون و مؤيد اويو اى فاجرة دهر

Ծածկվիր, այո՛, հեյ ողբերգություն...ծածկվիր, այո՛, հեյ քաղաք,

Ծածկվիր և անվերջանալի քուն մտիր, հեյ համաշխարհային պոռնիկ<sup>18</sup>:

Այս տողերը երկու անգամ կրկնվում են բանաստեղծության մեջ: Սրանով Ֆիքրեթը փորձում է իր ընդվզումն արտահայտել կործանված կայսրության ու հասարակության դեմ<sup>19</sup>:

Ուշադրության են արժանի բանաստեղծության լեզվական առանձնահատկությունները: Թանփընարը, քննության ենթարկելով «Մառախուղ» բանաստեղծության կառուցվածքը, նկատում է, որ այստեղ փորձ է արվել հնարավորինս պաշտպանել տողերի անկախությունը և հավելում. «Դրա համար որոշ տողերը սև գրանիտի մեծաբեկորի վրա փորագրած աստիճանի նման ահագրու են»<sup>20</sup>:

Բանաստեղծության որոշ տողերում ընդգծվում է «s» բաղաձայնը.

پرورده ايدن سينه مسهوف سفاھت

Հաճույքի և զվարճանքի թուլություն սնող կուրծք:

تمسيل ايدن آسوده و فرسوده مساكن

Օրինակ դարձած անձայն ու հնամաշ կացարաններ:

Այստեղ շեշտադրվում է «t» բաղաձայնը.

<sup>17</sup> Kemalettin Şükrü, Tevfik Fikret, Hayatı ve Şiirleri, Kanaat Kütüphanesi, İstanbul, 1931, s. 45.

<sup>18</sup> Tevfik Fikret, Rübab- ı Şikeste, İstanbul, 2005, ss. 297, 299.

<sup>19</sup> Sabiha Sertel, Tevfik Fikret, İdeolojisi ve Felsefesi, Yurt ve Dünya Yayınları, İstanbul, 1946, s.28.

<sup>20</sup> Ahmet Hamdi Tanpınar, Edebiyat Üzerine Makaleler, İstanbul, 1969, s. 288.

بر توزلو كسافتدن عبارت بوتون ألواح

Մի փոշոտ թանձրությունից կազմված ամբողջ ցուցանակներ:

Առանձին տեղերում «a» ձայնավորը հանդես է գալիս «r» բաղաձայնի հետ.

ویرانه لر، ای ممکن پر خواب آشرا

Ավերակներ, էյ քնած շան ծնունդների դարանավայրեր:

ای قاپ قاره طاملرله برر ماتم بر پا

Սեփ-սև կտուրներով մեկական փուլ եկած սուգ:

Հոգնակիակերտ ածանցները ևս ընդգծված-շեշտադրված են այս բանաստեղծության մեջ.

ای دیدیه لر، طنطنه لر، شانلر، آلایلر

էյ փարթամություն, շքեղություն, փառք, շքերթներ:

Ողջ բանաստեղծությունն ուղեկցվում է «էյ» կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկությամբ: Այս առիթով Քափլանը գրում է. «Այն պահին, երբ մեր աչքերը սարսափով հետևում են մեր առջևում տարածվող ահասարսուռ պատկերի, մեր ականջները լցվում են վախով, ատելությամբ ու կարեկցանքով լի «էյ» բացականչություններով, որոնք կրկնվում են պոետի աստելությունից: Ֆանտաստիկ մի համապատկերին ուղեկցում է ծանր ու խեղդող մի երաժշտություն»<sup>21</sup>:

Այսպիսով, «Մառախուղը» կարծես թե նսեմացնում է Ստամբուլի՝ Արևմուտքի և Արևելքի մշտական գրավիչ քաղաքի անցյալի պատմական արժեքները, անգամ սրբավայրերն ու քաղաքում ապրող մարդկանց<sup>22</sup>: Այս բանաստեղծությամբ Ֆիքրեթը դուրս է գալիս «Servet-i Fünun» գրական շարժման կաղապարներից, սկսում ստեղծել պոետիայի նոր աշխարհ:

<sup>21</sup> Mehmet Kaplan, Şiir Tahlilleri I, Tanzimattan Cumhuriyet'e kadar, İstanbul, 1997, s. 111.

<sup>22</sup> İsmail Parlatır, Tevfik Fikret, Ankara, 2004, s. 72.

**ՔՆՆԱՐԿՈՒՄ**  
**2009 Թ. ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**  
**ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ**

**ԱՆՍՊԱՍԵԼԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԻՄ  
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ  
(ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ)**

«Թուրքիայում տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անսպասելի արդյունքներ են գրանցել», - այսօր ասուլիսում ասաց Արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանը: Նրա խոսքով, 2002 թվականից իշխող Արդարություն ու Ջարգացում կուսակցությունն առաջին անգամ իր արդյունքներում նվազում է գրանցել:

Կուսակցությունն ընտրություններում հավաքել է ձայների մոտ 39-40%-ը, ինչն էլ զիջում է խորհրդարանական ընտրություններում նրանց հավաքած ձայներին: Վարչապետ Էրդողանը շատ լուրջ է ընդունել այս արդյունքները, համարել դա ժողովրդի կողմից ուղարկված հորդոր՝ որոշակի քաղաքականություն վերանայելու համար: Նույնիսկ արդեն խոսք է գնում, որ կարող են փոփոխություններ տեղի ունենալ կառավարության կազմում, - ասաց Ռ. Սաֆրաստյանը:

Թուրքագետի հավաստմամբ, ընտրությունների այսպիսի ելքի պատճառները կարելի է տեսնել առաջին հերթին տնտեսական ճգնաժամի մեջ, որը մեծ ազդեցություն է թողնում Թուրքիայի վրա: Երկրում գործազուրկների թվի աննախադեպ աճը, տնտեսական զարգացման տեմպերի թուլացումը, և մյուս կողմից՝ ակնհայտ դարձած այն իրողությունը, որ իշխող կուսակցությունը շարունակում է թուրքական քաղաքական էլիտայի ավանդույթները, որի համաձայն կուսակցությունը նույնպես մխրճվում է կոռուպցիոն սկանդալների մեջ, ժողովրդի մեջ թուլացրել է կուսակցության հանդեպ ունեցած երբեմնի հավատը:

Ընտրություններում երկրորդ կարևոր դեպքը, ըստ Ռ. Սաֆրաստյանի, Պանթուրքիստական ազգայնական կուսակցության

ծայների ավելացումն է: Այս անգամ, տվյալ կուսակցությունը ծայների 17 %-ն է հավաքել, ինչն էլ, թուրքագետի խոսքով, լավ արդյունք է: Շարունակելով Թուրքիայում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների դրական արդյունքների թվարկումը, Ռ. Սաֆրաստյանը նկատեց, որ քրդաբնական շրջաններում քրդական ժողովրդավարական հասարակության կուսակցությունը կարողացել է հաղթանակի հասնել, մասնավորապես, հաղթանակ է գրանցվել Դիարբեքիի քաղաքապետի ընտրություններում: Իսկ մինչ այժմ, իշխող Արդարություն ու Ջարգացում կուսակցությունը կարողանում էր հաղթանակներ գրանցել մեծ քաղաքներում:

Մասնագետի խոսքով, հատկանշական է, որ ինչպես անցյալ մի քանի ընտրություններում, այս անգամ էլ Ստամբուլի մերձավոր որոշ շրջանների ընտրություններում ընտրվել են նաև հայ թեկնածուներ՝ ինչպես Արդարություն ու Ջարգացում կուսակցությունից, այնպես էլ՝ հիմնական ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցությունից:

Ընդհանուր առմամբ, գնահատելով Թուրքիայում կայացած ընտրությունները, թուրքագետ Սաֆրաստյանը նշեց, որ տնտեսական ճգնաժամը որոշակի ազդեցություն է սկսում ունենալ Թուրքիայի քաղաքական կյանքի վրա: Քաղաքական զարգացումները երկրում չեն ընթանում շատ ու շատ քաղաքական վերլուծաբանների կանխատեսած ուղով: Իսկ ընտրության արդյունքները հայ-թուրքական հարաբերությունների վրա լուրջ ազդեցություն չեն կարող ունենալ, քանի որ մասնագետի հավաստմամբ, Արդարացում ու Ջարգացում կուսակցությունը պահպանում է իր դիրքերը Թուրքիայի ներքին քաղաքական կյանքում, ուստի՝ արտաքին քաղաքական կյանքում կտրուկ փոփոխությունների չի կարելի սպասել:

<http://www.Panorama.am>, 30/03/2009

**ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՋԱՐԳԱՑՈՒՄ  
ԿՈՒՍԱԿՑՈՋԹՅՈՒՆԸ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.  
ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐԻ  
ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

11 օր առաջ թուրքիայում տեղի ունեցած ՏԻՄ ընտրությունները հասկանալիորեն արժանացան բազմաթիվ մեկնաբանությունների: Դրանք տարբեր էին՝ իշխող Արդարություն և զարգացում կուսակցության մոտավուտ վախճան կանխատեսել ընդհուպ մինչև երկրում նոր քաղաքական իրավիճակ ստեղծելու մասին ակնարկներ: Նպատակ չունենալով քննարկել այս կամ այն տեսակետը փաստենք մի քանի հանգամանքներ, որոնք հավանաբար, ավելի կհարստացնեն մեր պատկերացումները թուրքիայի ներքաղաքական զարգացումների, ինչպես նաև իշխող կուսակցության ներկայի ու հեռանկարների մասին:

**Առաջին.** Ս. թ. օգոստոսին կլրանա ԱԶԿ-ի հիմնադրման 8-րդ - տարելիցը: Բազմակուսակցական համակարգի հիմնադրման տարիներից ի վեր Արդարություն և զարգացում կուսակցությունը չորրորդն էր (Դեմոկրատական, Արդարություն և Մայր հայրենիք կուսակցություններից հետո), որ երկու անընդմեջ խորհրդարանական ընտրություններում հաղթեց, ընդ որում երկրորդ ընտրություններում ստանալով ավելի շատ քվեներ քան առաջինի դեպքում:

**Երկրորդ.** ՏԻՄ ընտրություններն ունեն որոշակի առանձնահատկություններ, քանզի դրանց դեպքում ընտրազանգվածը առավելապես կողմնորոշվում է անհատներով, քան կուսակցություններով: Այսինքն, ՏԻՄ ընտրությունների ժամանակ ընտրողներին առավելապես հետաքրքրում են տվյալ ՏԻՄ ղեկավարի թեկնածուի կառավարման ձիրքը, սոցիալական ու համայնքային գործունեությունը, քաղաքական փորձառությունը և այլն, հետո միայն գալիս են կուսակցական պատկանելիության և այլ գործոնները: Այդ է պատ-

ճառը, որ Ստամբուլում և Անկարայում 15 տարի շարունակ իշխում են իսլամամետ քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչները<sup>1</sup>:

**Երրորդ.** ՏԻՄ ընտրություններում շատ ավելի է մեծ է մասնակցությունը, օրինակ՝ վերջին ընտրությունների ժամանակ վեց միլիոնով ավելի ընտրող է մասնակցել ընտրություններին, որն էլ զգալիորեն ընդլայնել է ստացած քվեների քաղաքական աշխարհագրությունը: Եվ թվերի վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱԶԿ-ի ընտրազանգվածը գրեթե կայուն է մնացել բացառությամբ մեկ հանգամանքի, որի վերլուծությունը սպրդել է վերլուծաբաններից շատերի ուշադրությունը, որն էլ կլինի չորրորդ հանգամանքը:

**Չորրորդ.** ԱԶԿ-ի և երկրի իսլամական այլ ուժերի միջև պայքարը ևս ուշագրավ կերպով արտացոլվեց այս ընտրություններում: Շատերը ուշադրություն չդարձրին այն հանգամանքի վրա, որ 2008 թ. հոկտեմբերին Թուրքիայի քաղաքական իսլամի կնքահայրը՝ Նեջմեթին Էրբաքանը հրաժարվեց իր կողմից անուղղակիորեն ղեկավարվող Երջանկություն կուսակցության ղեկավարությունից և այդ կուսակցությունն ընտրեց նոր ղեկավար՝ Նուման Քուրթուլմուշին<sup>2</sup>: Առաջին հայացքից ոչինչ չասող այս անունն ու կուսակցական իշխանափոխությունը իրապես ազդեց ԱԶԿ-ի վրա: Խնդիրն այն է, որ նշված Երջանկություն կուսակցությունը կարելի է ասել, ԱԶԿ-ի «երկվորյակն» էր. երբ 2001 թ. Սահմանադրական դատարանը Ն. Էրբաքանի գլխավորած հերթական Առաքինություն կուսակցությունը փակեց մի քանի օրվա տարբերությամբ նրանից ծնվեցին երկու կուսակցություն՝ Երջանկությունը և ԱԶԿ-ն: Քանի

---

<sup>1</sup> Թուրքիայի ՏԻՄ-երում իսլամամետ կուսակցությունների քաղաքականության մասին տես Վահրամ Տեր-Մաթևոսյան, Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում 1970-2001 թթ., Երևան, Լիմուշ 2008, էջ 124-133:

<sup>2</sup> Yusuf Kanli, “AKP’s nightmare: Kurtulmuş”, October 28, 2008, [www.turkishdailynews.com.tr](http://www.turkishdailynews.com.tr); Felicity Party’s new leader Kurtulmuş says materialism cannot last, Today’s Zaman, Monday talks, Interview with Numan Kurtulmuş, <http://www.todayszaman.com/tz-web/detaylar.do?load=detay&link=157632>

որ առավել արմատական իսլամականները ապաստան գտան Երջանկությունում, ապա ԱԶԿ-ն ստացավ առավել չափավոր ու բարեփոխական կուսակցություն հեղինակություն, իր կողմ հրավիրելով նաև այն իսլամական ուժերին, որոնք քաղաքական իսլամի անհաջողության հիմնական պատճառ էին տեսնում Երբաքանին: Այսպիսով, Էրդողանը կարողացավ հմտորեն օգտագործել Երբաքանի դեմ գործող քաղաքական ուժերին, այն աշխատեց մոտ 7 տարի, սակայն, Երջանկություն կուսակցության նոր ղեկավարի ընտրությամբ ԱԶԿ-ն զգալիորեն թուլացրեց իր դիրքերը հավատացյալ ու կրոնամոլ թուրքերի շրջանում: Երկար տարիներ Քուրբուլմուշը հայտնի հեղինակություն էր քաղաքական իսլամն ներկայացնող տարբեր ուժերում և պատահական չէր, որ Էրդողանը քանիցս նրան հրավիրել էր ԱԶԿ և խոստացել բարձր պաշտոն: Ավելին, ԱԶԿ-ի անդամ քառասուն պատգամավոր բացեիբաց հայտարարել էին, որ պատրաստ են անցնել Երջանկության կողմը: Մի խոսքով, մի քանի ամիսների ընթացքում հավատացյալ մահմեդականների ձայներին տիրանալու պատճառով Էրդողան-Քուրբուլմուշ հակամարտությունը խորացավ և ամենայն հավանականությամբ այն ավելի կտրվի գալիք ամիսների ընթացքում:

ՏԻՄ ընտրություններում Երջանկություն կուսակցության ստացած ձայները ասածիս լավագույն ապացույցն է: Եթե 2007 թ. ընտրություններում այն ժամանակ դեռ Երբաքանի և Ռեջաի Քուբանի կողմից ղեկավարվող Երջանկություն կուսակցությունը ստացավ ընդամենը 817000 քվե կամ 2.34 տոկոս, ապա վերջին ընտրությունների ընթացքում, արդեն նոր ղեկավարի պայմաններում այդ կուսակցությունն ավելացրեց իր ձայների քանակը 1200000-ով, և ստացավ 5.2 տոկոս, որը 5-րդ արդյունքն էր<sup>3</sup>: Եթե վերցնենք, այն հանգամանքը, որ իսլամամետ ԱԶԿ-ի քվեները պակասել են մոտ 900.000-ով, իսկ մեկ այլ իսլամամետ Երջանկություն կուսակցու-

---

<sup>3</sup> 29 Mart 2009 Mahalli İdareler Seçimi Geçici Sandık Sonuçları ve 29 Mart 2009 Mahalli İdareler Seçimleri <http://www.ysk.gov.tr/ysk/index.html>; 29 mart yerel seçimleri, <http://secim2009.sabah.com.tr>



յանը ավելացել 1200000-ով, ապա կարելի է ենթադրել, որ Երջան-կություն կուսակցության օգտին քվեարկել են նաև ԱԶԿ-ի կրոնա-կան ազատականացման քաղաքականությունից ու խոստումներից դժգոհ պահպանողական մահմեդականները:

**Հինգերորդ.** Տնտեսությունը Թուրքիայում շարունակում է մնալ կարևոր գործոն ներքաղաքական կայունության տրամաչափը որոշելու համար: Ուշագրավ է, որ եթե 2001 թ. տնտեսական ճգնաժամը 2002 թ. ընտրությունների ժամանակ դարձավ ԱԶԿ-ի հաղթանակի հիմնական գրավականներից մեկը, ապա 2009 թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ մեկ այլ առավել համընդգրկուն ճգնաժամի պատճառով ԱԶԿ-ն կորցրեց զգալի ձայներ: Վերջին 7-8 տարիների ընթացքում երկրում ակտիվացած փոքր ու միջին ձեռնարկատերերը, «կանաչ կապիտալի» կողմնակիցները շատ զգայուն են այդ հարցում: Թուրքիայի կենտրոնական շրջաններում գործող այդ ձեռնարկատերերը, որոնք ստացել են նաև «անատոլիական վագրեր» անվանումը վերջին տարիներին դարձել են Թուրքիայի տնտեսության շարժիչ ուժերից մեկը: Տնտեսական քաղաքականության առումով ԱԶԿ-ն պետք է անի հնարավորինը այս ձեռնարկատերերի համար նոր շուկաներ հայտնաբերելու ու արտոնյալ պայմաններ ստեղծելու համար, այդ իսկ նպատակով, Թուրքիայի համար Հայաստանի հետ սահմանի բացումը հարմար առիթ կլինի այդ սոցիալական խավի որոշ հատվածին հաճոյանալու համար: Այսպիսով, հակաճգնաժամային ծրագրերը և տնտեսական քաղաքականությունը զգալիորեն կպայմանավորեն ԱԶԿ-ի քաղաքական ձակատագիրը հետագա 2-3 տարիների ընթացքում:

**Վեցերորդ.** ԱԶԿ-ի օգտին քվեարկողների սոցիալական պատկանելիության հարցը մշտապես ուշադրության արժանի է եղել: Նախ և առաջ կուսակցության կողքին դրվող իսլամամետ որոշիչը շատերի մոտ սխալմամբ այնպիսի տպավորություն է ստեղծում, որ ԱԶԿ-ի օգտին պետք է քվեարկելին գերազանցապես մոլի հավատացյալները, սակայն, 2002 թ. Թուրքիային հարկավոր էր երիտասարդ, դինամիկ, չկոռունպացված, հարգված և նախկին տասնամյակների ընթացքում մաքուր հեղինակություն վայելող քաղաքա-

կան թիմ: Անկախ այդ թիմի գաղափարաքաղաքական հակումներից հավանականությունը շատ մեծ էր, որ այդպիսի քաղաքական ուժի միավորումը կստեղծեր նոր իրավիճակ: Եվ 2002 թ. և 2007 թ. նորաստեղծ ԱԶԿ-ի օգտին քվեարկեցին ոչ միայն իսլամականները, այլ, 2001 թ. տնտեսական ճգնաժամի պատճառով մեծ վնասներ կրած միջին խավը, որին ևս բնորոշ էին գաղափարաքաղաքական կողմնորոշումների տարբեր բնութագրումները: Քաղաքների բնակիչները ևս դարձան ԱԶԿ-ի պաշտպաններ: Ահա ԱԶԿ-ի ընտրազանգվածի սոցիալական հենքը վերջին ընտրությունների ժամանակ՝

| Սելո                        | տղամարդ – 45 %          | կին – 51 %              |                               |
|-----------------------------|-------------------------|-------------------------|-------------------------------|
| Տարիքը                      | մինչև 28 տարեկան – 45 % | 28-ից 44 տարեկան – 49 % | 44-ից բարձր – 49 %            |
| Կրթություն                  | միջին դպրոց – 55 %      | ավագ դպրոց – 37 %       | բարձրագույն կրթություն – 24 % |
| Ընտանիքում երեխաների քանակը | 1-2 երեխան = 49%        | 3-ից 5 երեխա- 45%       | 5 և ավել երեխաներ 64%         |

ԱԶԿ-ն ներկայանում է իբրև միջին թուրքի կուսակցություն, որի համակիրները մերժում են աստվածապետությունը և պնդում կրոնի նկատմամբ հարգանքի անհրաժեշտություն, հավատում են ժողովրդավարական աշխարհիկ սկզբունքներին, սակայն պնդում են կրոնական գլխաշորի վերացման անհրաժեշտության մասին, կողմ են զգայուն, հասարակությունը պառակտող խնդիրների հարթ, փոխզիջումային ու խաղաղ լուծմանը:

ԱԶԿ-ն միակ կուսակցությունն է, որ քվեներ է ստացել Թուրքիայի բոլոր նահանգներից՝ գրեթե բոլոր ընտրական տեղամասերում բաժանելով 1-ից երրորդ հորիզոնականները և գրեթե բոլոր նահանգներում նրա ստացած քվեները 20 տոկոսից պակաս չեն: Թուրքիայի 81 վիլայեթներից 62-ում ԱԶԿ-ն առաջինն էր: Ընդհա-

նուր առմամբ, ԱԶԿ-ն երկրի հարավ-արևմուտքում թեև զգալի թվով քվեներ կորցրեց, սակայն ընդհանուր առմամբ նա ստացավ ձայների 40 տոկոսը, իսկ քրդամետ ԴՀԿ-ն 30 տոկոս:

2004 թ. ՏԻՄ ընտրությունների ժամանակ Ստամբուլում ԱԶԿ-ի թեկնածուի օգտին քվեարկեցին ընտրողների 45,3 տոկոսը, 2008 թ. 44,34 %, Անկարայում՝ 55 տոկոսը, 2009 թ.՝ 38,47 % իսկ Իզմիրում ՀԺԿ-ն ստացավ 47 տոկոսը, իսկ ԱԶԿ-ն՝ 32-ը, իսկ 2009 թ.՝ 54,39 %<sup>4</sup>:

Այժմ անդրադառնանք մի քանի այլ գործոնների, որոնք նպաստեցին ընտրությունների արդյունքի վրա: Ի հեճուկս հոռետեսական կանխատեսումների, որ մի շարք զգայուն հարցերի պատճառով կուսակցությունը կարող է երկատվել իսլամականների և առավել չափավորականների միջև, չիրականացավ: Բացառությամբ աննշան դեպքերի՝ էրդողանին և նրա համախոհներին հաջողվեց կուսակցությունը հիմնականում պահել համախմբված ու հավաք, նրանից նոր կուսակցություններ չառաջացան: Ավելին, ներկուսակցական ժողովրդավարության բացակայության պայմաններում էլ կուսակցությունը շարունակում է մնալ կուռ ու հավաք, և եթե կուսակցության շարքերից հնարավոր լինեն հոսքեր, ապա դրանք կլինեն գերազանցապես Երջանկություն կուսակցության նկատմամբ:

ԱԶԿ-ի գլխավոր քաղաքական ախոյանը՝ Հանրապետական-ժողովրդական կուսակցությունը, տարիների ընթացքում ուներ իր կայուն համակիրների թիվը: Սակայն, ի տարբերություն ԱԶԿ-ի այն չունի սոցիալական կողմնորոշման կուսակցության հեղինակություն, փոխարենը ՀԺԿ-ն թեև հայտնի էր, որ որպես սոցիալ-ժողովրդավարական գաղափարախոսության ջատագով, սակայն, այն շարունակում է մնալ վերնախավային, գաղափարական ու սոցիալական խավերից մեկուսացված: Կուսակցության ղեկավար Բայթալի օրոք, կուսակցությունը ոչ մի էական ձեռքբերում չի ունեցել, իսկ 1999 թ. ընտրություններում անգամ չհաղթահարեց անհրաժեշտ 10

---

<sup>4</sup> Yüksek Seçim Kurulu Başkanlığı, 22 Temmuz 2007 Milletvekili Genel Seçimi Sandık Sonu seçimleri, <http://www.ysk.gov.tr/ysk/index.html>

տոկոսի արգելքը: Իսկ վերջին ընտրություններում ՀԺԿ-ն մի քանի տասնյակ նահանգներում ստացավ 10 տոկոսից էլ պակաս քվեներ:

Հիմնադրման օրվանից ԱԶԿ-ի անցած ճանապարհը կարելի է բաժանել հետևյալ պայմանական փուլերի: Առաջին փուլը 2001 - 2002 թթ. երբ նորաստեղծ կուսակցությունը հեշտությամբ եկավ իշխանության՝ հենվելով տնտեսական ճգնաժամից տուժած ու 1990-ական թթ. քաղաքական անկայունությունից դժգոհ քաղաքացիների վրա, երկրորդ փուլը՝ 2003 – 2005 թթ, երբ ԱԶԿ-ին հաջողվեց երկրում իրականացնել մի շարք կարևոր օրենսդրական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական բարեփոխումներ՝ վայելելով Արևմուտքի աջակցությունը, 2005-2007 թթ. ԱԶԿ-ն զգալի հետընթաց արձանագրեց, որի բարձրակետը դարձավ 2007 թ. զինվորականության արձագանքը և միջամտությունը քաղաքական գործերին, և վերջին շրջանը, 2008-2009 թթ. են, երբ Թուրքիայի աշխարհիկ-հանրապետական քեմալական վերնախավը, զինվորականությունը որոշեց հակազդել ԱԶԿ-ին՝ նրան մեղադրելով «հակաաշխարհիկ» գործունեության համար:

2008 թ. կորսված տարի էր ԱԶԿ-ի համար: Դրա լավագույն ապացույցն էր 2008 թ. մարտին Գլխավոր դատախազի հայցադիմումը ՍԴ ԱԶԿ-ի գործունեությունը հակասահմանադրական ճանաչելու և նրա գործունեությունը կասեցնելու պահանջով: Հայցը ՍԴ-ից կողմից մերժվեց և թվում էր այդ հանգամանքը պետք է խթաներ բարեփոխումներին ուղղված ԱԶԿ-ի քաղաքականությանը, սակայն, ԱԶԿ-ն հանդես չեկավ նոր ռազմավարությամբ և սկիզբ առնող արտաքին քաղաքական մարտահրավերների ու համաաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում, ավելի վատթարացրեց իր հեղինակությունը: Փոխարենը, Էրգենեքոնի դատավարությանը զուգահեռ, ԱԶԿ-ի ղեկավարությունը կարծես ջինված ուժերի ղեկավարության հետ գնաց փոխզիջման ու կուսակցության ռեսուրսները ուղղեց փոխզիջման ընդունելի տարբերակների մշակմանը:

Մեկ այլ կարևոր հանգամանք, 2008 թ. ՍԴ-ը չփակեց ԱԶԿ-ի գործունեությունը և դա լրջորեն հաշվարկված քայլ էր: Ինչու<sup>5</sup>: Եթե ԱԶԿ-ի գործունեությունը դադարեր, ապա, ինչպես նախորդ տասնամյակների ընթացքում, շատ արագ կհիմնադրվեր մեկ այլ իսլամամետ կուսակցություն, նույն ղեկավարությամբ կամ նրանց կողմից նշանակված առաջնորդներով, և այդ վերածնված կուսակցությունը շատ ավելի մեծ արդյունքներ կունենար արտահերթ խորհրդարանական ու ՏԻՄ ընտրությունների ժամանակ: Երկրի աշխարհիկ-ազգայնական քեմալականները թույլ չտվեցին նույն սխալը ինչը նախորդ տասնամյակի ընթացքում, փոխարենը գիտակցեցին, որ ԱԶԿ-ին դժվար կլիներ միանգամից հրաժարվել իր «հակաաշխարհիկ» գործունեությունից և այդ ճանապարհով շատ ավելի դյուրին կլինի հակազդել ԱԶԿ-ին, քանզի վերջինս կգնա Թուրքիայի աջ-կենտրոնի կուսակցությունների սխալ ճանապարհով՝ ինչպես օրինակ Մայր հայրենիք և Ճշմարիտ ուղի կուսակցություններն էին:

Անցյալ տարի, մայիսմեկյան իրադարձությունների կապակցությամբ ԱԶԿ-ի դիրքորոշումը բավական խիստ էր և նրա հակազդեցությունը Ստամբուլի Թաքսիմ հրապարակում տեղի ունեցած ցույցի, բիրտ միջոցներով ցրելը, բացասաբար ազդեց կուսակցության հեղինակության վրա:

Քրդական հարցի կապակցությամբ Էրդողանի դիրքորոշումը, Դիարբեքիում հաղթելու կապակցությամբ նրա արտահայտությունները բավական սրեցին ԱԶԿ-ի նկատմամբ քրդերի ընդհանուր դիրքորոշումը:

Ազատ խոսքի, ՋԼՄ-ների նկատմամբ նրա ընտրական մոտեցումը հատկապես Դոդան հոլդինգի նկատմամբ, որին են պատկանում Milliyet, Hürriyet, Hürriyet Daily News, Star, Posta, CNN Turk, Kanal D լրատվամիջոցները ազդեցին Էրդողանի հեղինակության վրա<sup>5</sup>: Արդյունքում, ի տարբերություն նախորդ դեպքերի Թուրքիա-

---

<sup>5</sup> Special report on Doğan's tax case, <http://www.hurriyet.com.tr/english/specialreport/>

յի ամենակարող ՋԼՄ-ները ընտրությունների նախօրեին ավելի էին խստացրել Էրդողանի ու նրա կուսակցության դեմ մղվող պայքարը:

Թուրքիայի քաղաքական մշակույթի անբաժան բաղադրիչներից է ընտրողների մշտափոփոխ հավատարմության և կուսակցության պատկանելիության փոփոխության հարցերը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Թուրքիայի պարագայում գործ ունենք ուշագրավ ավանդույթի հետ, որովհետև Թուրքիան առաջին շարքերում է աշխարհում, որտեղ կուսակցության պատկանելիության մշտական փոփոխությունները, անկայուն կուսակցական համակարգերը խաթարում են կուսակցական կայունության համակարգերը:

Էրդողանի համար զարմանալի էր ընտրությունների արդյունքները, քանզի ՏԻՄ-երի այն ղեկավարներին, որոնք ԱԶԿ-ի անդամներ էին, նա մշտապես գերապատվություն է տվել, պետքու՛ջեց ֆինանսական օգնություն ցույց տալու հարցում: Նրա համար հատկապես անհասկանալի էր Անթալիայում կրած պարտությունը:

ՏԻՄ ընտրությունների արդյունքները կարելի է դիտել որպես ազդանշան ուղղված ԱԶԿ-ի ղեկավարներին ու քաղաքական ռազմավարներին: Արձանագրել, որ կուսակցությունը լուրջ հետընթաց է ապրել, որը էապես կփոխի կուսակցության մարտավարությունը, ոչ ճշգրիտ մտնեցում է: Կուսակցության նախընտրական մարտավարությունը, սեփական հնարավորությունների գերազնահատումը, քարոզարշավներում քաղաքական զգայուն թեմաներին հպանցիկ կամ մակերևույթային անդրադարձը, թույլ ու ուժեղ կողմերի սխալ գնահատումը, ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումը այն կարևոր հանգամանքներից էին, որոնց պատճառով կուսակցությունը մեկ միլիոնով նվազեցրեց իր ծայները և կորցրեց իր աջակցությունը էգեյան ու միջերկրածովյան վիլայեթներում, ինչպես նաև՝ հարավ-արևելյան քրդաբնակ վիլայեթներում:

ԱԶԿ-ին հարկավոր է շուտափույթ կերպով վերակազմակերպել սեփական քաղաքական առաջնահերթությունները և ներդնել բոլոր լծակները, նոր մշակված Սահմանադրությունը հանրաքվեի

դնելու գործում, քանզի դրա հետաձգումը ուղղակիորեն շրջվում է հենց ԱԶԿ-ի դեմ և ծառայում որպես ճնշման ազդեցիկ գործիք: Տաբուների ու արգելքների դեմ կուսակցության պայքարը կշարունակի հանդիպել լուրջ դիմադրության, եթե ԱԶԿ-ն շարունակի գործել 1982 թ. զինվորականների հեղինակած Սահմանադրության շրջանակներում: ԱԶԿ-ի նոր մարտավարությունն անհամատեղելի է Սահմանադրության հետ: Երկրի Սահմանադրական դատարանի արմատական դիրքորոշման շնորհիվ կարևոր օրենսդրական նախաձեռնությունները հայտնվում են կառավարության ու խորհրդարանի դարակներում: Անկախ ՏԻՄ ընտրությունների արդյունքից, երկրում առկա է «օրենսդրական ճգնաժամ», որն ավելի կխորանա այս տարվա ընթացքում, որը քաղաքականապես ավելի կբևեռացնի թուրքիան: Կա օրենսդրական առաջարկի ու պահանջարկի անհամատեղելիության լրջագույն խնդիր, կա ճիշտ մարտավարության ու դաշնակիցների ընտրության խնդիր: ԱԶԿ-ն, փաստորեն, չի կարող կառավարել հասարակության, իր խոստումների հիման վրա ձևավորված, ակնկալիքները և դրա պատճառը թուրքիայի զարգացման քեմալական մոդելի կողմնակիցներն են, որոնց համար ժողովրդավարության, մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների մասին դրույթները թուրքիան քայքայելու ուղղված քայլեր են: Այն խնդիրների փաթեթը, որոնք առկա էին երեք տարի առաջ (քրդական հարց, ավելիներ, ոչ-մահմեդականներ, ազգային ու կրոնական փոքրամասնություններ, երիտասարդության ու կանանց խնդիրներ և այլն) շարունակում են ձևավորել կուսակցության քաղաքական օրակարգը:

2002 թ. ի վեր ԱԶԿ-ի առաջնորդները, ակնարկելով կարծրացած պետական համակարգը բարեփոխելու և զգայուն թեմաները լուծելու իրենց ցանկության մասին, ոչ միայն ձեռք բերեցին մեծ հեղինակություն, այլև դարձան թիրախ պահպանողական շրջանակների ու բանակի համար: ԱԶԿ-ի դեմ մեղադրանքները հատկապես սաստկացան այս տարի կրոնական գլխաշորի արգելքը վերացնելու հունվար-փետրվարյան հաջողված նախաձեռնությունից հետո: ԱԶԿ-ի առաքելությունը սխալ ընկալելու պատճառով քեմալական-

ները կրկին կանգնած են անվերահսկելի գործընթացների հրծիգ դառնալու վտանգի առաջ: Քենալական վերնախավի սույն քայլը ի հայտ բերեց Թուրքիայի քաղաքական մշակույթի մի շարք բնութագրական առանձնահատկություններ: Նախ՝ այդ վերնախավն իր քաղաքական ընկալումների կողմնացույցն ուղղելով դեպի ԱԶԿ՝ թույլ տվեց համակարգային երկու բացթողում. ա) ԱԶԿ-ն ընկալեց, որպես զուտ քաղաքական կուսակցություն՝ անտեսելով կամ թերագնահատելով, որ այն համաթուրքական ընդգրկման իսլամական շարժման շարունակությունն էր քաղաքականության մեջ, բ) ԱԶԿ-ն ընդամենը կամուրջ էր կամ ցատկահարթակ Արևելյան Թուրքիայից սերող նոր բուրժուազիայի ու մտավորականների համար: Եվ երկրորդ՝ քենալականների կողմից ԱԶԿ-ն սկզբից ի վեր զուգահեռվեց ծայրամասից սերող քաղաքական ուժի հետ, որն ուներ մշտական ուղղորդման ու վերահսկման կարիք:

ԱԶԿ-ն իր հերթին անկարող եղավ հաղթահարել մի շարք կարծրատիպեր, որոնցից առավել նշանակալից էին նրա ինքնության ու անվտանգության հիմնական ուղենիշների շուրջ ընթացող քննարկումները: Փորձելով օտարվել իսլամական կողմնորոշում ունեցող քաղաքական ուժի պիտակից՝ ԱԶԿ-ի ղեկավարները առիթը բաց չէին թողնում հավաստիացնելու քենալականներին, որ իրենք «պահպանողական ժողովրդավարության» ինքնության կրող են<sup>6</sup> և հետևաբար ընդհանուր ոչինչ չունեն 1970-ականներից ի վեր երկրի քաղաքական իսլամի հիմնական գաղափարախոսության՝ «Ազգային տեսակետի» հետ: Սույն ձգտումը ԱԶԿ-ին դրդրեց մեկ այլ ծայրահեղության՝ սեփական ինքնության անվերջ փնտրտուքին, որի պատճառով էլ խոցելի դարձավ ամենատարբեր մեղադրանքների ու քննադատությունների համար: Ավելին. իր քաղաքական օրակարգի առանցքը դարձնելով մարդու իրավունքների պաշտպանության ու ԵՄ-ի հետ ինտեգրման գործընթացը՝ քննար-

---

<sup>6</sup> Recep Tayyip Erdoğan, *Conservative Democracy and the Globalization of Freedom in The emergence of a New Turkey, Democracy and AK Parti*, ed. Hakan Yavuz, Utah Series in Turkish and Islamic Studies, The University of Utah Press, Salt Lake City, 2006, pp. 333-340.



կումների ուղղությունը մղեց դեպի մեկ այլ իր համար անկառավարելի հարթություն: Այստեղից էլ սկիզբ է առնում նրա մյուս բացթողումները՝ անվտանգության երաշխիքների անկատարությունը և խոցելիության աստիճանը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

Թուրքիայում շարունակում են ընթանալ բարդ ու խորքային գործընթացներ, և դրանք ոչ սկսվում, ոչ էլ ավարտվում են ընտրություններով: Այս փուլում, ի հեճուկս վարչապետ Էրդողանի կողմից ժամանակ առ ժամանակ հրապարակ նետվող ոչ կառուցողական, իրավիճակը սրող հայտարարությունների, ՀՀ շահերից է բխում ուժեղ ԱԶԿ-ի գոյությունը: Լավատեղյակ լինելով այդ կուսակցության գաղափարական հիմնադրույթներին, հասարակության վերափոխման, բարեփոխման իրականացման նրա ծրագրերին, ինչպես նաև քաղաքական դաշտում ներկայացված այլ ուժերի քաղաքական առաջնահերթություններին, կարելի է պնդել, որ այս փուլում, Թուրքիայում այն այլընտրանք չունի:

## ԹՈՒՐՔԻԱ. ԱԶՆԻՎ ՄԻՋՆՈՐՐՈՒԹՅՈՒՆ ԹԵ՞ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Մարտ ամսվա վերջում Թուրքիայում անցկացված ՏԻՄ ընտրությունները կրկին հաղթանակ բերեցին իշխող ԱԶԿ կուսակցությանը: Գնահատելով անցած ընտրությունները կուսակցության նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը նշեց, որ Թուրքիան յուրահատուկ ուղերձ հղեց առ այն, որ ԱԶԿ-ին առաջվա պես վստահում են, սակայն այն պետք է որոշ չափով վերանայի իր քաղաքականությունը: Նկատի ունենալով ընտրազանգվածի ձայների որոշակի անկումը (շուրջ 8%-ով) և օգտվելով մոդայիկ դարձած «ֆուտբոլային դիվանագիտության» տերմինաբանությամբ կարելի է ասել, որ Էրդողանի կուսակցությունը թեև խաղի մեջ մնաց, բայց ստացավ «դեղին քարտ»:

Թեև ընտրարշավի ընթացքում հիմնականում արծարծվում էին ներքին խնդիրները, այնուամենայնիվ, անկասկած, ԱԶԿ-ի վարած արտաքին քաղաքականությունը իր ուրույն ազդեցությունը թողեց ընտրության արդյունքների վրա: Կառավարությունը վերադարձավ իր նախանշած օրակարգին՝ այդ թվում նաև միջազգային հարաբերությունների ոլորտում, որն ընտրություններին հաջորդած շաբաթվա ընթացքում հարուստ էր կարևոր իրադարձություններով:

Դեռևս 10 տարի առաջ Թուրքիայի ներկայիս նախագահը՝ Աբդուլլահ Գյուլը, որն այն ժամանակ իսլամական «Բարօրություն» («Refah») կուսակցության անդամ էր, խոստովանել էր մի ամերիկացի լրագրողի, որ իր երազանքն է ստեղծել երկրների մի ընկերակցություն, որում Թուրքիան կկարողանա միավորել Եվրոպան մուսուլմանական աշխարհի հետ: Նրա կարծիքով, Թուրքիան չի օգտագործում իր ողջ ներուժը, երբ դաշնակցում է միայն ԱՄՆ-ի կամ ԵՄ հետ: Հետագայում այդ գաղափարը տեսականորեն զարգացվեց Թուրքիայի վարչապետի խորհրդական Ահմեդ Դավութօղ-

լույի «ռազմավարական խորքերի» դոկտրինում: Ղրա հիմնական դրույթներից մեկը կայանում է նրանում, որ թուրքիայի ներուժը կարիք ունի այլընտրանքային դաշինքների՝ Ռուսաստանի, Իրանի և մուսուլմանական աշխարհի հետ, ինչը կավելացնի թուրքիայի ազդեցությունը ընդարձակ և բազմազգ տարածաշրջանում:

Թուրքիայի այդ նոր քաղաքական կուրսը, որը որոշ փորձագետներ անվանում են «նեսոմանիզմ», առաջին անգամ բարձրաձայնեց Ռեջեփ Թայիփ Էրդողանը 2004թ. Իսլամական Կոնգրես կազմակերպության ֆորումի ընթացքում: Նա նշեց, որ աշխարհաքաղաքական առաջնությունների տեղաշարժը դեպի Մեծ Մերձավոր Արևելք թույլ է տալիս թուրքիային՝ շնորհիվ իր բացառիկ աշխարհագրական դիրքի և պատմական փորձի, «կամուրջի» դեր խաղալ Արևմուտքի և Արևելքի միջև, դառնալ յուրատեսակ քաղաքական, տնտեսական և մշակութային «թափարգել» («buzdur»), կայունության գործոն՝ տարածաշրջանում: Էրդողանի կարծիքով, թուրքիան այն երկիրն է, որը «հաշտեցման և ազնիվ միջնորդության» մշակույթ կարող է բերել տարածաշրջանի երկրներին, որոնցից մեկն էլ ինքն է հանդիսանում:

Թուրքիայի արտաքին գործերի նախարար Ալի Բաբաջանը բազմիցս հայտարարել է, որ թուրքիան «տարածում է խաղաղություն, կայունություն և բարօրություն» մի մեծ տարածաշրջանում, որն ընդգրկում է Մերձավոր Արևելքը, Կովկասը, Կենտրոնական Ասիան, Բալկանները և Հյուսիսային Աֆրիկան: Որպես իր նոր աշխարհաքաղաքական դերի տնտեսական հիմք պաշտոնական Անկարան մեծ նշանակություն է տալիս իր՝ էներգետիկ ռեսուրսների տարանցման կարևոր հանգույց լինելու հանգամանքին: Հակամարտությունների և դիմակայությունների միջնորդական առաքելությունը ստանձնելու գործում էլ վկայակոչում է իր՝ օսմանյան շրջանի փորձը: Թե ինչ փորձ էր դա, շատ լավ գիտեն օսմանյան լծի տակ ապրած ժողովուրդները, հատկապես հայերս:

Սպիտակ տունն իր հերթին, դեռևս անցած վարչակարգի օրոք, սկսել էր ղեկավարվել «militant islam is a problem, soft islam is a solution» սկզբունքով: Թուրքիայի հենց այդ առանձնահատուկ դե-

րը, նշանակությունն ու առաքելությունն էր շեշտվում ԱՄՆ-ի նորընտիր նախագահ Բարաք Օբամայի բոլոր ելույթներում, թե՛ ՆԱՏՕ-ի 60-ամյակին նվիրված ժողովում, թե՛ ՆԱՏՕ- ԵՄ գագաթաժողովում, թե՛ «Քաղաքակրթությունների դաշինք» համաժողովի շրջանակներում Թուրքիա կատարած նրա ողջ այցի ընթացքում:

2003թ. -ից, երբ Թուրքիայի խորհրդարանը մերժեց Իրաք ներխուժելու համար ԱՄՆ-ի զորքերին իր ռազմաբազաները տրամադրելու վերաբերյալ նախագիծը, երկու երկրների հարաբերություններում զգալի սառնություն էր նկատվում: Օբամայի այցը նախապատրաստելու համար Թուրքիա ժամանած ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնը հայտարարեց, որ նոր վարչակազմը նոր քաղաքական գիծ է որդեգրել և որ «ԱՄՆ-ը ձգտում է տեսնել Թուրքիան որպես ատլանտյան ուժեղ դաշնակից, որը նաև մերձավորարևելյան երկիր է, այլ ոչ՝ թե որպես մերձավորարևելյան երկիր, որը նաև ՆԱՏՕ-ի անդամ է »:

Օբամայի այցը Թուրքիա կարելի է գնահատել որպես չափազանց հաջողված (հրուշակեղենի վաճառողները նույնիսկ հատուկ փախլավա էին պատրաստել նրա դաջված պատկերով, իսկ թուրքական ամսագրերից մեկը նրա լուսանկարը տպագրել էր իր շապիկին՝ հանրապետության հիմնադիր Քեմալ Աթաթուրքի ֆոնին): Սակայն նույնիսկ քաղաքականությանը ոչ մոտ կանգնած մարդու համար էլ պարզ է, որ շեշտելով Թուրքիայի գլոբալ դերակատարման նշանակությունը, ԱՄՆ-ը իրականում լուծում է սեփական խնդիրները, ուժեղացնում առաջին հերթին սեփական ազդեցությունը: Թուրքիան անհրաժեշտ է ԱՄՆ-ին, քանի որ ծրագրվում է դուրս բերել ամերիկյան զորամիավորումները Իրաքից և նոր զորամիավորումներ ուղարկել Աֆղանստան: Պաշտոնական Անկարան էլ իր հերթին, առանց հապավելու, ձեռնամուխ է եղել իրեն վերագրվող «դերի կատարմանը»:2009թ. ապրիլի 1-ին, անմիջապես ընտրություններից հետո Աբդուլլահ Գյուլը Անկարայում ընդունեց Աֆղանստանի նախագահ Համիդ Քարզային և Պակիստանի նախագահ Ալի Ջարդարիին: Որոշ տեղեկությունների համաձայն, մարտի 11-ին Աբդուլլահ Գյուլը Օբամայից հատուկ նամակ է տա-

րել Իրան, որտեղ առաջարկվում է օգտագործել Թուրքիայի միջ-նորոգությունը ԱՄՆ-ի և Իրանի միջև երկխոսություն սկսելու համար: Նմանատիպ միջնորդություն էր առաջարկում նաև վարչապետ Էր-դողանը դեռևս 2008թ. նոյեմբերին: Պաշտոնապես, որպես այդ այ-ցի պատճառ, կազմակերպվել էր Տնտեսական համագործակցության կազմակերպության ժողով: (Կազմակերպությունը հիմնադրվել էր 1985թ. Թուրքիայի, Իրանի և Պակիստանի կողմից: 1992 այդ կազմակերպությանը անդամակցեցին Աֆղանստանը և մի շարք նախկին խորհրդային պետություններ, այդ թվում և Ադրբեջանը: Կազմակերպությունը, սակայն, անցած ժամանակաշրջանում, իրեն որևէ կերպ քաղաքականորեն չի դրսևորել: Հավանաբար, ժողովը փորձ էր վերակենդանացնել այն, նպաստել Թուրքիայի և Իրանի առավել մերձեցմանը նաև դրա շրջանակներում):

Նշենք, որ վերջին ժամանակներս, չնայած զգալի ներքին և արտաքին տարբերությունների, Անկարայի և Թեհրանի հարաբե-րություններում որոշ մերձեցում է նկատվում:

2006թ. Իրանը Թուրքիային հանձնեց ՔԲԿ-ի (Քրդական բանվորական կուսակցություն) որոշ զինյալների, ինչպես նաև դուրս բե-րեց իր տարածքից նրանց ռազմակայանները: Իրանը գնահատեց նաև Իրաքյան պատերազմի նախօրեին Թուրքիայի կոչը՝ հարցի լուծմանը մասնակից դարձնել ՄԱԿ-ին և հատկապես Իրանին և Սիրիային (այն երկրները, որոնք ինչպես և Թուրքիան, ունեին քրդական խնդիր): Թուրքիան անհանգստություն է հայտնում Իրա-նի միջուկային ծրագրի, ինչպես նաև թուրքական կապիտալի ներ-թափանցման դեմ խոչընդոտների (40 թուրքական ընկերու-թյուն) հարուցման կապակցությամբ: Բայց մերձեցման ջանքերը դրական միտում ունեն: Չնայած դրան, Իրանի նախագահ Ահմա-դինեջադը մարտի 12-ին փոխանցեց Գյուլին, որ Թեհրանը Թուր-քիայի միջնորդության կարիքը չունի: Գյուլը հանդիպեց նաև Իրա-նի հոգևոր առաջնորդ Ալի Խամենեյի, ինչպես նաև փորձագետնե-րի խորհրդի անդամների հետ: Խամենեյին հասկացրեց, որ Իրանը սպասում է ոչ թե միջնորդների, այլ որոշակի քայլերի ԱՄՆ-ի կող-մից, որոնք ցույց կտան, թե որքանով են արժանահավատ ԱՄՆ-ի

վարչակարգի հավաստիացումները՝ իսլամական աշխարհի հանդեպ նոր քաղաքականություն վարելու վերաբերյալ:

Վարչապետ Էրդողանի «դեմարշը» Դավոսի գագաթաժողովում նրան կարծես թե ողջ իսլամական աշխարհի առաջնորդ դարձրեց (հաջորդ օրը Գազայի շրջանի փողոցները հեղեղված էին թուրքական դրոշներով, իսկ Ստամբուլում նրան դիմավորում էին, որպես հերոսի): Իհարկե այդ «հերոսությունը» շատ պրագմատիկ նպատակներ էր հետապնդում՝ առջևում ՏԻՄ ընտրություններն էին, պետք էր բարձրացնել կուսակցության վարկանիշը (հենց Դավոսից հետո հարցազրույցներից մեկում Էրդողանը իր կուսակցության համար կանխատեսում էր գրեթե 50% -ոց աճ): Դա ուներ նաև անձնավորված երանգ, բանն այն է, որ վարչապետ Օլմերտը չէր զգուշացրել Էրդողանին, որը միջնորդական առաքելություն էր իրականացնում պաղեստինա-իսրայելական բանակցություններում Գազան ռմբակոծելու վերաբերյալ:

Թուրքիայի մուսուլմանական աշխարհում «հերոս» դառնալը տեղավորվում էր նաև ԱՄՆ-ի հեռահար նպատակների շրջանակում՝ նշված երկիրը վճռորոշ խաղացող դարձնել տարածաշրջանում: Ինչևէ, երկու դաշնակից երկրների՝ Թուրքիայի և Իսրայելի միջև լարված հարաբերությունները «դավոսյան լեզվակրվից» հետո հարթվեցին և «ավելի փափուկ» Գյուլը վերջերս հայտարարեց, որ Իսրայելի հետ հարաբերությունները չափազանց գնահատելի են Թուրքիայի համար, նրանք պետք է ուժեղ մնան, սակայն Իսրայելի նոր վարչակարգը պետք է փոխի խոսելաձևը: Ինչպես նշեց վերջերս իր այցի ընթացքում ԱՄՆ-ի նախագահ Օբաման, Թուրքիան կշարունակի իր միջնորդի առաքելությունը պաղեստինա-իսրայելական բանակցություններում:

Ընդհանրապես միջազգային գագաթաժողովներում կոշտ և սկանդալային հայտարարություններով հանդես գալը կարծես թե սովորական է դարձել Թուրքիայի դիվանագիտական «լեքսիկոնում»: ՆԱՏՕ-ի հոբեյանական գագաթաժողովում այդպիսի «սկանդալային դեմարշ» էր նաև Դանիայի վարչապետ Անդերս Ֆոհ Ռասմուսենի թեկնածության հետ կապված Թուրքիայի առար-

կությունը (Թուրքիան մեղադրում էր Ղանիայի վարչապետին քրդական Roj TV-ի գործունեությանը օժանդակելու, ինչպես նաև Ղանիայում Մոհամմեդ մարգարեի ծաղրանկարների տպագրմանը չխոչընդոտելու մեջ): Որոշ բանակցություններից, իսկ ավելի ճիշտ սակարկություններից հետո Թուրքիան համաձայնվեց այդ թեկնածությանը: Փոխարենը Թուրքիան իրավունք ստացավ ՆԱՏՕ-ի բարձրաստիճան հրամանատարության կազմում ընդգրկել մի քանի թուրք զեներալների, երաշխիք ստացավ, որ Աֆղանստանում զինաթափման գծով ՆԱՏՕ-ի քարտուղարի ներկայացուցիչը թուրք կլինի, ինչպես նաև կհետաձգվի Կիպրոսի հույների համար թուրքական նավահանգիստների բացման ժամկետը:

Թուրքական դիվանագիտությունը ջանում է մաքսիմալ օգուտ քաղել իր երկրի համար ցանկացած զարգացումների ընթացքում: Մանավանդ եթե վերջիններս կատարվում են իր անմիջական սահմանների մոտ: Օրինակ՝ Թուրքիան անմիջապես արձագանքեց ռուս-վրացական պատերազմին, առաջարկելով ստեղծել Կովկասյան անվտանգության և համագործակցության պլատֆորմ՝ տարածաշրջանի երկրների մասնակցությամբ: Այդ նախաձեռնության ապագան առայժմ մշուշոտ է, սակայն այդ ձևաչափում Թուրքիան հնարավորություն ստացավ ակտիվ դերակատարում ունենալ Կովկասում, Մոսկվայի հետ մշտական կոնտակտի մեջ գտնվել, թույլ չտալ, որ Ռուսաստանը միակողմանի որոշումներ ընդունի այդ տարածաշրջանում:

Թուրքիան փորձեց սակարկությունների դիմել նաև ԵՄ-ի հետ հարաբերություններում՝ հենվելով ԱՄՆ-ի բացարձակ օժանդակության վրա:

Հայտնի է, որ ԵՄ - Թուրքիա բանակցությունները՝ վերջինիս լիիրավ անդամակցության կապակցությամբ վերջերս գրեթե կանգ էին առել: Անկարան իր իսկ խոսքերով «փոքր և դանդաղ» քայլերով բարեփոխվելու մարտավարություն էր իրականացնում (բարեփոխման փաթեթի շուրջ 35 հոդվածներից առայժմ միայն 10 -են բացվել): Լուրջ խնդիրներ կան ազգային փոքրամասնությունների, զինվորականության՝ քաղաքականությանը չմիջամտելու, մարդու

իրավունքների հետ (ԲՕ –ի 301 հոդված) կապված: Կարևոր է նաև Կիպրոսի հարցը (հիմնական խնդիրը թուրքական բանակի ներկայությունն է չճանաչված ՀԿԹՀ-ում): Չնայած այն բանին, որ Թուրքիայի նախագահ՝ Աբդուլլահ Գյուլը բազմիցս հայտարարել է, որ «եթե հույները «այո» ասեին Անանի ծրագրի հանրաքվեի ժամանակ մենք պատրաստ կլինեինք դուրս բերել մեր զորքերը Կիպրոսից», իրականում նման ցանկություն կարծես թե չկա: Ինչպես նշում են որոշ թուրք փորձագետներ, Կիպրոսը կարող է այն «ոսկորը» դառնալ, որը Թուրքիան չի կարողանա կուլ տալ ԵՄ-ի հետ իր բանակցություններում:

Թուրքիան քաղաքական սակարկության մարտավարություն փորձեց իրականացնել, երբ տարվա սկզբում ռուս-ուկրաինական «գազային հակամարտության» պատճառով Եվրոպական երկրները «էներգետիկ սովի» եզրին էին գտնվում: Այդ ժամանակ NABUCCO նախագիծը (որում Թուրքիան տարանցիկ երկիր է նախատեսվում) սկսեց դիտարկվել որպես ռուսական գազային մենաշնորհին այլընտրանք չունեցող միակ պրոեկտը: Անկարան փորձեց կապել իր մասնակցությունը նախագծում Թուրքիայի՝ ԵՄ անդամկցելու հետ: Թուրքիայի «սակարկման մարտավարությունը» չունեցավ ցանկալի ազդեցությունը: Պրահայում կայացած ԵՄ-ԱՄՆ գազաթափողովի ընթացքում ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման նշեց, որ «Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ը կարևոր ազդակ կհանդիսանա իսլամական աշխարհի համար, կխարսխի Թուրքիայի ներկայությունը Եվրոպայում՝ հարթելով Արևելք - Արևմուտք դիմակայությունը»: Սակայն Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի հակադրությունը.-«ԵՄ հարցերը լուծում են այն պետությունները, որոնք մտնում են նրա կազմի մեջ: Ես միշտ դեմ եմ եղել այդ մուտքին և չեմ փոխում իմ կարծիքը»,-սառեցրեց թե՛ Թուրքիայի, թե՛ ԱՄՆ-ի ակընկալած արձագանքը: Իսկ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելը արձանագրեց, որ հարցը առաջմ բաց է մնում: Ներկայումս Թուրքիան որոշ հույսեր է կապում տարվա 2-րդ կեսին ԵՄ-ում նախագահություն ստանձնող Շվեդիայի հետ, որը Թուրքիայի ԵՄ-ը անդամակցելու կողմնակից է:



Վերջում նշենք, որ Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը ապրիլի 6-ին CNN –ին տված հարցազրույցում ասած, որ իրենք հույսը չեն կորցնում, որ ԵՄ-ը հրաշալի տեղեկացված է Թուրքիայի ազդեցության և ռազմաքաղաքական նշանակության մասին, որ Թուրքիան աշխարհի 17-րդ տնտեսությունն է, և որ իրենք, անդամակցելով ԵՄ-ը, ցանկանում են «մեծացնել կարկանդակի չափերը և օգտվել իրենց հասանելիք կտորից» (to make cake bigger, and to have its own piece of this cake):

Տարածաշրջանի կարևոր իրադարձությունների թվին են պատկանում հայ-թուրքական հարաբերություններում վերջին զարգացումները:

«Ֆուտբոլային դիվանագիտության» մեկնարկից հետո Հայաստանի և Թուրքիայի ղեկավարների միջև բազմաթիվ հանդիպումներ են տեղի ունեցել՝ Նյու-Յորքում, Ստամբուլում, Հելսինկիում, Դավոսում, Մյունխենում և այլն: Ամեն անգամ այդ հանդիպումներից հետո հայտարարվում է, որ կողմերը չափազանց մոտ են հարցի վերջնական լուծմանը: Երևան կատարած իր այցից հետո անմիջապես մեկնելով Բաքու, Գյուլն այնտեղ հայտարարեց, որ Թուրքիան մշտապես սատարել է Ադրբեյջանին և շարունակելու է այդ գիծը: Համաձայն իր վրա վերցրած «հաշտարարի և խաղաղարարի» դերի Թուրքիան շարունակում է ձևացնել, որ նա շահագրգռված է հայ-թուրքական բանակցություններում հասնել արագ լուծումների: Նմանատիպ հերթական փորձ էր նաև օգտագործել ԱՄՆ-ի նախագահ Բարակ Օբամայի այցը Թուրքիա՝ երկխոսության շղարշի ներքո լուծել սեփական խնդիրը՝ խոչընդոտել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին, «ձեռքի հետ էլ» կապել երկխոսությունը Ղարաբաղյան հակամարտության հետ: Անմիջապես Գյուլի երևանյան այցից հետո թուրքական NTV հեռուստաընկերությանը տված հարցազրույցում Թուրքիայի արտգործնախարար Ալի Բաբաջանն ասել էր, որ եթե թուրքերը հաջողեն արագ լուծել հայերի հետ խնդիրները, ապա կարիք չի լինի երրորդ երկրների պառլամենտների միջամտությանը և այս հարցի (ցեղասպանության) քննարկմանը: «Մենք կարող ենք նրանց ասել.

դուք ձեր գործին նայեք, մենք մեր հարցերը կարգավորում ենք», - մոտավորապես այսպիսի միտք էր հայտնել նա:

Ապրիլի 24-ի մոտենալուն ընդառաջ Ալի Բաբաջանը հորդորում էր «երրորդ կողմին» (տվյալ դեպքում ԱՄՆ-ի նախագահին, որը բազմիցս հայտարարել էր, որ իր երկիրը շահագրգռված է հայթորքական հարաբերությունների բարելավմամբ, մյուս կողմից էլ խոստացել էր ապրիլյան ուղերձում 1915թ. իրադարձությունները որակել որպես ցեղասպանություն) չխառնվել, քանի որ ցանկացած անզգույշ քայլ իբր կարող է վնասել գործընթացին:

Արձանագրենք, որ թուրք մամուլում, Օբամայի այցից առաջ չէին բացառում նրա ուղերձում «ցեղասպանություն» բառի օգտագործելը: Թուրք պատմաբան Թաներ Աքչամը մարտի 19-ին ելույթ ունենալով Քլարք համալսարանում նշել էր, որ ամեն տարի ամերիկացիները ականտես են լինում մի քաղաքական դրամայի կամ տխուր կատակերգության, երբ բոլորը գիտեն, թե ինչ է մտածում նախագահը և Կոնգրեսը: Սակայն թուրքերի ճնշման տակ նրանք ստիպված են ստել տարվա մեջ գեթ մեկ օր, թաքցնելով այն, ինչին հավատում են տարվա մնացած 364 օրերին:

Թուրքիայում նախագահ Գյուլի հետ տված համատեղ ասուլիսում Օբաման կարողացավ «դիվանագիտական հնարք» գործածելով արձանագրել, որ թեև ինքը չի հրաժարվել իր կարծիքից ցեղասպանության վերաբերյալ, այնուամենայնիվ խուսափեց այդ եզրը օգտագործելուց: Միաժամանակ Օբաման կոչ արեց երկու կողմերին առողջ և սթափ մոտեցում ցուցաբերել պատմության խրթին հարցերի վերաբերյալ:

Մեկնաբանելով Աբդուլլահ Գյուլի պատասխան ելույթը, նշենք, որ հայթորքական հարաբերություններում նա արձանագրեց մի քանի կետ.

1 - որ 1915 թ.-ի իրադարձություններից տուժել են երկու կողմերն էլ, որի համար նա ցավ է ապրում:

2 - որ այդ ողբերգությունը տեղի ունեցավ դրսի ուժերի միջամտությամբ, որոնց դրդմանը արձագանքեցին «մեր որոշ քաղաքացիներ»:

3 - որ հայկական սփյուռքը օգտագործում է 1915թ. իրադարձությունները ինքնահաստատվելու համար:

4 - որ պատմությունը չի կարող դառնալ քաղաքական գործիչների և խորհրդարանների դիտարկման առարկա:

5 - որ այդ հարցով պետք է զբաղվեն պատմաբանները և որ Թուրքիան պատրաստ է ընդունել ցանկացած պատմական հանձնաժողովի անկողմնակալ եզրահանգումը:

Պետք է նշել, որ այն բանից հետո, երբ արտասահմանյան մամուլում լուրեր տարածվեցին հայ-թուրքական սահմանի հնարավոր բացման վերաբերյալ (սահմանը փակ է 1993թ.-ից) և նույնիսկ կոնկրետ ժամկետներ նշվեցին, Ադրբեջանը ակտիվ ջանքեր գործադրեց՝ հայ-թուրքական հարաբերությունների հնարավոր կարգավորումը Ղարաբաղյան հարցի լուծման հետ կապելու ուղղությամբ: Ադրբեջանը նույնիսկ դիմեց բացահայտ շանտաժի՝ սպառնալով դադարեցնել գազի մատակարարումը Թուրքիա: Վրաստանում գտնվող Ադրբեջանի արտգործնախարար էլմար Մամեդյարովը հայտարարեց, որ իրենք պատրաստ են Վրաստանի հետ պայմանագիր կնքել՝ ուղղորդելով ադրբեջանական գազը դեպի Ուկրաինա: «Հայկական օկուպացիայի պայմաններում սահմանի բացումը հակասում է Ադրբեջանի շահերին», - ասել էր նա: «Ձայնակցելով» Մամեդյարովին Թուրքական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի (TURKSAM) տնօրեն Սինան Օզանը ընդգծել էր, որ թուրք-հայկական սահմանի բացումը որևէ մեկի համար անակնկալ չպետք է լինի, սակայն Անկարան հենց այնպես սահման չպետք է բացի, փոխարենը նա պետք է պահանջի համապատասխան զիջումներ:

Միաժամանակ Լոնդոնում գտնվող վարչապետ Էրդողանը հայտարարել էր, որ Թուրքիան չի դադարեցնի Հայաստանի շրջափակումը, քանի դեռ հայերը չարունակում են պնդել 1915թ.-ի ցեղասպանության փաստը և գրաված պահել Ադրբեջանի տարածքը: «Մենք չենք կարող մենակ թողնել մեր ադրբեջանցի եղբայրներին», - ասել էր նա: Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիևի Ստամ-

բուլի գագաթաժողովին չմասնակցելը նույնպես այդ շանտաժի մարտավարության մի մասն էր:

Այսպիսով, գլոբալ աշխարհաքաղաքական տեղաշարժերի պայմաններում Թուրքիան փորձում է իր տեղը գտնել տարածաշրջանում՝ ձգտելով գերիշխող դերակատարում ունենալ և մաքսիմալ չափով օգտագործել նշված հանգամանքները իր ազգային շահի համար: Այս առումով Կովկասը դառնում է տարածաշրջանի, ինչպես նաև գլոբալ խաղացողների հետաքրքրության կենտրոն: Թուրքիան ընտրել է «ակտիվության մարտավարություն»՝ փորձելով վերահսկողության տակ առնել տարածաշրջանի գործընթացները, ինչպես նաև անվտանգ դարձնել իր սահմանները նորմալ հարաբերություններ հաստատելով հարևանների հետ: Այս առումով նրա արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում է նաև Հայաստանը: Սակայն Թուրքիայի քաղաքականությունը Հայաստանի հանդեպ թեև ենթարկվել է որոշ արտաքուստ «կոսմետիկ փոփոխությունների» մնում է նույնը: Թուրքիան շարունակում է օրակարգում պահել հայ-թուրքական կարգավորման հարցում իր առաջ քաշած նախապայմանները.

1 – պաշտոնապես ամրագրել 1921թ.-ին Կարսի պայմանագրով նշված սահմանները (այս հարցում նրանք համագործակցելու են Ռուսաստանի հետ):

2 – չեզոքացնել Հայոց Ցեղասպանության ճանաչման գործընթացը (փորձելով հակադրել Հայաստանը և Սփյուռքը, ինչպես նաև փոխադրելով հարցի քննարկումը քաղաքական ոլորտից այլ՝ պատմական հարթություն):

3 – պայմանավորել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումը հայ - ադրբեջանական բանակցությունների խթանմամբ (օգտագործելով ռուս-ամերիկյան մրցակցությունը՝ աշխատելով մշտապես ներգրավված լինել բանակցությունների մեջ ուղղակի կամ անուղղակի ձևաչափով):

### Լրացում

Երբ պատրաստ էր սույն հոդվածը, ապրիլի 22-ի լույս 23 գիշերը աշխարհի բազմաթիվ լրատվամիջոցներով տարածվեց Շվեյցարիայի միջնորդությամբ ստորագրված հայ-թուրքական համատեղ հայտարարությունը, որով կողմերը պատրաստակամություն էին հայտնում կարգավորել երկկողմ հարաբերությունները առանց որևէ նախապայմանի: Բազմաթիվ երկրներ, ԵՄ-ը և ԱՄՆ-ը ողջունեցին և իրենց աջակցությունը հայտնեցին այս գործընթացին: ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման իր ապրիլի 24-ի ուղերձում չօգտագործեց «ցեղասպանություն» եզրը, փոխարինելով այն «Մեծ եղեռն» արտահայտությամբ: Սույն հայտարարությունը միանշանակ չընդունվեց թե՛ Թուրքիայում, թե՛ Հայաստանում: Ապրիլի 27-ին տեղի ունեցած Թուրքիայի ԱԱԽ նիստում վերահաստատվեց, որ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը խոչընդոտելու ջանքերը մնում են երկրի քաղաքականության օրակարգում: Միևնույն ժամանակ Թուրքիայի քաղաքական և զինվորական բարձրաստիճան պաշտոնյաներն իրենց հայտարարություններում շարունակում են պնդել, որ Հայաստանի հետ սահմանը չի բացվի, մինչև հայկական զորքերը դուրս չբերվեն «ադրբեջանական գրավյալ տարածքներից»: Ապրիլի 25-ին տեղի ունեցավ նաև ՀՀ Անվտանգության խորհրդի նիստը: ՀՀ նախագահ Ս. Սարգսյանը հավաստիացրել է, որ շարունակելու է առանց նախապայմանների և ողջամիտ ժամկետում կարգավորել հայ-թուրքական հարաբերությունները, որ թույլ չի տա շաղկապել հայ-թուրքական հաշտեցման այդ գործընթացը և ԼՂՀ հիմնախնդրի կարգավորումը, որ ցեղասպանության խնդիրը որևէ կերպ կասկածի տակ չի դրվելու: Պաշտոնական Երևանը հավաստիացրել է նաև, որ բանակցությունների բովանդակությունը չի համապատասխանում թուրքական «Սաբահ» թերթում հրապարակված այն տեղեկատվությանը, ըստ որի «ճանապարհային քարտեզ» փաստաթղթի հիմքում ընկած են 5 կետեր՝ Կարսի պայմանագրի ճանաչումը, սահմանի և դիվանագիտական ներկայացուցչությունների բացումը, պատմաբանների հանձնաժողովի ստեղծումը և «ճանապար-

հային քարտեզի» վավերացումը երկու երկրների խորհրդարանների կողմից («Թուրքիան առաջին հերթին խաբելու է ինքն իրեն»․ հարցազրույց ՀՀ Արտգործնախարար Է. Նալբանդյանի հետ․-«168 ժամ», ապրիլի 28-29, 2009)։ Արձանագրենք նաև, որ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները իրենց համատեղ ասուլիսում (Երևան, ապրիլի 27) նշեցին, որ հայ-թուրքական հարաբերությունները և ԼՂ հակամարտության կարգավորումը առանձին գործընթացներ են, որոնք սակայն ընթանալու են զուգահեռ (Ասուլիս՝ ողջամիտ հույսերի մասին․-«168 ժամ», 28-29 ապրիլի 2009)։

Ամփոփելով նշենք, որ դժվար է մեկնաբանել մի գործընթաց, որն ընթանում է փակ և որի հետ կապված որևէ պաշտոնական փաստաթուղթ, բացառությամբ համատեղ հայտարարության, առայժմ չի գաղտնագրվել։ Բացառված չէ, որ Թուրքիան առերևույթ հանելով ղարաբաղյան հարցի կարգավորման նախապայմանը բանակցությունների օրակարգից, «խաղաղարի և հաշտեցնողի» իմիջ ձեռքբերելով, կփորձի օգտագործել այն՝ արդեն առանձին հայ-ադրբեջանական կարգավորման գործընթացում։ Համենայն դեպս, առայժմ տպավորությունն այնպիսին է, որ Թուրքիան շահագրգռված է ոչ այնքան հայ-թուրքական հարաբերությունների լիարժեք կարգավորմամբ, որքան բուն բանակցությունների գործընթացը իր շահերին ծառայեցնելու նպատակով։ Ինչպես կհանգուցալուծվի սույն մտահոգիչ իրավիճակը, ցույց կտան հետագա զարգացումները։

### Աղբյուրներ և գրականություն

1. Սաֆրաստյան Ռ., Թուրքիան և Կիպրոսյան հիմնախնդիրը․ «Մեծ խաղի դրվագներ»․-21-րդ դար, 2006, N2, էջ 74-79։
2. Շաքարյան Ա., Թուրքիայի դերը «Մեծ Մերձավոր Արևելք» նախագծում․-Հանրապետական, 2005, N7, էջ 29-32։
3. ABD- İran gerginliği ve Türkiye'ye etkileri.-TESSAM yayınları, Ankara, 2007.

4. Görgülü A., Turkey-Armenia Relations: a vicious circle.-TESEV publications, Istanbul, 2008.
5. Հայաստան-Թուրքիա. Բաց խոսակցություն.- Երևան, 2005:
6. Современная Турция: хроника политической жизни (2002-2006г).-Бишкек, 2006
7. Гурьев А., К итогам визита в Россию президента Турции А. Гюля.-www.iimes.ru
8. Гурьев А., О турецко-израильских отношениях.-www.iimes.ru
9. Lütem O.,Bilateral Relations between Turkey and Armenia.-Review of Armenian Studies, ASAM publications, 2008, N17, p. 7-44.
10. Safrastyan R., On Turkey's new undertaking in South Caucasus.- www.noravank.am
11. Hafizoglu R., March 29 municipal elections are day to choose between Turkey's past and future.-www.trendnews.com
12. Barrack Obama Visit provides condition for opening Turkey-Armenia border: Turkish Center for int'l Relations and Strategic Analysis Director.-www.turkishweekly.net
13. Арунова М., Турецко-иранские отношения на современном этапе.-www.iimes.ru
14. Trumpet J., Neo-Ottomanism.-www.newsbeet.com
15. Çamlıbel C., Mulling Nagorno-Karabagh knot.-www.hurriyet.com.tr
16. Караваев А., О возможности создания организации регионального взаимодействия на Южном Кавказе.-www.ia-centr.ru
17. Çelikpala M., The new battle zone for global hegemony: the Caucasus.-www.turkishdailynews.com
18. Выйти из западной геополитической ловушки: Южная Осетия, Кавказ, Армения, Карабах, Турция.-www.fondsk.ru
19. Маркедонов С., Турция возвращается на Кавказ.-www.w.3.org/Tr
20. Armenian-Turkish Negotiations: a Cause for Concern.-www.hairenik.com

21. Миркадыров Р., Баку предъявил ультиматум Анкаре.-  
[www.zerkalo.az](http://www.zerkalo.az)
22. Тарасов С., Виден ли свет в конце карабахского тоннеля.-  
[www.regnum.ru](http://www.regnum.ru)
23. Широкий взгляд на Большой Ближний Восток.- Россия в  
глобальной политике, [www.globalaffairs.ru](http://www.globalaffairs.ru)
24. Дубнов В., Контрапункт в турецком марше.-  
[www.livejournal.com](http://www.livejournal.com)
1. Akçam: Obama should recognize Genocide and Liberate Turks  
and Armenians.-[www.hairenik.com/weekly](http://www.hairenik.com/weekly)
2. Turkey-EU: Cyprus, Sweden and Elections in 2009.-  
[www.w3.org/Tr](http://www.w3.org/Tr)
3. Турция помирим США с Ираном.- [www.rbc.ru](http://www.rbc.ru)
4. Laçiner S., Obama should not neglect Turkish Approach.-  
[www.turkishweekly.net](http://www.turkishweekly.net)
5. Из бастюна в страну-трубопровод: взгляд из Нагорного  
Карабаха на перспективу открытия армяно-турецкой  
границы.- [www.regnum.ru](http://www.regnum.ru)
6. Text: Full transcript of Mark Parris interview.-[www.hurriyet.com.tr](http://www.hurriyet.com.tr)
7. Turkey's Domino Theory.- Washington Post, 21 December,  
2008.

#### Կայքէջեր

1. [www.tbmm.gov.tr](http://www.tbmm.gov.tr)
2. [www.mfa.gov.tr](http://www.mfa.gov.tr)
3. [www.zaman.com.tr](http://www.zaman.com.tr)
4. [www.sabah.com.tr](http://www.sabah.com.tr)
5. [www.radical.com.tr](http://www.radical.com.tr)
6. [www.milliyet.com.tr](http://www.milliyet.com.tr)
7. [www.CNNturk.com](http://www.CNNturk.com)
8. [www.regnum.ru](http://www.regnum.ru)
9. [www.panarmenian.net](http://www.panarmenian.net)
10. [www.radioliberty.am](http://www.radioliberty.am)



## ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## «ԱՆԻԾՎԱԾ ԱՌՅՈՒԾԻ» ՔԱՂԱՔԱԿՐԹՎԵԼՈՒ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2007թ. գարնանը\* Երևանում լույս տեսավ հույն պատմաբան Յակովոս Ակցոլլուի «Անիծված առյուծի բնաջնջումը» աշխատությունը: Վերջինս նվիրված է, ինչպես նշում է հեղինակը, 1964 թ. Թուրքիայից էթնիկ հույների՝ բարբարոսական ձևերով ու մեթոդներով արտաքսման 40-ամյակին:

Ինչպես հայտնի է, XIX դարի վերջերից սկսած սուլթան Աբդուլ Համիդ II-ի կողմից ոչ թուրք ազգերի նկատմամբ իրականացրած ներքին քաղաքականությունը, ըստ էության, հանդիսացավ այն բազիսը, որը տարբեր ձևերով ու չափերով արտահայտվեց ոչ միայն XX դարի ընթացքում:

1964 թ. գարնանը Թուրքիայի վարչապետ, Մուսթաֆա Քեմալի հավատարիմ զինակից, Մուսթաֆա Իսմեթ Ինյոնյուի նախածեռնությամբ և նրա անմիջական ղեկավարությամբ Կ. Պոլսից արտաքսվեցին տասնյակ հազարավոր հույներ: Ըստ էության, Թուրքիայում «հունաթափման» քաղաքականության հերթական փուլն էր իրականացվում՝ «հայաթափումից» հետո:

Հարկ է ընդհանուր գծերով արձանագրել, որ թուրքական պետության մեջ հետագա տասնամյակներում համարյա շատ քիչ բան է փոխվել: Երիտթուրքական ոճրագործություններից հետո բավական ժամանակ է անցել, սակայն նոր սերունդները ոչինչ չգիտեն դրա մասին: Պատճառն ակնհայտ է: Թուրքական իրար հաջորդող իշխանությունները իրենց նախորդների կատարած գազանություն-

---

\* 2007թ. գարնանը Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Ճարտարագետ» հրատարակչությունը լույս ընծայեց Հունաստանի Թրակիայի Դեմոկրիտի անվան Սևծովյան երկրների լեզուների բանասիրության և քաղաքակրթության ֆակուլտետի դասախոս Յակովոս Զ. Ակցոլլու «Անիծված առյուծի բնաջնջումը» աշխատության հայերեն թարգմանությունը:

ները հետևողականորեն թաքցրել են իրենց ժողովրդից: Տասնամյակներ շարունակ Թուրքիայում իշխանության գլուխ կանգնած են եղել Մուսթաֆա Քեմալի կողմից խորամանկորեն քողարկված, քաղաքական պատգամներով ղեկավարվող քաղաքական տարբեր ուժեր:

Չնայած միջկուսակցական դաժան պայքարին, մեկը մյուսին հաջորդող քաղաքական ուժերի ծրագրային հիմնադրույթները իրարից էապես, կամ էլ ոչնչով չեն տարբերվում, մասնավորապես, եթե խոսքը վերաբերում էր հայկական կամ հունական ցեղասպանությունների եղելության խնդիրներին կամ պանթուրքիստական - «գորշ գայլերի» քաղաքական գաղափարախոսությանը: Ի հաստատուն վերն ասվածի, միանգամայն արդարացիորեն ահա թե ինչ է գրում «Անիծված առյուծի բնաջնջումը» մենագրության հեղինակը. «Կարող ենք որոշակիորեն նշել, որ բռնագաղթեցման գործընթացը զարգանում է հաջորդական փուլերով, որքան կարելի է ժամանակի տեսակետից առնչել պատմական կարևոր իրադարձությունների հետ, որ տեղի են ունենում նշված ժամանակաշրջանում օսմանյան և հետագայում թուրքական պետության մեջ:

Առաջինը սկսվում է երիտթուրքերի կատարած հեղաշրջման հաջողությունից հետո և շարունակվում մինչև Բալկանյան պատերազմի սկիզբը (1912-1913 թթ.): Երկրորդը, որի ընթացքում արտաքսումները համակարգված բնույթ են ստանում և սաստկանում, համընթաց է այն տարիներին, երբ օսմանյան պետությունը մասնակցում է Առաջին համաշխարհային պատերազմին: Երրորդը սկսվում է զինադադարի տարեթվից (1918թ.), երբ ազգայնականների (տե՛ս երիտթուրքերի) ուժերը միավորվում են տարածքային մասնատման վտանգին դիմակայելու նպատակով, և ավարտվում է Լոզանի պայմանագրի ստորագրումից հետո՝ Անատոլիայի հույների հարկադիր մեկնումով, ինչպես նաև Թրակիայի մի մասի՝ թուրքական պետությանը փոխանցումով: Ի վերջո, չորրորդ և վերջին փուլը սկսվում է թուրքական պետության հիմնադրումով և շարունակվում է ամբողջ 20-րդ դարի ընթացքում՝ նախորդների գոր-

ծաղրած կարգով և չափերով Կ. Պոլսում մնացած և Իմվրոս ու Տենեդոս կղզիների հունական բնակչության հանդեպ»<sup>1</sup>:

XIX դարի առաջին կեսերին օսմանյան կայսրության քաղաքական- պետական վերին էշելոններում սկսեցին «հայտնագործել» և անվերջ շրջանառել մի գաղափար, համաձայն որի, էթնիկ փոքրամասնությունների գոյությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ եվրոպական պետությունների կողմից պետության ներքին քաղաքականությանը ցանկացած պահի միջամտելու առիթ, պատրվակ կամ ուղղակի հնարավորություն: Արևմտյան Եվրոպայում արդյունաբերության և տեխնիկայի բուռն զարգացումը, վերջին հաշվով, այս կամ այն չափով ու տեմպերով չէր կարող իր ազդեցությունը չունենալ օսմանյան կայսրության գրեթե միջնադարյան մակարդակում գտնվող տնտեսության վրա: Տնտեսության մեջ առաջադիմական միտումները աստիճանաբար հնարավորություններ էին ընծեռում մասնավորապես հայ, հույն և հրեա ազգային փոքրամասնություններին առանձնանալ և իրենց ձեռքը վերցնել տնտեսության մեջ որոշ ճյուղերի զարգացման «սանձերը»: Սույն դիտարկման օբյեկտիվ հիմնավորումը մենք արդեն տեսնում ենք XIX դարի վերջին և XX դարի սկզբներին:

Մասնավորապես հայերն ու հույները, լինելով քրիստոնյաներ և Եվրոպայում ստանալով հիմնարար կրթություն, աստիճանաբար և հիմնավոր բարեփոխումներ էին կատարում թե գիտության տարբեր բնագավառներում, և թե ինչպես արդեն ասվել է, տնտեսության տարբեր ճյուղերում: Այս օբյեկտիվ իրողությունն էլ եղավ այն վճռորոշ գործոններից մեկը, որը, հատկապես և Աբդուլ Համիդ II-ին, և երիտթուրքերին դրդեցին մտածել զտարյուն, միայն թուրքերից կազմված պետություն ունենալու խելացնոր գաղափարի (հիմա՝ պանթուրքիզմի) իրականացման ուղղությամբ: Այլ կերպ ասած, եկել էր կրոնական գործոնի վրա հիմնված (իսլամակենտրոն) քաղաքականությունը «աննկատ» մոնոէթնիկ (զերիշխող ազ-

---

<sup>1</sup> Յակովոս Ակցոլլու, «Անիծված առյուծի բնաջնջումը» Երևան, 2007թ., էջ 6-7:

գի՝ թուրքի) էթնիկ գործոնով փոխարինելու ժամանակները, այսինքն՝ առավել ակտիվ ազգային (հիմնականում՝ քրիստոնյա) փոքրամասնություններից՝ հայերից և հույներից, ազատվելու, կառավարության մակարդակով նախադրյալներ ստեղծելու հիմնախնդրի լուծման պատմական պահը: Պետական մակարդակով և միանազամայն արհեստականորեն «հասունացնելով» իսլամականություն գաղափարի ժամանակավրեպությունից անցումը մոտ էթնիկ գաղափարի «անխուսափելիության» արմատավորման գաղափարախոսության իրականացման գործընթացին, Աբդուլ Համիդ II-ը, իսկ այնուհետև՝ երիտթուրքերը, ձեռնմուխ եղան հայ և հույն ազգերի բնաջնջման քաղաքականության իրագործմանը:

Մենագրության արժանիքներից մեկն էլ հենց այն է, որ հեղինակը՝ Յակովոս Ակցոլուն, կարողացել է միանազամայն հիմնավոր և պատմական փաստերի հիման վրա հանգել, ըստ իս, կարևոր հետևյալ եզրակացությանը. «Օսմանյան պետությունն իր գոյության ուշ շրջանում (19-րդ և 20-րդ դդ.), ազգային փոքրամասնությունների ներկայությունը ընկալեց որպես եվրոպական պետությունների միջամտության մի ձեռք, որը փորձում էր խեղդել Թուրքիային: Այս տեսակետն օգտագործվեց երիտթուրքերի կողմից, որպես նրանց ձևական փաստարկներից մեկը՝ զտարյուն ազգային պետություն ստեղծելու նրանց փորձում արմատախիլ անելով ոչ մուսուլմանական բնակչություններին իրենց նախնիների հողից:

Ոչ մուսուլման (ազգային) փոքրամասնությունների ներկայությունը սկսվում է ընկալվել որպես «խնդիր», երբ օսմանյան կայսրությունը մտնում էր իր անկումային փուլը և, հատկապես, 19-րդ դարի ընթացքում, երբ թևակոխում է իր գոյության վերջին շրջանը: Պատմական իրադարձությունները, որոնք տեղի են ունենում այս հարյուրամյակի ընթացքում, օսմանյան պետությանն ավելի են մոտեցնում իր վախճանին և նպաստում են պատմական բեմահարթակի վրա այն ուժերի հայտնվելուն, որոնք կառաջացնեն գաղափարական անցումը իսլամականություն օսմանյան հասարակության կազմավորումից դեպի ազգայնականություն թուրքական կառուց-

վածքի: Այնուամենայնիվ, հասարակական կազմի հիմնական էությունը չի փոխվում այնքան ժամանակ, որքան այն մնում է բազմազգ, գերիշխող կրոնի (իսլամ) փուլից անցնում ենք գերիշխող ազգի (թուրք) փուլը»<sup>2</sup>, - իրավացիորեն նկատել է Յ. Ակցողլուն:

Շարունակելով ներկայացնել թուրքական շովինիզմի գաղափարախոսական պատկերացումների արմատավորման գործընթացը թուրք բնակչության ամենատարբեր խավերի ու շերտերի շրջանում, հեղինակը համառոտ անդրադառնում է նաև ժամանակաշրջանի գաղափարախոսական հոսանքների՝ «օսմանիզմի», «պանիսլամիզմի», «պանթուրանիզմի» և վերջապես, «թուրքիզմի» հետապնդած նպատակներին և եզրակացնում, որ, այսպես կոչված «աթաթուրքիզմը» ոչ այլ ինչ է, եթե ոչ վերը թվարկված գաղափարախոսական ուղղությունների ընդհանրացված արտահայտություն: «Թուրքիզմը պարտադրված էր օսմանյան, ինչպես նաև հետագայում թուրքականի վերածված հասարակությանը, որպես նոր դարի տիրող գաղափարախոսություն: Այն կազմում է թուրքական ազգայնամոլության հիմքը, որն 1909թ. հետո երիտթուրքերի կողմից կներկայացվի «Թուրքիան թուրքերին է պատկանում» (Türkiye Türklerindir) կարգախոսով, և որպես նրա նորագույն, հետագայում զարգացած դրսևորում, կհանդիսանա Աթաթուրքիզմը (Atatürkçülük)<sup>3</sup>»: Իսկ աթաթուրքիզմը, ինչպես հայտնի է, ըստ էության, հանդիսանում է Թուրքական (հիմա՝ քեմալիստական) Հանրապետության պաշտոնական գաղափարախոսությունը: Մի՞թե 20-րդ դարի 50-60-ական թվերին հույների զանգվածային բռնի տեղահանումը Թուրքիայի տարբեր քաղաքներից ու գյուղերից աթաթուրքիզմի գաղափարախոսության հիման վրա ազգային փոքրամասնություններից մեկի նկատմամբ իրագործված քաղաքականության կոնկրետ դրսևորում չէ:

---

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 9

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 28

\*Ցանկանում եմ իմ խորին երախտագիտությունը հայտնել ՀԴՃՀ-ի ղեկավարությանը այս արժեքավոր գրքի հայերեն թարգմանությունը նախածեռնելու և հրատարակելու համար:

Անշուշտ, «Անիծված առյուծի բնաջնջումը» աշխատության արժանիքները, կարելի է էլի թվարկել: Սակայն, թերևս, սույն հոդվածի շրջանակներում ընդգրկել այն բոլոր դրականը, արժեքավորը, որ առկա է այս մենագրության մեջ, հնարավոր չէ:

Նկատենք, որ այս աշխատության մեջ կան փաստեր, որոնք, համոզված ենք, որ անպայման կհետաքրքրեն նաև հայ պատմաբաններին և հայ ժողովրդի համար բախտորոշ տվյալ ժամանակաշրջանով (Հայոց Ցեղասպանությանը նախորդող և հաջորդող) հետաքրքրվող հայ ընթերցողների և այլ մասնագետների լայն շրջանակի:

Մեր հույն բարեկամ Յակովոս Զ. Ակցողլու «Անիծված առյուծի բնաջնջումը» արժեքավոր մենագրության հայերեն լույս ընծայումը\* մի նոր շեշտադրում է ավելացնում հայ և հույն բախտակից ժողովուրդների դարավոր չընդհատվող բարեկամական հարաբերությունների պատմության մեջ:

**ԳՐԱԽՈՍԱԿԱՆ ՀՈՒՍԵՅՆ ԲԱՂՋՈՒ «ԺԱՄԱՆԱԿԻ ՈԳԻՆ. ՀԱՄԱՇԵՆԱՐՀԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԹՈՒՐՔԻԱՆ» ԳՐՔԻ**

Անկարայի Մերձավոր Արևելքի տեխնիկական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի պրոֆեսոր Հուսեյն Բաղջըի 2008 թ. հրատարակած «Ժամանակի ոգին. համաշխարհային քաղաքականությունը եւ Թուրքիան»<sup>1</sup> գիրքը յուրօրինակ խոսք է պատմագիտության ու քաղաքագիտության մեջ: Սույն գրքում ներկայացված են 1998-2007 թթ. ընթացքում Թուրքիայի հեղինակավոր անգլիալեզու օրաթերթերում հեղինակի կողմից տպագրված հոդվածները: Գրքում ներկայացված են 1990-ական թթ. երկրորդ կեսի եւ 21-րդ դարի առաջին տասնամյակի Թուրքիայի իրադարձություններով հարուստ պատմության կարևորագույն դրվագները, կան նաև մի քանի հետահայաց հոդվածներ նվիրված հանրապետական Թուրքիայի պատմության այնպիսի դիտարժան դրվագներին, որոնց նորովի վերագնահատումը, հեղինակի կարծիքով, մեծապես օգնելու են վերջին 15 տարիների պատմությունը ճշգրտությամբ ընկալելու համար: Աշխատությունում ներկայացված ժամանակահատվածը կարելի է բաժանել երկու պայմանական հատվածների՝ 1997 թ. մինչև 2002 թ. և 2002 թ. մինչև 2007 թ.:

Հ. Բաղջըի նախածեռնության ժամանակագրական մեկնարկին նախորդել էր բուռն ու համակարգային իրադարձություններով հարուստ 1997 թ., երբ փետրվարի 28-ին Թուրքիայի ԶՈՒ-ը հերթական չորրորդ անգամ միջամտեց քաղաքական գործընթացներին, ինչի հետևանքով իշխանությունից հեռացվեց, ապա նաև նրանց միջամտությամբ քաղաքական գործունեության իրավունքից զրկվեց իսլամամետ Բարօրություն կուսակցությանը: 1997 թ. մին-

<sup>1</sup> Hüseyin Bağcı, Zeitgeist: Global Politics and Turkey, Ankara, Orion Kitabevi, 2008.



չեւ 2002 թ. շարունակվող ներքաղաքական ճգնաժամին բնորոշ էր գաղափարական ու քաղաքական հակամարտությունը, որակապես նոր խորքային կերպափոխումները, ուստի, այդ գործընթացների վերաբերյալ գիտնականի հայացքների ու տեսակետների համադրված մեկտեղումը արժեքավոր է: Նույն սկզբունքով արժեքավոր է նաեւ վերոհիշյալ պայմանական դերաբաժանման երկրորդ հատվածը, երբ ներքաղաքական ճգնաժամի շարունակական խորացման, Իզմիթի երկրաշարժի հետևանքների վերացման եւ աննախադեպ ֆինանսական ճգնաժամի հրահրման պատճառով երկրի քաղաքական գործընթացները հանգեցրին հասարակության մոտ դժգոհության ու անտարբերության ակիբի բարձրացմանը, որի հետևանքով տեղի ունեցավ «սպիտակ հեղափոխություն» և 2002 թ. իշխանության եկավ ընդամենը մեկ տարի առաջ ստեղծված Արդարություն և զարգացում կուսակցությունը: 2002 թ. ի վեր մինչ օրս Թուրքիան ղեկավարած չափավոր իսլամամետ ԱԶԿ-ի գործունեության շարունակական լուսաբանումը, կարևոր դրվագների վերաբերյալ քաղաքակազիտականվերլուծությունները մեծապես բարձրացնում են աշխատանքի արժեքը:

Ներքաղաքական գործընթացներին նվիրված առաջին գլխի կարևոր մտքերից հարկավոր է առանձնացնել Թուրքիայի քաղաքական համակարգի փոփոխությունների անհետաձգելի պահանջը, ժողովրդավարության թուրքական առանձնահատկությունները, երկրի ղեկավարման գործում նոր որակների ներբերման ու նոր սերնդի ղեկավարներ ունենալու պահանջը: Խոսելով հաստատութենական փոխակերպման ու հասարակության արժեհամակարգային վերանայման գործընթացի նախաձեռնության մասին հեղինակը առաջ է քաշում «անհատական հեղափոխության» դրույթը<sup>2</sup>, որն, ըստ նրա, կդառնա այն կարևոր շարժիչ գործոնը, որի վրա պետք է հենվի հասարակական ու քաղաքական փոխակերպումների գործընթացը: Ընդհանուր առմամբ, աշխատանքում ուշագրավ կերպով առաջ են քաշվում բանաձևային ձևակերպում-

---

<sup>2</sup> Bağcı, p. 39

ներ և առաջարկվում հենվել դրանց վրա հասարակական փոփոխություններն ապահովելու ու դրանց օժանդակելու համար:

Առաջին գլխում ուշագրավ են նաև Էրդողանի վերաբերյալ հնչող գնահատականները, որոնցում Էրդողանը ներկայացվում է որպես հեղինակավոր քաղաքական գործիչ, որի շնորհիվ Թուրքիայում տեղի են ունեցել լուրջ բարեփոխումներ<sup>3</sup>, նա դարձել է աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային տրամաչափի քաղաքական գործիչ<sup>4</sup>: Ընդամին, մի շարք դրվագներում Էրդողանը ներկայացվել է նաև որպես հակասական տրամադրություններով ուղեկցվող պետական այր, իրարամերժ հայտարարությունների, հաճախ կրկնվող ոչ-դիվանագիտական ձևակերպումների<sup>5</sup>, հանրության առջև ոչ պատճառ արտահայտությունների, երկրի աշխարհիկ կարգերն արհամարհելու անթաքույց ցանկության<sup>6</sup> և վարչապետի համար ավելորդ գրգիռներով ուղեկցվելու պատճառներով:

Այնուհանդերձ, գրքի միայն առաջին գլուխն է նվիրված վերոհիշյալ ներքաղաքական գործընթացներին, իսկ մյուս ութ գլուխները նվիրված են Թուրքիայի արտաքին ու անվտանգային քաղաքականության բանալիական գործընթացներին, մասնավորապես, ԵՄ-ի, ԱՄՆ-ի, Բալկանների, Մերձավոր Արևելքի, Հարավային Կովկասի և Եվրասիայի ուղղությամբ Թուրքիայի ունեցած դիրքորոշումների վերլուծությունը: Գրքում լուսաբանված հիշյալ երկրների կամ տարածաշրջանների կապակցությամբ Թուրքիայի վարած քաղաքականության ամենատարբեր դրվագները միասնաբար ամբողջացնում են նշված ժամանակահատվածում Թուրքիայի արտաքին քաղաքականության լուսաբանումը: Այսպիսով, քաղաքագիտական ու պատմագիտական առումներով հենց այս գլուխներն են, որ ներկայացնում են առավել մեծ արժեք և կարող են

---

<sup>3</sup> Նույն տեղում, pp. 96-98

<sup>4</sup> Նույն տեղում p. 67

<sup>5</sup> Նույն տեղում, pp. 119-121

<sup>6</sup> Նույն տեղում, p. 82-85, pp. 115-118

զգալիորեն կողմնորոշել Թուրքիայի արտաքին քաղաքականության ուսումնասիրություններով զբաղվողներին:

Աշխատանքում ամփոփված տասը տարիների ընթացքում Թուրքիայի արտաքին քաղաքականությունն ենթարկվեց էական կերպափոխումների, որոնցից առավել հիշարժան են ԵՄ-ի անդամակցության թեկնածու երկրի կարգավիճակի շնորհումը, թուրքիոնական հարաբերությունների կարգավորումը, մերձավոր արևելյան գործընթացներում Թուրքիայի առավել ընդգրկուն ներգրավումը, իրաքյան պատերազմում, ինչպես նաև Հայաստանի ու Հայոց ցեղասպանության հարցերում թուրք-ամերիկյան հարաբերությունների փորձության փուլերը, թուրք-ռուսական բազմամակարդակ գործակցության խորացումը, էներգետիկ միջացքի դերի ստանձնումը և այլն: Այս զարգացումների մեծ մասը տեղի է ունեցել Արդարություն և զարգացում կուսակցության իշխանության տարիներին, ուստի, այդ կուսակցության գաղափարական կնիքը արտաքին քաղաքական նախաձեռնություններում ակնհայտ էր: Ակնհայտ էր նաև կուսակցության դեկավարի՝ Էրդողանի գաղափարական ու անձնային դրսևորումների արտացոլումը արտաքին քաղաքականության մշակման ու իրագործման մեջ: Այս բոլոր կարևորագույն դրվագներն էլ այս կամ այն կերպ տարբեր տրամաչափի ընդգրկումներով արտացոլված են գրքի երկրորդից իններորդ գլուխներում՝ պարունակելով արժեքավոր տեղեկույթ, հետահայաց գնահատականներ, դատողություններ: Ղատելով Հ. Բաղջըի բերած հենց այդ գնահատականներից՝ վարչապետ Էրդողանի քաղաքական հայտարարությունները, Իսրայելի, ԵՄ-ի, Հայաստանի հասցեին հնչող իրարամերժ, հաճախ կոշտ գնահատականները եղել են անցյալում և կշարունակվեն դրսևորվել նաև հետագայում, քանզի Էրդողան քաղաքական գործչին հատուկ են ամբոխահաճո, անհանդուրժող արտահայտություններով ու զրգիռներով լեցուն անհավասարակշիռ գնահատականները թե՛ արտաքին գործընկերների, թե՛ հակառակորդների հասցեին:

Հայաստանի հետ հարաբերություններին նվիրված հոդվածներում հեղինակն ընդգծում է այդ հարաբերությունների կարգավոր-

ման անհրաժեշտությունը՝ ընդունելով, որ առանց Հայաստանի հետ գործակցության ՀՎ. Կովկասում Թուրքիայի մերկայությունը և աշխարհաքաղաքական շահերի հետապնդումը լիարժեք չի կարող իրականացվել<sup>7</sup>: Աշխատանքում կան նաև Սփյուռք-Հայաստան-Ցեղասպանություն քաղաքական եռանկյունու դիտանկյունից արված դատողություններ, որոնցում հեղինակը նշում է, որ եթե Հայաստանը շարունակի հետևել, թե ինչպես է Սփյուռքում մշակվում Հայաստանի արտաքին քաղաքականությունը, և եթե Հայաստանը չկարողանա Սփյուռքին բացատրել, որ Հայաստանի ու Սփյուռքի ռազմավարությունները տարբերվում են, ապա Հայաստանը կգործի «քաղաքական ինքնասպանություն»<sup>8</sup>: Սփյուռքի միջամտության, տարբեր երկրների օրենսդիր մարմիններում, ինչպես նաև ԱՄՆ-ի Կոնգրեսում իրարահաջորդ բանաձևերի օրակարգ մտցնելու պատճառով Հայաստանի և Թուրքիայի մերձեցման հարցում, հեղինակի կարծիքով, առկա է շահերի անհամատեղում և Թուրքիան չի նկատում Հայաստանի կողմից պահանջվող աջակցությունը և շահագրգռվածությունը<sup>9</sup>: Հեղինակը նաև կարծում է, որ հայթուրքական հարաբերություններում Հայաստանի դիրքորոշումը դարձավ առավել արմատական, երբ Հայաստանում նախագահ դարձավ «տարածաշրջանի Բենյամին Նաթանյահուն՝ Ռոբերտ Քոչարյանը»<sup>10</sup>: Ըստ Բաղջըի՝ Հայաստանի ու Սփյուռքի միջազգային ու տարածաշրջանային

քաղաքականության հետևանքով Թուրքիան և Ադրբեջանը ավելի մտերմացան և Հեյդար Ալիևի հմուտ քաղաքական քայլերի շնորհիվ երկու երկրները դարձան ռազմավարական գործընկերներ<sup>11</sup>:

Այնուհանդերձ, Հայաստանին և հայթուրքական հարաբերություններին նվիրված հոդվածները նրա գրքում չափազանց սակա-

---

<sup>7</sup> Նույն տեղում, p. 605

<sup>8</sup> Նույն տեղում, p. 177

<sup>9</sup> Նույն տեղում, pp. 175-180

<sup>10</sup> Նույն տեղում, p. 604

<sup>11</sup> Նույն տեղում, p. 621

վաթիվ են և, բացառությամբ մի քանի հպանցիկ դրվագների, ավարտվում են 2001 թ.: Հայաստանի, Հայոց Ցեղասպանության և ԼՂՀ-ի հարցում հեղինակի մոտեցումը, ընդհանուր առմամբ, նույնական է Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման հետ:

Ամփոփելով նշենք, որ աշխատանքի արժեքներից մեկը տասը տարի տևողության հողվածների ներկայացումն է առանց խմբագրումների, մեկնաբանության ու միջամտության, որի շնորհիվ այդ հողվածներն իրոք արտացոլում են «ժամանակի ոգին» և օգնում ընթերցողին հողվածներն ըմբռնել պատմական իրադարձությունների համատեքստում: Դա կարող է համարվել աշխատանքի դրական առանձնահատկություններից մեկը: Իր հերթին այդ մեթոդաբանական մոտեցումը խնդրահարույց է, քանզի աշխատանքը կարող է օգտակար լինել միայն թուրքագետներին ու Թուրքիայի հասարակական-քաղաքական գործընթացներին հետևող հետազոտողներին: Ավելի լայն հասարակական ու գիտական արժեքայնության համար նպատակահարմար էր հողվածները սկսել հակիրճ առաջաբանով, որը ոչ-մասնագետին կօգներ ըմբռնել հողվածների իրական բովանդակությունը և արժեքը: Ավելին, որոշ դեպքում հողվածների միջև առկա է ժամանակագրական անջրպետ, որի պատճառով էլ չի հաջողվում ամբողջությամբ լուսաբանել առաջ քաշված տարբեր բնույթի խնդիրները ու դրանց զարգացման դինամիկան: Մեկ այլ խնդիր է հողվածների իմաստաբանական ու մեթոդաբանական բաժանման և խմբավորման հարցը, որի պատճառով նմանատիպ բնույթի թեմաներ ներկայացվել են տարբեր բաժիններում, հետևաբար, դրանց հետևելը դժվար է: Հեշտ կիրառելիության ու օգտակարության տեսակետից այս ժանրի (հողվածների հավաքածու) աշխատության համար պարզապես անհրաժեշտություն է գրքի վերջում ինդեքսավորման պահանջի ապահովումը, որի շնորհիվ գրքի հիմնական ասելիքը և տեղեկատվական առանձնահատկությունը առավել կընդգծվեր: Աշխատանքում կարելի է նաև առանձնացնել ոճական խնդիրը, քանզի հաճախ հեղինակին չի հաջողվել զգուշանալ լրագրողական ձևակերպումներից և հրապարակախոսական դատողություններից, որոնց

պատճառով աշխատանքի պատմագիտական ու քաղաքագիտական նշանակությունը զգալիորեն տուժել է:

Ընդհանուր առմամբ գիրքը արժեքավոր է, քանզի այդ շրջանով զբաղվող վերլուծաբանները կարող են ուղղորդվել ներկայացված փաստերով և լինել ավելի կողմնորոշված:

## ԹՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

## ՎԱՍՏԱԿԱՆԱՏ ԹՈՒՐՔԱԳԵՏԻ ՀՈՐԵԼՅԱՆԸ

2008 թ. սեպտեմբերին լրացավ Հայաստանի թուրքագիտական դպրոցի հիմնադիրներից եւ կարկառուն ներկայացուցիչներից մեկի՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Երվանդ Ղազարի Սարգսյանի 95 տարին: Նրա գրչին են պատկանում 12 մենագրություններ եւ 100 ավելի այլ գիտական աշխատություններ, որոնք իրավամբ գիտական հեղինակություն են բերել հեղինակին եւ հայրենական թուրքագիտությանը:

Վաստակաշատ գիտնականը, որն այժմ բնակվում է ԱՄՆ-ում, խորհրդային շրջանի հայոց պատմագիտական մտքի լավագույն ներկայացուցիչներից է, մի շարք փայլուն հետազոտությունների հեղինակ: Հորեյանը լավ առիթ է վերհիշելու նրա անցած գիտական ուղին, մեկ անգամ ևս արժևորելու այն մեծ ավանդը, որ բերեցին նրա աշխատությունները հայրենական թուրքագիտությանը ու պատմագիտությանը:

Պրոֆեսոր Սարգսյանի կենսագրությունը բնորոշ է իր սերնդի շատ գիտնականների համար: Ծնվել է Սիսիանի շրջանի պատմական Բռնակոթ գյուղում, միջնակարգ կրթությունը ստացել է Բաքվում, իսկ բարձրագույնը՝ Լենինգրադի համալսարանում: 1942 թ. հաջողությամբ ավարտելով ԽՍՀՄ Արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրան՝ նա վերադառնում է Հայաստան եւ անցնում է աշխատանքի Գիտությունների Ակադեմիայի համակարգում: Ե. Սարգսյանը երկար տարիներ ղեկավարել է Արևելագիտության ինստիտուտի թուրքագիտության բաժինը, որը նրա ջանքերի շնորհիվ դարցավ Թուրքիայի նոր ու նորագույն պատմության ուսումնասիրման եւ մասնագետների պատրաստման կարևոր կենտրոն:

1946 եւ 1963 թթ. նա հաջողությամբ պաշտպանել է թեկնածուական ու դոկտորական դիսերտացիաները, որոնք կարևոր ներդրում էին Թուրքիայի եւ Արեւմտյան Հայաստանի նոր շրջանի



պատմության ուսումնասիրման բնագավառում: Դոկտորական դիսերտացիայի պաշտպանությունը Մոսկվայում վերաճել է սուր եւ սկզբունքային բանավեճի խիստ քաղաքականացված խորհրդային թուրքագիտության մոսկովյան դպրոցի ներկայացուցիչների հետ եւ ստացել է լայն արձագանք գիտական եւ հասարակական շրջանակներում: Այդպես էր ձեռք բերվում հայկական թուրքագիտության հեղինակությունը..

Պրոֆեսոր Սարգսյանի, թերեւս, ամենահաջողված գիտական աշխատությունն է «Թուրքիան եւ նրա նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում (1914-1918)» գիրքը, որը 1962 թ. հրատարակվել է ռուսերեն, իսկ 1964 թ.՝ հայերեն: Այստեղ հեղինակը լայնորեն օգտագործելով արխիվային ու վավերագրական այլ նյութեր համոզիչ կերպով ցույց է տալիս Օսմանյան կայսրության ծավալապաշտական նկրտումները Անդրկովկասի, գլխավորապես Արեւելյան Հայաստանի նկատմամբ, վեր է հանվում հայ ժողովրդի ֆիզիկական բնաջնջման երիտթուրքական քաղաքականության անմիջական կապը նրա պանթուրքիստական գավթողական ծրագրերի հետ: Մենագրության կարեւոր արդյունքներից է հեղինակի եզրահանգումը այն մասին, որ հանրապետական Թուրքիան հանդես եկավ որպես Օսմանյան կայսրության հակահայկան քաղաքականության շարունակող: Գիրքը մեծ հետաքրքրությամբ ընդունվեց հայաստանյան հասարակության կողմից, նշանակալից դեր կատարեց «վաթսունականների սերնդի» միջավայրում Թուրքիայի պատկերի ստեղծման մեջ: Այն այսօր էլ պահպանում իր գիտական նշանակությունը եւ քաղաքական այժմեականությունը:

Երվանդ Սարգսյանի կարեւոր մենագրություններից է նաեւ «Օսմանյան կայսրության քաղաքականությունը Արեւմտյան Հայաստանում եւ մեծ տերությունները 19-րդ դարի վերջի քառորդում եւ 20-րդ դարի սկզբին» սովորածավալ գիրքը, որը լույս է տեսել 1972 թ. ռուսերեն: Այն աչքի է ընկնում օգտագործված մեծաքանակ փաստացի նյութի վերլուծման եւ ընդհանրացման բավական բարձր մակարդակով եւ հիմնարար ներդրում է Հայկական հարցի ուսումնասիրման բնագավառում:

Պրոֆեսոր Սարգսյանը առաջիններից Հայաստանում ձեռնանուխ եղավ թուրքական պատմագրության մեջ լայն տարածում ստացած Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմությունը խեղաթուրող կոնցեպցիաների քննական ուսումնասիրմանը, նրանց հակազիտական բնույթի բացահայտմանը: Նրա եւ Ռուբեն Սահակյանի հեղինակած «Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրքական պատմագրության մեջ» գիրքը (1963 թ.) վերահրատարակվել է Թեհրանում, թարգմանվել է անգլերեն եւ հրատարակվել է ԱՄՆ-ում:

Երվանդ Սարգսյանը 50-80-ական թվականների գիտական կյանքի գործուն մասնակիցներից էր: Հետաքրքիր զեկուցումներով հաճախակի հանդես է եկել գիտաժողովներում, այդ թվում նաեւ միջազգային, ակտիվորեն մասնակցել է գիտական բանավեճերի ու քննարկումների, եղել է մի շարք կոլեկտիվ մենագրությունների ու հոդվածների ժողովածուների հեղինակակից եւ պատասխանատու խմբագիր, դեկավարել եւ ընդդիմախոսել է բազմաթիվ դիսերտացիաներ, իր հարուստ գիտելիքները կիսելով տասնյակ աշակերտների եւ կրտսեր գործընկերների հետ:

Վերջին տարիներին Հայաստանի մտավորականության համար ստեղծված ծանր կենցաղային պայմանները ստիպեցին Ե. Սարգսյանին տեղափոխվել ԱՄՆ, զրկելով երիտասարդ թուրքագետներին հնարավորությունից հաղորդակցվելու նրա հետ, օգտվելու նրա խորհուրդներից ու հարուստ կենսափորձից: Սակայն եւ օտարության մեջ նա շարունակում է անխոնջ ծառայել գիտությանը. մեզ են հասնում նրա հոդվածները Թուրքիայի հակահայկական քաղաքականության տարբեր արտահայտումների մասին, որոնք պարբերաբար լույս են տեսնում սփյուռքահայ մամուլի էջերում: Հայաստանի թուրքագետները, պրոֆեսոր Երվանդ Սարգսյանի բազմաթիվ գործընկերները եւ աշակերտները սրտանց շնորհավորում են գիտության երախտավորին նրա հոբելյանի կապակցությամբ:



Տպաքանակը՝ 300

---

Տպագրվել է «Գևորգ-Հրայր» ՍՊԸ  
«Լուսակն»  
հրատարակչությունում

Երևան, Գրիգոր Լուսավորչի 6:  
Հեռ.՝ 52-79-74, 52-79-47  
Էլ. փոստ [lusakn@rambler.ru](mailto:lusakn@rambler.ru)